

1895
1832
63

12004

ՀԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՆՑ

Ի ԳԻՏՍ ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ՄԱՆԿԱՆ

ՏԻՐԱՆԱՑ ԱԼԻՓԱՆԵԱՆ

Ի Հ. ՄԻՆԱՍԱՑ Վ. ԲԺՇԿԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

ԿՐԿԻՆ ՏՊԱԳՐԵԱԼ

ԳՐԱՍԵՆՅԱԿ
PAROS BOOK STORE
57 La Belle Ave., H. P.
Detroit — Michigan

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1832

10 F-69 422-247
947257
1356405

Enatas michaud xy

1275 NE

1320

Ευστράτιος Μιχόλεου
Λεμεσιάδης

1895
Φεβ 5

Եվ էր ըստ մեծի մարգարէին ասելոյ յայտ կատարք,
զի զարգասակ Հեղեալ յաղթեսցեն տաճարք։

ՀՄՏՈՒԹԻՒՆ,

ՄԱՆԿԱՆՑ

ՄԱՍՆ Ա.

Ա. ՀԱՄԱՐ

ԳԻՐ

ՆրբիաբաՀէէ.

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. Ժ.
Ի. Լ. Խ. Ծ. Կ. Հ. Ձ. Ղ. Ճ. Մ.
Յ. Ն. Շ. Ո. Չ. Պ. Ջ. Ռ. Ս. Վ.
Տ. Ր. Ց. Ւ. Փ. ՔՀ. (Օ. Ֆ).

Խոշորէէ.

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ.
ժ. ի. լ. խ. ծ. կ. հ. ձ. ղ. ճ.
մ. յ. ն. շ. ո. չ. պ. ջ. ռ. ս.
վ. տ. ր. ց. ւ. փ. քՀ. (օ. ֆ).

ՆշաՀէէ.

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ.
ի. լ. խ. ծ. կ. հ. ձ. ղ. ճ. մ. յ.
ն. շ. ո. չ. պ. ջ. ռ. ս. վ. տ. ր.
ց. ւ. փ. քՀ. (օ. ֆ).

ՎԱՆԿ

Մէկ ॥ տը ॥ զայ ॥ մը ॥ պար ॥ ծե ॥ նա ॥ լով ॥ կը ॥ սէր ॥ թէ ॥ ես ॥ շատ ॥ գի ॥ տուն ॥ մարդ ॥ տե ॥ սեր ॥ եմ ॥ գի ॥ տուն ॥ եմ ॥։ Փի ॥ լի ॥ սո ॥ փայ ॥ մը ॥ լը ॥ սե ॥ լով ॥ ը ॥ սաց ॥ թէ ॥ ես ॥ ալ ॥ շատ ॥ հա ॥ րուստ ॥ մարդ ॥ տե ॥ սեր ॥ եմ ॥ բայց ॥ հա ॥ րուստ ॥ չեմ ॥ ե ॥ զած ॥։

ԲԱՌ

Կա-պի-կը ॥ իր ॥ մէկ ॥ ձա-գին ॥ վը-րա ॥ կը-խեն-գե-նար ॥ գի-շեր ॥ ցո-րեկ ॥ սի-րե-լով ॥ կը-պաղ-նէր ॥ ու ॥ գըր-կին ॥ մէջ ॥ կը-սըխ-մէր ॥։ Բ.յս ॥ ան-կարդ ॥ սէ-րը ॥ մեծ ॥ վը-նաս ॥ տը-վաւ ॥ ձա-գին ॥ գի ॥ օր ॥ մը ॥ սի-րե-լով ॥ գըր-կեց ॥ ձա-գը ॥ այն-չափ ॥ սըխ-մեց ॥ որ ॥ ձա-գին ॥ շուն-չը ॥ հա-տաւ ॥ մե-ռաւ ॥։

ԲԱՆ

Սոկ-րա-տէս փի-լի-սո-փան իր շա-տա-խօս աշ-կեր-տէն կըր-կին վարձք ու-զեց ॥. մէյ-մը լը-ռեալ սոր-վե-լու հա-մար ॥. մէյ-մալ խօ-սիլ սոր-վե-լու հա-մար ॥։

Ի՞նչ խորհուրդ ունին։

1. Որովհետև ամէն բանէն առաջ պէտք է գիր գիտնալ. յետոյ վանկերը զատելով բառերն որոշել և շիտակ կարդալ բանը։ Այսով կըրնայ հասկըցվիլ թէ գիրը ճանչնալով վանկը կորոշվի, վանկով բառը կի՛ խօսքը կիմացվի. բառով ալ բանը կամ խօսակցութիւնը յայտնի կըլայ։ Ահա այս խորհրդով նախ գրերը գրի. ետքը վանկերը գծով որոշեցի. յետոյ բառերն ալ զատեցի. վերջը՝ բանը կի՛ խօսքին միտքը յայտնի եղաւ. ինչպէս յետոյ ա՛լ աղէկ պիտի հասկընաս (3)։

Այդ՝ հարկ է որ նախ գրոց և գրագրութե՛ հմուտ ըլլաս մինչև բանաստեղծութի՛. յետոյ օրէնքներուն և բարոյական խրատներուն՝ առջի մասին մէջ։

Երկրորդ մասին մէջ պիտի կըլթուի սորվիս. որպէս զի կատարելութե՛ հասնիս երջանկութիւն (151)։

Երրորդ մասին մէջ աշխարքիս ազգերուն պատմութիւնները կարդալով սորվածներդ լաւ հասկընաս, ու կրթըվիս.

Իսկ չորրորդ մասին մէջ եւրոպայի խելացի ազգերուն, և նոր աշխարքի վայրենիներուն բարքը հասկընալով կատարեալ ըլլաս (419)։

Ի՞նչ է գրագրութիւն։

2. Գրագրութիւնը գրին և կարդալուն զօրութիւն ու արուեստը հասկըցնելով տեղեակ կընէ քերականական հմտութեանց, որով կրնաս գիտնալ և որոշել կարդացածդ ու լսածդ։

Ընոր համար առջի համարիդ մէջ գրագրութիւնը սորվեցնել ուզեցի. որպէս զի լաւ հասկընաս թէ գիրը ի՞նչ է և ի՞նչ զօրութիւն ունի. ի՞նչպէս կը կապվին իրարու հետ, և ի՞նչ կերպով հնարված են։ Ընդ՝ վերը տեսար թէ հայոց գիրը երեսունըվեց է. եօթը ձայնաւոր են. Ա՛. Ե՛. Է՛. Ը՛. Ի՛. Ո՛. Ւ՛։

Ընոր համար ասոնք ձայնաւոր կըսվին. զի առանց լեզուդ կամ պռկունքդ շարժելու իրենցմէ ձայն կը հանեն. իսկ մէկալ գրերը առանց ասոնց ձայն չեն կրնար հանել։

Թռնպէտ 5. 8. գրերը տեղ տեղ

բարակ ձայն մը կը հանեն. զորօրի-
նակ՝ այլ. ճ-հ. են, բայց ինքիրներ-
նուն չեն կրնար հանել առանց քո-
վի ձայնաւորի. ուստի և ձայնաւոր
ալ չեն կրնար սեպվիլ։ Դարձեալ՝
ինչպէս վերը տեսար՝ ամէն վանկ
ձայնաւոր գրով կը շինվի. և այս
պատճառաւ բաժնած գրի, որ հեշտ
կարդաս ու դիւրին զանազանես բա-
զաձայն գրերն որ ձայն չունին, և
ձայնաւոր գրերով կը կապվին ու
վանկ կըլլան (3)։

Դակ Ե. օ Ֆ գրերը անոր համար
գծի մէջ դնելով ուրիշ ձևով գրե-
ցի. որովհետև եւը կիսատ էլէ և
միանգամ ձևացած ըլլալով՝ ինքնիրեն
գիր չի սեպվիր, որ ետքի ատենները
հնարեցին. անոր համար երկաթա-
գրին կարգնալ չիդրի, և չի ալ գոր-
ծածվիր։

Դ. օ՝ին տեղը մեր նախնիք եր-
բեմն ՈՎ, և երբեմն ԱՎ կը գրէին,
ինչպէս ձեռագիրներուն մէջ կերևե-
նայ։ Դակ թէ ինչպէս կըկարդային,
մենք խնդիր է քերթողաց մէջ. ազ-
գային սովորութիւնը ծ ձայնը բառնը
ինչվան մեզի հասուցեր է։

Ուստի օ գիրն ալ գիւրուն հա-

մար եաքէն մնած է ուրիշ ազգե-
րէն՝ վեց հարիւր տարի առաջ. ինչ-
պէս ֆ գիրը, որ օտար ազգերուն
բառը գրելու համար հնարված է.
զի անոր տեղն առաջ փ գնելով
ֆռէնկ ըսելու տեղը, փռանկ կը-
սէին. վասն զի մեր լեզուին մէջ ֆ
գրով բառ չի կայ։

Ինչպէս կըփոփին գրերը։

3. Այրը տեսար թէ ձայնաւոր
գրերը բաղաձայներուն քով գալով
ձայն հանեցին, ու վանկ ձևանալով
վերի պատմութիւնները կապեցին (1)։
Հա քեզ աւելի պարզ օրինակ մը.
աղ, աս, բան, գիր, գիծ, դա, էն, լեն,
ինչ, լա, մեծ, կար, ոնգ, պեր, տար։
Սոնք ամէնքը վանկ են, որ մէկ
հնչմունքով բերնէն կելլեն։ Սա-
կայն թէ որ ասոնք բան մը նշանա-
կելու ըլլան, անատեսը կըսվին բա-
կամ խօսք։

Այս ամէն մեկ բառը պէտք է
միշտ նշանակութիւն մը ունենալ.
ինչպէս են բան, գիր, գիծ, լեն։ Այլ
նշանակութիւն չունեցող վանկերն ալ
իրար քով գալով բառ կը ձևանան.
զորօրինակ՝ աս-ոնգ, աղ-ատ, կար-դա։

Ը. Հա՛ ասոնք ալ բառ եղան, որ բան կը նշանակեն։

Գ. Ինչ որ այս բառերը վերը դրած մէկալ վանկերուն հետ միատեղ շարես կարգով բան կամ խօսակցութիւն մը կը ձեւանայ այսպէս. Ը. Սոնոյ աղուոր գէր են՝ գէշ չեն, լա՜ կարդա՛ պէս ինչ ռեշ բան են։

Տեսանը որ բաղաձայնը ձայնաւորին քով գալով վանկ կազմեցիր. վանկն ալ իրարու քով գալով բառ եղաւ. բառերն ալ կարգաւ որ շարեցիր խօսք եղաւ։

Ուրեմն գիրը վանկ կը շինէ. վանկը բառ. և բառն ալ բան կամ խօսք կը շինէ, ինչպէս որ վերը տեսար։

Սակայն խօսքը երկու կերպ է. մէկը կըսուի արձակ, ինչպէս հոս դրի. մէկալն ալ կըսուի ոտանաւոր, որ չափով և ոտքով կերթայ. զորօրինակ վերի արձակ խօսքը թէ որ չափի տակ դնես՝ կըլլայ ասանկ ոտանաւոր խօսք մը.

Սոնոյ գէշ չեն՝ աղուոր գէր են,
լա՜ կարդա՛ պէս՝ ինչ ռեշ բան են։

Ը. ըդ՝ թէ որ այս խօսքիս կարգը փոխես՝ կըլլայ արձակ բան. թէ որ

երարմէ զատես՝ ամէն մէկը մէյմէկ բառ կըլլան. թէ որ բառերն ալ կիսես՝ վանկ կըլլան. եթէ վանկերն ալ քակես՝ կը մնան գիր. զորօրինակ ա, ա, ռ, ն, ֆ, գ, է, ծ, ևն։

Այս ալ պէտք է գիտնալ որ ասոնք գիծ չեն, հապա ֆառ են, որ ձայն հանելով բան կը ձևացնեն, կամ իրարքով գալով խօսք մը կիմացնեն. ուստի գրին ձևը կրնայ փոխվիլ ինչպէս ուզես. բայց տառին հնչմունքը չի փոխվիր ամէն ազգի մէջ միակերպ է։

Ինչ զարմանալի է, ինչպէս կըլլայ։

5. Խօսքը ինչ կերպ գիր կըլլայ՝ երկրորդ համարիդ մէջ կիմացնեմ երբոր լեզուագրութիւնը դաս տամ։ Այց որչափ հարկաւոր և զարմանալի գտուած ըլլալը՝ բան մը պատմեմ որ լաւ հասկընաս։

Երբոր վերի աշխարքի մարդիկ վարի աշխարք գնացին. հոն տեղի մարդիկ որ ամերիկացի կըսվին՝ երբոր գիր կարդալ կը տեսնէին, զարմանային կը մնային թէ ինչպէս խօսքը դառնայ գիր կըլլայ, կամ թէ գիրը լեզու չունի ինչպէս կը խօսի։

Օր մը իրենց մեծին գիրք մը տըվին, առաւ ականջին տարաւ որ խօսելու ձայնը լսէ։ Ամանք ալ բան կը հարցընէին գրին որ իրենց պատասխան տայ։ Ան զի կը կարծէին թէ մարդու պէս լեզու ունի, կամ աներևոյթ հոգի մը կայ վրան, որ կը հասկընայ ու կը խօսի (445)։

Ինչպէս հնարեցին։

6. Դիրը այսչափ հարկաւոր ըլլալով կրնանք ըսել թէ Աստուած ատենէն հնարած ըլլայ, վասն զի իմաստուն մարդիկ ան ատեննալ չէր պակսեր. թող որ հարկաւորութիւնը անանկ մէկ իմաստուն վարպետ մընէ որ, էն տգէտին ալ հրաշքներ ընել կուտայ։

Այց ջրհեղեղէն ետև առջի գիրը կորսըվելով կամ ամենուն չիհասնելով, եգիպտացիք առաւել բարակ գտնըվեցան ու նախ նշանագիր հնարեցին. որ ամէն բանին մէյմէկ նշան գրելով կը կարդային։

Ուստի արեգակը իր ձևովը այսպէս կը գրէին ☉. լուսինը այսպէս ☽, աստղերը այսպէս *։ Լաև երկինքը՝ երկիրը՝ տունը՝ և ուրիշ բաները

մէյմէկ նշաններով կը գրէին։ Ա.յս նշաններէն մինչև հիմա կը գտնին հին գրքերուն մէջ և տնկած քարերուն վրա. ինչպէս փէՏԷԼԷ դաշէն վրան ալ կան, որ հին ատենը եգիպտոս գրեր են. և եաքէն Ատամպօլ բերեր են Հռոմի ատենը։

Ա.հա՛ գրին սկիզբը ասանկ եղաւ. որոնց վրա նայելով քիչ քիչ գիր ալ հնարեցին։ Ա երկը փիւնիկեցիք ալ ասոնց նայելով, և ուրիշ ազգերն ալ տեսնելով հնարեցին իրենց գիրը անկատար կերպով։ Յետոյ հետզհետէ կատարելագործեցին։

ՈՂԻՊԱՐԵԼԱԳՈՐԾԵՑ։

7. Հին բաներուն վրա խօսողները կըսեն թէ քաղդէացոց գիրը հայր Ա.բրահամ գտաւ։ Հրէաներուն գիրը Ա՝ովսէս հնարեց։

Իսկ յունաց գիրը Կադմոս թագաւորը ափրիկէէն բերաւ յունաստան իրեք հազար տարի առաջ, որ ան ատենը տասնըվեց էր, եաքը Ա.ղէքսանդր թագաւորին ատենը աւելցնելով կատարելագործեցին։

Ընկէ եաև Արիստոտելես յունաց գրէն հանեց լատինացոց գիրը.

իսկ Հայոց գրին համար Սարգան պատմիչ կըսէ թէ հին կռապաշտու-թէ ատենը հնարեր էին քսանուերկու գիր. բայց անկատար ըլլալուն համար ձգեր էին, ու Հռոմի և ասորիի գիր կը գործածէին մինչև՝ որ Մեսրոպին ատենը։

Իսկ՝ որ Մեսրոպ քան 406 թուականին շատ աշխատելով՝ այ օգնութիւնը գտաւ հնարեց կամ լրացուց վերի գրած երսունրվեց գիրը՝ խիստ գեղեցիկ և կատարեալ. անանկ որ քիչ ազգի մէջ կայ ասանկ կատարեալ այբուբեն մը։

Մեր գիրը ինչպէս է։

8. Եր Մեսրոպին գտածը երկաթագիր էր, որ կամ երկրթով կը գրէին, և կամ երկրթի սևով. ուստի հին ձեռագիրները երկաթագիր գրրած են։

Այս գիրը քիչմը դժուար գրվելուն համար ետքը տանգլուխ ըրին ու բոլորգիրը հնարեցին եօթը հարիւր տարի առաջ. որ աւելի դիւրին գրրվելուն համար գործածական եղաւ։ Յետոյ երկու հարիւր տարի ալ անցնելէն ետև նօտրգիրը

կամ նօտարի գիրը հնարեցին. և հիմա բոլորգիրն եղաւ տպագիրը, որով գիրք կը տրպենք. և նօտրգիրն եղաւ գործածական ձեռաց գիր։

Ինչպէս կերթայ։

9. Մեր գիրը և եւրոպացոցը նաև շատ ազգերունը ձախ դիէն աջը կերթայ. իսկ արաբներուն և հրէից աջէն ձախը կը գրվի, որ աւելի յարմար կերևնայ կրսեն։ Բայց Ճինիմաչիններուն գիրը վերէն 'ի վար կերթայ։

Սակայն վարի աշխարք շատ տեղ գրի տեղ չուան կը գործածեն՝ վրան կերպ կերպ կապեր ընելով, որ գոռէպօ կը կոչեն. և եթէ նոյն կապերը իրար քով բերելով կը կարդան ուրիշներց համրանքն ալ անով կը վճարեն (144)։

Հնդստան ալ կայ ասանկ գիր, որ մարդու չեն սորվեցներ. իրենց տըղոցն ալ մինչև որ աղէկ մը չափահաս չըլլան՝ չեն սորվեցներ (194)։ Ճինիմաչիններուն բուն գիրը նշանագիր է. որ ամէն բանին ձևը գրելով ուրիշուն հազար նշանագիր եղած է։

Ընկէ՛ի զատ երկու հարիւր տասնըչորս գիրք ալ ունին, որ տեղ տեղ կը գործածեն։ Ասոնց մէջ կարդալ գիտցողը շատ մեծ գիտուն կը սեպուի (207)։

Ինչպէս գրան տպագրութիւնը։

10. Յամի 1440 թուականին նէմցէատան ոսկերիչ մը անունը Յոհաննէս փոստոս՝ փայտի վրա փորեց գրերը ամէն մէկ երեսին համար, ու անանկ տպեց նախ Կիկերոնին գիրքը։

Որուն նայելով ուրիշներնալ եռեւէն եղան, ու ամէն մէկ գիրքը կապարէ թափեցին և հետզհետէ կատարելագործեցին. անանկ որ քիչ ատենին մէջ հազարաւոր թղթեր կը տպուի, որ հազար հոգի չեն կրնար գրել։ Ի՛նչ այս գիւտս ալ շատ հարկաւոր և պիտանի եղաւ ուսումնականներուն։

Իսկ 1567 ին սկսաւ Հայոց տպագրութիւնը։

Ինչպէս կը կարդան կոյրերը։

11. Կոյրերուն համար անանկ գիրք կը տպեն որ գրերը վերը ծնալով մատով կորոշեն, ու անանկ լաւ կրթուս-

թէ կընեն մատերնին միայն գայլը-նելով որ մեզի պէս կը կարդան։

Իսկ անլեզու համբերուն և խուլերուն համար ալ հնարեցին որ պրակունքնին և լեզունին շարժելով ձայն մը հանեն. և այս ձայներս գրի վրա կապելով իրենց սորվեցուցին գրել կարդալ և ուստում սորվիլ. անանկ որ ինչ գրես իրենց հարցընես մէկէն պատասխան կուտան գրով։ Էմցէլ Թագաւորին գրագիրները բոլոր ա-սանկ համր էն։

Ինչպէս գրելու է ծածուկ։

12. Հին ատենը երկու շիտակ գաւազան միաչափ իրարու կը զրկէին. երբոր մէկը ծածուկ բան մը ուզէր գրել՝ երկան թուղթ մը կը փաթթէր գաւազանին վրա՝ անանկ կը գրէր։ Իրը այս թուղթը մէկալին կերթար,անալիր գաւազանին փաթթելով կը կարդար։ Սակայն հիմա թուանշանով կը գրեն. զորօրինակ թէ որ 12 թիւը գնէս այբի տեղ և 20 թիւը զատի տեղ ու գրես 12-20, կըլլայ աղ։

Բայց ինչ որ գրես ջանա՛ որ արագ վարժեցընես գրել քանի որ ջիղերդ

կակուղ են։ Հին ատենը արագ գրելու համար զանազան նշաններ հնարեցին որ քիչ ատենին մէջ ուրիշին բերնէն ելածը մէկէն կը գրէին։

Ինչ է հեռագրութիւն։

13. Լուսոպացիք միշտ գրի վրա նոր նոր գիւտեր կը հնարեն։ Պատերազմի համար հեռագրու�ը հնարեցին, որ զանազան նշաններ կը դնեն բարձր տեղեր իրարմէ հեռու, և հետզհետէ իրարու դրած նշանը գիտելով քիչ ատենին մէջ լուրը հեռաւոր տեղեր կը հասցընեն։

Նաև գործիք մը հնարեցին ուղղագրութեան համար, որուն մէջ թուղթը գիր առանց վրան նայելու գրէ, ուղիղ և շիտակ կը գրվի։ Մեծ գեղեցկագրութիւնը, որ մէկ գրչով զարմանալի գծերով գեղեցիկ գրեր և ձեւքերներ կը գրեն։

Այսպիսի հիմա բաւական է գրի վրա. ասոնք աղէկ սորվելէդ ետև ջանա գրաբառ ալ սորվիս, որ ձեմարանին առջի մասը կարդաս՝ որ աւելի հմտութիւն ունենաս։

94 32 57 1057

Պատմութիւն։

Հնատատան պարոնին մէկը լեռը ընդ գերի մը ունէր, որ ամենևին գիր կարդալ չէր տեսած։ Օր մը տէրը իր բարեկամին տունը ասոր հետ ընծայ կը ղրկէ, հետն ալ գիր կուտայ։ Ծառան Համբան կը գողնայ ընծան ու մինակ թուղթը կը տանի։

Երբոր թուղթը կը կարդան, կուզեն իրմէն բանները։ Իսկ գերին կուրանայ թէ բան չի կայ. դուք ուսկից գիտէք որ ասանկ բան կայ. ես մինակ էի, ձեզի ո՞վ պատմեց։ Անոնք ալ ըսին թէ ահա թղթին մէջ գրած է. ծառան զարմանալով կըսէր թէ գիրը սուտ կը խօսի, անանկ բան չի կայ. կարելի է որ ծուռ տեսեր է։

Ուրիշ անգամ ալ որ տարաւ, նախ թուղթը քարի մը տակ պահեց, որ տեսնելով իմաց չի տայ. և թղթէն ծածուկ գողցաւ. ետքը տարաւ թուղթը տվաւ։ Այց թուղթը կարդալով նորէն գողուելը իմացվեցաւ։ Իսկ ծառան կաղաչէր անոնց որ սուտ է՝ մի՛ հաւատաք գրին. զի թուղթը բան մը չի տեսաւ։ Սակայն խիստ շատ զարմացաւ և խել

քը չէր հասնէր թէ ինչ զօրուէ ունի գիրը, և ինչպէս կը խօսի թուղթը։

Ահա գուն այսօր մանուկ անմեղան,
Եկար մօտեցար պարտէզին դրան.
Այլէ՛ ուրչափ նեղան ազնիւ ծաղիկ կան
որ պիտի խելքիդ զարդարանք ըլլան։
Եթէ նոյն ջանքով ամէն օր հոս գաս,
կը թևաւորիս, շուտ նեղս կը մոռնաս.
Մեղուի նման՝ անուշիկ կըլլաս,
գիտուն ծաղկով սիրուն կերևնաս։

Բ. ՀԱՄԱՐ

Ինչէ լեզու։

14. Արարիչը Ադամայ ստեղծելէն ետև՝ կարողութիւն մը տվաւ իրենց որ մտքերնէն անցած բանը լեզուով իրարու յայտնեն. որպէս զի մարդկուները յայտնըվի, և ամէն մարդու խելքը հասկըցվի։

Ահա լեզուն է այս ամէն բան կատարողը. և մարդուս խորհուրդը յայտնող՝ որ անհնարին բանը խօսք կըլլայ, և խօսքն ալ գրի հետ կապելով նիւթական բան մը կը ձևանայ։

Իբր զի՝ երբոր մտքէդ անցած բանը կուզես զուրցել, լեզուդ պրա-

կունքներովդ կը շարժես, խուչակովդ (պօղազովդ) մէջի օդը՝ լեզուովդ դրսի օդին դպչելով ձայն կելլէ. և այն ձայնը լեզուդ մաքիդ բանին հետ կապելով կիմացնէ։

Ահա այսպէս խորհուրդդ բերնէդ ելլելով խօսք կելլայ։ Ինչ որ նոյն ձայնը գրի վրա կապես՝ խորհուրդդ դառնայ գիր կելլայ։ Օ որօրինակ թէ որ մտքէդ անցնի թէ օ՝ մը գրեմ. լեզուդ շարժելով միտքդ խօսք կելլայ, ու կիմանան թէ օ կուզես գրել. թէ որ գրչով ալ գրես խորհուրդդ՝ գիր կելլայ.

Ուստի առաջ մտքիդ մէջ մինակ դուն գիտէիր, խօսելովդ ուրիշին ականջը լսեց. և գրելովդ ալ ուրիշին աչքը տեսաւ, կարդաց։

Ի՞նչպէս կելլայ։

15. Լեզուն զանազան ջիղեր և կապեր ունի. անանկ որ մարդուն ուզած ատենը կը շարժին։ Ուստի երբոր կուզենք բան մը խօսիլ այն կապերը կը շարժենք. որ երկրննալով և կարձելով պռկունքին ջիղերուն հետ միատեղ խօսք կը կապեն, և մտքին խորհուրդը կը յայտնեն։

Ահա այս պատճառաւ լեզուն սրբ-
տին գործիքը կըսվի. վասն զի սրտէն
անցած բաներըը կիմացնէ. և այս
մարքով ամէն ազգին խօսակցութիը
լեզու կըսվի. Հայու խօսք, Ֆռէնկի
խօսք ըսելու տեղը, Հայու լեզու,
Ֆռէնկի լեզու կըսենք. ինչու որ լե-
զուով կը խօսինք։

Ադամ ինչպէս կը խօսէր։

16. Այս բանին վրա շատ մարդիկ
շատ բան զուրցեցին, բայց չի կրցան
բան մը հաստատել։ Այսչափ յայտ-
նի է թէ ՈՒԾ ամենաբարին երբոր
Ադամ ընկերական ստեղծեց՝ ու-
րիշ կենդանիներէն զատելու համար
խելք միտք և խօսելու կարողութի
տվաւ, որ ընկերուն ընեն և իրարու
հաղորդեն իրենց սիրտը։ Սակայն
Ադամին ու Եւային խօսակցութիը
մեզի պէս քիչ քիչ կատարեալ չեղաւ,
հապա՝ մէկէն կատարեալ ստեղծվե-
ցան. և ՈՒՅ ձեռքով ստեղծվելնուն
համար՝ շատ իմաստուն ճարտասան
և գեղեցիկ էին, ինչպէս կըսեն վար-
դապետները։

Հին կամ Նոյն լեզուն։

17. Հին վարդապետներէն ըսող է՝ղաւ, թէ որովհետև ՅԱծաշունչը նախ Եբրայեցոց լեզուովը գրեց Մովսէս մարգարէն, պէտք է որ Ս. դամայ խօսած լեզուն ըլլայ։ Բայց այս բանը հաստատ չէ. վասն զի ՅԱծաշունչը հրէաներուն համար գրվեցաւ. պէտք էր անոնց լեզուովը գրել. որպէս զի հասկրնան չէ թէ Ս. դամայ լեզուովը. մանաւանդ որ անոնց լեզուն քանիմը լեզուէ խառնած ըլլալով ինչպէս կըլլայ առջի լեզուն։

Շ իտակը խօսելով հին լեզուներուն մէջ փնտրուելու ըլլանք՝ հայոց լեզուէն յարմարը չի կայ. և ամէն ազգէն աւելի մենք կրնանք ասդել, թէ մեր լեզուն է առջինը։

Որովհետև դրախտը Հայաստան էր. տապանը Ս. ղարատ լեռան վրա նստաւ. Նոյնահապետ ալ հոն եկաւ և հոն շինեց առջի քաղաքը Նախիջեւան անուանով. և անկէ տեղ մը չի գնաց, որդիքներովն և թոռներովն հոն մնաց։

Նաև լեզուները Պաղատատ խառնըվեցան. ուրեմն Հայաստան եղող

ներուն լեզուն չի խառնըվեցաւ, նոյն առջի լեզուն մնաց։

Ինոր համար հայու ազգը ամէն ազգէն հին կը սեպվի, և ամենէն աւելի կրնայ հաստատել իր լեզուին հնութիւնը. որ է գրաբառ լեզունիս։

Ինչպէս շատցան լեզուները։

18. Ինչամ ստեղծվելէն ետև հազար եօթը հարիւր յիսուն տարի անցաւ, մարդիկ այ Ճամբայէն դուրս ելան ու պատուիրանները չի պահեցին, ուստ ալ բարկանալով ջրհեղեղ տվաւ, անանկ որ քառասուն օր գիշեր ցորեկ գետի պէս անձրև կուգար. և ջուրը ելաւ մինչև լեռները կոխեց։

Ինատենը ամէն մեղաւոր մարդիկ ջրով կորան. միայն Նոյ նահապետ իր զաւակներով և հարսներով ութ հոգի ազատեցան տապանին մէջ։ Ջուրը քաշվելէն ետև նորէն մարդիկ աճեցան հայաստանին մէջ. այնչափ որ տեղը քիչ եկաւ իրենց, շատ մարդիկ միաբանեցան ելան դէպ'ի Պաղտատ գնացին, Այնէար դաշտին մէջ բնակեցան։

Ոն ուզեցին մէկ մեծ աշտարակ մը շինել, որուն ծայրը մինչև երկին

քը հանի. որպէս զի կարենան ջրհեղեղէն ազատիլ, թէ որ նորէն ըլլալու ըլլայ, և մեծ յիշատակ մը ձգեն ետքի եկողներուն (191)։

Այս բանս ՝ոյ դէմ ըլլալով, աշտարակը շինելու ատենը անանկ յանկարծ բան մը եղաւ՝ որ մէկը մէկալին խօսքը չի հասկընալով իրար անցան։ Եւ ասանկ շփոթելով անկատար ձգեցին նոյն գործքը, մէյմէկ դի քաշվեցան, ու զանազան տեղեր քաղաք շինեցին բազմացան, և մէյմէկ ազգ եղան զանազան լեզուներով (157)։

Նոր համար այն տեղը կոչվեցաւ Բաբէլն. որ կըթարգմանի խառնակումն։

Բանի լեզու Բաժնվեցան։

19. Կըսեն թէ եօթանասուներ-կու նահապետութիւն էին, ամէն մէկը մէյմէկ ազգ ըլլալով այնչափ ալ մայր լեզու ունեցան։

Բայց յետոյ իրարմէ առնելով և իրարու խառնվելով շատ լեզուներ առաջ եկան. ինչպէս եւրոպացոց շատ լեզուները լատինէն ելած են. լատինն ալ հռոմի լեզուէն։

Ինչպէս է Ազնիւրուն լեզուն։

20. Այս ազգին ամէն բանը արտաքոց ըլլալով լեզունին ալ զարմանալի է. ասոնց լեզուին բառերը միավանկ են. բայց կերպ կերպ ձայն հանելով նշանակութիւնը կը փոխվի։

Մէկ բառը կամաց զուրցես, ուրիշ բան կը նշանակէ, բարձր զուրցես կամ ծանր՝ ուրիշ նշանակութիւն կունենայ. անանկ որ երբոր կը խօսին որը ցած որը բարձր, կարծես թէ բան կերգեն։

Ամերիգացոց ինչպէս է։

21. Ամերիգացոց լեզուն ամէն ազգէն կոշտ և անկարգ է. որովհետև վայրենի ըլլալով ոչ գիր ունէին և ոչ ուսում։ Աստի ինչպէս որ գազանի կեանք ունէին, անանկ ալ լեզուն էր. որ երբ կիրք մը և ներքին ուրախութիւնը կուզէին յայտնել, գազանի ձայներ կը հանէին, և շան պէս կը հաչէին (425)։

Տես թէ մէկ ազգ մը ուսում և կրթուն որ չունենայ, գազանի բաներ կընէ. և ինչափ աւելի կրթվի, այնչափ ազնիւ և բարակ կըլլայ։ Ինչ-

պէս մէկալ մասերուն մէջ ազգերուն պատմութիւն որ կարդաս, աղէկ կը հասկընաս։

Ո՞ր լեզուն է գործածական։

22. Այն ազգերուն լեզուն աւելի կը գործածվի, որ թագաւորութիւնին և շատ վաճառականութիւն. ինչպէս հին ատենը մեր թագաւորութիւն որ զօրաւոր էր ու շատ ազգերու կը տիրէր, օտար ազգերն ալ հայերէն կը խօսէին (171)։

Սակայն գործածական լեզու անոր կըսենք, որ շատ գրքեր այն լեզուով շինած կան, և ամէնքը կարդան և կը խօսին։ Ինչպէս արաբներուն մէջ շատ գրքեր շինվելուն համար՝ մայր լեզու ըսվեցաւ։

Յեռոց յունաց փիլիսոփաներն եկան գրքեր շինեցին. եռքը լատինին լեզուով շատ գրքեր շինվեցան. անոր համար մայր լեզու ըսվեցան, և գործածական եղան. անանկ որ շատ ազգեր կը սորվին։

Բայց հիմա եւրոպացոց ամէն ազգի գիտունները իրենց լեզուով գիրք շինելնուն համար, կրնամ ըսել թէ ամենուն լեզուն ալ գործածական է։

Անաւանդ դալիաններուն, Ֆրանսիզներուն, Նէմցէներուն և Ինկլիզներուն. որ ամէն օր նոր նոր գրքեր կը հանեն, և ուրիշ ազգերն ալ կը թարգմանեն։

Ո՞ր լեզուն պէտք է նախ սորվիլ։

23. Ամէն ազգ պարտական է որ նախ իր մայրական լեզուն աղէկ սորվի. իրեն լեզուին կարդալ գրելը լաւ կատարէ, ու գրաբառն ալ սորվելով ազգին տեղեկութիւնը գիտնայ։ Յետոյ պէտք է ուրիշ լեզուներ ալ սորվի որչափ որ հարկաւոր կըլլայ։

Ասոնք ամէն ազգի մէջ խիստ մեծ ամօթ է որ իր լեզուն կըձգէ՝ ուրիշներուն լեզուն կը սորվի. և իր ազգը մէկ դի կը թողու՝ ուրիշ ազգաց պատմութիւնը տեղեակ կըլլայ։

Ահա ամենէն աւելի մեր ազգին մէջ կայ այս պակասութիւնը. Ջանամ որ մէկն ալ դուն չըլլաս։ Պէտք է որ մանկութէ լաւ հասկընաս հայոց լեզուն և գրագրութիւնը։ Յետոյ Ջանամ քերականութէ կանոններն ալ միտք առնես, և ուսումնասէր ըլլալով գրաբառն ալ սորվիս. որպէս զի երբոր մեր նախնեաց գեղեցիկ շա-

բագրութիւններն ու պատմութիւնները և աշխարագրութիւնները կարդաս, հմուտ ըլլաս և զմայլիս ուսումնասէր մանկանց նման։ Ինկէ ետև սորվէ ուրիշ լեզուները։

Այս կարգով, նոյն զարմանալի հմտութիւնները անանկ կանուշնան քեզ, որ կարծես թէ մէկ պարտէզի մը մէջ մտեր ես, որ զանազան ծաղկիներով լեցուն է. և անոյշ հոտերուն և գեղեցիկ գոյներուն վրա անանկ կըզմայլիս, որ չիյտես թէ ո՞ր մէկը փրցընես. մինչև ամենևին չես ուզեր անկէ դուրս ելլել։

Պատմութիւն։

Կրեսոս թագաւորին տղան շատ գեղեցիկ էր. բայց լեզուն կապված ըլլալով չէր կրնար խօսիլ։ Որ մը թշնամիները եկան կոխեցին ու բռնեցին թագաւորը պիտի մեռցընէին։

Տղան տեսաւ որ սուրը վերցուցեր են հօրը պիտի զարնեն, աղաղակեց որ հայրը ազատէ։ Ուստի այնչափ քնուեր ուժ տվաւ, որ լեզուին կապը քակվեցաւ, ու համր տղան լեզու ելաւ կանչեց որ իմ հայրս է՝ մի՛ մեռցընէք։

Ընատէնը ամէնքը զարմանալով տղուն հայրասիրուէը վրա ազատեցին Արեսոս Թագաւորը։ Ընկէ ետև տղան համարձակ կը խօսէր։

Իմ աղնիւ մանուկ քեզ այսօր բերի
գոյնզգոյն ծաղկանց մէջը մտցուցի.
Տես ի՞նչ գեղեցիկ գունով հոտով են,
Ժողովէ որչափ քեզ կըլլայ պիտանի։
Տեսար հեռուէն խիստ զըւարճալի,
այն գրախտին լեռներն անոյշ ծաղկալի.
Գիտուէ ծաղկունքն հոն գտնես պիտի,
որ խնամատուէիք հոգիդ զարդարելի։

Գ. ՀԱՄԱՐ

Ի՞նչ է Վարդապետութիւն։

24. Վարդապետութիւն է շիտակ խօսելու և գրելու արուեստ։ Որովհետև խօսքը մարդուս յատկութիւն է, անոր համար այս ուսումն ալ մարդուս խիստ շատ հարկաւոր է. որպէս զի շիտակ խօսի և շիտակ գրէ։

Բայչափ հարկաւոր և գեղեցիկ ըլլալով պէտք է որ սիրտդ վառուի այս ուսմանը վրա. Ջանա՛ որ լաւ սորվիս կանոնները, և աղէկ ուշադրութիւն ընես, որպէս զի ասով գրաբառ լե-

զուին բալ լիքն ստանաս, ու գիտու-
թիւն հետևիս։

Սակայն այս համարով չէս կրնար
կատարեալ սորվիլ այս արուեստը.
միայն ինչպէս ըլլալը և ինչ մեծ զօ-
րութիւն ունենալը հասկըցնեմ։

Ինչո՞ւ կըսվի արուեստ։

25. Քերականութիւնը մարդուս լե-
զուին արուեստն է. որ անանկ կար-
գով կը շարէ իրարքով բառերն, որ
առանց սխալանաց շիտակ խօսիլ և
շիտակ շարադրել կըսորվեցնէ ինչ
լեզու որ ըլլայ։

Ինչոր համար ամէն ազգի մէջ հին
ատենէն 'ի վեր շինած կայ. ինչպէս
որ հին բանաստեղծներուն գրվածք-
ներէն կերևնայ։ Այսն զի ամէն
ազգի ուսումնականները ջանացեր
են իրենց մէջ հնարել։

Այս եգիպտացի գիտուններըտե-
սան որ տղաքը աւելի դիւրին կը սխա-
լին, և քանի կերթայ լեզուն կաւ-
ելի, ջանացին կանոններ դնել. որպէս
զի նոյն կանոններով խօսակցութիւնը
շտկելով լեզուն չաւելի։ Ինչ այս
կանոններէն քերականութիւնը ըս-

կրսաւ։ Այսպէս են ըրեր և ուրիշ ազգերն ալ։

Այլ հետզհետէ որչափ որ ազգ ազգի հետ խառնըվելով լեզուները փոխվեցան, այնչափ ալ քերականութիւն կանոնները աւելցնելով կատարելագործեցին։ Իսկ եթէ ատենները չանացին կերպ կերպ քերականութիւն հնարել, մանաւանդ եւրոպացիք. որպէս զի գիւրին կերպով տղաքը սորվին ու գիտութեան համն առնեն։

Դ՝ԷՌ ԿԻՍԱ ՄԵՐԸ։

26. Թարգմանչաց ատենը գիրը գտնըվելէն եթէ (7), յունաց քերականութիւնը հայերէն թարգմանեցին. ու մեկնութիւններ տալով երկնցուցին, որ անկատար էր։

Որոր համար եթէ գիտունները շատ աշխատելով կատարելագործեցին։ Դ՝ԵՎ ենեսիկի վանքէն հիմակվան եւ ածքերականութիւը էն կատարեալն է մեր ազգին մէջ. որով հայկական հարուստ լեզուին ճոխութիւը կրնաս սորվիլ։

Ինչպէս պէտք սորվինք։

27. Բաց ի սի թէ ամէն ազգ ի՛ն յատուկ լեզու և խօսակցութիւն ունի. ոմանք մայրական լեզու է, ոմանք խառնած կամ իրարմէ եւած։ Որոնն լեզուն աղքատ է քիչ բառ ունի, ինչպէս են քանի մը Ֆռէնկի լեզուներ. որուն հարուստ է շատ բառ ունի, ինչպէս է հայունը, հռոմինը, արաբինը, և այլն։

Բերդ այս ազգերը իրենց լեզուին ամէն բառերը մէկ տեղ մը բերեր ու գատեր են, նայելով թէ քանի տեսակ բառ կայ։ Եւ ահա գատելով գատելով գտան որ ութը տեսակ բառ կայ. ու ամէն լեզու այս ութը ցեղ բառերէն կը բաղկանան։

Որոշինակ պարտէզէն վարդ մը կը կտրես ու կուզես հասկընալ թէ այս վարդը քանի ցեղ բանով բաղկացած է. մէկիկ մէկիկ ամէն մէկ կտորը կը գատես։

Նախ վարդը կը փեթթես գատ կը դնես. երկրորդ՝ կոկոնները (խոնջաները), երրորդ՝ տերևները. չորրորդ՝ վարդին մէջ տեղի դեղին ծաղիկը. հինգերորդ բարակ ձիւղերը. վեց-

երորդ երկան Հիւղերը. եօթներորդ՝ բաղքաղաքները (Ֆիլիպները). ութերորդ՝ փուշերը մէկ դի կը զատես։

Յետոյ կը նայիս որ վարդ չի կայ, զի բոլոր վարդը ութը կտոր բաժնը՝ վեցաւ։ Այսով կը հասկընաս թէ նոյն վարդը ութը ցեղ բանով շինված էր։

Եւ որ այս կտորները նորէն իրենց տեղը փակցընես, նայիս որ նորէն վարդ կըլլայ։ Այսպէս ալ մարդուս բոլոր խօսքերը զատես, ութը տեսակ բառ կըլլայ. թէ որ նորէն իրենց տեղը շարես՝ նոյն խօսքը կըլլայ։

Այսպիսի բանմընէ քերականութիւն արուեստը. որ խօսքերը քակելով ամէն մէկ բառին վրա կը խօսի, և իրենց յատկութիւնը կը բացատրէ։ Յետոյ իրարու քով բերելով՝ նորէն խօսք կամ բան կը շինէ քերականական կանոնով, որ կըսվի շարադրութիւն։

Ի՞նչ է ասվին այս բառերը։

28. Անունը անուն կըսվի, որ բանի մը անուն կուտանք, ինչպէս Վարդ, Ման, Իսրայէլ, Հուլուսի։ Դերկրորդը դերանուն կըսվի, որ անունին տեղը կը դրվի. ինչպէս, Ես, Դուն. զի մանուկ ըսելու տեղը դուն կըսեմ։

Դերբորդը էջ կըսվի, որ ըլլալ մը և ընել մը կը յայտնէ. ինչպէս Դա, Սորվէ, Տացիր։ Չորրորդը ընդունելութիւն կըսվի. որ բային ու անունին մէջն է. ինչպէս Խօսող, խօսած։ Հինգերորդը նախադրութիւն կըսվի, որ բառի մը վրա գնելով աւելի բան կիմացնէ. ինչպէս Դանց։ Վեցերորդը մակբայ կըսվի, որ բային վրա գնելով գործողութիւն կերպը կը հասկըցնէ. ինչպէս Մի՛շտ։ Դօթներորդը շաղկապ կըսվի, որ բառերն ու խօսքերը իրար հետ կըկապէ, ինչպէս Ու։ Ութերորդը գոչիւն կըսվի, որ սրտին կիրքը կը յայտնէ. ինչպէս Ո՛հ։

Դայս ութը բանով կը ձևանան ամէն խօսքերնիս, և ասանցմէ դուրս ուրիշ բառ չի կայ. անոր համար ասոնք կըսվին Մասունք Դանի. որովհետև բանին կտորվանքն են, և ասոնցմով բան կը շինվի։

Ուստի քերականութիւնը այս բառերը զատելէն ետև կը բերէ կանոնով իրար քով կը շարէ, որ բան կը ձևանայ. զորօրինակ վերի բառերը թէ որ իրար քով շարես, ասանկ խօսք մը կը ձևանայ. Դուն մարդ ես խո-

սօղ, ուհ միշտ բան սորվիլ առանց ծուլութիւն, ու խելք ստացիր։

Ա՞ՐՔԻ ՄԱՍՆ ԻՆՉ ԿԸ ՍՈՐՎԵՑՆԷ։

29. Բերականութիւն առջի մասին մէջ պիտի սորվիս նախ հոլովները. որ կը յայտնէ թէ մէկ անունը քանի կերպ կը փոխվի. զորօրինակ ուղղական հոլովով մարդ կըսենք, սեռականով մարդու, տրականով մարդու, հայցականով մարդը, բացառականով մարդէն, և գործիականով մարդով։

Ինչ յոգնակի ըսենք. մարդիկ, մարդերուն, և՝ն. ինչպէս. մարդն եկաւ, կամ մարդիկ եկան. մարդու էր. մարդու տըվաւ. մարդը կանչեց. մարդէն առաւ. մարդով շինեց։ Ա՛հա ասոնք են հոլով։

Երկրորդ պիտի սորվիս լծորդութիւնները. որ մէկ բայը կերպ կերպ կը փոխվի. զորօրինակ կարդամ, կարդացի, պիտի կարդամ. կարդացին. կարդալով, և՝ն։

Ա՛սոնցմէ 'ի զատ պիտի սորվիս անոնց յատկութիւնը, քննելով թէ ամէն մէկը ինչ զօրութիւն ունին. ածականներ են թէ դոյական. մինակ են թէ բաղ-

մաւորական։ Այսպէս քանի՞ տեսակ ունին. ի՞նչպէս ածականը մակբայ կըլլայ, ևն։

Երրորդ մասն ի՞նչ կը սորվեցնէ։

30. Այս ուղիղը բառերուն յատկութիւնը քննելէն ետև, երկրորդ մասին մէջ կը սորվեցնէ թէ նոյն բառերը ի՞նչ հոլովով և ի՞նչ կարգով պիտի իրարու հետ շարադրես որ բան և խօսք ըլլայ, աղէկ հասկըցվի, և քերականութիւնէ դէմ ծուռ չըլլայ։

Այս վերի խառնիխուռն բառերը զատ որ կարդացիր խօսք չեղաւ, բայց երբոր կանոնով շարեցիր բան եղաւ (28)։ Այս պատճառաւ քերականութիւնը կըսվի արուեստ շիտակ խօսելու։

Ի՞նչ է առոգանութիւն։

31. Առոգանութիւն պիտի սորվիս որ շիտակ և հարթ կարդաս գրվածքը մը։ Այն մէկ բառը շեշտով զատես և յստակ արտաբերես ամբողջ։

Երբոր հարցական նշան կը տեսնես այսպէս (՞), ձայնդ բարձրացուր ու բարակցուր. իսկ երբոր կոչական (՛), լաւ մը զարկ նոյն բառին վրա։

Երբոր ստորակէտ կըլլայ (,) քիչ մը կանգ առ, բայց մի կտրեր. երբ միջակէտ կըլլայ (.) աւելի կանգ առ. երբոր վերջակէտ կուգայ (:) բոլորովին կտրէ։

Ահա այսչափ քերականութիւը հասկընալէն ետև պարտական ես որ ջանքով և սիրով սորվիս. որպէս զի անով կարենաս գրաբառ լեզուն հասկընալ գեղեցիկ շարադրութիւներ կարդալ և շինել. մինչև ըլլաս երևելի իմաստասէր, և ազգին մէջ գովելի պիտանի և փառաւոր։

Պատմութիւն։

Ոմանք մարդ մը գնաց Արիստիպպոս փիլիսոփային հարցուց. Թէ որ տղաս դպրատուն դնեմ, ու քերականութիւն սորվի նէ՝ ինչ շահ կրնայ ըլլալ։

Պատասխան տըվաւ. Թէ որ ուրիշ օգուտ մը չըլլայ, ստուգիւ այս շահը կըլլայ, որ տղադ անպիտան քարի պէս ծանրուն չի տար աշխարքիս. այլ ուսումնական ըլլալովը բանի կուգայ, ու ազգին և քաղաքին օգուտ մը կընէ։ Որովհետև բան չգիտցող մարդը անպէտ քարի նման միշտ ծան-

ըուն է. իսկ սորված մարդը միշտ պի-
տանի է կրթըված ձիու պէս.

Դուն պարտական ես որ անանկ
բան սորվեցնես որդուդ, և անանկ
մեծուն տաս՝ որ նաւակոծութիւն ալ
հանդիպի նէ՝ չի կորսըվի նոյն մե-
ծուները, այլ միշտ իրեն հետ մնայ։

Քերականութիւն մատեցար գրան,
հասկըցար արուեստ քերականութիւն.
Ո՛ւշ դիր փափաքով որ առաջ երթաս,
գեղեցիկ հանիս գուռն ամէն ուսման։
Թէ լաւ բանիդ աղէկ ուշ դնես,
ամէն մէկ խօսքդ կանոնով զուրցես.
Քերականութեան միտքդ կըլլայ քեզ,
գիտուն արուեստ հոն տեղ կը գտնես։

Դ. ՀԱՄԱՐ

Ի՞նչ է Ճարտասանութիւն։

32. Ճարտասանութիւնը կը նշանա-
կէ Ճարտար ասութիւն - որ է արուեստ
բարուք և գեղեցիկ խօսելու. և ա-
սով կը զանազանի քերականութէն,
որ է արուեստ շիտակ խօսելու։

Այսն զի Ճարտասանութիւնը անանկ
կանոններ կուտայ, որ քերականա-
կան պարզ խօսք մը գեղեցիկ կը զար-

դարէ, և զանազան պատճառներով և օրինակներով կը ճոխացնէ։ Անանկ որ երբ կը կարդաս մէկէն սիրտդ կը շարժի, ու ընել կուզես կամ նորէն ըսել կուզես։

Նոր համար այս ուսումը հին աստենը մեծ յարգ ունէր, և ամէն գիտուն թէն ետքը կը սորվեցնէին։

Եւ ամէն ճարուն թի կուզէր որ երևելի ճարտասաններ ունենայ. որպէս զի մեծ բան մը պէտք որ ըլլայ, ելլէ ճարտասանը կամ ատենաբանը բան խօսի խորհրդականներուն. որ սրտերնին շարժելով շուտմը կատարեն նոյն բանը։ Մէկ որ ընելու բան չէ ետ կենան։

Ութ կանոն ունի։

33. Ձևաւոր և գեղեցիկ բան շինելու համար շատ կանոններ կան. որ նախ պատճառները պէտք է գտնել և կարգի դնել. յետոյ գեղեցիկ բառերով և զանազան ձևերով ճոխաբանել, կամ զարդարել խօսքերը. որպէս զի լսողին սիրտը շարժի։

Օ որ օրինակ երբոր ճարտասանը կուզէ պատերազմ մը պատմել, անանկ նկարագրական ձևերով կը շի-

նէ որ կարծես թէ աչքով կը տեսնես. մինչև սիրտդ ցաւելով կը տրտմիս։

Այս պատճառաւ Ճարտասան մարդուն խօսքը մէկէն կը դպչի մարդուն, և ամէնքը կուզեն խօսքը լսելու միշտ ձեւաւոր պիտի ըլլայ։

Քանի՞ են ձեւերը։

34. Ճարտասանական ձեւերը շատ են. ոմանք կը գեղեցկացնեն խօսքը, ոմանք ազդու կընեն, ոմանք կը հարուստցնեն. ոմանք ալ ուրիշ բան կիմացնեն. զորօրինակ կեղծաւորը ըսելու տեղը որմ Բեթալ ըսաց Պօղոս առաքեալը քահանայապետին։

Աղարեկացին մեղաւոր հոգին խորտակած նաւով կը նկարագրէ։ Ան Յոհաննէս կաթողիկոսը լուսացաւ ըսելու տեղը՝ կըսէ թէ լոյն ղՓէղերն ծերկանայր. և այլ անբաւ ձեւեր։

Ինչ են հանդէսները։

35. Ճարտասանական հանդէս անոր կըսենք որ հանդէսի մէջ ձեւաւոր Ճառ մը կամ քարոզ մը կը խօսվի. որ ընդհանրապէս իրեք կը բաժնըվին. կացրդական, բաղխական, և ոգենական։

Կացրդականը անանկ խօսակցուն

է որ մէկ բանը զանազան ձևերով կը գովէ և կամ վար կը զարնէ. անանկ որ գոված ատենը կը սիրես. և վար զարկած ատենը կանարգես և կը դանիս։

Օ որ օրինակ երբոր աղուոր բառերով և ձևերով գիտութիւնը կը գովէ, և տգիտութիւնը վար կը զարնէ, մէկէն սիրտդ կը բռնկի որ գիտութիւն սորվիս, ու տգիտութէ հեռու փախչիս։

Բաղխոհական Ճառը առջինդ կը դնէ, թէ այս բանը վայելուչ՝ օգտակար՝ և հարկաւոր է. նաև դիւրին՝ զուարճալի և փառաւոր է, պէտք է որ ընես։ Կամ թէ ասոնց հակառակն ըլլալով՝ պէտք չէ ընես։

Սակայն Ճարտասանը անանկ ձևով կը խօսի՝ որ մի և նոյն բանը երբեմն գովելով կը համոզէ քեզ որ կուզես ընել. և երբեմն հակառակ խօսելով կը համոզվիս որ չընես. զորօրինակ աշխարհք ժուռ գալը ուրչափ աղէկ բան է, կամ ուրչափ վնասակար է, կրնայ համոզել քեզ երկուսն ալ ընելու։

Իսկ ատենական հանդէսն է անանկ Ճառ, որ դատաստանի մէջ կըլլայ՝ մարդ դատապարտելու և արդարա-

ցընելու համար. որ աւելի վարպետուն կուզէ. որպէս զի անանկ շարժէ գատաւորին սիրտն որ կամ ազատէ անպարտը, և կամ գատապարտէ յանցաւորը։ Ահա ասոնց վրա կը պրտրտի Հարտասանութիւնը արուեստը. և նոյն կանոններով կը շինվին քարոզը՝ խրատը՝ գերեզմանի ոտանաւորը, և հանելուքը. զորօրինակ.

Ընթեւ խօսնակ միշտ շարժական,
աղուոր կերգէ բայց չէ կենդան,
Բուներն մէջէն կիմացնէ,
պէտք եղածը ամէն մարդկան։

Որ է ժամացոյց. ահա հոս բառերը ուրիշ են, միտքը ուրիշ։

Շատ զարմանալի բաներ կան դիտնալու. Ջանա՛ որ Հարտասանուն կարդալու արժանի ըլլաս. Եթէ բանաստեղծուն ալ տրվիս ու զուարճանաս։

Ի՞նչ է բանաստեղծութիւն։

36. Բանաստեղծութիւնը քերթողուն կըսվի. իբր թէ մէկ խօսքը քերթելով և չեղած բաներէն հնարելով ստեղծաբանութիւն կընէ. նաև ուրիշ բան խօսելով տարբեր բան կիմացնէ։

Ուստի բանաստեղծական արուեստը այս բանիս վրա կը կայանայ, որ պզտիկ բան մը ստեղծաբանելով անանկ գեղեցիկ կը մեծցընէ, որ լսածիդ պէս կըզմայլիս։

Յին ուսումնականները տեսնելով թէ այսչափ զուարճալի է, ետեւէ եղան ծաղկեցուցին. որոնց մէկն էր Հոմերոս յոյն բանաստեղծ. որուն մինչեւ հիմա մարդ հաւասար չեղաւ։

Ի՞նչ զօրութիւն ունի։

37. Բանաստեղծութիւը այնչափ մեծ զօրութիւն ունի. որ կռապաշտութիւն ատենը կուռքերուն սուտ պատմութիւնները չեղած բաներով կը խօսէին և բանաստեղծութիւն Հշմարիտ կերևցընէին։

Նրբեմն կուռքերուն բերնէն մութ բաներ ստեղծելով այնպէս կը խօսէին. մինչեւ ռամիկ ժողովուրդին խելքը չի հասնելով կը սարսափէին. որուն կերպ կերպ մեկնութիւններ կուտային։

Ի՞նչ է։

38. Բայս ուսու մը երկուս կը բաժնըվի. մեկը կըսվի հոգնէրգոյն. որ է

բանաստեղծական գովեստ մեծամեծ գործքերու երևելի մարդկանց. ինչպէս է Պարեգին աշնուական տղուն գործքը, որ հաւատքի համար թագաւորը պատանձեցուց (145)։

Բանկ գովեստ երբոր լսես սիրտդ կեփի թէ դուն ալ անանկ գովելի բաներ ընէիր։ Ինչպէս Աղեքսանդր թագաւորը երբոր կարդաց Հոմերոսին բանաստեղծուիը Աքիլլէս քաջին վրա, երանի կուտար որ այնպիսի բանաստեղծական գովեստի արժանի եղած է։

Ո՞Ր է ՌԷՒԱԼԸ։

39. Մէկալ մասը կըսվի դերասանական բանաստեղծութիւն, որ նոր բան մը ստեղծաբանելով կը ձևացնէ նաև ատենօք եղած բանը ձևացնելով կը խաղայ դերասանը զրուցելով կամ երգելով. որպէս զի տեսնողներուն սիրտը շարժի։

Ուստի հին ատենը ասով իրենց ջածներուն ծնունդը մահը և սուտ հրաշքները կամ գիւցազանց գործքը կը նկարագրէին. հիմա միայն հին բաները և մեծամեծ մարդկանց գործքերը կը ձևացնեն։

Ինոր համար կռապաշտները բանաստեղծութիւնը իրենց ածաբանութիւն հետ կը խառնէին. և ածաբան կըսվէին բանաստեղծները։

Ինչ ջանալանութիւն ունի։

40. Յայտնի է թէ բանաստեղծութիւնը և Ճարտասանութիւնը քերականութիւն կը վերաբերին, և մէկ անուանով քերթողութիւն կըսվին. ու ամէնը միատեղ գրականութիւն կը վերաբերին։ Որովհետև այս արուեստները մարդկային խօսակցութիւն ձևերը կը սորվեցնեն։

Օրինակ՝ քերականական ոչնչով կրնայ ըսվիլ, թէ ինչպէս որ լուսը ծագելով խաւարը կը հալածէ. այսպէս գիտութիւնը մարդուս միտքը լուսաւորելով տգիտութիւնը կը հալածէ։

Այս խօսքս Ճարտասանական ձևերով անանկ գեղեցիկ կը ձևանայ որ կը գանիս տգիտուէ. ինչպէս Սարպիս կըսէ, թէ որ լոյս այնպէս կրնայ լուսաւորել մարդուս աչքը, ինչպէս գիտութիւն միտքը, ևն։ Սակայն եթէ ուզես այս խօսքը բանաստեղծական ոճով խօսիլ, կը նկարագրես մէկ

խաւարը անդունդ մը, մէջի մարդիկ չկրնան ուր երթան և ինչ ընեն. նայ-
խս անդիէն լոյս մը ծագեր է. լուսին մէջի եղջիւրները կը զուարճանան.
մութը եղջիւրները կը ջնջան լուսին մնտենան։

Բայց խաւարը կըսկըսի լալ և կը-
ջնայ որ լոյսը իրմէն հեռացնէ. որ-
պէս զի չըլլայ թէ զինքը հալածէ։
Երբոր կը տեսնէ թէ չըլլար՝ կը ջա-
նայ որ իր խաւար կապովը պզտի
տղաքը կապէ. անանկ որ չի ձգեն
զինքն ու լուսին երթան։ Եթէ լու-
սը զինքը հալածէ՝ նոյն տղաքն ալ
հետը տանի, որ լոյս չի տեսնեն։

Ահա այսպէս կը ձևանայ տգի-
տութիւնը. որ տղոցը միտքը կապելով
խաւար կը պահէ։ Բայց թէ որ այս
խօսքս ուսանաւոր շինվի, շատ գեղե-
ցիկ բանաստեղծուն կըլլայ, և աւե-
լի կը շարժէ սիրտը։

Արդ՝ ահա խօսակցուն վերաբե-
րեալ բաները կարճ՝ի կարճոյ հաս-
կըցուցի։ Ասկէ ետև պէտք է որ
տեղեակ ըլլաս մարդուս վերաբե-
րեալ բաներուն, պատմութեանց, օ-
րէնքներուն, և օգտակար հմտու-
թեց. որպէս զի ոչ միայն լաւ խօ-

սող, այլև աղէկ ապրող և կատա-
րեալ մարդ ըլլաս։

Պատմութիւն։

Ուիք անունով ազնուական տղան՝ մանկութէն այնչափ Հարտասան և ուսումնասէր էր որ ամէնքը կը զարմանային վրան։ Ինը տարեկան էր՝ օր մը մեծամեծներուն մէջ նստած շնորքով և աղուոր կը խօսէր, մինչ զի ամէնքը կը զմայլէին անոր խելքին և խօսակցութեանը վրան։

Ոնոնստօղ ազնուականներուն մէջէն մէկ տգէտ ծեր մը չի քաշելով ըսաց տղուն՝ թէ երբոր տղայ մը մանկութե ատենը շատ խելք կունենայ, մեծութե ատենը յիմար և կոպիտ կըլլայ։

Ինատենը խելացի տղան ասանկ պատասխան տըվաւ խոնարհ կերպով մը։ Պարոն, թէ որ իրաւ է ըսածդ՝ պէտք է որ Հրամանքդ ալ մանկութե ատենդ շատ բարակամիտ և խելացի եղած ըլլաս։

Դուն մի զարմանար մանուկ շնորհալի,
թէ ինչ բաներ կան որ ես չիյտէի.
Տես ասկէ ետև ինչ զարմանալի,
տեղեկութիւններ ըստանաս պիտի։

Պէտք է նախ գիտնաս մարդ ես մտացի,
սորվէ տես մարդուս ինչ բաներ պիտի.
Թէ ուսմամբ միտքդ գեղեցիկ ըլլայ,
բարի գործքերով պէտք է զարդարվի։

Ե. ՀԱՄԱՐ

Ինչ է պատմութիւն։

41. Պատմութիւնը անցած բաներն առաջ բերելով և կարգաւ պատմելով կրթուի կուտայ և կը զօրացընէ մարդն՝ որ աղէկին հետևի իր նախնեացը նման։ Եւ վախ կուտայ տղոց ուրիշին օրինակովն՝ որ գէշ Համբայ չերթայ ու անխելք չի մնայ։

Որովհետև կը տեսնէ որ անխելք մարդիկ աշխարքիս մէջ աղէկ բան մը չեն կրցած ընել. այլ միշտ անշահ բանի հետևելով անանուն և խեղճ մնացեր են։ Ինչպէս էր Արտաշիր թագաւորը Հայոց. երբոր վարքը կարդաս կը տեսնես, որ մանկութէն զինքը չի կրթելով և աղէկ բաներու ետևէ չըլլալով թագաւոր եղած ատենը մէկ աղէկ բան մը չընելէն ետև, մոլի կառավարութիւնը

գէշ բաներ ըրաւ, ամենուն գանելի եղաւ. մինչև այնպիսի փառաւոր թագաւորութիւնը արշակունեաց՝ կորսընցուց. ինքն ալ գերի եղաւ, աղգն ալ գերի ըրաւ Պարսիներուն, և անանկ կորաւ (172)։

Եւ ընդ հակառակն Պարսամբատին որդին մանկութենէն քաջութիւն և իմաստութիւն ետուէ ըլլալով այնչափ մեծ անուն ունեցաւ ամէն աղգաց մէջ, և այնչափ խոհեմութիւն աղգին օգուտ ըրաւ կեանքը չի խնայելով, մինչև թագաւոր կոչվեցաւ և Պարտաշիրին կորսընցուցած տէրութիւնը գտաւ ու նորէն հայոց թագաւորութիւնը կանգնեց, և քաղրատունեաց առջի թագաւորն եղաւ (173)։

Յոյնպէս Երասխ շնորհալին մանկութիւն ատենը այնչափ ուսումնասէր էր որ կարդալէն 'ի զատ ուրիշ բան չի յտեր. հազար անգամ ՇՇաշունչը գարձուցեր բերնուց էր եղեր։

Այս պատճառաւ շնորհալի անուն դրին իրեն մանկութիւն ատենը։ Եւ երբոր մեծցաւ կաթողիկոս եղաւ. այնչափ ծաղկեցուց աղգն ու իմաստութեան անուն հանեց, որ հռոմի թագաւորը և մեծամեծ մարդիկ կը

փափաքէին զինքը տեսնել, և շնորհալի խօսքը լսել։

Ահա այս պատմութիւնները լսելով և կարդալով բնութիւնը կը գտնի անկիրթ տգիտութէ, ու կրթութեան և ուսման ետևէն կը լայ։

Խելք ունեցող տղան Ս. Ղտաշիրին պատմութիւը լսելով ոչ միայն կը ցաւի թէ մեր թագաւորութիւը կորսըվելուն պատճառ է եղեր, այլև կը վախնայ որ ինքն ալ անխելք և մոլի չըլլայ. որպէս զի իր տանը կործանման պատճառ չըլլայ, ինչպէս շատերն եղած են։

Խոհեմ տղան Շ. նորհալիին և Ս. շոտ թագաւորին պատմութիւը լսելով կը բռընկի որ անոնց հետևի. պարապ տեղը ժամանակ չի կորսընցընէ. գիշեր ցորեկ ուսման հետ ըլլալով բան սորվի. որպէս զի մեծութէ ատենը աղէկ բաներ ընէ թէ՛ իրեն, թէ՛ իր տանը, և թէ՛ ազգին։

Ա՛ման զի պիտի գիտնայ թէ աղէկ ըլլալու և աղէկութէ ընելու համար է ստեղծված, չէ թէ գէշութէ համար։ Ինոր համար կըսէր մէկ փիլիսոփայ մը թէ մարդս մեծ է, և մեծամեծ բաներու համար եղած է։

Քանի՞ կը բաժնըվի։

42. Պատմութիւնը կը բաժնըվի երեք ընդհանրական, հաղարդական և ազգային։ Եկեղեցական պատմութիւնը հոգևոր բաներ կը պատմէ. և եկեղեցական ժողովքները կը գրէ։

Ինչպէս Եւսեբիոս հռոմ պատմիչը կը պատմէ Աբրոսին հերետիկոսութիւնը և Նիկիոյ ՝ի ժողովքին պատմութիւնը. որ 318 հայրապետ նզովեցին Աբրոսը և հաւատամքը գրեցին. որոնց մէջն էր Աբիստակէս հայրապետը լուսաւորչայ պզտիկ որդին։

Ոսկեքաղաքական պատմութիւնը՝ կը պատմէ զանազան քաղաքներու մէջ ինչ դիպուածներ եղած են. ինչ պատերազմներ, և ինչ մեծամեծ մարդիկ եկեր գացեր են։ Ընհամար դիպուածներ պատմելով շատ խելք և կրթութիւն կուտայ մարդուս, տղոց միտքը բանալով. որպէս զի բարինեերուն հետևին ու իրենք ալ մեծանուն ըլլան, և չար մարդկանց ՀԱՄԲԱՆ չերթան։

Դրեթէ նոյն է ազգային պատմութիւն ալ որ զանազան ազգաց վրա

կը պատմէ, թէ ինչպէս մեծցեր և ինչպէս պզտիկցեր են. ինչով պայծառացեր և ինչով խաւարեր են։ Ինչ մեծութիւն և ինչ քաղաքներու տէր եղեր են. և եղբը ինչպէս գերի եղեր են։

Դա՛ս ալ շատ սիրտ կուտայ տղուն, որ աղէկ բանէն ետ չի կենայ. որչափ գժուար բան ըլլայ, իրեն կրթութիւն ընէ. և ամէն ազգաց պատմութիւն տեղեակ ըլլալով նախ զինքը լաւ կացութիւն մէջ պահէ. և իր ազգին պատմութեն ալ աղէկ տեղեակ ըլլայ. որ ընկերութիւն մէջ ուրիշներուն ալ պատմէ, խրատէ, և սիրտ տայ։

Ինչպէս կարդալու է.

43. Նախ՝ պէտք է ուծաշունչ պատմութեանը տեղեակ ըլլալ, ուծային հրաշքները միշտ կարդալով հաւատքին զօրութիւը հասկընալ. վասն զի ուծաշունչը ուծային բաները կը պատմէ, որ ամէն տղայ պարտական է գիտնալու։

Այս պատճառաւ ուծ հրամեց՝ որ հին կտակարանը մովսէս մարգարէն և այլք գրեցին հրէից լեզուով. ետ-

քը հռոմերէն թարգմանեցին որ կարդան։

Իսկ նոր կտակարանը առաքեալները գրեցին. և յետոյ ամէն ազգի լեզուով թարգմանեցին. նոյնպէս ճծաշունչը մեր մէջն ալ թարգմանիչները թարգմանեցին հայերէն շատ գեղեցիկ։

Երկրորդ՝ պէտք է կարդալ ժողովքներուն պատմութիւնը. ինչ հերետիկոսներ եղեր են, և ինչ վիճաբանութիւններ եղած են։

Յետոյ պէտք է աշխարհագրական և ազգային պատմութեց տեղեակ ըլլալ. որպէս զի լաւ հմուտ ըլլալով խրատ ընէ իրեն, և ընկերաց մէջ բանիքուն երևնայ։

Ահա այս պատճառին համար ՝ՀԲ գիրքը կը հրամէ որ ամէնքը տեղեակ ըլլան գրոց. և իմաստուն վարպետները կանոն դրած են, որ տղաքը գրավարժութի սորվելէն ետև խելացի պատմութիւնները ալ կարդան, որ բան սորվելով լաւ խրատվին ուրիշին վարքովը։ Շատ աղէկ է ուրիշին վնասովը փորձ ըլլալ, քան թէ իր անձին։

Այս մտքով մենք ալ գրագիտու-

թէ տեղեկութիւնը տալէն ետև, պատմութեց տեղեկութիւը հասկը-ցուցինք։ Ինկէ ետքը օրէնքներուն պատմութիւը գրինք, և ամէն իրա-տէն ետևէն ալ կարճ կարճ քաղա-քական պատմութիւններ գրեցինք. որպէս զի խոր տպաւորի սրտիդ մէջ բարի վարքը, ուսումնասիրութիւը, և աշխարքի հմտութիւը.

Սակայն ազգային և եկեղեցական պատմութիւները պէտք է որ Ի.Հաբ-հապոմոնէ սորվիս. որ այս գրքիս երրորդ մասն է. յետոյ պիտի կար-դաս։

Ուստի նոյն աշխարհագրական պատմութիւները և գլխաւոր ազգաց տեղեկութիւները կարդալով սիրտդ պիտի վառի որ նախ ջաղ գործքէն հեռու փախչիս, բարի գործքերու և առաքինութեց հետևիս։

Երկրորդ՝ գիտութի խելք սոր-վիս, և տգիտութէ վախնաս ու կա-տարեալ ըլլաս. ինչպէս որ երևելի մարդիկ եղած են, իրենց ազգը և քաղաքը ծաղկեցուցեր են։ Ինանկ որ մինչև հիմա կը պարծին այնպիսի օգտակար և իմաստուն մարդկանց վրան։

Ա.ըդ՝ աշխատէ՛ աղէկ միտք առ-
նես նախ՝ հոգևոր պատմութիւնները.
երկրորդ՝ բարոյական խրատներն որ
ածպաշտութիւնէ սէրը վառի սրտիդ
մէջ. զի առանց սասը ոչինչ ես. որ-
չափ խելք և մեծութիւն ունենաս ա-
մենևին օգուտ չունի։

Ամէն բանէն աւելի աւետարանա-
կան պատմութիւններն ու խրատները
խոր գրէ՛ սրտիդ մէջ. և չըլլայ թէ
ժամանակ անցընելու համար կար-
դաս, հապա հոգևոր և առաքինի ըլ-
լալու համար։

Հա ետքի պատմութիւներէն լաւ
պիտի հասկընաս թէ մինչև որ մէկ
մարդ մը աղէկ վարք չունենայ՝ ոչ
գիտուն կրնայ ըլլալ և ոչ անուանի։
Միշտ այսպիսի բարեպաշտ մարդիկ
աշխարք շիներ են, ինչպէս ածա-
ղընչին թագաւորաց պատմութիւնե-
րը յայտնի կրնեն, որ աղէկ թագա-
ւորները աշխարք շինեցին, և ախ-
տաւոր թագաւորները կործանեցին։

Կոստանդիանոս և Թէոդոս թա-
գաւորները եկեղեցին պայծառա-
ցուցին, և իրենց ազգը այնչափ փա-
ռաւորեցին։ Լոկ սասնց որդիքը
թոյլ վարքոփնին փնաս տրվին։

Տրդատ թագաւոր բարեպաշտու-
թիւն ծաղկեցուց մեր ազգը. բայց իր
որդին և թոռները աւրեցին։ Ա՛ր-
դան և Ա՛սհան քաջ զօրապետները
այնչափ սիրով հաւատքը և ազգը
փառաւորեցին. իսկ Ա՛սակ ուրա-
ցողը ՇՇծային օրինաց դէմ ընելով
բոլոր աշխարհք տակն ու վրա ըրաւ։

Ուրեմն ուշադրութիւն կարդա՛ այս
բանները՝ օրէնքներն ու ազգային սո-
վորութիւններն, որ մեծամեծաց վար-
քերը իմանալով ըլլաս խելացի, ա-
ռաքինի, և կատարեալ իմաստուն
անոնց նման։

Պատմութիւն

Մուկիդիդէս աթենացին մանկ-
ութիւն ատենը՝ հօրը հետ գնաց Հե-
րոդոտոսին գրած պատմութիւնը մը-
տիկ ընելու, որ մեծամեծաց առջին
կը կարդար։

Ա՛յս տղան ուշադրութիւն միտք
դնելով պատմուածը՝ այնչափ սիրտը
բորբոքեցաւ, որ սկսաւ լալ։ Ա՛յս
բանը տեսնելով Հերոդոտոս ըսաց
Մուկիդիդէսին հօրը, թէ երանի՛
քեզ որ ասանկ բարի բանի նախան-
ձող զաւակ ունիս։ Մէ՛ որ այս սրբ-

տուլը մեծնայ, շատ երևելի մարդ պիտի ըլլայ։

Իրաւի Թուկիդիդէս մեծ մարդ եղաւ. վասն զի նոյն սերը միշտ պահելով տղայական բաները մէկ դի ձգեց, ու տեղեկուեց եռեւէն եղաւ բան սորվեցաւ։ Յրբոր մեծցաւ գեղեցիկ պատմագիրք մը շինեց, ու երևելի պատմիչ եղաւ յունաց մէջ, Հերոդոտոսն ալ անցուց։

Թէ խրատ կուզես կատարելութիւն,
ծնողաց, վարպետիդ եղիր միշտ հնազանդ.
Կարգա՛ պատմուն, ուշ դիր անցածին,
զի գրված են որ քեզ խրատ ըլլան։
Թէ բարւոյն երթաս բարիք քեզ կուգան,
գուն կըլլաս այլոց խրատ կըթուիս.
Թէ անկիրթ մնաս չարին հետևիս,
անշահ պատմութեց կարգը կը գտնիս։

Զ. ՀԱՄԱՐ

Ինչ է մարդ ըլլալու կանոնը։

44. Մարդ ըլլալու կանոնն է օրէնքը, և օրէնքով մարդս եղած է քաղաքական և ընկերական։ Ասոնք ամէն բանէն առաջ պէտք է օրէնքի տակ մտնել. որպէս զի քիչ քիչ քա-

ղաքականութիւն սորվիլ ու գազանութիւնը ձգէ մարդ ըլլայ. բարիին հետևի և մարդավար ըլլայ։

Ինչպէս մէկ ծայրէն մէկալ ծայրը մէկէն անցնիլ չըլլար, կանոնով և սովորութիւն առաջ երթալով չարէն բարի կըլլայ. նաև կարգէ դուրս ելլելով բարիէն ալ չար կըլլայ, ինչպէս փորձերը կը տեսնենք շատ տղոց վրան։

Ինչոր համար փիլիսոփաները կըսեն թէ մարդս յանկարծ ոչ մոլի կրնայ ըլլալ, և ոչ առաքինի. թէ որ տղայ մը մանկուէն բարի կըրթուի ունենայ, և ընկերութիւնէ մէջ քաղաքավար մեծնայ՝ բարի կըլլայ. ու քանի հետևէն ըլլայ, այնչափ կատարելութիւն կը հասնի.

Բայց թէ որ չար սովորութեանց հետևելով վայրենաբարոյ մեծնայ ու իր կրթութիւնները ձգէ, կոպիտ և անշահ կըլլայ (95)։

Սենեքա փիլիսոփան կըսէ թէ առանց վարդապետի կրնայ մոլութիւն սորվիլ. զի մոլութիւն սորվելու և գէշ ըլլալու համար վարպետ պէտք չէ. միայն առաքինութիւն սորվելու և քաղաքավար ըլլալու համար պէտք է։

Կնչու որ, մանկական բնութիւնը դէպ 'ի չարը վազելով երբոր աղէկ կրթութի չունենար՝ ինքիրեն մոլի կըլլայ առանց սորվեցնելու։ Սակ թէ որ չար օրինակ տըսող վարպետմ՝ ալ որ ունենայ՝ ամենաչար գարշելի կըլլայ։

Ուրեմն պէտք է մանկութեան ատենդ լաւ սովորութեանց և բարի խրատներու ետևեն ըլլալով աղէկ կրթութի ունենաս. ուսկից կըկախվի մարդուս կատարելութիւնը. թէ չէ՝ մեծուն ատենդ չես կրնար գէշ սովորութիւններդ շտկել (92)։

Իմակուց պէտք է կարգ կանոն սորվիլ. աղէկը գէշէն զատել, և աղէկին հետևիլ։ Իմա պէտք է գիտնաս, թէ ինչ է պատճառն որ ոմանք ամենուն սիրելի և գովելի են, ոմանք ալ ամենուն ատելի։

Ինչ կարգ կանոն ունին ասանկ առաքինի մարդիկ, որով կորոշվին և կատարեալ կերևնան. և ինչ անկարգութի ունին մոլի մարդիկ, որ մարդ չուզեր երեսնին նայիլ։

Վերջապէս պէտք է գիտնաս թէ ինչ խելացի օրէնք դրած կան զանազան ազգերու մէջ որ անուանի ե-

ղած են երկար ժամանակ թագաւորելով. և ինչ անկարգ օրէնք կան եղեր ուրիշ ազգերու մէջն, որ ազէկ անուն մը չեն ունեցած աշխարհքիս մէջ և շուտով փճացեր են։ Ա. յս պատճառաւ պէտք եղաւ որ նախ օրէնքներուն ծանօթութիւնը սորվիս այս մասին մէջ. և երկրորդ մասին մէջ նոյն ազգերուն պատմութիւնը կարդաս. որպէս զի կարենաս լաւ հասկընալ, թէ մարդս ինչ կանոնով քաղաքական կըլլայ, կամ թէ ազգ մը ինչ օրէնքներով ծաղկած և բարկըցած է։

Օրէնք ինչ է։

45. Որովհետև մարդս վայրենի գազան չէ, այլ մտաւոր, խօսող, և ընկերական. պէտք է որ ամէն բանէն աւելի բարոյական սորվելով բարի վարք ստանայ, և օրէնքի տակ բարի կրթութիւն ունենայ. որով աշխարհք կը շինվի։

Լիկուրկոս և Սողոն փիլիսոփաները մտածեցին թէ ինչ ընեն որ իրենց ժողովուրդը երևելի ըլլան ու թագաւորութիւը չի վերջանայ։ Նրկուան ալ իրենց ազգին յարմար մէյ-

մէկ օրէնք դրին։ Առաջինին օրէնքն էր կտրիճ և քաջ ըլլալու, երկրորդին օրէնքն էր գիտուն ըլլալու համար։ Հա երկուսին ուզածն ալ եղաւ, և երկու ազգն ալ անուանի եղան (52)։

Ուստի մարդկային միտքը պակասաւոր ըլլալուն համար օրէնքի կըկարօտի, որ կանոն մը ունենայ ուչի սխալի։ Նանկ որ իր ազատ գործողութիւնները երբոր օրէնքի տակ կըկատարէ, կըլլայ մարդ կատարեալ։

Նոր համար ՚ուծ մարդուս երկու կանոն տըվաւ՝ ներքին և արտաքին. ներքինն է խիղճմըտանքը. արտաքինն է օրէնքը, որ կը սահմանի, ընդհանուր կանոն քաղաքացի կենաց, որ ՊԸՐՎԱԾ է մարդս երջանիկ ընելու համար։

Հա այս օրէնքն է որ մարդկային ընկերութիւնը կը միաւորէ քաղաքականութիւն. օրէնքն է որ մարդս հնազանդ և եղբայրասէր կընէ. ինչպէս եղան վայրենի ամերիկացիք, երբոր օրէնք ունեցան (451)։

Ինչ զի՝ ամէն առաքինութիւն այս կանոնէն կը կախվի. և ամէն մարդ առանց օրինաց բարի չի կրնար ըլլալ. վասն զի ով որ օրէնքը սրտին

կը հանէ ու իր կամքն իրեն օրէնք կընէ. ամէն տեսակ մոլութեց մէջ կիյնի, և աշխարքին առջև գարշելի կը լլայ։ Այս այս է օրէնքը և այս է մարդ ըլլալու կանոնը։

Քանի՞ կը բաժնըվի։

46. Օրէնքը երեք կը բաժնըվի. յաւէրենական, բնական. և դրական։

Առաջինն է ուծայրին օրէնքն որ բոլոր աշխարք կը կառավարէ ու կը նախախնամէ։ Մենուն պատուիրան տըվերէ. ոչը այսպէս ստեղծեր է, ոչը այնպէս. որուն առողջութիւն և հարստուի կուտայ, որուն չի տար։

Ուրեմն ով որ այմէ եկած բաներուն չի հաւնելով դէմ կը խօսի ուծայրին օրինաց դէմ կընէ. և ով որ նեղութիւն մէջ ըլլալով կը տրտնջայ, ուծ կը բարկացընէ. վասն զի այ ամէնագէտ կառավարուն դէմ ըրած կը լլայ։ Եւ ով որ այ ծառայուն չընէր, ինչպէս պէտք է սիրելով և պաշտելով, այ դէմ կընէ։

Այս այս օրէնքը քեզ և ամէն մարդ կը պարտաւորէ, որ ստեղծողդ Ճանչնաս սիրես ու հնազանդ ըլլաս. որովհետև անոր կարողութիւնը ողջ

ես, և իրեն բարիքը միշտ կըվայելես, պէտք է որ նոյնպէս ծառայութիւն ընես։ Երուսաղեմացոց առջի օրէնքն էր պաշտել ՀԱՇ. և Հռոմուլոսի առջի օրէնքն էր պաշտել Հայրենի ՀԱՇը։ Այսով շատ զօրացան այս ազգերը։

Ինչ է բնականը։

47. Բնական օրէնքը յաւիտենական օրինաց մէկ լոյսն է, որ դրեր է ՀԱՇ մտքերնուս մէջ. որպէս զի միշտ խիղճմտանքին դպչելով կը հասկըցընէ թէ աղէկ բանը պէտք է ընել, և գէշ բանէն փախչիլ։

Որովհետև խիղճմտանքը կարօղ է այս լուսով դատաստան ընել, և գէշն ու աղէկը որոշելով աղէկին հետևիլ, ու գէշը մերժել։ Այսպէս ով որ իր խղճին դէմ բան մը կընէ՝ բնական օրէնքին դէմ կը մեղանչէ։

Սակայն երբեմն մարդուս չար կամքը անանկ կաւրի որ բնական լոյսը կըխաւարէ, ու խիղճը կը մոլորցընէ։ Անանկ որ բաղձանքը կատարելու համար աղէկը գէշը չորոշեր, միայն ուզածը կընէ. և ասով ՀԱՇ դէմ ըրած կըլլայ։ Սակայն բոլորովին չի կրնար այս օրէնքն աւրել, որ միշտ

խիղճը զարնելով սիրտը հանդիստ չէ։ Ինչոր համար ՀԱԾԱՇՈՒՆՉԸ կըսէ թէ ամբարիշտ չար մարդիկ հանդըստութիւն չեն կրնար ունենալ։

ԻՆՉ Է ԴՐԱՔԱՆԸ։

48. Դրական օրէնքը մէկ յաւելուածմ՝ է բնական օրէնքին վրա. որ կը բաժնըվի ՀԱԾԱՅԻՆ և մարդկայինն։ Ի՞ՆՉ ԱՅԻՆՆ է դրաւոր օրէնքն, որ տըվաւ մարդուս պահելու համար։

Ա՛ՍՆ զի բաց՝ի բնական օրէնքէն պէտք կըլլայ որ տէր մը ըստ ժամանակին բան մը կը հրամայէ. ինչպէս պատուիրեց ՀԱԾ Ադամայ որ այն պըտուղին ծառէն չուտէ. և կամ դրով օրէնք մը կուտայ ժողովուրդին՝ որ անով երթան ու չի մոլորին։

Դրբոր ՀԱԾ Ադամն ստեղծեց մըտքին մէջ դրաւ բնական օրէնքը. որով իրեն որդին ալ ՀԱԾ պաշտելով պարտքերնին կը կատարէին մինչև Մովսէս մարգարէն. և ոմ որ այս օրինաց դէմ կընէր ՀԱՅ դէմ կը մեղանչէր. ինչպէս մեղանչեց Կայէն եղբայրն սպաննելով։

Բայց երբ մարդիկ բոլորովին կարդէ կանոնէ դուրս ելան ու բնական

օրինաց դէմ անխիղճ կը մեղանչէին, երկու հազար տարիէն ետև ՅԾ գրաւոր օրէնք տրվաւ Մովսէս մարգարէին. որ կրսվի մովսիսական օրէնք։ Այս օրէնքը Ինա լեռանը վրա Մովսիսի գրել տրվաւ ու իսրայէլացոց ղրկեց, որ այն օրէնքով երթան ու այլ չի մոլորին. ինչպէս են տասը պատուիրանքը, և միւս օրէնքներն որ օրինաց գրքին մէջն են։

Ո՞ր է աւետարանականը։

49. Ինչ տէրն մեր աւելի կատարելագործելով մովսիսական օրէնքը աքանչելի օրէնքներ պատուիրեց աւետարանին մէջ մարդուս երջանկութիւնը համար։ Որով թէ յաւիտենական օրէնքը, թէ բնական օրէնքը, և թէ գրական օրէնքը կը հաստատէ, անանկ կատարելութիւնով որ անՅԾ մարդիկալ այս օրէնքին դէմ չեն կրցած բան զուրցել։

Ուրեմն ով որ այս օրէնքներուն դէմը կընէ, ՅՍ դէմ կը մեղանչէ. զորօրինակ յաւիտենական օրէնքը կը պատուիրէ թէ ամէն զաւակ պարտական է իր ծնողքը պատուելու. բնական օրէնքն ալ այս կը հրամայէ։

Իսկ մովսիսական օրէնքին մէջ գրած է թէ հայրդ մայրդ պատուէ՛ որ շատ ապրիս։ Նմանապէս աւետարանական օրէնքն ալ ասոնք ամէնը հաստատելով կըսէ, թէ ով որ ծընողքին ծուռ կընայի, ա՛յ դէմ ընելով կը դատապարտվի։

Այս պատճառաւ դրական օրէնքը կըսվի կտակ կամ կտակարան։

Պատմութիւն։

Պաքսիմիանոսին հալածանաց ատենը Դարուլա անուն տղայ մը կար, որ զարմանալի ճծպաշտուքի կրթըված էր՝ ամէն օրէնքներուն տեղեակ։

Երբոր բռնեցին այս խեղճ տղան, դատաւորին առջին հարցուցին թէ ո՞ր ճծ պէտք է պաշտել։ Ինչալ համարձակ պատասխան տըվաւ թէ երկնի և երկրի ստեղծող Ճշմարիտն ճծ, որ քրիստոնեայք կը պաշտեն։ Դատաւորը բարկանալով ըսաց, թէ ո՞վ քեզ այդ բանը սորվեցուց։ Տղան ալ ըսաց մայրս սորվեցուց։ Ինատենը մայրը բերին հոն, և մօրն առջին տանջելով՝ թէ տղուն գլուխը կտրեցին։ Տանջանքին մէջ մօրմէն ջուր ուզեց։

մայրն ալ ըսաց, թէ հոս մի խմեր, որ հոն կենդանի ջուր խմես։

Ահա քեզ կտակ հօրդ երկնաւորին,
անսխալ օրէնք ելլելու երկին.
Ասոնք են միայն կանոն և միջոց,
թէ հաստատուք արտիդ մէջ պահվին։
Ահա քեզ լոյս մը շիտակ ճամբային,
կատարելութեան երջանիկ կեանքին.
Թէ չի խոտորիս աջ և ահեկին,
զաւակ ես ընտիր օրհնաց վերին։

Է. ՀԱՄԱՐ

Ո՞ր է մարդկային օրէնքը։

50. Մարդկային օրէնքը մարդիկ կը դնեն ժողովրդոց օգտին համար. որ է կրկին՝ եկեղեցական, և քաղաքական։

Եկեղեցական օրէնքը եկեղեցին դրած է, որ անով մարդիկ բարեկարգուի ընեն, ու վարձուց տէր ըլլան. ինչպէս են եկեղեցական պատուիրանները։

Ասոնք թէպէտ ոչ ինչ պատուիրեր, այլ ոչ եկեղեցին. ոչ համար դնելուն պատճառաւ ամէն քրիստոնեայ կը պարտաւորի պահելու. և մանաւանդ որ

զանցառութիւն ընելով կիրակին առանց պատարագի և աղօթքի կանցընէ, խոստովանանքը կուշացընէ և պաք չի պահեր, կը մեղանչէ։

Ո՞ր է քաղաքականը։

51. Այս օրէնքը քաղաքական իշխանութիւը կը դրնէ. ոմանք ընդհանուր ըլլալով ամէն ազգաց մէջ կայ, ինչպես հաւատարիմ մնալ խոստմունքին վրա, և օտարականին կամ դեսպանին ճնաս չի տալ, և այլն։

Ոմանք ալ մասնաւոր ըլլալով ամէն մէկ ազգի իրեն յատուկ օրէնք եղած են. որ իր ազգապետը կամ թագաւորը դրած է. անանկ որ ամէն քաղաքացի պարտական է պահելու նոյն տէրութեան մէջ. երբոր նոյն տէրութենէն դուրս կելլէ պարտական չէ։

Ուրեմն մէկ մարդ մը ինչ տէրութեան տակ որ ըլլայ՝ պէտք է անոր քաղաքական օրէնքը պահէ և անոր հնազանդ ըլլայ անանկ բաներու մէջ որ հաւատքի չի դպչիր. և ով որ անհնազանդ կըլլայ տէրութեան դէմ, իրաւունք է որ պատժըվի. զորօրինակ մաքս և

տուրք տալն է օրէնք քաղաքական, պէտք է պահել։

Բ. Սոնցմէ կը հետևի թէ ազգային օրէնքը չի փոխվիր. բայց մարդկային օրէնքը կը փոփոխի, նաև ատեն ատեն բան կեւեւնայ և բան կը պակսի։

Բ. Հա այս օրէնքներով բոլոր աշխարք կը կառավարվի, և մարդս կատարեալ մարդ կըլլայ։

Ի՞նչ օրէնքներ կան պանուպան ազգաց մէջ։

52. Հին ատենը ընդհանուր օրէնք մը կար որ մարդասպանը կըսպաննէին, ով որ մէկին աչքը հանէր՝ իր աչքը կը հանէին. և ով որ ստակ գողնար, ստակը կառնէին։

Բ. Սանկ էր մովսիսական օրէնքն ալ. բայց աւետարանական օրէնքը պատուիրեց, թէ որ մէկ երեսիդ զարնեն, դուն մէկալը դարձուր, որ ըսել է թէ վրէժխնդրութիւն մընէր։

Յունաստան օրէնք կար որ սուտ երդում ընողին լեզուն կը կտրէին. վասն զի Ճշմարտուէ դէմ խօսեցաւ։ Դ. Սուտ գիր գրողին ձեռքը կը կտրէին։

Հին եգիպտացիք օրէնք դրեր էին որ հայրասպանը զարհուրելի տան-

ջանքներով մեռնի։ Իսկ որդէսպա-
նին համար օրէնք կար որ իրեք օր
հայրը մեռած որդին առնէ նստի.
որպէս զի ամէնքը տեսնեն իր մեռ-
ցուցած որդին։

Այլ ինքնասպանին մարմինը գա-
զաններուն առջին կը ձգէին, որ
ինքն իր անձին գազան ըլլալուն հա-
մար՝ գազաններուն փորը թաղվի։

Թոռաս հին թաթարներուն թա-
գաւորը օրէնք դրեր էր որ, եթէ օ-
տարական մը իրենց քաղաքն երթայ,
Ամրտեմեայ կուռքին զոհ ընեն։ Ար-
բոր Ովբեստէս օտարականը զոհ պի-
տի ընէին, բռնեց նոյն թագաւորը զոհ
ըրաւ, և այն անօրէն օրէնքը ջնջեց։

Դրակոն 624 տարի յետոյ առաջ օ-
րէնք դրաւ աթենացոց, որ ամէն
յանցաւոր մեռնի մեծ պզտիկ, նաև
թեթև գողութի ընօրն ալ մահա-
պարտ ըլլայ։ Այս օրէնքը մարդու
արիւնով գրված էր. և այնչափ մարդ
մեռցուց որ աթենացիք ոչնչացան։

Սողոն փիլիսոփան Դրակոնին օ-
րէնքը վերցընելէն ետև նոր օրէնք
դրաւ, որ ամէն մարդ քաղաքակա-
նութի սորվի, եղբայրասիրութի ընէ,
և բարի վարք ունենայ։ Նաև ամէն

ծնօղք պարտական ըլլան տղաքնին կրթելու և իմաստուն ընելու։

Այս օրէնքով ոչ միայն աթենացիք, այլև բոլոր յունաստան պայծառացաւ։ մինչև մէկ հատիկ իմաստուն եղան աշխարքիս վրան։

Լիկուրգոս սպարտացին շատ աշխարհք պրտրտելէն ետև օրէնք դրբաւ իր ազգին, որ ամենևին արծաթ ոսկի չունենան առուտուր չընեն։ և բոլոր ժողովուրդը հաւասար ըլլայ՝ ամենուն պիտանաւորութիւնը տէրութիւնէն հոգալով։ Ոսկ մարդիկ միայն կրթուիթեան և քաջուիթեան ետևէ ըլլան։ այն մարդն լավի հարուստ և փառաւոր, որ քաջ է և քիչով կրնայ ապրիլ։

Այս օրէնքը հաստատելէն ետև Կիրիտ գնաց, և երդում ընել տվաւ ժողովուրդին որ մինչև ինքը չի դառնայ բան մը չի փոխեն։ Հոն մեռաւ ու պատուիրեց որ իր մարմնոյն մոխիրը ծովը թափեն։ չըլլայ թէ մարմինը սպարտա տանին, ու եկաւ ըսելով օրէնքը փոխեն։ Դե այսպէս սպարտացիք շատ մեծցան և մեծ բաներ ըրին այս օրէնքով 600 տարի։ Ասոնցմէ են հիմա մանաւոր գողերն

որ առանց օրինաց մնալով գաղանա-
բարոյ եղան։

Հռոմայեցիք 12 տախտակի վրա
գրած անուանի օրէնք մը ունէին,
որ ամբողջ պահելով շատ մեծցան։

Հին պարսիկները օրէնք ունէին
որ Թագաւորին տղաքը առանց կըր-
Թուած չի մեծնան, միշտ բան սորվին.
երբոր 14 տարեան կըլլային՝ չորս ա-
ռաքինի և իմաստուն վարպետի տակ
կը կրթէին։ Ինոր համար միշտ ա-
նոնց տէրուԹիը առաջ կերԹար։

Սարաց տէրուԹը օրէնք ունէր,
որ Թագաւորին տղաքը հասարակ
մարդիկներէն վեր սեպվին ու ամէն
կամքերնին կատարվի, և ամէն մարդ
զիրենք գովէ։ Ինոր համար անկիրԹ
մնալով շուտով վերջացան։

Աղարշակ հայոց Թագաւորը շատ
պիտուական օրէնքներ դնելէն ետև՝
երկու իշխան գրաւ որ միշտ քովն ըլ-
լան. Թէ որ բարկուԹ և սխալմամբ
անիրաւ բան մը վճռելու ըլլայ, կամ
Թէ պատժելու մարդուն խնայելու
ըլլայ, իրեն իմաց տան. և ժողովուր-
դին ալ օրէնք դրաւ որ իրար սիրեն
ու չի նախանձին։ Այս օրէնքներով
շատ լաւ կառավարեց իր տէրուԹը։

Ընուամաջինները օրէնք ունին որ թագաւորը այլ պէս պատուեն. և որչափ հնար է իրենց աշխարքը խաղաղութիւն մէջ պահեն. ամենևին օտար աղգ չի հանդիպցրնեն իրենց աշխարքը։ Այլև ամէն մարդ բարի վարք ունենայ. որով միշտ խաղաղութիւն մէջ մնացին (203)։

Հնտստանցիք օրէնք ունին որ կենդանի չի մեռցրնեն. մեռելին չի թաղեն, երեն. և ամէն տղայ պարտական ըլլայ ծնողաց վարքին նմանելու։

Բսով ոչ գիտութիւն ծաղկեցաւ իրենց մէջ և ոչ արուեստ. վասն զի որդին հօրը բռնած Համբայէն դուրս բան չի կրնար ընել, որ նոր հնարքով մը մեծնայ (198)։

Բմերիգացի գարախպնեերը օրէնք ունէին, երբոր իրենց թշնամիներէն գերի կը բռնէին, կը տանէին բաց տեղ մը փոսի մէջ կը մորթէին, ու չորս դին պար խաղալով կուտէին (440)։

Պէքսիքացիք օրէնք ունէին, որ թշնամիները կը տանէին կռատունը զոհ կընէին, ու միսը կուտէին, մորթն ալ վրանին կառնէին խաղալով կը պտըտէին։

Ներուցիք օրէնք ունէին որ իրարու զրկում չընեն. և իրարու հետ խաղաղութիւն ընեն. որով միշտ խաղաղութեան մէջ էին, և իրենցմէ մարդ մը խռովութեամբ չէր մեռնիր (496)։

Լայսպէս ափրիկեցիք կերպ կերպ օրէնքներ ունին (264)։

Պատմութիւն։

Դիոգինէս փիլիսոփան ցորեկ ատեն Ճրագը ձեռքը գնաց բազմութիւն մէջ մտաւ չորս դին կը նայէր անդադար ժուռ գալով։ Նրբոր իրեն հարցուցին թէ ինչ կը փնտրուես. Պատասխան տրվաւ թէ մարդ կը փնտրեմ։

Օ արմացան ամէնքը թէ այնչափ բազմութիւը չէր տեսներ որ մարդ կը փնտրուէր։ Բայց անոր առջին անոնք մարդ չէին. Ճրագով փնտրուածն էր քաղաքական և օրինապահ մարդն, որ շատ դժուար է գտնել։

Հիմա լաւ տեսար թէ մարդս ինչ բան է,
խելքով օրէնքով քանի ազնիւ է.
Թէ գրածներուս ուշադիր ըլլաս,
դիտուն կատարեալ սիրուն կերևնաս։

Մարդուս խելքն է լոյս թէ կրթած ըլլայ,
թէ բան չի սորված խաւար պատած կայ,
Ջանա այս մուրթը քեզմէ հեռանայ,
որ իմաստութիւն միտքդ լրանայ։

Ը. ՀԱՄԱՐ

Ի՞նչ է մարդուս առջի պարտքը։

53. Երբոր տղուն խելքը կըսկըսի բացվիլ ամէն բանէն առաջ սիրոյ կիրք մը կունենայ։ Այս կիրքը միայն կըստիպէ որ թէ ծնողքը սիրէ, թէ զինքը սիրէ, և թէ ստեղծողը. ահա այս է պարտքը։ Ուստի սէրը կըսվի անդրանիկ կիրք մարդկայինս սրտի, և անով կը հատուցանէ պարտքը։

Ասոնց զի ընկերուն մէջ ամենէն հարկաւորն է սէրը. որով կըլլայ բարեկամութիւն և միաբանութիւն. որուն նշանը անասուններուն մէջն ալ կայ. ինչպէս մեղուներուն, մրջիւններուն, և ուրիշ կենդանիներուն, որոնք շատ, որոնք քիչ։

Այսպա ուրեմն երբոր տղուն բանականութիւնը կը բացվի, ու կըսկըսի բան

Ճանչնալ, պէտք է բան մը սիրէ. նախ զինքը Ճանչնալով կը սիրէ ու կուզէ որ կամքը կատարվի. ետքը ծնողաց գութը վայելելով կը Ճանչնայ, և կը սիրէ հարկաւ։

Երբոր աղէկ մը ամէն բան կը հասկընայ՝ պէտք է որ աւելի սիրական բան մը գտնէ. բայց կը նայի թէ որչափ որ սիրելու բաներ ունենայ կենացը մէջ՝ ամենեւին սիրտը չի հանգչիր, կուզէ անհուն բան մը սիրել։ Այսպէս նիւթական բաներով քիչ քիչ ստեղծողին մեծութիւնը կը Ճանչնայ ու կը սիրէ ինչպէս պէտք է։ Այր Աբրահամ կռապաշտի զաւակ ըլլալով գեղեցիկ ստեղծուածներն որ կը տեսնէր, կըզմայլէր։ Եւ աստղերուն աղուորութիւնը նայելով սկսաւ հասկընալ և Ճանչնալով սիրել ստեղծողը, և որչափ աւելի Ճանչցաւ, այնչափ աւելի սիրեց։ Ամանաւանդ այս իրեն ըրած աղէկութիւններն ու երախտիքները քննելով վառեցաւ սիրտը սիրով, մինչև մէկ հատիկ զաւակն ալ զոհ պիտի ընէր ստեղծողին համար։

Այսպէս ամէն երևելի հայրապետները որչափ աւելի Ճանչցան այ

բարիքը, այնչափ աւելի սիրեցին և ածային օրինաց հնազանդելով ծառայեցին. վասն զի մինչև որ պատուիրանները աղէկ չի պահվին, Ճշմարիտ ածսիրուութի չըլլար։

Ուրեմն ով որ կը Ճանչնայ ած, ու չի սիրէ, այս բնական օրէնքին դէմ կընէ. և վայ այն գիտուններուն որ կը պարծին թէ աղէկ գիտենք այ մեծութին, ու չեն սիրեր ածպաշտութեամբ։

Վասն զի ով որ կը Ճանչնայ, պէտք է որ սիրէ, այնչափ աւելի, որչափ աւելի կը Ճանչնայ ու կը վայլէ անհուն բարիքը։ Ընանկ որ բան մը չի կրնար ըլլալ, որ կարենայ զինքը այ սիրուն հեռացնել. ինչպէս կըսէ Պօղոս առաքեալ։

Ընդհա՛ դուն ալ պարտական ես մտմտալու, թէ որչափ այ մեծ բարիքը վայելեր ես. և որչափ պարտքի տակ ես, երբոր մտածես թէ ստեղծողդ քեզ խելք ու միտք տըվաւ, մարդ ստեղծեց, բարեպաշտ ծնողաց զաւակ ըրաւ. և աշխարքիս անանկ կողմը դրաւ, որ դիւրին կրնաս կատարեալ ըլլալ։

Դուս առաւել քեզ ուղղափառ

քրիստոնեայ ըրաւ, ու արքայութիւն
ալ խոստացաւ։ Ա. յապէս մտածե-
լովդ առջի պարտքդ կըլլայ ամ սի-
րել բոլոր սրբոտովդ, և Ա. ծմէ վախ-
նալ, ինչպէս կը հրամայէ և քրիստոնէ-
ական հաւատքը. թէ չէ՝ ստեղծողիդ
օրհնէնքը չես կրնար առնել, և ինչ
որ բռնես՝ յաջողուի չես գտներ։

Դարձեալ՝ պէտք է որ հոգևոր բա-
ներու վրա ալ սէր ունենաս, պէտք
որ ըլլայ՝ այս սիրուն համար արիւն
թափես. հաւատքի վրա փոփոխա-
միտ չըլլաս։

Լսես հոգևոր և գիտուն մարդի-
կը պատուես, ու չըլլայ թէ աղէկ
մարդիկ միամիտի տեղ դնելով ծաղր
ընես, կամ հեռու փախչիս, ամ կը
բարկացընես։

Ինչպէս օձէն՝ վախնալով հեռու
փախիր դէշ սկզբունքներէն և ան-
հաւատ մարդիկներէն, որպէս զի
չըլլայ թէ ապականի միտքդ, և կոր-
ընցնես երջանկութիդ. որ սիրով
միայն կրնաս ստանալ։

Ուսաւորիչ կըսէ թէ այս սիրովը
կը պահվի հաւատք՝ սրբութիւն, և կը
հաստատվի խոնարհութիւն, հեզութիւն,
և բոլոր առաքինութիւն։

Ո՞ւն է երկրորդ պարտքը։

54. Զ բոլոր սրտով սիրելէն ետև մարդս պարտական է որ իր պատիւն ալ սիրէ. և գէշ վարքով անունը չաւրէ ու ամենուն գարշելի չըլլայ. վասն զի պատիւն անանկ ազնիւ բան է որ մէյմը կորսըվի, այլ տեղը չի-գար. իբր թէ ինքզինքը կը մեռցը-նէ։ Այս է երկրորդ պարտքը։

Ուստի պէտք է որ ամէն բան չա-փով և կանոնով ընելով, առաքինա-կան կեանք ստանայ։ Եւ ամէն գործքը մտածելով ընէ, որով կըլ-լայ խոհեմ։ Ուրիշի չար չի կամենա-լով զրկում չընէ և այլոց բանին չի դպչի. ասով կըլլայ արդար։ Փուչ բանէ մը վախնալով աղէկ բանէն ետ չի կենայ, այլ քաջութիւն կատարէ. որով կըլլայ քաջ և արի։ Ի երջա-պէս ամէն ուզած բանին ետևէն չըլ-լայ, պարկեշտ և գովելի բաներուն ցանկայ. ասով կըլլայ բարեխառն և պարկեշտ (65)։

Ահա այս չորս գլխաւոր առաքի-նութիւնը է որ մարդս պատուաւոր և ազնիւ կընէ ամենուն առջին. և ա-սոնք չընելով ատելի կըլլայ։ Սոնց-

մէկը հետևի ըլլալ հեզ առանց բարկութիւն, Ճշմարտախօս, և զուարճախօս. որով մարդուս բնութիւնը կանուշնայ։

Ուրեմն պարտական ես մանկուն ատենդ այս առաքինական կեանքն ստանալ. պատիւդ աղէկ պահել. վասն զի եթէ կորսընցնես, այլ չես կրնար գտնել։

Կախ և առաջ ծնօղքիդ վարքին նայէ, որչափ լաւ բան կը տեսնես որ քեզ սիրելի կերևցընէ, ջանա խոնարհութիւն ընելու. և որչափ վարպետդ խրատ կը լսես, աղէկ գործածէ։

Կան տղաք որ բնական խելքով աղէկը գէշէն որոշեցին. ու իրենց պատիւը պահելու համար բարի եղան։ Կան տղաք որ իրենց ծնօղաց բարի վարքին և վարպետին խրատներուն հետևելով, գովելի եղան։ Կան տղաք ալ որ վախնալով չըլլայ թէ պատժըվին, և ուրիշին առջին նախատվին, առաքինի և պատուելի եղան։ Ջանա որ դուն ալ այս իրեք կերպով կատարեալ և պատուելի ըլլաս։

Որոր համար պետք է որ ամէն իրիկուն ըրած բաներուդ վրա մտածես,

ու դուն քեզի համար տաս։ Ո՛ր բանին մէջ որ սխալելով դուն քեզ անպատուեցիր, ջանա՛ որ միւս օրը չընես. և ո՛ր բանով որ սիրելի եղար, նայէ՛ որ աղէկ կերպով ընելով քեզ սովորութիւն ընես աղէկը։

Ընկերայ թէ ծառաներու հետ նրատիս ելլես, և անոնց բանին մէջ կայնիս. գիտնաս որ պատիւդ կը կորսնցնի։

Որչափ աւելի ծանրուն ունենաս ու պարկեշտ շարժիս, այնչափ աւելի քեզ կը սիրես. և որչափ աւելի հաւատարիմ ելլաս, այնչափ պատիւդ կեւեընայ, և պարտքդ ալ կաղատիս։ Ասան զի պատուաւոր անձին էական յատկութիւն է հաւատարմութիւն և երախտագիտութիւն։

Երբոր ուրիշին աղէկուն կընես՝ ուրախացի՛ր. հոգ մը նէր որ ուրիշը քեզ մեծ համարի, այլ նայէ՛ որ դուն մեծ ելլաս վարքովդ։ Ի՞նչ օգուտ է թէ մեծ համարվիս ծնողացդ և զարմիդ համար, և դրսէն քեզ բան մը կարծեն, երբոր դուն բան մը չես, ու մէկ կատարելութիւն մը չունիս։ Սուտ կարծիքը շուտ կը յայտնվի, և շուտով ծաղը կելլաս։

Հին ատենը մէկ ազնուական անխելք տղայ մը պարծենալով ծաղը կընէ առաքինի աղքատ տղայ մը։ Պատասխան կուտայ աղքատ տղան, թէ իմ զարմիս մեծուիը իսմէ պիտի սկըսի. քուկինդ քեզմով պիտի վերկանայ, որ մոլի ես. իմ զարմիս ըսզիզբը ես պիտի ըլլամ, դուն ալ քու ջարմիդ վերջը պիտի ըլլաս։

Ո՞Ր Է ԵՐՐՈՐԴ ՊԱՐՏՔԸ։

55. Պարդուս երրորդ պարտքն է իր սէրը ուրիշին հաղորդել։ Պիտի ինքզինքը չի սիրէ, հապա ուրիշն ալ սիրէ, և անոնց բարեացը վրան ալ ուրախանայ, ձեռքէն եկածին չափ օգնէ, իր գիտցածը և իր բաղդը ուրիշին ալ հաղորդելով։ Պ.սկէ կըլլայ բարեկամութիւն, որ է ուրիշին բարի կամենալ, և երկուքն ալ իրար սիրել (147։)

Որովհետև ծնողքը ամենէն աւելի զաւակը կը սիրէ և աղէկութիւը կուզէ. կը հետևի որ տղան ալ նախ իր ծնողքը սիրէ ու պատուէ ինչպէս պէտք է, ամենևին վիշտ մը չի բերելով սրտին։

Երկրորդ իր մերձաւոր ընկերները, նաև օտարներն ալ սիրէ բարեկամական սիրով և անոնց աղէկութիւնը վրա ուրախանայ։ Աստի եղբայրսիրուն օրէնքը կը պահանջէ որ ամէն բան հաւասար ըլլայ զաւակի ու ծնողաց մէջ, երկու եղբօր մէջ, և երկու բարեկամի մէջ։

Պիւթագորաս փիլիսոփան օրէնք դրաւ յունաստանին մէջ, որ վերնայ այս խօսքս էնս է, ֆուէնն է։ Սով երբոր մէկ բարեկամը իշխանութիւն կը հասնէր կը ջանար որ մէկալին ըլլայ։

Հա՛ այս օրէնքներով պարտական ես նախ ծնողքդ սիրելու պատուելով և հնազանդելով ինչպէս պէտք է, բոլոր կենացդ մէջ։ Ինչև պէտք եղած ատենը կեանքդ ալ չի խնայես անոնց համար, որոնք քու կեանքդ քեզ տրվին։

Ու ինչպէս որ մարմինդ անոնց մարմինին մասն է, ասանկ ալ սիրտդ հոգիդ ալ անոնց սրտին մասն ըլլայ։ քու աղէկութիւնդ անոնց ըլլայ, անոնցնալ քեզի։

Երկրորդ պէտք է եղբայրդ և բարեկամդ քու անձիդ պէս՝ սիրել առանց օգտի։ անանկ որ ոչ աշխարհք

և ոչ մահ կարենայ զանոնք քեզմէ զատել։

Եգիպտացիք այնչափ իրար կը սիրէին, որ երբ մէկ բարեկամը կը մեռնէր, մէկալը անոր մարմինին փաթաթուած մնալով կը մեռնէր, որ չի զատվին։

Բայց այսպիսի սէր ո՞ւ ծ չուզէր. հապա անանկ պէտք է սիրել որ հաստատուն ըլլայ սէրը ժամանակով և դժբաղդութ չի փոխվի։ Եւ մեռնելէն ետև ալ իրարու սէրը պահելով ողջ մնացողը յիշէ բարեկամը ողորմութ և բարի գործքով։ Եւ այսպէս այս սէրն ալ ո՞յ սիրուն հետ կերթայ կը միանայ։

Պատմութիւն։

Աթ Գոստինոս մօրը համար կը պատմէ թէ զիս այնչափ կը սիրէր որ, օրմը չի տեսնէր՝ խելքը կերթար. Եթէ հեռու տեղը երթայի, հարցընէր կըքննէր. և մինչև որ զիս չի տեսնէր, չէր կրնար հանգչիլ։

Ո՞րդ կարելի՞ է որ մեռնելէն ետև զիս մոռնայ. հարկաւ՝ հիմա ո՞յ քով աւելի մեծ սիրով զիս կը սիրէ և աւելի գթալով կը յիշէ։ Եւ ալ զինքը

նոյն սիրով պարտական եմ սիրելու, և անդադար յիշելու. որպէս զի որդիական օրէնքը կատարելով, պարտական չի մնամ։

Ահա քեզ օրէնք որ չի փոփոխվի,
զի ձեզ գրեց սիրան ամէն աղգի.
Նախ պէտք է սիրել Թագաւորն երկնի,
ապա հայր և մայր ընկեր գրացի։
Երանի է քեզ Թէ սիրես բարին,
բոլոր միանաս հեան ստեղծողին.
Վայ որ կը սիրէ անկարգ բերկրալին,
զուրկ ստեղծողէն որդի գեհենին։

Թ. ՀԱՄԱՐ

Ո՞րն է առջի գիտնալու բանը։

56. Մէկ տղուամը առջի գիտնալու բանն է, զինքը Ճանչնալ, և աղէկ քննել հասկրնալ Թէ հոգին որչափ որ մեծ է, ու մեծ և աղնիւ բաներ կը խնդրէ. այնչափ ալ մարմինը տկար է դատարկ բաներու կը հետևի։

Ասով կը պարտաւորի մարդս իր հոգին աղնիւ պահելու միշտ աղէկին հետևելով. նաև զանազան առաքինութիւնք զարդարելով։

Այն բաներն որ իրեն անարդանք

կը բերեն՝ պէտք է ատել և հեռու փախչիլ։ Այն ընկերներն որ անպատիւ են ու մեծերուն առջին համարում չունին, անոնց հետ պէտք չէ տեսնուիլ։

Իսկ մարմինին կողմանէ, պարտական է որ խոնարհի, պէտք է լաւ ճանչնալ զինքը թէ ամենևին ոչինչ է. պակսուէ՝ի զատ բան մը չունի, և որ գինեցայն խեղճուն կը տեսնէ վրան։

Եթէ զինքը աղէկ մը ճանչնայ, ամենևին չի կրնար մեծամտիլ. սակայն եթէ զինքը չի ճանչնալով սկսի պարծիլ, մէկէնիմէկ ծիծաղական կըլլայ ամենուն առջին։

Պատն զի ինչպէս ըսինք միայն առաքինի մարդն է պատուելի. թէ որ առաքինուն ունի, զինքը ճանչնալով միշտ կը խոնարհի. թէ որ առաքինուութի չունի, ինչ բանի վրա պիտի պարծի. զի առանց առաքինուն բոլորովին ոչինչ է։

Ինչ շահ հարուստ ըլլալ, ինչ օգուտ աղուոր և գիտուն ըլլալ, եթէ աղէկուութի չունի. զի կը նմանի այն ջորիին, որ գիրք բարձրված է ու ինքը բան չիյտէ. կամ Զոզոսին

աւանակին, որ ոսկիէ կուռք մը վրան առեր կերթար հպարտանալով. բայց իրեն ինչ շահ. զի ասով ոչ մէկը ոչ մէկալը աղէկ կենդանի կրնան ըլլալ։

Ինչպէս է հպարտը։

57. Հպարտ մարդը ամենևին զինքը չի ճանչնար. իր պզտիկ բանը աչքին մեծ կերևնայ, և մէկէն զինքը վեր դնելով կըսկըսի մեծամտիլ այնչափ, մինչև ամենուն դարշելի կըլլայ։ Այսան զի զինքը չի ճանաչող մարդը կուզէ որ ամէն աղէկ բան իրեն ըլլայ. նաև ամէն պատիւ իրեն միայն արժանի կը տեսնէ։ Ուրիշի վրա աղէկ բան մը տեսնէ, կը տրտմի։ Բայց ոչչափ աւելի փառքի ետևէ կելնի, այնչափ կանարգվի։ Ինչպէս թիլթեռ կենդանին ճրագին լոյսն որ տեսնէ, խիստ զուարճանալով լուսին կը մօտենայ, մինչև կերի. այսպէս կըլլայ հպարտն ալ։

Ոսկէ կը հետևի որ ընկերներուն չի հաւնի, միայն իրեն ըրածին կը հաւնի. ուրիշին սիրտը կը կոտրէ տմարդութիւնը. ուրիշին պակասութիւնը երեսին տալով մեծ մեծ կը խօսի,

մեծ բաներ կուզէ, և մեծ պզտիկ չի նայելով կը մեծաբանէ։

Ա՛ երջապէս ասկէ կըլլայ ոչ ուրիշը սիրել և ոչ սիրվիլ. չի պատուել և պատիւ չունենալ. անարգել և անարգվիլ. նաև ուրիշին բարի չի կամենալով զուրկ մնալ ամէն աղէկ բաներէն։

Իսկ եթէ զինքը ճանչնայ ամէնը կը սիրէ կը պատուէ, ու ամենուն սիրելի և պատուելի կըլլայ։ Ինչանկ որ խոնարհութիւնը զինքը ուրիշին պարկեշտ կերևցընէ, մինչև օտար ազգերն ալ զինքը կը սիրեն, և բարի օրինակ կառնեն։

Ինոր համար սուրբ աւետարանը կը պատուիրէ թէ բարի եղիք որ ձեր երկնաւոր հայրը փառաւորի երկինքը, և դուք ալ բարձրանաք փառքով։

Ինչպէս է խոնարհը։

58. Արդա զինքը ճանչնալով միշտ խոնարհութե և պարկեշտութե մէջ կը պահէ իր անձը, ոչ մէկ կողմը կը ծռի, ոչ մէկալ կողմը. վասն զի չափազանց բան չի սիրեր. որով կըլլայ գովելի և հանգիստ, ոչ հոգ և ոչ

վախ կունենայ տեղէմը. միայն կը հոգայ որ պակսութիւն չընէ, ու առաքինութիւնէ ետեւէն ըլլալով կատարեալ ըլլայ։

Եթէ պատիւ մը տեսնէ, կը հրաժարի. վասն զի լաւ կը ճանչնայ որ ունեցած աղէկութիւնը իրենը չէ. և ամէնը ՆՈՅ կընծայէ. անոր համար միշտ կը փառաւորի։

Յոսիպի տղան ո՞րչափ որ հոգուն ազնուութիւնը ճանչնայ, այնչափ ալ զգայական յօժարութենց անկատարութիւնը կըհասկընայ։ Լաւ գիտէ թէ հոգուն կատարելութիւնը ՆԾ է տըվեր, և մարմնոյ յօժարութենց պակասութիւնը իրմէն է. ասով մէկէն կը խոնարհի։

Եւ գիտէ թէ իր ստեղծողը և բոլոր սուրբերը միշտ խոնարհ եղան աշխարքիս վրան. և խոնարհութիւն օրէնք դրին ամէն քրիստոնեաներուն, որ պարտական ըլլան պահելու։ Ու որչափ որ խոնարհեցան, այնչափ ալ բարձրացան. որովհետև ՆԾ ամբարտաւան հպարտ մարդը կը խոնարհեցնէ, և խոնարհին շնորհք տալով կը բարձրացընէ։

Ուրեմն փահլիը ո՞րչափ կրնաս

հպարտութիւն և փառասիրութիւն. որ ամէն ախտէն գէշ ըլլալով գիւրին կը մտնէ բարեսիրտ հոգին և մանկահասակները գիւրին կը թիւնաւորէ։

Ընկերու

ւոր, որ կամաց կամաց չար օրինակին կը հետևի բնութիւդ, այլ և անոնց հետ տեսնողը քեզ կանարգէ, ու բարի համարումը վրայէդ կը վերցնէ։ Ասա առակին՝ թէ ասա ինձ որուն հետ կը կենաս, ես քեզ պատմեմ թէ ինչ մարդ ես. զի ինչ մարդ ընկերներէդ կիմացվի։

Հապա անանկ մարդ ըլլայ քու ընկերդ, որ առաքինի ըլլալով դուն ալ պատուելի երևնաս։

Ջանա այս օրէնքները խոր տպաւորես սրտիդ մէջ. որ աշխարհք վրադ աղէկ համարում ունենայ։ Պատուէ իմաստուն և բարի մարդիկ. փորձ ծերերուն քով գնա բան հարցուր. տես թէ ինչպէս կեանք անցուցին որ բարի անուն ունեցան։

Ջանա հոգիդ գիտութիւնը մնուցանես. իրարու հետ պարապ բան չի խօսիս. միշտ ուսումնական երբեմն և հոգևոր կամ ուրիշ օգտակար բաներ ըլլան բերանդ, որ պատուաւոր անձն երևնաս։

Ըլլայ թէ քիչ մը բան սորվելով քեզ բան մը կարծես, ու բան գիտցող երևնալ ուզես. և անանկ բաներ ալ գործածես խօսակցութիւնդ

մէջ, որուվ ծիծաղելի երևնաս. զի այդպիսի բան յիմար և իմաստակ տղոց կը վայլէ։

Դարձեալ պարկեշտ խոնարհութեան հետ պէտք է ունենալ մէկ ազնուական համարձակութիւն մը, որ ըստ տեղւոյն պատասխան տաս անուշութիւն, չէ թէ խլուրտի պէս ծակերը մըտնես։

Ազէկ բան ընելու մի ամաչնար. միայն թէ պարկեշտ ըլլայ ըրած բանդ. որպէս զի վրադ հպարտութիւն մը չերևնայ, ու յանդուգն չերևնաս։

Այ երջապէս որչափ ազէկ քեզ ճանչնաս, այնչափ աւելի խոնարհ, պարկեշտ, ազնուական և կատարեալ կըլլաս։ Ընոր համար դիտուններըը միշտ խրատ կուտային թէ ծանէր ղքեզ։

Պատմութիւն։

Դիւռէն Ֆռանսայի մեծ զօրապետը, որ իր խելքովը և քաջութիւնովը բոլոր թշնամիքը սարսափեցուցեր էր, պզտիկուց անանկ բարի և խելացի կրթուած ունեցեր էր ինքը զինքը ճանչնալու, որ բերնէն մէկ մնափառութիւն բանը չէր փախցընէր։

Իրեն պատերազմի մէջ ըրած հնարագիտութիւնները երբոր հարկ կըլլար պատմելու, անանկ կը ձևացնէր բանը, որ իբրև թէ թշնամիքը ինքիրենց խաբեր են, չէ թէ ինքը մենծ խելքմը բանեցուցեր է։ Իր պատերազմները ու քաջութիւնները անանկ կը պատմէր, որ բաց իրմէն դուրս բան չէր թողուր, մինչև լսողները կըկարծէին թէ ինքը տեսնող միայն եղեր է։ Պատերազմէ առաջ փառաջ կըդառնարնէ, ժողովրդեան բարձրաձայն գովութիւններէն, աղաղակէն կը փախչէր, կարծես թէ իր յաղթութեցը վրա կամըշնար։ Գովասանք լսելու ատենը զինքը անանկ կերպ մը կը բռնէր մենծերուն առջին, որ կարծես թէ ինք զինքը արդարացնելու կեցեր է. և գրեթէ բնաւ չէր համարձակէր թագաւորին առջին երևնալ. վասն զի չէր կըրնար չի համբերել անոր մեծամեծ գովասանքներուն, հարկաւ պիտի կենար համբերութիւնը մըտիկ ընէր.

Անանկ առաքինութիւն որչափ սիրելի է նէ, այնչափ դժուար կը գտնվի։

Մարդ կըսվի միայն որ պատիւ ունի,
առաքինութիւն է պսակ գլխի.
Չինքն ճանչնալով միշտ կը խոնարհի,
ամենուն առջին պարկեշտ շնորհալի։
Քանա որ ըլլաս այլոց պատուելի,
եղբայրսիրութիւն և գործքով բարի.
Մի սուտ պարծանքով կարծերքեզ յարգի.
զի գործքով միայն մարդս է յարգելի։

Ժ. ՀԱՄԱՐ

Ինչպէս կը փոփոխի սիրտը։

59. Մին ժամանակը տրտունջ մը կար թէ ինչո՞ւ ամ մարդուս կուրծքին վրա ապակի (Ճամ) մը չի դրաւ որ տեսանէինք թէ ի՞նչ բանով սիրտը կերպ կերպ կը փոփոխի։ Երբեմն մէկ բանի մը սաստիկ կըփափաքի, երբեմն կատէ. երբեմն ուրախանալով կը լայնայ, երբեմն տրտմելով կը կծկի։

Պատճառն այս է որ երբ սիրտը սիրելու բան մը կը տեսնէ, անոր կը վազէ. երբոր ատելի բան մը կը տեսնէ, կծկելով ետ կը քաշվի։ Երբ ուրախակաան բան կը տեսնէ կը լայնայ՝ սրտին ոգիքը ընդարձակելով.

երբեմն ցաւալի բան կը տեսնէ, սխալը-վելով կը վշտանայ։

Եւ երբեմն բարկութեան բան մը կը տեսնէ, արիւնը տաքնալով դուրս կուգայ դէպ 'ի երեսը. և երբ վախնալու բան մը կըլլայ, պաղելով ներս կերթայ կը դեղնի, և կը դողայ։

Ահա ասոնք են որ մարդս կը փոփոխեն, սակայն մարդուս միտքը կարաւալար ըլլալով պէտք է միշտ այսպիսի կիրքը չափու մէջ պահել, և ամէն բան կանոնով ընել, որ կիրքը չի խռովէ միտքը և անկարգ բան մը թող չի տայ ընելու։ Որովհետև այսպիսի ատեն մարդուս սրտին մէջ մէկ պատերազմ մը կը պատահի. միտքը երբեմն բարի բան մը կը տեսնէ, կուզէ որ ընէ. բայց սիրտը կը բաղձայ որ այն ձգէ ու մարմինին ուզածն ընէ։

Օրինակ կիրակի օրը կը տեսնես որ մէկ քանի տղաք իրիկվան ժամ կերթան, միտքդ կը հաւանի թէ բարի բան է, պէտք է ընել։ Այլ՝ աւ կը նայիս որ քանի մը տղաք աւ միատեղ դերեզմանոցը կերթան. անոր աւ սիրտդ կը բաղձա-

որ միատեղ երթայիր, ու քիչ մը զուարճանայիր։

Մինչդ դէմ կելլէ սրտիդ թէ ինչպէս այ տուն ը ձգեմ ու գերեզմանոցն երթամ։ Սիրտդ կը պատասխանէ թէ ես միշտ եկեղեցին կերթամ, մէկ օրմ՝ ալ դուրս երթամ զուարճանամ, ես ալ մարդ եմ։

Հոգին միտքդ կըսէ թէ հոգին առաւել է քան զմարմին. մարմնաւորին համար հոգևորը ձգել մեծ անկարգութիւն է։ Սիրտդ կըսէ, թէ իրաւ է, բայց ես ալ հոգեղէն եմ. միշտ հոգևորին ետևէն պիտի ըլլամ. թէ որքիչ մը զուարճանալով չորս դիս չի նայիմ կը մաղձոտիմ պէտք է երբեմն ասանկ բաներ ալ ընել։

Մինչդ դարձեալ կաղաղակէ թէ մարմինը ո՛րչափ գիրնայ՝ հոգին կը տկարանայ. մարմնաւոր զուարճութիւնը մէյմը սովորութիւն եղածին պէս ետքը չիգար. կամաց կամաց կըսկըսի ամէն կիրակի երթալ. և երթալով կերպ կերպ բաներ և չար ընկերներ կը տեսնէ, ու վերջապէս կըկորսուի։

Ահա այսպէս աս պատ երազմը եր-

կար կերթայ. թէ որ կրթեալ ըլ-
լաս առաքինութիւն, կիրքդ ինչ որ ա-
ռաջդ դնէ մանիկ չես ըներ, մտքիդ
և հոգուդ կը հետևիս. ինչպէս մե-
ծամեծ հոգևոր անձինք ու գիտուն-
ներն ըրին. թէ չէ՝ մէկ անգամ մը
սրտիդ բաղձանքին հետևիս, չարը
քեզի սովորութիւն կըլլայ ու կիրքը
կը տիրէ մտքիդ։

Ընկէ եռև խելքիդ եկածը կը-
նես, և մարմնիդ բաղձանքը կը կա-
տարես. քիչ մը բանով կը բարկա-
նաս, ընկերոջդ սիրտը կը կոտրես,
խոնարհելու տեղը կը հպարտանաս.
ուրախանալու տեղը կը տրտմիս ու-
րիշին բարեացը վրա։ Այ երջապէս ա-
մենուն զզուելի և գարշելի կըլլաս.
ոչ պատիւ կը մնայ վրադ և ոչ մե-
ծութիւն։

Այսով կըլլայ անարգութիւն. վասն
զի որչափ մարմնին հետևի մարդ,
այնչափ անպիտան կըլլայ. և որչափ
մտքին հետևի, այնչափ առաքինի
կըլլայ և հոգևոր։

Ինչո՞ւ համար է այս կիրքը։

60. Արարդս հոգիէ ու մարմնէ
կազմած է. ինչպէս որ կամք և հո-

գեւոր բաղձանք ունի. այսպէս ալ մարմնաւոր կիրք պիտի ունենայ. որպէս զի անով աղէկ բանին հետեւի ու գէշ բանէն հեռու փախչի։

Բայց պէտք է որ սրտին բաղձանքը միշտ մտքին իշխանութեան տակն ըլլայ որ կանոնի տակ մնայ. թէ չէ՝ ինքնագլուխ եղածին պէս ապրստամբ ծառաներուն պէս անկարգութեան կապականին։

Եւ պէտք շատ անգամ մարմնաւոր բաները այնչափ կը շարժեն միտքն որ բոլոր մարմինը կը խռովեն. բայց միտքը կարօղ է զայն զսպել, որ հանդարտ կենայ։

Եւ չէ՝ ախտաւոր եղածին պէս դատուին ալ կապականի, աղէկը գէշ կը տեսնէ, գէշը աղէկ կը տեսնէ. ամբշնալու տեղը կը պարծի. աղէկ բան ընելու կամբշնայ. և այսպէս ամէն ուզածն ընելով կըլլայ մռլի և գարշելի։

Անկէ ետև ուզէ ալ զինքը չի կըրնար շտկելու, թէպէտ և ծերանայ։ Մեռնելին ուրիշ հոգ չընէր. միայն կը ջանայ իրեն բաղձանքը կատարել։

Այսպէս էին այն երկու չար ծե-

ըերն որ շուշանը գատապարտեցին. որոնք ոչ ծերութէ ամրչցան, ոչ իշխանութէն խսկնեցան, ոչ ժողովուրդէն քաշվեցան, և ոչ այմէ վախցան. այլ առանց ամօթի այն սոսկալի չարութիւը և զրպարտութիւը ըրին անմեղին վրան։

Իսկ առաքինի մանուկը Դանիէլ թէպէտ տղայ էր և անփորձ, բայց մանկուէ ատենը կըրթըված ըլլալով այնչափ միտքը արթուն և լուսաւոր էր, որ հասկըցաւ անոնց չարութիւն ու ազատեց անմեղը, և խայտառակ ըրաւ չար ծերերը։

Զոր վրա մէկ գիտուն վարդապետ մը կըսէ. թէ որ միտքդ արթուն է և տարիքդ քիչ, մանկութիդ քեզ վնաս չի տար. ինչպէս էր Դանիէլը. բայց թէ որ միտքդ արթուն չէ և հասակդ ծեր, ծերութիդ քեզի օգուտ մը չընէր. ինչպէս էին այն ծերերը։

Ինչո՞ւ գծուար էր յաղթիլն։

61. Մէմիատոկղէս երևելի իշխանը ամէն կրթութիւն սորվեցուց իր զաւկին. անանկ որ սոսկալի ձիերը կը սանձէր. բայց չի սորվեցուց որ

ինքը զինքը սանձէ, և իր կրից յաղ-
թէ։ Որոր համար մոլի անպիտան
եղաւ տղան, և հայրն ալ ամենուն
մեղադրելի եղաւ։

Բանկ տղաք ամէն բան կը սոր-
վին և սոսկալի աշխատաւոր բաներու
ձեռք կը զարնեն. բայց ի՞նչպէս չէն
կրնար այսչափ բանը գիտնալ։ Որոր
համար իրենց ախտը անյաղթելի կը-
մնայ և դժուար կը շտկին, զի չէն ը-
բած կրթուելիւն։ Ասոնց անկիրթ
մնալն է դժուարութիւն պատճառը։

Բանի՞ տղաք կան որ խելքէ չան-
ցած բաներու հետ ըլլալով կը ջա-
նան և անհնարին աշխատանքով
ձեռք կը ձգեն։ Որչափ տղաք է-
բաժշտուի սորվելու համար գիշեր
ցորեկ կը մաշին. բայց առաքինի ը-
ըլալու համար և բարին հասկընալու
համար ամենևին հոգ չէն ըներ. ո-
րով միայն պիտի կատարեալ մարդ
ըլլան։

Ասոնց յայտ է թէ կամքը կը խաբ-
վի մարմնաւոր բաներէն, ու հոգևո-
րէն կը պաղի, հեշտութիւն ալ ինչպե-
լով մոքին և կամքին վրա, գերի կը-
նէ իրեն, և կը կործանէ։ Հա աս-
կէց է դժուարութիւնը։

Շատ անգամ ծնողքն ալ աղէկ չի կրթելով թէ միտոկղէսին նման՝ ուրիշ ամէն մարմնաւոր բան կը սորվեցընեն տղուն իրենց պարծանք համարելով. բայց հոգ չեն ըներ բարի վարք և մարդկուի սորվեցընելու. որով միայն կրնան մարդ ըլլալ։ Որոր համար ետքը շատ կուլան իրենց զաւակին վրա անօգուտ տեղը։

Երեմն ջանա՛ կրիցդ չի հետևիս, որ հոգիդ գերի չըլլայ բաղձանքիդ. ամէն բանի մէջ անկարգ կամքդ կոտրէ՛. մանաւանդ անանկ ատեն որ միտքդ ալ կը վկայէ թէ քեզ անարգանք պիտի գայ ու անպատիւ պիտի ըլլաս։

Վասն զի կիրքն է որ մարդս անասուն՝ կընէ. քանի՞ անգամ բարկացող մարդ տեսար որ գազանի պէս կատղած էր ու միսը կը խածնէր. քանի՞ անգամ Ճամբուն վրա ընկած գինովները տեսար, որ մարդկուէ ելած շանը հետ կը խօսէին. ոչ ըրածնին գիտէին և ոչ խօսածնին։

Քանի՞ կատղած գազան կըլլան այն կնիկներն որ վրէժ խնդրելու համար չըրածնին չի մնար, մինչև երբեմն իրենք զիրենք ալ կը մեռցը-

նեն. վասն զի կիրքը այնչափ կը կուրացընէ, որ միտքը այլ չի կրնար բաբին առաջը դնել, ու չարէն փախչիլ։

Ահա այսպէս կըլլան մոլի. որ թէպէտ առջի բերանը պզտի զանցառութենէ մը կըսկըսի, բայց քանի կերթայ՝ այնչափ կը զօրանայ որ երկրորդ բնութի կըլլայ։

Ուրեմն ասկէ ետև բոլոր ջանքդ ըլլայ՝ առջի բերանը յաղթելու կըրիցդ. թէ որ մէյմը միտքդ խչխել տաս կրիցդ վրա, անկէ ետև դիւրին կը յաղթես ամէն բանի, մինչև բոլոր շարժմունքդ չափի տակ դնելով կատարեալ կըլլաս։ Կըսեն թէ այն է անիրաւ խչխան, որ իր վրա խչխանութի չի կրնար ընել։

Պատմութիւն։

Պղատոնին աշակերտը Զենոքիլլոս՝ մէկ սոսկալի ալէկոծութի մը պատահեցաւ, որ քիչ մնաց պիտի խըղդըվէր։ Բայց աղատելէն ետև երբոր տուն դարձաւ ամէն բանէն առաջ պատշինողը կանչեց, ու իր տանը երկու պատուհանը գոցել տըվաւ որ դէպ 'ի ծովը կը նայէին։

Նրբոր իրեն հարցուցին, թէ ինչ կընես. պատասխան տվաւ թէ մարդուս կիրքը հոգուն չի յաղթելուն համար պէտք է նախ առիւծներէն փախչիլ. որպէս զի նորէն փորձուած մէջ չիյնի։

Ուստի կրնայ ըլլալ որ օր մը այս պատուհաններէն դէպ'ի ծովը նայելով ինձի փորձուիլ գայ, ու կիրքս շարժի նորէն ծովը մտնելու. անոր համար գոցեցի որ նորէն վտանգի մէջ չիյնիմ։

Արդ թէ որ իշխես բաղձանքիդ վրան,
մարմնոյդ աշխարքին ես յաղթող իշխան.
Ղուտով կը հասնիս կատարելութիւն,
իբր դանիէլ մանուկ խոհական։
Այս ըլլայ քեզի օրէնք պիտուական,
որ չըլլաս գերի կրիցըդ բռնական.
Եթէ թոյլ թողուս միանգամ միայն,
տեսնես թէ գլխուդ ինչ բաներ կուգան։

ԺԱ. ՀԱՄԱՐ

Ինչպէս կը չափաւորի մարդ։

62. Բնակամաբար ամէն մարդ բարիին կը ցանկայ, և ինչ որ ընէ՝ բարի կարծելով կընէ։ Եթէ ամէն

ըրած բանը բարի է, հապա բարի կեր-
ևնայ իրեն. վասն զի շատ անգամ
միտքը կը խաբվի բաղձանքէն ինչպէս
ըսինք։

Իսկ բաղձանքը մարմնաւոր բանե-
րու ցանկալով ջարը բարի կարծելով
կընէ. թէպէտ երբեմն մտքին ու
բաղձանքին մէջ բնական կռիւ մը
կը մտնէ, սակայն շատ անգամ բաղ-
ձանքը կը յաղթէ մտքին, և այսպէս
կըլլայ ջար։

Այլ երբոր միտքը կանոնաւո-
րեալ է, բաղձանքն ալ երբոր կանո-
նաւոր կըլլայ, միաբան դիւրին կը-
գործեն բարին. և այն կըլլայ առա-
քինութիւն, և որչափ որ այսպէս կա-
նոնաւոր գործեն, օրէնքն իրենց սո-
վորութիւն կըլլայ. և ասանկ ջանաւո-
րելով մարդը բարի վարքով կատա-
րեալ կըլլայ։

Իսկ եթէ ոչ միտքը կանոնաւոր
ըլլայ, և ոչ բաղձանքը, անատենը
մէկէնիմէկ ջարին կը հետևին և կըլ-
լայ մոլութիւն. և որչափ աւելի սովո-
րութիւն ըլլայ՝ այնչափ աւելի միտքն
ու բաղձանքը կապականին, և կըլ-
լան մոլի ախտաւոր։

Ուստի երբոր միտքը զօրանալով

բաղձանքին չի հետևիր, կըլլայ չափաւորութիւն, և մարդս բաղձանքին չի հետևելով կըլլայ ժուժկալ և առաքինի. իբր թէ ինքզինքը չափի կանոնի տակ կը պահէ։ Օրօրինակ բաղձանք կուգայ քեզ որ չի նստիս, ժուռ գաս գեղեցիկ դաշտին մէջ. բայց մտածելով թէ ծնօղքդ չեն ուզեր, և ծնողաց կամքին դէմ ընելն է չար. երբոր կամացդ կը յաղթես ու չես ըներ, կըլլաս առաքինի. և եթէ միայն պարտէզը ժուռ գալով շատանաս, կը չափաւորես բաղձանքդ, կըլլաս ժուժկալ։

Ինչ ոյժ ունի բաղձանքը։

63. Որչափ աւելի թոյլ ըլլայ մարդ, այնչափ կը սաստկանայ բաղձանքը, և ամէն գործողութեան մէջ միշտ բաղձանքը առաջ վազելով իբր բրուռնաւոր մը կը յաղթէ խելքին, բայց բնական օրէնքն ու խիղճը մտքին լոյս տալով կը զօրացնեն. որով կը յաղթի բաղձանքը։

Եւ որովհետև դժուար է այս յաղթութիւնը, անոր համար պատուելի և ազնիւ կըլլայ կրթըված մարդը. մանաւանդ մանկութեան առենը, երբոր

կամքը կոտրելով սովորուն կընէ իրեն. անատենը առանց աշխատանաց կատարեալ կըլլայ։ Եւ ընդ հակառակն, թէ որ մանկուն ատենը չափի տակ չըլլայ ու օրէնքէ դուրս ընէ, մէկէն բաղձանքը կը տիրէ, ու անբանի կարգ դասելով կընէ մոլի. անանկ որ մեծութեն ատենը այլ չի կրնար շտկիլ։

Որոր համար բարկասիրտ մարդը ոչ ամօթ կը նայի և ոչ մեղք, ամէն բանէն աւելի կը ցանկայ որ զարնէ կոտրէ. նոյնպէս գինեմոլ մարդուն աշխարհք բաշխես աչքին շերևնար, իր բոլոր բաղձանքն է դաւաթ մը գինին։ Ինչու որ բաղձանքը տիրէր է, և չար սովորութիւնը իրեն բնական եղեր է։ Ուրեմն նոյն կանոնը պէտք է միշտ ունենալ. որպէս զի միտքը չի յաղթըվի, և միշտ մարմնաւոր բաներուն վրա տիրէ։

Ի՞նչ կանոնով կըլլայ։

64. Ցիտունները այս երկու կանոնա կուտան, համբերէ, հրաժարէ. այսինքն որչափ կամքիդ դէմ բան կըլլայ, և որչափ ծանր բանքեզ կը հանդիպի, համբերէ։

Եւ որչափ խիղճմտանքի և կանոնի դէմ բաներու բաղձանք կուգայ՝ հրաժարէ, մի մտենար, հեռու փախիր։ Ահա այս երկու կանոնով ամէն մարդ կրնայ ըլլալ համբերող՝ ժուժկալ՝ կիրթ՝ և կատարեալ։

Սակայն կայ արիւնային տաք բընութիւն՝ մանաւանդ մանկանց վրա, որ առանց մտածելու մէկէն իրենց բաղձանքին կը հետևին։ Ուստի համար միշտ կը խաբվին։

Կան մարդիկ ալ որ հանդարտ ըլլալով՝ աղէկ կը մտածեն, և մտածելով՝ կամքերնին կը կոտրեն համբերելով և հրաժարելով, ուստի շուտով կատարելութիւն կը հասնին։

Կան անհամբեր մարդիկ, որ մեծամեծ վնասաց կը համբերեն, ու սղտի բանով կը բորբոքին. մինչև կանանց և տղոց ծաղր կըլլան. կան մարդիկ ալ որ այնչափ թոյլ և փափուկ սորվեցուցած են զիրենք, որ բանի մը չեն դիմանար. որ շատ ամօթ բան է ընկերութիւն մէջ։

Ուստի ով որ չի հրաժարի անպատիւ և ամօթալի գործքէն՝ ախտաւոր կըլլայ, և ով որ ուրիշի քաշածին

նայելով չի համբերէր՝ մեղադրելի կըլլայ։

Իսկ ում որ կըբաղձայ իր կամքը կատարելու՝ չի կրնար բարի և պատուելի ըլլալ. և ում որ փափկութիւն հեռանալով նեղութիւն կը փախչի՝ տկար և մեղկ կըլլայ, և անով շատ անգամ կեանքին ալ վնաս կը բերէ ու շուտ կը մեռնի։

Ուրդ՝ պէտք է որ այս երկու կանոնը լաւ միտքդ առնուս և միշտ սրտիդ մէջ գրած մնայ. որպէս զի կամքիդ դէմ ինչ բան որ ըլլայ, չի տրանջաս, ուրիշի երես չի դարձընես ու նեղանալով պատասխան չի տաս, որ մեծ ամօթ է։

Ինչութիւնդ ուրչափ խառովի՝ դուն համբերէ. չըլլայ թէ անխելք կնիկ ներուն պէս չուզած բանդ որ ըլլայ՝ սկըսիս լալ. որ մարդկութիւն դէմ է, և մարդու չի վայլեր փուճ բանի համար լալ։

Եւ ուրչափ սիրելի բան մը տեսնես, նախ մտածէ թէ վայելուչ և բարի է. եթէ անվայել բան է, դուն քեզ ըսէ. հրաժարէ։ Ինչպէս ըլլնութիւնդ, կամ բաղձանքդ չուզէր եթէ կենալ, մտիկ մընէր։ Այնպէս մտքիդ

հետևէ, որ բարին կը ճանչնայ. միշտ կամքդ խորտակէ, որպէս զի այը կատարեալ ըլլաս։

Ա՛ւշ դիր ասոնց՝ կը տեսնես որ առաքինի մարդիկ միշտ այս կանոնով կատարեալ եղած են։ Նաև մանկութենէ ատենէն զիրենք կրթելով՝ մեծութենէ ատենը պատրաստ գտեր են բարի սովորութիւնը։

Ուրեմն միշտ ջանա երևելի մարդկանց հետևիլ. երբոր կիմանաս թէ պատուաւոր տղայ մը կայ, որ աղէկ անուն ունի, ու ամենուն գովելի է, նայէ թէ ինչ կատարելութիւն ունի. անոր հետևէ։ Որինակ ըլլայ քեզ կապիկը. որ իրեն նման անքան կենդանիները բանի մը տեղ չի դնելով՝ չուզեր անոնց նմանիլ։ Այլ մարդու կատարելութիւնը զգալով, միշտ կը ջանայ մարդու գործք ընել, և մարդու նմանիլ։

Այսպէս դուն ալ անպիտան մանկանց վարքին չի նմանիս. Հապա՝ առաքինի և խոհեմ մանկանց. որոնց վարքին հետևելով քեզ միշտ չափի մէջ պահես, մինչև որ կատարելութեան աստիճանին հասնիս։

Պատմութիւն։

Իսրայելացի մարդ մը երկու ջաւակ ունէր, մէկը մանչ խիստ գեղեցիկ, մէկալը աղջիկ խիստ տգեղ։ Ա՛ր մը մանչը հայլին նայելով սկսաւ մեծ զուրցել և պարծենալ քրոջը վրան։

Իսկ քոյրը դժուարելով գնաց հօրը վրան լալով եղբօրը զուրցածները պատմեց։ Հայրը երկուքն ալ կանչեց առջին՝ ըսաւ։ Կուզեմ որ երկուքդ ալ միշտ հայլիին մէջ նայիք։

Դուն ուրդեակ ուրչափ գեղեցկութիւդ կը տեսնես, ջանա որ չար սովորութիւն կրնդ հեռուելով աղուոր տեսքդ չաւրես, ու խայտառակ չըլլաս։ Դուն ալ աղջիկս տգեղութիւդ տեսնելով բարի սովորութեանց հետևէ, ու կամքդ կոտրելով լաւ վարք ունեցիր, որ հոգիդ գեղեցկացնես։

Ջանա՛ որ բարեաց հետևող ըլլաս,
և մի նմանիր անժուժկալ մանկանց.
Զի այս կանոնով պիտի մտանիս,
բարեկիրթ վարուց խմաստուն արանց։
Այս երկու խօսքս միշտ միտքդ ունան,
որ դուն ալ հասնիս անանկ մեծութիւն.
Գեղէն հեռացիր բարւոյն հետևէ,
մեռցուր չար կամքդ բարի կրթութիւն։

ԺԲ. ՀԱՄԱՐ

Ի՞նչ է Բարեխառնութիւն։

65. Բարեխառնութիւնը չափաւորող առաքինութիւն է, որ աւելի կը չափաւորէ մարդուս կիրքը. ուրչափ բռնաւոր կիրք ըլլայ, պէտք է որ ասով չափաւորի և կանոնի տակ մտնէ։

Որովհետև մարմինը մարմնաւոր բաներու կը փափաքի, հոգին ալ հոգևորին։ Իսկ բարեխառնութիւնը կանոն կը լլայ որ՝ ուչ մէկը և ոչ մէկալը չափէ դուրս կիրք մը չեն կրնար ունենալ։

Օրինակ մը՝ ուզէ ամէն կամքը կատարել ուտելով խմելով. թմրածն ալ բան մը չուզէր ընել. իսկ բարեխառն մարդը երկուսին մէջը բռնելով չափով կը կատարէ պիտանին և վայելուչը։

Ահա յայտ է թէ այս առաքինութիւն ալ մարդուս բաղձանքը կը կանոնաւորէ. անանկ որ ոչ ունեցած ատենը սաստիկ կուրախանայ, և ոչ չունեցած ատենը սաստիկ կը վշտա-

նայ։ Ոչ ցուրտ և ոչ սաստիկ տաք, այլ բարեխառն. և միշտ միակերպ թէ՛ սիրտը, և թէ դէմքը։

Սոկրատ փիլիսոփային համար կըսեն թէ ոչ հարսնիքին օրը այլայլեցաւ, և ոչ մեռած օրը. վասն զի բարեխառնութիւն կրթըված ըլլալուն համար, ոչ ուրախութեան կիրքը տիրեց վրան, և ոչ մեռնելու վախը։

Ինոր համար հարսն ու մահը իրեն առջին մէկ էին. թէպէտ սրտին կիրքը զանազան էր. բայց իր կատարելութիւնը նոր էր ամենուն։

Յոպիսի մարդիկ շատ դժուար կըխառուին. ոչ սաստիկ կուրախանան և ոչ սաստիկ կը տրտմին, որչափ մեծ բանի մէջ ըլլան. թէպէտ սրտերնին կելլէ։ Այսու ոչ բարկութիւն կը կատղին, և ոչ անբանի նման կրթմրին. այլ միշտ չափաւոր և բարեխառն են ամէն բանի մէջ։

Իրաւի, պէտք է որ ամէն կենդանի կիրք ունենայ, ուստի կիրքը յանցանք չէ մարդուս. հապա չափի մէջ չի պահելն է յանցանք։ Ինոր համար պարտական է աղէկ վարել և խշխել կրից վրան, որպէս զի կատարելութիւն հասնի։

Ամերիկայ ազգ մը կայ, որ անբազգայ անբանի նման է, մարդիկ ալ կան որ գազանի նման կատղած իրար կուտեն (424)։

Ինչպէս կըլլայ բարեխառն։

66. Արիստոտէլ կըսէ թէ մանկութեան ատենին կրթութիւն ընելով մարդս դիւրին բարեխառն կրնայ ըլլալ։ Որովհետև չար սովորութիւնը որչափ որ դիւրին կրնայ ստանալ, այնչափ ալ դժուար կրնայ ձգել սովորութի ըլլալէն ետև։

Ուստի Ջանալու է որ բարի սովորութիւնը բնական ըլլայ մանկութեան ատենդ, և ոչ չար սովորութիւնը՝ որ առանց կրթութեան ալ կըլլայ։ Անկէ ետև դիւրին կրնայ տղան ժառանգ ըլլալ առաքինութեան և ամէն բարութեան։

Անկ տղայ մը ան ատենը կըսկըսի բարեխառն ըլլալ, երբ կըսկըսի ամբշնալ. որ նշան է թէ ամօթխածութիւնը բարի վարք պիտի ունենայ։

Որովհետև ամօթը կորսընցուցածին պէս, պատիւն ալ կը կորսընցնէ։ Այթէ ամէն մարդ պարտական է իր

պատիւը պահելու, ապա պէտք է որ բարեխառն ըլլայ։

Հերակլէս երկու ձամբու վրա կեցած կը մտածէր թէ ո՞ր ձամբան երթայ. զի մէկը դէպ 'ի վար կերթար, որ զանազան ծաղիկներով զարդարված էր. մէկալը դէպ 'ի վեր, որ փշալից էր։ Որ երկու աղջիկ նըստած էին, մէկը ուրախ, մէկալը հանդարտ. ուրախ աղջիկը կը յորդորեր որ ծաղկալից ձամբան երթայ. մէկալն ալ կը խրատեր որ դժուար ձամբան երթայ, որպէս զի իրեն բարի ըլլայ, ու չի մոլորի։

Ինչ կը նշանակէ։

67. Այս ձամբան կը նշանակէ մարդուս բաղձանքն ու միտքը. և երկու աղջիկներն են հեշտութիւնը ու համեստութիւնը։ Հերակլէսն է սիրտը, որ անկիրթ ըլլալով չիյտէ թէ ո՞ր ձամբան երթայ։

Բաղձանքը կը հրաւիրէ ծաղկանց մէջէն դէպ 'ի վար երթալ. միտքն ալ կը հրաւիրէ դէպ 'ի վեր երթալ, որ թէպէտ դժուար ձամբայ է, այլ վերջը բարի է։

Այսպէս շատ տղաք այս ձամբուն

վրա մոռածելով, դժուար Համբան գաղ-
ցին ու երևելի եղան։ Եվ շատ տղաք
ալ խաբվելով, դիւրին Համբան գաղ-
ցին ու կորան։

Այս այն է աւետարանական նեղ
Համբան, ուր շատ տղաք և աղջկունք
տկար բնութիւնք բարեխառնութեան
Համբան երթալով փառաւորեցան,
մինչև թագաւորները զարմացուցին.
շատ մեծ մարդիկ ալ այն հանդիսատ
Համբան երթալով անարգվեցան։

Որ մը գեղջկական մը Սոկրատ փի-
լիսոփային ըսաց, թէ դուն այսչափ
բան գիտես, բայց ես քեզմէ շատ
գիտեմ. վասն զի դուն ինձի հե-
տևողներուն մէկը չես կրնար քեզ
ձգեր, ես բոլոր քու աշակերտներդ
կրնամ ինձի ձգել։

Պատասխան տվաւ իմաստունը թէ
զարմանք չէ. զի դիւրին է քարը վար
ձգել քան վերը նետել։ Սակայն թէ
որ բարեխառնութիւն կրթված ըլ-
լային, մէկը չէր կրնար իրեն ձգել։

Այս այսպէս ըլլալով պարտական
ես հիմակուց բարեխառնութիւն հե-
տևիլ։ Որչափ զուարճալի բան տես-
նես, մի սաստիկ կիրք ցցընելով ու-
րիշին յայտնի ըներ ուրախութիւդ.

և որչափ չուզած բանդ ըլլայ, վրադ տրտմութիւն չերևնայ. նաև որչափ սիրած կերակուր ըլլայ, չափով կեր որ ընկերներդ չիմանան սիրելդ։

Իսկ թէ որ ուրախութիւն տեղմ ըլլաս՝ ընկերներուդ մէջ մի թմրած կենար. ՝այ բարեացը վրա նայելով, չափով զուարճացիր։ Նաև այլոց սէրն ու պարգևը անոյշ դէմքով և ծիծաղ երեսով ընդունէ։

Պատն զի ինչպէս որ չափազանց ուրախութիւնը բարեխառնուն դէմ է, այսպէս ալ չափազանց թմրութիւնը տմարդութիւն է։ Իսկ դու այս երկու ծայրէն հեռու կենալով, բարեխառնութիւն հետևէ. իբր թէ ամէն գործքիդ մէջ բարի խառնէ. որով կը հանիս կատարելութիւն այնչափ լաւ, որչափ որ հիմակուց կը մտնես այն համեստ Համբան։

Պատմութիւն։

Աղկիբիադէս երևելի զօրապետը Աթենացւոց պատերազմին մէջ այնչափ չափաւոր և բարեխառն էր, որ բոլոր զօրացը բարի օրինակ մը եղած էր. որով միշտ կը յաղթէր։

Բայց երբոր դառնար հայրենիքը

կուգար՝ փափկութեց և չար սովորութեանց հետևելով, այնչափ մոլի ախտաւոր կըլլար՝ որ առակ էր եղած, թէ մի և նոյն անձը ինչպէս երբեմն առաքինի, երբեմն մոլի կըլլայ։ Այլ ինչ զարմանալի բան է սովորութիւնն, որ մարդս այսչափ կը փոփոխէ։

Բարեխառն համեստ վարքն ընես քեզ դաս,
մաքուր խօսքերով աղնիւ երևնաս.
Չի խօսքով բարքով մարդըս կը յայտնի,
պարկեշտ շարժմունքով կըլլայ նազելի։
Անկիրթ համարձակ բնաւ չերևնաս,
ամօթխած գունով դէմքդ ըլլայ ներկած.
Այս է մեծ նշան մարդավար մանկանց,
ասով մեծերուն սիրական կըլլաս։

ԺԳ. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս է առաքինին։

68. Ինն մօռացիները օրէնք ունէին որ ամէն մարդ մէկ չափով գօտի կապէ մէջքը։ Ով որ գէր էր, կը պատժէին թէ որկրամոլ է. և աւելի վատուժն ալ մէկալ ծայրը խոտորած կը համարէին։ Ահա այսպէս է առաքինին, որ ոչ մէկ ծայրը կը խոտո-

ըի և ոչ մէկալ ծայրը։ Ուստի այս օրէնքս կը պարտաւորէր առաքինի-նեերն որ ոչ մէկ ծայրը խոտորին և ոչ մէկալը, այլ չափաւոր և միջին Ճամբան երթան, որ կըսվի միջասահմանութիւն։

Օրորինակ թէ որ մէկը ամէն բանի մէջ վախկոտ է, կամ աւելի համարձակ առանց վախի, մոլի է. թէ որ ըստ տեղւոյն չափաւորէ կիրքը՝ առաքինի է. որով կըլլայ արիութիւն։

Եւ որ ուրախութիւն և տրտմութիւն մէջ թմրած կը մնայ ու ամենևին չի շարժիր, անբարեխառն է. բայց թէ որ ը տեղւոյն ուրախանայ և տրտմի չափով ինչպէս ըսինք, կըլլայ առաքինի։

Եւ որ առանց մտածութիւն գործէ, կամ թէ խորամանկութիւն ամէն բանի մէջ սատանութիւն բանեցընէ, մոլի է. բայց թէ որ չափաւոր մտածելով ընէ, խոհեմ է։

Եւ որ ագահութիւն ընէ, կամ թէ մնխելով շռայլուի, ընէ մոլի է. իսկ թէ որ ըստ տեղւոյն գործածէ իրեն և ուրիշին աղէկութիւնը համար, առաքինի է։

Եւ այսպէս ոմն որ միջին ճամբան կերթայ, ու իր կիրքը կը չափաւորէ թէ բարկութեան մէջ, և թէ փառասիրութեան և մարդահաճութեան մէջ, կըլլայ առաքինի. և ոմն որ կրից հետեւելով մէկ ծայրը կը խոտորի, կըլլայ ախտաւոր։

Բանկ մարդունքանի որ տարիքն եւեղնայ, նոյն ախտն ալ հետը կեւեղնայ. մինչև բնական լոյսը խաւարելով, խիղճմտանքին ալ դէմ կընէ չարաչար։ Իբր զի խիղճը միշտ լոյսը կուտայ, որ չի խոտորի շիտակ երթայ. իսկ երբոր մէկ կողմը կը խոտորի, հարկաւ կը մոլորի՝ առաքինութեան դէմ ընելուն համար։

Ինչպէս պէտք որոշէ։

69. Բայց մարդ բնական լուսով կրնայ որոշել միջին ճանապարհը առաքինութեան, և մոլեկան ծայրերը. բայց նախ պէտք է որտեղն հեռացնէ կիրքն ու չար սովորութիւնները։ Որոնք ոչ միայն առաքինութիւնը կը խափանեն, այլև բնական լոյսը խաւարելով միջոցը կը կորսընցնեն։

Բանի մարդիկ կը տեսնենք որ կուլան կողբան իրենց մոլութիւնը վրա.

բայց չար սովորութիւնը թողչի տար որ առաքինութիւնը միջոցը գտնէն։

Դանի մանկութիւնք իրենց ընկերներուն գեղեցիկ խրատներ կուտան, և առաքինութիւն Ամբայ կը սորվեցընեն։ Սակայն իրենք չար սովորութիւնք ախտաւոր ըլլալով անկարգ կապրին։

Շատ անգամ մեծ եղբայրը պզտիկին զարմանալի բաներ կը խօսի, բայց ինքը ծոյլ և դատարկ ժուռ կուգայ։ Դասանկներուն կըսեն թէ բերնէդ մինչև ականջդ քանի՞ մղոն է՝ որ չես լսեր խօսածդ։

Մ՚բչափ դժուար ուսումներ և արուեստներ մարդս կը սորվի, ու առաքինութիւն Ամբան չի կրնար սորվիլ, յայտ է թէ սովորութիւնը բնութիւն ըլլալով իրեն՝ կը խափանէ։

Ի՞նչպէս կըլլայ սովորութիւն։

70. Շատ տղաք եղան որ երբոր նաւ մտան ու ծովուն ահագին ալիքները տեսան, սոսկալով կիսամեռ ընկան, և օրերով անշունչ մնացին. բայց քանի մը օր անցնելով սկսան սորվիլ, ու բանի մը տեղ չի դնել։

Լաւ քանի մը անգամ Ճամբայ ընելով անանկ քաջ նաւապետ եղան, որ աշխարքը պտըտեցան։

Ուրեմն թէ որ առաքինական գործքերը քիչ քիչ սովորուն թի ըլլան կըրթուն թը օրինակով և փորձով, անտարակոյս կրնան ըլլալ բնական։ Ինանկ որ դիւրաւ կըլլայ մարդս առաքինի այս Ճամբով։

Ինչա դուն ալ ասանկ միշտ բարի մնունդ առնելով դիւրին կը սորվիս առաքինական կեանքը. մինչև բնական կըլլայ առաքինուն թիը, և սովորուն թը կըստանաս ուզած բարիքդ։

Սակայն պէտք է միշտ ջանաս բարի սովորուն թեց հետևելու. լսած և տեսած բարի բաներուն ետևէն ըլլալու։ Որչափ անգամ որ կը լսես թէ բարի զաւակները օրհնենք և գովեստ կառնեն, պէտք է անոնց վարքին նմանիս։ Դ. երբ կը տեսնես որ չար զաւակները կը պատժըվին անէծքով, պէտք է սոսկալով դուն քեզի դաս։

Դրբոր կը կարդաս գեղեցիկ պատմուն թիներ առաքինի մանկանց, ջանա որ անոնց հետևելով սովորուն թի ընես քեզի անոնց առաքինուն թիւնը.

որով կըլլաս սիրական զաւակ ծնողացդ, խաղաղասէր և գովելի։

Ինչ զի ամէնուն առջին մեծանուն ըլլալովդ տեղէմը կասկածև վախ չես ունենար։ Որովհետև մեղադրելու անշահ սովորութիւն մը չունիս միջին Ճամբայէն չի խոտորելուդ համար։

Ըզէկ մտածէ թէ մանկական սովորութիւդ միշտ հետդ կաձի։ Ուստի թէ որ բարի սովորութի ունենաս՝ հոգիդ օրէ օր կը զօրանայ. և առաքինի վարքով այնչափ կը լուսաւորուիս որ հրեշտակի նման կըլլաս։

Իսկ թէ որ չար սովորութի ստանաս, միշտ վատ և անպիտան կըլլաս, մինչև մարդ չուզէր երեսդ նայիլ զզուելի վարքիդ համար։

Ըյս ասանկ Ճանչնալով պարտականն ես ամէն քանէն առաջ՝ առաքինութե միջին Ճամբան սորվիս. և նոյն բարի սովորութեց հետևելով, առաքինի և կատարեալ ըլլաս։

Պատմութիւն։

Սոկրատ փիլիսոփան մանկութէն այնչափ բարի սովորութ ունքը կըրթեր էր որ կատարեալ առաքինի է-

ղած էր։ Ոչ մը աշկերտները ժողովէր գաս կուտար, ուրիշ փիլիսոփայ մը եկաւ Հոն. որ անոր դէմքին գըծագրութիւնը նայելով կանչեց, թէ կերպարանքէդ կերևնայ որ դուն ախտաւոր մարդ ես։

Աշկերտները երբոր այս խօսքս լսեցին, անանկ տաքցան, որ մարդը պիտի ծեծէին։ Բայց Սոկրատ մէկէն զանոնք արգելեց ըսելով թէ իրաւ է խօսքը. ես բնականաբար պիտի ախտաւոր մարդ ըլլայի, թէ որ բարի սովորութիւն չիս կրթէի. որով ամէն գէշ բնութիւններս շտկեցի, և առաքինութեց հետևեցայ։

Վայ որ հետևի չար սովորութեանց,
վատթար գործքերով միտքն է խաւարած.
Գէշ գործքն է իրեն բնութիւն մը եղած,
զուրկ ամէն տեսակ առաքինութեանց։
Փախիր չար գործոց ոչչափ որ կրնաս,
չըլլայ թէ քիչ քիչ բնութիւն ստանաս.
Եթէ հետևիս միանգամ միայն,
չես կրնար ձգել չարաչար կերթաս։

ԺԴ. ՀԱՄԱՐ

Ինչպէս պէտք պաշտենք Աստուած։

71. Աստուածը այսպէս կը հրամայէ. որդին կը փառաւորէ իր հայրը, ծառան կը վախնայ իր տիրոջմէն, ուրեմն թէ որ ես ձեր հայրն եմ, ո՞ւր է իմ փառքս. թէ որ ձեր տէրն եմ, ո՞ւր է իմ պատիւս։

Աստուած ուրախացնելու համար, պէտք է սրտանց և հոգւով երկրպագութիւն ընենք ստեղծողին. նաև սիրելով և գովալով պէտք է իր պատուիրանները պահենք, և իր օրէնքներուն ծառայենք։

Այսպէս զի բաւական չէ միայն պատուիրանները պահել և մեղքէն հեռու փախչիլ. հապա պէտք է ծառայել, իբրեւ զուն առատու տված բարիքները յիշելով և աղօթք ընելով, ինչպէս իր մեծութիւնը կը վայլէ։

Եւ Դաւիթ վարդապետանիս կըսէ թէ ով մարդ խելքդ գլուխդ ժողովէ, տես թէ ինչպիսի մեծ պատիւ

ունեցար, մինչև հայը կըսես ստեղ-
ծողիդ։ Այսալ մտածէ թէ հօրդ մե-
ծութիւնը քեզ պիտի յարմարցնես, որ
ամէնքը հասկընան թէ ձշմարտապէս
որդի՝ այ ես։

Այնա այսպէս պէտք է՝ ուծ պաշ-
տել. չէ թէ սովորութիւն եղաւծի պէս
միտքդ հազար տեղ ըլլալով. զի այս-
պիսի աղօթք և պատարագ ընդունե-
լի չեն՝ այ, թէ որ դուն քու աղօթքդ
չես լսեր, ուծ ինչպէս լսէ։

Ամէ որ մեծ մարդու մը հետ խօ-
սիս՝ կըսկըսիս կարմրիլ, և ուշ դնելով
պատասխան կուտաս. ապա ուրչափ
աւելի երբեր՝ այ հետ կը խօսիս ա-
ղօթքով, ՝ոբ և բարի վարքով առջին
ելլել պէտք է, և ոչ ուրիշ կերպով։

Այ՝ եր՝ ՝ոբ Յակոբ մծբնայ հայրա-
պետը կըսէ թէ շատ գեղեցիկ է ա-
ղօթքը, թէ որ ընօղը բարեգործ ըլ-
լայ. ընդունելի կըլլայ աղօթքը, թէ
՝ուծ հետն ըլլայ. լսելի կըլլայ աղօթ-
քը, թէ որ ընկերին ներում՝ ըրած է։
Ամէ չէ՝ ինչ օգուտ դրսէն ջերմե-
ռանդ երևնալ, ու ներսէն ուրիշը չի
քաշել, ընկերը ատել, բարի վարք
չունենալ զուրկ առաքինութենէ։

Այ՝ անոր որ ասանկ սրտով կը

համարձակի այ առջին երթալ ու աղօթել. որովհետև ջերմեռանդ աղօթքն է մէկ լար մը այ հետ կապած, որ ամէն դէպ 'ի մարդը կը քաշէ, և մարդը դէպ 'ի երկինքը կը ձգէ։

Ընդպաշտութիւն դէմ է աշխարհիս մեծութիւնը։

72. Եւ որ մեծութիւը ամենպաշտութիւն դէմ ըլլար, ամէն չէր տար մարդկանց, ինչպէս տվաւ Աբրահամու և ուրիշ նահապետներուն, որ ոչչափ աւելի մեծցան, այնչափ աւելի ջերմեռանդ և ամենապաշտ եղան։

Ուրեմն փառքն ու մեծութիւը ոչ ամենպաշտութիւն դէմ է, և ոչ առաքինութիւն։ Այլ գաղջութիւն ու աշխարհասիրութիւն է հակառակ ամենպաշտութիւն, որ շատ մեծատուններու վրա տիրած է։

Ինչ զի կը կարծեն թէ մեծ մարդ ըլլալով պարտական չեն առաքինի ըլլալու։ Այս սատանիներուն ոգի աւետարանը կըսէ, թէ վայ ձեզ մեծատանց զի ընկալայք զմխիթարութիւն ձեր։

Ուրեմն պէտք է մանկուէ ատենդ կրթըվիլ ջերմեռանդ աղօթքներով, որպէս զի բնական ըլլայ քեզ ՝ուծպաշտութիւնը, և չըլլայ թէ թուլանալով պաղի։ Այսն զի մոլուիը չի կրնար մօտենալ առաքինի հոգուն, որ ՝ուծպաշտութիւնն զարդարված է։

՝Ուծապաշտ սիրտը ամէն գործքին մէջ իր բարեպաշտութիւնը յայտնի կընէ։ ՝Անաւանդ աղօթքին մէջ սիրտը կը բորբոքի որ ՝ուծային տեսուէն արժանի ըլլայ։ ՝Որչափ փառք մեծուի տեսնէ, աչքին չերևար, ու մարմնաւոր բանի համար հոգևորէն չի հեռանար. նաև ՝ուծպաշտութէ համար ամէն բան կատէ, մինչև իր կեանքն ալ չի խնայէր։

Ուստի անոնք որ կամ մեծուէ համար, կամ հանգստութէ համար, և կամ մարդկային նկատման համար հոգևորէն կը պաղին, մոլի և անպիտան են։ Կարծեն թէ անով բարակ և գիտուն պիտի երևնան. չիյտեն թէ ամէնուն ատելի կըլլան կոշտ և անշահ վարքով։ Որը զի՝ ստեղծողէն հեռու ըլլալով ՝ուր պիտի հանգիստ և մեծուի գտնեն, և ինչ փուչ մեծութի է ունեցածնին, որ քիչ ատե-

նէն պիտի անցնի ու իրենք ալ հող պիտի դառնան։

Ո՞ւր են այն մեծատուններն որ կարծէին թէ միշտ հոս պիտի մնան, շատոնց ամէն մեծութիւնին ձգեցին գացին, ու անուններին ալ չի մնաց։

Վակայն բարի գործքն ու ուծպաշտութիւնը միշտ կը մնայ, և յաւիտեան պատուելի է առաքինին։

Արգիս վարդապետնիս կըսէ, թէ ինչ այլ մեծ երանութիւն կրնայ ըլլալ քան զայն, որ մարդս ցաւալի մարմնով ՈՒՅ պատուիրանը կատարէ, ու երկնային թագաւորութիւնը ժառանգէ։

Ուղղէս պէտ է պատուել ՈՒԾ։

73. Ամաստուններնը կը հաստատեն, թէ ՈՒԾ աւելի պատուելի է քան գովելի. ՈՒՅ աւելի անձայն երկրպագութիւն և սրտի բորբոք կը վայլէ, քան գովասանութի, թէպէտ ըստ ինքեան գովելի է։

Ասուի պէտք է որ մարդս սովորութիւն ընելով միշտ ՈՒՅ մեծութիւը մտածէ, և տեսած բարիքը միտք բերելով պատուէ ստեղծողը սրտանց. որով կըլլայ երանելի։

Զ ան զի ՝ն ծ ապաշտ մարդը որ-
չափ աւելի մօտենայ մտքով արար-
չին, այնչափ աւելի երանելի կըլլայ։
և որչափ աւելի մարմնաւորէն վեր՝
ՀՈՒ ծ ապաշտուն հետևի, այնչափ աւելի
շնորհալի կըլլայ։

Ն՚հա այսպէս պէտք է ՝ն ծ պատուել
և ծառայել, ինչպէս որ հին ՝ն ծ ա-
պաշտ մարդիկ ըրին։ Որոնք թէպէտ
ամէն բան ունէին հարստութիւն, սա-
կայն ամենէն վեր և հարկաւոր ՝ն ծ-
պաշտութիւնը դրին։

Ն՚նոր համար առաքինիք բարե-
գործութիւն ելան աշխարքէ, ու իրենց
անունը անմահ թողուցին։ Ն՚հա այս-
պէս պէտք է ըլլալ ամէն քրիստո-
նեայ, մինչև անհաւատներն ալ իր-
մէն օրինակ առնեն։

Զ ան զի առանց սասը ոչ հաւա-
տարմութիւն կըլլայ, և ոչ ՀՇմարիտ
բարեկամութիւն։ Ն՚աև ոչ տղան բա-
րի զաւակ կրնայ ըլլալ, և ոչ հայրը
բարի ծնողք։

Ն՚թէ այս այսպէս է, պէտք է որ
դուն ալ հիմակուց աղէկ սովորուի
ընելով ՝ն ծ ապաշտուն հետևիս ամէն
բաներն առաջ։ Ո՛ւր որ ըլլաս և ինչ

բանի մէջ ըլլաս սովորական աղօթքդ չի ձգես։

Ոչինպէս ընկերներուդ հետ ըլլալով աղօթք ընելու համար ամօթ չի գայ քեզի, որ է սատանայական նկատմունք։ Անաւանդ պարծելով ծառայէ՛ այ. զուն եղիր ուրիշին օրինակ, նայէ՛ որ առջինն ըլլաս այ ծառայութեան մէջ։

Օրինակ առ դաւիթ մարգարէին ճշմարտութիւնն որ համարձակ կը խաղար տապանակին առջին առանց նկատման. մինչ զի երբոր զինքը ծաղր ընել ուզեցին, պարծելով ըսաց թէ ստեղծողիս առջին կը խաղամ ալ կրցաթկեմ ալ ամենայն սիրով։

Պատմութիւն։

Երբ ՚ՁԲ Ղևոնդեանք քահանաները հաւատքի համար բռնեցին Պարսկաստան տարին, մուրթ և թաց տեղ մը բանտը դրին։

Բայց անոնք անանկ ջերմեռանդ սրտով աղօթք և պաշտօն կընէին, որ այն խաւար բանտը լուսով լեցված էր։

Օր մը մոգպետը (շէյխիսլամը) ելաւ գիշերանց գնաց բանտին դռանը ծակէն նայեցաւ, թէ ինչ կընէն։ Երբոր այն զարմանալի լոյսը տեսաւ, դուռը զարկաւ ներս մտաւ, գնաց ՝ՍԲԵՐՈՒՆ մէջ նստաւ ու հաւատքի եկաւ, և անոնց հետ աղօթք ըրաւ լալով։

Յետոյ զանոնք իր տունը տարաւ, խորան շինեց, նոյն գիշերը մկրտուեցաւ և հաղորդուեցաւ։ Այնչափ հոգևոր ջերմեռանդ եղաւ, որ անոնց մէջ առաջ մարտիրոս եղաւ մեծամեծ հրաշքներով։

Ջերմեռանդ եղիր ջերմ աղօթքներով,
որ ՝ՍԾ լսէ ձայնդ գթալով.
Թէ սրտանց կանչես՝ ամենաբարին,
Իւր ողորմութիւն կը հասնի շուտով։
Ինչպէս ամէն օր կը վայլես բարին,
պէտք է որ պաշտես յաՍխ ջերմագին.
Որչափ երախտիք ՝Ստանես արարչին,
այնչափ արժանի կըլլաս ՝Սբ շնորհին։



ԺԵ. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս կըլլայ գիպուած։

74. Շատ երևելի գիտուններ եղան, որ ՝ՍՂայութիւն ատենը հասկըց-

վեցաւ որ իմաստուն և խոհեմ պիտի ըլլան։

Սակայն այնչափը բաւական չէր. հապա ջանքով և ուսմամբ միայն կըրնային գիտուն ըլլալ. ուստի մինչև որ գիտութիւն ետևէ չընկան, իմաստուն չեղան։

Ասն զի՝ ինչպէս մինչև որ մարդ բաղձանքը չի չափաւորէ, և բարի վարք չունենայ՝ առաքինի չըլլար, այսպէս մինչև որ միտքը ուսմունքով չի կատարելագործէ՝ գիտուն չըլլար։

Որովհետև միտքն է մուտ կամ դուռն, ուր հետզհետէ պէտք է մտնել ամէն ճանաչմունք և տեղեկութիւնք, որպէս զի հմուտ ըլլայ ամէն բանի։

Եթէ ուսումնական բաներու տեղեակ ըլլայ, գիտուն կըսուի. եթէ ազգային և բարակ բաներու հմուտ ըլլայ, իմաստուն կըսուի։

Որեմն գիտուն ըլլալու համար պէտք է ամէն բանի ուշ դնել, և պատճառը հարցընել քննել, նաև աղէկ ըմբռնել. որով միտքը ուսումնական հմտութիւնք կը լեցուի, և երևակայութիւնը մէջէն փուճ բաները կը վերնան։

Ինոր համար պէտք է գիտուններ-
ու հետ կենակցիլ, և անոնց հարցը-
նելով ամէն բանին պատճառը գիտ-
նալ ու անանկ միտք պահել, որ պէտք
եղած տեղը՝ կարգաւ հասկցնէ ու-
րիշներուն։

Բայց շատ հարկաւոր է սորված
բաները երբեմն յիշել կարդալ և
ինքնիրեն մտածել։ Բանն է՝ թէ տե-
սած բանին վրա անդրադառնալն է
յեսան (պիլէի), որ ամէն գուլ միտքը
կըսրէ։

Օ որ օրինակ ինչպէս որ մարմինը
նախ՝ կակուղ կերակուրներ ուտե-
լով, ետքն ալ հաստատ և զօրաւոր
կերակուր ուտելով կաձի և կը կա-
տարելագործի. այսպէս ալ հոգին
նախ զանազան խրատներով և ուս-
մամբ կրթըվելով, ետքն ալ գիտնա-
կան տեղեկութիւններ սորվելով՝ խո-
հեմ և կատարեալ գիտուն կըլլայ։

Սակայն թէ որ գիտութիւն ուշ չի
դնեն, ու հարցրնելու բաները չի
հարցրնեն, տեսած բաներուն պատ-
ճառը չի քննեն չի հասկրնան, նաև
գիտուն խոհեմներէն հեռու փախ-
չին, տգէտ կը մնան. ու անբանի
նման կապրին աշխարքիս վրան։

Որոնք գիտուէ համը չէն առած, գիտուններուն յարգն ալ չիյտեն. իրենք յիմար են, կուզեն աշխարքը ալ յիմար մնայ։

Ինչո՞ւ չէչ է գիտունը։

75. Որովհետև ամէն բանին պատճառը քննել և հասկընալ գիւրին բան չէ, մանաւանդ տղոց միտքն ալ փուճ բաներով զբաղած է, գիտուէ համը չիյտեն որ ետևէն ըլլան. և անանկ մեծնալով տգէտ կը մնան. ու միշտ տգէտը կը շատնայ, և գիտունը քիչ կըլլայ։

Իսկ մեծատանց տղաքը անհոգ և թոյլ ըլլալով ոչ միայն գիտութեան չեն հետևիր, այլև գիտութիւը կատեն, գիտունին երեսը չեն նայիր. նաև վար մարդու հմուտ տղաքն ալ չի քաշելով վար կը զարնեն. որպէս զի իրենց տգիտութիւը չերևնայ, և գիտունները պատուելով իրենք անպատիւ և յիմար չըլլան։ Սակայն ուզեն չուզեն յիմար ըլլալով անպատիւ են։

Լիկիանոս թագաւորը տգէտ ըլլալուն համար գիտուիը ժանտախտ կը կոչեր, որպէս զի իր տգիտութիւը

դէշ չերևնայ. ասանկ կըսեն ամէն տգէտները։

Իսկ վեսպասիանոս Թագաւորը Թէպէտ գիտուն չէր, բայց գիտուն սիրելով գիտունները քովէն պակաս չէր ըներ, և անով գիտուԹԵ կարօտ չեղաւ։

Այսպէս պէտք է ըլլալ. Թէ որ տղայ մը մանկուԵ առենէն գիտուն խելացիներուն հետ մեծնայ, անհնարին է Թէ տգէտ մնայ. ինչպէս որ ըլլայ՝ բաւական հմտուԹիւն կունենայ։

Այսպա Թէ բնականաբար գրասէր ալ ըլլայ, ու գիտուններուն քով յաճախելով բան հարցընէ, անատենը աւելի գիւրաւ գիտուն և խոհեմ կըլլայ։

Սակայն նախ պէտք է գրագրուԵ և քերականուԵ ետևէն ըլլալ. ետքը համառօտ ուսումնականուԹիւն կարդալով պատՀառները միտք առնել, որով կըլլայ քիչ քիչ ուսումնական. և որչափ մեծնայ, այնչափ շատ պիտանի հմտուԹիւններ կըստանայ։

Այս որովհետև ակունք կան որ մէկզմէկէ աւելի յարգ ունին. այսպէս ալ գիտուԹի գիտուԵ վրա աւելի յարգելի և պիտուական է. զորօ-

ընկակ փիլիսոփայութիւնը քան զքերականութիւնը։

Եթէպէտ բնական բաներըն՝ անասուններն ալ կը տեսնեն և կըզգան. զորօրինակ անձրև չեկած կըզգան որ պիտի գայ, սակայն ուսումնական չեն, և ոչ ընդունակ ուսման. զի միայն միտքն է ընդունակ գիտութեան. որ կարողութիւն ունի ամէն բանին պատճառը քննելու և հաւանելու։

Եւ ամէն բան խելքով իրար կը բաղդատէ. և ժամանակը քննելով շրջանները կը գտնէ, մինչև գալիքներուն ալ տեղեակ կըլլայ։

Ապա ով որ այսպէս չի մեծնար, անբանի նման տգէտ կը մնայ. և որչափ որ տղայութենէ ատենը անկիրթ կը մնայ, ետքն ալ այնչափ կոպիտ կըլլայ։

Ինչ է Իմաստութիւն։

76. Իմաստութիւնը լոյս է մտաց, որ այնչափ կը լուսաւորէ և սրատես կը-նէ միտքն որ ամէն հմտութիւն և գիտութիւն սորվելէն ետև, կըսկըսի մտքէ վեր բաներու ալ խելք երկնցընել. վերացեալ բաներ քննել, ամէն բանին էութիւնը հասկընալ. մինչև հրեշ-

տակներուն էուները և հոգիին կարողուները քննել. նաև ուծային անձառելի կատարելութիւնները զանազանել և ուծաբանել։ Ահա այս է իմաստութիւն։

Եւ այսպէս բնական խելքով կըրնայ հասկրնալ թէ ուծ կայ. վարձուց հատուցմունք կայ, և մարդուս հոգին պէտք է որ անմահ ըլլայ. թէ պէտ անհաւատ ըլլայ, ասոնք կրնայ ճանչնալ։

Զսով ոմանք հին կռապաշտ փիլիսոփաներէն հաստատեցին, որ ուծ կայ ստեղծող երկնի և երկրի. և մարդուս հոգին չի մեռնիր. նաև հատուցմունք պիտի ըլլայ, արդարներուն հանգիստ, և մեղաւորներուն պատիժ։

Իմաստութիւն այնչափ մեծ բան է, որ Պիւթագորաս փիլիսոփան ըսեր է թէ մարդուս իմաստուն ըսել չի վայլէր, հապա միայն ոյ կը վայլէ. մարդս որչափ գիտուն ըլլայ, իմաստասէր ըսելու է. որովհետև իմաստութիւնն է ոյ նմանուի. իսկ իմաստասէրն է իմաստութիւն սիրող։

Արդ՝ զասոնք լսելով պէտք է ջանաս գիտուն և իմաստասէր ըլլալու.

ժամանակդ պարապ չանցընես տղայ-
ական բաներով. կարգաւ ամէն
հմտութեց տեղեակ եղիր. որով կըը-
նաս քիչ քիչ իմաստասէր ըլլալ, որ
է՝ այ նմանութիւն։

Ման զի ինչպէս որ ՝ուծ բոլորովին
հոգի է, բոլորովին միտք է. այսպէս
դուն ալ բոլորովին հոգի կը դառ-
նաս. մարմնաւոր բաներէն կը վեր-
նայ միտքդ և ուսումնական բաներով
կը զուարճանայ։ Ա՝ինչ զի՝ ամէն
խօսքդ անոյշ և գեղեցիկ կըլլայ. և
ամէն շարժմունքդ պարկեշտ և քա-
ղաքավար։ Որչափ որ մարմնդ սը-
նունդ առնելով կաձի, այնչափ և-ս
աւելի հոգիդ իմաստութիւն կը զօրա-
նայ լուսաւորելով։

Սարգիս վարդապետը կըսէ, թէ
ինչպէս տգիտութիւն խաւարը կը կու-
րացնէ միտքը, այսպէս գիտութեան
լոյսը կը լուսաւորէ հոգին. և ինչ-
պէս որ առանց կերակուրի կը մեռ-
նի մարմինը, այսպէս առանց գիտու-
թիւն հոգին չի կրնար կենդանի մնալ։

Պատմութիւն։

Ա՝ՀՈՒ մարդու մը տղայ մանկուն
ատենը ամենևին ուսման սէր չունէր.

երբեր մեծցաւ տգէտ Թանձրամիտ մնաց։ Այս հասատ մարդը իր արձանը փորել տրվաւ ամենեւին նման իր կերպարանքին։

Որ մը այս արձանը ցցուց իր մէկ բարեկամին հարցընելով Թէ արդեօք աղէկ կը նմանի՞ ինձի։ Ընաւ պատասխան տրվաւ Թէ բոլորովին նման է քեզի։

Թէ ցանկաս ըլլալ հոգւով շնորհալի,
գիտուԹի տրվէ որ լոյս է սրտի,
Որչափ աւելի եռեւէն ըլլաս,
այնչափ գեղափայլ սիրուն կերևնաս։
ԵԹէ սէր ձգես գիտնոց և ուսման,
խնամատուն կըլլաս կիրԹ և խոհական.
Թէ փուճ բաներու եռեւէն ըլլաս,
տգէտ Թանձրամիտ անշահ կը մնաս։

ԺԸ. ՀԱՄԱՐ

Ինչպէս կըլլայ խոհեմ։

77. Բաղաքական ընկերուԹեան մէջ ամէն բաներէն աւելի խոհեմուԹիւն է հարկաւոր։ Սակայն խոհեմ ըլլալու համար պէտք է ամէն գործքը կանոնով և մտածելով ընել. ոչ խաբէ և ոչ խաբվիս, և ամէն բան ըստ տեղ-

ւոյն և ըստ ժամանակին ընելով բա-
ղոյապէս բարի կըլլայ։

Իբր զի՝ խոհեմը նախատես ըլլա-
լով մտաց լուսով առաջ ամէն պա-
տրագանները քննէ ու անանկ ձեռք կը
զարնէ. միշտ խելքով գործելով և
խօսելով։

Այց ինչպէս որ մէկ ճշմարտուն
մը լաւ ճանչնալով գիտուն չըլլար,
հապա ամէն ճշմարտութիւն տեղեակ
պիտի ըլլայ. այսպէս ալ մէկը մէկ
խոհեմ գործքմ՝ ընելով խոհեմ չըլ-
լար, հապա պիտի գիտնայ խոհեմու-
թիւն գործել ինչ որ ըլլայ։

Ահա առուր համար ալ պէտք է եր-
կար ժամանակ կրթուիլ ուսնենալ.
որպէս զի ամէն բանի մէջ անդրա-
դարձուիլ ընելով խոհեմութիւն գոր-
ծէ. կրիցը և բաղձանքին չի հետևի.
միշտ մտածելով թէ այս գործս ինչ-
պէս կրնայ աղէկ լմընալ. և ոմանց
բանը ինչու դէշ եղաւ, ոմանցը ա-
ղէկ։ Խելք ունեցողը կրնայ հասկը-
նալ, թէ աղէկ գործքը լաւ նախա-
տես ըլլալով և մտածելով սկըսված
է. դէշ գործքը առանց մտածելու
եղած է։

Իդէպէտ տեսանք տղաք, որ ման-

կութեամբ ատենը խոհեմութիւն մը կերևնար վրանին. բայց անանկին մտածութիւնը անփորձ և խակ ըլլալով, գործքերնին ալ խոհեմութիւն չըլլար. բայց եթէ ըստ պատահման։

Ինչպէս կենդանիներուն մէջ ալ կան, որ անկատար խոհեմութիւն մը կերևնայ վրանին. ինչպէս են մրջունները, մեղուները, և աղուէսը. որ խելք չունենալնուն համար առանց մտածելու կրնեն. որով ոչ երբեք կըրնան խոհեմ ըսուիլ։ Այսն զի միայն բնական լուսով կրնեն, որ ուրիշներէն աւելի ունին։

Կան կենդանիներ ալ, որ խոհեմ մարդիկներէն խոհեմութիւն կը սորվին. ինչպէս է շունը, կապիկը, որ կրթութիւնք և սովորութիւնք շատ բան կը սորվին։ Անէպէտ խոհեմութիւնք չեն կրնար գործել. վասն զի միտք չունին, հապա միայն կրթութիւն է. որ գիտցածնին ուրիշ կերպ չեն կրնար դարձընել։

Ասոնց նման են տղաքն ալ. սակայն խոհեմ մարդը մէկ բանին վրա շատ կերպ մտածական ընելով և գործք գործքի հետ բաղդատելով, հազար կերպ կը փոխէ մտքին մէջ,

ու վերջապէս ուրն որ բարի կը ձանչնայ կը գործէ խելքով։

Ո՞ՐՆ Է ԿԱՆՈՆԸ։

78. Յոհեմուէ գլխաւոր կանոնն է ամէն բանին վախճանը դիտել. միշտ նայելու է որ գործքը կամ իրեն և կամ այլոց օգտակար ըլլայ, մարդու ջնաս մը չի բերէ։ Ինչանկ որ ինչ վախճան որ ունի վախճանին հասնի. որպէս զի գործողը պղտիկ ելնելով ծաղր չըլլայ։

Ինչանք թէ մեծաւոր մը օրէնք պիտի դնէ. նախ մտածելու է որ այն օգտակար ըլլայ այլոց և պահվի միշտ. թէ որ օգտակար չըլլայ, քիչ ատենէն կը վերնայ, ու դնողը ծաղր կըլլայ։

Այնպէս թէ որ բան մը պիտի ընես ընկերներուդ առջին, նայէ՛ որ ըրածդ օգտակար բան ըլլայ, և ինչ վախճանաւ որ կրնես՝ անանկ կարդաւորէ որ վախճանին հասնի, թէ չէ՝ ծաղր կըլլաս։

Պէտք է նաև հանդարտ գործել, և խորհուրդը ամենուն չի յայտնել. և միշտ ամէն բանին վերջը մտածելով նայիլ թէ այս բանէն ինչ կը հե-

տևի. և միշտ մեծին խորհրդոյն երթալ։

Այսով ամէն տրղայ կը պարտաւորի իր մեծին հնազանդ ըլլալ. և ինչ որ ընէ, պէտք է մեծին հարցընել, և անկէ խրատ առնել, որպէս զի չի սխալի. նաև խոհեմութիւն Ճամբան սորվելով եփի ինչպէս պէտք է։

Այսն զի տղան երբոր խոհեմութի չէ սորված ու խորհրդով բան չընէ, մեծնայ նէ՝ իր տունը խոհեմութիւն չի կրնար կառավարել, և խոհեմ գործք չի կրնար ընել։

Անաւանդ եթէ մեծ բանի մը մէջ մտնէ, ամենևին անբնդունակ կըլլայ, ու շատ անխոհեմ բաներ ընելով մեծ վնաս կը բերէ և գարշելի կըլլայ։

Այս է պատճառն որ ոմանք թէպէտ մեծ բաղդի կը հանդիպին. բայց անխոհեմութիւնքնին ատենին մէջ կը կորսընցնեն, ու չամբչնալով ալ կը տրըտընջան. որուն պատճառը իրենք են։

Իսկ ոմանք փոքր գործքի վրա ըլլալով անանկ խոհեմ կը շարժին ու հանդարտութիւն լաւ կը կատարեն, որ քիչ ատենին մէջ կը մեծնան անուանի կըլլան։

Սակայն գլխաւոր կանոններուն մէկն ալ այն է, որ միշտ պէտք է նայել խոհեմներուն գործքին. և անոնց վարքին և կերպինմանիլ. հարցընելով և քննելով թէ ինչ ճամբայ բռնեցին որ անուանի եղան։ Իսկ ինչ ըրին անխոհեմ մարդիկ որ անարգ մնացին, ու գովելի գործք մը չունեցան։

Ո՞Ղ ԷՐԱՆ ԽՈՀԵՄ։

79. Ան կըսվի ճշմարիտ խոհեմ, որ գիտէ քննել ժամանակը, տեղը, և անձը։ Ամն զի բան կայ որ հիմա ընելը գէշ է, բայց ատենին որ ընէ աղէկ կըլլայ։ Բան կայ որ հոս ընէ աղէկ չըլլար, տեղն որ ընէ, աղէկ կըլլայ. խօսք կայ որ տեղն որ խօսի՝ մեծ բանի տեղ կանցնի. ուրիշ տեղ որ խօսի աղէկ չըլլար։ Ամարդապետները կըսեն թէ ադամ ատենէն դուրս պտուղը ուտելով աս խեղճութիւնը ընկաւ։

Խոհեմ մարդը գիտելով զանազան միջոցները լաւը կընտրէ, ու այնպէս կը գործէ։ Որովհետև խոհեմ միտքը վախճանը գիտելով միջոցն ալ կը գտնէ. որպէս զի անով կարենայ հաս-

նիլ վախճանին։ Ուստի խոհեմին միտքը գիտուն ըլլալով և սիրտը բարի, ոչ տգիտութիւնը և ոչ չարութիւնը կրնան սիրտը փոխել. միշտ օգտակար բանի հետ կըլլայ.

Իսկ որ վախճանը բարի ըլլայ ու միջոցը չար. գործքը բարի չի կրնար ըլլալ. զոր օրինակ թէ որ մէկը անուն ստանալու համար, կամ ողորմութիւն տալու համար ուրիշին բանը գողնայ՝ անխոհեմ և չար կըլլայ գործքը։ Ուրեմն խոհեմ գործքին վախճանն ալ բարի պիտի ըլլայ, միջոցն ալ։

Խոհեմը ինչ գործք որ ընէ՝ մէկէն չորոշէր, և մտածմունքն ալ մէկէն չի փոխեր. այլ ծանր կշռելով, և ամէն պարագան մտածելով կը գործէ. որպէս զի ըրած բանին վրա չի զղջայ։

Ը. Ա այս պատճառաւ, թէ որ դիպուածով ձախորդ բան մը հանդիպի, չի ցաւիր. որովհետև ամէն բան առաջուց հասկըցած է, և գիտելով իմացած է գալիքը։ Ը. ս ալ գիտէ որ ձախորդութիւն ու յաջողութիւը եղբայր ըլլալով ամէն գործքի մէջ կըրնան հանդիպիլ։

Ա. ուրիշին խելքին և ոչ իր անձին

կը վատահի. այլ խելքով կշռելով ամէն բանին ճամբան կը գտնէ. որովհետև իր դիտողութիւնը և բնական լոյսը իրեն կառաջնորդէ, որ խոհեմ գործէ։

Եւ ծերոց խրատին ականջ դնելով, և այլոց եկած փորձանքին նայելով կը կառավարվի և այնպէս կը վճռէ, թէ այս բանը հնար է նաև պատշաճ և օգտակար, ուրեմն ընեմ։

Ուրդ՝ այս կանոնները աղէկ միտքդ առնելով ջանա որ ասկէ ետև այս կանոններով շարժիս. խօսքդ գործքդ կշռով ըլլան, և ամէն բանին վախճանը մտածելով ընես. որպէս զի ետքը չի զղջաս, որ քեզ միշտ անարգուի բերելով ծաղր չըլլաս ամենուն։ Իսկ թէ որ խոհեմութիւն գործես, ըրած գործքդ միշտ գովելի կըլլայ, դուն ալ փառաւոր և երջանիկ մարդ կըլլաս։

Պատմութիւն։

Զենոնեսիոս տեսնելով մէկ փիլիսոփայ մը հարցուց թէ ինչ ունիս ծախու։ Ինքն ըսաց թէ էմասպոսնէ։ Որէն հարցուց թէ ինչ գին կուզես։ Պատասխանեց թէ վեցհարիւր

զուռուշ։ Հանեց մէկէն ստակը տը-
վաւ։ Փիլիսոփան ըսաց՝ թէ ամէն
բանդ խոհեմութիւն ըրէ, վերջը մտա-
ծելով։

Դիոնեսիոս բանի մը տեղ չի դնե-
լով սիրտը նեղացաւ. և միշտ նոյն
խօսքը բերանն էր կըսէր։ Որ մը
խորհուրդ կար որ ածիլվելու ատե-
նը սափրիչը գլուխը կտրէ. բայց երբ-
որ լսեց Դիոնեսիոսէն թէ խոհե-
մութիւն վերջը մտածէ, կարծեց թէ
թագաւորը բանն իմացեր է. ուստի
մէկէն վախնալով յայտնեց իրեն.
որ նոյն փիլիսոփային խօսքով ազա-
տեցաւ։

Այս ըլլայ քեզի խրատ և պատգամ,
արթուն և խոհեմ եղիր յարաժամ.
Ինչ գործք որ ընես նախ լաւ մտածէ,
մինչև որ հասնիս վերին ատիճան։
Թէ փոքրին մէջը՝ չըլլաս խոհական,
խոհեմ չի շարժիս ինչպէս է արժան.
Ի՞նչ պիտի ընես մեծ բաներուն մէջ,
ինչպէս կը հասնիս կատարելութիւն։

ԺԷ. ՀԱՄԱՐ

Լինելոյ պէտք է ընկերել։

80. Կենակցութիւն մէջ ամէն բանէն աւելի հարկաւոր է Աշմարիտ և շիտակ սրտով իրարու հետ վարուիլ. վասն զի մարդս մարդով պիտի ընկերութիւն ընէ. և մոքին բանը պիտի իրարու հաղորդէ։

Երբոր հաւատարմութիւն և շիտակութիւն չի կայ, ամէն բան կը խանգարի. նաև պէտք կը լայ մարդկային ընկերութիւը ձգել ու անասուններուն հետ կենակցիլ, որ խաբեբայ և կեղծաւոր ընկերէն լաւ են։

Եւ որովհետև ամէն մարդ կը փափաքի բնականաբար, սրտին ուրախութիւն ու տրտմութիւը այլոց հասկցնել, որպէս զի սիրտը հանգչի. և ամէն մարդ կը ցանկայ ուրիշին բանը լսել. անանկ որ մարդուս երկու աչքն ու երկու ականջը գրեթէ միշտ այս բանիս ետևէն են։

Սակայն անասունը սիրտը կը հանգչի, երբոր Աշմարիտը կը լսէ. և ան ա-

տենը կը զուարճանայ ընկերին վրա, երբոր շիտակ արտով կը վարվի հետը, և իր խօսքը աղէկ մտքով կը լսէ։

Լաւ չէ՝ ինչ օգուտ ընկեր և բարեկամ ունենալ, երբոր երեսանց է միայն իրեն կենակցութիւնը. ինչ շահ այնպիսի բարեկամէն, որուն գործքը ուրիշ և խօսքը ուրիշ է։ Շատ անգամ գործքը բերընին հակառակ կընէ։

Կան որ ուրիշի հաճոյ ըլլալու համար հազար կերպ կը փոխվին. կան որ իրենց շահին համար երբեմն սուտը ճշմարիտ կընեն և ճշմարիտը սուտ։ Նրբեսպաշտութիւն ու կեղծաւորութիւնը այնչափ տիրեր է մարդկային ընկերութեան մէջն որ հաւատարմութիւնը վերցըվեր է, և բարեկամութիւնը խանգարեր է։ Ինչանկ դրեր են մտքերնին թէ հիմա այսպէս ընել պէտք է. և կեղծաւորութիւն անունը ստութիւն քաղաքականութեան կամ փուլիթիքա դրեր են։

Ինոր համար իմաստունները կըսեն թէ մեծ բան է հաւատարիմ մարդ գտնել. որ ճշմարտութիւնը ճշմարիտ արտով խօսի. և ոչ թէ ստով ներկելով կամ փոխփրխելով։ Ամն

զի ճշմարտասէր մարդը շիտակն ի-
բեն սովորութի բրած է, ու ամէն
գործքը խօսքը շիտակ կընէ, և ամէն
բանին մէջ հաւատարիմ է։

Ի՞նչպէս կըլայ ճշմարտախօս։

81. Ճշմարտախօս և հաւատարիմ
մարդիկ ամէն բանի մէջ համարձակ
և ազատ կերևնան. միշտ շիտակին
կը հետևին։ Ա՛ջ շահի համար կը
խօսին և ոչ մեծուռ, այլ արդարու-
թեան։

Ինչոր համար դատաստանի մէջ դա-
տաւորները ճշմարտախօս մարդ կը
փնտրեն, և մէկէն կորոշեն ճըշմար-
տախօսն ու ստախօսը։

Լաւի անհաւատարիմ կընեն զի-
բենք անոնք՝ որ սովորութի բրած են
ամէն բանի մէջ երդում ընել. որ
կենակցութե և հաւատարմութեան
դէմ է։

Ալ ան զի այս չար սովորութիը միշտ
կասկածելի կընէ մարդը. և մէկէն
կիմացվի թէ անանկ մարդը ճշմար-
տախօս չէ։ Իբր զի՝ պէտք է որ ճըշ-
մարտութին ստուգէ խօսքը, չէ թէ
երդումն։

Ճշմարտախօսը միշտ կը դիտէ տեղը և ժամանակը. որչափ և ուր պէտք է խօսիլ. չըլլայ թէ աւելորդ խօսքով սուտ մտնէ և չափազանց խօսի։

Որովհետև մարդս պարտական է որ սուտ չի խօսի, բայց ամէն ճշմարիտը ամէն տեղ և ամէն մարդուս զուրցել պէտք չէ. հապա խոհեմութիւն պէտք է շիտակ երթալ։ Այսկէ կը հետևի թէ ճշմարտախօսը խոհեմ կըլլայ, ու վայլած բան կընէ։ Ասան զի շատ ճշմարիտ խօսք կայ, որ կամ ուրիշը վատանուն կընէ և կամ զինքը. կամ ուրիշին ինաս կը բերէ, և կամ իրեն։ Ուստի հարկ չի կայ ամենուն յայտնել, և ուր որ ըլլայ զուրցել։

Պէտք չէ ամէն բարեկամի և ամէն ազգականի խորհուրդ յայտնել, կամ ճշմարիտը խօսիլ։ Հապա պէտք է միշտ անկեղծ մարդկանց հետ պարզմտութիւն երթալ. և խորամանկ մարդկանց զգուշանալ։ Այսպէս կերպով ոչ ճշմարտութիւնը կը խանգարի, և ոչ սուտզրոյց կըլլայ։

Ասան կենակցութիւն մէջ շատ ամօթ բան է զինքը գովել, և իր աղէկ բաներ ալ ճշմարտութիւն մեծցընել. հապա

ասանկ պարագայի մէջ առանց պարծելու եղածը պատմելու է, միշտ պզտիկցընելով։

Եւ որ զարմին վրայով ալ խօսք բացվի պիտի պարզ բառերով աստիճանը և մեծութիւնը պատմել առանց պարծանքի և առանց ուրիշը պզտիկ ձգելու. որպէս զի գովեստ և մեծամտութիւն չերևնայ։

Շմարիտ ընկերական մարդը ասանկ ըլլալու է, որ դէմքին վրա Ճշմարտութիւն յայտնի երևնայ անկեղծ առանց նենգութեան. իբր զի՝ կեղծաւոր և խաբեբայ մարդկանց աչքը՝ ունքը և դէմքը միշտ կը խաղան, և կերպ կերպ կը փոխվին։

Շմարտասէր մարդը թէպէտ որդեղ ըլլայ, չի փափաքիր զարդարվելու. միայն կը ջանայ գիտութիւն և իմաստութիւն անանկ զարդարել հոգին, որ ամենուն գեղեցիկ կերևնայ. որովհետև մարդուս գեղեցկութիւնը հոգւոյն վրա է, որ չանցնիր։

Եւ որ աղնուական է, չի պարծենար, այլ կը ջանայ նախնեացը նըմանիլ, որ անպատիւ չերևնայ. թէ որ վար ցեղէ է, կամ աղքատ քաղաքէ, իրեն ամօթ չի բերեր, սիրով կը

տեսնելի ազգակցաց հետ, ոչ իր ազգը կուրանայ, և ոչ քաղաքը։

Մինչտ կը ջանայ, որ բարի համբաւով և առաքինի վարքով աշնուական ընէ իր ազգն ու քաղաքը։ Որ նոր համար Ճշմարտուն համարձակ կը խոստովանի, թէ այն քաղաքէն և այն ազգէն եմ, և անով աւելի պատուաւոր և ազնիւ կերևնայ. զի շատ աղէկ է ազգի քաղաքին մեծ մարդն ըլլալ, քան մեծ քաղաքին ազգի մարդը։

Ունելիք խոնարհ Ճշմարտութիւնը։

82. Ճշմարտախօսութիւնը ստով, սուտ պարծանքով և կեղծաւորութիւնք կը խանգարի. և ասով հաւատարմութիւն ալ կը վերնայ. որ շատ ինքնակար ախտ է ընկերութիւնն։

Ուստի ով որ սովորութիւն ըրած է իրեն այս ախտերը, ամենուն ատելի է. և մարդ չուզեր երեսը նայիլ և մէկ խօսքը լսել։ Այսն զի ինչ որ ընէ՝ չեն հաւատար. Ճշմարիտ ալ խօսի, սուտ կերևնայ։

Սանկ մարդը Ճշմարիտ բան ալ ունենայ, այնչափ կը մեծցընէ, որ կը խանգարի. և երբեմն այնչափ

կեղծաւորելով կը պզտիկցընէ, որ անհաւատարիմ կերևնայ։

Եւ այսպէս իր բանը կամ խօսքը ուրիշին յայտնելով ոչ միայն ընկերական զուարճութիւն չըլլար, այլ և անհաւատարմութիւն մը առաջ գալով իր ապականած մտքէն, կըլլայ ծաղր և բամբասանաց պատճառ։

Այս սովորութիւն ինչափ որ առաջուց թեթև կերևնայ, այնչափ ժամանակով կը զօրանայ, և բոլորովին ճշմարտութիւնը կը հեռանայ իրմէն, ու սուտը կը տիրէ լեզուին վրա։

Մէն մարդու բան կը խոստանայ, բայց բան մը չի կատարէր, շատ մեծ բաներ խօսելով խօսք կուտայ, բայց փոքր բան մը գլուխ չի տանիր։

Եւ ինչափ որ չանայ կեղծաւորութիւնը և սուտ պարծանքով մեծ և խոհեմ երևնալ, այնչափ ցած և անպիտան կերևնայ։

Կեղծաւոր մարդուն սիրտը ուրիշ է՝ բերանը ուրիշ. գրպէն ուրիշ է նեբսէն ուրիշ. միտքը ուրիշ է խօսքը ուրիշ։ Ինչափ որ խոնարհ կերևնայ գրպէն, այնչափ հպարտ է սիրտը. ինչափ անոյշ և բարեպաշտ կերևնայ, այնչափ գազան է։ Անանա-

ւանդ երբոր սուտը իրեն սովորական գործիք ըրած է. ու ամէն տեղ կը բանեցընէ իբր նեղքին բարեկամ և արտանց սիրելի ձևանալով։

Ամէն մարդու կըսէ թէ քեզ ամենէն շատ կը սիրեմ։ և ամենուն խորհուրդ կուտայ որ անոնց բերնէն բան որսայ, և ամենուն սիրտը շահի։

Այ երջապէս ամէն գործքն ու խօսքը ստով կը նեռիկէ, և որչափ աւելի ընէ, այնչափ անարդ կըլլայ։

Այ այ անոր որ լուսին խաւար՝ կըսէ, և ասանկ կեղծաւոր սուտերով Հրշմարտուն դէմ կընէ. չիյտէ թէ իր պատիւն ու Համարումը կը կորսընցնէ և այ դէմ կը մեղանչէ, որ է իրեն վաստակն ու շահը։

Ուրեմն ջանա որ այս մոլուէ հեռու փախչիս. վախցիր չըլլայ թէ քեզ սովորութիւն ըլլայ. հիմակուց Հշմարտասէր եղիր. ամէն բանդ Հրշմարտութիւն պատմէ և չիտակ սրտով առանց կեղծաւորութիւն այլոց հետ կենակցէ, ինչպէս կը վայլէ մարդկութեան։

Ինանկ շարժէ որ ամենուն առջին մեծ Համարում ունենաս։ Ինթէ մի անգամ սուտ խօսիս, բոլոր յարգու-

թիդ և անուանդ կաւրի, և անանկ խօսքդ գետինը կկնի, որ անկէ ետև ձշմարիտ ալ զուրցես, մարդ չաւ-տար։

Ըլլայ թէ ընկերներուդ հետ կեղծաւորութիւն վարվիս. և ամէն բանդ ամենուն մի յայտներ, որ անկարգութիւն մը չի հետևի։ Միշտ սուտը ատելով ձշմարտասէր եղիր. սուտ պարծանքը քեզմէ հեռու ըլլայ. որով աղէկ անուն ստանաս, և մանկուէ ատենդ կատարեալ մարդ երևնաս։ Ով որ ձշմարտութիւն կը-խօսի, ոչ լեզուին վրա ունի, կըսէ նը վարդապետ մը։

Պատմութիւն։

Կեղծաւոր մարդ մը կուզէր որ մէկ գիտունի մը հետ բարեկամ ըլ-լայ։ Դրբեմն երբեմն կերթար զա-նազան սուտ խօսքերով երեսպաշ-տութիւն կընէր։

Դայց կը նայէր որ՝ գիտունը իրեն երեսը չուզէր նայիլ, ու միշտ իր ուսմանը հետ էր։ Որ մը տեսաւ թէ գիտունը զուարձանալով կըկար-դար. ըսաց թէ ՝որ իմ այս ոչչափ գիրք կարդալ կը սիրես. երանի՞ թէ

եւ ալ այդ սիրական գրքերուդ մէկն ըլլայի։

Ինալ պատասխան տրվաւ, թէ շատ աղէկ կըլլար. երանի՛ թէ օրաց ցոյց ըլլայիր, որ տարուէ տարի փոխէի։

Այս խրատն ըրէ քեզ մեծ բարեկամ,
մոքէդ չի հանես կարդա՛ շատ անգամ.
Անկեղծ ճշմարիտ որչափ որ ըլլաս,
այնչափ մեծանուն պատիւ կունենաս։
Թէ ճշմարտութիւն եւաւէն չըլլաս,
սուտ պարծանքներով քեզ պատուել չանաս,
Շատ չանցնիր անարգ անպիտան կըլլաս,
ամենուն աչքին պէտք է որ իյնաս։

ԺԸ. ՀԱՄԱՐ

Ինչպէս հըլայ մարդավարուրէ։

83. Որովհետև մարդուս կը վայլէ ընկերութիւն, և իրարու հետ քաղցր կենակցութիւն, որ կըլլայ մարդավարութիւնէ մէկզմէկ սիրելով և հաճոյ ըլլալով։ Ինոր համար Աբրահամուէլ ըսաց թէ ընկերութիւն չսիրող մարդը կամ ուած է, և կամ գազան. վասն զի ոյ կը վայլէ որ իր անբաւութիւնը ուրիշի կարօտ չըլլայ, իսկ գազա-

նը իրար ատելով չսիրէ ընկերու-
թիւն։

Այս է պատճառն որ մարդուս
տրվեցաւ խօսք և գիր. խօսքով սըր-
տին կիրքը կը յայտնէ ընկերին, և
գրով հեռուէն կը յայտնէ սիրտը
բարեկամին։

Որանի՞ գեղեցիկ է երբոր բան մը
կընես, կամ կը պատմես՝ ու ուրիշ-
ներուն հաճելի և գովելի կըլլայ,
կամ թէ քու խորհուրդդ և խելքդ
ընկերիդ կը յայտնես, ան ալ բան
կը սորվի։

Սակայն մարդս երկու բանով ա-
ւելի մարդավար կըլլայ՝ գործքով և
խօսքով. որովհետև կուզէ որ զինքը
և գործքը գովեն, պէտք է որ գովե-
լի ըլլայ գործքը և խօսքը, լսողը
տեսնողը հաճի, ու զինքը գովէ։

Եւ պէտք է վախ ունենայ, չըլ-
լայ թէ իր խօսքով և գործքով պըզ-
տիկ իյնի, ու նախատվի։ Ուստի ով
որ գովեստ ունենալու սէր չունի,
պզտիկ իյնելէն ալ չի վախնայ ու չա-
մընայ, համարձակ չարագործ կըլ-
լայ և անհաճոյ։

Լաւ մարդավար երևնալու համար
պէտք չէ ստուերքէ ուրիշը գովել,

կամ անկարգ բանով և կեղծաւորութիւն այլոց աղէկ երևնալ։

Հապա շատ հարկաւոր է ուրիշին կատարելութիւնը գովել, և հակառակ բան մը չընել ընկերոջը. միշտ ուրիշը մեծցընելով անոյշ խօսիլ, և սիրտը շահիլ բարեկամութիւն։

Ունկնդրութիւն։

84. Մարդավարը միշտ կը նայի որ այլոց կամքին դէմ բան չըլլայ, և զինքը կը ջանայ ուրիշին յարմարցընել, իր հաւասարին հետ անկեղծ բարեսրտութիւն կը վարվի, իրմէ պզտիկին հետնալ անոյշ քաղաքավարութիւն խոնարհ կը ձևանայ։ Մեծերուն քով հնազանդ և լուռ կընստի, ծերոց հետ ծանր, և տղոց հետ զուարթ խօսքերով կը վարվի, որով կըլլայ հաճելի և սիրելի ամենուն։

Նաև թշնամիին հետ ալ անանկ անոյշ խօսքերով կը վարվի՝ որ սիրտը կը շահի, ու կը յաղթէ իրեն։ Եթէ որ մէկէն ծանր խօսքմը լսէ՝ անանկ անոյշ կը պատասխանէ որ բերանը կը գոցվի։

Ինչպէս հակառակասէր մարդ մը հարցուց մէկին՝ թէ ո՞ր աչքը աղէկ

կը տեսնէ, աչքը, թէ ծախը. տեսաւ որ հակառաւութիւն պիտի ընէ, այս պէս պատասխան տրվաւ, թէ այն աչք աղէկ կը տեսնէ՝ որ քեզ հաճոյ է։ Այսով իր մարդավարուութիւնը յայտնեց, ու անոր բերանը գոցեց։

Ուստի իմաստունները այսպէս դրին՝ թէ սիրելի ըլլալու համար պէտք է որ մարդս ըլլայ մարդավարուով կարենայ զինքը շտկել, և քաղաքավարուութիւն ուրիշը շահիլ ամենուն սէրը իրեն քաշելով։

Մարդավարին ամէն բանը պէտք է որ կարգաւորեալ և մաքուր ըլլայ, խօսքը անոյշ և ճշմարիտ, շարժվածքը ծանր և աղնուական, լաթերը մաքուր, և բոլոր գործքը կանոնաւոր, գրած թուղթը գեղեցիկ և խոնարհ խօսքերով զարդարած. մինչև տեսնողը պէտք է որ սիրէ և գովէ մարդավարուութը համար, որ կըրթած կերևնայ, հասուն, առաքինի, և աղնիւ։

Ինչո՞ւ ամէն մարդ սիրելի չէ։

85. Մ՛վ որ չի ջանար ուրիշին հաճոյ ըլլալու, և քաղաքավարուութիւն կրթըվելու, հարկաւ կոշտ և հակա-

ռակօղ կըլլայ. ոչ ժամանակը կը-
նայի, ոչ տեղը, և ոչ անձը։

Պ՝ա զի այլ քաղաքավարուն պէտք
է ռանմիկներուն մէջ, և այլ քաղա-
քավարութիւն մեծամեծներուն մէջ։

Բան կայ որ ընտանութեան մէջ
մարդավարութիւն է, օտարականի
քով կոշտութիւն. բան կայ որ մէկ
ազգին կամ քաղաքին մէջ մարդա-
վարութիւն է, ուրիշ տեղ տմարդու-
թիւն։

Ընիմաչիններուն մէջ ծռմրռկե-
լով բարև տալը քաղաքավարութիւն
է, մեր մէջ անքաղաքավարուն (205)։
Ուրեմն զգուշանալու է ամէն տեղ
և ամէն խօսքին և գործքին մէջ՝ որ
զըզվելի բան մը չընէ, այլ վայելուչ
և գեղեցիկ։

Ալ,ան պէտք չէ սովորութիւն դուրս
բան ընել, կամ զանազան շարժմունք-
ներով խօսիլ, կնկան պէս ծռմրռ-
կելով քալել, և չափազանց կերպով
ուրիշը սիրել երեսպաշտութիւն։

Պէտք չէ ուրիշին կարծիքին հա-
կառակիլ, և խօսքը կտրել. պատուա-
ւոր մարդիկ չի մեծարել, կամ ուրի-
շին աղէկութիւնը չուզենալ և տըրտ-
միլ, որ մեծ տմարդուն է և մեղք։

Դիոգինէս փիլիսոփային հարցուցին թէ՝ ո՞ր գազանը աւելի կատղած է. պատասխանեց թէ՝ ընտանիներուն մէջ երեսպաշտը, և վայրենիներուն մէջ չարախօսը։

Երեսպաշտը ուրիշին մոլութիւնը գովելով, կամ չափազանց ուրիշը մեծցընելով սուտ կըխօսի, և մարդավարութիւնէ դէմ կընէ։

Իսկ չարախօսը ուրիշին ամէն բանը վար կըզարնէ հակառակելով, և գազանի նման ընկերը խայթելով ատելի կըլլայ, մինչև ամէնքը իրմէն կը փախչին։ Եւ որ գովելի բան մը խօսին՝ վար կըզարնէ, թէ վար զարնելու բան մը խօսին՝ ինքը կը գովէ։

Հակառակասէր մարդը կոչտուք ամէն բանին կը ներհակի. ոչ ճըշմարտուն կը նայի, և ոչ սուտ, ինքնիրեն օրէնք կըդնէ, կը վերցընէ։ Անաւանդ երբոր այս չար սովորութիւնը կը զօրանայ՝ հակառակուն հոգին կը տիրէ վրան. անանկ որ՝ միայն իր խելքն ու կարծիքը ամէնէն վեր դնելով միշտ կը ջանայ իր խելքը մեծցընելու։

Ասկից կը հետևի ատելուն նախանձ և չարակամութիւն։ Ուրիշին

բանը վար կը զարնէ, վասն զի ինքը չի կրնար ընել, ուրիշը կատէ՝ որ առաքինի է, իրեն մեծ ուրախութիւն է այլոց ներհակ ըլլալ, և ճշմարիտը սուտ երևցընել։

Այս ախտը անկիրթ սուսումնականներուն մէջ ալ կը գտնի, երբոր իր ձեռքէն չի գար գիրք շինել բանը գրել, ուրիշին գրածը վար կը զարնէ, թէպէտ գիտէ որ գէշ բան չէ, բայց հակառակուն ընելը իրեն մեծ մխիթարութիւն է։ Դաև գիտէ որ իր սուտը պիտի անարգվի՝ հոգը չէ, միայն թէ հակառակի այլոց։

Դրդ՝ ասոնք լսելով Ջանա որ մարդավար ըլլաս, ամենուն հետ անոյշ վարվիս, ամենևին հակառակուն և տմարդութիւն չընես, յարմարէ քեզ անձին, տեղին, և ժամանակին. որպէս զի գործդ և խօսքդ քեզ ամենուն սիրելի և գովելի ընէ։

Դհա ասկէ մեծ ուսում չիկայ, ամենուն հետ յարմար և անոյշ քաղաքավար և ցանկալի ըլլալով՝ ամենուն սիրտը շահիլ, և մեծանուն երևելի ըլլալ մարդավարութիւնը։

Պատմութիւն

Ընմարդավար սպանեօլ մը զինքը բան մը կարծելով կը խօսէր նէմցէի մը հետ, և միշտ կը ջանար իր կարծիքը և խելքը մեծցնել։

Երբը սկսաւ իրենց լեզուն գովել, և իրենց աղնուութիւն ու մեծութիւնը առաջ բերել, և նէմցէի լեզուն վար զարնել։

Հատ վիճաբանելէն ետև սպանեօլը նէմցէին ըսաց՝ թէ ձեր լեզուն այնչափ խիստ և հաստ է, որ կարծեմ թէ ա՞ծ նէմցէի լեզուով սպառնացաւ ադամայ, ու դրախտէն վռնտեց։

Նէմցէն ալ անոր պատասխան տըվաւ, թէ ձեր լեզուն ալ այնչափ կակուղ և բարակ է, որ կերևնայ թէ սատանան սպանեօլի լեզուով Նուան խաբեց։

Թէ ամենուն հետ լաւ վարվիլ կուզես,
ամէն մարդու հետ լաւ յարմարէ քեզ.
Ընանկ քաղցր ըլլայ քո կենակցութիւն,
որ օտարք տեսոյդ ցանկան մեծապէս։
Թէ մարդավար ես անոյշ կընես քեզ,
թէ անմարդավար միշտ ատելի ես.
Մինչ զի մեր մարդիկ քեզմէ կը փախչին,
որ ծանր խօսքով վիշտ մը չի բերես։

ԺԹ. ՀԱՄԱՐ

Ինչ՞վ աշխարհ կերևնայ մարդ։

86. Զնիւ և բաղձալի ըլլալու համար՝ մարդուս ամբջնալու կիրք մը տրված է, որպէս զի ամօթալի բան մը չընէ ու չանարգվի, այլ պատկառելով խօսի մեծին հետ։

Օ՛ի ձրչափ աւելի ամօթխած և ամբչկոտ ըլլայ տղան՝ այնչափ աւելի անոյշ և աշխարհ կերևնայ, մինչև ձչ երբէք պատիւը կըկորսընցնէ, այլ միշտ կեւեւլցնէ։

Ինչ որ սխալմամբ պակասութիւն մը գործէ, արիւնը երեսը վազելով իբր թէ կարմիր գունով կը գոցէ, որ անպատիւ չըլլայ։

Ինչ որ համար երբոր հարցուցին փիլիսոփային՝ թէ ո՞ր գոյնն է աւելի գեղեցիկ. պատասխան տրվաւ, թէ ամբջնալու գոյնը ամենէն գեղեցիկ է։

Ինչպէս ամօթն է բնական՝ որ ամէն մարդ ունի, բայց ամբջնալը հարկաւոր է մարդուն, անանկ որ ամբչկոտութիւնը նշան է աղէկ ըլլալու, և

անամօթութիւնը նշան է չար և մոլի ըլլալու։

Որովհետև պարկեշտը միշտ վախ ունի որ վատանուն և անարգ չըլլայ. անոր համար կը ջանայ որ ամօթ բան չընէ. և այնպէս աղէկ սովորութիւն ազնուութիւն մը կունենայ, ու առաքինի և սիրելի կըլլայ։

Դիոգինէս փիլիսոփան տղայ մը տեսաւ, որ պակասութիւն ընելէն ետև կարմրեցաւ։ Օ օրացիր ըսաց՝ տի՛ղաս, առաքինութիւն գոյն տեսայ երեսդ։

Ինչ որ չամչնար ըրածին վրայ, նշան էր թէ այլ չպիտի շտկըվէր, և քանի մեծնար գէշ կըլլար։

Ինչո՞ւ ամօթ կոչեցայ։

87. Ինչպէս որ աղէկ բանը պարծանք կը բերէ, այսպէս գէշ բանը բնական վախ մը կըբերէ որ անպատիւ չըլլայ։

Իբր զի մոլութիւն է վատանուն և ամօթալի, նաև չունի համեստութիւն. ուստի տղայական բնութեան աւելի յարմար է ամչնալ, որպէս զի ամօթալի բան մը չընէ, ու ազնուականութիւնը չի կորսընցնէ։

Այս պատճառաւ տղան ամբնաւ լու ատենը երեսը կը գոցէ՝ որ զինքը չի տեսնեն։ Այսան զի այն ամօթը բնական խոստովանանքմնէ իր յանցանքին գէշութենէ։

Սոկրատէս փիլիսոփան կը փափաքէր որ տղոց սիրտը մաքուր և պարզ ըլլայ, բերանը լուռ քիչ խօսի, և երեսը ամբչկոտ։ Իսկ ծերոց սիրտը խոհեմ, խօսքը անոյշ, և դէմքը ծանրաբարոյ։ Այսպիսի տղան կըլլայ ազնիւ և սիրելի, ծերը խոհեմ և ցանկալի։

Ուրեմն մարդ եղօղը պէտք է ամբնայ մեծամեծաց առջին, որպէս զի հանարձակ չըլլայ և ամօթալի բան մը չընէ։ Այսև պէտք է ամբչնալ իր գործքէն, թէև տեսնող չըլլայ, և ինքն իրմէն։

Եւ որ տղուն սիրտը մաքուր է և երեսը ամբչկոտ, բանմ՝ ընելու ատենը կընայի որ ամօթ և անպատուութենի չի գայ իրեն. և որչափ աւելի մտածէ, այնչափ աւելի ամօթը թող չի տար որ ազնուականութենէ և պարկեշտութեան դէմ բան ընէ։

Անաւանդ որ տղան իր մեծէն, իր ծնողքէն, օտարներէն աւելի կա-

մընայ։ Ինոր համար գիտուններըը կանոն դրեր են, որ ամէն մարդ գործք մ՝ ընելու առենը՝ պէտք է միտքը դնել թէ մեծ մարդ մը կայ քովը։

Ա՝ռանաւանդ թէ ամէն քրիստոնեայ պարտական է որ հաւատայ՝ թէ ՚ած ամենաբարին ամէն բան յայտնի կը տեսնէ, և ամէն տեղ ներկայ ըլլալով ամէն ծածուկ խորհուրդ յայտնի է իրեն։ Այս ասով չար գործքէն հեռու կը փախչի, ու ամրջնալու բան չընէր։

Թենացիք տաճար մը շինեցին ամօթին, որպէս զի թէ որ տղուն մը քով մարդ ալ չըլլայ՝ տաճարը միտքը բերէ ու վախնայ, և ամրջնալու գործք չընէ։

Այս առաւել մեր մանկանց կը վայլէ, որ այսպիսի խորհրդով իրենք իրենցմէ ամրջնան, պարկեշտ սորվին և ամենևին անամօթ բան մը չընեն լրբութեամբ։

Ի՞նչպէս է լրբէը։

88. Լրբ մարդը ինչ որ ընէ չամրջնար անասունի նման, որով կըլ-

լայ աներես. անանկ կը պատռէր ե-
բեան որ՝ կըսկսի պարծիլ ալ։

Շատ տղաք եղան որ մարդու ե-
բևնալու ատենը կը կարմրէին, եր-
բոր ամօթը մէկ դի դրին, ուչ մեծ
նայեցան և ուչ վարպետ. մինչև իր
մեծերը աչքերնին կը գոցէին որ ա-
նոնց չարութիւնը չի տեսնեն, իրենց
տեղը օտարները կամիչնային։

Շատ աղջիկներ անանկ պարկեշտ
և համեստ էին որ արեգակին կա-
միչնային երևնալու. բայց երբոր ե-
բեանին պատռեցաւ, դուրս կելլէ-
ին, բաց պար կը խաղային; անանկ
որ պարկեշտ մարդիկ այն կողմէն
չէին անցներ։ Ցնս թէ չար սովորու-
թիւը ինչ աստիճան անամօթ կընէ
մարդը։

Որոր ներհակ շատ անպարկեշտ
տղաք յորդորանքով և բարի սովո-
րութիւնք անանկ պարկեշտ և ազնիւ
եղան՝ որ ուրիշի օրինակ կուտային։

Արդ՝ Ջանա որ դուն ալ պարկեշտ
և ամչկոտ ըլլաս, մեծերու քով հա-
մարձակութի չընես, որ ազնուութիւդ
չի կորսընցունես, և մեծերուդ ա-
մօթ չի բերես։

Ըլլայ թէ մեծ մարդուն խօսքին

և կարծելքին դէմ խօսիս. միշտ պատ-
կառանք մը ունենաս, որով սիրելի
կըլլաս ամենուն, և աղնուութիւն մը
կըստանաս։

Ամէն բանէն առաջ միտքդ դիր
թէ ՝ած քովդ է, ամէն գործքդ և
սրտիդ շարժմունքը կը տեսնէ. վախ-
ցիր և ամչցիր ստեղծողէդ։

Ո՛ւր որ ըլլաս՝ միտքդ դիր թէ՝
վարպետդ և ծնողքդ քովդ են. ուր
որ ըլլաս՝ գուն քէզմէ ամչցիր. վա-
զի տղու բնութիւն շատ յարմար է ա-
մօթը, կըսեն իմաստունները։

Պատմութիւն։

Պողեմոն աթենացին մանկութիւն
ատենը չար սովորութեց հետևելով
այնչափ անկարգ և մոլի եղաւ՝ որ իր
անկարգութիւնը վրա կը պարծէր։

Օր մը լրբութիւն եղաւ Քսենոկրատ
փիլիսոփային դպրատունը գնաց, որ
ծաղր ընէ վարժապետը, և տղաքը
ծամբէ հանէ. սակայն երբոր լսեց
փիլիսոփային խրատներն որ պար-
կեշտութիւն և ամօթխածութիւն վրա
կուտար, սկսաւ ամչնալ. և ամչ-
նալով ծամբայ եկաւ, ու դպրատու-
նէն դուրս չելաւ, մինչև որ երևելի

խմաստասէր՝ պարկեշտ և առաքինի
եղաւ փիլիսոփային նման։

Մեծ է թէ մեծաց սիրելի ըլլաս,
ամենուն առջին պատիւ ունենաս.
Պարկեշտ շարժմունքով ամօթխածուք,
այս գանձը միայն պիտի ըստանաս։
Երբոր խելացի մեծ մարդ մը տեսնաս,
մոլիկ գիր խօսքին. կեցիր ուր որ կաս.
Դուն մի նմանիր այն անմիտ մանկանց,
որ ծերոց քովէն կը փախչին կամաց։

Ի. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս կըլայ անոյշ լեզուն։

89. Անոյշ լեզու մարդուն կենակցումը քաղցր ըլլայ պիտի՝ ամենուն զինքը յարմարցընելով ինչպէս է մարդավարը։ Սակայն մասնաւորապէս պէտք է որ խօսակցութիւնը անոյշ և խելացի ըլլայ։

Ուրաքանչիւր մարդու հետ ինչ կերպ խօսակցութիւն ընելու է՝ աղէկ պիտի դիտէ, մինչև ամենքը զինքը պատուեն, և խօսքը լսելու քաղձան։

Այսպէս զի կենակցութիւնմէջ հարկաւոր է ուրախ խօսիլ և զուարճանալ. իրարու տրտմութիւնը փարա-

տել, և սրտին ուրախութիւնը ուրիշին հաղորդել։

Ասատի անոյշ լեզու մարդուն կը վայլէ՝ որ սովորական կերպով պարզ չի խօսի, այլ գիւտ գտնէ, ու նոր կերպով բան զուրցէ որ անոյշ լինի։

Օ որ որ ինակ թէ որ ըսես թէ՝ գիտուածը մարդուս միտք կը բանայ, հասարակ խօսակցութիւն է. բայց թէ որ ըսես՝ գիտուածը ոչ միայն լոյս է, այլև աչք է՝ որ առանց անոր կոյը և խաւար կը մնայ միտքը. ահա այս կերպս անոյշ կը ձգէ խօսքը։

Եթէ որ բարեկամիդ ըսես թէ՝ ես քեզ այնչափ կը սիրեմ՝ որ կարծեմ թէ երկուքնիս մէկ ենք, հասարակ խօսք է. թէ որ ըսես՝ բարեկամն է միւս ես. երկուքս մէկ հոգի ըլլալով կը կարօտինք մէկ ընկեր մը ունենալ, որ գէթ երկու հոգի ըլլանք։

Ընխրատ ընկերիդ համար կրնաս ըսել թէ՝ այս տղան անանկ երկաթ է որ ոչ տաքութիւն կը կակղնայ, և ոչ ծեծելով կը շտկի։

Ցգէտ կոշտ մարդուն համար կը բանաս ըսել թէ՝ ահա այս է աշխարքիս ծանը բեռն, որ մեծ լեռներէն աւելի ծանրութիւն կուտայ իրեն։

Երկու ընկեր իրարու հանդիպեցան մէկը կոյր, մէկալը կուզ (խամպուռ). կոյրը ասոր ըսաց թէ՝ ինչ պէս առտուանց բեռնաւորած ես. ան ալ պատասխան տըվաւ, իրաւի առտու է եղեր, վ՞ զի դեռ պատուհանդ չես բացեր։

Երկու դասընկեր իրար որ տեսան՝ մէկը մէկալին ըսաց, ահա ծաղկոց պարարտ, ուր ինչ որ կըցանես բարդ (ղադմէր) կըբուանի։ Ան ալ պատասխան տըվաւ թէ վարպետ պարտիզպանը ամէն կոշտ հողը պարարտ կընէ, կըջանամ որ ո՛չ վարպետս պարապ հանեմ, և ո՛չ խօսքդ։

Ի՞նչ հերով խօսելու է։

90. Լաւ նկատելու է անձը, տեղը, և ժամանակը. հասարակօրէն մեծամեծներուն առջին չի վայլեր այս կերպ խօսակցութի՛ ընել, այլ միայն հաւասար ընկերներու մէջ՝ որպէս զի զուարճանալով իրարու միտքը բացվի։

Ամէն տեղ չի վայլեր այսպէս խօսիլ. ուրախական զրոյցքի և հարկիքի մէջ խօսելու է ժամանակով և չափով, որ անոյշ էյնի, առանց ուրիշը

ծաղը ընելու, և ուրիշին վիշտ բերելու, նաև առանց պարծանքի և մեծաբանելու։ Այրեմն Այզոբոսին առակներէն ալ խելացի օրինակներ բերելով խօսքի մէջ անոյշ կէյնի. զորօրինակ, տգէտ մարդու օրինակ բերես աքաղաղն որ հատ մը գարին մարգարիտէն մեծ համարեցաւ. և այլ գեղերիկ առակներով թէ որ խօսքդ զարդարես, անոյշ կէյնի և համարում կունենաս։ (Նէ՛ա էջբ՛. ա։)

Սակայն զգուշանալու է որ անյարմար օրինակ, և անյարմար տեղ չի գործածես այսպիսի եղանակ, ոչ զի անոյշլեզու ըլլալու տեղը՝ անհամ լեզու ջըլլաս, ինչպէս շատ պակասամիտներ կան որ չէն զգուշանար։

Այնոր համար մարդու հետ խօսակցութիւն ջըրած աւելի համարում ունին, երբոր կըսկըսին անհամ կերպով խօսիլ՝ ունեցած համարումն ալ կերթայ։

Այս առաւել մեղդարութիւն արժանի են անոնք որ անոյշ լեզու երևնալու համար ուրիշին պակսութիւնը առաջ կըբերեն ու կըխայթեն, որ է գազանի բնութիւն։

Այ՝անաւանդ պէտք է ամէն մէկ

անձին հետ յարմար կերպով զուարճանալ, մեծին հետ ուրիշ կերպ պէտք է շարժիլ, պզտիկին հետ ուրիշ. գիտունին հետ ուրիշ կերպ, տգէտին հետ ուրիշ. հարուստին հետ ուրիշ կերպ, աղքատին հետ ուրիշ. եկեղեցականին հետ ուրիշ կերպ, աշխարհականին ուրիշ։

Ի՞նչ է ծաղրը։

91. Ծաղրն և խեղկատակութիւն է հակառակ անոյշ լեզուին՝ որ առաջ կուգայ տգիտութէ. վասն զի բարակ խելք կուզէ գիւտ գտնել, և անոյշ խօսակցութիւն ընել, ուստի կըսկըսին ծաղրաբանութիւն ընել։

Մանք ալ այսպիսի կատարելութիւն չունենալնուն համար, ամենևին երեսնին չի խնտար, և ուրախական բան բերաննուն չելլեր. շատն ալ գազանի պէս ընկերութէ կըփախչին, և ուրախ խօսակցութիւը կատեն, վա՜ զի թշնամի են ընկերութիւն։

Սակայն աւելի ցած են ծաղր ընողները, որոնք շատխօսութիւն ոչ միայն զզվելի են ուրիշին վիշտ տալով, այլև անշնորհք և աներես. փո-

խանակ սիրվելու ատելի կըլլան կծու և անամօթ խօսքերով։

Եւ այս ախտս շատ գժուարաւ կըշտկի, վասն զի ծաղը ընօղը կարծէ թէ՝ գիտուութի է ըրածը, չկիտէ թէ՝ ապականած և պակասաւոր է խելքը։

Ուրդ՝ ջանա զգուշանալ ասանկ ինասակար ախտէն, որ մարդուս հետ կաձի ու չի վերջանար. չար սովորութիը անոյշ կուգայ, բայց ետքը կիմացվի գառնութիը. ինչ օգուտ որ մոլութի կը գառնայ։

Պէտք է որ քաղցր ըլլայ վարմունքդ և խօսքդ, ամէն տեղ, և ամէն բանի մէջ յարմար և զգուշաւոր եղիր խելացի խօսքերով, անոյշ բարք և անոյշ լեզու ըլլալով։

Որչափ բարակ մտածես, այնչափ հոգիդ կըբարկընայ և կըլուսաւորի։ Ինանկ որ ամէնքը կըցանկան խօսքդ լսել և քեզ մեծարել։

Կանոնաւոր ըլլայ գնացքդ. Ջանա խելացի և անոյշ մարդիկներուն հետ գտվիլ, անոնց խօսքը լսել, որպէս զի անոնց նմանելով ըլլաս երևելի, և մարդավարուե հետ ստանաս անոյշ խօսք և բարք։

Եւ հեռու կեցիր կոշտ և խեղկատակ մարդիկներէն՝ որ անոնց չի նմանիս, ու անպիտան չըլլաս. ինչպէս երկրորդ մասին խրատներէն աւելի հմուտ կըլլաս (92)։

Պատմութիւն։

Պաղտասար Թագաւորը ասորոց՝ մեծ հարկիքմ՝ ըրաւ, և ամբարտաւանութիւնը ծաղր ընելու համար բերել տըվաւ հոն երուսաղէմայ տաճարին սրբութիւնները, ու սկսան նոյն ամաններով գինի խմել, և անկարգութիւն զուարճանալ։

Այս պատին մէջէն մարդու ձեռք մը դուրս ելաւ, և սկսաւ պատին վրա գրել՝ թէ ՝ծ քու թագաւորութիդ քեզմէ պիտի առնէ, ուրիշին տայ։

Այս զարհուրելի հրաշքն որ տեսան՝ անանկ ամէնքը սարսափեցան որ թագաւորին խելքը գլխէն գնաց. բայց ինչ շահ, շատ չանցաւ այս մարգարէութիւնը կատարվեցաւ, և թագաւորութիւնը փճացաւ։

Ծաղր ընող մարդիկ ծաղր են ուրիշին,
ինչ որ կը ծաղրեն անոր մէջ կէյնին.
Որչափ մեծ խօսքով այլոց վիշտ բերին,
Նոյնչափ վիշտ իրենց պիտի պատահին:
Մի ասանկ անարդ գործոց հետևիր,
որ անարդ չըլլաս այլ մարդ բարեկիր.
Նայէ որ այլոց պակասը գոցես,
որ քու պակասութիւնդ ցաւակից գտնես:

Վախճան

Ա. ՄԱՍԻՆ.

Ամպիտամիտեան երկնային ծնունդք.
Մի յուզէք ոսկի՝ և բազմին անդունդք։

ՀՄՏՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱՆՑ

ՄԱՍՆ Բ.

ԻԱ. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս պէտք է կրթիլ մարդը։

92. Կրթուիլը պէտք է մանկուութէն սկսիլ. զի տղան որչափ աղէկ բան տեսնէ և լաւ խրատներ լսէ, պիտի հետևի, ու սովորուի ընէ իրեն միշտ գործք դնելով։

Ասանկ բարի սովորութիւնները անանկ կը կրթեն մարդն, որ ամէն գործքի մէջ հմտութի և եփունութի մը կըստանայ. և ինչ որ ընէ շնորքով կը կատարէ, և մարդավարուէ գլուխ կը տանի, մինչև ամէնքը կըզմայլին։

Ահա այս մասին մէջ ուշադրուէ

աղէկ պիտի կրթըվիս բարի սովորութեց հետևելով, և բարի ընկերաց հետ տեսնըվելով մինչև որ կատարելութեան հասնիս (151)։

Շատ անգամ կըլլայ, որ երկու եղբայր՝ մէկը ազնուականներուն մէջ կը մեծնայ, մէկալը ռամիկներուն. կը նայիս որ մէկը ազնիւ շնորհալի է կրթուած, մէկալը կոշտ և անկիրթ է. որ ամէն գործքի մէջ անկատարութիւնը յայտնի կընէ։

Ա. Յսպէս տղայ մը թէ որ մանկութեան ատենը կրթըված մարդկանց մէջ չի մեծնայ, ու աղէկ սովորութեց, և բարի խրատներու չի հետևի, հարկաւ կոպիտ անշնորհք կըլլայ։ Իսկ թէ որ ազնուականներու մէջ կրթըվի, հարկաւ մարդավարք և ազնիւ կըլլայ։

Ինչ համար կըսեն փիլիսոփաները թէ մարդս կրթութիւն շատ մեծ կրնայ ըլլալ. և ուրչափ մեծ բան ըլլայ, կրնայ ստանալ ջանքով։

Դղան մարդիկ, որ կրթութեամբ մեծամեծ առաքինութիւններ ստացան. բայց երբոր իրենց սովորութիւնը փոխելով չար կրթութեց հետևեցան, մուլի անպիտան եղան։

Լդղան մարդիկ որ առաջ անկիրթ մարդկանց հետ մեծնալով հասած մը-նացին. բայց երբոր սկսան զիրենք աղէկ բանով կրթել, երևելի մարդիկ եղան։

Սակայն այսպիսի կրթութիւն մանկութիւն ժամանակը դիւրին կըլլայ, թէ որ անսատենը աղէկ սովորուցնելը բնական ըլլան իրեն՝ անկէ ետև անանկ կը մնայ, չի փոխվիր. և քանի մեծնայ՝ կատարեալ կըլլայ։

Ընթենացիք իրենց տղոցը ուսում կը սորվեցընէին, բայց բարի վարք չէին սորվեցնէր. անոր համար անկիրթ ախտաւոր, և անկատար կը մնային.

Երբոր ծնողքը բարի մարդիկ են, և աղէկ կը մեծցընեն զաւակները իրենց բարի օրինակովը, շատ լաւ կը կրթըվի տղան, և դիւրին կըլլայ առաքինի։

Մանկութեան առջի բերանը ամէն կըրթուութիւն դժուար է, բայց քիչ քիչ անանկ հեշտ և բնական կըլլայ, մինչև ուրախութիւն ետևէն կըլլայ տղան, և անաշխատ կը ջանայ աղէկ բան ընելու։

Իսկ թէ որ դիպուածով անկարգ

բան ընէ, մեծապէս կը վշտանայ։ Այս ինչպէս որ լիրբ մարդը չար գործքին վրա չամբշնար. այսպէս կրթըված մարդը աղէկ սովորութենց վրա կուրախանայ պարծելով։

Ինչպէս անկիրթ կը մնայ։

93. Տիմոթէոս երաժիշտը կրկին վարձք կառնէր այն աշկերտէն՝ որ առաջուց քիչմը սորված էր. զի աւելի դժուար է գէշ սորվողին աղէկը սորվեցնել, քան թէ չգիտցողին։

Այսպէս երբ տղան չար սովորութիւն կը մեծնայ, կոպիտ կը մնայ. և շատ դժուար կը շտկի։ Վասն զի մանկութենէ ատենը ծնողքին խրատովը դիւրին կը շտկըվի. և երբ անկիրթ կը մեծնայ, վարպետանելու կը կարօտի, որչափ աւելի մեծնայ՝ այնչափ կը հատընայ առանց կրթութենէ։

Այս առաւել անկիրթ կը մնայ երբոր ախտաւոր և կոպիտ մարդկանց հետ կը կենակցի. վասն զի հիւանդը առողջին մօտ ըլլալով չի կրնար առողջ ըլլալ, բայց առողջը հիւանդին որ մօտենայ և քսվի՝ պլըշկելով կը հիւրընդնայ։

Այսանկ ալ տղան որչափ աւելի

կենակցի ծառաներու հետ՝ այնչափ անոնց կոչտու�թիւը կը գրվի սրտին մէջ, և անկիրթ կը մնայ. և որչափ որ ծերանայ՝ ախտն ալ հետը կը ծերանայ։

Այց աւելի ճշմարտակար այն է որ քիչ մը բան գիտնալով կարծէ թէ կատարեալ եղած է, և ամէն բանի տեղեակ և կիրթ։ Այս ասով զինքը բանի մը տեղ դնելով շատ անշնորհք բաներ կրնէ, և միշտ անանկ անկիրթ կը մնայ։

Ինչոր համար գիտունները կըսեն թէ մարդս բոլոր կենացը մէջ պէտք է զինքը կրթել։ Որչափ սորված և շատ բան տեսած ըլլայ, ըսելու է թէ բան չիյտեմ. և որչափ փորձ ըլլայ, պէտք է մտածելով ընէ ամէն բան։ որպէս զի անկիրթ չերևնայ և ծիծաղելի չըլլայ այլոց։

Ի՞նչպէս մտածելու է։

94. Ինչ արուեստ սորվողները նախ գործիքներուն անունը կը սորվին. տղան ալ կրթուելու համար պէտք է նախ մտածել սորվի, անանկ որ առանց մտածելու բան չը-

նէ. կամ թէ տեսած և լսած բանին վրա քիչ մը մտածական ընէ։

Եւ հարկաւոր է որ օրը անգամ մը իր գործքին վրա ալ մտածելով աղէկն որոշէ, ու իրեն սովորութիւն ընէ. և գէշ գործքէն հեռու կենայ։

Այս կերպով աղէկ կրնայ զինքը կրթել։

Խոհեմը նախ և առաջ իր գործաբանները կը կրթէ. մտածելով թէ ամէն բանի նայելը լաւ չէ, աչքը կը կրթէ որ ամէն տեղ չի նայի։ Մտածելով թէ ամէն բան լսելը աղէկ չէ, անշահ և ծածուկ բան մտիկ չընէր և այլոց գործքին հետաքրքրութիւն չընէր։ Կը մտածէ թէ ամէն բան խօսիլը լաւ չէ, բերանէն փուչ բան չի հանէր, ամէն գիտցածը ուրիշին չի յայտնէր, նաև մեծին առջին լուռ կը կենայ։

Այսպէս ամէն զգայարանքը կրթելէն ետև կը մտածէ, թէ ուրիշին վրա տեսած անկարգ բանը ինքը չընէ։

Երբ կը տեսնէ թէ ընկերը խրատ մտիկ չընէր, անկարգ է, ինք զինք կը կրթէ որ անոր նման չըլլայ. այլ և միշտ մտքէն չի հանէ վարպետին և

ծնօղքին խրատները. և ինչ որ լսէ գործքով կընէ։

Եվ որ դիպուածով զանոնք վշտաց ցուց գիշեր ցորեկ կը մտածէ, որ մէյմ՝ ալ չընէ, և այսպէս աղէկ բանը իրեն սովորութիւն ըլլալով կրթըված, ազնիւ, և պատուաւոր կըլլայ։

Ը.ըդ՝ ահա այս ըլլայ հարկաւոր ուսմունքդ միշտ մտածելով գործես, և աղէկ բաներով քեզ կրթես։ Ջ.ա՞նա՝ որ ամէն բանին աղէկը սորվիս և աղէկն ընես։ Լսած խրատներդ լաւ պահէ, և գործքով կատարէ, որ սովորութիւն ըլլայ։

Ը.մէն օր քիչ մը ատեն մտածական ըրէ վարքիդ և գործքիդ վրա. թէ աղէկ բան գրտար, միւս օրն ալ հետևէ որ կրթըվիս։ Իսկ եթէ անշահ բան մը գործած ըլլաս, չըլլայ թէ հետևիս։ Ը.յլոց պակսութիւնը քեզ շտկէ, և ուրիշին աղէկ վարքովը քեզ կատարեալ ըրէ։

Ուրիշին բանին եռևէն չըլլաս հետաքրքրութիւն. մի՛ յայտնէր այլոց ծածուկ բանը, որ մեծ կոպտութիւն է։

Եվ որ բան կուզես սորվիլ, գիրք կարդա, և խելացի գիտնականներ-

բուն մօտ գտվէ. որպէս զի աղէկ խօսքեր լսելով կրթըվիս։

Խստաւոր և կոշտ մարդիկներէն հեռու փախիր, և մի մտներ անոնց խօսակցուե մէջ։ Աղէկներուն հետ կենաս՝ աղէկ կըլլաս, գէշերուն հետ կենակցիս՝ կը կորսըվիս, կըսէ Դաւիթ մարգարէն։

Պատմութիւն։

Եւրոպիա մէկ մեծատուն մը այլազգ գերի մը գներ էր. կիրակի օրը հետը ժամ կը տանէր։ Գերին տեսաւ որ տէրը շատ բարի կրթուելու ունենալով լսած քարոզը կուգար տունը գործքով կրնէր։

Այս բանիս վրա զարմանալով գերին քարոզիչին աղաչեց որ միւս կիրակին գերի ազատելու վրա քարոզ մը տայ, որ տէրը լսելով զինքն ազատէ։ Քահանան խօսք տվաւ, բայց չի կատարեց, սակայն ատեն մը անցնելէն ետև տըվաւ նոյն քարոզը, տէրն ալ տուն գնացածինպէս ազատեց գերին։

Գնատէնը գերին գնաց քահանային շնորհակալուի ընելէն ետև հար-

ցուց թէ ինչու առջի կերակին չի տրվիր այն քարոզը։ Ինալ պատասխան տրվաւ թէ ես քարոզ որ տամ նախ նոյն բանը գործով կընեմ ետքը կուտամ. որովհետև գերի չէի ազատեր, սպասեցի որ գերի մը ազատեմ ու ետքը տամ քարոզը։

Գերին զարմանալով քրիստոնեայ եղաւ։

Երբոր խրատ մը կը լսես մէկէն,
սրտիդ մէջ գրէ խօսքերը մէկէն.
Պէտք կըլլան քեզի չի կարծած տեղն,
կանոնել կրթել անկարգ բաներէն։
Յաճախ մտածելիր փորձ գիտուններուն,
խորհուրդ և խրատ հնդրէ ըստ տեղւոյն.
Ինչ գործք որ ընես առաջ մտածէ,
ամէն բանի մէջ քեզ աղէկ կրթէ։

ԻԲ. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս անուանի էլլաց մարդ։

95. Անուանի ըլլալու համար ոչ միայն կրթուլթի և գիտուլթի պէտք է. հապա ջանք և սրտոտուլթի ալ հարկաւոր է։ Որպէս զի մանկուէն աշխոյժ սորվելով և աշխատանքի դիմանալով բռնածը փրցընէ, և սկսած

գործքը գլուխ տանի։ Այսան զի սկը-
սիլը բան չէ, հապա բանը կատա-
րելն է։ Շատ մարդ շատ բան կըս-
կըսի, ու անկատար կը թողու։

Ուստի այս կրթութիւնը շատ հար-
կաւոր է մարդուս մեծնալու համար։
Թոյլ և անհամբեր մարդիկ ոչ եր-
բէք աղէկ բան մը կրնան կատարել,
և ոչ անուանի կրնան ըլլալ. ոչ իրենց
օգուտ ունին և ոչ աշխարհի։

Բանի՞ մեծազգի տղաք ծոյլ և
անկիրթ մեծնալով անարգ եղան ու
պիտուական գործք մը չի կրցան ը-
նել։ Ու քանի՞ վար մարդու զաւակ
սիրտ մաշելով և շարունակ ջանա-
լով մեծանուն և փառաւոր եղան։

Ահա այս է պատճառն որ շատ
հարուստներու տղաք թոյլ ըլլալով
անպիտան մնացին, և իրենց ծառա-
նին աշխատանքով տիրոջը տեղն անց-
ցան ու անուանի եղան։

Սակայն թէ որ տղան մանկուէն
աղէկ սովորուեց հետևի ու ծնողաց
աղէկ համբան բռնե ջանալով, ամե-
նէն աւելի անուանի կըլլայ. զի նախ-
նեաց անունը իր քաջասրտուե հետ
միանալով, հարկաւ զօրաւոր և գե-
բազանց մարդ կըլլայ։

Չին ատենը ժողովուրդ մը կար որ իրենց տղոցը առջին օձ կը ձգէին. թէ որ օձէն չի վախնար տղան՝ իբր հարազատ կընդունէին, թէ չէ՝ կը վռընտէին։

Ասան զի մեծ մարդու զաւակը՝ պէտք է մեծութի սիրէ. պէտք է առաքինական կրթուի ամէն բանի տեղեակ և յաջող ըլլայ. փափկուն և ծուլութի չի հետևի, որպէս զի թոյլ և տկար չի մնայ։ Եւ որ ասանկ աշխատասէր և արթուն ըլլայ, հարկաւ ամէն բանի մէջ մեծանուն կըլլայ։

Աբ Ղթանաս մանկութի ատենը Ճարտար ըլլալով, օր մը տղոց հետ խաղ կըխաղար, ու ենոս ձևացած էր. բայց անանկ Ճարպիկ և գեղեցիկ կը վայլեցընէր, որ քաղքին պատրիարգը՝ Աղեքսանդրոս տեսնելով անոր եռանդը, քոյին առաւ ու կրթելով անանկ երևելի հայրապետ եղաւ և մեծ անուն ունեցաւ մինչև հիմա։

Արտոտ մարդը կը ջանայ ամէն բան աղէկ ընել. և աղէկ կատարելու համար ոչ աշխատանքը և ոչ կեանքը կը խնայէ. զի կեանքը փառաւոր բա-

նի համար պահած է, և աղէկ անուն ստանալու համար կաշխատի։ Մեռնելին մեռնիլը հոգը չէ. միայն թէ իրեն և իր զարմին կամ ազգին նախատինք մը չի բերէ, ու անպատիւ չըլլայ։ Որովհետև մարդ եղողին մէկ պզտի նախատինքը որ ինք իրեն ընէ՝ մեռնելէն մեծ է. շատ աղէկ է մեռնիլ քան ինք զինքը կամօք ամօթ ընել։

Ուշիւ էլլայ աշխոյժ։

96. Աշխոյժ մարդուն սիրտը ուրիշ կերպ կըլլայ և բնականաբար արագ և տաք ըլլալով միշտ բան մը կը գտնէ ընելու, և միշտ ներքին եռանդը տաք կը պահէ։

Ինն ատենը կըսէին թէ որուն սիրտն որ մեծ է, քաջասիրտ կըլլայ. սակայն շիտակն որ նայիս՝ պզտի սիրտ ունեցողը աւելի քաջ և ճարտար է, ինչպէս է առիւծին սիրտը. որուն ջերմութիւնն ու ոգիքը պզտի տեղ փակված ըլլալով աւելի աշխոյժ և քաջ է։

Նարպիկ տղուն սիրտը տաք և ոգեւից ըլլալով, երբոր օգտակար բան մը կը տեսնէ, մէկէն կը վառվի որ ը-

նէ, և անանկ կատարէ որ քաջ անանի ըլլայ։

Իսկ որուն սիրտն է պաղ և արիւնը թոյլ, ամենևին հոգ չունի աղէկ բան ընելու. միշտ հանգիստ կը փընտրռէ. և այնպէս լըխկած ծոյլ և անանուն կը մնայ։

Այս քաջասրտութիւն եղաւ պատճառ որ տկար աղջիկները իրենց արիւնը թափեցին հաւատքի համար կամ իրենց պատուոյն համար. քիչ մը ատեն քաջութիւն տանջանաց դիմանալով յաւիտենական անուն ստացան։ Որչափ աւելի զօրացան, այնչափ աւելի փառաւորեցան։

Անպամինոնդ զօրապետը պատերազմի մէջ վիրաւորեցաւ. մեռնելու ատենը երբոր լսեց թէ իր զօրքը յաղթեց թշնամիներուն, ուրախանալով ըսաց թէ այսօր աշխարքք եկայ, որ յաղթող կը մեռնիմ։ Ասան զի իր քաջասրտութիւը զինքն անմահ ըրաւ, և փառաւոր մահը հազար տարուան կեանքի հետ չուզեց փոխել։

Հա ասանկ աշխոյժ մարդը ուրիշ բան չի նայիր. միայն թէ աղէկ բանի համար կաշխատի նախնեացը վարքին յարմարելով։ Անանկ մարդուն առ-

ջին մեծագործուիը և գովելի վարքը ամէն բանէն մեծ և յարգի է։

Բանկ պէտք է աշխատիլ ազգին և հայրենեացը համար։ Զգաստիրուիթէ համար կեանքը խնայելու չէ։ Իր ազգը ուրիշին ջով արդեամբք մեծցընելով, և ազգին օգուտը նայելով շատ պանծալի կըլլայ թէ որ սրտանց աշխատի։

Իսկ թէ որ միայն իր անձին և հանգստուէ համար աշխատի, իրեն համար աշխարքք եկած կըլլայ և անձին համար աշխոյժ եղած կըլլայ. և իրեն հետ անունն ալ կանցնի կը մարի։

Այսպէս էին ինքնասէր և թոյլ մարդիկ, որ կրնային ազգին օգուտ ընել, և յիշատակ մը ձգել իրենց ազգասիրուիթիը, չըրին ու անձնասիրուիթը մեղադրելի եղան, յիտակը նայիսնէ անձնասէր ալ չեղան։

Ա երջապէս ով որ կեանքը իր ազգին և հայրենեացը համար կուտայ, երկայնակեաց կըսվի, և ով որ ազգին քաջուիթ բարիք մը շահ մը չէ ըրած, փուճ տեղը աշխարքք եկած կըսվի։

Ինչ՞ՆԿԸ ԽԱՆԳԱՐԷ։

97. Ծուլութիւն ու յանդգնութիւը կը խանգարեն այս առաքինութիւը. զի ծուլութիւն թմրի կը մնայ, ձեռքը չուզէր շարժել։

Իսկ յանդգնութիւն չափազանց կերպով, և անխոհեմ գործքով աղէկը դէշ կընէ, և առանց մտածելու գործելով ինչաս կը բերէ։ Մինչ զի մեղադրելի գործքով կը վտանգի. վասն զի առաջ կընէ ետքը կը մտածէ։

Իսկ ծոյլը ամէն բան ձախորդ կողմը մտածելով կը վախնայ պատուաւոր գործք ընելու։ Ամէն ամօթ յանձն կառնու, միայն թէ հանգիստ ըլլայ, չաշխատի։ Սակայն չիյտէ թէ առանց աշխատանաց կեանք ըլլար. անոր համար իր կեանքը անօգուտ կանցընէ հեղգութիւն։

Այս ախտը շատ ինասակար է ընկերութեան մէջ, որ ամենեւին օգտակար բան ընել չի տար. որպէս զի ետքի եկողներուն ալ օրինակ ըլլայ, և ասով մարդը ոչինչ և անպիտան կը մնայ։

Իսկ դուն փիլիսոփային խօսքը միտքդ բերը, թէ մարդս մեծ է, և

մեծ բաներու համար եղած է։ Զա-
նա՛ որ պարապ չանցընես կեանքդ։

Մեծանուն կըլլաս թէ որ ազգիդ
և ընկերիդ աղէկութի՛ն ընես։ Մեծ
փառք կունենաս, թէ որ նախնեացդ
բարի վարքին նմանիս. մեծ շնորհք
կունենաս, թէ որ բարեգործութե՛ն
մէջ կեանքդ մաշես։

Որինակ առ ազգասէրներէն. հե-
տևէ՛ նախնեացդ, որ այլոց աղէկուի՛
ընելով անուանի եղան, և բարեգոր-
ծութի՛ւն իրենց անունը փառաւորե-
ցին և անմահ մնացին։

Ծուլութե՛ ախտը չըլլայ թէ քեզ
մօտենայ որ անպիտան չըլլաս։ Լաւ
յանդգնութիւն չընես, որ անխոհե-
մութի՛ւն գէշ անուն չըստանաս։ Մեծ
քաջասիրտ արթուն և աշխատասէր
եղիր մեծ և բարի գործքերու մէջ.
որպէս զի փառաւոր անունդ միշտ
պայծառ մնայ։

Պոմոնէ։

Մուտիոս ազնուական հռոմայե-
ցին այնչափ քաջ և աշխոյժ էր, որ
մանկութէն սովորութի՛ւն բրած էր ա-
մէն դժուար բաներու։

Երբոր թշնամին եկաւ պաշարեց

հռոմ, այս քաջին սիրտը չդիմացաւ ժողվեց իրեն պէս 300 կտրիճ, և մոքերնին դրին որ աղգին համար մեռնին։

Այսպէս մուտիոս գնաց ծածուկ թշնամիին բանակը մտաւ, ու յանկարծ վազեց թագաւորին դպրապետին վրա, զարկաւ մեռցուց, կարծելով թէ թագաւորն է։ Իսկ թագաւորը մէկէն բռնել տվաւ, ու հրամայեց որ կրակ վառեն, ողջ ողջ երեն զմուտիոս։ Նատենը մուտիոս ինքիրմէն ձեռքը կրակը խօթեց չարաչար երեց, ըսելով թէ ես եկայ թագաւորը մեռցընելու, բայց ձեռքս սխալեցաւ։ Նոր համար պատժեցի ձեռքս։

Սալ աղէկ գիտնաս ըսաց որ մենք 300 հոգի ենք. յուսամ թէ մէկը քեզ կը սատկեցնէ։ Երբոր թագաւորը լսեց՝ վախուն մէկէն ազատեց ու հաշտութի ըրաւ։

Այս օրինակիս յանդգնութէն աւելի վախնալու է, քան թէ գործքին զարմանալու։

Որչափ պէտք է քեզ մանուկ խոհական,
բարի գործքերով ըլլաս վեհական.
Դիտուն ոլորմած արթուն բազմաջան,
օգնիչ ընկերաց նախանեացդ նման։

Թէ աղէկ բաներ վրադ չերևնան,
օտար խորթ կըլլաս ոչ ուղղոց նման.
Զանա աղգիդ մէջ կառարեալ ըլլաս,
աղգասէր ազնիւ հանուրց պիտուական։

ԻԳ. ՀԱՄԱՐ

Ինչ՞վ կըլլայ մարդ փառաւոր։

98. Հարուստ և մեծատուն ըլլալով մարդ փառաւոր չի կրնար ըլլալ։ Հապա նաև պէտք է բարի սիրտ ունենալ՝ այլոց աղէկութիւն ընելու, և առատ սրտով օգնելու կարօտներուն.

Որը զի՝ մարդն ընկերական ըլլալով պէտք է իրարու հաղորդել ոչ միայն խօսքն ու խելքը, այլև բաղդին հարստութիւնը։ Որ՞նանկ որ ինչպէս ռամիկը գիտունին խելքովը կը լուսաւորի, ասանկ ալ աղքատը մեծատանց պարգևով և ողորմութիւն պիտի երջանկանայ, ու խեղճութէ աղատելով ընկերին բաղդը վայելէ։

Որ՞հա այս առաքինութիւն է որ փառաւոր կրնէ մարդը և մեծանուն։ Որ՞սով կը չափաւորէ զինքն որ ոչ շռայլութիւն ունեցածը մսխէ հատցընէ, և

ոչ ագահութիւն բանտը դնէ ոսկին իր սրտին հետ միատեղ։

Ոսկից կըլլայ ագահուն և անիրաւութիւն, որ արծաթասիրութիւն համար ընկերը կը զրկէ. շատ անգամ իր անձն ալ զրկելով անձնասպան կըլլայ, և ջարաչար կը կորսըվի։

Ինչո՞ր համար Պօղոս առաքեալը ասանկ մարդիկ կռապաշտ անուանեց. վասն զի ոսկին կուռքի պէս կը պաշտեն։ Դայց չիյտեն թէ այն իրենց տրված է որ առատասրտութիւն ընկերին օգնեն, և իրենց կեանքն ու անունը փառաւորեն ողորմածութիւն։

Այս պատճառաւ ստեղծողը ոչ ամէն մարդ մեծատուն ըրաւ, և ոչ աղքատ. այլ այնպէս կարգ դրաւ որ իրարու հաղորդեն իրենց ունեցածը։ Հարուստը ստրկով և աղքատը ուժով կամ ծառայութեամբ իրարու հասնին։

Փիլիսոփային հարցուցին թէ ոսկին ինչո՞ւ դեղին է։ Պատասխան տրվաւ թէ ետևէ ընկնող շատ ըլլալուն համար վախէն դեղնած է։ Ոսկին արուեստաւորին ձեռքը միշտ տանջանքի մէջ է. իսկ ագահին ձեռքըն է անպիտան։ Որ իայն առատա-

սրբոյն ձեռքն է ազնիւ և պիտանի. որով կը հանի կարօտին և կը փառաւորի թէ անունը և թէ հոգին. զի այս վախճանիս համար եղած է, չէ թէ մոլուութիւն համար։

Ալէքսանդր թագաւորը մանկութիւն ատենը շատ ելլալով շատ բան պարգևեց իր զօրավարին։ Իսկ զօրավարը չուզեց առնել, ըսելով թէ այսչափ բանն որ ինձի կուտաս, քեզի ինչ պահեցիր։ Ընալ պատասխան տըվաւ թէ յոյսը պահեցի։

Որովհետև մանկութիւնը միշտ կը յուսայ թէ աւելի պիտի մեծնայ, անոր համար մանուկը կուզէ աւելի առատասիրտ ելլալ. ծերն ալ կը սիրէ ագահ ելլալ վախկոտ ելլալուն համար։

Բայց առաքինի մարդը ամէն բան չափով ընելուն համար՝ վայլած տեղը և ըստ արժանւոյն պարգևն ու ողորմութիւնը կընէ առատ սրտով, և առատաձեռնութիւն։

Ինչպէս է առատաձեռն։

99. Ինչպէս որ ՚ուծ ամենաբարին առատ սրտով առատ ստեղծեց ամէն բան մեզի համար, որպէս զի ամէն

բանէն առատ վայելենք։ Այսպէս
ալ առատասիրտը ամէն բանին մէջ
իր փառաւոր առատութիւնը կերևցնէ։
Ցուրքն է առատ, հագուստն է փա-
ռահեղ, դէմքն է ազնիւ, գնացքն
է մարդավարը, գործքն է շնորհալի
համարձակ, և առատ է տուրքով և
խօսքով։ Ալ այնչափ տուրքին և
գործքին կը նայվի, որչափ սրտին,
որով կուտայ։

Կիմն երևելի զօրապետը շատ
փառաւոր և անուանի եղաւ առա-
տասրտութիւնը համար, որ իր երկիր-
ներուն չորս դին բանալ տվաւ որ ա-
մէն մարդ անարգել մտնէ ուզածն
առնէ։ Ահա այսպէս կըլլայ մարդ
փառաւոր։

Ինոր համար շռայլ մարդուն զա-
ւակը հասարակօրէն ագահ կըլլայ.
և ագահին զաւակը՝ շռայլ։ Բայց ա-
ռատասրտին զաւակը պէտք է ըլլալ
առատ. որուն վախճանն է բարի ը-
նել այլոց. իսկ շռայլին վախճանն է
ունայնասիրութիւն. ագահինն է արբ-
ծաթասիրութիւն, որ է գէշ ախտ, և
կըսվի երկրորդ կռապաշտութիւն։

Ընդ թէ որ նոյն ոսկին ագահու

որ պարտատէրին տրվի, կըլլայ արդարուն. թէ որ պարգև տրվի՝ կըլլայ ողորմուն. և թէ հոգևոր բանի համար տրվի՝ կըլլայ ՇՆՈՐՀՈՒՆ։ Սակայն առատասիրտ մարդը պէտք չէ որ փառք ստանալու համար տայ. հապա միայն բարի ընելու համար վ՚ՇՆՈՐՀ. որով կըլլայ փառաւոր. և որչափ ինքը փախչի՝ փառքն իրեն ետևէն կերթայ։

Ով որ փառասիրութեան համար պարգև կուտայ՝ իր անձին համար տված կըլլայ։ Այս պատճառաւ առատասիրտը միշտ ծածուկ կերպով կուտայ իր տուրքը, ինչպէս՝ որ աւետարանը կը պատուիրէ։

Արկեսիղայոս առատասիրտը գընաց իր բարեկամ աղքատը տեսնելու։ Այերջը հանեց գիրք մը տվաւ իրեն ընելով թէ ուրիշ բան մը չունիմ որ տամ. բայց այն միջոցին կամացմը բարձին տակն ոսկի դրաւ։

Սակայն հարկ չէ թէ առատասիրտը մէկ մարդումը պարգևէ բոլոր ոսկին, և մէկ աղքատի մը շատ բան տայ։ Այլ պէտք չէ վատանուն և մոլի մարդուն պարգև տայ, այլ իբր ողորմութիւն։

Իբր զի՝ ոսկին շատ վնասակար է
ախտաւորին, և օգտակար առաքինի
մարդուն. որ պիտանի տեղը կը գոր-
ծածէ։ Այնմանապէս պէտք չէ տալ
հարուստին. որ է ծովը ձգել ոսկին։
Փիլիսոփայ մը բոլոր գանձը ծովը
թափեցիբր թէ ծովը պիտի հարուստ-
ցընէր. ա՛լ աղէկ կընէր թէ որ կա-
րօտներուն տար, և ողորմուի ընէր։

Աւելի հարկաւոր է առատասիրտ
ըլլալ աղքին համար, նաև ուսումնա-
կան բաներու և գիտուններու հա-
մար. վասն զի շատ մեծ ամօթ է ա-
ռատասիրտ հարուստին, որ աղքին
գիտունները մուրացկան կըլլան, և
կարօտ ողորմութիւն։

Որովհետև ուսումնականն է աղ-
նըւական, պէտք է որ աղնուական
ապրի անկարօտ. ինչպէս կըսեն ի-
մաստունները։

Ինչպէս պարգևելու է։

100. Փառաւոր մարդը պարգև
տալու ատենը արագ և ուրախ կու-
տայ. իբր թէ պահ կուտայ կարօ-
տին, և անոր փոխարէն պատիւ և
գովեստ կընդունի։

Կիւրոս թագաւորին հարցուցին

թէ ուր կը պահեմ գանձդ։ Նաև իր իշխանները ցցուց թէ ասոնք են իմ գանձապետս, որոնց երախտիք ըրած էր։

Այսն զի առատասիրտը վարձաՀատոյց է առաքինի մարդկանց, և խնամակալ գիտնոց և իշխանաց, նաև Հայր աղքատաց։ Շռայլն է վատնիչ գանձուց, յափշտակող, և անարգ։ Իսկ ագահն է ընդունարան մոլուեց և Հնասակարամենուն, անիրաւ, և թշուառ։

Շռայլը ունեցածը վատնելով փուչ տեղը, աղքատ կը մեռնի։ Ագահը աղքատ կապրի, որ Հարուստ մեռնի։ Իսկ առատասիրտը չափով բարի կընէ, որ իր գանձը չի կորսըվի։

Ինչ որ առատասիրտը օգտակար վախճանով աւելի մեծագործ բան ընէ, կըլլայ աւելի մեծանուն և փառաւոր։ Ինչպէս Հին թագաւորները մեծամեծ շէնքեր կը շինէին, որ իրենց անունը անմահ մնայ, և ետքի եկողներուն օրինակ ըլլայ։

Այս մտքով շինեցին եօթն սքանչելիքը։ Ինչպէս էր Ոլիմպոսի կռատուն շատ մեծագործ։ Բաբելոնի պարիսպը խիստ բարձր։ Եգիպտոսի

բուրգերը։ Հռոդոսին արձանն որ նաւահանգստին բերանը դրած էր. որուն երկու ոտքին տակէն նաւ կանցնէր, և այլն. (ՃԷՄ. 546։) Ուրդ՝ այս մեծ գործքերով փառաւոր մարդիկ եկեղեցիներ, դպրատուններ, և վանքեր շինեցին, ու իրենց ազգն ալ փառաւորեցին, և իրենց անունը անմահ ըրին։

Ահա ասանկներուն նայելով Ջանամ դուն ալ ըստ կարի առատասիրտ և բարեգործ ըլլաս մանկուէդ. Ջանամ ընկերիդ աղէկուն ընես առատ սրտով և կարօտին ողորմելով։

Որչափ բաղդդ մեծնայ, այնչափ աւելի առատաձեռն եղիր. մինչև մեծագործութիւն ազգիդ օգտակար բաներ ընես, և դպրոցներ շինես, գրքեր տպել տաս, և այլն։

Սով կը փառաւորի անունդ, և պարծանք կըլլաս ազգիդ և տոհմիդ։ Ըլլայ թէ շռայլութիւն բաղդդ կորսընցնես, և ագահութիւն վատանուն մնաս։

Հապա չափ դիր և պարկեշտութիւն պարգևէ. որպէս զի հոգիդ ալ փառաւորի մարմնդ ալ։ Որչափ աւելի չափաւոր քեզ կրթես, այնչափ աւե-

լի ըրած գործքդ լաւ և փառաւոր կըլլայ։

Պատմութիւն։

Ընդհանուր մարդ մը մանկութենէն սկսը ձգելով կը ջանար ոսկին շատցընելու։ Ոչ կուտէր և ոչ կը հագնէր, խեղճ ապրելով գիշեր ցորեկ կը տանջըվէր։

Եւ այսպէս շատ գանձի տէր եղաւ, ու ամենևին օգտակար բան մը չըրաւ։ Որչափ որ իրեն կըսէին թէ փառաւոր բան մը չինէ, և առատաձիրտ եղիր ազգիդ, կըսէր թէ կը մտածեմ անանկ բան ընելու որ մարդ չիմանայ։

Ընդ այս ազահը ծածուկ մնտուկին մէջ կը լեցընէ ոսկին կը տանի ժամը գերեզմանի մը տակ կը պահէ՝ ապահով ըլլալու համար։ գերեզմանին վրան ալ փորել կուտայ, թէ Հոս ընդվէյտ։

Պարպետ գողին մէկը կռահելով կերթայ կըբանայ, ոսկին կը վերցընէ, ու գերեզմանին վրա կը գրէ թէ՝ Հոս չէ, յարբեաս։

Թէ առատ սրտով հատնիս ուրիշին,
բարեսիրտ ըլլաս՝ մեծին և փոքրին.
Շուտով կը գտնես բարիքն երկնային,
պայծառ փայլելով ամենուն առջին։
Ինչպէս գուն կուզես ուրիշն ընէ քեզ,
գուն ալ ուրիշին զայն ըրէ նոյնպէս.
Թէ կուզես չըլլաս բանի մը կարօտ,
հատիր կարօտին կըլլաս անկարօտ։

ԻԴ. ՀԱՄԱՐ

Ինչպէս հելլայ արդարութիւն։

101. Արդարութիւն կըլլայ թէ որ բնական օրինաց հետևելով ամէնքան արդար ընէ, և ամենուն իրաւունքը ճիշդ հատուցանէ։ Իսկ անիրաւութիւն կըլլայ երբոր բնական օրինաց դէմ ընելով վնարում չընէր։

Ուստի բնական օրէնքն է կանոն արդարութիւն, որ խիղճմտանքին լուսովը մէկէն յայտնի կըլլայ թէ որ ողջ է խիղճը։ Ասոնք չէ՝ անիրաւ և անօրէն կըլլայ մարդ առանց հատուցումն ընելու (47)։

Սակայն ինչպէս որ բարեխառնութիւնը կը պարտաւորէ մոլի չըլլալ.

այսպէս արդարուն ալ կը պարտաւորէ յափշտակուն չընել, ամենուն բանը տիրոջը տալ, անպարտը չի դատապարտել, սուտ երդում չընել, օտարին բանը չի գողնալ, և ուրիշը չի զրպարտել անիրաւուք։ Այս առաւել իր ազգին և հայրենեացը դէմ բան մը չընել։

Այս սոնք են արդարութեան կանոնները որ կը փակին բնական և գրաւոր օրէնքին մէջ. որով մարդ կը լայ արդար։

Այս որովհետև ամէն մարդուն արժանի է պատուհասի, և ամէն անիրաւուն պէտք է որ դատապարտի։ Ուստի պատիժն ու դատապարտուիը արդարուք կը լան. և արդարուիը վրէժխնդիր ը ելալով կը պահանջէ որ չարուիը պատուհասի, և բարուիը պսակվի, առաքինին փառաւորի վարձք առնելով, և մարին պատժվի պարտաւորելով։

Ուրեմն պարտական է ամէն մարդ արդարութեան օրէնքը պահելու. բարերար մարդուն երախտիքը ճանչնալով։

Պէտք է նաև գիտնոց յարգուիը ճանչնալ և պատուել. պէտք է ազ-

գասէրը գովել, և առաքինին փառաւորել։

Սակայն ամէն մարդ իր ջատիովը պիտի ընէ միշտ անձը տեղը և ժամանակը նկատելով։ Օրօրինակ աղաւնին տեսաւ որ մրջունը տերևին վրա ջրին երեսը կը շարժէր, կտուցքովը վերուց դուրս ձգեց։

Երբոր աղաւնին ծառին վրա էր, որսորդը պիտի զարնէր զինքը, այս բանն որ տեսաւ մրջունը՝ որսորդին ոտքը խածաւ և ատով փախաւ ազատեցաւ աղաւնին։ Հա՛ այսպէս արդարութի՛ ընելով իր ազատիչը ազատեց փոխադարձ։

Այսպէս թէ որ մէկը մէկին զբրկանք ըրաւ կամ անուանը, կամ ստրկին, և կամ կեանքին, պէտք է հատուցումն ընել. եթէ հոս չըլլայ, հանդերձեալը պէտք է որ ըլլայ. որպէս զի արդարութիը կատարվի։

Ինչպէս կըլլայ արդար։

102. Ով որ չարէն կը խոտորի ու բարի կընէ, արդար կըսվի։ Սակայն արդար ըլլալու համար պէտք է բարի կամք ունենալ ամենուն հատուցումն

ընելու, և ամէն բան արդար չափի տակ դնելու։

Ինանկ որ արդար մարդը միշտ շտկուելի կը փնտրուէ, և շիտակ բանին վրա կուրախանայ։ Իսկ անիրաւ մարդը միշտ կը ջանայ որ անարդար և ծուռ բան ընէ, ու շիտակ դատաստան չի տեսնէ։

Արդար մարդը օրէնքն իրեն կանոն ըրած է, ու ամէն բան անով արդար կորոշէ. և ինչպէս որ պէտք է շիտակ դատաստան կընէ։ Իսկ անիրաւը իր կամքն իրեն օրէնք ընելով առանց արդարուէ միշտ կը մոլորի։

Արդարը կատէ մոլութիւը ուղիղ կարգի դէմ ըլլալուն համար։ Իսկ անարդարը կանարգէ առաքինութիւն ու բարի գործքը։

Արդարը ամէն մարդուն չափը կշռելով հատուցում կընէ։ Իսկ անարդարը միայն իր շահն ու հանգըստութիւը կը նայի։

Անիրաւը բարիներուն երեսը նայիլ չուզէր, անխելքի կամ միամիտի տեղ դնելով չի հաւնիր. և չուզէր անոնց բարիքը ճանչնալ։ Իսկ մոլի մարդկանց վարձք կուտայ, կըգովէ և աղէկութի կընէ։

Արդարը ուրիշին քանին չի դպչիր, և կը վախնայ որ մէկին վնաս մը չիբերէ. իսկ անիրաւը միշտ կը ջանայ խաբել, գողնալ, և բիւր նենգութիւն ընել սուտ խօսքերով, և կեղծաւորութեամբ։

Հուսկ յետոյ արդարը կը ջանայ, որ ամենուն իր արժանն ընէ. մեծամեծները կը յարգէ. պզտիկներուն հետ քաղցրութիւն կը վարվի. ընկերներուն հետ հաւատարիմ կը մնայ մեծաւորին և իշխանին հնազանդութիւն կընէ. վերջապէս երկիւղածութիւն այ կը ծառայէ, և ամենուն բարի օրինակ կըլլայ.

Ինչպէս է անիրաւը։

103. Անիրաւ մարդը ոչ ամենային օրէնքը կը նայի, և ոչ քաղաքական և մարդկային օրէնքը, նաև ոչ աստուածային և ոչ բնական օրէնքը գիտէ։

Իր կամքն ու շահը իրեն օրէնք ընելով առանց խղճի ձեռքէն եկած անիրաւութիւնը կընէ՝ ոչ անձն գիտելով, ոչ տեղը և ոչ ժամանակը։ Այսպէս միտքն ու սիրտը շիտակ չըլլալով ամէն իրաւունք կը շփոթէ, և ամէն

բանի մէջ ծուռ դատաստան կընէ։

Ը. Դ՝ այսպէս ճանչնալով պէտք է փախչիլ անիրաւութէն, որ ապականիչ է խիղճմտանքի և բանի. մանաւանդ թէ մարդկութէ դէմ է. մինչև քիչ քիչ չի կարծած սահման կը հասցընէ մարդը.

Ը. Մէն մարդու սրտին մէջ անանկ պէտք է գրված ըլլալ բնական օրէնքն, որ ամէնքը կարդան, և ամենուն հետ արդար վարվին։

Ը. Մէն բանի մէջ մարդս միտքը դնելու է թէ ինչ գործք որ գործէ, արդար հատուցում պիտի գտնէ հարկաւ։

Ն. Թէ արդարութիւն բարի գործէ բարի հատուցում կըլլայ, թէ անիրաւութի ընէ, պատուհաս կըգտնէ։

Ուրեմն ջանա՛ որ անիրաւ սովորութի մը չունենաս. և չար գործք չընես, որ շուտով կապականէ մարդու հոգին, և մարդկութէ կը հանէ։

Ը. Յլոց չար օրինակին հետևելով արդարութէ դէմ բան մընէր. որպէս զի չի խաւարի խիղճմտանքդ, ու անասնոց կարգը չի մտնես։

Դաւիթ մարգարէին խրատը միտքդ չի հանես. փախիր չարէն, ու

բարի ըրէ. որ արդար և ճշմարտաշունչ ըլլաս։

Արդարութէ մի զատվիր որ արդար անուն ստանաս գործքով և արդարութիւն փառաւորիս. մինչև ստեղծողէդ հատուցումն առնես յաւիտենական երջանկութիւն։

Պատմութէ։

Փիլիպպոս Թագաւորը օր մը գինով ըլլալով անիրաւ դատաստան մը տեսաւ։ Ինատենը զրկըվողը աղաղակեց, թէ արդարութիւն կուզեմ. թէ չէ՝ հիմա Թագաւորին կելլեմ։

Փիլիպպոս պատասխանեց թէ Թագաւորը ես եմ, դուն որո՞ւն պիտի ելլես. ես չի կտրեցի՞ քու դատաստանդ։ Ինալ ըսաց թէ Թմրած փիլիպպոսէն արդար փիլիպպոսին պիտի գանգատիմ։

Այս խելացի պատասխանով արթընցաւ Թագաւորն ու արդար դատաստան տեսաւ, և արդարութիւն հատուցումն ըրաւ զրկըվողին։

Թէ մարիկ ընես ինձ որ քեզ կըսեմ։
Ջըլլայ թէ ընես՝ ուրիշի մը զէն.
Չի ամէն բանի որչափ փոքր ըլլայ։
Հատուցում պիտի ըլլայ արարչէն։

Թէ ցանկաս պատիւ ունել ուրիշէն,
պատուէ զուրիշն որ ամբիշնայ քեզմէն,
Թէ կուզես ըլլալ արգարոց նման,
Հատուցումն ըրէ ինչպէս է արժան։

ԻԵ. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս կըլլայ մարդս հոգեւոր։

104. Հոգեւոր և հոգեսէր ըլլալու համար պէտք է մտածել, Թէ հոգին անմահ ըլլալով ՅԻՍ նման է. և ՅԻՍ որչափ կայ, հոգին ալ առանց մեռնելու կը մնայ. անոր համար ամէն բանէն մեծ և յարգի է։

Հոգիին մեծութիւնը անանկ աղէկ պէտք է Ճանչնալ, որ գիշեր ցորեկ հարկ է մտածել հոգեւոր մարդը, Թէ հոգին ինչ վիճակի մէջ է, հիւանդ՝ Թէ առողջ. հարուստ՝ Թէ աղքատ։

Հիւանդ կըլլայ հոգին երբոր ախտաւոր բաներով կը վիրաւորի. և չար սովորութիւն կապականի։ Առողջ կըլլայ՝ երբոր առաքինութիւն կը զօրանայ և բարի գործքերով կը փառաւորի։

Հարուստ է հոգին երբ արդարութիւնքը և իմաստութիւնքը զարդարված է. աղքատ է երբոր առանց այս շնորհաց, գիտութիւնէ և քաղաքավարութենէ մնացած է ախտաւոր, տգէտ, ողորմելի։

Իսկ անասունն է հոգին այս նման, երբոր առաքինի գործքերով շնորհալի եղած և զարդարված է։ Փառաւորեալ է հոգին երբ ուծպաշտութիւնքը այս լուսով և իմաստութիւնքը լուսաւորած է։

Մոռէ չէ՞ ինչ օգուտ անմահ հոգի ունենալ երբոր վիրաւորած հիւանդ է. երբ տգէտ ողորմելի է նման անբան հոգիի։ Ինչ շահ՞ մարդ ըլլալ, և այնչափ մեծութիւնէ հասնիլ, երբոր մարդու վարքը և մարդու վայլած մեծութիւն չունի։

Օ որօրինակ դնենք թէ մեծ մարդու մը զաւակ անհնազանդութիւնքը ծնողացը՝ փառաւոր տնէն դուրս ընկած ըլլայ, ու ողորմելի վիճակի մէջ բեռնակրութիւն ընէ։

Սակայն թէ որ տեսնես թէ բեռտանելու ատենը շարունակ կը պարծի իր հօրը մեծութիւնը վրա, ինչ կըսես այս անխելքին, որ ամբնալու տեղը կը պարծի։

Շատ աղէկ էր որ աղքատ մարդու զաւակ ըլլար. վասն զի ինչ շատ մեծ մարդու զաւակ ըլլալ, երբոր ինքը աղքատ ողորմելի է. ինչ օգուտ որ ինքը մարդ չէ, և այն մեծութիւնը չի վայելէր։

Այսպէս ինչ օգուտ՝ մարդ ըլլալ երբ անասունի նման կապրի. ինչ օգուտ՝ մեծ ըլլալ հոգւով, երբոր հոգին մեծութիւն չունի։ Մեծ ամօթ է պարծիլ, երբ տգէտ կոշտ և անպիտան է։

Ուստի հոգևոր մարդը երբոր կը մոռանէ զասոնք, հարկաւ կը սկսի ամբընալ, չէ թէ պարծիլ։ Դու որչափ աւելի ՅԾային մեծութիւնը մոռանէ, և հոգիին ազնուութիւնը Ճանչնայ, այնչափ աւելի պէտք է որ խոնարհի և վշտանայ, մինչև որ ժառանգէ հոգիին մեծութիւնը, և կատարեալ հոգևոր ըլլայ ՅԾպաշտուբ։

Ուղղէս ընելու է։

105. Հին ատենը թագաւորները իրենց սկիզբը կուզէին գիտնալ. որպէս զի իրենց նախնեացը նման փառաւոր գործքեր ընեն ու մեծանուն ըլլան։

Եւ առաւել հոգևոր մարդը պարտական է գիտնալ իր մեծութիւնը։ Եւ մտածել թէ ինչո՞վ կրնայ իր մեծութիւնը պահել և շատցընել. որպէս զի ստեղծողին նման և ընդունելի ընէ զինքը։

Երդ՝ այս բաները գիւրին կրնայ ընել, թէ որ մանկուէ ատենէն ջանայ աղէկին հետևիլ, ու գէշէն փախչիլ։ Արմինին մտիկ չընել, ու հոգիին կամքը կատարել խոհեմութիւն։ Որովհետև հոգին միշտ բարիին կը ցանկայ և ճշմարտութի՞ն կը խնդրէ. իսկ մարմինը մարմնաւոր բաներուն և անկարգութե՞ն կը հետևի։

Ուստի ով որ կուզէ իր հոգիին մեծուիը ժառանգել, պէտք է որ հոգիին փափաքը կատարէ միշտ բարիին հետևելով և առաքինութեան ճամբան երթալով։

Եւ ով որ կը սիրէ հոգիին աղքատուիը՝ և մարմինին կը հետևի, հարկաւ կըլլայ տգէտ, խեղճ, և ախտաւոր, նաև ամենուն ատելի։

Ճաշունչը յայտնի կըսէ, թէ մարմինը միշտ կը ցանկայ հակառակ հոգիին։ Այ՝ անոր որ հոգին կըձգէ ու մարմինին ցանկութիը կըհետևի։

Որով կըլլայ անիրաւ, տըգէտ անմարդավար, նաև մոլի և չարասէր։

Երանի՜ հոգևոր մարդուն, որ աղէկ բանը իրեն սովորուի ըրած է. և միշտ կատարելութեամբ ետևէն ըլլալով կը զարդարէ հոգին։

Ինչափ կը զօրանայ հոգին ամենապաշտու

Ուրեմն այն մարմնասէր մարդիկ, որ իրենց կրթութիւն չեն ըրած, ու չեն մտածեր հոգուն մեծութիւնը, որպէս զի հոգևոր բաներով զարդարեն, այլ միայն անբանի հոգի կարծելով կապականեն, արժանի կըլլան պատուհասի, որ ջրհեղեղի մարդկանց նման չարաչար կորսըվին։

Ընդ՝ աղէկ Հանցիր հոգուդ մեծութիւը, որ անմահ ըլլալուն համար պատկեր է այ։ Ի՛նչ պարծիր միայն, թէ մարդ եմ բանական խելքի մըտքի տեր։ Այլ տես թէ հոգիդ ունի նոյն մեծութիւը. կամ թէ մեծութիւդ մնացեր է, թէ չքաւոր ողորմելի եղած։

Այլ թէ արդեօք բարի գործքերով և իմաստութիւն Հոխացուցիր հոգիդ, թէ տգէտ և մոլի, աղքատ թշուառ թողուցիր։ Ի՛նչ կարծեր թէ դեռ ժամանակ կայ. հիմա կըրնաս քեզ կրթել հոգևոր բաներով։ Հիմա պիտի քիչ քիչ կատարելուն հասնիս։

Այո՛ ժամանակ հոգևոր ըլլալու, և հոգիդ փառաւորելու։ Հիմա է ժամանակ հոգևոր գանձ ստանալու, և մարմինը մոռնալու։

Վերջապէս մինչև որ հոգիդ չի զօրացնես, մարմինդ չես կրնար յաղթել. և մինչև որ մարմինդ չանարգես, հոգևորմարդ չես կրնար ըլլալ։

Պատմութիւն։

Մէնէոդոս թագաւորը հանդէս մը կընէ. և երկու իշխան անկէ կեղծէն դէպ 'ի լեռը կերթան ժուռ գալու։ Խօսակցելով կը մոռնան ու անտառ մը կը մտնեն և շատ կը հեռանան։

Այլիս ճգնաւորի խուց մը կը գտնեն, ներս կը մտնեն որ մարդ չի կայ։ Կը զարմանան թէ ասանկ խեղճ տեղ ալ մարդ կրնայ կենալ։ Յախտակին տակէն գտան որ Անտոն ճգնաւորին վարքն, որ աւետարանը լսելով և հոգուն մեծութիւնը ճանչնալով աշխարքը ձգեր ճգնաւոր եղած էր։

Այս գիրքը կարդալով սկսան հառաչել, թէ ինչ անխելքութիւն է ըրածնիս, որ այսչափ գերազանց հոգինիս ձգեր ու մարմնաւոր թագաւորին կը ծառայենք։

Դիւրմ' ալ անցաւ, հանեցին ազնիւ հագուստնին, ու հոն եղած ճրագ-

նաւորին հաստ լաթերը հագան և երևելի ձգնաւոր եղան։

Մարդուս մեծուին իւր գործքն է բարի,
առաքինութի պատակ է գլխի.
Աշխարքիս ոսկին կշռի մէջ գրին,
հաւասար չեղաւ այն անգին գանձին։
Զանա նախ շահիս հոգևոր բարին,
մի մարիր ցանկար անցաւոր բանին.
Հոգիդ հարուստանայ չէ ունայն մարմին,
հոգւով մեծ եղիր անմահից առջին։

ԻԶ. ՀԱՄԱՐ

Ի՞նչ է ժամանակը։

107. Ժամանակը կը նմանի մէկ բոլորակի մը, որ ծայր չունի, ու միշտ կը դառնայ. ոչ ստրկով կը դնալի և ոչ բանով մը ետ կը դառնայ. այլ միշտ հատնելու հետ է հետզհետէ։

Ուստի որչափ որ տգէտ մարդիկ ժամանակը բանի մը տեղ չեն դներ, պարապ կանցընեն, այնչափ իմաստունները մեծ կը համարին։ Ինչ որ վնասեցին թէ ժամանակն է անցին։

Ինանկ որ եթէ աշխարքիս բոլոր հանքերուն գանձը մէկ տեղ բերես,

մէկ բոպէ մը չեն արժեր. վասն զի չեն կրնար բոպէ մը գնել. իսկ մարդս նոյն բոպէին մէջ կրնայ անանկ մեծ բան ընել, որ յաւիտեան տեւէ ու անմահ մնայ։

Ո՞ւր թողունք որ մարդուս կատարելութիւն ու մեծութիւնը ժամանակէն կը կախվի. զի եթէ մանկութենէ ատենդ ժամանակին յարգը գիտնաս ու աղէկ գործածես մէկ բոպէ մը պարապ չանցընելով, հարկաւորապէս կատարեալ առաքինի կըլլաս. և գործքդ ալ անմահ կը մնայ անմահ հոգուդ հետ միատեղ։

Իսկ թէ որ հոգ չընես ու չի խնայես ատենդ անկարգ անցընելով, անանկ կանցնի որ չես իմանար։ Ա՜խմ՝ ալ կը նայիս որ փախեր գնացեր է, ու խեղճ ողորմելի մնացեր ես. կը նայիս որ ամէն մեծուիդ գացեր է բան մը չունիս. ժամանակ ալ չունիս որ բան մը շահիս։ Դ՝ու այսպէս աղէտալի օրերու կը հանդիպիս, և յաւիտենական ողբերու արժանի կըլլաս։

Ինչպէս մարդիկը մոքերն ին դրեր էին թէ՝ շատ ժամանակ ունին։ Ոչիչ մը մարմնին կամքը կա-

տարէն, յետոյ կրնան հոգինին մտածել։ Սակայն անանկ հատաւ ժամանակն ու մահը հասաւ որ չգիտցան ինչ ընէն. մինչև բոլորը կործանեցան, բայց 'ի ուրթը արդարներէն, որ աղէկ գործածեցին իրենց ժամանակը։

Բանի՛ տղաք մանկուրթե ատենէն հոգինին թողուցին ու մարմինին հետևեցան. որպէս զի մանկուրթին որ անցնի՝ անկէ ետև հոգևորին միտք դնեն։ Բայց անցաւ ժամանակը, չի կրցան ատեն ունենալ հոգինին մտածելու. բոլորը անցան կորան իրենց մարմինին հետ։

Ո՞րչափ բարեպաշտ մեծամեծներու որդիք կարծելով թէ ժամանակ կայ, իրենց ծնողաց ձամբայէն ելան, ու չար ընկերներու հետևեցան։ Բայց քիչ ատենէն ետև հասկըցան, որ խաբվեր են։ Ինչ օգուտ բանը բանէն անցաւ. չունեցան ժամանակ, որ ձար մը մտածելով հոգինին շահէին։

Ո՞ՐՇԱՓ ԿԱՐԺԷ ԺԱՄԱՆԱԿԸ։

108. Հայտ է թէ ժամանակը մարդուս հոգին կարժէ. Իսկ հոգուն

արժողութիւնը անգին է. ուրեմն ժամանակն ալ անգին է, և գին չի կտրըվիր։ Իբր զի՝ ամէն առաքինութի և մեծամեծ բարիք ժամանակով կը վաստըկվին, թէ որ աղէկ գործածվի։ Իսկ թէ որ չարաչար գործածվի, ամէն թշուառութիւն կը հետևի։

Որչափ մարդիկ չարաչար դատապարտեցան ժամանակը գէշ գործածելով, և որչափ մարդիկ փառաւորեցան ժամանակն աղէկ գործածելով։

Օ՛ի ժամանակն է հայրը իրաց, եղբայրը մահու, որդի երկնից, վարդապետ իմաստութե և արուեստից, վերը 'ի վայրը առնէ զաշխարհ, ըսին գիտուններըը։

Ո՛հա ասոր համար մեծ իմաստունները այնչափ աշխատեցան գին կըտրել ժամանակին՝ չի կրցան, ուսկից կը կախվի յաւիտենականութին անհատնելի։

Ո՛հ այս է մարդուս թշուառուին որ անցաւոր բաներու համար ժամանակը կը մոռնանք, ու միայն մարմնեղէն բաներու հետ կըլլանք։ Ա՝էյմ՝ ալ աչքերնիս բանանք գոցենք, ա-

մէն բան կանցնի, մենք ալ միատեղ չարաչար կերթանք։

Այն որ տեղ կը փնտրուեն որ ժամանակնին փուչը անցընեն առանց մտածելու թէ ինչ կրնենք։ Շատ տղաք տարիներ կանցընեն առանց բան մը սորվելու. միշտ կրնային որ աղէկ ատեննին խաղի և փուչ բաներու հետ ծախեն։ Այակայն օր կուգայ կըսկըսին այն իրենց պարապ ժամանակը փնտրուել, չեն կրնար գտնել։

Դատապարտեալ մարդիկ թէ որ քիչ մը ժամանակ ունենային առաքինուի ընելու, ինչպէս պիտի ուրախանային, ինչէ՞ր պիտի ընէին, և քանի՞ անգին կըլլար այն ժամանակը։ Դայց ուսկի՞ց կրնան գտնել։ Այսն զի ով որ ունեցածին յարգը չուզեր գիտնալ, արժանի է որ փնտրուած ատենը չի գտնէ, և ՝ած ունեցածնալ առնէ ձեռքէն ու յարգը գիտցողին տայ, ինչպէս կըսէ՝ նը աւետարանը։

Ո՛րչափ մարդիկ կը տեսնենք ուսմիկներուն մէջ, որ քարերով կը ծեծկըվին, թէ ինչ յիմարութի՞ ժամանակնիս կորսընցուցեր ենք մանկուէ ատեննիս։ Ո՞ւր է թէ հիմա մէկը

քիչ մը ժամանակ տար մեզի, որ գիտութիւն և առաքինութիւն համար գործածէինք։

Այս փափաքով ոամիկ մարդիկ իրենց տղաքը լաւ կը թելով գիտութիւն ընել կուտան. և մեծատուններն իրենց զաւակին վրա հոգ չընելով անկիրթ և տգէտ կը թողուն. և յետոյ պարապ տեղը կը ցաւին։

Ինչ հերոս ընելու է։

109. Հին փիլիսոփաները այնչափ մեծ կը սեպէին ժամանակն՝ որ շատ մեծ մեղք կը սեպէին թէ որ մէկը պարապ տեղն անցընէր ատենը և տգէտ մնար։ Հա ասանկ միշտ խնայելու է ժամանակը։

Եւ որ օր աղէկ անցուցած չըլլայն ժամանակըկ՝ ուլայն կողքայն, թէ անօգուտ անցաւ առանց բարիքմ՝ ընելու։ Ինչ զի ժամանակին համար կուռք մը դրին, որ ժողովուրդը վախնայ ու չարաչար չի գործածէ, և կամ ծուլութիւն չանցընէ։

Ըդ՝ թէ որ կռապաշտներն ասանկ մեծ համարեցան, որ այնչափ աղէկ չիյտէին հոգուն մեծութիւնը,

հապա դուն որչափ մեծ պիտի համա-
րիս, որ ժամանակով միայն կրնաս
իմաստուն և առաքինի ըլլալ։

Ժամանակդ աղէկ գործածելով
պիտի փառաւորի անունդ. մանա-
ւանդ՝ ժամանակով պիտի յաւիտե-
նականութիւնը երջանկութիւնը ժա-
ռանգես։

Իսկ ժամանակդ աղէկ չի գործա-
ծելով և պարապ անցընելով՝ տգէտ
և ողորմելի, անարդ և անպիտան
կըլլաս առանց կրթութիւն։

Ուրեմն լաւ մտածէ, թէ անցած
ժամանակը նորէն էտ չի դառնար,
յանկարծ կը հատնի, ու կենացդ
թելը կը փրթի, և յաւիտենական
դատապարտութիւն արժանի կըլլաս։
Այն զի այն հոգին որ ՆԱԾպաշ-
տուած պտուղ չի բերէր, ՆՈՅ երեսէն
կիրնի կը կորսըվի կըսեն իմաստուն-
ները։ Այս փուչ ծառը ի՞նչ կեցեր
է պտուղ չի տար, աշխատանք կը
հասցնէ և ուրիշին տեղը կը խափա-
նէ, կտրէ կրակը ձգէ կըսէ ՆԱԾ ՊՐ
աւետարանին մէջ։

Պատմութիւն։

Մէկ իշխան մը մանկութենէն սովորութիւն ըրած էր ծուլութիւն։ որ միշտ ժամանակը պարապ անցընելով օգտակար բանի մը հետ եղած չէր։

Հրաման եղաւ իրեն որ պատերազմ երթայ։ չուզելով ելաւ գնաց, ու ամենուն աղօթք ապսպրեց, որ ողջ դառնայ գայ։

Այց պատերազմին ատենը փախաւ գնաց ծածուկ տեղ մը գինի կը խմէր։ Մէկ՝ բարեկամը հոն հանդիպեցաւ ըսաց թէ ինչ կընես, հիմա է բան տեսնելու ատենը։ Հիմա պիտի ժամանակդ գործածես քաջութիւն, որպէս զի անուն ստանաս։

Պատասխան տվաւ թէ՝ ես զօրքերուս յաղթութիւնը համար գինի կը խմեմ։ Ինչպէս ըսաց թէ ամօթ է քեզի, մի կորսընցնիր ատենդ։ Եկ աշխատէ, որ միշտ անուանդ մնայ։

Պատասխանեց ծոյլը թէ աւելի կուզեմ տասը տարի հոս մնալ, քան թէ հազար տարի գրոց մէջ անուն ունենալ։

Ժամանակն որչափ՝ մեծ գերազանց է,
այնչափ մեծ պարտուց՝ պարտական կընէ։
Ըլլայ թէ պարապ՝ թողու մէկ բոպէ,
որ բարի գործքով օգուտ մը չընէ։
Ի՞նչ շահ թէ այլոց՝ բանին միտք դնես,
Ժամանակդ անցնի՝ քեզ չի մտածես.
Աչքդ կը բանաս՝ որ ապքատ մերկ ես,
չի կայ ժամանակ՝ որ բարիք մ՝ ընես։

ԻԷ. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս կըլլայ մարդս բարեսէր։

100. Յայտնի է թէ մարդս քաղաքական ըլլալուն համար շատ հարկաւոր է որ իրարու հետ բարեսիրտ ըլլան։ Որ կըլլայ թէ որ իրարու վրա մեծ սէր և համարում ունենան. իրարու կարեկից և ցաւակից ըլլալով կարօտուածներ հասնին օգնեն. նաև իրարու բարեացը վրա զուարճանալով ուրախակից ըլլան։

Մուրճերը երբոր իրենց ցեղը հեռուէն կը տեսնեն, և ձայներնին կառնեն, շուտը ճամբայէն կը դառնան կուգան, որ ընկերուածի ընեն։ Իսկ թռչուն բռնողները ասոնց բնական սէրը տեսնելով՝ զանազան ցեղէ

թռչուններ կը կապեն չուանին վրան, որպէս զի անոնց նայելով մէկալոնք ալ գան։

Այս օրինակս շատ մեծ խրատ է մարդուս, որով կը պարտաւորին իրարու հաղորդել իրենց սիրտը. անանկ գութ ունենալով իրարու վրան, որ բան մը չի կրնայ զատել անոնց սէրը։

Եթէ մարդիկ այսպէս բարեսիրտ ըլլային միշտ իրարու հետ, անհնարին էր թէ մարդ մարդու նախանձէր, ատէր, և սիրտը կոտրէր։ Պանանդ թէ իրար կը շահէին, իրարու միտքը բարին մեկնելով, և լաւութիւնը ուզելով։ Ուրեմն բարեսիրտ չըլլալնուն համար այսչափ անկարգութի և այսչափ վնաս կըլլայ մարդկանց մէջ։

Ընցած տարիները ինչու համար այնչափ բիւրաւոր մարդիկ կորան պատերազմով։ Ինչ էր պատճառն որ միլիոնաւոր մարդիկ մէկ տարվանը մէջ իրար ջարդեցին։ Որովհետև սրտերնին իրարու վրա շիտակ և բարի չէր, և իրարու մեծութիւնը չի քաշելով կուզէին իրար կողոպտել, անոր համար այնչափ քաղաքներ մարդու արիւնով շաղվեցան։

Այս պատճառաւ կըսեն թէ երբոր մարդս կրթուի և աղէկ սիրտ ունի՝ գազանէն գէշ է. վասն զի խելքն ու ժամանակը չարուի գործածելով, լաւ բան չի կրնար ընել։ Կը ջանայ որ մարդկային ընկերուիը խառնվի։ Երբ թէ մարդէ գազան ձևանալով մէկզմէկ կը խածնեն։ Եւ ո՞ր գազան կրնայ անոր ըրածն ընել. ո՞ր կենդանի իր ցեղին այնչափ վնաս կուտայ, և այնպէս չարաչար վրէժխնդիր կըլլայ, ինչպէս մարդը։

Ամէ որ կռվասէրը մանկուենէն կրթըված, և բարեսիրտ ըլլար, այնչափ կռիւ և այնչափ վնաս կուտա՞ր այլոց։ Ամէ որ նախանձոտը աղէկ սրտով ուրախանար ուրիշին աղէկութիը վրայ, այսչափ ատելութիւն և թշնամութի կըլլա՞ր բարեկամներու և ազգականներու մէջ։ Եթէ վրէժխնդիրը՝ բարեմտութիւն այլոց պակասութիը մեկնէր, և գէշ գործքը ջանար ծածկել կամ պզտիկցընել, այնչափ նախատինք և բամբասանք կըլլայի՞ն իրարու մէջ։

Ուրեմն շատ հարկաւոր է բարեսիրտ ըլլալով իրարու բարեացը վրա ուրախանալ. իրար մեծցընել. իրա-

բու աղէկ աչքով նայիլ, որով կըլլայ սէր և խաղաղութիւն. իսկ ատելութիւն ու նախանձը բոլորովին կը վերնայ։

Ա—ԿԻՆ ԷԼԼԱՅ ՆԱԽԱՆՁԸ։

111. Այս միասակար ախտը չարսըրտութենէ ու ցած հոգւոյ առաջ կուգայ, որ այլոց բարեացը վրա տրտմելով նախ իր անձը կերէ։ Փոխանակ ուրիշին հետ ուրախանալու և անոր բաղդին մասնակից ըլլալու, կը տրտմի, չուզէր անոր լաւութիւնը. մինչև ինք զինք չարաչար կը տանջէ, ու ինքն իրեն դահիճ կըլլայ։

Որչափ աւելի այս ախտին հետևի մարդ, այնչափ գէշ վախճան կունենայ. մինչև կուզէ որ իր աչքը հանէ, որպէս զի այլոց բարիքը չի տեսնէ։

Երբ կը տեսնէ թէ իրեն նախանձովը դիմացինին բան չըլլար, կըսկըսի բամբասել վար զարնել, որ գէթ անուանը միաս մը բերէ։

Այսպէս էին նախանձոտ եղբայրները Յովսէփ գերեցիկին, որ փոխանակ ուրախանալու իրենց եղբօրը շնորհքին վրա, կամ թէ անոր վարքին նմանելով իրենք ալ սիրելի ըլ-

լալու տեղը, չարասրտութիւն ուզելին անմեղը մեռցընել։

Պարդապետները կըսեն, թէ երբոր նախանձ կուգայ քեզ արդարին վրա, ջանա շուտով բարեգործութիւն ընել, որ դուն ալ արդար ըլլաս։ Բայց երբոր մարդուն սիրտը բարի չէ, ինչպէս կրնայ բարի ընել, ինչպէս կրնայ ուրիշը քաշել, և ինչպէս պիտի այլոց բարեացը վրա ուրախանայ։

Ահա այս առաքինութիւնը պակաս ըլլալուն համար, թէ որ մէկէն մէկ պզտի բան մը կրէ՝ շուտով վրէժխնդիր կըլլայ, ոխ կը պահէ, կը փաքի որ ինչաս մը տայ ընկերին։ Ու այսպէս միշտ ատելութիւն կը վարվի։

Իսկ բարեսիրտ մարդը թէպէտև ինչաս և նախատինք կրէ, միտքը կը դնէ թէ մարդ էր սխալեցաւ. կամ ուրիշ մտքով ըրաւ, ինձի ուրիշ կերպ երևցաւ։

Կրնայ ըլլալ որ ես ալ շատ մարդ վշտացուցեր եմ, ու մարդ ձայն չէ հաներ։ Ապա մարդկութիւն կը վայլէ որ ես ալ ձայն չի հանեմ. պէտք է իրարու համբերել, ամէն մարդ իր ըրածէն կամ ընայ։ Ահա այսպիսի

քարի սրտով ընկերը կը շահի, ու հանգիստ կըլլայ հոգւով և մարմնով։

Ինչպէս պիտի ազատիլ է։

112. Այս ախտէն ազատ ըլլալու համար պէտք է երկար ատեն կրթութիւն ընել. միշտ ուրիշին գործքը գովել, և ընտրը մեծցընել։

Երբոր աղէկ բան մը կը տեսնես ուրիշին վրա, որ դուն չունիս, ուրախացիր, մի վշտանար. զի դուն ալ ասոր պէս մարդ ըլլալով կրնաս անոր ունեցածին մասնակից ըլլալ։ Մանաւանդ որ, թէ որ քու ազգէդ է, իրեն բարիքը քուկդ ալ է, իրեն անունը քեզի ալ պարծանք է։

Եւ որովհետև մարդուս սիրտը պէտք է որ բան մը սիրէ. եթէ մարդկութիւնէ դուրս ելլէ ու նախանձի, ատէ, իր ընութիւնէ դէմ կընէ, և մարդկայինն ընկերութիւնէ մեծ վնաս կը բերէ։

Սակայն գէշը այն է՝ որ այս մոլութիւնը մեր ազգին մէջ շատ կը տեսնենք հին ատենէն 'ի վեր. անոր համար այսչափ խեղճութիւն հասաւ մեզ։ Իբր զի՝ չորս անգամ մեր թագաւորութիւնը կործանեցաւ իրարու նա-

խանձելով և չի քաշելով. շատ անգամ զօրացաւ և ծաղկեցաւ իրար սիրելով և միաբանութի ընելով (175)։

Նախանձով շատ մեծ մարդիկ և լաւ բաներ կորսընցուցինք, իսկ միաբան սիրով նորէն ստացանք, վերջապէս կորսընցուցած մնացինք։

Որ որ մեր ազգին մէջ նախանձ ըլլար, գիտութիւն ու հարստութիւը շատ աւելի պիտի ծաղկած ըլլար մեր երրութե մէջ. վասն զի միայն ատելութի իրար փնձացուցեր են, և մէկըզմէկ չիքաշելով այլոց գործքը գետնէ գետին զարկեր են, և այսպէս շատ աղէկ բաներու խափանիչ եղեր կորուսեր են։

Մեր ազգը դեռ չի գիտեր ուրիշին բարիքը կամ անունը իրեն սեպել ու անանկ ուրախանալ. քանի որ աս չի կայ, ազգասիրութի յաւիտեան ըլլար մեր ազգին մէջ։ Հիմկուց աղէկ խօթէ միտքդ աս բաներս։ Այն մեծութին որ ինքը չունի, կըջանայ որ ուրիշն ալ չունենայ. և այն գիտութին որ ինքը չունի, կուզէ որ ընկերն ալ չունենայ. կամ թէ ուրիշը գէշ երևնայ ու աղէկ չի զուրցըվի։

Այսա այս է չար մոլորութիւն, և

մեծ փնասակար ախտ մարդկութիւն, որ շատ անգամ աշխարհք կործաներ է։ Ուստի ջանա որ մանկութիւդ այս չար մոլութիւն յաղթես և միշտ դէմը ընես։

Ինաւ չըլլայ թէ նախանձիս, և դէշ սրտով ընկերիդ բանին նայիս. հապա օրինակ առ, դուն ալ անոր աղէկ բաներուն հետևէ՛, որ դուն ալ անոր պէս գովելի ըլլաս։

Անանկ ըրեր են և կընեն կրթըված և իմաստուն աղգերը. չինախանձիլ չըլլար, մարդուս բնական է եղեր. բայց անոնք բարի նախանձ կը փոխեն. չեն ըսեր թէ ընկերս ինչո՞ւ անանկ ըլլայ, հապա թէ ես ինչո՞ւ անանկ չեմ. ու ընկերին բարիքը և աղգին իրենց սեպելով, իրենք ալ անոր կը նմանին։ Կուզե՞ս ասոնց պէս, իմաստնոյ պէս նախանձիլ, կուզե՞ս ընկերդ պզտիկ ձգել, ջանա անկէ լաւ ըլլաս, անկէ մեծ բան ընես։

Գիտնաս որ նախանձելովդ ընկերդ դէշ չըլլար. չարը միշտ քեզ կը դառնայ։ Արեսիրտ եղի՛ր որ բարին ալ քեզ դառնայ. որպէս զի ըլլաս անուանի կիրթ և ամենուն գովելի։

Որչափ դուն այլոց բարի կամենաս, այնչափ բարին ետևէդ կը հասնի, և որչափ ուրիշին չար կամենաս, չարին կը հանդիպիս։ Սոկեբերան կըսէ թէ ինչ վախճան ունին չար մարդիկ, որ այլոց բարին իրենց պատիժ է։

Պատմութիւն։

Արիստիդէս աթենացի իշխանը այնչափ ազգասէր էր և աշխարհքի աղեկութի կընէր, որ անունը արդար դրին. վասն զի շատ մեծամեծ բարիք ըրաւ։ Սակայն նախանձելով չի քաշեցին, սկսան ետևէն գէշ զուրցել. որպէս զի իշխանութէն ձգեն։

Օր մը տեսաւ որ մարդ մը իրեն դէմ բան կը գրէ, հարցուց թէ ինչ է գրածդ։ Ասաւ ըսաց թէ Արիստիդէս իշխանութէ ձգելու համար կը գրեմ։ Որէն հարցուց թէ քեզի բան ըրած ունի։ Այ՝ ըսաց, և ոչ կը ճանչնամ, թէ Արիստիդէս ով է։ Սակայն չեմ կրնար քաշել, ինչու համար արդար կը կոչվի։ Հա անոր յանցանքը արդար ըլլալն է, անկէ 'ի զատ յանցանք չունի։

Ընկերիդ վրա՝ լաւ սրտով նայէ,
ջըլայ թէ ատես՝ այլ սրտանց սիրէ.
Թէ ինչաս տվաւ՝ մի ոխ նենդ պահէր,
բարի ըրէ որ՝ ամըչնայ քեզմէ։
Թէ զուրիշն ատես՝ նախ դուն քեզ կատես,
ամենուն առջին՝ ատելի կընես.
Խօսէ և գործէ՝ ընկերիդ բարի,
զի բարին անդրէն՝ քեզ կը բոլորի,

ԻԸ. ՀԱՄԱՐ

Ինչէ դաբանութիւն։

113. Դեղեցիկ օրինակ ունինք միաբանութեան մեղուները, որ միաբանաբերը ըլլալով այնպիսի աշխիւ պտուղ առաջ կը բերեն որ մարդուս ալ պիտուական է, այ ալ։ Իբր զի մոմը միաբանութեամբ անոյշ պտուղն ըլլալուն համար այ ընդունելի ընծայ կըլլայ. իսկ մեղը բնական քաղցրութիւնք կանուշցնէ ամենուն բերանը։

Այց տեսանենք թէ ասոնց միաբանութիւնը ինչ կերպ է։ Նախ ունին գլխաւոր մը, որուն հնազանդ ըլլալով ուր որ երթայ ետևէն կերթան։ Նաև ամէնքը բանի հետ ըլլալով միատեղ կաշխատին։

Որ մեղունները կերթան ծաղիկ ժողվելու, ծերերը դուրս չեն ելլեր ամանին մէջ մեղր կը շինեն։ Յետոյ մէջ ալ ոմանք դրանն առջին կը սպասեն որ թշնամի մը ներս չի գայ, և իրենց ընկերները դրսէն ներս կը դունին։

Իրենց մէջ ձայն տըվող ալ ունին, որ առտանց ձայն կուտայ, ու ամէնքը հնազանդելով միաբան բանել կը սկսին։ Վերջապէս անանկ զարմանալի կարգեր ունին, որ իրար տուն մը կամ թագաւորուն մը կերևնան։

Որովհետև սկզբան մարդիկ ինքնագլուխ էին, կըսեն թէ մեղուներուն նայելով սկսան տէրուն և թագաւորուն սահմանել։ Սակայն մարդիկ մեղուներուն միաբանուելը չունին. թէ որ մեղուի չափ կարգ ունենային, ոչ տան մէջ և ոչ տէրութեան մէջ այնչափ խառնվուրթի կըլլար։

Ամն զի միաբանական սէր ունեցող մարդը միշտ կը ջանայ իրարու օգնել, իրարու պակասը լեցընել, և իրարու ոյժ տալով միաբան մեղր շինել, որ է եղբայրսիրուն։ Նոր համար ըսաց սողոմոն իմաստուն, թէ եղբայր եղբօր օգնելով կըլլան իրար

ամուր բերդ մը, որ աշխարհք մէկ տեղ գայ, չի կրնար քակել։

Բ. Յսպէս հին ատենը այն մեծ թագաւորութիւնները այնչափ երկար ատեն հաստատ մնացին, և միաբանութիւն այնչափ թշնամիներուն յաղթեցին։

Բ. Յս կերպով մէկ քանի ձկնորսներ միասիրտ ըլլալով վենետիկ քաղաքը շինեցին, և յետոյ միաբանութիւն շատ մեծցան, ու հարիւրաւոր տարի թագաւորութիւն քշեցին։ Սակայն երբոր անմիաբան եղան, քիչ օրւան մէջ այն գեղեցիկ տէրութիւնը կործանեցին (357).

Նոյնպէս Հայկ միաբան իրեն ցեղովը այնչափ բիւրաւոր մարդիկ ցրվեց, ու բելը սատկեցուց (171)։ Դայց երբ անմիաբան եղան իշխանները՝ բոլոր ազգը գերի ըրին։

Քանի՞ տներ միաբան սիրով մեծցան փառաւորապէս, և քանի՞ փառաւոր տներ անմիաբանութիւն ոչնչացան։

Ասոր հետևյալ անդիաբանութիւն։

114. Անմիաբանութիւն է ծնունդ նախանձի. զի նախանձելով ուրիշին բարւոյն կը հակառակի, և չուզեր

այլոց հետ միաբան կենալ, ու միաբանութիւն բարի բան ընել։

Այլ գլուխ կը քաշէ ինքնահաւանութիւն. միայն իր բանը կը նայի. ամենևին չուզէր այլոց օգնել, կամ միանալ. որ է ժանտախտ մարդկային ընկերութեան։

Ու այս չարը որչափ աւելի ՀՆաստակար է, այնչափ ալ օրէօր կեւեւելնայ, ու մեծամեծ կործանման պատճառ կըլլայ։

Կը տեսնես երկու ազգ մէկը կտրիճ զօրաւոր, մէկալը տկար. տկարը միաբան ըլլալով կը յաղթէ անմիաբան զօրաւոր ազգին, ու գերի կընէ։

Պօղոս առաքեալը շատ աւեղ միաբան եղիք կըսէ. զի մէկ մարմին էք, պէտք է կեղծաւորութիւն չընել, մէկզմէկ չատել։ Այլ մէկ սիրտ մէկ հոգի եղիք։ Ինչպէս մէկ անդամը վշտանայ, ամէն անդամք կըվշտանան. թէ որ մէկը փառաւորի, մէկալինք ալ միատեղ կը փառաւորին ու կուրախանան։ Այսանկ պէտք է ամէն մարդ ըլլալ։

Այթէ աչքը լուսաւոր ըլլայ, պէտք է որ ոտքը ուրախանայ. թէ որ ոտքը ուժով ըլլայ, պիտի գլուխը պարծե-

նայ. վասն զի նոյն գլխուն ոտքն է։ Եւ ընդհակառակն՝ թէ որ դիպեաց ծով ձեռքը գլխուն զարնէ, պէտք չէ գլուխը բարկանայ. զի իրեն ձեռքն է զարնողը։

Այսպէս պէտք է մարդն ալ ըլլալ. որ իրարու անդամ են, պիտի իրարու պակասութիւնը գոցեն, և իրերաց համբերեն։ Այց նախանձը թող չի տար, ու անմիաբանութիւնը փոքր բանը մեծ կերևցընէ, նաև աղէկը գէշ, շիտակը ծուռ, և իրաւը սուտ։

Օ՛ենոն փիլիսոփան օր մը նախանձոտ մարդ մը տեսաւ տրտմած, ըսաւ թէ չկրնամ քեզի շար պատահած է, թէ ուրիշին բարի։

Անշէ գործ դաբանութիւն։

115. Ինչպէս որ մեղուին գործքն է միաբան մեղը շինել, և ամենուն բերանն անուշցնել, այսպէս միաբանութիւն պտուղն է եղբայրասիրութի, իրարու հետ անոյշ վարուիլ, իրար շահիլ, իրարու աղէկութիւն վրա ուրախանալ և պակասութիւն վրա տրտմիլ։

Թէ որ անկարգ բան մը տեսնէ, պէտք է աղդ առնել, կամ խրատ տա-

լով պակասն առաջը դնել, որ մէյմ՝ ալ չընէ, և զինքը լաւ ճանչնայ, ու խոնարհի։

Ահա ասոնք են մարդկութեան վայլած պտուղը, այսպէս կը շինվի ընկերութիւնը, և ասով տէրութիւն նաև ամէն տուն կը հաստատվին։ Ասով աշխարհք ալ կը պայծառանայ։ Իսկ առանց միաբանութեան բան մը չի մնար, կը կործանի։ Եթէ չորս տարերք իրարու հետ միաբան չըլլան, բոլոր աշխարհք կը կործանի. ինչպէս՝ որ աւետարանն ալ կը վկայէ թէ սէրն որ ցամքի, աշխարհք ալ ան ատենը պիտի անցնի։

Ուրդ՝ ասոնք լսելով Ջանա միաբան ըլլալ սորվիս, նախ ընկերներուդ և եղբայրներուդ հետ միաբան սիրով վարվելով. որպէս զի միաբանութիւնն ամենուն սիրելի ըլլաս։ Ամի հակառակիր ուրիշին խօսքին և գործքին. մի նախանձիր բնաւ այլոց բանին, այլ ուրախացիր, որչափ որ կրնաս։

Եթէ աղէկ բան տեսնես վառվիլ որ դուն ալ ընես. թէ գէշ բան՝ ցաւակից եղիր, Ջանա կերպով մը խափանել տաս, որ ալ չընէ։

Սովորուն ըրէ այլոց բանը գովե-

լու և սիրով վարվելու ոմ որ ըլլայ. որպէս զի այս կատարելութիւնը քեզ բնական ըլլայ, որով շատ մեծանուն և գովելի կըլլաս բոլոր աշխարհքիս մէջ։

Սա՛ Ղեղոս կըսէ թէ ինչպէս որ մեղուներուն երամը մեղր կը շինէ, այսպէս հաւասար միաբանութիւն եղբարց առաքինութիւն կընէ։

Պատմութիւն։

Դամոն և Պիւդիա այնչափ իրարու հետ միաբան և միասիրտ էին, որ իրարմէ չէին զատվեր։ Դղաւ որ մէկը դատապարտեցին մեռնելու. ընկերը իրեն տեղը դրաւ, ու ինքը գնաց տանը բանը հոգալու։

Դայց գործքը լմընցնելէն ետև դարձաւ եկաւ, որ ինքը մեռնի ու ընկերն ազատի։ Դատաւորը ասոնց հաւատարիմ բարեկամութիւնը տեսնելով ազատեց երկուսն ալ, և խնդրեց որ զինքն ալ երրորդ դրեն իրենց բարեկամութիւնը մէջ։

Թէ բաղձաս ըլլալ՝ ընտիր գովելի,
միաբան եղիր՝ քաղցր և շնորհալի.
Մի՛ մեծամիտիր՝ թէ ես մեծազգի,
սիրով գիտութիւնք՝ մարդս է յարգելի։

Երբ խելքդ է թափուր՝ միտքդ անմիաբան,
աղքատ է հոգիդ՝ գեղացու նման.
Թէ մէկիրա ըլլաս՝ ազգասիրաց հետ,
մեծ բաներ կընես՝ ազգիդ և քու տան։

ԻԹ. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս հելլայ հնազանդուիլ։

116. Որովհետև աշխարհքիս ամէն բանը կարգի և օրէնքի տակ դրված է, և ամէն բան անհաւասար ստեղծված է, որը մեծ, որը պզտիկ, որը գիտուն, որը տգէտ, որը հարուստ, որը աղքատ. ասոր համար ստեղծողը օրէնքներ դրաւ, որ իրարու հետ լաւ համաձայնին (45)։

Ա. Այս համաձայնուիլը հպատակուիլ կըլլայ. և նոյն օրէնքները հնազանդուիլ պիտի պահվին. որ շատ գեղեցիկ առաքինուի է և տղոց բնուիթ խիստ յարմար. որով սիրելի և ազնիւ կերևնայ։

Իբր զի բնական օրէնքը պահելով, մեծին հնազանդ և ծնողացը հրամանին տակն ըլլալով հարկաւ կատարեալ մարդ կըլլայ տղան, և աշխարհքիս ազնուական զաւակը կերև-

նայ։ Ահա այս պատճառաւ այնչափ օրէնքներ դրված են. ոչ զի մարդս միշտ հնազանդութեան տակ ըլլալով ամէն բան կարգի տակ մնայ ինչպէս արժան է։

Եւ որ տան մը մէջ ծառան տիրոջը հրամայէ, աղքատը իշխանին, և տղան ծնողացը, որչափ անկարգ և անշնորհք բան կըլլայ։

Իսկ եթէ տղան ծնողաց հրամանէն դուրս չելլէ. վարպետին միշտ հնազանդ ըլլայ, և մեծն ու պզտիկը ճանչնայ, որչափ գեղեցիկ և կանոնաւոր բան կըլլայ։ Որով մարդավար և գիտուն կըլլայ. քիչ աշխատանքով շատ բան կը սորվի, մինչև երևելի մարդկանց կարգը կանցնի։

Ահա այս էր պատճառն որ ամենաբարին ամէն մարդ հաւասար չըրաւ, ու պզտիկը մեծին հպատակ դրաւ։ Եթէ տղան ուզէ այս օրէնքէն դուրս ելլել, պէտք է նախ մարդկութիւնը ձգել, և ՝ այ կարգն աւրել։

Ասան զի անքաններուն մէջն ալ օրէնք կայ. որով տկար կենդանիք զօրաւորներուն կը հնազանդին և ձագերը իրենց ծնողաց ետևէն կերթան։

Ինչպէս էլլայ անհնազանդ։

117. Անհնազանդութիւնն պատճառն է կամապաշտութիւնն որ թոզ չի տար կամքին ապահով ճամբան երթալու այլ ամբարտաւանութիւն գլուխ կը քաշէ, ու չուզէր այլոց հնազանդութիւն ընել, նաև ուրիշին հրամանին և կարծեացը խոնարհիլ։

Կամապաշտին կամքն է իրեն օրէնք և կանոն. անոր համար չարաչար կը սխալի, ու չի տեսնէր։ Ասկից առաջ կուգայ ինքնահաւանութիւն, որ շատ մեծասակար ախտ է մանկանց. որովհետև մանկական բնութիւն անոյշ կուգայ իր բանին և խելքին հաւատալ, և զինքը մեծ համարիլ։

Աստի ուր տղան որ ինքնահաւանութիւն ունեցեր է, միշտ անկարգ անխոհեմ և տգէտ մնացեր է։ Նու որչափ մեծցեր է՝ այս ախտն ալ հետը մեծնալով անպիտան մարդ եղեր է։

Նրբեմն այնչափ կը զօրանայ այս ախտն որ ամէն ըրած բանն իրեն աղէկ կերևնայ, ոչ խրատ կը լսէ, և ոչ ուրիշի կը հաւնի. միայն իր խելքն է մեծ։ Անոր համար կըսեն թէ հնազանդութիւն մեծ բան չի կայ, ուվ որ

չունի՝ ամէն աղէկութիւն թափուր է։

Կամապաշտ մարդը կուզէ բնական օրէնքը խանգարել։ Ինքն ուրիշին հնազանդելու տեղը, կուզէ որ ուրիշն իրեն հնազանդի. և ամէն մարդիկ իրեն կամացը ծառայեն. մինչև անկարգ բան ալ ընէ, հաւանելով աղէկ ըսեն։

Եւ կը ջանայ որ ծնողքն ու վարպետը իր կամացը հետևին։ Ընտանիքի խրատ առնելու տեղը ինքը խրատ տվող կըլլայ, որ է ընդդէմ բնական օրինաց։

Ինչափ ինք զինքը խելացի տեղ կը դնէ, և բարակ մտածող կը կարծէ, մինչև ոչ ծերը բանի տեղ կը դնէ և ոչ գիտունը, նաև կրսկրսի ծուռ մեկնութիւն տալով գիտուններուն պակասը բռնել։

Մեծ կը փափաքի, որ ամէնքը գովեն զինքն ու իր ամէն բանը։ Ինչափ կը լրբանայ որ կրսկրսի մեծերուն վրան ալ խնդալ, որ է մեծ յանդգնութիւն և զզվելի չարութիւն։

Ինչ է դեղը։

118. Ընհնազանդութիւն դեղն է կոյր հնազանդութիւն, որ առանց բան մը

մտածելու և մեկնուն տալու պէտք է մեծին հրամանը կատարել. որ կըլլայ օրէնքը ճանչնալով լաւ հնազանդըլլալ թէ՝ այ պատուիրանացը, թէ բնական, և թէ քաղաքական օրէնքներուն (45)։ Կ՚ասն զի երբոր չուզած բաները կըլլան, միտքը կը դնէ թէ բնական օրէնքը այսպէս հրամայեր է. ուրեմն պէտք է հնազանդիլ մեծին։

Երբոր միտքը դրած է թէ օրէնքը հրամայեր է որ վարպետին մտիկ դըրվի, պէտք է հնազանդիլ. այլ բան չուզէր և ոչ մեկնութիւն կը կարօտի, անպակաս կատարելու է։

Ուստի գիտունները կըսեն թէ մանկական քնութիւն շատ յարմար է հնազանդուի, որ փորձ և խելացինեռուն հարցընելով, և անոնց կամքին հետևելով շատ երևելի մարդ կըլլայ։

Այսպէս պէտք է դուն ալ ջանաս, և կոյր հնազանդութիւն մեծերուդ հետևիս։ Դուն քեզ բան գիտցողի տեղ դնելով չի՝ ջատագովես սխալմունքդ և գործքդ։ Եւ այլոց բարի բանին և խօսքին չընդդիմանաս. և խելքիդ դէմ եղած բանին վրա

հակաձառութիւն չընես անպատճառ։

Ի՞նչպէս կամապաշտութիւն զէշ բանը աղէկ սեպելով չի գովես. և քեզ բան մը կարծելով չի պարծենաս։ Ի՞նչպէս ջանա այլոց հետևողութիւն ընես, և մեծերուն անսացող խօսք մոռիկ ընող ըլլաս։

Ի՞նչ ջանար խելացի երևնալ. աղէկ բանմ՞ալ ունիս նէ՞ մի գովեր։ Մարդ որ ուրիշները գովեն։ Ի՞նչպէս պէտք է մեծցընել մեծերուն խելքն ու գործքը. զի ասով միայն կրնաս հնազանդութիւն սորվիլ, և ասով կրնաս մեծնալ։

Հուսկ յետոյ, որչափ աւելի հնազանդիս, այնչափ աւելի կըփառաւորիս. և որչափ աւելի քեզ մեծցընես այնչափ աւելի կը ցածնաս. զի միշտ յաղթող և մեծ է հնազանդութիւն։

Պատմութիւն։

Պիւթագորաս գեղացու զաւակ ըլլալով մանկուէ ատենը միշտ կը ջանար որ ամէն բան աղէկ կերպով ընէ։ Որ մը գեղէն դառնալու ատենը Դիմոկրիտոս փիլիսոփան զինքը տեսաւ որ փայտի կտորներ կապած

շալկեր կը տանէր։ բայց փայտերը շատ շնորհքով կապած էին։

Փիլիսոփան հարցուց թէ դո՞ւն կապեցիր։ Հրամերես ըսաւ։ Այրէն քակէ՛ կապէ ըսաց որ տեսնեմ։ Ցղան հնազանդելով շուտ մը քակեց կապեց։

Փիլիսոփան ասոր հնազանդութիւնը տեսնելով հասկըցաւ որ մեծ մարդ կըլլայ եթէ կրթըվի։ Ուստի քովն առաւ գիտութիւն սորվեցուց, և եղաւ Պիւթագորաս երևելի փիլիսոփայ։

Թէ ինքնահաւան՝ գովեստ տաս անձին,
քեզ ծաղր կընեա՝ ամենուն առջին.
Ջանա՛ որ ըլլաս՝ հնազանդ և խոնարհ,
մինչև քեզ գովէ՝ բերան օտարին։
Թէ սորված ըլլաս՝ խմաստուն բաներ,
մի՛ այլոց առաջին՝ պարծելով յայտներ.
Որչափ շատ սորվիս՝ այնչափ քիչ գիտես,
ուրիշներուն քով ինչքո՞ր կը գտնես։

Լ. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս կըլլայ հեղգամիտին։

119. Հեղ և անոյշ ըլլալու համար պէտք է ամէն բանի մէջ քաղցր երևնալ առանց այլայլութեան։ Գուցէ բա-

ներու վրա չի վշտանալ, և բարկու-
թիւն այլոց սիրտը չի կոտրել։

Եւ դժուարելու բանի մէջ ալ
պէտք է խոհեմ և ծանր շարժիլ՝
անձն ու ժամանակը նկատելով։ Ո-
նանկ որ ոչ չափազանց խռովիլ, և ոչ
անքան անզգայ մնալ։ Ցեղովը զուր-
ցել և ընկերը շահիլ հեզութիւն։

Որովհետև բարկասիրտ մարդը
այնչափ կը զայրանայ չափազանց, որ
ունեցած իրաւունքն ալ կը կորսընցը-
նէ, մինչև ամենուն առջին յանցաւոր
կերևի. և ուրիշը պարտաւորելու տե-
ղը ինքը կը լայ պարտաւոր։ Իսկ հե-
զահոգի մարդը ծանր շարժմունքով
և անոյշ խօսքով աւելի կը պարտա-
ւորէ զուրիշն, ու ամօթ կընէ ամե-
նուն առջին յանցաւորը։

Ինոր համար այս առաքինութիւնը
շատ հարկաւոր է ընկերութեան մէջ.
որովհետև մարդկութեան կը վայլէ
խօսքով մէկ զմէկ հանդարտել, և
քաղցրութիւն իրարու յաղթել։

Իսկ գազանին կը վայլէ, որ ինաս
մը տեսածին պէս, բարկութիւն իրար
վիրաւորել և պատռել. մ'ա զի խօսք
չունի, խելք չունի որ պատճառով
յաղթէ ինաս տվողին. հարկաւ իր

գաղանութիւն վայլածը կընէ։

Ուստի հասարակօրէն վայրենի և անկիրթ մարդիկ շուտով կը բարկանան իրար զարնելով։ Ս. յսպիսի ազգերուն մէջ միշտ մարդասպանութիւնը պակաս չէ. քիչ մը ինչաս տեսածին պէս վրէժխնդիր ըլլալով իրար կը խայթեն (440)։ Այց կիրթ և քաղաքավար ազգերուն մէջ ասանկ անվայել բաներ քիչ կը պատահին. զի խօսքով կը դպչին իրարու, չէ թէ ձեռքով, ինչպէս կը վայլէ մարդկութեան։

Ինչ համար հանդարտաբարոյ և կրթըլած ազգերուն մէջ քիչ մարդասպանութիւն կը պատահի. և իրենց զաւակը հանդարտ մեծնալով միտքը տեղեկութիւն կը լեցվի. գիտուն և հեզահոգի ըլլալով բարկութիւն ախտը չի կրնար տիրել։

Ինչպէս է Բարկութիւնը։

120. Բարկասիրտ մարդուն սիրտը բարկութիւն ատենը սաստիկ կը տաքնայ, ու մորթը պաղելով մազերը կը ցցվին։ Երբեմն աչիւնը երեսը գալով կը կարմրի և աչքը կը բորբոքի. նաև լեզուն բերնին մէջ փախ-

չելով կը պօռայ գազանի նման։

Ինոր համար Պղատոն բարկասիրտներուն գեղ մը գտեր էր, որ հայլիի մէջ նային. որպէս զի իրենց այս զարհուրելի պատկերքը տեսնելով քիչ քիչ շտկըվին, ու բարկուելը ձգեն հեզահոգի ըլլան։

Ինչպէս որ պզտի կայծ մը սոսկալի մեծ կրակներ կընէ. ասանկ ալ պզտի խօսք մը սոսկալի մեծ բաներ կը հանէ բարկութիւն։ Վասնի մարդիկ կորան փոքր պատճառով մը. և քանի բարկասիրտ տղաք քիչ մը խօսքով անշահ եղան, ու հոգւով մարմնով ոչնչացան իրենց ծնողքէն հեռու երթալով։

Հեզ մարդը բարեսիրտ կըլլայ, և այլոց գործքը բարին մեկնելով թէ զինքը և թէ ընկերը կը շինէ. իսկ բարկացօղ մարդը չարասիրտ կըլլայ. և ամէն բան ուզածին պէս չարին տանելով՝ կը զայրանայ քիչ մը բանով կը բռընկի, ու չարաչար մեծ բաներ հանելով սոսկալի մեղքերու պատճառ կըլլայ։

Հեզահոգին իր ծառաներուն հետ ալ անոյշ կը վարվի. կամքին դէմ բան մը տեսնէ, չի խռովիր. իսկ բար-

կասիրտը այնչափ կը կատղի որ ոչ միայն իր ծնողաց և մեծաւորին դէմ կըխօսի. այլև ՝՝՝ դէմ հայհոյութիւն կընէ, և ինք զինք խածնելով կըվիրաւորէ։

Շատ անգամ փուճ բանով հին բարեկամը կը կորսընցնէ. ոչ մեծ կը նայի ոչ պզտիկ. ոչ բարեկամ և ոչ ազգական. ոչ հոգի և ոչ հաւատք. զի բարկութիւն ախտով կուրացեր է։

Չեզահոգին պարապ տեղը չի բարկանար. միայն հարկաւոր և պատշաճ տեղը չափով. որպէս զի անզգայ չերևնայ։ Այլև սաստիկ խօսքով խրատ կուտայ, և կը հասկըցնէ, որ նորէն արհամարհութիւն չընէ։ Ինչ կը ջանայ մարդու մը վիշտ և նեղութիւն չի տայ. միայն անոյշ վարմունքով կը յաղթէ ամենուն։

Իբր զի՝ շատ մեծ յաղթութիւն է՝ բարկութեան յաղթելը։ Մասաուն վարպետները միշտ իրենց աշակերտներուն այս խրատը կուտային, թէ բարկութիւնը չափի տակ դիր պահէ։

Ունկէս ընելու է։

121. Երբեմն բարկասիրտ մարդ մը կը տեսնես ասանկ զարհուրելի գազան դարձած, և հեզահոգի մարդ մը անոյշ և սիրելի. պէտք է որ դուն քեզ գաս ու սանձես բարկութիւնդ գազանը; և հեզահոգիին հետևիս, որպէս զի այս գազան ախտը քեզի հետ չի մեծնայ։

Անոյշ և քաղցրաբարոյ մարդկանց հետևելու է, որոնք այլոց սիրտը կը շինեն և կը շահին. մինչև ամենուն սիրելի կըլլան։ Ահա մարդուս վայլածը այս է.

Ուրեմն արթուն կեցիր որ բարկութիւն ախտը չաձի, և հեզութիւնն ըլլայ քեզ երկրորդ բնութիւն։ Գանա կարգի մէջ պահես քեզ. որպէս զի ամէն բանի մէջ միակերպ մնաս և չայլայլի սիրտդ փուչ մուչ բաներով։

Ընկերութիւնդ մէջ անձուռնի բան չի խօսիս, և մանաւանդ այ անձառելի անունը պարապ տեղը չյիշես։ Բարկութիւնդ երդում չի հանես բերնէդ, և գէշ խօսք ամենևին չելլէ բերնէդ, որ շատ անշնորհք բան է։

Երբոր կը տեսնես ուրիշին պակասութիւնը և բարկութիւն ախտը, Ջանա որ դուն չընես։ Պ.յլոց պակասութիւնը քեզ խրատ ըրէ։

Եւ ջլլայ թէ բերնէդ յիշոց (քիւֆիւր) հանես. որ շատ մեծ կոշտութիւն և մեծ ամօթ բան է. թէ՛ ոյ դէմ է, և թէ՛ մարդկութիւն. թէ՛ անշնորհք է և թէ՛ մեղք։

Ինչութիւն առաջ կուգայ գութ ունենալ ծնողաց և աղգականաց վրան, ողորմիլ տնանկին։ Ուստի Ջանա որ օր ըստ օրէ աճի սրտիդ գութը ամենուն վրան։

Ողորմածեղիր աղքատին. ներող եղիր պակասաւորին. ցաւակից եղիր տկարին. անոյշ եղիր քեզի հետ ծանր խօսողին. նաև բարի խօսէ չար խօսողին։ Պ.սով կըլլաս մարդ կատարեալ, հեզահոգի և քաղցրաբարոյ, սիրելի և աղնուական։

Պատմութիւն։

Պ.եղիոս Ճարտասանը խիստ բարկասիրտ մարդ էր։ Որ մը այնչափ բարկութիւն ելաւ՝ որ սկսաւ բերնին եկածը զուրցել և հակառակաբանել։

Յոն գտնըվեցաւ մէկ բարեկամն՝

որ շատ հեզահոգի ըլլալով ամէն խօսքին պատասխան կուտար թէ այդպէս է։

Ինչափ հեզութիւն ըրաւ այս մարդն՝ որ գեղիոս չի համբերեց, ու մեծաձայն կանչեց, թէ մէկ դէմ բանմ՝ ալ գուն զուրցէ, որ երկու մարդ ըլլանիս հասկընանք։

Սակայն անոր հեզութէն ամբընալով շուտ մը հանդարտեցաւ. բարկութիւը թողուց ու սկսաւ մարդու պէս անոյշ խօսիլ. ինչպէս կը պատմէ սենեքայ փիլիսոփան։

Բարկութէ ախտն է՝ վայրենի գազան,
վայրենի կընէ՝ մարդն ընկերական.
Դէմքն է սոսկալի՝ աչքն հրոյ նման,
բերանէն կը թափէ՝ անվայելուչ բան։
Մեռցուր այս գազանն՝ երբ քեզ կը մօտի,
ջըլայ խառովիս՝ ինչ որ հանդիպի.
Ամէն առթի մէջ մարդն հեզահոգի.
հեզ է և խոնարհ՝ շուտ չի փոփոխի։

ԱՌ. ՀԱՄԱՐ

Ի՞նչ է համբերութիւն։

122. Համբերութիւն է անանկ առաքինութի, որ ամէն նեղութի թե-

թեւցնելով համ և անուշութիւն մը կըբերէ կրողին։ Որովհետև մարդս ընկերական ըլլալով երբեմն իրարմէ նեղութիւն կը կրէ, ահա ասոր դեղն է համբերութիւն։ Այսով ուրիշին պակասութիւնը թեթև կերևնայ. եթէ ծանր բան մը լսէ և տեսնէ, միտքը կը գնէ թէ ես ալ ուրիշներուն շատ ծանրութիւն տված եմ, բայց անոնք համբերելով զիս շահեցան։

Այս առաքինութիւնս կըսկըսի զգուշանալ որ մարդու նեղութիւն չի տայ և վիշտ մը չի բերէ թէ՛ խօսքով և թէ գործքով։ Այնթէ սխալմամբ մէկին սիրտը ցաւցընէ, շուտ մը խոնարհելով թողութիւն կուզէ. և այսպէս թէ՛ ինքը կը շտկըվի, և թէ ընկերը։

Այսպէս եղան երևելի մարդիկ. որ մտքերնին դրեր էին թէ մարդ ենք՝ մարդկային բանը մեզմէ օտար չէ. ուրիշին որ եղաւ, մեզ ալ կրնայ ըլլալ. ուրիշն ինչպէս կը համբերէ, մենք ալ պէտք է համբերենք։

Սոկրատ փիլիսոփային ծառան օր մը սաստիկ վշտացուց ՝ուրը, որ պատասխան տվաւ թէ հիմա քեզ չարաչար կը ծեծէի, թէ որ բարկացած չըլլայի։

Ահա այսպէս բարկութիւն ատենը լուռ կենալու է, և ամէն բանի պատասխան տալու չէ. շատ բանը չլսելու, և չի տեսնելու է։

Ինչ որ ինչաս ալ եղած ըլլայ՝ սաստիկ խռովելու չէ. այլ հանդարտութիւնը Հարը գտնելու է։ Ուրանց կրնց պէտք է պատասխանել. որպէս զի դիմացինը յաղթուի նկուն ըլլայ։

Ուրաքինի մարդուն կը վայլէ, որ մէկէն նեղութիւն քաշած ատենը չէ թէ միայն չայլայլի, հապա անոր ցաւակից ըլլայ, ինչպէս հին փիլիսոփաները կընէին։

Պէտք է վշտանալ չէ ինչաս քաշելուն համար, այլ ուրիշը պակասաւոր ըլլալուն համար. որ անքաղաքավար վարմունքով անկատար մնացեր է, ոչ բարեկամ գիտէ, և ոչ ազգական, քիչ մը բանով այնչափ տարուան բարեկամն ու եղբայրը կընախատէ։

Ինանկ մարդը չի կրնար մտածել թէ ընկերս եթէ միանգամ զիս վրշտացուց՝ բիւր անգամ զիս պատուեց, ես հիմա փուչ խօսքի մը համար ինչպէս այնչափ աղէկութիւնը մոռնամ։ Ինչ որ ասանկ մտածէ, հարհաւ կըհամբերէ։

Ի՞նչ է անբաղդութիւն։

132։ Որովհետև բաղդն է փոփոխական, շատ անգամ մարդս անբաղդութիւնի մէջ կիյնի։ Այիս մէյմը կը փայլի, մէյմը կը խաւարի. մէյմը կը մեծնայ, մէյմը խեղճ կըլլայ. զի բաղդը կերթայ կուգայ։ Հա՛ այս պատճառաւ մարդուս շատ հարկաւոր է համբերութիւն։

Որչափ մեծ խեղճութիւն պատահի, պէտք է մտածել թէ փոփոխական է աշխարհք, ասանկ ալ չի մնար, շուտ կը փոխվի։ Ինչպէս թէ որ մեծութիւն մը գայ, պէտք չէ մեծամտիլ և ուրիշն արհամարհել. զի շուտով պիտի փոխվի անցնի։

Երեմն ոչ մեծութիւնը վրա հպարտանալու է, և ոչ թշուառութիւնը վրա յուսահատելու է. զի է անցաւոր. ինչպէս կերթայ, անանկ ալ կուգայ. և ինչպէս կուգայ անանկ ալ կերթայ, թէ՛ մէկը և թէ՛ մէկալը։

Համբերող մարդիկ կենդանի հաւատքով կը յուսան թէ շուտով պիտի անցնի այն նեղութիւնը, ոչ երբէք կը տրտնջան յուսահատելով։ Իսկ թուլահաւատ տկար մարդիկ քիչ մը

բանով կայլայլին ու շուտով կըսկը-
սին տրտնջալ, և յուսահատիլ. որ
է մեծ անկատարութիւն և անհաւա-
տութիւն։

Քանի՛ մարդիկ ձախորդութիւն
տեսնելով հալեցան մաշեցան, մին-
չև գերեզման մտան. քանի՛ տղաք ու-
րիշէն նախատինք մը լսելով, ան-
համբերութե՛ ցաւի տեր եղան, որ էին
անկատար։

Ա՛հա անհամբերութեան պտուղը,
ա՛հա բաղդին տված մեծութիւնը։ Ա՛լ
աղէկ չէ՞ր քիչ մը համբերելով ան-
ցընէր նոյն նեղութին ու անանկ ո-
ղորմելի չըլլար։

Քանի՛ քաղաքներ և տներ փլան
անհամբերութեամբ. թէ որ քիչ մը
համբերած ըլլար պզտի խօսքին ու
պատասխան չի տար, այնչափ կռիւ
մեղք և կործանմունք չէին պատա-
հեր։

Ա՛հա այս է մեծ յաղթութիւն և
մեծութի՛ համբերողին, որով կը տի-
րէ աշխարհքին վրա, ինչպէս գրքե-
րը կը քարոզեն։

Ի՞նչ կերպով կըլլայ։

124. Ինչպէս ուրիշ առաքինութիւնները, այսպէս ալ համբերութիւնը առանց կրթութեան չըլլար. պէտք է մանկութէն կրթութիւն ընել, լուռ կենալով, պատասխան չի տալով, չի յուսահատելով, և ջարի ջար չի հատուցանելով։ Անաւանդ՝ Ջանալու է համբերութիւն այլոց բարի կամենալ և սիրաը շահիլ. որով կը յաղթի թշնամին, և սատանան կամըչնայ։ Հա՛ այսպիսի յաղթութիւն կը-փառաւորի մարդ։

Լուրեմն Ջանա՛ այսպէս ընել. և ձախորդ բաղդիդ համբերի՛ յուսալով ՝ուծային օղորմութեան։ Եւ դուն միշտ Ջանա՛ աշխատի՛ ժամանակդ պարապ մ՚ անցընէր, քու ստեղծողդ քեզ չի թողուր, օր մը կը հասնի քեզ։

Այի՛ որ աշխարհքիս ձախորդ դիպուածներուն մէջ խոհեմութիւն քեզ կառավարեսառանց յուսահատելու. մինչև որ յաջողութիւը գտնես։ Ա՚ն զի բաղդին փոփոխութիւը կետի մը վրա կեցած է։

Երթուն կեցի՛ր և աշխատաւոր է-ղի՛ր որ առիթը չի կորսընցնես. մա-

նաւանդ ձախորդութիւնէ մէջ։ Սանկ ատեն մեծերէն և խելացիներէն խրատ ուզէ. որպէս զի ազէկ ճամբայէն չի զատուիս, ու անյաջող ճնալով անպիտան չըլլաս։ Յետոյ քաշածը քեզ խրատ ըրէ, շուտով ազէկուն կը գտնես։

Երբոր մէկէն շնորհք մը կը խնդրես ու չընէր, և արդիւնքդ բանի տեղ չի դնելով երեսդ չի նայիր, ու անարժանը քեզմէ աւելի կը պատուէ. մի խռովիր, այլ համբերէ. այս ձախորդութիւնն ալ շուտով կանցնի, և քու արդիւնքդ կը յայտնըվի։ Բանի գացող մարդուն ոտքը պարապ չերթար կըսեն. միայն թէ համբերութիւնդ և երկայնմտութիւնդ սպասէ, որ պտուղը վայելելով մեծնաս։

Պատմութիւն

Մէկ տղայ մը միշտ Օ. Էնան փիլիսոփային դպրատունը կերթար բան սորվելու։ Երբոր տուն դարձաւ, հայրը հարցուց, թէ ինչ սորվեցար փիլիսոփայէն։ Նա ալ պատասխան տըվաւ, թէ սորվածս գործքով ցըցընել սորվեցայ։

Օր մը հայրը բարկացաւ նոյն տը-

զուն. բայց տղան լուռ և անայլայլելի մնալով՝ աւելի սաստիկ բարկացաւ հայրը. մինչև սկսաւ չարաչար զարնել վիրաւորել առաքինի տղան, որ բերան չի բացաւ, այլ սիրով կը համբերէր։

Յրբոր ամէնքը կը զարմանային համբերութիւնը վրան. տղան ըսաց թէ ահա դպրատունը այս սորվեցայ, որ հօրս բարկութիւնը համբերեմ։

Թէ բարիք բաղդին՝ քեզ առատանան,
չափով վայլէ որ՝ անպտուղ չըլլան.
Եթէ գիպուածով քեզմէ հեռանան,
մի շատ վշտանար՝ զի կերթան կուգան։
Մի հոգաբ մաշիր՝ վասն անցաւորին,
Ջանա ունենաս՝ որչափ քեզ պիտին.
Թէպէտ գանձ ոսկի՝ առատ ունենաս,
բոլորը պիտի՝ ձգես հեռանաս։

ԼԲ. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս կըլլայ մարդս հաստատ։

125. Բաղաքական ընկերութիւնմէջ հարկաւոր ըլլալով հաստատութիւնը՝ գիտունները կը պատուիրեն, թէ մանկութէ պէտք է կրթուիլ ընել այս բանիս համար։

Նախ և առաջ պէտք է առանց մտածելու բան չընել. և ամէն բանին վախճանը դիտելով սկսիլ. ոչ զի շուտով զղջանալով մէկը ձգել մէկալին փակչիլ չըլլայ. որ է մանկան և կնկան բնութիւն։ Նոր պէտք է ըլլալ, որ սկսածը կատարէ զեղեցիկ կերպով, և ամենուն հաճնեցընելով։

Ամէն նոր բան տղոց ախորժելի է. անոր համար տղան քիչ ատենին մէջ շատ կերպ կը փոփոխի։ Իսկ խոհեմ ծեր մարդը շատ դժուար կը փոխի միտքը։ Որը զի՝ տղան առանց մտածելու կըսկըսի, ծերը նախ լաւ կը մտածէ, ետքը ձեռք կը զարնէ. նախ կը խորհի, ետքը խօսք կուտայ. ուստի հաստատ կը մնայ։

Ով որ մէկը մանկութենէն այս բանիս կրթութիւն չընէ, միշտ անանկ կը մնայ. ինչ բան որ սկըսի անկատար կը թողու. անդադար կուզէ նոր բան ընել. խօսք կուտայ՝ խօսքին վրա չի կենար. մէկ բանէն մէկալը կը ցաթիկէ։

Նոր համար չաջողած կը մնայ ամենևին պատիւ չունենար. մեծ աներ կը խոստանայ, ու բան մը չի

կատարէր. որովհետև իր բնութիւնն է անկատար, և անկատարութիւնն իրեն բնական ըլլալով՝ բնաւ կատարեալ բան մը չունի։

Ուստի ասանկ անհաստատ մարդիկ ծովուն ալիքներուն կը նմանցընեն, որ ամէն հովէ շարժելով՝ միշտ փոփոխութիւն մէջ է։

Ինչ է պատճառը։

126. Անհաստատ ըլլալու պատճառն է փոփոխամտութիւնն, որ անկարգ սովորութէ առաջ կուգայ. զի տղուն բնութիւնը միշտ անկատարութեան կերթայ, և նոր բանը աղէկ կուգայ իրեն։

Անոր համար երբոր սովորութիւն կընէ ուզածն ընել, և իր ախորժակին հետևիլ, հարկաւ այս ախտին կը տիրանայ. մինչև ամէն բանի մէջ անհաստատ կը մնայ, որ մեծ ամօթ է մարդկութեան։

Արդա լեզուով կը կապվի, և խելքով կը կառավարվի. երբոր խօսքին և գործքին վրա հաստատ չէ, յայտ է թէ անբանօրէն խօսեր և գործեր է առանց մտածելու. որ է մարդկութիւնը փոխակերպել անբա-

նութիւն. ասանկ մարդիկ չէ թէ լե
զուէն, հապա եղջիւրէն կապվե
լու են։

Այս բանիս վրա հոգ կրթութիւ
ն ընող մարդը միշտ ծաղր կըլլայ, և
ոչ կրնայ հաւատարմութիւն ստանալ։
Շատ անգամ ալ սուտ կը խօսի. ի
րեն ջնկած խօսքերու մէջ կը խառ-
նըվի, և մեծ բաներու մէջ կը նետ-
վի։ Այնչափ անկարգ կըլլայ, որ ա-
մէնքը իրմէն երես կը դարձընեն։

Անի նախատինք են այն տղուն,
որ մեծին քով հաւատարմութիւն չու-
նի. քանի՛ ամօթ է՝ երբոր իր լեզ-
ուվը ծաղր կըլլայ ու կը նախատվի։

Ինոր համար հաւատարմութիւնը
այնչափ մեծ է, որ աշխարհքիս գան-
ձը չի կրնար հաւասարիլ. զի մարդ-
կութեան պատիւն անկէ կը կախվի։
միայն անով կրնայ համարումն ունե-
նալ, և մարդու գործք կատարել։

Սակայն երբոր խօսքին և գործքին
վրա հաստատ չէ, ինչպէս կրնայ
պատիւ և անուն ստանալ. ինչպէս
կրնայ կատարելութիւն հասնիլ, նաև
միակերպ հաւատքին ծառայել հաս-
տատութիւն։ Ինչնարին է։ Ուրեմն
անհաստատ մարդը սուտղրոյց՝ խա-

բերքայ՝ անհաւատարիմ, և անհաւատ կըլլայ։

Ի՞նչ է անհաւատութիւն։

127. Անհաւատութիւնն է ծնունդ անհաստատուէ. զի անհաւատ մարդիկ թէ՛ անհաստատ կըլլան, և թէ ախտաւոր. որ կուզեն հաւատքն ալ իրենց դարձընել, կամ թէ բոլոր հաւատքը վերցընել։

Սակայն կը նային որ հաւատքը միշտ հաստատ անյաղթելի է, կըսկըսին անհաստատութիւնէ մէկ բանը ձգել մէկալին հաւանիլ. ուզած բանին հաւատալ, չուզածը ձգել։ Երբեմն մէկ աղանդին հետևիլ, երբեմն մէկալին։

Այ երջապէս միշտ երերեալ տատանեալ ըլլալով կայենի նման՝ այ երեսէն ընկած ախտաւոր կը մնան։ Որոր համար ոչ հաւատարմութիւն ունին և ոչ մարդկութիւն. անբան անասունի պէս իրենց չար սովորութիւն է իրենց հաւատքն ու օրէնքը։

Երդ՝ ինչպէս որ մանկուէ ատենդ այս չար ախտը ոտքիդ տակն առնես յաղթես՝ միշտ հաստատ կենալով ամէն բարի բանիդ մէջ։ Որանկ

հանգարտ մտածելով սկսէ՛ գործքդ որ անկատար չի թողուս, և միշտ օգուտ մը ունենայ կամ քեզ, և կամ ուրիշին։ Այսև խօսքիդ վրա հաստատ կեցիր որ ծիծաղական չըլլաս։

Բայց հաստատութե՛ալ մէկալ ծայրը կայ, հոն չանցնիս. կան մարդիկ որ ըրածնին հաստատութի՛ կըկարծեն, բայց կամակորութիւն է։ Այս լաւ մտածէ ըրածդ. բայց թէ որ սխալմամբ անօգուտ կամ վնասակար բանի մը ձեռք զարկած ըլլաս, մ՚ամբշնար փոխել միտքդ։ Ցեղ կայ որ միտքը փոխելը՝ աւելի հաստատութի՛ է մանաւանդ, կըսեն իմաստունները։

Պ՚տածէ՛ որ մարդ ես դուն օրէնքի տակ ծնած, և հաւատքով լուսաւորած. չըլլայ թէ անհաւատի սկըզբունքով միտքդ խաւարես. չըլլայ թէ ախտաւոր և խաբեբայ մարդիկ քեզ ապականեն։

Հիմա է ժամանակդ հաստատ ըլլալու, հիմա բնութե՛դ յաղթելով ամէն բանդ կարգի կանոնի տակ պիտի դնես, հաստատ հաւատարիմ և հոգևոր ըլլալով. մինչև երջանիկ և փառաւորեալ մարդ ըլլաս։

Կապիկի նման անհաստատ և փոփոխամիտ չըլլաս. միշտ մարդու վայլածն ընես միակերպ և անփոփոխ։ Վասն զի ինչպէս որ ծծ չի փոփոխիր, ասանկ ալ հաւատքը անփոփոխ է։

Պատմութիւն։

Ընկերթ պատանի մը փոփոխամիտ ըլլալով միշտ նոր բան կը սիրէր, և ամենևին բանի մը մէջ հաստատ չէր. մինչև աղանդաւորներուն հետ կենակցելով անհաւատ եղաւ. և ով որ կը տեսնէր՝ մէկէն վիճաբանելով կուզէր անհաւատութիւն հաստատել։

Օր մը յանդգնեցաւ դիտունի մը առջին սկսաւ վիճաբանել։ Ընալ իրեն ըսաց. եթէ զուրցածներդ իրաւ ըլլան, ու մարդուս հոգին ոչինչ դառնայ, մենք բան մը չենք կորսընցներ, կանցնինք կերթանք։ Այց թէ որ մեր խօսքը իրաւ ելլէ, որ գրքերը չեն սխալիր. դուն ինչ ընես պիտի, և այն յաւիտենական դատապարտութեան ինչպէս պիտի դիմանաս։

Այս խօսքով պապանձեցաւ անըզդամը, և շուտով փախաւ անկէ։

Աբգ միշտ կը վայլէ՝ մարդկային բնութիւն.
ամէն բանի մէջ՝ ունենայ վախճան.
Հաստատ հաւատքով քաջ հաւատարիմ,
կատարել բարին՝ ինչպէս է արժան:
Վայ անհաւատին՝ անհաստատ անքան,
որ ամէն հովէ՝ է փոփոխական.
Կարծէ թէ ասանկ՝ դիտուն կերևնայ,
չեյտէ թէ անարգ՝ մարդ է անպիտան:

ԼԳ. ՀԱՄԱՐ

Ինչպէս պէտք է երդը շահիլ:

128. Ընկերութիւն օրէնքը կը պահանջէ որ՝ ոչ միայն ուրիշին տրուած ներդութեանը համբերել, և չի խռովիլ, այլև ներում ընելով ընկերը շահիլ, և բարի խրատներով իմացում տալ, որ այն պակասութիւնը ուրիշ անգամ չընէ:

Դաղանային բնութիւն կը վայլէ՝ քիչ մը բանով մեծ մեծ բաներ հանել, և ընկերին պակասութիւնը ամենուն յայտնել. որպէս զի լսողները իրաւունք տան իրեն:

Այսով շատ անգամ պակասաւորը աւելի կը կատղի, ու ծածուկ ըրած պակասութիւնը յայտնի կընէ՝ մէկա-

լին արհամարհանք կամ (նիսպէթ) ըլլալու համար, որ է կործանումն ընկերին։

Եթէ որ տեսնես մէկ բժիշկ մը, որ հիւանդին դեղ ընելու տեղը կը վիրաւորէ, ինչ կըսես։ Այսպէս են անոնք որ ընկերին կիրքը բարի խրատներով մեղմացնելու տեղը, կծու խօսքերով չարաչար կը կատղեցնեն, և ջնելու բանը բռնի ընել կուտան։

Բանի տղաք ծուռ և սուտ խօսքեր տանելով բերելով մեծ մեղքեր հանելու պատճառ եղան, որ շատ խելացիներ չի կրցան մարելու։ Տես թէ որչափ մեծ չար է հետաքրքրութիւն ընելով բան հասկընալ, և առանց քննութիւն այլոց հասկըցնել։

Որչափ վնասակար է ընկերութիւն մէջ՝ լսածը մէկէն ուրիշին ականջը լեցընել, և այսպէս մեծամեծ ատելութիւններ, և չարաչար մեղքեր պատճառել։

Այ այն տղուն որ ասանկ չար սովորութեց հետևելով մանկութէ մեղաց գործիք կըլլայ։ Այ այն ծնողացն որ զաւակնին այսպիսի ախտի մէջ կը տեսնեն ու չեն հոգար, և չեն պատուհասեր. ոնգ զի մէյմ՝

ալ հետաքրքրութիւն չընեն. և խօսք տանելով բերելով չարի պատճառ չըլլան, որ է բանսարկութիւն և սատանայական բնութիւն։

Ինչ է խրատը։

129. Խրատն է առջի դեղ մանկական պակասութեց. բայց պէտք է ըստ տեղւոյն խրատել անոյշ խօսքերով։

Իսկ լսողը պէտք է լաւ միտքը պահել. չի թէ մէկ դիէն լսել, մէկալ դիէն մոռնալ. կամ մեծին խրատը բանի տեղ չի դնելով արհամարհել. որ է չար նշան։ Ընբժշկելի կըլլայ ախտը երբոր դեղը օգուտ չընէր։ Ի՞նչ է հիւանդը երբոր դեղն առնելով աւելի դէշ կըլլայ։

Շատ մեծ վնաս է երբ տղայ մը խրատվելով աւելի կը չարանայ, ու կամակորութիւն դէշ բանէն ետ չի կենար։ Եւ երբեմն ուրիշէն աղդարարութիւն մը լսէ, մտիկ չընելէն 'ի զատ կը խռովի, ու աղէկն ընելու տեղը՝ չար կը գործէ, և առանց շըտկըվելու միշտ դէշը կերթայ։

Մէկ տղայ մը հարցուց փիլիսոփայի մը թէ շատ տեղեր և շատ

դպրոցնեը ժուռ եկայ, ինչու համար բան չի տրվեցայ։ Պատասխան տը-վաւ, թէ դուն քեզ հետդ պտրտցնելուդ համար այդ չափը մնացիր։

Երբոր մէկը իր կամացը կը հետևի, ու մեծին խրատը մտիկ չընէր. այլ միայն իր խելքին հաւնածէ, ուր որ երթայ և ինչ որ ընէ՝ աղէկ բան չի կրնար ստանալ, և միշտ անկատար կը մնայ։

Շատ ճշմարտակար բան է տղոց՝ ուրիշին կամքին հակառակիլ (ինատ ընել) որ է ընդդէմ մարդավարութիւն. որովհետև տղուն ծնօղքը վարպետը և բարեկամը միշտ իրեն աղէկութիւնը կուզեն։

Ուրեմն երբ կը Հանչնայ թէ անոնց խրատը իրեն օգտակար է, պէտք է որ մէկէն հլու և հնազանդ ըլլայ, ու խրատին հետևի խոնարհութիւն։

Ինոր համար խրատը գործք ողորմութիւն կըսվի, և ազգարարութիւնը եղբայրսիրութիւն մատն է. որ կը պարտաւորէ թէ ամէնքն ալ բարի և առաքինի ըլլան. իրար շահին. իրարու սիրտ և խորհուրդ տան՝ աղէկին հետևելով և գէշին հեռանալով։

Ընկերությունը ինչ բանի նման է։

130. Գիտուններին անխրատ տղան կը նմանցընեն անպտուղ գետնի, որ քանի փորես, աշխատիս ու ցանես՝ ամենևին չի բուսնիր և պտուղ չի բերեր։

Եթե ընկերէն ալ եղբայրական ազդարարութիւն մը լսէ, մէկէն կը զայրանայ և ամբարտաւանութիւնքը զինքը անկէ վեր կը դնէ։

Իսկ խրատված մարդը պտղաբեր գետնի կը նմանի, որ ատենով առած սերմանքը կը բազմացընէ, ու պտուղ կուտայ։

Եթէ ընկերին վրայ ծանր յանցանք մը տեսնէ, չի վազեր ուրիշին պատմելը. այլ զգուշութիւն իմաց կուտայ, և համբերութիւն կը շահի ընկերը։

Ուրեմն ջանա դուն ալ այսպիսի եղբայրասիրութիւն այլոց պակասութիւնը գոյես, խրատ տաս շահիս։ Եթէ որ դուն ալ ուրիշէն խրատ մը լսես, աղէկ պահես սրտիդ մէջ և զգոյշ կենաս։

Ծանր խօսք և յանդիմանութիւն ալ լսես՝ օգտակար Ճանչնալով՝ չի խռովիս. այլ անոյշ դէմք և զուարթ

ըլլաս, ու սիրով ընդունիս։ Պէտք է
լեզի ըլլայ գեղը, բայց առողջութի
կուտայ և անկատարութէ կը հանէ
ու կատարեալ կընէ։

Բեզ բան գիտցողի տեղ մի դներ,
և մեծերուդ առջին այլոց խրատ մի
տար. դուն ջանա որ ծերոց խրատը
պահես, և կատարեալ մանկանց
գործքը օրինակ առնես։ Իսկ քեզմէ
պզտիկին բարի ձամբայ և բարի օրի-
նակ տալով շահիս։

Հուսկ յետոյ՝ որ լուսաւորչայ խօս-
քը աղէկ միտքդ պահէ, թէ շնորհա-
լից մտքին քիչ խօսքը բաւական է.
իսկ անիրատին՝ աշխարքին բանը խօ-
սիս օգուտ չունի։ Ինչուն եզերքը
ինչ որ ցանես չի բուսնիր. վասն զի
աւազ է անպտուղ, միշտ խռովութէ
և ալէկոծութէ մէջ ըլլալով։

Պատմութէ։

Բաւզանիաս սպարտացին՝ ամե-
նևին խրատ չէր ընդունէր, և ամբար-
տաւանութէ միշտ իր կամքը կուզէր
կատարել։ Այս ախտը այնչափ զօ-
րացաւ որ զօրապետութէ ատենը ի-
րեն հայրենեացը մատնիչ եղաւ։

Բայց բանը իմացվեցաւ. երբոր

պիտի բռնէին զինքը՝ փախաւ կռատունը մտաւ։ Ընատեանը վճիռ եղաւ որ կռատանը վրան բանան և դուռը քարով փակեն, որ անանկ հոն սատկի։

Ըսոր մայրը ողջ էր. լսածին պէս քար մը առաւ գնաց կռատանը դուռը կեցաւ. ըսաց որ առաջ իմ քարս դրէք ու փակեցէք, ինձի մատնիչ զաւակ պէտք չէ։ Ամէն որ իմ խրատներս պահած ըլլար, հիմա ասանկ անարգ մահուամբ չէր կորսըվէր։

Երբոր իմաց տալ՝ կուզես ուրիշին,
անոյշ խօսքերով՝ գէր պակասն առջին.
Ըսլայ թէ ինդաս՝ պակսուլթէ վրան,
վախցիր որ չի գայ՝ քու գլխուդ նոյն բան։
Ջանա միշտ այլոց՝ օգտակար ըլլաս,
շահէ ընկերներդ՝ որչափ որ կրնաս։
Դուն անձիդ համար՝ չես եղած միայն,
հապա վասն այլոց՝ վասն ընկերուլթեան։

ԼԴ. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս է ծանրաքլուխը։

131. Ծանրաքլուխ մարդը ամէն բանի մէջ ազնուական ծանրուի մը կունենայ. շատ կը լսէ, քիչ կը խօսի.

և ամէն բան մտածելով և չափելով կընէ և կը զուրցէ։

Որ շատ հարկաւոր է մարդուս, զի շատ անգամ լեզուովը կը փառաւորի ու կը սիրվի, շատ անգամ ալ նոյն լեզուով կը դատապարտի, և անպատիւ կըլլայ անխոհեմ խօսելով։

Յանի՛ տղաք հեռուէն տեսնըվելով հրեշտակ կերևնային. բայց երբոր մօտեցան, ու համարձակութիւն սկսան խօսիլ՝ բոլոր համարումին կորսընցուցին։

Յանի՛ մարդիկ անանի կերևնային, բայց երբ ընտանութիւն սկսան իրենց ծանրութիւնը կորսընցնել, մէկէն յայտնի եղաւ ինչ ըլլալնին։

Դրանի՛ թէ ասանկ մարդիկ մարդու հետ համարձակ բարեկամութիւն չընէին, որ աւելի համարում կունենային, ու չար օրինակ այլոց չէին ըլլար անկարգ խօսքերով.

Այս պատճառաւ գիտունները կը հաստատեն թէ մարդուս բնութիւնը բանական ըլլալով ամէն բան կրնայ ըլլալ, թէ որ մանկութենէն զինքը կրթէ, ու քիչ և խոհեմ խօսի, ծանրապլուխ և պատուաւոր կենայ։

Լակ եթէ անխրատ մնալով իր

խօսքին և խելքին հաւնի, ու սկսի ամէն խօսքի և բանի մէջ նեռվիլ, չափէն վեր բան խօսելով մեծերուն առջին, և ամէն մարդու հետ համարձակ ըլլալով, հարկաւ թեթևամիտ՝ շատախօս և անարդ կըլլայ։

Յ. Յոպիսի մարդը ախտաւոր կըլլայ, ու մէկին մէկալին վրայ բան կը խօսի. իր բանը կը ձգէ՝ այլոց գործքին դատաւոր և քննիչ կըլլայ. չարած մարդուն վրա բաներ կը յարմարցընէ կարծիքով, և շատախօսութիւն կը բամբասէ նախատելով։

Ի. Հա այսպէս մանկութենէն ծանրութիւն չընելուն համար, մեծնալու ատենը այնչափ ախտաւոր և չարախօս կըլլայ. մինչև ուրուրեց բաներու վրա ալ դատաստան կը կարէ, ու չար լեզուովը մեղաց մէջ կը մնայ. զի թեթև մարդը մեղքէ ազատ չէ։

Ի՞նչ է շատախօսութիւնը։

132. Շ ատախօսութիւնը մարդավարութիւնէ դէմ ըլլալով միշտ անարդութիւն կը բերէ. ուստի շատախօս մարդը զինքը Հարտասան և խելացի գիտունի տեղ դնելով՝ մէկ խօսքին տեղը քառասուն բան կը խօսի ծուա-

շիտակ. և ուրիշներուն քերնէն խօսքը կը խլէ, ու մարդու քերան բանալ չի տար։ Կուզէ որ մինակ ինքը խօսի, և ուրիշները մոխիկ դնեն։ Ահա այսպէս թեթևամիտ և զզվելի կըլլայ, մինչև ամէնքը կը փախչին իրմէն։

Անանկ մարդիկ այնչափ թոյլբերան կըլլան, որ ինչ լսեն, մէկէն կուզեն աշխարհքի յայտնել. մարդկը փնտրուեն որ սուտ իրաւ այլոց բանը պատմեն, և ուրիշին ծածուկ գործքը ամենուն յայտնեն։

Այսչափ թէ ուրչափ գարշելի սովորութիւն է այս, որ թեթևամտութէ առաջ կուգայ։ Եւ որ մանկութէ ծանրաբլուխ սորված ըլլար՝ այսպէս չէր ըներ և գարշելի չէր ըլլար։

Ծանրաբլուխ տղան այլոց վրա խօսելու տեղը, զինքը կը դիտէ, որ աւելորդ խօսքով այլոց առջին պըզտիկ չինի ու ծաղր չըլլայ։ Ինքն ուրիշին բանը քննելու տեղը՝ իր գործքն ու խօսքը կը քննէ, և անանկ ուշադրութիւն կը խօսի, որ ծաղր չըլլայ, և թեթևամիտ չերևնայ։

Լաւ կը հասկընայ, որ եթէ ասանկ լաւ սովորութեանց չի հետևի, մեծնալով շատախօսուն ախտը կառնի.

անանկ որ այլ չի կրնար ծանրութիւն ընել. միշտ սուտ և պարապ խօսքերով, նաև սուտ պարծանքով անպատիւ կըլլայ։ Ը. Յոպիսինեերուն կըսեն թէ բոլոր մարմինդ լեզու դարձեր է։

Ը. սկէ կը հետևի սուտ պարծիլ, և իր բանը մեծցընել. մինչ զի՝ շատխօսուիը իրեն գործիք ընելով բերնին եկածը դուրս կուտայ։ Իրեն անարդուի բերելու բանը՝ պարծելով կը պատմէ, ամէն գովեստ իր վրա դարձընելով։ Վերջապէս միշտ բերանը պարծանք և մեծութիւն է։ Ը. սանկ մարդը շատ աղէկ էր որ քնաւ խօսիլ չգիտնար, ու միշտ լուռ կենար։

Ինչ է լռութիւն։

133. Լռութիւը անչան առաքինութիւ կըսվի. առանց աշխատանաց լուռ նստելով և մեծերուն խօսքը լսելով կըլլայ մտաւոր և ծանրագլուխ. զի որչափ քիչ խօսի և լուռ կենայ, այնչափ պատիւ կունենայ։

Ը. հա այս է շատխօսութիւ և թեթևութեան տեղը. որ մանկութէն պէտք է սովորութիւ ընել, ու անկատար չի մնալ։ Պիւթագորաս փիլիսոփան կանոն գրեր էր աշակերտներուն

որ հինգ տարի լուռ կենան. որպէս զի ծանրութիւն կատարելուն հետևին ու խելք սորվին։

Սակայն մեր տղոցը բաւական է որ ծանրագլուխ ըլլան ու խօսածնին գիտնան. առանց մտածելու բան չի խօսին. մտքերնուն խորհուրդը թեթևութիւն այլոց չի յայտնեն. նաև ուրիշին բանը առաջ բերելով դատարկաբանութիւն չընեն։

Իրաւի՝ տղոց դժուար է լուռ կենալ. որոնք կը կարծեն թէ քիչ խօսելով յիմար կերևնան. բայց չգիտեն թէ այս կերպով ծանրութիւն մը կըստանան. և ծանրութիւնը մարդս խելացի և ազնուական կերևցընէ։ Իսկ դատարկաբանութիւը թեթևամիտ և անխելք կերևցընէ. հիմա՝ որո՞ն պէտք է հետևիլ։

Ա.ըդ դուն ջանա լռութիւն և քիչ խօսքով ծանրագլուխ և խոհեմ երևնաս։ Ա.յլոց վրա բան չի խօսիս, և քու բանդ ամենուն չի յայտնես։ Այլ միշտ չափով ըլլայ կենակցութիւնդ ու խօսքդ. որպէս զի այլոց ձանձրութիւն չի բերես։ Ա.նակ եղիր որ խօսքդ լսողը համ առնէ, և նորէն քեզ տեսնել ուզէ։

Պատմութիւն։

Կրատէս Դիոգինեսի աշակերտը մանկութիւնն ծանրապլուխ և քիչ խօսող ըլլալով մեծ ուսումնասէր եղաւ։ Երբոր մեծցաւ կուզէր ունեցած մեծութիւնը ծովը թափել, ըսելով թէ ասոնք կրատեսի չի յաղթելու համար պէտք է կորսընցնել։

Սակայն այս ունեցած ապրանքը հանեց իր բարեկամին տրվաւ, պատուիրեց. թէ որ տղաքս թեթև և տը գէտ ըլլան՝ իրենց տաս. եթէ ծանրապլուխ և խնաստուն ըլլան, քեզի ըլլայ. զի խնաստունը բանի մը կարօտութի չունի։

Ահա սիրուն զարդ՝ պատշաճ մանկութիւն,
լուռ խոնարհ նստիլ՝ ազնիւ ծանրութիւն.
Կշռելով խօսիլ՝ պարկեշտ խօսքերով,
առանց հարցմունքի՝ չի տալ պատասխան։
Ծանրութիւն ասի՝ բարիք մը անչան,
ցանկալի կընէ՝ հոգին մանկական.
Ջանա ստանաս՝ և զարդ լռութիւն,
որ ծանրապլուխ՝ ըլլաս սիրական։

ԼԵ. ՀԱՄԱՐ

Ի՞նչպէս կըլլայ ուշադրութիւն։

134. Ուշադրութիւնը գլխաւորապէս իր գործքին և անձին վրայ ընելու է, արթուն ըլլալով և ամէն բան ատենին կատարելով։

Եթէ տղան սովորուի ընել իր բանին հոգ տանելու, և ուշադրութիւն գործելու, հարկաւ աղէկ բան ընող կըլլայ, և մեծութիւն ատենը կարգով կանոնով մարդ մը կըլլայ։

Սակայն շատ մարդիկ կան որ իրենց գործքը օտար բանի տեղ դնելով փուչ բաներու հետ կըլլան, և այլոց ձեռքը ձգելով կը մնասին։ Յայտ է թէ մանկուէն մտքերնին ցրված ըլլալով իրենց գործքին ուշ չեն դրած. անխոհեմ և անմիտ մնացեր են։

Դիտունները կըսեն թէ մարդուս խելքը ուր որ ըլլայ, ինքն ալ հոն կըլլայ, թէպէտ մարմինը ուրիշ տեղ է. զորօրինակ թէ որ դուն վարպետիդ առջին դաս կառնես, ու խելքդ գեղն է, դուն ալ գեղը կըլլաս. մի-

այն անմիտ մարմինդ հոն կըլլայ, որ բան մը չի կրնար ընել։

Որովհետև խելքով մարդ ես, չէ թէ մարմնով. ինչ օգուտ որ ականջդ միայն կը լսէ՝ առանց ուշադրութիւն, և խելքդ գեղեցը ժուռ կուգայ։

Այս պատճառաւ շատ տղաք տարինեբով դպրատուններբը կը մնան ու բան մը չեն սորվիր։ Շատ խրատներ և աքանչելի բաներ կը լսեն ու չեն իմանար. զի չեն ուշադրութիւն ըներ. իրենք հոն չեն, միայն անբան մարմինը հոն է։

Իսկ ուշիմ արթուն տղան պէտք է որ միշտ միտքը վրան պահէ, մանաւանդ հոգևորին և ուսման մէջ. որպէս զի ուշադրութիւնը բնական ըլլայ իրեն, ու մարդկութիւնը վրայէն չի հեռացնէ, միշտ իր վրա մտածելով. մինչև հասնի կատարելութիւն։

Այսպես ասով կըլլայ խոհեմ զգուշաւոր և իմաստուն. ասով լաւ կը ճանչնայ զինքն ու պակասութիւնը կը շտկէ։

Ինչ է հեպատրրուիւն։

135. Ընխելք մարդիկ իրենց գործքը կը ձգեն ուրիշին բանին ետևէ

կըլլան հետաքրքրութիւն. զի այլոց բանը քրքրելով, և հասկընալով ախորժ մը կունենան։

Ահա այս է հետաքրքրութիւնն որ միշտ ինքս կը բերէ, և շատ մեղաց պատճառ կըլլայ անօգուտ տեղը։ Որ բանի թէ հետաքրքիր մարդը իր անձին վրա ընէր։ Աւելի որ հոգ ընելով այլոց բանը կը գիտէ, եթէ իր անձը գիտէր, շատոնց կատարելութեան հասած էր։

Աւրիշին բանը քննելով իր մարդկութիւնը օտարին փոխ կուտայ, ու օտարին համար կը մտածէ. ինքը թափուր կը մնայ։ Սակայն եթէ իր բանին ուշադրութիւն ընելով միշտ աղէկին հետևի զինքը ճանչնալով, և իր խելքը իրեն համար գործածէ կատարելագործելով, կըլլայ երևելի հմուտ մարդ։

Որքան այս ախտը զօրանայ՝ հետաքրքիր մարդը բոլորովին զինքը կը մոռնայ ու գիշեր ցորեկ այլոց բանին ետևէն կըլլայ, ժամանակը պարապ անցընելով։ Այլոց օր կուգայ կը տեսնէ որ հովի ետևէն ըլլալով մնացեր է անխելք և կոպիտ. իր գործքը ուրիշներուն անցեր է. անոնք առաջ

եկեր են, ինքը մնացեր է մերկ և ո-
ղորմելի։

Ահա այս է հեռաքրքրութեան
պտուղը, և ասով ազգն առանց ու-
շադրութեան անկատար կը մնայ. և
ոգէտ կըլլայ ամէն բանի։ Ինչպէս
մանկական բնութիւն անոյշ կուգայ
այլոց բանը քննել իմանալ. բայց
ինչ շահ որ իրեն միասս կը բերէ։ Ինչ
որ կուզէ բան գիտնալ, թող պատ-
մութիւն կարդայ, զանազան ազգաց օ-
րէնքներն ու սովորութիւնները իմանայ,
և զուարճանալով աղէկին հեռուի,
գէշ բաներն հեռանայ։

Ի՞նչ է պատճառը։

136. Այս ախտը կանացի և տկար
բնութիւն առաջ կուգայ, որ զինքը կը
ձգէ այլոց դատաւոր կըլլայ. իր աչ-
քին գերանը կը թողու, այլոց աչքին
մազը կը փնտրուէ։

Շատ անգամ ալ մէկին խօսքը
մէկալին տանելով, մէկին բանը մէ-
կալին տարբեր հասկցնելով՝ մեծա-
մեծ չարիք և միսաներ կը պատճա-
ռէ։ Որով շատ տներ կը քակվին և
շատ հոգիներ կը դատապարտին. որ
է ժանտախտ ընկերութիւն և մարդկու-

թէ, նաև խանգարիչ եղբայրսիրուն։

Ա.ըդ՝ պէտք է հետաքրքրուն ախ-
տէն հեռու փախչիլ. և ամենևին
բան մտիկ ընելու եռևէ չըլլաս, ու
բան չի խաւնես։ Այլայն դուն քեզ
ուշ դիր, և քու բանիդ հետաքրքիր
եղիր. որպէս զի միշտ խելքդ վրադ
ըլլայ, ու մոռնալով արթուն կենաս
գործքիդ վրա. ձգես պակասուիդ,
աղէկին հեռևիս. մինչև ըլլաս այր
կատարեալ։ Սակայն թէ որ այսպէս
չընես, որչափ աշխատիս պարապ է,
ոչ կրնաս վաստակիլ, և ոչ բան սոր-
վիլ։ Այնքդ անգին գանձ է, որ ՝ուծ
քեզ տըվաւ. լաւ պահէ, և աղէկ
գործածէ, որ անպիտան չըլլայ։ Ի-
մա է ատենը. մանկուէդ պիտի սոր-
վիս ուշադրութի, որ խոհական և
խելացի մարդ ըլլաս։

Պատմութիւն։

Այեծատուն մարդ մը վարպետ էր
բռնէր որ զաւկին եղանակ սորվեցնէ.
բայց տղան քնաւ ուշադրութի չընե-
լով՝ ամենևին բան չի սորվեցաւ. մէկ
եղանակը հազար անգամ լսէր՝ միա-
քը չէր մտնէր։

Ուստի վարպետը նոր եղանակ մը

դաս տրվաւ, և շատ անոյշ կերգէր, որ աշկերտին սիրտը շարժի ու միտք դնէ. այլ անօգուտ։ Սակայն բան ծախօղ մը գրսէն այս եղանակը լսելով ջդիմացաւ. Հոն կեցաւ մտիկ կընէր. մինչև քանի մը օրուան մէջ անանկ աղէկ սորվեցաւ, որ սկսաւ նոյն եղանակով բան ծախել։

Երբոր ներսէն վարպետը լսեց, տղուն երեսը վար առնելով ըսաց։ դուն ուշադրուի չընելով չի կրցար սորվիլ, դրսի բան ծախօղը ուշ դնելով տես ինչ աղէկ սորվեցաւ։ Ուրեմն ուշադրութիւն է մարդս մարդ ընօղը, չէ թէ վարպետը։

Թէ խելքդ է վրադ՝ և միտքդ է արթուն,
դուն էս որ կընես՝ քու գործքիդ դատում։
Թէ այսպէս չըլլաս՝ ընօղը չէս դուն,
այլ անբան մարմինդ՝ որ է լոկ շարժուն։
Ընոր մարդ կըսեն՝ որ մտքով կընէ,
ամէն գործքին մէջ՝ խոհեմ կը չափէ.
Քանա՛ որ այսպէս՝ քեզ սորվեցընես,
բանական խելքդ՝ միշտ արթուն պահես,

ԼԶ. ՀԱՄԱՐ

Ինչո՞վ կըլլայ մարդս պեղծակ։

137. Այլոց բանին ետևէն ըլլալով և ուրիշի գործքը քննելով տեղեակ մարդ չի կրնար ըլլալ. այլ գիտցածն ալ կը կորսընցնէ, ու անխելք կը մնայ։

Այսպես հմուտ և տեղեակ ըլլալու համար պէտք է միտքը վրան պահելով պիտանի բաներու խելք տալ շարունակ։

Ամէն բանի հետ ցրված պիտի ըլլայ միտքը, և ոչ քնանալու պէս տեսածը չի տեսնէ և լսածը չի լսէ, պիտանի բաներուն ուշ չի դնէ, նաև չի հարցընելով անգէտ մնայ։

Իբր զի՝ մարդ եղողին ամէն բան հարկաւոր կըլլայ. ամէն օգտակար բան իրեն համար է. օր կուգայ որ պէտք կըլլայ կամ իրեն և կամ ուրիշին. զի ընկերութեան մէջ պէտք է իրարու հասնիլ, որչափ աւելի տեղեկութիւն ունենաս, այնչափ օգտակար և բարեգործ կըլլաս։

Մարդ տեսանք որ աշխարհք ժուռ եկաւ, և զարմանալի բաներ տեսաւ, երբոր հարցուցինք բան մը չիյտէր, որ պատմէր։ Ամն զի միտքը փուռ բաներու տալով հարկաւոր բանի ուշադրութիւն չէր ըրած. անոր համար անտեղեակ և հում մնացեր էր։

Շատ մարդ ալ կայ որ օգտակար բանի ուշադրութիւն ընելով՝ ամէն բանի մէջ հմուտ կերևնայ, և ամենուն կը հաճի։ Մանաւանդ երբոր կարդացած բանն ալ աղէկ միտք կառնէ։

Շատ թմրած տղաք տեսանք, որ մանկութենէն կրթութիւն ընելով, և միտքը արթուն պահելով բանիքուն և հմուտ մարդ եղան։ Շատ տղայ ալ մանկութիւն ատենը ուշիմ կերևնար, յետոյ միտքը ցրված պահելով կոպիտ եղաւ։

Ինչէ պատճառը։

138. Ուն պատճառն է, որ մարդուս միտքը չափաւոր ըլլալով ամէն բան չի կրնար սրզմեցնել. եթէ անխրատիր ամէն բանի ետևէն ըլլայ, տարտամ կը մնայ, և ցրվելով կատարեալ բանի մը տեղեակ չի կրնար ըլ-

լալ. միայն օգտակար բաներու ուշ դնելով քիչ քիչ բանիբուն կըլլայ։

Ինոր համար գպրատանց մէջ՝ երկու միակերպ տղաք՝ մէկը օգտակար ուսմանց խելք տալով ուսումնական մարդ կըլլայ. մէկալը անշահ բաներու ետևէն ըլլալով տգէտ կը մնայ։ Շատ անգամ ուշիմ տղայ մը այս ձանձրան բռնելով՝ անկիրթ կը մնայ. և բթամիտ տղան ասանկ չընելով տեղեակ կըլլայ։

Երբեմն մեծատուն տղաք՝ զիրենք բան մը կարծելով և իրենց նախնեաց մեծութիւնը ապաւինելով՝ օգտակար բանի հետ չեն ըլլար. պարապ բաներու հետևելով՝ կարծեն թէ մեծութիւը կրնայ զիրենք իմաստուն ընել։ Սակայն երբեր կը մեծնան աղէկ կիմանան իրենց սխալմունքը, թէ որչափ անմիտ մնացեր են. ինչ շահ որ ժամանակն անցեր է։

Ասպէս եղաւ Սողոմոն իմաստունին որդին, և Ցրդատ թագաւորին տղան. որ իրենց նախնեացը վրան պարծելով՝ բան չի սորվեցան. և ասնանկ անպիտան թագաւոր եղան, որ թագաւորութիւնէ կործանմանը պատճառ եղան։ Բանկ եղած են անոնք

որ հիմա շատը դռնէ դուռ կը մուրան։

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԸՆԵԼ։

139. Կը տեսնես դրսեցի տղաքն որ խելքերնին օգտակար բանի տալով, առաջ կուգան և տեղեակ մարդ կըլլան. իսկ մեծամեծաց տղաքը ասոր հակառակը կըլլան. Դրբեմն ծառան կամ գերին ջանքով կը մեծնայ, ու մեծին տղան օգտակար բան մը չգիտնալով չաջողած կը մնայ, և ծառային ծառայ կըլլայ։

Ուրեմն պէտք է ջանալ միշտ օգտակար բանի ետևէն ըլլալու. մանկուէ ատենը արթուն կենալով՝ տեղեկութիւն տրվիլ, բան հասկընալ, մեծերէն բան իմանալ, և աղէկ ժամանակը փուճը չանցընել։ Բ.րդ՝ ջանա՛ որ դուն ալ այսպէս ընես, դպրատան մէջ և ուսման ատենդ ամենևին պարապ չանցընես, անշահ բաներու խելք տալով։

Որչափ անխելք մարդ տեսնես, մի՛ խնդար վրան. այլ վախցի՛ր որ դուն ալ անոնց մէկը չըլլաս անգէտ մնալով։ Գիտնաս որ որչափ հիմա քեզ պատուեն, ծնողացդ է այն պատիւը՝

քեզի չէ. եթէ աղէկ չի մեծնաս՝ օր կուգայ որ երեսդ չեն նայիր։

Ա երջապէս մանկուէդ ջանա կատարելուն հետևիլ, թէ չէ՝ մեծուն ատենդ բան մը չես կրնար ըլլալ. այլ անպէտ կը մնաս. ինչպէս շատ օրինակներ կը տեսնես, որ ատենօք մեծ պատիւներ ունէին, հիմա ամենուն ծաղր են եղած։

Այս բանը շատ մեծ խրատ պէտք է ըլլալ և քեզ նման մանկանց։

Պատմութիւն։

Սոբովամ Սղոմոնն իմաստունին որդին մանկուէն միշտ փուչ բաներու հետ ըլլալով ոչ տեղեկութիւն մը սորվեցաւ, և ոչ կուզեր օգտակար բան մը սորվիլ։ Այնոր համար երբ հօրը տեղն անցաւ, շարունակ անմիտ մանկանց հետ կը զբաղէր. և խելացի գիտուններէն հեռու կը փախչէր։

Պատերազմի ատենը եկան խելացիները խորհուրդ տրվին, թէ ինչ ճամբայ պէտք է բռնել. բայց ինքը զանոնք բանի տեղ չի դրաւ ու իր ընկեր տղաքը կանչեց, անոնց խորհուրդ հարցուց, և անոնց խորհուրդին հետևեցաւ։

Ուստի ծանր խօսքեր խօսելով ժողովուրդին սիրտը կոտրեց, ու զզվելի եղաւ ամենուն. մինչև ժողովուրդը իրմէն զատվեցաւ, և թագաւորութիւնը կտոր կտոր եղաւ, ինքն ալ անպիտան և խեղճ մնաց։

Զանա հիմակուց՝ բանիբուն ըլլաս,
օգտակար բանով միշտ զուարճանաս.
Օտարին վրա՝ մտքդ չի ցրվես,
որ արթուն խոհեմ՝ խելացի մեծնաս։
Քանի մեծ տղաք՝ ասկից զուրկ եղան,
շատ բան լսեցին՝ բան չի սորվեցան.
Խաւարեալ մտքով եղան անպիտան,
անբանի նման՝ աշխարքէս անցան։

ԱԻ. ՀԱՄԱՐ

Ինչո՞վ աղաթ կըլլայ տիպէն։

140. Ասիրը անանկ կը խաւարէ մարդուս աչքն՝ որ օգտակար բանը չի տեսնէր, որ միշտ վնասակար և անպատիւ բաներու ետևէ կըլլայ, ոչ մարդէ կամըշնայ և ոչ ստեղծողէն. զի չարը սովորութի է ըրեր իրեն։

Ասրդ այս վնասակար գազանէն ազատ ըլլալու համար գիտունները կանոն կուտան, թէ նախ պարտական

էն ծնողքը ջանալ հեռացնել տղան, որ ախտաւոր բաներու ետևէն չըլլայ, ու սովորուի չընէ, միշտ կամքը կոտրելով և կրթելով։

Օր մի միայն դեղն է կամքը կոտրել, և սիրած բանէն զինքը հեռացընել, նաև աղէկ բաներով սորվեցնել, որ սիրտը շիտակ մնայ Վասն զի ելթէ մէյմը հետևի ախտին և բնական յօժարութիւնը հոն վազէ, անկէ ետև չի կարծած տեղը կը գտնէ զինքը, և անբժշկելի կըլլայ։

Ախտաւոր մարդը հոգւով կը մեռնի. միայն անբան մարմին մը ունի, որ կուրութիւնքը միշտ կիյնի չարաչար։

Քանի մարդիկ տեսանք որ իրենց մոլութիւնը վրա կուլան, Ճար կը փնտրեն. բայց բնական ըլլալուն համար չեն կրնար ազատ ըլլալ։

Քանի հոգի կան, որ այլոց գեղեցիկ խրատներ կուտան ախտէ հեռու կենալու համար, ըսելով թէ կը թունաւորէ սիրտը և կը մեռցընէ հոգին. և սակայն իրենք մոլութեց մէջ թաղված են, ամենևին չար սովորութէն ետ չեն կրնար կենալ։

Շնորհալին կըսէ թէ վայ անանկ ախտաւորին, որ կը խոցվի ու չի ցաւ

ւիր. հիւանդ է ու զինքը առողջ կը կարծէ. և երբեմն ուրիշին ալ դեղ ընել կուզէ։

Ամանկներուն ըռընտալը շատ դժուար է. զի ախտը ոչ միայն աչքն է խաւարեր, որ չի տեսնէ. այլև ըռ-ը մարմինն է ապականած։

Ունկէս կելլայ ախտաւոր։

141. Ամաչ ըսինք որ մարդս յանկարծ ոչ մոլի կրնայ ելլալ և ոչ առաքինի, այլ քիչ քիչ կելլայ (44)։ Ուրեմն տղան ախտաւոր բաներու հետևելով կամայ կամաց կելլայ մոլի ախտաւոր. զի ամէն առաքինութիւն դէմ եղած գործքը մոլութիւն է. ապա ով որ առաքինուէ հեռու կը կենայ, անոր հակառակ մոլութիւն հակելով քիչ քիչ ախտաւոր կելլայ։

Օրինակ թէ որ տղայ մը մանկութէն հպարտուէ կամ բարկուէ ախտին հետևի՝ խոնարհուի հեղուի չունենայ՝ հպարտ բարկասիրտ կելլայ. և կրսկրսի փուշ բանով կռիւ հանել, և ամբչնալու բանին վրա պարծենալ. վո՛ զի աչք չունի որ տեսնէ։

Թէ մանկութիւն ատենը ստրկով խաղի ետևէն ելլայ, մեծնալով քիչ

քիչ ախտաւոր մնալի կըլլայ. մինչև տունը կը քակէ ու խեղճութեան կը հասնի, ինչպէս որ շատերը կորան գնացին։

Տղայ մը թէ որ մանկութէն սուտ խօսելու և կեղծաւորութիւն հետևի, ուրչափ մեծնայ՝ ախտն ալ հետը կը մեծնայ, ու ալ չի կրնար ետ կենալ. միշտ սուտ և կեղծաւորութիւն է բանը. մինչև շիտակ բան մը վրան չես տեսներ։

Տղայ մը մանկութէն թէ որ շատ ուտել խմել սորվի, որուն երբեմն ցնօղքն ալ պատճառ կըլլան. երբոր մեծնայ՝ երևելի որկրամոլ և արբեցօղ կըլլայ, ու ետ չի կրնար կենալ։

Տղայ մը մանկուէն թեթև բանի տեղ գնելով ձեռքի խաղերէն ջըղգուշանայ, և անպարկիշտ բաներով սորվի, մեծնալով այս գազան ախտն ալ կը մեծնայ։ Ա. ինչափ որ այլ չի բռնըվիր, սոսկալի անկարգութեց մէջ կիյնի. մինչ զի՝ ամենուն առջին անպատիւ և կասկածելի կըլլայ. ամէնքը հեռու կերթան իրմէն։

ԻՆՉ Է ԳԵՂԸ։

142. Ամսոր գեղն է հիմակուց հեռու կենալ մանր մանկական պակասութեանց. զի որչափ թեթև ըլլան շուտով կը մեծնան, ու սովորութիւն անբժշկելի կըլլան։

Ամաչ է, ով որ փոքր պակասուն՝ չի նայիր, փոքր փոքր կը կործանի. և ով որ մանկութիւն կամքը չի կոտրեր, մեծուն՝ ատենը ախտին գերի կըլլայ։

Ուրեմն նախ ջանա կամքդ կոտրես, բնութիւնդ սիրած բանին՝ եռևէն չըլլալով. մասնաւորապես կրթէ քեզ ամէն բանի մէջ, և շատ գինի խմելու սովորուն՝ չընես. որ չըլլայ թէ միտքդ խաւարեցնէն եռև, տունդ ալ աւրէ. ինչպես շատին եղած է։

Չըլլայ թէ սովորութի՝ ընես ատըկով խաղի, որ շատ տներ աւրեր, և շատ խելքեր տարեր է. նաև շատ մարդու մեռնելուն ալ պատճառ եղած է։ Շատ մեծանուն մարդիկ մոխիր եղան խաղով։ Ուրեմն տես որչափ պարտական ես ասանկ ինամակար ախտէն հեռու փախչիլ. որ չըլլայ թէ քեզ կործանէ բոլոր տնովդ։

Հուսկ յետոյ ձեռքի խաղերէն ըզ-
գոյշ կեցիր. նաև մարդու հետ հա-
մարձակուն չընես. ուսկից շատ մեծ
չարիք առաջ կուգան, և խելքէ չան-
ցած գէշ բաներ կըլլան։

Որկրամոլուն ախտէն ալ հեռու
փախիր որ վրադ չտիրէ, ու անարդ
չերևցնէ քեզ ազգիդ և գարմիդ մէջ։
Կատարեալ ըլլալու ջանա, որ մոլու-
թեանց գերի չըլլաս։

Պատմութիւն։

Արիստոտել կը պատմէ թէ փի-
լոքսենոս այնչափ ախտաւոր և որկրա-
մոլ էր, որ կը փափաքէր թէ իր վի-
զը կռունկի վզի պէս երկայն ըլլար,
որպէս զի համով կերակուրները շու-
տով վար չերթային, ու շատ համ
առնէր։ Մեծ կը ցանկար որ մեծա-
գին աղէկ բաներ ուտէ. ուրչափ թանկ
բան ըլլայ կըսէր, այնչափ անոյշ կու-
գայ ինձի։

Դարձեալ կը պատուիրէր որ կերակու-
րը տաք տաք բերեն սեղան. որպէս
զի ուրիշները չի կրնան ուտել, միայն
ինքն ուտէ։ Երբոր կերակուրը կու-
գար՝ քիթը բերանը կերակրին մէջ

կը խօթէր ու անանկ կը կենար, որ աղէկ հանն առնէ։

Իբր զի մոլուիը անանկ կուրացուցեր էր զինքն, որ քովի եղողները ամօթով կը մեռնէին. իր հոգը չէր, միայն կամքը կատարելու կը նայէր։

Աղէկ միտք դնեա՝ այս խրատներուն,
չըլլայ հետևիս՝ անկարգ բաներուն.
Ուտել անխտիր՝ գովել երբը հետ,
անբանի գործք է՝ չի վայլեր մարդուն։
Մարդուս պատիւն է՝ իր խօսքն ու լեզուն,
լեզուով զուարճանալ՝ պիտի ըստ տեղւոյն.
Իսկ անասնոց է՝ որ լեզու չունին։
ոտքով և թաթով յայտնել սրտերնին։

ԼԸ. ՀԱՄԱՐ

Ինչպէս չըլլայ մարդ աներկիւղ։

143. Պատին է նշան անկատարութիւն. և անկատար մարդիկ ամէն բանէ կը վախնան. նաև աղէկ գործք ընելու ալ կը կասկածին, թէ ուրիշները ինչ կըսեն, կամ չըլլայ թէ խօսք ըլլայ։

Իսկ առաքինի մարդը բանէ մը վախ չունի. խելքը կտրած բարեգործութիւնը կընէ աներկիւղ. զգուշանա-

լու բանէն ալ հեռու կը կենայ, որ յանդգնութիւն չըլլայ։

Այսպէս էին այն երեւելի մարդիկ որ աղէկութիւն ընելու ոչ կամըշնային, և ոչ կը վախնային։ Հիմա կերպ կերպ նկատմունքներ և կասկածներ կընեն հոգեւոր բաներու մէջ, որպէս զի կեղծաւոր չերևնան կամ անխոհեմութիւն չըլլայ։

Սակայն սատանկ նկատմունքները հոգեւորին թերթեւութէն առաջ կուգան։ Աստուծոյ մարդը բան մը չի նայիր, պէտք եղածը կընէ, երբոր գործքն ու դիտաւորութիւնը բարի է։

Սանկ պէտք է առանց ուշանալու մէկէն բարի դիտաւորութիւնը կատարել. քաջութիւնքն և արիութիւնքն պէտք է առաջ տանիլ բարեգործութիւնը։ Մենևին երկիւղ չուզեր. զի երկիւղն է թերահաւատութիւն նշան։

Ըրի մարդը հաստատ գիտէ որ ՈՒԾայինն ամենակարող ձեռքը իրեն օգնական է. փուճ կասկածներով չի փոփոխեր միտքը։ Այս այսպէս գեղեցիկ կը յաջողի գործքը և աղէկ կերպով վախճանին կը հասնի։

Որոր համար հոգեւոր մարդը բանէ մը վախ չունի, երբ սիրտը առա-

քինական սովորութիւն հաստատած է՝ ոչ ձախորդութիւն կը վախնայ, և ոչ մեծամեծներէն ահ կունենայ. ոչ աշխարքէն կը վախնայ և ոչ մահէն։ Աշխարք տակն ու վրա ըլլայ՝ ինքը իր մէն չի փոխվիր, միշտ միակերպ է։ Իսկ անոնց հոգին, որ երկնաւոր առաքինութիւն զուրկ է, միշտ ահի մէջ են, ամէն հովէ կը շարժին, և ամէն բանէ կը խռովին, կըսէ մեր եղիշէ վարդապետը։

Ահը ինչ ոյժ ունի։

144. Ահին բռնութիւնը իրաւի սարսափելի ըլլալով ամէն բանէն աւելի վախ կը բերէ, և մարդուն սիրտը կը կոտրէ. որովհետև յաւիտենականութիւն սկիզբն է, որով կը մտնէ յաւիտենականութիւն մէջ, որ ոչ ծայր ունի և ոչ վախճան. ասով բանական միտքը աւելի կը սարսափի։

Սակայն առաքինի մարդը՝ խիղճը մաքուր պահելով, իր բարեգործութիւն խրեն սիրտ կուտայ, անանկ որ ոչ մահէն կը վախնայ, և ոչ մեռնելէն, ինչպէս էին արդարները։

Իբր զի՝ հոգևոր մարդը ամէն բոլոր մահը աչքին առաջը դնելով կը

մահացնէ զինքը, որ ըսել է թէ ա-
մէն բոպէ կը մեռնի, և մահը իրեն
սովորական ըլլալով չի վախնար։

Իսկ չարագործ մարդը մահն իրմէն
միշտ կը հեռացնէ. անոր համար եր-
բոր յիշեն, կը վախնայ. և չիյտէ թէ
որչափ որ հեռուն դնէ, այնչափ շուտ
կը հասնի։

Ահա այս է Աղիշէ վարդապետին
ըսածը, թէ գիտցըված մահը մահ
չէ. հապա չգիտցըված մահն է մահ,
որ յանկարծ կը հասնի և չարաչար
կը տանի։

Դանի մարդիկ մահն իրենցմէ հե-
ռու կարծելով՝ մեծամեծ բաներու
ձեռք զարկեր էին. բայց յանկարծ
մահը հասաւ, ամէն բան վերջացուց։

Դանի տղաք իրենց ուժին ապա-
ւինելով դրեր էին թէ շատ պիտի
ապրին. նայիս մահին սուրը հասաւ,
ու կեանքերնուն թելը կտրեց վեր-
ցուց։

Սոնք թէ որ մահը առաջնին ու-
նենային աղէկ կապրէին, և աղէկ
վարք կունենային, ոչ մահէն կը
վախնային, և ոչ դժոխքէն։

Իսկ արդարները և ծնողաց պատիւ
ընողները՝ շատ կապրին ուրիշներուն

բարի օրինակ տալու համար, ինչպէս օրէնքը կը վկայէ։

Ուրեմն աղէկ ապրողը շատ կապրի, և իր կեանքը պարապ չանցնիր, բարեգործութիւն կը զարդարէ։ Ինչանկ որ մահը իրմէն կը վախնայ, չէ թէ ինքը։ Նա շատ անգամ ալ իրեն բաղձանք կուգայ, որ այս սուտ աշխարհքս ձգէ երթայ իրեն առաքինութիւնը բարիքը վայելէ, ինչպէս կը բաղձար Պօղոս առաքեալ։

Ի՞նչպէս պէտք է մեռնիլ։

145. Հասարակօրէն կըսվի թէ աղէկ ապրողը աղուկ կը մեռնի. զի աղէկ մեծնալ և լաւ ապրիլ գիտցողը՝ աղէկ մեռնելուն ճամբանալ կը գիտնայ։ որ միշտ կը մտածէ թէ օր մը մեռնելու է. մահը պիտի վերջացնէ ամէն բան։ Աղէկ չապրողին վերջի կէտն է սոսկալի. և գացած ճամբան է անդառնալի և վշտալի։ Մահը գիտցողը՝ այսպիսի մտածականով միշտ պատրաստ կըլլայ և աներկիւղ կը մնայ։

Ուրդ՝ ամէն օր քիչ մը ատեն մահին վրա մտածէ, որ մտքէդ չելլէ. զի

միշտ քովդ է, ոչ մեծուեդ կը նայի, և ոչ մանկուեդ կը խնայէ։ Որչափ հեռացնես, այնչափ քեզ կը մօտենայ։ Եւ որ կուզես մահէն չի վախնալ, մի մոռնար մահը, և խիղճդ մաքուր պահէ։ Մանկութենդ սկսեալ հոգևորդ, որ բան մը չի կրնայ քեզ վնասել։ որովհետև հոգևոր մարդը ամէն բանի յաղթող է, և ամենուն կը տիրէ։

Մեծ ամօթ է եթէ ըսես, ատենս չէ։ ատեն շատ ունիմ, ետքը կը մտածեմ։ բայց աղէկ ատենդ հիմա է, թէ որ կուզես կատարեալ ըլլալ։ թէ որ կուզես մահը քեզ չի յաղթէ, դուն քաջութիւն և առաքինութիւն մահին յաղթէ։ Յիշէ վախճանդ, յաւիտեան չես մեղանչեր կըսէ՞ որ գիրքը։

Եթէ մանկութենդ սովորութիւն ընես, ամենևին բանէ մը վախ չես ունենար, համարձակ առաքինութիւն կը հետևիս, և ամէն լաւ բան քեզի համար եղած կըլլայ, և ամէն մեծուեդուն կըլլաս ժառանգ։ մինչև կատարեալ երջանիկ կըլլաս։

Բարեգործայ մահը՝ ուրիշ կենաց սկիզբն է։ միայն չարը կը մեռնի։ իսկ արժանաւոր մարդը չի մեռնիր, հա-

պա կը վախճանի, որ երկար կենդա-
նի մնայ, կըսէ փիլոն փիլիսոփան։

Պատմութիւն։

Պարեգին անունով մանուկ նա-
խարար (փաշայ) մը ունէինք որ հոգէ-
սէր ըլլալով ամենևին մահէն չէր
վախնար։ Որ մը պարսից թագաւո-
րին քով գտվեցաւ, տեսաւ որ թա-
գաւորը վար կը զարնէ քրիստոնէու-
թիւը, և քսի չարչարանքը ծաղր կը-
նէ. սիրտը չդիմացաւ առանց վախի
հարցուց թագաւորին, թէ դուն այս
բաները ուսկից գիտես։

Պատասխան տրվաւ թէ ձեր աւե-
տարանը կարդալ տրվի առջևս։ Նա-
ըսաւ ինչու միայն չարչարանքը կար-
դալ տրվիր. քիչմ՚ալ կարդալ տուր,
կը լսես փառաւոր յարութիւը, համ-
բարձումը և նորէն գալուստը։ Ան-
թէ չարչարանքին հաւատացիր, և սառա-
ւել պէտք է յարութիւն հաւատալ
զի նոյն գիրքն է պատմողը։

Ինչափ թագաւորն ամբոցուց խաց
տառակ ըրաւ գեղեցիկ պատճառնե-
րով, մինչև կատղելով վերցուց գարե-
գինը երկու տարի բանտը դրաւ, ետ-
քը մարտիրոս եղաւ։

Թէ կուզես յաղթել՝ բռնութեամբ մահուն,
յիշէ միշտ զմահ՝ հեռուէ բարւոյն.
Երբոր յիշատակն՝ հեռու է մտաց,
յանկարծ կը հասնի՝ ահեղ բռնագոյն։
Մի կարծեր թէ մահն՝ հեռու է քեզմէն,
շուտով ամէն տեղ՝ կը հասնի մէկէն.
Ոչինչ զօրութիւն՝ ոչ ոյժ մանկութեան,
անոր բռնութեան՝ կրնայ դնել դէմ։

ԼԹ. ՀԱՄԱՐ

Ինչպէս կըլլայ մարդ անմահ։

146. Երկու բանով մարդս անմահ կը մնայ աշխարքիս վրան. մէյմը բարեգործութիւն, մէյմ՝ ալ բարեկամութիւն. որովհետև բարի գործքը չի մեռնիր, այլ միշտ մնալով քարոզ կըլլայ անոր աղէկութիւնը։

Ինչպէս որ տարիներ կանցնին՝ բարեպաշտ մարդուն գործքը չի մոռցըվիր, և անունը միշտ կը մնայ. ինչպէս որ եկեղեցնայ մէջ և գրոց մէջ անմահ մնացեր են այնչափ առաքինիներուն անունները։

Իսկ բարեկամութիւն անմահ կըմնայ՝ բարեկամին հետ միանալով. զի երկու Ճշմարիտ բարեկամ մէկ հոգի

էն, կէսը մեռնի կէսը ողջ կը մնայ, ու բարեկամին տեղը կը բռնէ։

Սակայն ինչպէս առաջ ալ խօսեցանք, բարեկամութիւնը կը նշանակէ բարի կամենալ ընկերին. և բարեկամութիւն օրէնքը կը պահանջէ, որ իր անձին համար ինչ որ ուզէ, ընկերին ալ նոյնը կամենայ։

Փիլիսոփաները այս օրէնքը սրբազան կը կոչէին. որովհետև բարեկամութիւն վախճանը ոչ շահ, ոչ մեծութիւն, և ոչ պատիւ է. միայն առաքինութիւն սէրն է որ երկու հոգի իրարու հետ կը կապէ անքակ կապով և յաւիտենական սիրով։

Ինանկ որ ամէն բան իրենց մէջ հաւասար է. թէ՛ յաջողութիւն ըլլայ, և թէ՛ ձախորդութիւն, երկուքին ալ հաւասար կըլլայ. միատեղ կուրախանան, և միատեղ կը տրտմին. որոնց մէջ ոչ նախանձ կը մտնէ և ոչ ատելութիւն. ոչ պաղութիւն և ոչ անմիաբանութիւն։

Մէկին առաքինութիւնը մէկալին ուրախութիւն է. մէկին հարստութիւնը մէկալին մեծութիւն է։ Այ՝ երջապէս երկուքին սիրտը իբր մէկ մարմնի մէջ բնակելով կուրախանան. որպէս

զի յաւիտենական մնայ սէրը, և անմահ մնայ իրենց անունը։

Ո՞Ր Է ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԿԱՄԸ։

147. Ճշմարիտ բարեկամը պէտք է որ իր աղէկութիւնը հաղորդէ բարեկամին. թէ մեծատուն է, իր մեծութիւնը. թէ զօրաւոր է, իր ուժը. և թէ գիտուն է, գիտութիւնը։ Որպէս զի փոխադարձ սիրով իրար սիրեն և իրարու սիրտ շարժեն. անոր համար ասանկ բարեկամութիւնը արժանի է անմահ մնալու։

Ճշմարիտ բարեկամը ոչ օգտի և ոչ զուարճութեան համար կը սիրէ, այլ միայն առաքինութեան։ Ուրիշ պատճառաւ բան մը չի կայ որ կարենայ զանոնք բաժնել, ոչ դիպուածով և ոչ օտարին բան խառնելով կը պաղին իրարմէ։

Մարդ ծանր խօսք լսեն, և թէ իրարու վրա բան տեսնեն, աղէկ մտքով կառնեն, և իրար կարդարացնեն։ Ինչպէս հայլիին մէջ նայողին իր դէմքը իրեն շատ գեղջ չերևնար, ասանկ ալ բարեկամները իրար վրա նայելով՝ ամէն բան աղէկ կը տես-

նեն։ Անաւանդ թէ որ բարեգործութիւն և գիտութիւն իրարու վրա տեսնեն, շատ մեծապէս կուրախանան։

Դանի մեծ բան է միասիրտ ըլլալ իրարու հետ, ձախորդութեան մէջ խորհուրդ տալ, և մխիթարել. յաջողութեան մէջ միատեղ զուարճանալ առանց իրենցմէ բան մը պակսելու։

Ամէն զի սէրն է փոխադարձ. սիրելին կը սիրվի. բարեկամին սէրը կը դառնայ նոյն բարեկամը կը վերջանայ (55)։

Բայց որովհետև բարեկամական սէրը միշտ արդարութիւն կը պահանջէ, պէտք է որ իրարու անիրաւութիւն չընեն. որպէս զի սէրը չի խանգարի, և բարեկամութիւնը չի փնասի։

Յոսպիսի անզգուշութիւն շատ անգամ մեծ պաղութիւն կը ծագի բարեկամաց և ազգականաց մէջ. ասանկ բարեկամութիւնը լեզուի վրա և սրտէն հեռու, անոր համար շուտ կաւրի։

Ցեսանք բարեկամները, որ իրարու վրա այնչափ սէր ունէին, որ երկուքը մէկ հոգի կերևնային. բայց քիչ ատենի մէջ անանկ ատելի եղան, որ իրարու միս կուտէին։

Պատճառն է որ մէկը մէկալին հաւատալով անկէ անիրաւուն կրեց. անոր համար անհաշտելի թշնամի է ղան։ Այսպէս կը պատահի երկու եղբօր և ազգականաց մէջ։

Իբր զի՝ ճշմարիտ բարեկամը՝ բարեկամին բարի պիտի կամենայ. երբոր սիրտը բարի չէ, կամ իր շահին համար կը սիրէ. առիթն եկած ատենը ներքին չարակամուհիը կը յայտնէ ինչպես մը տալով. որով շուտ մը բարեկամութիը ատելութի կը փոխարկի։

Անոր համար Սողոմոն կըսէ թէ հազարէն մէկ ճշմարիտ բարեկամ մը չի գտվիր. եթէ կարենաս գըտնել, աշխարհքին գանձին հետ մի փոխեր, զի գին չունի։

Ուրեմն այս գանձը գտնելու համար պէտք է մանկութէ կրթութի ընել՝ միշտ բարեյօժար սրտով իրար սիրելով։ Թէ որ մէկը այսպէս բարեկամ ըլլայ, կրնայ գտնել ասանկ բարեկամ։

Վ որ այլոց առաքինութիը ճանչնալով և բարութիը տեսնելով բարեկամութիւն կընէ, նոյն սէրը կը գառնայ իրեն, և նոյն գանձին ժա-

ռանգ կըլլայ՝ աղէքսանդր թագաւորին պէս. որուն երբ հարցուցին թէ ո՞ւր է գանձդ, անալ բարեկամները ցըցուց։

Ութ կը հեգնէ։

148. Հիմարին բարեկամուէ կը հեռուի որ մէկը մէկալին վրա բարի յօժարութիւն ունենայ, բարի ընէ, և միաբան ըլլայ (113)։

Ուրիշնով միշտ ընկերին բարի կը բաղձայ, որ մեծնայ, շատ ապրի, և փառաւոր մարդ ըլլայ. որուն թշուառութիւնը վրա սաստիկ տրտմելով օգնութիւն կընէ։

Երկրորդով միշտ կը ջանայ բարեբարութիւն ընել բարեկամին առանց ուրիշի մը միաս տալու. զի բարեկամին համար այլոց միաս տալով կը միասի բարեկամութիւնը։

Իսկ երրորդով սիրտ սրտի հետ կը միաբանի. և որովհետև սիրտն է թագաւոր բոլոր անդամոց, անով բոլոր մարդը միասիրտ միահոգի կըլլայ առանց զատվելու։

Ահա այս է պատճառն որ երբ երկու բարեկամ իրար կը տեսնեն, նախ սրտերնին կելլէ, և ուրախու-

թէն աչքը կարտասուէ. քանի կերթայ զուարճութիւնը կը շատնայ, կամքն ու խորհուրդը մէկ ըլլալով կըսկըսին հրճուիլ խնդալ և խաղալ։ Իսկ երբ իրարմէ կը զատվին, սաստիկ կը տրտմին։

Ուրդ՝ Ջանա որ այսպիսի բարեկամ ըլլաս, և ասանկ բարեկամ ստանաս. չըլլայ թէ մանկական բերմամբ սէր կապես, և ոչ ճշմարիտ բարեկամութիւն. զի անանկ սէրը սէր չէ. այլ թոյն սիրոյ։

Ի՞նչպէս առաքինութիւնդ համար ըլլայ քու բարեկամութիդ։ Եթէ շահի և մեծութիւն համար բարեկամութիւն ընես, շուտով կաւրի։

Հին ատենը երկու բարեկամ շատ սիրով էին. մէկը մէկալէն անիրաւ բան մը պահանջեց, բարեկամը հրաժարեցաւ ընելու։ Ընատենը դարձաւ բարեկամն ըսաւ թէ ինչ պէտք է քեզի պէս բարեկամն որ ուզածս չես ըներ. Ընալ պատասխան տվաւ թէ՝ ինչ պէտք է ինձի այդպիսի բարեկամն որ անիրաւութիւն կը պահանջէ իրմէ։

Ընդ ասոնց բարեկամութիւնը այսպէս վերջացաւ. դուն Ջանա որ ձիշ-

մարիտ սրտով՝ յօժար կամքով, և միաբան սիրով բարեկամուն ընես, որ բարեգործութիւդ անմահ մնաս յաւիտեան։

Պատմութիւն։

Ովրէստէս և Պիլադէս Հշմարիտ բարեկամ ըլլալով՝ թշնամիները զիրենք բռնեցին բանտը դրին, որ զոհ ընէին պիտի իրենց կուռքին։ Դայց դատաւորը վճռեց որ միայն պիլադէս մեռնի։ Երբոր լսեց ովրէստէս՝ ոտք կոխեց թէ բուն մահապարտը ես եմ, զիս մեռցուցէք և ընկերս թողուցէք։ Պիլադէս ալ կը ջանար՝ որ ինքը մեռնի, ու ովրէստէս ազատի։ Դատաւորին զարմանուէն ետև ելան դատաւորին առջին։ Դնատեանը վըճիռ եղաւ որ ովրէստէս մեռնի։

Պիլադէս ազաղակեց թէ ես եմ ովրէստէս մահապարտը, պէտք է ես մեռնիմ։ Ովրէստէս ալ հակառակը կը պնդէր։ Դատաւորը ասոնց սէրը տեսնելով զարմացաւ մնաց։ Ա՝ երջաւ պէս երկուան ալ ազատեց, որ աշխարհքի բարի օրինակ մնան։

Ահա՛ օրինակ՝ անկեղծ մտերմաց,
որ մինչև ցմահ՝ սիրով են կապված.
Այս է բուն օրէնք՝ բարեկամութեաց,
չէ թէ վասն օգտի՝ սիրել երեսանց,
Այս ըլայ և քու՝ սրտիդ մէջ գրած,
Ճշմարիտ սիրով օգնել իրերաց.
Անանկ բարեկամ՝ ընտիր ստանաս,
որ մինչև 'ի մահ՝ միակերպ մնաս։

Խ. ՀԱՄԱՐ

Լինելիս կըլլայ մարդս ուժանման։

149. Արդկային հոգին անմահ և անմահ ըլլալով այ նման եղած է. սակայն մարդս միայն առաքինական գործքով և կատարելութիւն կրնայ ըլլալ երջանիկ և ուժանման։

Այ այն հոգին որ իր գերազանց ցուիը չի ճանչնալով անկատար պակասաւոր և ախտաւոր մնացեր է, ոչ անմահութիւը գիտէ, և ոչ ուժանմանութիը։ Անանկ հոգին մեռած է, ոչ կենդանութի ունի, և ոչ բարի շարժումն։

Այս պատճառաւ հին ատենէն 'ի վեր իմաստունները այսչափ բարոյական կանոններ և օրէնքներ գրին,

որպէս զի մարդս հոգևորապէս ապրի որ երջանիկ անմահ մնայ։ Եւ մարմինն բաղձանացը հետևելով անկատար չի մնայ. որ միշտ հոգուն հակառակ կը բաղձայ, և մոլութենց հետևելով կապականի. որ պէտք է ստեղծողին օրինացը հետևի։

Եւ ոյն իմաստուններուն օրէնքներով այնչափ ախտաւոր մարդիկ և վայրենի ազգեր՝ հետևելով բարոյական կատարելութեան՝ բարի եղան, և մեծամեծ գործքերով պայծառացան (50)։

Զհա՛ նոյն օրէնքներով մինչև հոս քեզ հասկըցուցի, թէ ինչպէս պիտի կատարեալ և ուծանման ըլլաս. ինչպէս պիտի ամենուն առջին պատուաւոր և սիրելի ըլլաս, որ անուանդալ անմահ մնայ դուն ալ։

Զին փիլիսոփաները հաստատեցին թէ առաքինի մարդը այմէ վար է և մարդէն վեր է. նաև բարի մարդը՝ ուծային մարդ կոչեցին։ Զբը զի՝ մարդս որչափ աւելի մարմնաւոր բաներէն հեռանայ, ու առաքինութենէ և իմաստութենէ հետևի, այնչափ այմ մօտ և ուծանման կըլլայ։

Զ.է որ մոլի մարդիկ անբան գա-

զան կըսվին, ապա հոգևոր մարդիկ պէտք է որ հրեշտակ և ՝ածանման ըսվին։

Ը. Յոպիսի էին այն մեծամեծ առաքինիներն՝ որ միայն ոտքով դպած էին աշխարքիս, իրենց բոլոր ուշադրութիւնը երկնային բաներուն հետ էր. հոգինին առաքինութեամբ զարդարված, և մտքերնին իմաստութիւնը լուսաւորած։

Ը. Նոր համար բոլոր աշխարհք իրենց ոչինչ կերևնար, և մարմինին համար առաքինութիւն դէմ բան մը չէին ընէր՝ հոգուն գերազանցութիւնը գիտնալով։

Ը. Գեսիզայոս սպարտացի իշխանը հայրենիքը պաշտպանելու համար պարսից ձեռքն ընկաւ. որչափ որ զինքը չարաչար տանջեցին, հայրենեաց սէրը միտքը բերելով ամենևին չայլայլեցաւ։ Ինչև կռապաշտները սոսկալով կարծեցին թէ ՝ած է, և վախերնուն թողուցին. որպէս զի իրենք ալ չի պատժըվին։

Ը. Հա՛ այս գործքիս գիւցազնական առաքինութիւն կըսեն, որով մարդս բարին հետևելով կըլլայ ՝ածանման։

Ո՞ր է դիւցազնական առաքինութիւն։

150. Սովորական բարեգործութիւն վեր եղած առաքինութիւնը դիւցազնական կըսվի, որ մարդը ՝ածանման կընէ կատարելութիւն. զի աւելի կըմօտենայ ՝ այ, և կը լուսաւորի։

Իսկ սովորական մոլութիւն դուրս եղած չարութիւնը կըսվի գազանութիւն. զի աւելի գազանային բնութիւն կը մօտենայ, ինչպէս է վնասել ծնողաց, գէշ մեղքերու հետ ըլլալ, մարդու միս ուտել, և՛ն (424)։ Ուստի երևելի առաքինիները սովորական բարեգործութեց մէջ մանկութիւն կրթըված ըլլալով՝ քանի որ մեծցան՝ իրենց առաքինութիւն ալ մեծցաւ. և անով այնչափ կատարել եղան, որ մինչև մեծամեծ գործքեր և դիւցազնական առաքինութիւններ գործելով ՝ածանման եղան։

Ահա այս է այն գերազանց առաքինութիւն որ ՝ածամերձ և ՝ածանման կըսվի։ Իբր զի՝ ինչպէս որ ՝ած միակերպ բարիք կուտայ արդարներուն ալ մեղաւորներուն ալ՝ ամենուն վրա գթալով, կուզէ որ ամէնքը աղէկ

ըլլան և փառքով պսակվին։

Ա. Յոպէս նոյն առաքինին ալ կը-
ջանայ ամենուն օգնել. թշնամեաց
բարի ընել. նախատողին աղէկ ըսել.
նաև բոլոր աշխարհք իր բարի վար-
քովը շահիլ բոլորովին հոգևորին հե-
տևելով։

Ա. Ա այս կանոնով առաքինին կը-
հասնի երջանկութեան, նիւթական
բաները կը թողու, կրսկրսի անոնց-
մէ վերը բաներ մտածել։

Բանի կերթայ միտքը կը բարկը-
նայ, ու հոգևոր բաներ մտածելով
կը լուսաւորի, և կրզմայլի ՝ածային
մեծութեան վրա։

Ամէն բան աղէկ կը Ճանչնայ, լաւ
կը հասկընայ հաւատքին զօրութիւնը.
գիտէ թէ ինչպէս պէտք է հաւա-
տալ, ինչպէս յուսալ և ինչպէս
սիրել արարիչն երկնի և երկրի, որ
այսչափ սքանչելիք գործեր է, և ի-
րեն այնչափ անթիւ բարիք ըրեր է,
և խելքով մտքով Ճոխացուցեր է։

Որչափ աւելի մտածէ, այնչափ
աւելի կը բորբոքի սիրտը ՝ածային սի-
րով, և հաւատքը զօրանալով այնչափ
աւելի կը ջանայ ՝ածանման ըլլալ մե-
ծամեծ բարեգործութիւնքը։

Ահա այսպէս շատ մեծամեծ ոգեր նախ փոքր բարիք մը ուրիշին ընելով հետզհետէ սովորական եղաւ իրենց առաքինութիւնը։ Ինչպէս բոլորովին յափշտակեցան ու միտք կորեցան. և այսպէս հոգևոր մտածականով լուսաւորեալ երջանիկ եղան՝ իրենց յոյսն ու սէրը ստեղծողին վրա հաստատելով, ուսկից այն բարիքը կը-վայելեն։

Ի՞նչպէս հելլայ երջանիկ։

151. Հին փիլիսոփաները կրցան բնական լուսով չափաւոր առաքինի ըլլալ. բայց չի կրցան երջանիկ ըլ-լալ, որ կատարեալ առաքինութիւնը միայն կը բերէ։

Ան զի պէտք էր ունենալ նախ ճշմարիտ հաւատք, հաստատ յոյս, և կատարեալ սէր. որ կըսվին ոգեաբա-նական առաքինութիւք։ Որովք մարդ-կային միտքը և կամքը առ ոգի կը-վերաբերին, և ոգի հետ կը կապվին առանց զատվելու։

Աք լուսաւորիչ կըսէ թէ հաստատ հաւատքը կը բովանդակէ զոր սէրն ու յոյսը, և անսասան կը մնայ. և իբր

ամուր պարիսպ մը լի է ամէն առաքինութեամբ։

Ուստի յոյսը հաւատքէն առաջ կուգայ, որ առանց կարծեաց և կասկածի միշտ կը յուսայ ՅՀ ողորմութիւնը։

Խակ սէրը պտուղ ըլլալով ՅԾաբանական առաքինութեց՝ բոլոր սրտով կը սիրէ զարարիչն ամէն բանէր աւելի. որով կը սիրէ նաև զընկերն ու զանձը վասն ՅՀ. և այսպէս կըլլայ կատարեալ և երջանիկ։

Ահա այս գերազանց առաքինութիւնները կը պահանջեն, որ բնական օրէնքները և ՅԾայրին պատուիրանները լաւ պահվին՝ որով մարդն ըլլայ կատարեալ։ Ինչև ամենևին բանէ մը վախ չունենայ, բոլոր կեանքը ուրախ, պատուաւոր, անմահ, ՅԾանըմանն, և երջանիկ անցընէ. որ միշտ անփոփոխ և միակերպ կըլլայ (143)։

Ուստի երջանիկ մարդը բոլորովին ՅՀ սիրով վառված ըլլալով, իբր ՅՀ հետ կըմիանայ. և բնական գործողութիւնները կատարելագործելով կըստանայ ամէն տեսակ առաքինութիւ դիւցազնական և ՅԾաբանական։

Դրանի է քեզ եթէ մանկութէդ ջանաս ստանալ այս առաքինի երջա-

նիկ կեանքը, և այս անգին մեծու-
թիւը, որուն բան մը չի կրնար հաւա-
սար ըլլալ։

Ուրիշ բերանը որչափ աւելի դըժ-
ուար երևնայ ստանալ, այնչափ յետոյ
կը քաղցրանայ. և որչափ աւելի սէրդ
շատնայ, այնչափ աւելի կատարելու-
թիւն կը հասնիս և երջանիկ կըլլաս։

Դիտնաս որ այս վախճանին հա-
մար ՀԱԾ քեզ կեանք տըվաւ, և մարդ
ստեղծեց խելքով մտքով. ջանա ա-
ղէկ օրերդ ՀՅՍ սիրուն մէջ անցընես,
ու առաքինական կեանք ստանալով
ՀԱԾԱՆՄԱՆ ըլլաս։ Որպէս զի անբանի
նման աշխարհք եկած չըլլաս, այլ ա-
ռաքինի ըլլալու համար, երջանիկ
մեռնելու համար, և անմահ մնա-
լու համար յաւիտեանս յաւիտենից։
„Ա՛խ ՀԱԾԱՆ բանիս՝ զամենայն ինչ
„ լուր. ՅՍՍ երկիր, և զպատուիրանս
„ նորա պահեա. վասն զի այս է ա-
„ մենայն մարդ „։ ԺՈՂ. ԺԷ։

Պատմութիւն։

Բագրատունի հայոց թագաւորը Սմպատ՝ մանկութիւն առաքինի ըլլալով, դիւցազնական առաքինութիւն մահ յանձն առաւ իր ազգին բարեաց համար։

Այսն զի բերդին մէջ փակված երբոր այլազգեաց հետ կը պատերազմէր, ինքն ապահով ըլլալով թշնամիներէն բիւրաւոր մարդիկ կը ջարդըվէին։

Այլազգիները տեսան որ պիտի հատնին, գնացին հայերէն մարդ ժողվեցին, ու իրենց տեղը դրին, որ Սմպատին հետ ծեծկըվին։ Թագաւորը տեսաւ թէ հայերը կը ջարդըվին, սիրտը չդիմացաւ, ամ աղէկ է ըսաց ես մեռնիմ, քան թէ իմ ժողովուրդս. շատ աղէկ է ես մատնըվիմ, քան թէ այսչափ ոյ ժողովուրդը ջարդըվի։

Այս խորհրդով իր կեանքը անոնց վրա դրաւ, և մէկէն պատերազմը դադրեցուց. ինքը գնաց թշնամին ձեռքը մատնըվեցաւ, որով ժողովուրդը ազատեցաւ։

Ահա այս է գործ՝ երջանիկ մարդուն,
սիրան է բորբոքած՝ սիրով նր հոգւոյն.
Կեանքն առաքինի՝ և միտքն իմաստուն,
անմահ կըմնայ՝ գովելի անուն։
Քանա՛ որ հասնիս՝ նոյն երջանկութիւն,
հաւատք յոյս և սէր՝ հոգւոյդ միշտ ըլլա տան.
Ամէն բարութիւք՝ քու հետ միանան,
երջանիկ ըլլաս՝ ճոխանման։

Ղ. ախճան

Բ. ՄԱՍԻՆ.

Սահեալ ժամուն անցք անդադար,
դանձին 'ի վէպ խրատու. Համբար։

ՀԱՏՈՒԹՒՒՆ

ՄԱՆԿԱՆՑ

ՄԱՍՆ Գ.

ԽԱ. ՀԱՄԱՐ

Ինչ ասել է աշխարհապատում։

152. Աշխարհապատումն է աշխարհքի պատմութիւն, որ կը պատմէ բոլոր աշխարհիս գլխաւոր ազգերուն և երկիրներուն սովորութենց և քնակութեանց վրա։ Բարոյական խրատներէն ետև պէտք է որ այս ազգային պատմութիւնները կարդաս. օրպէս զի բոլոր աշխարհքիս մէջ ժուռ գալով և այնչափ ազգերուն վարքը տեսնելով՝ աղէկ հասկընաս բարոյական խրատներն, ու հետևիս ինչպէս պէտք է։

Աբդ՝ ամէն ազգաց սկիզբն Ադամ

ելալով, պէտք է նախահօրը պատ-
մութիւնը գիտնալ. որ երկինք և եր-
կիր ստեղծելէն ետև իրենց զարդա-
րանքով, ահա ամենաբարին Աստ-
ալ ստեղծեց կատարեալ իմաստուն
իբր թագաւոր աշխարհի։ Աստ-
ղէն ստեղծեց առջի կինը. և անուա-
նեց Եւա, որ ըսել է կեանք։ Ա-
սոնք դրաւ դրախտին մէջ, որ շատ
գեղեցիկ զարդարած էր աղուոր ծա-
ռերով և ծաղկներով. անանկ որ
Ադամ բանի մը կարօտուի չունէր։

Սակ դրախտն էր ասիա հայաստա-
նու մէջ, անանկ սքանչելի տեղ էր
ամէն գեղեցիկ վայելչութիւն, որ բա-
նի մը չէր նմանիր. և չորս մեծա-
մեծ գետերը անկէ կը բղխէին, այս-
ինքն Եփրատ, Տիգրիս, Երասխ,
կամ Դանդն, Նոյոս, կամ Փիսոն
(168)։

Որ հեղեղին ատենը դրախտն աւ-
րեցաւ. հիմա կերևնայ թէ դրախտն
էր երզրրումայ և էջմիածնայ մէջ
տեղը, որ շատ սքանչելի և գեղեցիկ
տեղ է, ամէն բարիք ունի. գետերն
ալ անկէց կելլէն։ Եւրոպացի Համ-
բորդները այսպէս կը հաստատեն։

Ուստի այս անմահ կեանքիս մէջ

միշտ պիտի զուարճանար Ադամ ե-
ւային և զաւակներուն հետ միատեղ,
որ լեցուն էր ամէն բարիքով նաև
ճծային փառքով։ Այց ճծ կամե-
ցաւ որ այս երջանկութիւնը հնազան-
դութիւն վայելէն, իրենց պատուիրան
դրաւ որ դրախտին ամէն պտուղնե-
րէն ուտեն, միայն մէկ ծառին պտու-
ղէն չուտեն. որ անկաճ էր դրախտին
մէջ տեղը, և կրսվէր ծառ գէպուռնէ
բարոյ և չարի։

Այս պատուիրանը անոր համար
դրաւ որ ճծային մեծութիւնը ճանչնա-
լով հնազանդ ըլլան։ Ուստի սպառ-
նացաւ ըսելով, թէ որ այս հրամա-
նիս դէմ ընէք, պիտի մեռնիք։

Ցժբաղդ Ադամը կնկանը խօս-
քին խաբվելով կերաւ նոյն ծառին
պտուղէն. և անհնազանդ ըլլալով
երկուքն ալ դրախտէն դուրս ընկան
ու խեղճ մնացին։

Այսով իրենց զաւակներն ալ նոյն
պատիժին տակն ընկան, և ամէն
խեղճութիւն պարտական եղան։ Ա-
կայն ճծ զանոնք անմխիթար չի թո-
ղուց. խոստացաւ իրենց փրկիչ մը,
որ այս պատիժներէս ազատէ զի-
րենք, և տայ կորուսած երանութիւը։

Ի՞նչպէս ազգեցան։

153. Դրախտէն աքսորված տարին Ադամայ զաւակ մը եղաւ. անունը Կայէն դրաւ, որ ըսել է ստացեալ. այս-ինքն ստացած. վասն զի կարծեց թէ այս է փրկիչը, որ եղաւ երկրագործ։

Ադամ ծնաւ երկրորդ որդին և կոչեց Հաբէլ. որ է խաբեալ, ունայնութիւն. զի խաբվեցաւ և դատարկ եւաւ յոյսը։ Ադամ որդին ալ հովիւ եղաւ։

Ադամ ինքն ալ վախին մէջ մեծնալով ընծայ կը մատուցանէին ստեղծողին։ Կայէն առջի հասած պտուղները, և Հաբէլ առջի ծնած ոչխարները կընծայէր։ Սակայն Կայէն անշահները կընտրէր կուտար ին. իսկ Հաբէլ լաւ գէր ոչխարները կը բերէր։ Ադամ Հաբէլին պատարագը ին ընդունելի կըլլար հրաշքներով և Կայէնինը անընդունելի։

Ադամ Կայէն սաստիկ նախանձ ունեցաւ եղբօրը վրան. և օր մը տարաւ զինքը դաշտը, յանկարծ վրան ընկաւ մեռցուց՝ յամի 130։ Աստի անէծք առաւ ին։ Մինչև երեքեալ մնալով օր մը իր թոռներէն մէկը Լամէք զինքը անասուն կար-

ծելով անտառին մէջ զարկաւ մեռ-
ցուց, յամի աշխարհքի 701։

Կայէն անիծվելէն ետև գնաց ու-
բիշ տեղ, և հոն ծնաւ Հնոք, և ա-
սոր անուամբը քաղաք մը շինեց հոն։
Ասոր թոռն էր Մաթուսաղան. աս-
կէ եղաւ Ղամէք։

Իսկ Ղամէքին մեծ որդին Յով-
բէլ սովրեցուց վրանով բնակիլ դաշ-
տերուն և լեռներուն վրան։ Յով-
բաղ որդին հնարեց երաժշտութիւը
թռչուններէն սովրելով։ Թուբալ-
կայէն որդին ալ գտաւ դարբնութիւը,
և սովրեցուց գործածել երկաթ
պղինձ։ Իսկ Հոյեմա աղջիկը հնա-
րեց կտաւ և բուրդ գործել՝ մամուկ-
ներէն սովրելով։

Հաբելի մահէն ետև Դամայ ե-
ղաւ որդի մը և անուանեց Էր. և ու-
բիշ զաւակներ ալ եղան։ Մեթէն ե-
ղաւ Հնոխ, որ հօրը ածպաշտութէն
հետևելով կրօնասէր եղաւ։ Ասոր
թոռանը թոռն էր Հնոք, որ խիստ
ածասէր ըլլալով՝ ած փոխեց զինքը
անծանօթ տեղ մը, որ կըսեն թէ
անմահ կըսպասէ հոն մինչև վերջի
դատաստանի օրն՝ որ գայ վկայութիւ
տայ։ Ասոր որդին Մաթուսաղայ բա-

րի ըլլալով ամենէն շատ ապրեցաւ, մինչև 969 տարի։ Այս ասոր թոռն էր Նոյ նահապետը։

Իսկ նախահայրն Ադամ 930 տարի ապրելէն ետև, տրտմութիւն և ապաշխարելով մեռաւ. թողուց անհամար զաւկըներ և թոռներ։

Ինչպէս ապականեցան։

154. Նախ Կայենին զաւկըներ, և բոլոր ազգը սոսկալի անառակութիւն մէջ ընկան, կրօնը և ճշմարտութիւնը ձգեցին, մինչև ճշ ալ մոռցան. և անարգութիւն մարդն ըսլեցան կամ մարդու որդի։

Իսկ Սեթին զաւկըներ բարի և հաւատարիմ ըլլալով աստուծոյ որդի կոչվեցան։ Մանաւանդ ասոնք ալ մեկալոնց նայելով քիչ քիչ անոնց հետ խառնակեցան, և խնամութիւն ընելով անոնց նման չարացան։

Ուստի այս չար ամուսնութիւն եղած տղոքն ալ մեծահասակ և ցուցանքաւոր մարդիկ եղան Հոկայ անունով, որ շատ անկարգ և անզգամ մարդիկ էին։ Ահա այսպէս ապականեցաւ բոլոր աշխարհք, և անօրէնութիւնը տիրեց. մինչ զի՝ ճշ նայե-

լով թէ իր շնորհքը և պատկերքը չի մնաց մարդու վրան, ուզեց որ ջնջէ աշխարհք ջրհեղեղով։

Եւ որովհետև՝ Այս Սեթին որդին արդար էր, ՝ած զինքը ազատելու համար յայտնեց նոյն պատիժը, որպէս զի զանոնք խրատելով ապաշխարեն։ Ուստի՝ Այս 120 տարի գիշեր ցորեկ անոնց քարոզ կուտար որ մեղքը ձըգեն ու ապաշխարեն, և ՝ածային բարկուէն ազատին։ Բայց անոնք օրէօր կը չարանային անառակուբ, այնչափ որ ՝այ գթած երկայնմտութէ չափը լեցուցին, և արդար պատիժը բերին իրենց վրան։

Այն ժամանակը՝ Այս նահապետ 480 տարեան էր. ծնաւ Յաբէթ անդրանիկ որդին։ Երկու տարիէն ետև ծնաւ Սէմ, և ապա Համ։

Ոչ հրամայեց՝ Այսին որ նաւու ձևով տապան մը շինէ։ Երբ մարդիկ կը լսէին ջրհեղեղը և կը տեսնէին տապանը՝ ծաղր կընէին. թէպէտ շատը հոն կըբանէին և միատեղ կըշինէին այն մեծ տապանը

Ի մընալէն ետև ՝այ հրամանով մտան տապանին մէջ՝ Այս, կնիկը իրեք որդիքն ու հարսները, և ամէն

կենդանիներէն ալ առաւ տապանին մէջ, և փակեց տապանը. որ 600 տարեան էր Նոյ։

Ի՞նչպէս եղաւ Ջրհեղեղը։

155. Տապանը գոցվելէն ետև յամի աշխարհի 1656 Նոյեմբերի ամսուն սկսաւ սոսկալի անձրև մը քառասուն օր. անանկ որ երկինքը ամպ չի մնաց, բոլորը ջուր կտրեցաւ, գետի պէս կը վազէր. և գետինն ալ պատռեցաւ տակի ջրերը վեր բղխեցին, ու բոլոր երկիրս ծածկեցին ետև, բարձր լեռներն ալ ջուրը գոցեց 15 կանգուն։ Ամէն շնչաւորներն ալ մեռան թէ մարդ և թէ կենդանի։

Ապա 150 օրէն ետև սկսաւ ջուրը պակսիլ. և ապրիլի ամսուն տապանը նստաւ Արարատ լերին վրա Հայաստանու մէջ։ Յուլիսի լեռներն երևցան. և 383 օրէն ետև գեկտեմբերի Նոյ նահապետ իր ամէն բանովը տապանէն ելաւ. և հոն սեղան շինեց զոհ ըրաւ. որ այ հաճոյ ըլլալով օրհնեց ամէն զինքը և բոլոր երկիրը։

Ո՞Ր ԵՂԱՒ ԲՆԱԿՈՒԹԻՒՆ։

156. Որովհետև գրախտն էր Հայաստանու մէջ երզրումայ կողմը. ուսկից կելլեն գրախտին գետերը (168), և Ադամ գրախտէն որ ելաւ այն կողմերը բազմացաւ։ Նոյնպէս Նոյ նահապետն ալ Հայաստան բնակեցաւ արարատի երկիրը, և հոն առջի քաղաքը շինեց Նախիջևան դրաւ անունը, այսինքն առջի բնակարան։ Ինչպէս կը վկայէ Յովսեպոս պատմիչը։

Հոն ծառեր տնկեց էգի շինեց ու գինի դրաւ. օր մը ուզեց գինիին ուժը փորձել, խմեց գինովցաւ։ Նրբոր մերկ պառկած էր, Ադամ պզտի որդին տեսնելով ծաղր ըրաւ իր հայրը և անէծք առաւ. իսկ եղբայրները վրանին բան առին ու ետև ետև երթալով ծածկեցին հայրերնին ու օրհնէնքն առին։

Նոյ թաղվեցաւ Հայաստան 950 տարեկան. նոյնպէս կնիկը Նէմզար թաղվեցաւ այն տեղն՝ որ Մարանդ կամ Մայր անդ կըսվի։

Իսկ տապանը մնաց Արարատ լեռան վրա, որ շատ բարձր ըլլալով

ձիւն անձրև չի գար հոն. և տապանը անանկ մնացած էր մինչև որ Յակոբ մծբնայ հայրապետին օրը, որ ուզեց երթալ տեսնել. բայց հրեշտակն այ կտոր մը տախտակէն բերաւ իրեն։

Ջրհեղեղէն ետքը երկրիս վայելչութիւնը ապականեցաւ, հողին ուժը տկարացաւ, մարդուս կեանքն ալ կարճցաւ։ Բայց այ օրհնութիւնը նորէն աշխարհք զարդարվեցաւ և մարդիկ շատ աճեցան։ Ամսն զի 100 տարեան մէջ 100 ծնունդ Սեմին եղաւ. ասանկ ալ մէկալոնց։

Իբր 150 տարի ջրհեղեղէն ետև այնչափ աճեցան որ հայաստան իրենց քիչ եկաւ. էլան գունդ գունդ դէպ 'ի միջագետ գնացին հարաւի կողմը Սէնաար դաշտին մէջ դադարեցան։ Հոն ուզեցին մէկ մեծ աշտարակ մը շինել, որուն ծայրը ամպերուն մէջ գոցվի. որ իրենց քաջութիւն յիշատակ մը մնայ աշխարհքիս վրան։ Սկսան բարձրացնել 40 տարի. բայց ամէն խափանել ուզելով զայն, հով մը հանեց շինուածքը փլուց, և ամենուն լեզուն խառնվեցաւ մէկը մէկալին խօսքը չէր հասկընար. մինչև ձգեցին այն մեծ գործքն ու ասդին

անդին ցրվեցան։ Եւ նոյն տեղը բաբելոն կոչվեցաւ, որ կը նշանակէ խառնակուն (191)։

Ազգեր բաժնվեցան։

157. Այս ազգերն էին 72 նահապետուն, որ մէյմէկ կողմը աշխարհքիս երթալով զանազան ազգեր բաժնվեցան։ Ամենք բոլորը Նոյին զաւակներէն եղած են. որ աշխարհքիս չորս մասը լեցվեցան։ Հա ամենց վրա և իրենց աշխարհքներուն վրա պիտի խօսինք այս մասին և վերջի մասին մէջ։

Նոյին անդրանիկ որդին Յաբէթ որդիք ունեցաւ Գոմեր, Մագոգ, Մադայ, Յաւան, Ելիսա, Թուբել, Մեշեք և Մոսոք։ Գոմերէն եղան Թորգոմ և Զգբանազ. Թորգոմէն եղաւ Հայկ, և ասկէ առաջ եկաւ Հայոց ազգը։ Թորգոմին մէկալ որդիքներէն եղան վրացիները, Թիւրքմէնները և Ն։

Մագոգէն եղան Թաթարներն ու Չինները. և այս ազգերը բազմացան Ասիայի մէջ։ Ամենց մէկ մասն ալ Եւրոպա անցան հոն բազմացան։ Մադայէն եղան Մարք և Մակե-

դոնացիք, այսինքն Ալիւրտերն ու Ազնաւուտները։

Յաւանէն եղան Յոյները, որ կըղզիները բնակեցան։ Ասոքէն եղան Ասկոմները։ Ասոնցմէ անցան Ամերիգա հոն մնացին բազմացան (419)։

Էմ երկրորդ որդին Լոյի ծնաւ Արփաքսադ, Լղամ, Ասուր, Լուդ և Արամ։ Առջինէն եղաւ Թարա՝ Աբրահամին հայրը, ուսկից եղան հրէաները։ Երկրորդէն եղան պարսիկները ու հնտստանցիք։ Երրորդէն եղան Ասորիները։ Այս ազգերը մեջագետի կողմը բազմացան։

Ամ ծնաւ Ամանան, Ուշ, Փուդ, և Աեսարեմ։ Ուշէն եղաւ Եբրոլթ առջի թագաւորը ասիային և առջի կռապաշտը։ Ամանէն եղան քանանացիք։ Աեսարեմէն եղան Ասորցիք. և քաղաքն որ շինեց՝ Աբեր կոչվեցաւ։

Փուդէն եղան բարբարոսները. Ուշէն ալ եղան Հապէշները։ Ասոնք ալ Աֆրիկէ բազմացան։

Ահա ասոնք են աշխարհքիս գլխաւոր ազգերը. որ աշտարակաշինուէն առաջ Ասիայի մէջն էին մէկ ազգի պէս, թէպէտ ամէն ցեղ ազգապետ

ունէր. և ամէնքը ադամին լեզուն խօսելով իրարմէ շատ տարբեր չէին սովորութիւն և բարքով։

Սակայն երբոր ՈՒծային քարկուէ լեզուներին փոխվեցաւ, ամէն ազգ իրարմէ հեռացան, բարքերնին և բնութիւնին փոխվեցաւ։ Ամէնքը գլուխ քաշեցին. ով որ խելքին յարմար տեղ գտաւ, հոն քաղաք շինեց. և բազմանալով ազգ եղաւ։

Բրագ և տաք մարդիկ արևունային ըլլալով հեռու տեղեր ելան գացին, քաղաք շինեցին. ինչպէս կըսեն եւրոպացոց համար որ եւրոպա անցան։ Իսկ դանդաղ մաղաստային մարդիկ մօտ տեղեր բնակեցան, ոմանք լեռներու վրա, ոմանք գետերու քով, ոմանք դաշտերու մէջ. ոմանք ալ ծովու քով և կղզիներու մէջ։

Հին պատմիչները կըսեն թէ բոլոր այս ազգերը մէյմէկ ցեղ ըլլալով իրենց մայրական լեզուն կը խօսէին և իրենց սովորութիւնը կը պահէին։ Սակայն ժամանակէն ետև այս ազգերն ալ զատվելով բազմացան և լեզուներին ալ բազմացաւ (299)։

Իսկ Հայկ նահապետն ալ անոնց մէջին ըլլալով իր ցեղին հետ ՇԻնաց

Հայաստանին մէջ և իր ազգը կառա-
վարելով զօրացաւ. մենք ալ անոր
անուամբը հայ կոչվեցանք։

Այսչափ ազգ ազինք՝ էին քեզ նման,
ուրախ կապրէին՝ աշխարքիս վրան.
Կարծէին թէ միշտ՝ հոս պիտի մնան,
Թողուցին գացին՝ այլ պիտի չի գան։
Դուն եղար ժառանգ՝ իրենց մեծութիւն,
որոնց բաներուն՝ դուն էս տիր իշխան.
Բայց դուն ալ պիտի՝ թողուս ամէն բան,
ձգես հեռանաս՝ երթաս նոյն ճամբան։

ԽԲ. ՀԱՄԱՐ

Ի՞նչ է աշխարհ։

158. Որովհետև այս բոլոր ազգերը աշխարհքիս ամէն կողմը ցրված են, պէտք է նախ երկրիս տեղեկութիւնը տալ. և ետքը իւրաքանչիւր ազգերուն պատմութիւնը գրել։

Աշխարհքիս կլոր գունտը զանազան լեռներով դաշտերով ծովերով և գետերով բաղադրած է. որ կըսվի երկիր այսինքն Երէ էր. երկու բան, հող և ջուր։ Այս մեծ գունտը հինգ գօտի կը բաժնըվի. մէկն է այրեցած գօտին, որուն վրայէն միշտ արեգակը

անցնելով շատ տաք կըլլայ, և հոն գիշեր ցորեկ 12 ժամ է։ Երկու անգամ ամառ կըլլայ և երկու անգամ ձմեռ. ինչպէս են ափրիկէի և հնդըստանի քաղաքները (193)։

Երկու ցրտային գօտիներ կան, որ արեգակէն հեռու ըլլալով խիստ ցուրտ կըլլայ հոն, և սառնապատ է. տեղ կայ որ 3 ամիս գիշեր է և 3 ամիս ցորեկ. տեղ ալ կայ որ 6 ամիս ցորեկ է 6 ամիս գիշեր (355)։

Քանի՞ էջ բաժնըվէ։

Երկու բարեխառն գօտիներ ալ կան, ուր չափաւոր է ցուրտն ու տաքը. օրը կերկրնայ կը կարճրնայ. ինչպէս մեր բնակած երկիրներն են։ Իսկ բոլոր աշխարհիս մեծութիւնն է 191261 միլիոն խորանարդ մղոն. Ղէմ. 409։

159. Աշխարհքս չորս մասն կը բաժնըվի, Ասիա (անատոլու), Ափրիկէ (աբրապէսդան), Եւրոպա (ռումելէ), Ամերիգա (էնդիպէսանէայ)։

Ասիա ամենէն աղէկ մասն ըլլալով դրախտն ալ հոն էր. և ադամ ասիայի մէջ անէծքի տակ իյնելուն համար՝ յետ ալ հոն եկաւ և հոն թաղվեցաւ.

զի Երուսաղէմ ասիային մէջն է, որ է առջի մասն աշխարհի։

Այս աշխարհք Լուսկիւտարէն կըսկըսի կը հասնի մինչև Հնտստան. և կարմիր ծովէն մինչև մոսկովստան կերթայ. որուն տարածութիւնը վեց միլիոն ու կէս քառակուսի մղոն ըլլալով քառասպատիկ մեծ է քան Եւրոպա։

Ասիա անունը Ասսիա նահապետէն գրվեցաւ, որ Հայկին թոռն էր շատ զօրաւոր։ Այս աշխարհքիս գլխաւոր ազգերն են Հայ, Հնդիկ, Չինք, Թաթարք, Պարսիկ, Արբք, Ցաձիկ, Նաբոնք, և այլն։ Եւ 10 մեծ թագաւորուն կայ մէջը։ Եւ 650 միլիոն ժողովուրդ կայ կըսեն ասիային մէջ (171)։

Ինդկէս է ափրիկէ։

160. Սաալ ընդարձակ ցամաք է. որ կարմիր ծովէն և եգիպտոսէն կըսկըսի մինչև ովկիանոս կը հասնի Ռանկիւնի ձևով։ Երկայնութիւն է 4 հազար մղոն. և լայնութիւը իբր 3 հազար (229)։ Մեծամեծ անապատներ և զարմանալի ազգեր կան հոն, որ 14 աշխարհք կըբաժնըվի։ Շատ ժողո-

վուրդը սև են քամայ ցեղէն գալով։
Այսոնց սևութիւը երկրին դիրքէն և արևէն է կըսեն. զի իրենց կաշիին տակը բարակ մաշկ մը կայ սևագոյն, անկէ սև կերևնան։

Ինչպէս է Եւրոպա։

161. Այս աշխարհք սև ծովէն կըսկըսի մինչև Պորթուքալ և մինչև ովկիանոս կը հասնի. որ թէպէտ ամենէն պզտի մասն է, բայց խելքով և իմաստութիւն շատ ծաղկած է և շատ զօրաւոր թագաւորութիւններ ունի. նաև 158 միլիոն բնակիչ կայ Եւրոպա. որ 16 աշխարհք կը բաժնըվի. զորօրինակ Մոսկով, Լէմգէ, Գերմանիզ, և այլն (299)։

Ինչ է Ամերիգա։

162. Ամերիգա առաջ անծանօթ երկիր կըսվեր. որովհետև մարդ չգիտեր թէ ասանկ աշխարհք կայ։ Ուստի կերևնայ թէ հին ատենը մարդիկ ալէկոծութիւն գայեր հոն են ընկեր և անծանօթ մնացեր են (419)։ Կամ թէ այս աշխարհք վերի աշխարհքին հետ առաջ կպած ըլլալով, երկրաշարժութիւն բացվեր կտրըվեր է մեզմէ.

թէպէտ հին փիլիսոփաները գրած էին թէ կայ մէկ անծանօթ աշխարհք մը, որ մարդ չէր փնտրուած։

Սակայն 326 տարի առաջ Պոլոմպոս Ձինիվիզ նաւապետը բանիբուն ըլլալով 3 սպանեօլի նաւով Համբայ ելաւ արևմուտքէն հազարաւոր մղոն հեռացաւ, և ամիսներով պտըտեցաւ վերջապէս ցամաք մը գտաւ. նայեցաւ որ աշխարհքիս տակն է հասեր։

Պ.ին տեղի մարդիկ մերկ կը շրջէին անտառներն նման, և բոլոր մարմիններն գուներով ներկած էին։ Պ.սոնց մարմինը սևագոյն էր. երեսը բոլորակ, Հակառակ նեղ.աչքը սև ու մանր, պրունքը սև ու թանձր. քիթը սուր դէպ 'ի վար կախված, ոմանցը տափակ. ամենևին մօրուք չունէին. գըլուխնին քիչմը մազ կար (422)։ Պ.ին աշխարհքին պատմութիւնը Պ.մերիգոս անունով իտալացի մը գրելուն համար, այսպէս կոչվեցաւ։

Ո՞ՐՊԷՏ Է ՄԵԾՈՒԹԻՒՆԸ։

163. Ճիշտ մեծութիւնը մինչև հիմա չէ որոշված. վասն զի միշտ նոր տեղեր կը գտնեն։ Այց ընդհանրապէս ամէն աշխարհքէն մեծ է և հարուստ.

շատ զանազան աղգեր և թագաւորութիւններ գտան հոն սպանեօլները։ Ինչափ հարստութիւն և ոսկի կար, որ փուշ բաներ կուտային ոսկի կառնէին. ապակիի կտորվանքները ոսկիով կը փոխէին. մինչև միամիտ ամերիգացիք կըսէին թէ ոսկին սպանեօլներուն կուռքն է, որ այսչափ կը սիրեն։

Եզի կերևնայ թէ անոնք գլխիվար կը քալեն. մենք ալ անոնց անանկ կերևնանք։ Սակայն երկիրս կլոր ըլլալով ամէն դին երկինք է. անոնց գլուխն ալ երկինքը կը նայի՝ մերինն ալ։ Ուստի ոտքերնիս գետնին վրա ըլլալով՝ մենք ալ շիտակ կը քալենք անոնք ալ։ Այս պատճառաւ երբոր հոս ցորեկ է, հոն գիշեր է. և երբ հոն կէսօր է, հոս կէս գիշեր է։

Աշխարհս քանի՞ կողմ ունի։

164. Որս կողմ կը բաժնըվի աշխարհք, Արևելք Արևմուտք Հիւսիս Հարաւ. և այս կողմերէն փչած հովերն ալ այսպէս կը կոչվին։

Երբոր երեսդ արեգակին դին դարձընես կէսօրուան ատենը, ձախ կողմդ

արևելք է, աջ կողմդ արևմուտք, ետիդ հիւսիս, առջևիդ հարաւ։

Ի՞նչ է ծովը։

165. Ծովն է ընդարձակ ջուր մը, որ կը պատէ բոլոր երկիրս. անանկ որ այս պատմած մեծ աշխարհքներս բոլոր պատած է ովկիանոս ծովը և աշխարհ մէջն են. որ չորս մասն կը բաժնըվի և ամէն ծովերուն մայրն է։ Օ՛ն ասկից կը բղխի Պալտիկ ծովը Ֆանիմառքային քովէն, և կերթայ մինչև Ռեդրպուրկ։ Ը՛ռաբիայի կողմէն կը բղխի կարմիր ծովը, և կուգայ կը մօտենայ Հերմակ ծովին Եգիպտոսին մօտ։ Պարսից ծոցն ալ անկէ կը բղխի։

Ասկ Հիպիլթէռայի բերանէն կը բղխի Հերմակ ծովն, ու ստամպօլի նեղուցով կը հաղորդի սև ծովին հետ։ Ը՛սկից ալ կը բղխի ազաքսու ծովը Թամանու բերանէն։

Ա՛ինայն կասպից ծովը ուրիշ ծովերուն հետ չի հաղորդիր. ոմանք կըսեն թէ գետնին տակէն Համբայ ունի։

ԾՈՎԸ ԵՆԷ ԿԱՅ։

166. Ծովին տակը լեցուն լեռներ՝ փոսեր՝ և հանքեր կան. տեղ տեղ շինվածք գերեզման և Ճամբաներ կը գտվին, ինչպէս տեսած ենք։

Կերևնայ թէ այն տեղերը առաջ ցամաք ըլլալով մարդ կը բնակէր. յետոյ երկրաշարժութիւնը ցածնալով ծովը կոխեր է։ Տեղ տեղ ալ առաջ ծով էր, հիմա ցամաք է. ինչպէս նաև կապելու տեղերը կերևնան լեռներու վրա. ուր քար կտրած ձկներ և ոստրէներ ալ կը գտվին, որ ետքէն քարացեր են (321)։

Ծովին մէջ մեծամեծ կենդանիներ կը բնակին ցամաքէն աւելի։ Ինչափ մեծամեծ ձկներ կան որ կարծես թէ մէյմէկ կղզի են. և շատ զարմանալի կենդանիներ կան, որ կովի նման, որ ձիու, որ շան, որ մարդու նման, եւ։ (Նէմաբ. 861)։ Այս բոլոր կենդանիները ծովին փոսերուն մէջ ճաղ կը հանեն. ինչպէս իսակիւմրի ձուկը սև ծովէն կերթայ Ճերմակ ծովը հաւկիթը կը ձգէ. որ հոն աւելի խոր ըլլալով շուտով առաջ կուգան. անոր համար սև ծո-

վին մէջ այնչափ խոշոր ձուկ չի կայ։

Ովվին աղիութէն աւելի կը մեծնան ձկները. բայց այս աղիութիւնը աղային և ձիւթային հանքերէն կը պատճառի։ Ասոր թէ որ 32 ամսոյ ծովի ջուր արևը դնես՝ ամսոյ մը աղ կելլէ։ Եվ որ նոր ամսոյ մը բերանը գոց ծովին մէջ դնես, ջուրը ներս կանցնի ամսոյին մէջ և կանուշնայ 24 ժամին միջոցը։

ԼԻՄԸ։

167. Լիմն է պզտի ծով. ինչպէս է Գալիլեայ ծովակը խորունկ և աղի. շրջապատն է 12 օրուան ճամբայ. և ունի 4 կղզի, որ վանքեր են. Գալիլեայ, Լիմ, Կոտուց, Գոտէր։ Հոս երևցաւ ՅԾԱԾԻՆ Կրիգոր նաբեկացիին, ու յոր իրեն տալով բսաց՝ «Գէր։

Գոր մօտ է Գոնճակու լիմը՝ խիստ խոր և աղի, շրջապատը 8 ժամ կը քշէ։ Ովվակ թելայ կլսվի երևանու լիմը. ջուրը սեւագոյն. 3 կղզի ունի, և շրջապատն է 6 օրուան ճամբայ։ Ձուկ չի կայ հոն. թէ որ գետերէն գալու ելլայ մէկէն կլկուրանայ կը մեռնի։

Սևանու կամ գեղամայ ծովն է ե-
ւեբի լիՃ, քաղցրաջուր և ձկնաբեր.
2 ամիսը 12 տեսակ ձուկ կը բերէ.
ընդարձակն է 75 մղոն. մէկ կղզի մը
ունի որ վանք է։ Այս վանքին մէջ
ճծամայրը երևցաւ երջանիկ Մխի-
թար Աբբային, ու իմաստութեան
շնորհք տրվաւ իրեն. որ գնաց Մ-
տիկ ՝ի Ազարու վանքը շինեց, և
այնչափ գիտութիւն զարդարեց (359)։

Ամենէ կըլայ գետը։

168. Գետերուն սկիզբը վազած
ջրերէն կըլայ. որ իրար խառնըվե-
լով կը շատնան ծովի պէս կըլլան։
Օրինակ՝ Եղրոս գետին սկիզբն
է երկու ջրհոր. ուսկից կը բղխի ջու-
ը և երկար Ճամբաներ ընելով, այն-
չափ կը շատնայ որ 7 լեռներէն վար
կիջնի 200 ոտնաչափ բարձրութէ.
անանկ որ ջրին տակէն կանցըվի։
Մ՝երջը կուգայ եգիպտոսէն կանցնի
ու միջերկրական ծովը կը թափի 5
բերնէն (238)։

Իսկ գրեսիտին չորս գետերուն գը-
լուխն է Արզրումին մօտ։ Եփրատ
գետը 1500 մղոն կերթայ և ծովի
նման կըլլայ ու պարսկային ծոցը կը

վազէ։ Բ.որ կը խառնըվի Տիգրիս գետը պաղտատու մօտ. որ պինկէօլէն կելլէ, որ Տօրոս լեռան առջին գետինը կը բացվի տակը կանցնի, ու միւս կողմէն կելլէ կը վազէ մինչև Պաղտատ և Պասրա (190)։

Ամանապէս Եփրատ գետն ալ Հայաստանէն կելլէ, որ գեհոն կըսվի. և Եփրատ Թագաւորին անուամբը այսպէս կոչվեցաւ։ Իսկ Նորոս կամ Գիսոն գետը սև ծով կը վազէ լազիստանէն։ Մոռ ուրիշ գետերը, ինչպէս է Դանուբ՝ որ գվիցցէրիի լեռներէն կելլէ, սև ծով կը թափի։

Իսկ ամազոնեաց գետը ամերիգային՝ այնչափ մեծ է որ 5400 մղոն կերթայ, ու ովկիանոս կը թափի. բերանը 250 մղոն լայն է (453)։

Ինչ է աղբիւրը։

169. Աղբիւր կըսվի որ ինքնիրեն կը բղխի. վասն զի հողին տակը անանկ տեղեր կան որ երբ անձրև կուգայ ջուրը հոն կը դիզվի, ու տեղէ մը կը վազէ։ Ինչ համար հին ատենը սըրբարան բան մը կը համարէին աղբիւրը։ Աստի ջուրը զանազան տեղերէն անցնելով կը փոխվի։

Բ.ռողջարար ջուր մը կայ Լ.ուգ-դոն որ գինիի համ ունի։ Ֆռանսա դեղին ջուր մը կայ, որ վազելով կը քարանայ։ Սպանիա ջուր մը կելլէ, տակը թթու է, վրան անոյշ։

Ճեաբօն ջուր մը կայ ինչ որ ձգես մէջը՝ քար երկաթ կը հալէ. մաՀառըստան աղբիւր մը կայ, երբոր ջրին մօտենան կենդանիները կը մեռցնէ։ Մօտէնա իւղախառն ջուր մը կայ, որ կը վառէն, և այլն։

Ինչ է կղզի։

170. Կղզին է պզտի երկիր ծովուն մէջ, ուրը մեծ ուրը պզտիկ. ինչպէս են ինկիլթէռռայի և Ճեաբոնայ մեծ կղզիները, որ աշխարհքիս հետ միատեղ ստեղծվեցան։ Սակայն շատ կղզիներ ետքէն երկրաշարժուէ վեր ելան. շատն ալ վար անցան լեցուն մարդերով։ Սանդուրին կղզին մօտ պզտի կղզի մը վեր ելաւ. շրջապատն է 9 մղոն։

Եթէ կղզին մէկ կողմէն փակած ըլլայ ցամաքին՝ թերակղզի կըսվի. և նոյն ցամաքն ալ Պարանոց կըսվի, ինչպէս է Մորայու կղզին (319)։

Բ.հա այսչափ աշխարհքներու և

կղզիներու մէջ զանազան ազգերը կը բնակին, որ զարմանալի սովորութիւն և բարք ունին, որոնք աշխարհք լեցուցեր են։

Տեսար արարչին՝ այնչափ բարութիւն,
որ այս մեծ աշխարհքս՝ ըրաւ քու սիրուն.
Ո՛չ տրվաւ թռչնոց՝ ոչ առիւծներուն,
քու անզէն խելքիդ՝ հաւատաց ողջոյն։
Թէ որ խելքդ է բաց՝ միտքդ է իմաստուն.
տէր և թագաւոր՝ կըլլաս ամենուն.
Թէ անխելք մեծնաս՝ և չըլլաս գիտուն,
չես աշխարհքիս տէր՝ այլ գերի ես դուն։

ԽԳ. ՀԱՄԱՐ

Ո՞Ի ԵՂԱԾ ԱՍԻԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ։

171. Ասիայի առջի ժողովուրդն էր Նոյ նահապետին ընտանիքը. ուստիից առաջ եկած են նախ հայաստանցիք, որ կրնան ըսվիլ նաև աշխարհքիս առջի ժողովուրդը ջրհեղեղէն ետև։

Ուստիից են հայերը։

Հայաստանցոց ազգապետն է Հայկ նահապետը։ Յաբեթի թոռան որդին, որ աշտարակաշինուէն ետև դարձաւ իր ժողովրդովը Հայաստան եկաւ, և

արարատի երկիրը գտաւ Հայոց ժողովուրդը, որ Նոյ նահապետին հետ հոն էին մնացեր (157)։

Ամենք ալ բոլորը ժողվեց իր ընտանեացը հետ միացուց՝ եղաւ ազգին գլուխ և ինքնակալ։ Ժողովուրդը լաւ կարգաւորելէն ետև՝ որդւոցը և թոռանցը համար քաղաքներ շինեց, և անուն դրաւ Հայկաշէն։

Ամորոց թագաւորը Ռէլ, որ Նուսուլ կը նստէր, այս բաները լսելով պատերազմ բացաւ և սոսկալի ծեծ եղաւ։ Ռայց քաջ Հայկը զարկաւ թշնամին մեռցուց վանայ ծովին մօտ, ու բոլոր զօրքերը ցրվեց։

Անկէ ետև աւելի կարգաւորելով իր տէրութիւնը շատ ընդարձակեց. ուստի շատ տարի ապրելէն ետև թագաւորական փառքով մեռաւ և իր իշխանութիւնը թողուց անդրանիկ որդուն արմենակին։

Ասանք կըսեն թէ Հայկ 80 տարի թագաւորութիւն ըրաւ, և 246 տարի ապրեցաւ։ Ամոր որդիքներէն զանազան ցեղեր եղան, և նախարար անուանեցան. ինչպէս են խոռխոռունիք, բզնունիք, և այլն։

Արմենակ նոյն քաջութիւն թագա-

ւորեց և ծաղկեցուց իր տէրութիւնը։ Սակայն իր որդին Ս.բամ առաւել զօրաւոր և խոհեմ ըլլալով՝ գրեթէ բոլոր ասիայի տէրեց մինչև Հնդստան. և պատուիրեց որ ամէն ազգ Հայերէն խօսին։

Ս.սոնց անուամբը Հայոց ազգը Ս.ը-ղնդ ըսվեցաւ. որ որդոց որդի թագաւորեցին փառաւորապէս մինչև Պարոյր։

Ասոնի 1178 տարի անցնելէն ետև Պարոյր տիրեց, որ այնչափ մեծցուց և ծաղկեցուց տէրութիւն՝ որ ուրիշ թագաւորները զինքը թագաւոր պըտակեցին, և առջի թագաւոր կոչվեցաւ. վասն զի անկէ առջինները առանց թագի էին։

Ս.ըդ՝ Հայկազանց իշխանութիւնը 1779 տարի տևեց մինչև Սահկ թագաւորը։ Ս.որ օրն եկաւ Ս.ղեքսանդր թագաւորը, որ Հայաստան եկաւ պատերազմեցաւ։

Դայց Սահկ պատերազմին մէջ ընկաւ, և թագաւորութիւը մակեդոնացոց ձեռքն անցաւ։ Մէպէտ Հայոց մեծամեծ իշխաններն ալ միատեղ կը կառավարէին։

Ամրաիոնէ ինչպէս թագաւորեցին։

172. Վահէ թագաւորը մեռնելէն ետև 82 տարի անցեր էր, պարթև ազգէն մէկ իշխանը Արշակ անուամբ, որ Աբրահամու ցեղէն էր, քուշաստանէն եկաւ մակեդոնացիները վռնտեց, ու պարսից և Հայաստանին տիրեց 31 տարի։

Որոր թոռը երկրորդ Արշակ աւելի զօրանալով մինչև հինգ հատաւ. և բոլոր Հայաստանին տիրելով եղբայրը Վաղարշակ Հայոց թագաւոր դրաւ, ինքն ալ պարսից թագաւոր եղաւ։

Այս Վաղարշակ այնչափ խելացի և զօրաւոր թագաւոր էր որ ամէն բան կարգի կանոնի տակ դրաւ, օրէնքներ և կարգադրութիւններ դնելով շատ փառաւորեց ազգը. ինչպէս գրած է Ազգասիրին մէջ։

Հա այսպէս Հայոց տէրութիւնը անցաւ Արշակունեաց ձեռքը, որ հետզհետէ շատ մեծցուցին. մանաւանդ Տիգրան և Արտաշատ, որ աշխարհք դողացուցին։

Տիգրանին եղբօրորդին էր Աբգարը, որ եղաւ առջի քրիստոնեայ

թագաւորը։ Այս ցեղէն էր Տրդատ թագաւորը և Գրիգոր Նը Լուսաւորիչ։

Ինկէ ետև արշակունի թագաւորները որդոց որդի թագաւորեցին. և որչափ որ բարեպաշտութեան մէջ էին շատ քաջութի և բարեկարգութի ըրին։ Այց երբոր քիչ քիչ ածպաշտութէ թուլցան, ու անկարգ բաներու հետևեցան, անէծքի տակ ընկան. ածալ երես դարձուց. մինչև անմիաբան ըլլալով իշխանները դէմ ելան Արտաշիր թագաւորին՝ վար ձգեցին անկարգութեը համար. ու հայոց ազգը խեղճ գերի ըրին պարսիկներուն։

Ասոնի արշակունեաց թագաւորութիը 580 տարի տևեց վերջացաւ, և վերջի թագաւորն եղաւ Արտաշիր։ Ինկէ ետև պարսից կողմանէ մարզպան կամ փաշայ մը կուգար հայաստան. տուրք կը ժողվէր և շատ նեղութի կուտար. մինչև հաւատքի խառնըվելով մեծ կոտորածներ եղան։ Այն վարդան անատեանը նահատակ եղաւ 1036 մարդով։

Գագրատունիք Ինչպէս Թագաւորեցին։

173. Հայոց ազգը 456 տարի շատ

խեղճութեան մէջ մնաց ուրիշ ազգաց գերի ըլլալով։ Յետոյ Ն.շոտ բարգրատունի՝ իշխանաց իշխան և գլուխ ազգին ըլլալով, շատ քաջութիւն և բարեկարգութիւն ազգը գերուէ ազատեց և զօրացաւ։

Ն.յս մեծ գործքերս լսելով Յունաց և այլազգեաց Թագաւորները՝ իրենց հետ բարեկամ ըլլալու համար Թագ ղրկեցին Ն.շոտին. ու Թագաւոր կոչեցին, ինչպէս որ ազգը կը խնդրէր։

Ն.հա այսպէս նորէն սկսաւ Հայոց Թագաւորութիւը, և երեւելի Թագաւորներ նստան Ն.նի քաղաքը. շատ բարեպաշտութիւններ ըրին, ու որդոց որդի 224 տարի Թագաւորեցին. և շատ պատերազմներ ըրին այլազգիներուն հետ։

Յոյներն ալ շատ վնաս տրվին մեր Թագաւորութեան, ու կործանմանը պատճառ եղան։ Վերջապէս իշխաններուն անմիաբան ըլլալովը վերջացաւ։

Ինչո՞ բարգրատունի կըսվին։

174. Վաբուգոդոնոսոր եէմ զարկած ատենը, Շամբատ անունով

հրեայ մը յուդայի ցեղէն՝ Հայաստան փախաւ ազգ մը եղաւ։ Ի՛սոր թոռներէն Ռագարատ անունով մէկը Ա՛ղաղարշակ թագաւորին նախարար (փաշայ) եղաւ։

Յետոյ Հայոց թագաւորները շատ ջանացին որ զատնք կռապաշտ ընեն. բայց իրենց ծածպաշտութիւնը չի ձգեցին, դիմանալով գլուխ եղան. և երբեմն ըլլալով իրենց նախարարուն ինաց, որ թագաւորին գլուխը թագդնօղ էին։ Ի՛հա այս ցեղէն էր Ի՛շոտ բագրատունին, որ թագաւորեց։

Ռակ բագրատունիք Ի՛ջշամ թագաւորին հալածանացը չդիմանալով կռապաշտ եղած էին (176). և եաքը Հայոց հետ մէկ տեղ քրիստոնեայ եղան։

Ասոբինեանց Ռագաւորութիւնը Ինչպէս եղաւ։

175. Ռագրատունեաց թագաւորութիւնն իյնելու պատճառը հոռմընեն եղան. որ վերջի թագաւորը գագիկ նենգութիւնք ստամպօլ բերին ու տերութիւնը ձեռքէն առին. եաքն ալ մեռցուցին զինքը կիլիկիայի մոտերը, յամի ՇՆ 1080։

Ասոր ցեղէն Ռուբէն անունով զօրաւոր իշխան մը գնաց Կիլիկիայի ամուր տեղերը նստաւ ու այն կողմի Հայերը գլխուն ժողվեց սկսաւ զօրանալ. քիչ քիչ Հռոմներուն բերդերը առնելով տիրեց։ Եւ այնչափ մեծցաւ որ իշխան կամ Պէկ կոչվեցաւ. և ինքնապլուխ ազգը կը կառավարէր յամի 1081։

Ասոր թոռը Թորոս շատ ընդարձակեց տէրութիւնը մեծնալով։ Եւ այսպէս որդոց որդի տիրելով այնչափ զօրացան, մինչև Հռոմայու սրբազան Հայրապետը և Նէմցէի Կայսրը թագաւորական թագ զրկեցին Լեոնին, և թագաւոր օծել տվին, յամի 1198։

Ահա նորէն սկսաւ Հայոց թագաւորութիւնը Կիլիկիայի կողմը. որ միաբան ըլլալով հեռզհետէ յաջորդաբար տիրեցին և զօրացան. մեծամեծ տէրութիւնց դէմ դնելով մինչև 295 տարի դիմացան։

Ինկէ ետև իշխանները անմիաբան ըլլալով թագաւորին անհնազանդ եղան։ Սրբոյ սուլդանն ալ տեսնելով եկաւ կոխեց զարկաւ, և վերջի Լեոն թագաւորը գերի ըրաւ. որ ետքէն ազատեցաւ Եւրոպա գնաց,

Փարիզ մեռաւ 60 տարեան, յամի 1393. Նոյ. 19։

Ի՛նչ այս անյաղթելի թագաւորութիւը չորս անգամ զօրացաւ և անմիաբանութիւն կործանեցաւ, ու անունն ալ չմնաց. և բոլորովին գերի եղաւ ազգը օտար ազգաց ձեռքը։

Մէպէտ երբեմն երբեմն ելան զօրաւոր մարդիկ տիրեցին. բայց բան չի կրցան տեսնել։ Պէլգինէ իշխանը ուռպիլեանց զօրացաւ Պաբանու կողմը տիրեց 1435 ին, որուն տակը 6000 տնէն աւելի կար, որ շատ պիտի զօրանար. բայց կիւռճինեբուն նենգութիւնը թունով մեռաւ 3 տարիէն ետև։ Ի՛նչ մնեբն ալ բոլոր կործանեցին ամէն տեղ։

Յետոյ ելաւ Դաւիթ սիւնի իշխանը քաջ և խոհեմ. շատ զօրացաւ, և Մխիթար իշխանը զօրապետ ըրաւ 1722ին. և 4 տարի կառավարելէն ետև շատ անգամ պատերազմեցան յաղթեցին։ Ի՛ երջը անմիաբան ըլլալով նուաղեցան. սակայն Դաւիթ 6 տարի տիրելէն ետև մեռաւ 54 տարեան։

Ի՛սոր տեղը անցաւ Մխիթար զօրապետը քաջ. բայց անմիաբան մարը

գիկ քուն տեղը զինքը մեռցուցին. և անկէ ետև ասանկ զօրաւոր մարդիկ չերևցան. նաև ազգն ալ գերութիւն սորվելով մարդու մտքէն չանցնիր թէ մենք ալ ունէինք անանկ թագաւորութիւն մեծ և փառաւոր, որ աշխարհ կը դողացընէր։ Այսպէս պատմութիւնը մնաց գրքերուն մէջ. ամէնը անցաւ գնաց։

Արդ՝ ինչպէս տեսանք աշխարքիս առջի ժողովուրդը հայաստանցիք էին, և միաբանութիւն ամենուն յաղթող էին. բայց ինչ շահ որ նախանձով և անմիաբանութիւն իրենց գերիներուն գերի եղան. ուրիշները միաբանութիւն զօրացան, մենք անմիաբանութիւն խաւարեցանք։

Ինչ երես ունէին հայերը։

176. Երևնայ թէ ամէն ազգերէն ետև մտաւ հայոց մէջ կռապաշտութիւն. վասն զի Նոյ նահապետ Հայկին օրը ողջ ըլլալով Աստուծոյ կռապաշտութիւնը Հայկ չի հետևեցաւ, զինքը մեռցուց. ուստի քանի որ Հայկ ողջ էր ճշմարտութիւն կար Հայաստան. թէպէտ ուրիշ ազգաց մէջ սկսած էր կռապաշտութիւնը։

Ա.րմենակ անտառ մը տնկել տը-
վաւ զուարճութեան համար, բայց եւոքը
սրբազան համարելով կը պաշտէին։
Շամիրամին ատենը աւելի կռա-
պաշտ եղան հայերը, որ հայաստան
կուռք մը դրաւ երկրպագուի ընե-
լու համար, իբր թէ Ա.ռային յարուի
տրված էր։ Ա.ռային որդին Կարդոս
իր զաւակը Ա.րմենակին անտառին
նուիրեց. ուր տեղ կախարդուի կը-
նէին, և ինչ որ հոն ընծայէին սրբա-
զան կը սեպէր։

Ա.ահագնին օրը աւելի ծաղկած
էր կռապաշտութիւնը, մինչև անոր քա-
ջագործութեցը համար կուռք մը շի-
նեցին իր մեծութիւնը կը պաշտէին.
որուն ցեղէն շատը քուրմ եղան։

Հայերը ասկէ 'ի զատ կուռք չու-
նին. մէկալ կուռքերը ուրիշ ազգե-
րէն առած են. ինչպէս Ա.նահիտն է,
Ա.ստղիկն է, Ա.ռամազդ կամ Զիւս,
Հերմէս, և այլն. (գէս ճէմա". 622)։

Ա.ռշակ Թագաւորը աւելի կռա-
պաշտութի սիրելով, կտրած ատակին
վրա Զիւս ապեց, և զինքը ՚ած կը
կոչէր։ Կաև քանի մը կուռքեր հոռ-
մըստանէն հայաստան բերաւ։ Ա.ռ-
շակունի Թագաւորները շատ կուռ-

քեր քերին, և կռատուններ շինե-
ցին. ու բազարատին որդոցը շատ
տանջանք տվին, ու քանիմը հոգի ալ
մեռցուցին որ հրէութիւնը թողուն
կռապաշտ ըլլան։ Աբգար թագա-
ւորին հայրը Աբշամ վերջապէս զա-
նոնք կռապաշտ ըրաւ. ուստի եղան
բազրատունիք (174)։

Անկէ ետև քրիստոնէութէ լոյսը
ծագեց. Թադէոս և Բարդուղի-
մէոս առաքեալները Հայաստան է-
կան, Աբգար թագաւորը լուսաւո-
րեցին. գրեթէ բոլոր ազգը քրիս-
տոնեայ եղաւ։

Սակայն անկէ ետև Սանատրուկ
թագաւորին օրը նորէն կռապաշ-
տութիւը զօրացաւ. թէպէտ տեղ տեղ
քրիստոնեայ ալ կը գտնուէին. մինչև
որ լուսաւորիչ եկաւ այնչափ հրաշք-
ներով բոլորովին ազգը լուսաւորեց։
Բոլոր կռատունները քակեց, վան-
քեր շինեց և կուռքերը կոտրտեց։
Անկէ ետև 1500 տարիէն աւելի է
ազգը մնաց քրիստոնեայ։

Նաև որ Լուսաւորիչ Հռոմերը-
թալով միաբան պահեց ազգը ուրիշ
քրիստոնէից հետ. ինչպէս իրմէ ետ-
քի հայրապետներն ալ անանկ պա-

հեցին, մինչև Վարդանանց պատերազմին ատենը. ուր ազգը չի կրնալով մարդ ղրկել Մաղկեդոնի՝ Թ ժողովքը, և ասորիներուն սուտ խօսքին հաւատալով զատվեցաւ, յամի 450։ Եթէպէտ շատ հայրապետներ, մանաւանդ Ներսէսն և Լամբրոնացին մեծապէս ջանացին միաբանել ազգը ուրիշ քրիստոնէից հետ, բայց չի յաջողեցաւ։

Ո՞ՐԵ ՍԿՍԱԾ ՀԱՅՈՑ ՊՊՐՈՒԹԻՒՆԸ։

177. Խորենացիին պատմութիւնը նայելով հին ատենը հայոց մէջ պակասէ եղած ուսումը։ Որովհետև հայու ազգը բարակամիտ և բնութիւն ուսման յարմար ըլլալով՝ հայկին ատենէն ուսումնական տեղեկութիւններ կը մակաբերվին։

Վասն զի Եգիպտացւոց նշանագիրներուն նման 200 էն աւելի նշանագիր ունինք հին գրեանց մէջ. զորօրինակ՝ Ծ աշխարհ, Ռ ամենայն, Ւ. որ ըզեմ չէ թէ հին ատենը Եգիպտացիներուն նման մեր ազգն ալ զատնք հնարած է։

Ամանք կըսեն թէ հայոց ամիսներուն անունները հայկին 12 աղջիկ-

ներուն անուններն են. զորօրինակ Ղաւասարդ, Հոռի, Մահմի, Ցրէ, Վաղոց, Ամրաց, Մեհեկան, Ամրեգ, Ամեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից։ Մինչև հիմա Հայաստան այս անուններէն մարդու կը գնեն։ Ուստի կը հետևի թէ աստղաբաշխական ծանօթուի ալ կար մեր ազգին մէջ։

Վարդան կը պատմէ թէ Լեռն Թագաւորին օրը կռապաշտութեան ատենի ստակ գտվեցաւ. որ հայու հին գրով գրված էր հայկազուն թագաւորներուն անունը (171)։

Պարոյր Թագաւորին և Տիգրանին օրը աւելի ծաղկած էր հայաստան դպրութիւնը. վասն զի երաժշտութեան և բանաստեղծութեան ալ մտեր էր. մինչև Վարդգէս իշխանին վրա երգեր շիներ կերգէին։ Իսկ Վահագնին օրը Օրագաշտ մոգն ալ ծաղկեցաւ. որ գիրք շինեց՝ ինչպէս կը պատմէ Կղեմէս աղէքսանդրացին։

Սակայն աւելի Վաղարշակ Թագաւորը ծաղկեցուց ուսումը. իմաստուն մարդիկ շատցան. մինչև բանաստեղծական երգերը կարդալով հասկըցաւ՝ որ իրմէ առաջ երևելի Թագաւորներ եկած են, ուզեց փնտ-

տրուել։ Ուստի Արիբաս գիտնականը Ասուսուլ գրկեց, որ հոն պահված քուրմերուն գրքերէն հայոց պատմութիւնը հանէ։ Այս հին պատմութիւնը կարդաւ կը պատմէր ինչ որ եղած էր Հայաստան Հայկէն մինչև Աղեքսանդր Թագաւորը։

Ինկէ ետև Արիբաս գրեց Ա աղարշակին և եղբօրը վարքը, նաև որդուն գործքերը։ Այս գրքէն Խորենացին ալ հանեց հայոց պատմութիւնը։

Միհրդատին օրը լեզուախօսութիւնը ծաղկած ըլլալով 22 լեզու կը խօսէր Միհրդատ։ Հայց Աբգար Թագաւորը բանաստեղծական բաներ ծաղկեցընելով Թատրոն շինեց իր քաղաքը։ Անոնք ամէն մեհենական գրքերը Ծբինէն Անդեսիա բերել տրվաւ. ուր երկու դպրատուն ալ բացին յետոյ։

Իսկ Արտաշէս Թագաւորը դրպրոցներ և վարժատուններ շինեց, որ զանազան արուեստներ և ուսմունք սորվին, աստղաբաշխուն և Թուաբանութիւն կարդան. այնչափ որ, ուրիշ տեղերէ ալ հայաստան կուգային բան սորվելու։ Անրկրագործուին ալ

շատ ծաղկեցուց, յորմէ կը հետևի և վաճառականուի. և ասկից հարբասուութի և աչքաբացուութի և զանազան հմտուի, որ զանազան ազգաց հետ տեսնելվելով և առուտուր ընելով կելլայ։ Սակայն ամէն ատենէն աւելի ծաղկեցաւ գպրուիը Հայաստան Ս. ռամշապուհ և Ս. Բրտաշիր Թագաւորաց և Թարգմանչաց օրը, այսինքն՝ Սահակին և Մեսրոպին, 407ին։

Որովհետև առաջ Հայու գիր չըլլալուն համար յունաց և ասորոց գրերը կը գործածէին, ՝՝ Մեսրոպ այս դժուարուութիը վերցընելու համար շատ ջանք ըրաւ ձևերը հանեց, 36 գիրը հնարեց (8), կամ հին խափանած գիրը ձևի բերաւ ու պակասը լրցուց։

Ինկէ ետև սկսան ՝՝ծաշունչն ալ Թարգմանել, որ հռոմերէն կը կարդային ժամերուն մէջ։ Ինատենը դպրոցներ բացին ու սկսան աշկերտներուն Հայերէն գրել կարդալ սորվեցնել։ Մինչ զի Հայաստան իմաստուութ լեցվեցաւ, ամէն ուսման տեղեակ եղան. և շատ գիտուն անձինք ելան ու գրքեր շինեցին, և ուրիշ

ազգայ օգտակար գրքերը թարգմանեցին։ Շ արականներ շինեցին և եկեղեցական կանոններ սահմանեցին. անոր համար մեր ծիսարանը Մաշտոց կըսվի՝ որ Մեսրոպին անուամբը, որ Մաշտոց ալ կըսվէր։

Իսկ այնչափ աշկերտներէն 31 անձինք շատ երևելի գիտուն եղան և շատ ծաղկեցուցին դպրութիւնը. և երկար ատեն պակաս չեղան ուսումնականները։

Իսկ Ղերսէս շնորհալին և ուրիշներն ալ աղէկ ծաղկեցուցին ուսումն։ Սակայն թագաւորութիւնը վերնալէն ետև ամէն բան խաւարեցաւ, և տգիտութիւը տիրեց։ Ինչպէտ ՝ի ամենաբարին բոլորովին անմխիթար չի թողուց ազգը. հանեց երջանիկ Մխիթար Աբբան մեծաւ զօրութիւ, որ նորէն ուսումն և գիտութիւն ծաղկեցնէ ազգին մէջ, և լուսաւորութիւն տայ հոգւոյ և մտաց. և իր յաջորդներովը շարունակէ։

Ընչափ մեծ է Հայաստան։

178. Հայաստանու տարածութիւն է 150 հազար մղոն. ծովերով լիճերով և մեծամեծ գետերով ու լեռ-

ներով զարդարված է։ Ոչիրքը և օդը շատ լաւ և ջուրը առողջ։ Շատ զանազան աշխարք կը բաժնըվի։

Յին ատենը չորս մասն կը զատվեր, Ա Յայք, Բ Յայք, Գ Յայք, և Դ Յայք. և 15 աշխարք կը բաժնըվեր. նաև 190 մեծ գաւառ, և 620 փոքր գաւառ ուներ։ Որ սև ծովէն կըսկըսի կիւռՁիներէն և Թաթարներէն անցնելով կը մօտենայ կասպից ծովին. անկէ աՁէմին քովէն անցնելով կուգայ Ս՝ուսուլ և Ուռհա մինչև Ձերմակ ծով։ Նաև տորոսի լեռներէն դառնալով կը հասնի Ամասիա սև ծով։ Ուր 120 նախարարութիւն կային, որ մէյմէկ թագաւորութիւն էին։

Շատ երևելի քաղաքներ կային. ԸրհեՀեղէն հետև առջի քաղաքը Հայաստան շինվեցաւ, որ է նախիջևան. ուներ 30 հազար տուն։ Յետոյ Յայկը եկաւ Ամրատի աշխարքը՝ Հայկաշէն քաղաքը շինեց. ուր թագաւորներ կը նստէին։

Նոքը Ս՝ազարշապատ փառաւոր քաղաք ըրին. որ արշակունի թագաւորները հոն կը նստէին։ Յետոյ

Ուծբին նստեցան, անկէ ալ Ուռհա գացին, որ մեծ քաղաքներ էին։

Իսկ Ռագրատունի Թագաւորները Անի քաղաքը մեծցուցին, և շատ զարմանալի մեծագործ շինվածքով զարդարեցին ու հոն կը նստէին։ Անչափ բազմամարդ և փառաւոր քաղաք էր, որ միայն 1000 ժամ ունէր և 100 հազար տուն։ Իսկ Ռուբինեան Թագաւորները կիլիկիա կը նստէին. և հոն շատ անառիկ բերդեր և քաղաքներ շինեցին։

Ի՞նչպէս հայոց ազգը։

179. Անչափ մեծ էր հայոց ազգն որ չէր համբրվէր, և բոլոր աշխարհք կը դողացնէր մինչև հնդստան (171)։ Միայն մէկ գաւառին մէջ բիւր բիւրուց մարդիկ կային. բայց ամէն կողմէն թշնամեաց մէջն ըլլալով շատ ջարդըվեցան։ Հազարաւոր մարդ կը մեռնէր միայն մէկ քաղքին մէջէն ու չէին հատներ։ Շատ մարդիկ ալ օտար երկիրներ ցրվեցան. ուստի այս ծով ազգը ջարդըվելով հիմա հազիւ 10 միլիոն հայ կելլէ։

Այս ազգը չորս անգամ Թագաւորութիւն ունեցաւ։ Հայկէն մինչև

Ալահէ 59 հայկազուն թագաւորներ նստեցան (171)։ Ազարշակէն մինչև Երտաշիր 28 արշակունի թագաւորներ նստեցան։ Շոտէն մինչև Պագիկ 9 բագրատունի թագաւորներ նստան։ Լոռ 24 ռուբինեանց թագաւորներ նստան Ռուբենէն մինչև Լևոն։ Լաև շատ կուսակալներ մարզպաններ ոստիկաններ և պատրիկներ նստան 50 էն աւելի։

Երդ՝ հայկազանց տէրութիւնը տևեց 1779 տարի. 176 տարի ալ պարապ մնաց։ Երշակունեացը 580 տարի։ Արզպաններուինը 456 տարի։ Բագրատունեացը 220 տարի. և Ռուբինեանցը 295։ Ուստի հայկէն մինչև հիմա է 3926 տարի։

Հայերը ինչ նշան ունէին։

180. Խորենացին կը պատմէ թէ Երտաշէս թագաւորին նշանին վրան գրած էր արծիւ, ագաւնի, և վիշապի գլուխ. իսկ ռուբինեանց նշանն էր առիւծ։ Լաև հին թագաւորները ոճական պատիւ մը ունէին ժողովուրդին առջին. ուստի կերևնայ թէ հագուստնին ալ ահեղ և շատ փառաւոր էր։ Նոյնպէս նախարար-

ներն ալ շատ ահեղ էին. վրանին սամոյր կառնէին՝ որ բոլոր ոսկի զարդերով կը փայլէր. գլուխնին ոսկի թագ. մէջքերնին մարգրտէ կամար. ականջնին օղ, թևերնին ոսկի զարդ. և ներսի լաթերը ծիրանի ոսկեփայլ։ Իսկ լաթին վրայէն իրեք անգին ակունք կախված էին։

Ահա այս փառաւոր թագաւորութիւնը 443 տարի է որ վերջացաւ անմիաբանութիւնք և նախանձով։

Գիտեմ կը ցաւիս՝ մեր ազգին վրան,
թէ ինչո՞ւ եղաւ՝ ասանկ խեղճ խոտան.
Նախանձն է պատճառ՝ չի կայ ուրիշ բան,
որ բոլորն հասուց՝ այսչափ խեղճութեան։
Թէ չունինք հիմա՝ թագաւոր իշխան,
գոնէ ունենանք՝ ուսում գիտութեան,
Աղէկ է ըլլալ՝ ազգքատ իմաստուն,
քան թէ թագաւոր՝ անխելք և անբան։

ԽԴ. ՀԱՄԱՐ

Որոնք են այլ ասիացիք։

181. Ասիայի գլխաւոր ժողովուրդներն են Թաթարները, Հնդիկները, Պարսիկները, Ասորիները, Որոշները, Չինները են։

Թաթարները սկիւթացի կըսվին, որ Յաբեթի որդուն Մագոգի ցեղէն եկած են (157)։ Այս ազգը շատ մեծ ըլլալով ամէն տեղ տարածեցաւ։ Արբեանն եկան Հայաստանին տիրեցին, և ամէն երկիր ապականեցին եւ Եւրոպա անցան. շատ զօրանալով զանազան ազգերու հետ խառնըվեցան. ինչպէս են Մաճառները, և ուրիշ ազգ ալ կայ որ Թաթարէն եկած են։

Այս մեծ տէրուէը Կասպից ծովին մէկալ կողմէն կըսկըսի մէկ ծայրը մինչև Չինուստանին կերթայ, մէկալ ծայրը Մոսկովստան աժտէրխան Սիպերիա, և խըռըմ կը հասնի. ուր հիմա Մոսկովը տիրած է։ Այս շատ զանազան ազգեր կը բաժնըվին. զորօրինակ էօզպէք Թաթար, խազան Թաթար, և։ Այսոնցմէ կան որ անապատներուն մէջ կը բնակին։

Թաթարին լեզուն այլազգեաց լեզուին հետ խառնած է, ինչպէս հաւատքն ալ. բայց մինչև հիմա մէջերը նին շատ կռապաշտ կը գտվին։ Կան որ արեգակ կը պաշտեն. կան որ լաթէ կուռք կը շինեն, բերանը աբիւն ու եղ կը քսեն անանկ կը պաշտեն.

կան որ առիւծի նման կենդանի մը շինած են կը պաշտեն. և իրենց գլխաւոր կուռքը Բաբար կը կոչվի։

Ինչ բարք ունին։

182. Մահմարները օտարասէր են և աւելորդապաշտ. քաջ և գազանաբարոյ մարդիկ շատ կայ մէջերնին։ Այս ազգէն են Խուխարացիք, որ մինչև հիմա կը թագաւորեն. բայց հին ատենը շատ զօրաւոր թագաւորներ ունեցան, որ մինչև Հնդստան գացին։

Ինկիզ խանը շատ զօրաւոր ըլլալով աշխարհներուն ալ տիրեց. և ասոր թոռներէն տիրեցին Հայաստանին և պարսատոու, նաև Եգիպտոսի։

Սակայն լանկթամուր գրեթէ բոլոր ասիայի տիրեց մինչև Հնդստան. շատ տեղ կործանեց և անհամար մարդ ջարդեց, մանաւանդ Հայաստանու մէջ։ Այնչափ գազան մարդ էր որ պարսատ առած ատենը հրամեց իր մարդիկներուն որ մէյմէկ մարդու գլուխ առնեն, ու եօթը աշտարակ շինեն։

Այս թագաւորը շատ մեծ բաներ ըրաւ և շատ աշխարհք կործանեց

բնակիչներովը։ Կըսեն թէ Հայաստանին մէջ որչափ որ գիրք կար, ժողվեց Թաթարստան տարաւ, ու աշտարակի մը մէջ դրաւ պահեց. որ մեռաւ 1406 ին։

Ամոնցմէ են փոքր Թաթարները. որ դունայ գետէն մինչև Ամպազա կըտիրէին. բայց եռքի ատենս 1779 ին Մոսկովին տակը մնան։ Իրենց Թագաւորանիստ տեղն էր խրիմու ցամաք կղզին եռանկիւն ձևով, որուն շրջապատն է 700 մղոն։

Ովք են պարսիկները։

183. Այս ազգը Ադամ կամ Զրադաշտ կըսվի. որ Սեմայ որդուն Աղամայ ցեղէն եկած է։ Շատ հին Թագաւորութիւն է. զի Կիւրոսէն մինչև Դարեհ երևելի Թագաւորներ նստան։

Ետքը Արշակ Թագաւորը տիրեց պարթև ազգէն մինչև Արտաւան. որ սպանվեցաւ սասանեան Արտաշիրէն։ Այս Արտաշիր Ինակին ձեռքովը մեռցուց Յրդատ Թագաւորին հայրը խոսրով, և իրեն անցուց տէրութիւնը։

Այսոր ցեղէն 28 Թագաւոր նստե-

լէն ետև, պարսից տէրութիւնը տաձ
կաց տակը մնաւ 637 ին. և շատ տա
բի ոստիկաններ նստան։ Այ երջապէ
թաթարներուն ցեղէն սկսան թա
գաւորել և մինչև հիմա կը տիրեն։

Այս ցեղերէն շատ երևելի թա
գաւորներ եկան, որ մեծամեծ գնաս
ներով տակն ու վրա ըրին Հայաստան։
Անուանդ Շահաբաս, որ հրաման
հանեց Հայոց որ Հայաստան ձգեն
Էջմիածնի երթան. ուստի բիւրա
ւոր մարդիկ բռնութիւն քշեց տարաւ
և անթիւ մարդիկ ջարդեց։

Ոչինչպէս Ղահմազ խուլի խանը
շատ անօրէնութիւն ըրաւ, մինչև գնաց
Հնդստան զարկաւ. ետքը մեռցու
ցին զինքը։

Ինչ էարդ ուներն։

184. Այս խորամանկ ազգը ամե
նուն հետ աղէկ վարվելով կը յաղ
թէ։ Հին ատենը կրակապաշտ էին.
և ամէն առտու արևին դէմ աղօթք
և երկրպագութիւն կընէին։ Ամէն
տեղ ապրուշան կամ կրակատուն կար
որ կրակ կը պաշտէին։ Անիշտ վառած
պիտի մնար կրակը. ով որ մարէր՝ մա
հապարտ կըլլար։ Շատ հալածանք

ներ ըրին հայոց որ կրակապաշտ ը-
նեն. այս պատճառաւ նոր Ս արդան
նահատակ եղաւ, և այնչափ վնաս
քաշեց ազգը։

Սակայն երբոր տաճիկներն իրենց
տիրեցին, դարձան այլազգ եղան. և
հին կռապաշտական սովորութիւներ
ալ ունին. ուստի ամէն ազգի յարգ-
մարելով կը խաբեն։

Պարսիկները զիրենք մեծ իմաս-
տունի տեղ դնելով մարդու չեն
հաւնիր, և ուրիշ ազգերէն կը գա-
նին, անոնց եփածը չեն ուտեր. թէ-
պէտ իրենք են աղտոտ և գարշելի։

Ոսոնց գիրը կարդալը հին ատե-
նէն 'ի վեր կարգաւորեալ է. ուրիշ
ուսումն այնչափ չունին, բայց քանաս-
տեղծութիւնը ծաղկած է իրենց մէջ.
վասն զի լեզուներն հարուստ ըլլալով
և մտքերնին քարակ՝ գեղեցիկ ոտա-
նաւորներ կրնան շինել։

Ուրշ է տէրութիւնը։

185. Ոչէմին տէրութիւնը Պաղտա-
տէն կըսկսի մինչև ովկիանոս և մին-
չև Հնդստանի կը մօտենայ։ Մեծագա-
ւորը Ովհան կը նստի, որ շատ մեծ
և երևելի մայրաքաղաք է։ Ովկիա-

նոսին քովերը շատ հարուստ քաղաքներ ունի։

Պարսկային ծոցին մէկ կողմը Ը. Ճէմերուն տակն է. ուր երկու կղզի կայ, հոն կելլէ մարգարիտը. ամէն մէկ կղզին 15 հազար պարսիկ կան, որ շատ հարուստ են։ Մարգարիտը նոյն ծովէն կը հանեն, ետքը ամանէն կը պարպեն ու հոն կը ծակեն դուրս կը ղրկեն։ Ը. Ճէմերը իմամ աւլին շատ պատիւ կընեն. Ճամին պաղտատու կողմն է. գրեթէ 15 հազար ուխտաւոր կերթան հոն շատ գանձով։

Ը. յս Ճամին Հիլլա քաղքին մօտ է։ Գերեզմանը Ճամիին մէջ տեղը շինած է անգին քարերով. մինարէները բոլոր ոսկեզօծ են։ Ը. յս Ճամիին մէջի եղած ոսկի կանթեղները և արծաթեղէնները անթիւ էին. նաև գերեզմանին վրայի ծածկոցը, որ բոլոր մարգարտով և անգին քարերով զարդարված էր։ Ճամիին պատերը բեհեզով և կերպասներով լեցուն էին. բայց Վահապին բոլորը յափշտակեց մեր օրը, գերեզմանն ալ ապականեց։

Ո՞Վ ԵՆ ԱՍՈՐԻՆԵՐԸ։

186. Այս ազգը Սուրէն առաջ եկած է, որ Սեմայ պզտիկ որդին էր. և Տիգրիս գետին քով քաղաք մը շինեց՝ որ նինուէ կոչվեցաւ, հին ատենը շատ մեծ քաղաք էր։

Սոր թոռներէն էր Նեբրովդ կամ Ռէլ, որ պաղտատու կողմի ժողովուրդը ժողվեց միացուց և եղաւ առջի թագաւորը։ Իր մեծութիւնը նայելով սկսաւ հպարտութիւն զինքը այ տեղ դնել. և եղաւ նաև առջի կռապաշտը։ Յետոյ մեր Հայկին վրա պատերազմ եկաւ. Հայկն ալ քաջութիւն աղեղով զարկաւ սատկեցուց զինքը։ Սոր որդին ալ կուռք շինեց, և սկսան ուրիշներն ալ պաշտել։

Սոնցմէ եղաւ Շամիրամ թագուհին, որ եղաւ առջի ինիկ թագաւորը. շատ զօրացաւ և շատ տեղ տիրեց։ Երևելի գործքեր ըրաւ, սարսափելի մեծ պատմը քաշեց անապատին դէն, որուն վրա ձի կը խաղցընէին։ Սոր ցեղէն շատ երևելի թագաւորներ նստան որ մինչև հրէաստան տիրեցին, և գրեթէ բոլոր ասի-

այի իշխեցին. ինչպէս էր Արդանա-
քաղ, Աղմանասար, Աբուգոդո-
նոսոր, և ն։

Բայց վերջապէս նուաղելով փձա-
ցան. և հիմա տկար և անշահ ազգ
է. որոնց աշխարհքը Շամէն կըսկը-
սի կը հասնի Ցիարպէքիր և Պաղ-
տատ. երևելի քաղաքներ կան, որ
հիմա այլազգներուն տակն են։

Որոնց նման են Բաղդէացիք որ
են քիլդանցիք, որոնցմէ էր հայը
Աբրահամ։ Որոնք հին ատենէն ի-
վեր երևելի ազգ մը չեն. բայց իրենց
լեզուն շատ հին է, և հրէաներուն
լեզուն անկէ ելած է։

Այս ազգերը տգէտ ըլլալով ար-
տարոց ծէսեր ունին և մոլորութիւն
կը հետևին։ Որոնցմէ ելած են կը-
սեն Եգիպտիք՝ որ ասորեստանի կողմը
կը բնակին Թափառական ինքնաս-
գլուխ. շատ գօրաւոր ըլլալով տեղէ
մը վախ չունին։

Բրիստոնեաները շատ կը սիրեն,
սատանան չար սկիզբը դնելով շատ
կը վախնան. պատարագի նման բա-
ներ կընեն, և արևին դէմ չոգած
կը կենան, ուրիշ բան մը չունին։ Ան-
որ բոլորնին գիծ մը քաշես, չեն կըը-

նար գծէն անցնիլ, մինչև որ մէկ չաւրէ։

ՈՂԵՆ ՎԻՃԱԿ։

187. Ասոնք են կիւռձինները, որ Հայաստանին մօտ կը բնակին՝ մինչև պարսկաստան և մինչև մոսկովստան, Ասոնց մէջ զանազան ցեղեր կան, ինչպէս են Աչըգպաշ և ԱլՀիկռէլ, որ արտաքոց սովորութիւններ և աւելորդապաշտութիւններ ունին։ Իրենց զաւակը կը ծախեն առանց խիղճմտանքի։

Ալրայիք խիստ խաբեբայ են, և խաբէութիւն իրենց տէրութիւնը պահեցին. որ կռապաշտութեան ատենէն կը թագաւորէին Հայոց իշխանութեան հնազանդ ըլլալով։ Ասոր համար Հայոց կուռքերը կը պաշտէին իբր թէ Հայոց կապիկն էին։

Ուստի քրիստոնէութեան ատենը ՝ի Ալեքսոպ իրենց գիրը գտաւ, և դպրութիւն սորվեցուց։ Իսկ քրիստոնէութիւնը՝ Լուսնէ կուսէն սորվեցան, որ ՝ի Յուիսիմէին մէկ ընկերն էր։ Ալակայն Հայերը իրենց կաթողիկոս կը դնէին։

Ալ էրջը Կիւրին վրաց կաթողիկոսը ստամպօլ գնաց, քննեց Հասկը-

ցաւ որ քաղկեդոնի ժողովքը ՝ՍԲ է։ ընդունեցաւ և յունաց հետ միաբանեցաւ. որով և հայոցմէ զատվեցան մինչև հիմա։ Ասոր ատենները իրենց տերութիւնը Մոսկովին տրվին։

Կուռ Ճիստանէն անդին են Լեզկիները, որ գաղանաբարոյ ազգ ըլլալով աւազակութիւն իրար կը զարնեն գերի կընեն։

Իսկ Ղզուան ազգը Հայկայ ցեղէն եկած է շատ քաջ. որ առաջ քրիստոնեայ ըլլալով հայերը իրենց կաթողիկոս կը դնէին։ Այց հիմա բոլորը անհաւատ են. թէպէտ հին սովորութիւններ ալ ունին, որ խմորին վրա խաչ կընեն. նաև հայու բառեր ալ կը գործածեն, և՝։

Ասոնց երկիրները աՃէմին ու հինտին մէջն են. իրենց գլխաւոր քաղաքներն են. Շիրվան, Գանտահար, Շամախի, և՝. շատ հարուստ և զօրաւոր են։

Կան ասիայի մէջ շատ զանազան ազգեր. Թուրքմէն, որ Թորգոմայ եկած են. Թիւրատ՝ որ վրանաբնակ են, և աշխարհքիս աղէկ լեռներուն վրա կը բնակին. բուն իրենց աշխարհքը ասորեստանէն անդին է.

փաշաներ և հարուստ իշխաններ ունին։ Սոնք մարաց ազգէն են, որ հին ատենը շատ մեծ տէրութիւն էր. բայց հիմա այլազգ ըլլալով՝ այլազգաց տակն են, պաղտատու փաշային հնազանդելով։

Ասկէց են օսմանցիք։

188. Այս ազգին սկիզբը Թաթար և Թուրք են, որ Թիւրքմէն ազգէն եկած են, և կասպից ծովին մէկալ գին կը բնակէին։ Ասոնք 1300 ին Արթողրուլ սիւլէյման շահին որդին Թուրքաստանէն փախաւ Ճինկիզխանին ձեռքէն՝ եկաւ Ղ՝ օնեայ սուլդան Աղայատին քով, որ՝ կըսվեր Ալ՝ օլա հիւնքեար։ Ան շատ քաջութիւն ընելով զօրապետ եղաւ Աղայատին մինչև մեռաւ։

Այսոր որդին օսման հօրը տեղն անցաւ, և անկէ շատ աւելի քաջ ըլլալով շատ տեղ առաւ. և այս առած տեղերուն Թագաւոր եղաւ, ըստակ ալ կարեց։ Այնչափ որ երբ Աղայատին մեռաւ, օսման անոր տեղը Թագաւորեց և եղաւ առջի Թագաւոր օսմանցոց. որ որդւոց որդի աւելի զօրանալով ասիայի շատ տեղին տի-

բելէն ետև՝ անցան յունաստան ալ տիրեցին։

Ինչ զի՝ ասոր թոռանը թոռնե-բէն սուլդան մէհէմմէտ եկաւ ստամ-պօլ առաւ, յոյները ջարդելով թա-գաւորութիւնը վերցուց. և 1453 ին թագաւոր նստաւ ստամպօլ (310)։

Հայ այս ցեղէն մինչև հիմա կը-թագաւորեն, որ 30 թագաւոր նըս-տան Ուլդան օսմանէն մինչև Ուլ-դան Ահմուտ. որ է ինքնիշխան կայսը և հրամայօղ բոլոր ազգին. թէպէտ գուռ ունի, ուր մեծ վէզիր կը նստի իբր փոխանորդ, որ խորհը-դական իշխաններով կը կառավարէ իր տերութիւնը։

Այս ազգը իր գիրն ու հաւատքը և շատ արարողութիւնները արապնե-բէն առած է. որոնցմէ էր Ահու-մէտ, որ ծնաւ Էքքէ քաղաքը ա-բրապներուն՝ յամի ՌՆ 570. իր հայրն էր Պատալ և մայրը Ամինէ, որ կուապաշտ էին, և մանկութեան ատե-նը մեռան. ուստի հօրեղբայրը Պ-ուխալէպ զինքը մեծցուց։ Ահ-մէտ 7 զաւակ ունեցաւ ամէնքը մե-ռան, մէկ Ֆաթմա աղջիկը մնաց որ Պ-ուին տըվաւ։

Երբոր սկսաւ Մահմէտ իր օրէնքը հաստատել, մէքքեցիք կռապաշտ ըլլալով ուզեցին զինքը մեռցնել, փախաւ անապատը։ Ահա ասկէ կրակրսի այլազգներուն թուականը հիճրէն, որ փախուստ ըսել է։

Սակայն 622 ին Մէտինէ գնաց իր մարդիկներով, և հոն հաստատեց օրէնքը. անանկ որ քիչ ատենին մէջ բոլոր ժողովուրդը դարձուց. և շատ անգամ պատերազմելով յաղթեց. մինչև 630 ին Մէքքէին ալ տիրեց։ Դայց 633 ին Մէտինէ մեռաւ 62 տարեան. 10 տարի ամիրապետուիր ըրաւ։

Իր տեղն անցաւ Ապուպէքրին աները, յետոյ Ալին, և ասոր որդիքը Հասան, Հիւսէին. որ յետոյ իրենց աթոռը փոխադրեցին Շամ, անկէ ալ Պաղտատ. ուր խալիֆա անուանով կը տիրէին։

Երբոր պարսիկները, Թուրքերն ու Թաթարները դարձան այլազգ եղան, ամէնքը իրար խառնըվելով զանազան ցեղերէ տեղ տեղ Թագաւոր կը նստէին։ Ահա օսմանն ալ Սիւլէյման շահէն եկած է, որ էր Թուրքաստանէն (309)։

Ո՞Ր Է ՀԷՏԷ։

189. Ի. յս անուանի քաղաքը կարմիր ծովին ծայրն է ովկիանոսին մօտ երջանիկ արաբիայի մէջ. ուր մեծագործ Ճամբին մէջ պահված են իրենց հաւատքի բանները, և ոսկորները իրենց մեծին. անոր համար մեծ սխտատեղին է անոնց։ Իսկ բուն գերեզմանը Մէտինէ է շատ հարուստ։ Ի. յս քաղաքներուն բնակիչներն են արաբ, շատը գող աւազակ են։

Ի. սկէց մինչև ովկիանոս է երջանիկ արաբիա, ուր կան երևելի քաղաքներ. Եմէն, Միտտէ, Մոքահոս է նեղուցը պապէլմանտեալ։ Մէքքէն մինչև պաղտատ ընդարձակ անապատ է երկու ամբեան Ճամբայ կը քաշէ. որ բոլոր իբր աւազէ ծով է, բան չի կայ. միայն տեղ տեղ բաներ բուսած են։ Ի. յս անապատներուն բնակիչներն են զանազան ցեղ արաբներ, որ իրենց շէյխէրով կը կառավարվին շատ հարստութիւնք. ոմանք հնազանդ են պաղտատի փաշային։

Բայց շատը վահապիներն են. որ անհիւ բազմութիւնք վրանով կը շրջին։

Լ՝սոնք ոչ ծոմ ունին ոչ աղօթք. միայն վահապ անունով արապ մը գիտեն. որ իրենց օրէնք տված է, թէ ուրիշ բան մը չընդունին, միայն ՅՍ հաւատան, և այլոց ներում ընեն։

Ո՞Ր Է ԴԼՃԳԷՊ։

190. Միջագետն է Լ՝փրատին և Տիգրիս գետին մէջի երկիրները, որ Տիարպէքիրէն կառնէ մինչև Պասրայի մօտ Լ՝սօրնա քաղաքը կը հասնի. ուր այս երկու գետերը իրար կը խառնըվին, ու պարսկային ծոցը կը թափին (168)։ Լ՝րկայնուԹիը 600 մղոնէն աւելի է։ Մեծամեծ քաղաքներ կան մէջը. որ հին ատենը շատ երևելի էին. Մ՝ուսուլ քաղաքին երկայնուԹիը 3 օր կերԹար. Մ՝ծբին մեծ քաղաք էր, հին Պաղտատ, Ուրհայ, Մ՝երտին, ևն։ Լ՝այս աշխարհքին կէսը կըսվի միջագետք հայոց, կէսը ասորոց. մէկ մասն ալ անապատ է, ուր շինած էր Շ՝ամիրամին սարսափելի պատը արապներուն դէմ։

Մ՝իջագետէն դուրս շամի կողմը անապատին մէջ մէկ սքանչելի քաղաք մը կայ բոլոր քարաշէն՝ Լ՝ալմիա կըսվի, որ Օ՝էնոբիա Թագուհին շի-

ներ է. բայց հիմա բնակիչ չի կայ մէջը։

Ո՞Ր Է ՊԱՂԴԱԴ։

191. Որ պաղտատ Տիգրիս գետին վրա շինած է. 4 ժամ կը քաշէ շրջանակը. և 80 հազար բնակիչ ունի. շատ հարուստ և բազմավաճառ քաղաք է։ Փաշան Թագաւորի մեծութիւն ունի. և այն կողմի փաշանները ինքը կը դնէ կը վերցնէ քսանէն աւելի։

Պաղտատէն 12 մղոն հեռու բաբիլոնի աշտարակն է. ուր լեռան պէս աւերակ մը կերևնայ հեռուէն։ Որ ըրաձև շրջանակը 250 կանգուններն աւելի է. և իբր 40 կանգուն բարձր կերևնան պատերը դռներով և պատուհաններով. բայց բոլորը հողով լեցված են։ Պատերը աղիւսով (քէրփիչով) շինած են եղէգներով շարած, որ ձիւթով քարացած են խիստ կարծր։ Այս սարսափելի շինվածքը տեսնողները կը հաստատեն թէ հիմը շատ խորը գրած պիտի ըլլայ. բայց շատ բարձր չէր կրնար ելլել, և մինչև երկինքը հասնիլ անկարելի էր։

Բ.ՐԴ՝ մինչև հիմա ասիային ծանօթ աշխարքներուն և գլխաւոր ազգերուն վրա գրեցինք. ասկէ ետև հեռու ազգաց վրա պիտի պատմենք, որ անապատներով և ծովերով զատված են մեզմէ. ինչպէս է հնատտան, չինուսմաչին, ևն։

Այս բոլոր ազգերն՝ եկան ու գացին.
կերպ կերպ փոխվեցաւ՝ իրենց քաղաքներին,
Մէկ գոնէն մնան՝ այս մեծ աշխարքին,
մեկալէն եկան՝ ամէն բան թողին։
Միայն բարին է՝ մարդուս պիտանին,
այն միայն կերթայ՝ իրենց հետերնին.
Ջանա՛ ժառանգել՝ այն գանձն ու բարին,
որ անմահ մնաս՝ թէ հոս թէ անդին,

ԽԵ. ՀԱՄԱՐ

ՈՂԷՆ հնոսպանցիք։

192. Հնատտանցիք Սեմայ որդուն մէն Աղամէն եկած են. ուր բազմանալով այնչափ աճեցան, որ զանազան ՝ոերու թիներ եղան. բայց թոյլ և անմիաբան ըլլալով հին ատենէն՝ ի վեր շատ ազգերու տակ ընկան։ Ասոր հին թագաւորներն ալ տիրեցին. նաև Աղեքսանդր թագաւորը, Դաա

րեկ, եւ։ Վերջը Թաթարներուն Թագաւորը Անկթամուր զարկաւ տիրեց մինչև որ մեռաւ։

Որոր Թուռներուն մէկը լաւ հաստատելով Թագաւորութիւնը օրէնքներ դրաւ. նաև Սուպա և Ղապաղներ հաստատեց իրեր վեզիր. և ուրիշ իշխաններ դրաւ Խաձա անունով։ Որոր օրէն ետև Սողոլ ըսվեցաւ այս աղգը։

Այս Թագաւորը Պապուր կըսվեր. ամէն տարի իր բոլոր իշխաններովը զարդարված անհամար գանձերով և գոհարներով, նաև փառաւոր ձիերով, ինքը զարդարուն փղի մը վրա նստած քաղքէ քաղաք ժուռ կուգային. միայն ասոնց տեսքը աշխարք կը գողացըներ։

Այս խելացի Թագաւորը մեռնելէն ետև նորէն այս մեծ տրուԹիւնը կտոր կտոր եղաւ, և Ղապաղները անմիաբան ըլլալով գլուխ քաշեցին։

Գահմաս խուլի շահը պարսից՝ հասկըցաւ որ մոգոլները անմիաբանուԹիւն իրար ընկեր են. գնաց կոխեց Հնտստան 1739 ին, 60 հազար զօրքով աւրեց 400 հազար հինտերը, և մտաւ Ջըլլի Թագաւորանիստ քա-

ղաքը. անբաւ գանձ առնելէն ետև թագաւորին գահն ալ յափշտակեց ետ դարձաւ։

Այս գահն էր աթոռի նման վարպետ շինած. և ձևացուցած էր կայնած սիրամարգ մը՝ պոչին փետուրները բացած, բոլոր գունեերովը ոսկիէ և անգին քարերով զարդարված և նմանցուցած զարմանալի կերպով։

Իսկ կուրծքին վրա մեծ անգիւտ քար մը կար կարմիր յակինթ. վզէն ալ կախված էր հաւկըթի մեծութիւն մարգարիտ մը, որ ոչ եղէր է, և ոչ պիտի ըլլայ։ Երբոր թագաւորը այս գահին վրա կը նստէր մեծ օրերը՝ արեգական պէս կը փայլէր։

Այս գահը աձէմիստան բերաւ. ետքը կտոր կտոր ուրիշի ձեռք անցաւ. որուն արժողէքն էր 25 միլիոն ոսկի, թէպէտ գին չունէր։

Ինկէ ետև այս ճրուութիւնը կտոր կտոր բաժնվեցաւ ու մինչև հիմա ինքնագլուխ թագաւոր մը չեղաւ։ Բայց այս ճրուտը այնչափ ճոխ էր որ մէկ տարուան եկամուտը՝ աշխարքիս բոլոր թագաւորներուն առաջէն շատ էր։ Իսկ թագաւորական

Տրեպի քաղաքը այնչափ մեծ էր որ Լանկեթամուր 40 օր մէջը նստաւ բոլոր զօրքովը՝ մարդ չէր երևնար քաղքին մէջ։

Բայց Դահմաս քակեց քանդեց բոլոր մեծուները կողոպտելով, և սոսկալի մարդ ջարդելով. զի մէկ օրը 100 հազար հոգի ջարդեց։

Ուրիշ է Հնդսպան։

193. Հնդստան շատ բազմամարդ և ընդարձակ երկիր է, հարուստ և փառաւոր, որ ասիայի մեծ մասն ըլլալով բոլոր եւրոպային կիսուն չափ կայ։ Ամէն քաղաք և ամէն տեղ լեցուն մարդ է. շատ քաղաք կէս միլիոն մարդ կելլէ։

Այս ժողովուրդը բնութիւն հեզ և բարեսիրտ է, բայց ամէնքը մոլի և ստոստաց են. ամէն բան կը խոստանան, բան մը չեն կատարեր. վասն զի իրենց մէջ՝ չէ ըսելը մեծ ամօթ է. բայց չի կատարելը ամօթ չէ։

Հարաւային կողմի բնակիչները մերկ կըշրջին, միայն լաթ մը կապելով առաջնին։ Կերակուրնին բրինձ ու անուշեղէն է. ամենևին միս չեն ուտեր. զի կենդանի մորթել և միս

ուտելը մեծ մեղք է իրենց մէջ. թէ-
պէտ օգն ալ չի տանիր որ ծանր բան
ուտեն. թէ չէ՝ մէկէն փորհար կըլ-
լան, կըմեռնին։

Ասոնց դէմքերնին սևագոյն է,
բայց արապներուն պէս սև չեն.
օրէնք ունին որ ծովու վրա ճամբորդ-
ութիւն չընեն. անոր համար օտար
ազգերը վաճառականութիւն շատ բան
կը վաստըկին հոն. թէպէտ իրենք
ալ շատ աչքաբաց են առուտուրի։

Ասիոն ուսումն։

194. Հնդստանցիք ամենևին ու-
սումն գիտութիւն չունին. միտքերնին
բարակ է, բայց պարապ բաներով
կըշատանան։ Իրենց լեզուն այլոց
ազգաց լեզուէն տարբեր է. ունին
անկատար նշանագիրներ. սակայն
գատաստաններուն մէջ պարսից գի-
րը կը գործածեն։

Տեղ տեղ մատներնուն վրա, նաև
շուանով թուաբանութիւն կընեն. և
զարմանալի դժուարութիւն իրարու բան
կը հասկըցնեն։ Այս գիւտերը ի-
րենց մէջ այնչափ մեծ բան են որ
մարդու չեն սորվեցներ. միայն զաւ-

կըներ նուն կը սորվեցնեն, անալ մինչև որ չափահաս ըլլայ՝ չեն յայտներ։

Ինչ հաւատք ունին։

195. Ասոնց հաւատքը իրեք գրքի վրա կեցած է. որ զանազան նշանագիրներով գրած են. և իրենց օրինաց գրքերն ըլլալով՝ քուրմերը պէս-պէս մեկնութիւններ կուտան, մինչև 83 աղանդ բաժնած են։

Ուստի այլևայլ ժողովուրդ պէս-պէս աղանդ ունի։ Կան որ մէկ ՝ած մը կը պաշտեն. շատը զանազան կուռքեր ունին։ Այց գլխաւորն է Ինկլոնոպ չՀածը, որ է աշխարքիս տէրն ու կառավարը՝ ինչպէս կաւտան. որուն երկու ձեռքը կտրած կը գրեն։ Երկրորդն է Սէպ չՀածը, որ աշխարքիս Հայրն է կըսեն։ Երրորդն է Ռոբիա չՀածը, որ է Սէպ չՀածին կնիկը. որ 10 ձեռքով կը գրեն։ Ասոնց որդիքը և զաւակներն ալ կան։ Եւ ամէն մէկ բանին ալ մէյմէկ չՀած գրերեր են. և այնչափ կենդանիներ և ծառեր պաշտելով 60 հազար չՀած ունին։ Իսկ աւելի՝ աստղերը կը պաշտեն։

Այնպէս կովին մեծ պատիւ կու-
տան, կռատուն ալ շինած է՝ և ա-
մէն առտու կերթան կը համբուրեն,
որ է իրենց մայր ջրածը, կաթ տալուն
համար։ Իսկ հաւը կանարգեն ձձի
ուտելուն համար՝ որ իրենք կը պաշ-
տեն։ Երբոր մէկը անիծել կուզեն,
կըսեն թէ հաւի միս ուտես։

Ասոնց կռատունները մեծ քարա-
շէն են՝ առանց պատուհանի միայն
մէկ դռնով, խորանը արևելքի կողմն
է. կուռքը սեղանին վրա կը դնեն։
Էջ տեղը աւազան մը կայ լեցուն
ջրով. ով որ այն ջրով լըվացվի, ա-
մէն մեղքէն կազատի։

Կայ կռատուն որ սեղանին վրա
ողջ կով մը կեցուցած են, վրան բո-
լոր անպէն քարերով զարդարած,
տակը ոսկի ամանը. ժողովուրդը երկրը
պագելով անոր ջրվաթէն կառնեն
կը քսվին՝ որ մեղքէ ազատին. ինչ-
պէս աչքով տեսաւ մեր Ա. Հ. Պօ-
ղոս վարդապետը։

Տաքան աշխարքը կռատուն մը
կայ բոլոր քարէ սիւներով շինած,
և քարէ շղթաներով ալ իրարու կա-
պած։ Կըսեն թէ սիւներն ու շղթա-
ները միակտուր լեռ մը նէր, որ փո-

բելով և զարմանալի հնարքներով ձևացուցեր են։

Սակայն Ընկերոնատ չաձին կռատունը ոտքով չեն կրնար երթալ, միայն ծնկան վրա ամիսներով քալելով կերթան. ոմանք ուխտի համար տարի մը ծնկան վրա կերթան. ոմանք ալ երեսի վրա կը պառկին ու գլուխնին ուր որ կը հասնի, անկէ նորէն կը պառկին. և այսպէս պառկելով կերթան ամիսներով։ Երկրագործի ըրած ատեննին ձրագներ կը վառեն ու խունկ կը ծխեն կուռքին. և աշխատող կնիկներն ալ առաջը պար կը խաղան։

Տարեէ տարի Ընկերոնատին տօնը կը կատարեն. բայց նախ արձանը խորանէն վար կառնեն սայլը կը դնեն, և 200 քուրմեր քաշելով կը տանին գանգէս գետը կը լվան. յետոյ մեծ հանդէսով և անչափ բազմութիւն չորս դին ժուռ կը բերեն պարելով։ Երբեմն պզտի տղաք կը ձգեն առաջն՝ որ կառքը վրաներէն անցնելով զոհ ըլլան կուռքին։

Իսկ Դուրկա չաձին արձանը գետին հողէն կը շինեն ու կը ներկեն. և ասոր տօնն ալ խիստ մեծ կը կա-

տարեն գիշեր ցորեկ երգեր աղաղակներ ընելով. տասը օր կուռքը կը պտըտցնեն ձրագներով և խունկերով. քրմապետն ալ կովի պոչ մը ձեռքն առած կը հովահրէ արձանը պատուելու համար։

Յետոյ կը տանին արձանը գետին քով շատ բազմութիւն. բոլոր մեծատուններն ալ իրենց տանը կուռքերը զարդարուն նաւերու մէջ կը դնեն հոն կուգան, և զանազան շարժմունքներով աղաղակ կընեն։ Այլիս մէկէնմէկ կը փշրեն այն կաւէ շինած կուռքը, և գետը կը թափեն։ Ահա ասանկ կը կատարեն տօնը։

Ինչպէս են քուրմերը։

196. Հնդստանցոց քուրմերը Պրահման կըսվին, որ վզերնէն եօթը թել կախված ունին. ով որ զասոնք մեռցընէ՝ աննեբելի մեղաց տակ կիյնի. և սոսկալի աւելորդապաշտութիւն լեցված են։

Ասոնց մէկ ցեղը Քախէր կըսվի, որ զարհուրելի ձգնուներ կընեն։ Ոմանք խոզի պէս աղտոտ տղմի մէջ կիյնին. ոմանք թևերնին և ոտքերը

նին վեր կապել կուտան, որ անանկ
չորցած կը մնան։ Ամանք ալ եօթն
օր անշարժ ոտքի վրա կը կենան. ա-
սոնք ոչ երեսնին կը լվան և ոչ մա-
զերնին կը սանտրեն. որչափ որ գար-
շելի են, այնչափ ալ ժողովուրդին
առջին պատուելի են։

Հնտստանցիք ցեղ ցեղ են, անանկ
որ իրարու չեն խառնվիր, ոչ միա-
տեղ կուտեն և ոչ իրարու ջուր կը
խմեն։ Կերակուր կերած ատենին
թէ որ մէկը իրենց մօտենայ՝ ձգեն
կերթան, և գանգէս գետին ջրով
կը լվացվին որ սրբվին։

Կայ անանկ ցեղ ալ որ անբան ա-
նասունի պէս ծառերուն վրա կը բնա-
կին. երբոր կանօթենան գազանի
նման կաղաղակեն, որ անցնողները
ուտելու բան մը տան իրենց։

Կան անանկ մարդիկ ալ որ անտէր
են, ոչ օրէնք ունին և ոչ արարողութ.
իրենց կամքն է օրէնքն ու սովորու-
թիւնը. ասոնք սատկած կենդանի կու-
տեն։ Ինչ ուրիշ ցեղէ աղջիկ կառ-
նեն. երբեմն մեծ մարդիկ երկու
տարուան աղջիկան հետ կը կարգը
վին, ու կը տանին անոնին կը մեծ
ցընեն։

Ով որ ուզէ իր զաւակը կրնայ ծաղխել. և որչափ շատ աղջիկ ունենան այնչափ հարուստ են. որովհետև կարգելու ատենը ատրկով կը ծաղխեն։

Ջուրին շատ յարգուն կուտան. մինչև ամէն առտու պիտի երթան գետը լուացվին։ Ցարուէ տարի ալ ուխտ երթալով գետը կը մտնեն հանդիսով, և գետին մէջ շաբար և կերակուր կը նետեն։

Ինոր համար ասոնց քաղաքները միշտ գետերուն քովն են շինած. մանաւանդ գանգէս գետին որ շատ պաշտելի է։

Ամէն առտու ջուրը մտնելէն ետև կերթան քուրմերուն, որ Ճակատնին ներկեն, ոմանց կարմիր, ոմանց դեղին, և այլն. և անկէ ետև կրնան բաներնին երթալ։

Հնտստան սովորուն կայ որ տանը մեծը կերակուր կեփէ. բայց հարուստները քուրմ ունին կերակուր եփելու համար. թէ չէ՝ տանը աղան կամ հայրը պիտի եփէ, անալ չըլլայ մեծ որդին կեփէ։

Ցեղ կայ որ ամենևին միս չուտեր. կան որ միայն կովու միս չեն ուտեր։

Ընոր համար կովերը ազատ կը պը-
տըտին, մարդ չի կրնար դպչիլ։

Ի՞նչ ուրիշ սովորութիւն ունին։

197. Ինչպէս խենդ անշնորհք սո-
վորութիւններ ունին որ հատնում չու-
նի. զորօրինակ չաՀծին օրն որ գայ՝ ա-
մանք մսերնուն մէջ դանակ կը խո-
թեն ժուռ կուգան։ Երբոր մէկին
տունը կովի մը ոտք կոտրի, տանտէ-
րը եօթը տարի կովի ձայն պիտի հա-
նէ պտըտելով։ Եվ որ տներնին օ-
տար մարդ մտնելով պղծի, պէտք է
որ տանը պատերը կովի թրիք քսեն
որ մաքրի։ Եվ որ ծուլու Ճամբայ ը-
նեն, որ արգելած է իրենց, կը մեր-
կացնեն ու մոմով ոտքէն մինչև գլու-
խը կը խանձեն. ետքը գեսը կը լը-
վան, որ մեղքէն ազատին։

Բայց ամենէն սոսկալին այն է.
երբոր էրիկնին կը մեռնի, կնիկնին
ջիրենք ալ կերեն անոնց հետ. ոմանք
ալ քուրմերուն ծառայութիւն կրնեն։
Եվ որ մէյմը խօսք տրված ըլլան,
ալ չեն կրնար ետ դառնալ, պէտք
է որ երին. թէպէտ եւրոպացիք ի-
րենց տիրած երկիրներէն վերուցին
այս չար սովորութիւնը։

Ինչ կընէն մեռելը։

198. Հոն մեռելը չեն թաղեր որ գետինը չի պղծի. հապա՝ կերեն, հաբուստները ազնիւ փայտերով, և աղքատները հասարակ փայտերով։

Մեծ հոգ ունին որ հիւանդը տանը մէջ չի մեռնի. ուստի հոգեվարքը եղածին պէս կը տանին գանգէս գետին քով. քուրմը ափով ջուր կը լեցընէ բերանը հիւանդին մինչև որ մեռնի. թէ որ առողջանայ, ոչ տուն կրնայ գալ, և ոչ կը մտնեան իրեն. այլ ողորմելի կը մնայ քաղքէն դուրս տեղ մը։

Ահա ասանկ խաւար կռապաշտուն մէջ ըլլալով զարհուրելի աւելորդապաշտութիւն լեցված են. և խելքէ դուրս բաներ ունին, որ գազաններն ալ չեն ըներ. որոնք քուրմերուն հաստատելով այսպէս կուրացեր են։

Ուրիշ կռապաշտ են։

199. Հնդստանցոց մեծ մասը կռապաշտ են. մէկ մասն ալ այլազգ են մանաւանդ իշխանները. բայց եւրոպացոց տերուն մէջ ուղղափառ ալ

կը գտվին՝ որ Ճիզվիթներուն քարը զուարթ են լուսաւորած.

Մինչև հիմա ցեղ մը կայ, որ ազգ Թոմայեան կըսվի. ասոնք Թէպէտ կռապաշտ են, բայց քրիստոնէութիւն նշաններն ալ կը պահեն։ Ամեն զի տարին հեղ մը ուծաճնայ պատկերքը ուղղափառներէն կառնեն, և մեծ հանդէսով երգերով և մոմերով կը տանին լեռանը գլուխը, ուր ՝ոբն Ադամաս առաքեալ նահատակված է, և հոն եկեղեցնայ մէջ կը դնեն. և միւս օրը նոյն հանդէսով նորէն կը բերեն իր մատուռը։

Ուրեմն՝ նք Ադամա առաքեալ գընաց հնդստան քարոզեց. և հոն նահատակվեցաւ, ինչպէս որ քարի մը վրա գրած գտան. որ 300 տարի առաջ հողին տակէն ելաւ, վրան խաչ և 36 գիր հին հնդստանցոց, որ կարդաւ կը պատմէ։

Կ՚ուզեն դէր ուղիէն ալ։

200. Լուրոպացիք հոն չի գնացած այնչափ փարթամ և երևելի իշխաններ ունէինք հոն, որ բոլոր վաճառականուիը և հարստուիը հայոց ձեռքէր։ Հնդստանցոց առջին այնչափ մե-

համարում ունէին որ շատ մեծութիւն և իշխանութիւն կընէին։ Ինչանկ որ է թէ հայերը օգնութիւն չընէին, անհնարին էր թէ ինկիլիզները կարենային հոն ոտք կոխել։ Որոնք ծովեզերեայ քաղաքներուն տիրելէն ետև հայոց ձեռքէն ամէն մեծութիւն և վաճառականութիւն առին առանց երեսնին նայելու, որ մինչև հիմա շատ պիտի մեծնային։

Ինդիոյ կը բաժնուի։

201. Հնդստան 3 մեծ մասն կը բաժնուի, որ պարսկաստանէն և գանգարիարէն կըսկըսի կը հասնի մինչև չինուստանին։ Հիւսիսային մասը թաթարէն կըսկըսի, և 14 մեծամեծ նահանգ կը բաժնուի։

Պայրաքաղաքն է Ինդիոյ կամ Ինդիանապատ ընդարձակ բաղմամարդ և հարուստ քաղաք։ Ագրապէս Լահոր և Դիլիմիր մեծ և հարուստ քաղաքներ են. և երևելի շինվածք և կռատուններ ունին։

Բրեբելեան մասն 90 հազար քառակուսի մղոն է, և իբր 20 միլիոն բնակիչ կելլէ, և քանի մը նահանգ ունի։ Այս մասն աւելի փարթամ

ելալով անգղիացիք նախ այս կողմերուս տիրեցին։ Հայերը շատ մեծութիւն ունէին Պանկալայի նահանգին մէջ։ Պապասը կամ թագաւորը այնչափ իշխանութիւն տրված էր հայոց, որ ամէն ազգաց վրա կիշխէին. մանաւանդ Գրիգոր խանին օրը, որ զօրապետ և մեծ իշխան էր զօրաց։ Այս կայն ասոր եղբայրը աղայ Պետրոս ինկիլիզներուն օգնութիւն ընելով փնձացան։

Իսկ հարաւային մասը այնչափ ընդարձակ է որ 33 թագաւորութիւն կայ մէջը. որ կըսվի տաքան, և ունի 11 նահանգ, գուճրատէն կըսկըսի կերթայ մինչև գորոմանտէլ։

Գլխաւոր մայրաքաղաքն է Գուճրատ, որ է հարուստ և բազմամարդ. նաև Սուրատ, ուր 2 միլիոն մարդ կայ. մեծ մասն կռապաշտ են. որ երբ գետինը մրջուն մը տեսնեն կառնեն կը փչեն վրայի հողն ու պատին վրա կը դնեն, որ մարդ չի կոխէ. նաև կենդանեաց հիւանդանոց ունին որ երբ հիւանդ կենդանի մը կը տեսնեն հոն կը տանին կառողջացնեն։

Գնանի մայրաքաղաք է Սատրաս, շատ երևելի շէնքեր և եկեղեցիներ

ունի. և 250 հազար բնակիչ. մեր ազգէն ալ շատ փարթամ մարդիկ կային առաջ։ Սատրասի մօտ է լեռը որ Թոմային. ուր կան եկեղեցիներ և վանք. հոն ճգներ է որ Թոմայ առաքեալը, և հոն գլխատվեր է։

Նրևելի է ՀԱԾԱԾՆայ եկեղեցին Հայոց, որ անբաւ ծախքով շինեց աղա Պետրոսը 160 աստիճանով։ Այս կողմն կը բնակի Թոմայեան ազգը (199)։

Այս աշխարհքին մօտ շատ երևելի կղզիներ, կան, զորօրինակ Սէյլան, և Սալտիվեան կղզին, որ շատ նահանգներ կը բաժնըվին։

Նաև գանգէսի միւս կողմի ցամաք կղզին այնչափ մեծ է, որ 8 Թագաւորուն կը բաժնըվի. Շիամ, Բեկու, Պունգին, և այլն։

Այս ազգերը շատ տարբեր սովորութիւններ ունին. և շատը մերկ կը շրջին. կռապաշտ են և շան միս կուտեն։ Ինչհամար կռատուն ունին, և մէջը լեցուն կուռքերով, բոլորը նստած կը շինեն և ականջնին խիստ երկայն։

Կըսեն թէ իրենց մեծ կուռքը 600 տարի է որ կը քնանայ. աշխարհքին

ետքը պիտի արթննայ։ Այսոնք ալ մեռելին կերեն չեն թաղեր. զի եր կիրը կը պղծի կըսեն, և երեկոյը կը փրկըվին։ Ուստի կը ժողվեն մոխիրը կը տանին գանգէս գետին մէջ կը ձգեն. զի մարմինը կրակին, ջրին և օդին տալով կըհանգչին, և խիղճմըտանքէ կազատին։

Ի՞նչ կը զարմանաս՝ մանուկ մտայի,
թէ ասանկ օտար՝ բաներ կըլլան մի.
Երբ չունին հաւատք՝ և լոյս կրօնի,
խելքէ դուրս բաներ՝ կընեն սոսկալի։
Փառք տուր ա՛յ՝ որ դուն հոս ծնար,
Բարի ծնողաց՝ զաւակ ընտրեցար.
Ճանչնալով այս փառքն՝ իրեն ծառայէ,
հաւատքով յուսով սիրէ անդադար։

ԽԶ. ՀԱՄԱՐ

Ի՞նչ ազգ է չինէրը։

202. ՉինուամաչիններըՍադոգէն կուգան, որ Յաբեթի որդին էր. շատ հին ազգ է և իր թագաւորութիւնը վաղուց է։ Սակայն չինէրը մեծախօս ըլլալով կը դնեն թէ իրենց թագաւորութիւնը 40 հազար տարի առաջ կար։

Իսկ գիտնականները այս բանը մերժելով հաստատեցին, թէ հին ատենը չինները անասունի պէս լեռները կը բնակէին՝ ոչ օրէնք ունէին և ոչ ընկերութիւն։ Յետոյ Ֆոհի անունով խելացի մը եւաւ իրենց օրէնք դրաւ և մարդավարութիւն սորվեցուց 2950 տարի յետոյ առաջ։ Եւ այսպէս քիչ քիչ զանոնք մէկտեղ ժողվեց, քաղաք շինեց. և իրենց սորվեցուց երկրագործուն, գրել, կարդալ, և իրարու օգնել։

Ինկէ ետև եկած թագաւորները ջանացին օգտակար բաներով ծաղկեցընել. շատ քաղաքներ շինեցին և արուեստներ մտցուցին։ Յետոյ ծէսեր ալ դրին ու կռատուններ շինեցին, ասանկ կերթային։ Իսկ Հոսամ թի թագաւորը աստղաբաշխութիւն, նաւարկութիւն, երաժշտուն և ձկնորսութիւն սորվեցուց. և անոր կնիկը կտաւ գործել սորվեցուց։

Ուստի երկար ժամանակ թագաւորեցին չինները. մինչև Ինկիզխան, որ յամի տն 1200ին կոխեց չինուսմաչին և իր թառները տեղ տեղ տերեցին։

Սակայն չինները զանոնք հանեցին

իրենց աշխարհքէն . որ յետոյ նորէն
եկան մնան և շատ պատերազմէն է-
տև Սունչի Թագաւորը Թաթարաց
տիրեց եղաւ ինքնակալ չինաց 1645ին.
և մինչև հիմա այս երկու ազգը միա-
ցեալ ըլլալով նոյն ցեղը կը Թագա-
ւորէ :

Ուրդ՝ չինաց Թագաւորը կայսր կըա-
վի և շատ Թագաւորուի ունի տա-
կը . որուն ՝ծծական պատիւ կուտան՝
որդի երկնից կոչելով :

Հազիւ Թէ մարդու կերևնայ . մէ-
կը չի կրնար հետը խօսիլ . և որչափ
մեծ մարդ ըլլայ , պէտք է որ գլուխը
ծռելով գետնին մօտեցնէ ծնկան
վրա , և անանկ զուրցէ հարկաւոր
բան մը :

Իսկ Թագաւորը ինչ հրաման որ
հանէ՝ իրը ՝այ խօսք պէտք է մէկէն
կատարվի . առանց իրեն բան մը չեն
կրնար ընել . Թէպէտ ժողովներ և
ատեաններ ունի՝ ուր խորհրդակցե-
լով կը կառավարէ :

Դատաւորները Պանտարին կը
կոչվին , որ ամէն աշխարհք կը կա-
ռավարեն Թուով 13 հազար : Պոնք
երբեմն երբեմն կը հասկըցնեն Թա-
գաւորին ոչ միայն հարկաւոր բանե-

ը, այլև իրենց սխալմունքը թողուն խնդրելով։

Լ՝Դ՝Ն՝Լ՝ Օ՝Ր՝Է՝Ն՝Ք՝ Ո՝Ն՝Ի՝Ն։

203. Պ՝Լ՝Խ՝Ա՝Ւ՝Ո՝Ր՝ 4 օրէնք ունին, որ պարտական են մեծ զգուշութիւն պահելու։ ա Պէտք է այ պէս պատիւ և հնազանդուն ընել թագաւորին։ բ Պէտք է որ ամէն զաւակ իրեն ծնողացը, և ամէն ծառայ իր տիրոջը սէր և մեծարանք ընէ։ գ Պէտք է թագաւորին նման պատուել մանտարինները։ դ Պարտական է ամէն մարդ մեծ պզտիկ իրարու հետ եղբայրսիրութիւն ընելու և օգնելու։ Ասոնք այս օրէնքները իրենց խաղաղութիւն և երջանկութիւն պատճառ դնելով շատ զգուշութիւն կը պահեն. և ով որ զանց առնէ սոսկալի պատիժներով կը պատուհասի։

Ամենցմէ 'ի զատ ունին զարմանալի օրէնքներ և կանոններ. որով իրենց ժողովուրդը խաղաղութիւն մէջ կը պահեն, և քաղցրութիւն կը կառավարեն։

Ասկ թագաւորը տարին հեղ մը մեծ հանդէսով իր սահմանագլուխները կը պտըտի. 40 խան հետը փա-

ռաւոր զարդարանքներով, որ խալ-
մուխ թաթարներէն կերթան զինքը
յարգելու համար։ Նոյնպէս իրենց իշ-
խաններն ալ այնչափ փառաւոր զար-
դարված կերթան, որ աչխարհք կը
զարմացնեն։

Յասպիսի փառքով և ոսկի պսակ-
ներով զարդարված երբեմն տաճա-
ը կերթան. թագաւորը ոսկեզարդ-
ձի մը հեծած հազարաւոր պաշտօ-
նատէրներով բոլորը փառաւոր զար-
դարված։ Նտևէն կերթան 4 կառք.
երկուքը փղերը կը քաշեն, երկուսն
ալ ձիերը։ Ընկէ ետև 200 մանտա-
ըինները կերթան սքանչելի կարգով։

Ուշ երթն ոանին։

204. Կերևնայ թէ չինները արև ու
լուսին կը պաշտեին հին ատենը, ինչ-
պէս արաբները. բայց յետոյ իրենց
քուրմերը կերպ կերպ աղանդներ
հնարեցին։

Ընոնց գլխաւոր կուռքն է թա-
թարներուն [ա չՁածը որ ամէն տուն
և տեղ կը պահեն. և կը գրեն մեծ
մարդ մը ծնկան վրա նստած։

Սակայն շատ կենդանիներու պատ-
կերք ալ կը պաշտեն. զորօրինակ

իղի, կապկի, վիշապի, և այլ անհամար կուռքեր ունին։

Իրեք մարդակերպ կուռք ունին տաճարներուն մէջ. մէկը կըսվի Լանկ Թաղաւոր, որ 30 ոտնաչափ բարձր է. մէկը կըսվի կուռք Ինամահուլթե, որ մեծ փորով կը շինեն. և մեկալը Հեշտուլթե որ 20 ոտնաչափ բարձր է։

Ասոնց քուրմերը Պոնոյ կըսվին, որ 35 հազար կան. և միշտ կը քարոզեն իրենց աղանդները, և կը խրատեն որ մեռելներնին չի մոռնան՝ օգնեն միշտ։ Ասոնք սովորաբար կռատուներուն քով կը բնակին. և ոմանք ապաշխարուլթե լաթեր կըհագնին, և մեծ շղթաներ վզերն անցուցած կը պտըտին։ Կան որ կախարդուլե ետևէն են և կերպ կերպ դիւական բաներ ունին, մինչև ջար ոգիին վախնալով դևը կը պաշտեն։

Ինները երբոր խնդիրք մը կընեն կուռքին ու չեն առներ, բարկանալով կըսկըսին նախատել կուռքը թէ մենք քեզ ասանկ տաճարի մէջ դրեր ենք՝ դուն չես ամբնար, որ մեր խնդիրքը չես կատարեր։ Ինատենը քուրմը խօսք կուտայ, թէ քիչ ատե

նէն կընէ, երբոր կընային որ ուզածնին չըլլար, մէկէն կուռքը տեղացէն վար կառնեն, վիզը չուան կը կապեն, ու հայհոյելով աղտոտ տեղեր կը տանին։ Եթէ նոյն միջոցը դիպուածով ուզածնին ըլլայ, շուտմը կը վերցընեն կուռքը կը լըվան, ու մեծ հանդէսով կը տանին տաճարը կը դնեն, ու երկրպագուի ընելով թողութի կը խնդրեն, ըսելով թէ մենք տկար մարդիկ ենք, ինչո՞ւ այսչափ ուշացուցիր։ Ազէկ չէր որ շուտ տայիր ու այս նախատինքները չի քաշէիր։ Ահա ասանկ շատ խենդ բաներ ունին։

Ինչ բարք ունին։

205. Մէպէտ չինները բարեկամիտ են և աչքաբաց, բայց խիստ հպարտ և պարծենքոտ են. իրենցմէ խելացի ազգ չի կայ կըսեն. ուրիշ ազգերուն կոյր կըսեն, միայն եւրոպացիք աչք մը ունին կըսեն։

Շատ ծանրաշարժ են, և շատ մտածելով բան մը կորոշեն. խիստ կասկածոտ խորամանկ և կեղծաւոր են։ Անոյշ կենակցուի ունին. միշտ կը ջանան ուրիշին բնութիը հասկը-

նալ և իրարու սիրտ որսալ։

Դէմքերնին թաթարի նման տափակ են, գոյներնին ճերմակ. միջահասակ են և երկայն մօրուք։ Իրենց կարգացողները եղունգնին թող կուտան որ շատ երկնայ՝ պարծանք սեպելով։

Կնիկնին աւելի փառաւոր են. ամենցմէ վախնալնուն համար տղայութենէ ատենը երկրէն կօշիկ կը հագցընեն որ ոտքերնին պզտիկ մնալով իրենցմէ զօրաւոր չըլլան։ Ամէնքն ալ մեղի նման երկայն հագուստ կը հագնին։

Շատակեր են. բայց մինչև որ սեղանին վրա երկար բաներ խօսելով իրար չի բարևեն՝ բան չեն ուտեր, ամանք աթոռով ոմանք ալ գետինը նստելով կուտեն։

Ամէն մարդ երկերկու մախաթի ձևով ոսկորէ երկայն ցուպեր ունին, անով կառնեն կերակուրը։ Իսկ փիլավը մանտը ամաններով բերանին կը տանին, ու նոյն ցուպերովը բերաններին կը լեցընեն։ Այէկ կերակուրը լմընալէն ետև նոյն ցուպերը կը ձգեն, ու նոր կերակուր եկած ատենը կըսկըսին նորէն իրար բարևել։

Ընոր համար ասոնց կերակուրը ի-
րեք չորս ժամ կը քշէ։

Մեծ հարկիքներուն մէջ ամէն
մարդ զատ սեղան կը նստի. և տան-
տերը նախ բաժակը ձեռքը կառնէ
կը բարեւէ նստողները, եռքը դուրս
կելլէ դէպ'ի հարաւ դառնալով զայն
կընծայէ աներեւոյթ հոգիի մը։ Ա՛ր-
ջը կուգայ սեղան կը նստի, և լուռ
կըլմընցնեն կերակուրնին։ Յետոյ
երգերով և ծնծղաներով կելլեն սե-
ղաններն։

Դրբոր իրար կը տեսնեն Ճամբան,
կըսկըսին ծռմըռկելով իրար բա-
րեւել, և խենդ շարժմունքներով
հարցընել երկար խօսքերով։

Ամուսնին ինչ կընէն։

206. Ամոնք մեռելնին չեն երեր.
հապա՝ դուրս տեղ մեծ մեծ գերեզ-
մաններ շինած կան, հոն կը թաղեն։
Բայց ամէն գերեզման դուռ ունի՝
վրան ալ սեղան շինած է. հոն կը
ժողվըվին, կուտեն կը խմէն ու գե-
տինը գինի կը թափեն։

Դրբոր մեծատուններէն մէկը մեռ-
նի, բոլոր ազգականները կը ժողվ-
վին, մեռելը կը լվան ու խնկով կը

ծխեն։ Յետոյ աղէկ լաթեր կը հագ-
ցընեն աթոռը կը նստեցնեն։ Նախ
կնիկները կուգան երկրպագութիւն
ընելով կուլան ձայնով, վերջը երիկ
մարդիկ կուլան։ Նկէ ետև մեռելը
մտուկի մը մէջ կը դնեն, աղէկ մը
կը գոցեն որ հոտ չելլէ։ Աղերցընեն
կը տանին տանը մեծ խուցը կը դնեն՝
5 օր կուլան։

Ամէնքն ալ Ճերմակ լաթ կը հագ-
նին. բոլոր պատերը Ճերմակով կը
պատեն. զի Ճերմակը սուգի նշան է
հոն։ Խուցին մէջ ոսկեզօծ թղթեր
և մեծագին բաներ կերեն. կարծե-
լով թէ անդին իրեն պէտք կըլլան։
Այն օրը քուրմերն ալ կուգան կեր-
գեն. ամանք քանի մը տարի ասանկ
կը պահեն մեռելը։

Որդիքը 100 օր մեռելին քով կը
պառկին՝ մէն գինիէն կը հրաժարին։
Հուսկ յետոյ թափօրով կառնեն կը-
տանին գերեզմանը՝ երգերով նուա-
գարաններով և լալկան կնիկներով։

Մեռելը թաղելէն ետև կը նստին
կուտեն կը խմեն ու գերեզմանին
բարև տալով կը դառնան։ Մեծ օ-
րերը աղգականները կերթան գե-
րեզմանը երկրպագութի կընեն ու

կուտեն կը խմեն, և մինչև 3 տարի սուգ կը պահեն. ամէն տարի լաթերնին կը փոխեն, հին և հաստ բաներ կը հագնին, ու չուան կը կապեն։

Ունին ուսումն։

207. Ունենց լեզուն օտար ըլլալով ամենևին ուրիշ ազգերուն չի նմանիր. խօսքերնին թանձր է, արագի հնչմունքի կը նմանի. բայց՝ գիր չունին. խիստ մութ կը խօսին կտոր կտոր առանց երկար շարադրութեան։

Ունին այբուբեն. առաջ ձևեր կը գրէին, ետքը նշանագիրներ ալ հնարեցին. որ 80 հազարէն աւելի են։ Ուստի իրենց գլխաւոր ուսումը գիր սորվելն է. որ շատ տարիներ աշխատելով հազիւ կրնան սորվիլ։

Վակայն տեղեակ են երկրաչափութեան բանաստեղծութեան և աստղաբաշխութեան։ Անգին քաղաքը ուսումնարան մը ունին, ուր բժշկութեան և զանազան բաներ կը սորվին։

Ադին քաղքին մէջ երևելի աշտարակ մը կայ բարձր 200 ոտնաչափ, որ 880 աստիճան ունի։ Գլուխը կայ մէկ մեծ գունտ մը, ոսկի է կըսեն։ Ներքը 9 խուց կայ վրայէ վրա ոսկե-

զօծ զարդարած. և ամենուն վրա զանգակներ կախված են, որ անոյշ ձայն կը հանեն հովը փչած ատենը։

Կամ հոն ուրիշ ապգեր։

208. Թաթարներէն մնացած շատ այլազգներ կան հոն, և հին ատենէն 'ի վեր հրեաներ ալ կան։ Կը հաստատեն թէ երբ Հռոմայ առաքեալը հնոստանէն չինուսմաչին գնաց քրիստոնէութի՛ հաստատեց։

Ամանք կըսեն թէ նեստորական հերետիկոսներէն ալ հոն գացին շատ մարդ դարձուցին. ինչպէս հին քարի մը վրա գրված էր այս բանը, որ հողէն ելաւ։

Սակայն 600 տարի առաջ Ննով կենտիոս հայրապետը քարոզիչներ ղրկեց չինուսմաչին և Թաթարստան, որ շատ մարդ դարձուցին։ Յետոյ Ռիզվիթները մեծ մասը չիներուն ուղղափառ ըրին։ Աբ Ֆռանչիսկոս քսաւերեան շատ քարոզութի՛ ընելէն ետև հոն վախճանեցաւ։

Այս սրբակաց քարոզիչները շատ զարմանալի գործքեր ըրին, և բոլոր ժողովուրդը ձեռք առին. վասն զի անոնց Պօնցերուն՝ այսինքն քուրմե-

ղուն հագուստը կը հագնէին. նաև անվնաս ծէսերուն թոյլ կուտային. ինչպէս է այն թէ մեռելներուն վրա կերակուր կը տանէին կուտէին, և գետինը գինի կը թափէին։ Ընչափ խոհեմութի՛ ըրին, որ քիչ ատենին մէջ 50 հազար հոգի դարձուցին բաց՝ի տղաքներէն. և 200 եկեղեցի շինեցին։

Բայց երբոր ուրիշ կարգէ քահանաները հոն գացին, Ճիզվիթներուն նախանձելով մեծամեծ խռովութիւններ հանեցին. և սուտ ամբաստանութիւններ գրելով Հռոմ, ժողովուրդին սիրտը պաղեցուցին։ Մինչև հասկըցուցին Հռոմ թէ Ճիզվիթները կռապաշտութե՛ թոյլ կուտան։ Ընչափ որ բանը թագաւորին ականջն հասաւ. հրաման հանեց որ անկէ աքսորվին բոլոր եւրոպացի քահանաները, և քրիստոնէութիւնը այլ չի քարոզվի հոն։ Ընդհա՛ ասով անանկ սաստիկ հալածում եւաւ որ քիչ ատենին մէջ քրիստոնէութիւնը ջնջվեցաւ քահանաներուն նախանձին համար։

Սակայն երկու Ճիզվիթ քահանաներ մնացին հոն. եաքէն ուրիշ քա-

հանաներ աւ գացին, քիչ քիչ նորէն սկսաւ քրիստոնէութիւնը. կըսեն թէ 1786 ին, եկեղեցիներն աւ բացվեցան։ Ա՛ ամն զի քահանաները ուսում սորվեցնելու պատճառաւ՝ համարձակութի գտան Փէքին մայրաքաղաքին մէջ։

Ո՞ՐՊԷՍ Է ՌԵԾՈՒՆԸ։

209. Ընուամաչին ասիայի գլխաւոր մէկ աշխարքն է՝ երկայն 1680 մղոն. և լայն 1300 մղոն. որ 15 աշխարհք կը բաժնըվի, և ամէն մէկը մէյմէկ թագաւորութի կը սեպվին։ Ինակիչներն են 130 միլիոն, ունի հարիւրաւոր քաղաքներ, և քանի մը կղզիներ։ Իսկ քաղաքներուն մէջէն շատ գետեր անցնելուն համար կամուրջներ շատ շինած են. և տեղ տեղ մէկ լեռէն մէկալը սոսկալի կամուրջներ շինած են։ Շատ տեղ աւ լեռները կտրեր Ճամբայ շիներ են սոսկալի աշխատանքով։ Շատ կամարներ և աշտարակներ շինած կան։

Այց ամենէն սոսկալին մեծ պատն է, որ 2000 տարի առաջ իրենց թագաւորը շինեց թաթարներէն ազատելու համար, որ այս աշխարքը

մեծ թաթարին աշխարքէն կը զատէ։ Այս պատին բարձրութիւն է 40 ոտնաչափ. լայնութիւն է 15 ոտնաչափ. և երկայնութիւն է 2000 մղոն։ Շատ տեղ լեռ լեռան հետ միացուցեր են փոս տեղերը լեցընելով։

Այս երկիրը պտղաբեր ըլլալով զարմանալի ծառեր և պտուղներ կան հոն։ Ծառ մը կայ ձարպաբեր, որ ընկուզի նման պտուղին մէջէն ձարպ կելլէ, որ ճրագուի պէս կը հալեն ու կը վառեն։ Ունուֆար բոյսին արմատը կաղինի համ ունի. թէ որ բերանդ դնես ծամես պղինձին հետ՝ կը կակղցընէ կըսեն. Արմատ մը կայ մարդու նման, ամէն ցաւի դեղ է.

Ղէկ հալուէ (էօտ աղաձի) կելլէ հոն. որուն ծառը եղոտ է և ձիթենիի նման։ Որոր տերևներով գեղացոց տանը վրան կը գոցեն. փշերով ատխտակ կը գամեն. ճիւղերէն ալ թթու ջուր կը վազէ, քացախ կընեն։

Ամենէն օգտակար բոյսն է չայը. որ վարդի ծառի նման ըլլալով տերևը մանր է, ծաղիկը ճերմակ. տարին երեք հեղ տերևները կը ժողղ

վեն, ու շուքը կը չորցնեն. բայց մայիսի տերևը թագաւորին կերթայ խիստ պատուական ըլլալուն համար։

Օ արմանալի կենդանիներ ալ կան, և ոսկեգոյն թռչուններ. որոնց ձրկնորսութի կը սորվեցնեն, ու կըտանին գետին քով թող կուտան, որ գետը կը մտնեն ձուկ կը բռնեն և դուրս կը բերեն, նորէն կերթան։

Ինչպէս են քաղաքները։

210. Ընտաց քաղաքները բոլոր քառակուսի են և չորս կողմէն 4 դուռ ունին. նոյնպէս տներն ալ քառակուսի են. և դռներուն վրա տանը մէջի մարդկանց թիւը գրած է։ Տասը տանը վրա վերակացու մը կայ Ամանտարին անուամբ. թէ որ այն 10 տանը մէջ փնաս կամ գողութի պատահի, ամէնքն ալ նոյն փնասը կըքաշեն։ Ընտանկ լաւ կառավարուի ունին որ հազիւ անկարգ բան մը կըլսվի նոյն աշխարքին մէջ։

Մագաւորական քաղաքն է Փէքին. որուն շրջապատն է 22 մղոն, չորս դին պատ է, բարձր 150 ոտնաչափ. և այնչափ լայն որ պահապանները ձիով կը պտըտին։ Երկու մի-

լիոն ու կէս մարդ կայ մէջը. և 7 մեծ կռատուն։ Մէկ կռատունը խիստ մեծաշէն ըլլալով թագաւորը տարուէ տարի զոհ կընէ Ա.ի երկնից։ Իսկ երկրորդը Նրկրի տաճար կըսվի, ուր թագ կը դնեն թագաւորին գլուխը. որ թագաւոր եղած օրը երկրագործի լաթ կը հագնի, ու տաճարին հողը կը փորէ բարի օրինակ տալու համար։

Ահա վերջն հասար՝ մեծ ասիային,
շատ բան տեսար որ՝ խելքիդ դէմ էին.
Բայց մի զարմանար՝ օտարին վրա,
Նայէ որ անխելք՝ ազգդ չի մնայ.
Մեր ազգն էր առաջ՝ կանոն ուրիշին,
Քաջ ազնիւ ազգն էր՝ մեծ ասիային.
Երբ անմիաբան՝ և տգէտ եղան,
զուրկ ամէն բաներէն՝ գերի մնացին։

ԽԷ. ՀԱՄԱՐ

Ո՞ր են ասիայի կղզիները։

211. Ա.հա ասիայի մէկ ծայրէն սկսանք մէկալ ծայրը հասանք գլխաւոր ազգերը և տեղերը պատմելով. վասն զի թէ որ իւսկիւտարէն ելլես եգիպտոս երթաս, անկէ կարմիր ծո-

վին քովէն շիտակ Արէքքէ. և անկէ պարսից ծոցը անցնելով Հնտստան երթաս։

Եւ ովկիանոսի քովէն անցնելով Ինդուսմաջին և թաթարստան հասնիս։ Անկէ ալ Մոսկով, և Պաղայէն անցնելով գաս սև ծով և մինչև ստամպօլ, կը լմննայ Պիտա. և իբր մեծ ցամաք կղզի մը կը ձևանայ։

Սակայն ովկիանոսի մէջ մեծամեծ կղզիներ կան որ մէյմէկ թագաւորութիւն են, որոնք ասիայի դին կկոչին. ինչպէս են Ճեաբոնի կղզիները, Փիլիպեան և Մոլուղեան կղզիները։

Պոնց ամենուն բնակիչներնը կռապաշտ են, ոմանք վայրենի. ոմանք սև. ոմանք ալ այլակերպ. ուսկից կելլէ պիպէռ, քեաֆիրի, կինամոն։ Եւ զմրուխտ, յակինթ, և ուրիշ բաներ։

Ի՞նչ ազգ են Ճեաբոնները։

212. Կերևնայ թէ այս ազգը ինդուսմաջինէն եկած է, որ նախ Ինդու անունով մէկը թագաւոր եղաւ հաստատեց այս տէրութիւնը 660 տարի յետէն առաջ, որ կըսվի Ցոյեր այս-

ինքն քահանայապետ. կըսեն թէ ջուծներէն ծնած է, անոր համար այ նման կը պատուեն։

Ասան զի ոչ երբէք գետին կըկոխէ, միշտ գահով կը պտըտցնեն. ոչ մազը կը կտրեն և ոչ եղունգները։ Երբոր շատ կերկրննայ՝ քուն տեղը կը կտրեն, ու մասունքի պէս կը-պահեն։

Ամէն օր նոր ամանով կերակուր կուտան, ու կերածին պէս շուտով կը կոտրեն. կըսեն թէ ով որ նոյն ամանով ուտէ՝ բերանը կը խոցոտի։

Ամանապէս լաթերն ալ ամէն օր կը փոխեն, որ նոր հագնի. անանկ որ ինչ բան որ մարմնին դպչի նոր կը համարին։

Հին ատենը Ցայիրը քանի մը ժամ անշարժ կը նստէր գահին վրա, ոչ գլուխը պիտի շարժէր և ոչ աչքը. որ էր նշան խաղաղութիւն և բարութիւն։ Եւ որ ըստ պատահման շարժէր, ամէնքը կը սասանէին թէ դէշ բան մը պիտի պատահի։ Անոնք վերուցին այս ծանրութիւնը. հիմա միայն թագը կը դնեն գահին վրա անշարժ։

Ուրաչ այս Ցայիրը բացարձակ կը-տիրէր աղգին. բայց 200 տարի ա-

ռաջ մեծ զօրապետը բոլոր աշխարհական իշխանութիւնը ձեռքն առաւ եղաւ ինքնակալ Հեաթոնայ, և իրենց հոգևոր իշխանութիւնը մնաց Տայիրին։

Ի՞նչ էրավէ Ռափաորը։

213. Ը՞րդ՝ աշխարհական թագաւորը կըսվի Դուքս Սամա. որ այնչափ մեծապէս կը պատուեն, որ մարդ մը հետը չի կրնար խօսիլ։ Ինչպէս իր վէզիրը կը խօսի, որ Մագինպէնկօ կըսվի.

Թագաւորը մութ տեղ մը կընստի վանդակի (խաֆէսի) ետին. երբոր իշխանները քովն երթալու ըլլան, ետևորանց կը մտնեն նոյն սրահին մէջ, և վէզիրին հետ կը խօսին, որ թագաւորը կը լսէ։ Երբոր դուրս պիտի ելլեն՝ ետևորանց սրահէն դուրս կելլեն։

Ը՞սանկ կերթան թագաւորին քով հոլանտացոց դեսպաններն ալ. որ շատ անարգ են Հեաթոնցոց առջին։ Երբեմն թագաւորը իշխաններուն տունը կերթայ կերակուրի. որ իրենց մէջ շատ մեծ բան ըլլալով անբաւ գանձ կերթայ։

Շատ գեղեցիկ կը զարդարեն տունը, և փառաւոր դուռ մը կըշինեն, որ թագաւորը անցնի. և անկէ ետև փակ կը մնայ դուռը։ Ինչև որ այս պատրաստութիւնները տեսնեն տարիներ կանցնի։

Այս սովորութիւնը անոր համար եղած է, որ իշխանները շատ չի մեծնան հարստութիւն, և չապստամբին։ Եւ այս գործքիս համար միշտ 100 հազար հոգի կաշխատին, որ բանները շինեն, և Ճամբաները շտկեն։

Երբոր իշխան մը տուն շինելու ըլլայ իրեք տարի առաջ կը հրաւիրէ թագաւորը. և այնչափ ժամանակ հազիւ պատրաստութիւը կը տեսնէ։ Թագաւորը այս իշխաններով կըկառավարէ իր տէրութիւը. մեծ քաղաքները երկու և իրեք քաղաքապետ ունին. և ասոնք ալ զանազան վերակացուներ ունին։

Քաղաքներուն ամէն Ճամբաները դուռ ունին, որ գիշերը կը գոցեն։ Երբոր օտարական նաւ ելլելու ըլլայ՝ քաղաքին դռները ցորեկն ալ կըգոցեն որ մարդ չի փախչի։ Ուստի միշտ կը համրեն որչափ որ մարդ կայ, որպէս զի մարդ մը չի փախչի. վասն

զի առանց հրամանի մէկ տեղէն մէկալը չեն կրնար փոխել իրենց բնակութիւնը։

Ով որ տուն գնելու ըլլայ, նախ դրացիններուն պիտի հարցնէ. թէ որ հաւանին կրնայ գնել, թէ չէ՝ չի կրնար։ Եւ որ կռիւ պատահի տան մը մէջ, դրացիքը պարտական են խաղաղացնելու։ Ով որ կռիւ ընելով սուր հանէ, մահապարտ կըլլայ. որուն փորը կը պատռեն. ոմանք ալ ձիուն պօչը կը կապեն։

Ինչ բնութիւն ունին։

214. Թեաբոնցիք սրամիտ ուսումնասէր և զօրաւոր են, բայց տգեղ կարճ և սեւագոյն են. աչքերնին մանր և քիթերնին տափակ է։

Կռանին իրենք կը սեւցնեն. վասն զի սեւ գոյնը ուրախութիւն նշան է, ճերմակը տրտմութիւն։ Խիստ մաքրասէր ըլլալով տներնին աղտոտ և աւելորդ բան մը չի կայ։

Ոչխամեծները փառաւոր կը հագնին, շատ ծառաներ ունին։ Կոնց կնիկները անգին զարդերով, շատ ծանր լաթեր կը հագնին այնչափ երկայն որ գետինը կը քսվին։ Եւ մին-

չև հարիւր լաթ իրարու վրա կը հագ-
նին. որ խիստ բարակ ըլլալով ծան-
րութիւն չի տար. որոնց մեծութիւնը
շատ լաթ հագնելով կիմացվի։

Յասարակօրէն շատ աղջիկներով
դուրս կելլեն. ոմանք վրանին ամպ-
հովանի ունին. և տարին հեղ մը
միայն իրարու կերթան. պէտք է որ
տանտէրը գլուխը բան ձգէ, անանկ
ընդունի։ Իսկ կերակուրնին և սե-
ղաննին խիստ փառաւոր է։

Ն՚եաբոնցիք շատ փառամոլ և
հպարտ են. ամենևին չեն համբերեր
անարգանաց. ուստի մեծ պզտիկ կը-
նային որ իրար պատուեն և յարգեն։
Կը ջանան որ Ճշմարիտ խօսին. և
չեն սիրեր կեղծաւորութիւն սուտ և
նենգութիւն։

Խիստ մեծասիրտ ըլլալով ամ-
ենևին մահէն չեն վախնար. միայն կը-
նային որ իրենց պատիւը չի պակսի
որչափ խեղճ մարդ ըլլայ։

Ա՚ռ որ մէկը աղքատնայ՝ ամենևին
պզտիկ չեն համարեր, առաջուան պէս
կը պատուեն։ Ա՚իայն ուրիշ ազգերը
կանարգեն հպարտութիւնը։

Շ՚ատ կասկածոտ և ոխակալ մար-
դիկ են. բայց բարեկամի համար կը-

մեռնին։ Եվ որ որդին կամ կինը օրէնքի դէմ բան ընէ, հայրը կրնայ զայն մեռցընել։

Ուեծամեծները մէյմէկ խորհրդական ունին քովերնին. որ եթէ անկարգ բանմ՝ ընեն, ազդարարութիւն կընեն որ չընեն անանկ բան։

Ինչ կրօն ունին։

215. Նեաբոնները բոլոր կուապաշտ ըլլալով շատ զանազան կուռքեր կը պաշտեն պէսպէս աղանդներով. գլխաւոր մէկ ՝ած մը կընդունին, և 7 մանր ՝ած կը դնեն մոլորակներուն թուովը։ Ոչոնց ուրիշ պաշտօն չեն ըներ, միայն երդում կընեն։

Եւ ունին անհամար ՝ածներ, որ իրենց թագաւորներուն հոգիներն են և Ամ կըսվին. որ Ցայիրը կ՝ածացնէ, և օրէ օր կը շատնան։

Խիստ շատ տաճար ունին, ամէն տեղ կայ։ Դայց խիզ՝ մը ունեցողը տաճար չի մտներ։ Ունին զանազան տօներ, որ տաճարը կերթան ողորմութի կը ձգեն. ետքը կուրախանան խաղալով։ Իսկ տարեգլխին մէկ ամիս տօն կընեն ու իրարու պարգև կուտան։

Ասոնց Ճգնաւորները Լամմաոպօ կըսվին՝ այսինքն քահանայ, կամ զինուոր. որ քուրմերուն ծառայուն կընեն, և օրը 7 անգամ կը լըվացվին, ու 780 անգամ ծունր կընեն գլխընուն զարնելով։

Որչափ որ կոյր կայ հոն միաբանութիւն ունին և մանաւոր չուծ մը կը պաշտեն, ու երգելով և խաղալով իրենց կերակուրը կը Ճարեն։

Յեղ մը Ճգնաւորներ ալ կան, որ կուզեն շուտով մեռնիլ, և իրենց չուծին քովն երթալ։ Ասոնք երբեմն նաւը կը մտնեն ու քարեր կը լեցընեն մէջը և տակը կը ծակեն. երգելով կամաց կամաց ծովին տակը կերթան կը խղդըվին։ Յողովուրդն ալ ծովին քով կեցած կը գովեն զանոնք՝ օրհնենք ուզելով։ Ամանք զիրենք պատին մէջ հիւսել կուտան. միայն շունչ առնելու համար ծակ մը կը թողուն, մինչև հոն անօթի կըսատկին։ Կան որ իրենք զիրենք կրակը կը ձգեն։ Ամանք ալ կուռքերուն կառքին տակը կինին։

Կռատուններուն մէջ երկու գլխաւոր կուռք ունին, մէկը Ջայպօ կըսվի. որուն միայն կռնակը 5 գրկաչափ

է. ականջը խիստ երկայն. և մարմինը մազոտ։ Ծաղկի վրա նստած կըշինեն. և չորս դին լեցուն մանր կուռքեր են։

Էկալը գոռանվէն կըսվի. ասալ շատ մեծ է, և 7 ձեռք ունի. ասոր չորս դին ալ 33333 կուռք կան։ Ասոնք մանաւոր աղանդի կուռքեր են. բայց կան անհամար կուռքեր և զանազան օրէնքներ։

Ռեաբոնները երբոր պիտի ապաշխարեն, քուրմերը կը տանին զանոնք իրենց ուխտատեղին. որ է խիստ բարձր լեռ մը և շատ դժուար է երթալ հոն։ Ամէն մարդ իր պաշարը պիտի տանի. շատ մարդ տաքուն Ճամբան կը մեռնի ծարաւով։

Քուրմերը խիստ գազանաբարոյ ըլլալով ապաշխարողը թեւերէն կըկախեն, ու սաստիկ կը տանջեն. թէ որ ազգականներէն մէկը այս խեղճին ցաւակցի, անալ կը տանջեն քուրմերը։ Այս ապաշխարանքները Ճամբան կուտան։

Բայց երբոր ուխտաւորները լեռան ծայրը կը հասնին բաց գլխով և բաց ոտքով, հոն գերանով շինած կշիռ մը կայ, մէկ աչքը կը դնեն ա-

պաշխարհը անդին կը հրեն լեռնէն դուրս. որ այն խորունկ անդունդին վրա կախ կը մնայ, ու անկէ կը խոստովանի մեղքերը բարձր ձայնով։ Եվ որ յայտնի չի պատմէ մեղքերը, վար կը նետուին, հազար կտոր կըլլայ։ Իսկ ազատողները 25 օր հոն կը մնան և իրենց ուխտաւորները պտըտելէն ետև կը դառնան տեղերնին։

Այս լեռան վրա է Օ ... ջուծին տաճարը. իսկ կուռքն է մեծ ոսկիաձոյլ. և Ճամբան կայ մեծ դաշտ մը, ուխտաւորները հոն կը նստին ձեռքերնին խաչաձև կուրծքերնին դրած, և բերանին ալ ծնկան վրա դրած կը մտածեն մեղքերնին լեռն երթալու ատենը։ Ուր շատ կուռաստուններ կան։

Շատ խենդ աղանդներ ունին կերպ կերպ. կան որ ոչ կուռք ունին ոչ տաճար. միայն կը ջանան որ այլոց հետ անոյշ վարվին և աղէկուն ընեն։ Իրենց մէջ մեծ բարիք է զինքը մեռցընել. որպէս զի վատանուն չի մեռնին յանցանքով մը։

Կամ Քրիստոնէութիւն։

216. Իբր 300 տարի առաջ մէկ Ճեաբոնցի պատանի մը՝ Հնդստան կերթայ, և հոն Ճիզվիթ քահանայէ մը լուսաւորելով քրիստոնեայ կըլլայ։

Որովհետև ասոնք հայրենասէր են, ուստի խնդրեց որ Ճիզվիթ քահանաներ երթան Ճեաբոն՝ լուսաւորելու։ Որոնք փորդուքալցի նաւով մը գացին Ճեաբոն, սկսան շատ մարդ քրիստոնեայ ընել։

Սակայն 1649 ին երբոր՝ ոբն Ֆռանչիսկոս քսաւերեան հոն գնաց սքանչելի քարոզութիւնը 3 փաշա իրենց ժողովուրդովը դարձան ուղղափառ եղան։

Բայց Հոլանտացիք տեսան որ օրէ օր կը ծաղկի հոն հաւատքը, սատանութի բանեցուցին որ ուղղափառները չի շատնան։ Ուստի թագաւորին միտքը շատ բան դրին, այնչափ որ հրաման հանեց թէ քրիստոնէութիւնը ալ չի քարոզեն. և ամէնքը դառնան կռապաշտ ըլլան։

Սակայն Ճիզվիթները զգուշութիւն վարվելով և խոհեմութի բանեցնե-

լով՝ քրիստոնեաները հանգիստ կեր-
թային։ Ի՛ն միջոցը Պապանիայէն
Ֆռանչիսկեան քահանաները եկան
հոն. տեսան որ Հիզվիթները մեծ
համարում ունին մեծամեծներուն
առջին, սկսան նախանձելով անոնց
գործքը վար զարնել. և անխոհեմ
կերպով յայտնի քարոզել թագա-
ւորին հրամանին դէմ։

Ի՛նչ այս Համբով անանկ սոսկա-
լի հալածում մը եկաւ որ բիւրաւոր
մարդիկ նահատակ ըրին. և անտա
նելի տանջանքներով խեղճ քրիստո
նեաները հալածեցին, և շատ քահա
նաներ ալ մեռուցին.

Հոլանտացիք ալ մատնութիւնները
ընելով բոլոր եւրոպացիք անկէ հա-
լածեցին, որ իրենց մնայ։ Պակայն
իրենք ալ անկէ վռընտվեցան, մէկ
պզտի կղզիի մը մէջ մնացին, որ վա-
ճառականութիւն ընեն։ Ի՛մենևին
քրիստոնէութէ նշան մը չեն կրնար
ցցընել, և ոչ յայտնի աղօթել։

Ի՛նատենը այնչափ սաստիկ էր հա-
լածանքն որ տարուէ տարի կռապաշտ
ները կառնէին՝ որ խաչը թափօրով
ամէն տուն կը պտըտցնէին, որ ոտ-
քով կոխեն. ով որ չէր կոխէր կը-

մեռցընէին. և ամենուն անունը կը-
նշանէին։ Այս սոսկալի հալածանքը
100 տարի քշեց. որ քահանաներուն
իրար չի քաշելուն համար պատահե-
ցաւ, այնչափ հոգի բնաջինջ եղաւ.
և ազգը կռապաշտ մնաց։

Եպիսկոպոս հիմա մեղմացած է, և
ծածուկ քրիստոնէութիւն կը գտնի.
քահանայ ալ ծածուկ կրնայ երթալ։

Ամբ ասասուն։

217. Դեռաբոնները ուսումնասէր
ըլլալով ամէն հարկաւոր դպրոցներ
ունին. և Հիզվիլթները մինչև 4000
տղաք կը կրթէին ամէն մէկին մէջ։

Այց հիմա քուրմերը կը կարգա-
ցնեն տղաքը մինչև 14 տարի. անկէ ե-
տև զինուորուի կը սորվեցնեն։ Աղ-
ջիկներուն համար ալ դպրոցներ ու-
նին. ուր գրել կարդալ կը սորվին.
նաև բանաստեղծութիւն և բժշկութիւն
կը սորվին։

Այց ամենէն աւելի հոն բժշկու-
թիւնը ծաղկած է. անանկ որ միայն ե-
րակը բռնելով բոլոր հիւանդութիւնը
կիմանան։

Ամոնց լեզուն չինաց լեզուին մօտ
է, և գիրնալ անոնց պէս վերէն վար

կը գրեն. և անթիւ նշանագիրներ ունին։ Շատ բառ ունենալնուն համար գեղեցիկ է իրենց բանաստեղծութիւնը։

Իրենց հին լեզուն գրաբառ ըլլալով միայն աղօթք կրնեն անով ու չեն հասկրնար։ Յորեկն ու գիշերը 12 ժամ կը բաժնեն ամառ ձմեռ։

Ինոր համար իրենց ժամը երբեմն երկան է երբեմն կարճ. որ համաստեղութեց անուններով կը բացատրեն. զորօրինակ Ղէ (մուկն). Ռա (ցուլ). Մաոա (վագր). Ազ (նապաստակ). Դրաջ (վիշապ). Ի՛է (օձ). Ռա՛մ (ձի). Մէոպոսէ (խոյ). Ղէոայէ (կապիկ). Դրոոէ (աքաղաղ). Ան (շուն). Ի (խոզ)։

Ո՞ՐՊԷՍ Է ՄԵԾՈՒՆԷԸ։

218. Այս մեծ տրու�՝ չինուստանի արևելեան կողմն ըլլալով 3 մեծամեծ կղզի կը բաժնուի, և 68 մեծ փաշայութի ունի։

Ուր 13 հազար մեծ քաղաք կան. և 900 հազար մանր քաղաք։ Բոլոր քաղաքները մարդով լեցուն են։

Բայց գլխաւոր մայրաքաղաքն է Յեդով, ուր կը նստի թագաւորը

մեծամեծ իշխաններով. երկայնու�
է 35 մղոն. լայնութիւնը 25. և շրջա-
պատը 100. նաև 3 միլիոն բնակիչ
ունի։

Քաղաքին մէջէն գետ կանցնի.
վրան շատ կամուրջներ շինած կան.
և ամէն տան մէջ ամանով ջուր կը
պահեն կրակի համար. Ամէն կողմը
լեցուն է կռատուններով և վան-
քերով։

Մագաւորին պալատը խիստ մեծ
և փառաւոր է. շրջապատն է 15 մղոն.
շատ զարմանալի շինվածներ և ան-
գին փայտէ վարպետ բաներ կան։

Գետնին տակը անանկ խոր մեծա-
գործ շինված մը կայ, որ վրայէն
ջուր կանցնի։ Երբեմն որոտում կըլ-
լայ Թագաւորը հոն կը պահվի, որ
ազատի։

Շատ հեռու չէ ասկէ տայիրին
նստած քաղաքը. որ նոյնպէս մեծ և
բազմամարդ է, փառաւոր շինվածնե-
րով և կռատուններով զարդարած։
Շատ վաճառականներ և փարթամ
մարդիկ կան. բնակիչները միլիոն մը
կելլեն։

Կան երևելի քաղաքներ բազմա-
մարդ և հարուստ։ Նաև շատ երևե-

լի կղզիները ալ կան չորս դին, ուս-
կից շատ բարիք կելլեն։

Որոնք դէպ՝ի արևելք և հիւսիս
ելլալով թաթարներուն և մոսկով-
ներուն կը մօտենան։ Ուստի Սախա-
լիա կղզին մոսկովները առին տիրե-
ցին, ուսկից մարգերիտ կելլէ։

Իսկ հարաւային կողմի եղած կըղ-
զիները սպանիացոց և հոլանտացոց
ձեռքն է. որ 150 տարի առաջ տիրե-
ցին և քրիստոնէութի ալ մտցուցին,
ինչպէս են Փիլիպպեան, Ոլոու-
ղեան, և Պանտեան կղզիները։

Այսև Ճեաւայ կղզին մեծ, ուր քա-
նի մը թագաւորներ կան նոյն ազ-
գէն, թէպէտ եւրոպացիք տիրա-
էն. ուր 20 նաւ կը ղրկեն հոլանտա-
ցիք, և շատ ոսկի արծաթ և ակունք
կը հանեն անկէ։

Այս կղզիներէն կելլեն անգին
քարեր, անդամանդ, յակինթ, զըմ-
բուխտ, մարգերիտ. նաև հնդկային
ընկոյզ, և մեխակ (խարանֆիլ). ո-
րուն ծառը նման է ձիթենոյ, ծաղի-
կը Ճերմակ է, ետքը կանանչ, և կար-
միր կելլայ. որ չորնալով կը սևնայ։

Կան ուրիշ զանազան բոյսեր և
զարմանալի օձեր և կենդանիներ,

Ինակիչները զանազան ազգեր են. ոմանք գաղանաբարոյ են. ոմանք բարբարոս և կռապաշտ են։ Ուր այլ լազգներ ալ կան, որ կերպ կերպ սովորութիւններ ունին։

Երբ հուատքի լոյս՝ մէկ ազգ մը չունի,
գերի մոլորած՝ միշտ կը խաւարի.
Մարմնին համար՝ միայն հոգ ունի.
Իսկ հոգուն համար՝ բան մը չի խորհի։
Հոգիդ թագաւոր՝ է ծով աշխարհի,
մարմինդ է ցամաք՝ իբրև մեծ կղզի.
Քանա՛ որ հոգիդ՝ դնես 'ի կարգի,
որ թագաւորէ՝ փառաք պանծալի։

ԽԸ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ՆՈՐ ԵՐԿԻՐ։

219. Նոր երկիրը կրնայ ըսվիլ հին գերորդ մասն աշխարհի, որ Ճեաբոն անցնելէն ետև ասիային ու ամերիգային մէջ տեղն է ընդարձակ մեծ ցամաք. որ մեծամեծ կղզիներ են եւրոպայէն մեծ։

Այս աշխարքք առաջ անծանօթ երկիր կըսվէր. բայց 200 տարի առաջ եւրոպացիք սկսան այս երկիրը փնտրռել, և քանի մը տեղ գտան։

Իսկ Գուգինկիլիզ երևելինաւաստեսը գտաւ նոր Հոլանտան, և զանազան երկիրներ հարաւային կողմը ասիային՝ որ կըսվի հարաւային ասիա։

Այս աշխարքին երկայնութիւնն է 1680 մղոն, ամենևին լեռ չունի. շատ գետեր կան մէջը. և շատ զարմանալի կենդանիներ օձեր և խոշոր մրջուններ գոյնզգոյն, որ ծառի վրա բոյն կը շինեն դդումէն մեծ։

Ինչ ազգ են բնակիչները։

220. Այս տեղերուն բնակիչները սև են և կռապաշտ. բոլորը վայրենի մարդիկ ըլլալով մարմիններին ապտով և փոշիով ծածկած է։ Աղջերնին սև ու երկայն. բայց ձայներնին և դէմքերնին խիստ գեշ չէ։

Բոլորը մերկ կը շրջին. թէպէտ ազտեղութին ու վրանին քսած ներկը հաստընալով լաթի տեղ կը բռնեն։ Որոնք ծովու խեցիներէ զարդեր կը շինեն ու վզերնին թևերնին և քթերնին կանցընեն։

Ինչ լեզու էր խօսին։

221. Ասոնց լեզուն անանկ անաղ-
խորժ և այլակերպ է որ մէկ լեզուի
մը չի նմանիր. իրենց ձայնաւորը
խիստ շատ ըլլալով անհամ է։ Բայց
տգէտ վայրենի ըլլալով ոչ ուսում
ունին և ոչ օրէնք. ոչ գիր և ոչ կրա-
տուն։

Ինկիլիզները գեղեցիկ բաներ տա-
նելով հոն շատ ջանացին որ իրենց
վաճառականութի՛ն սորվեցնեն. բայց
թանձրամիտ ըլլալով և աղէկ բանին
յարգը չգիտնալով՝ ինչ որ տեսան
բանի մը տեղ չի դրին, ու փոխարէն
բան մը չի տվին որ առուտուր ըլլար։

Ամենևին տեղ մը հաստատ չեն
կենար, ոչ քաղաք կը շինեն, ոչ գեղ.
այլ միշտ ասդին անդին կը շրջին. և
մանր խրճիթներու մէջ իրարու վրա
շան պէս կը պառկին։ Շատ անգամ
ալ ծառի վրա կը պառկին։

Ասոնց կերակուրը ձուկ է, որ խե-
ցիները կարթ կը շինեն ու դիւրին
կերպով կը բռնեն։ Արբեմն քարով
թռչուն ալ կը զարնեն կեփեն կու-
տեն. և հում բան չեն ուտեր։

Կրակը ինչպես կը վառեն։

222. Ասոնց կրակ վառելը շատ զարմանալի է. վասն զի գաւազան մը կառնեն չոր տախտակի մը վրա կը ռթը ընցնելով արագ արագ կը շարժեն, անանկ որ նայիս մեկէն կրակ կելլէ։

Անազան ձևով զէնքեր ունին. բոլորը առանց երկաթի է. վասն զի երկաթի գործածուի չունին. միայն քարէ կացիններ ունին, որ մեծամեծ ծառերը կը կտրեն ու կրակով ծառը կը փորեն նաւ կը շինեն. և կելլեն ծովը կը պտըտին, որսորդուի կընեն։

Կոն ուրիշ տեղեր։

223. Դէպ 'ի առաջ երթալով գտան շատ երկիրներ, այսինքն երկիր Տիեմէնայ։ Նոր կուինէա են։ Այց 100 տարի առաջ ինկիլիզները գտան Նոր բրիտանիա և Նոր իռլանտա։

Այս տեղերուն բնակիչները վայրենի և սևադոյն են. ինչպէս ուրիշ կղզիներուն բնակիչները. որ տեսնելով թէ ինկիլիզները իրենց կը մոտենան, սկսան գաղանի պէս պոռալով վրանին վազել հեռուէն։

Լաև ձեռքով աչ բան մը կընե-
տէին, որ ընկած տեղը կը վառէր։
Իսկ ինկիլիզները զանոնք հրացա-
նով փախուցին.

ՈՂԷՆ ՂԷԼԱՆԴԱՅԻ։

224. Որ զէլանտա կղզիին բնա-
կիչները քիչ մը մարդավար էն. և
անոյշ բարք ունին. թէպէտ միշտ
ցեղ ցեղի հետ կը կռվին.

Աղքատները տերևով հիւսած շա-
պիկ մը կը հագնին. իսկ մեծամեծ-
ները կտաւեղէն հագուստներ ու-
նին, և մարմիններն կը ներկեն։ Արիկ
մարդիկ կնիկներէն աւելի զարդա-
բանք կը սիրեն. որ քթերէն և ա-
կանջներէն զանազան ժժմունքներ
կը կախեն։

Ունին երկրթեղէն գործիք. ի-
րենց դանակն ու կացինը սև քարէ
շինած է, և մկրատը մարդու ոսկորէ
կըշինեն։

Թէպէտ վայրենի ազգ էն զանա-
զան ցեղ բաժնած, բայց ունին գըլ-
խաւոր իշխան մը հրամայող։ Ամէնքն
աչ յաջող և արագ էն. ամէն բան
ձեռքերնուն կուգայ։ Անանկ արագ
կը բարկանան որ մէկէն իրար կը

մեռցընեն, ու միսը կուտեն։ Սևագոյն են, ակռանին մանը և մազերնին սև։

Ո՞Վ ԳԻՏԷ։

225. Լախ հոլանտացի նաւապետ մը գնաց հոն, բայց չի կրցաւ դուրս ելլել վախուն։ Յետոյ Ռուգ ինկիլիզը գնաց. բնակիչները մէկէն ժողվեցան ծովուն մօտ լեզունին դուրս ձգելով կը պօռային Հարօմայէ. այսինքն եկէք։

Անոնք ոչ տաճար ունին և ոչ պաշտօն. բայց զանազան կղզիներ ըլլալով տեղ տեղ աւելորդապաշտութիւններ կընեն. և իրենց մեռելը ծովը կը նետեն։

Ինկիլիզները հոն խաչ մը տեսան կանգնած և զանազան փետուրներով զարդարած, որ կը պատուեն։

Ո՞Վ ԵՆ ՕՏԱՀԷՏ։

226. Այս ազգը կը բնակի Ռաիդի կղզին մեծ և բազմամարդ. որ վերինները շնորքով են՝ թէ կերպարանքով և թէ մարդավարութիւն։ Բայց իրարու նման չեն. ոմանք սև են ոմանք երկայն, և են։ Մէնքը մարմին

ներքնուն վրա անջնջելի նշաններ կը շինեն աստղի և կենդանիներու ձևով. իսկ ձեռքերնուն և ոտքերնուն վրա կը գրեն այս ձևը Z.

Յաւատարիմ են և շատ բարեկամութիւն կը սիրեն. թէպէտ խիստ գող են. Տեղեակ են արուեստի և մինչև 60 ոտնաչափ նաւ կրնան շինել. թէպէտ լայնքը կանգուն մը կընեն, որ քարէ կացինով կը շինեն. և էվահաս կըսեն։

Ասոնց խօսքերը բոլոր ձայնաւոր գրով ըլլալով ուրիշ լեզու չեն կրնար խօսիլ։ Մինչև տասը համրանք գիտեն. անկէ ետև կըսեն, մէյմը աւելի երկու աւելի, են։ Ունին թագաւոր որ 100 իշխաններով կը կառավարէ այս կղզիները։

Ինչ կը պաշտեն։

227. Ասոնք երկու չաստ կը դնեն արու, էգ. արուն մարդիկ կը պաշտեն, իսկ էգը կնիկները կը պաշտեն. և ամէն բան ասոնցմէ եղած են կըսեն։ Իրենց քուրմերը տղաքը կը թլփատեն. և ժողովուրդին մարմինին վրա նշաններ կընեն։

Ա՛չ զոհ ունին և ոչ կուռք. բայց

մէկ տեսակ մը թռչուն ունին, որ իբր բարի գուշակութիւն ընող կը պատուեն։ Ցաձարը կերթան խոնարհութիւն երկրպագութի կընեն անելեոյթ ջաձներուն։ Աւելի յարգութի տալու համար տաձարն որ մտնեն մինչև կէս մէջքերնին կը հանվին. և իրենց մեռելին ալ հոն կը թաղեն։ Այց նախ օրմը գիշերմը ազգականները կուլան մեռելին վրան. իսկ մեռելին տէրերը լուռ կը կենան։

Յետոյ կը տանին ծովուն քով. քուրմը մեռելին վրա քիչ մը ջուր կը լեցընէ։ Ընկէ ետև թափօրով կը տանին խրձիթի մը մէջ կը դնեն, վրան ալ կը գոցեն։ Ազգականները հոն կը կենան. ու երբեմն ձակատնին ծակելով արիւն կը հանեն, և կը պահեն իբր ընծայ մեռելին։

Երբեմն երբեմն էրիկմարդիկ սեագոյն կը ներկվին, ու պօռալով թափօր կելլեն։ Մինչև 5 ամիս այս սուգը կը քաշեն։

Ընկէ ետև կերթան մեռելին ոսկորները կառնեն աղէկ մը մաքրելով կը լվան, ու կը տանին տաձարը կը թաղեն։

Կամ ուրիշ տեղ.

228։ Ասիայի ծայրը 17 երևելի կըղզիներ ալ կան վերիններուն նման. գլխաւորը օՁԷՅԷ կըսվի. և ամէնքը միատեղ կղզիք Բարբէկոմոյ կըսվին։

Բնակիչներն են ուժով և թեթևաշարժ, խազաղ և մարդասէր։ Իրենց մէջ գողութիւնը մեծ Ճարտարութիւն կը սեպվի. մինչև իշխաններն ալ գող են։

Հասարակ ժողովուրդը գրեթէ մերկ կը շրջի. և իրենց զարդն է ծովու ժամունք և փետուր, որ վրանին կը շարեն։ Ընկատար արուեստներու միայն տեղեակ են։

Ունին թագաւոր և իշխաններ. և իրենց գլխաւոր կուռքը ԵՄՈՒՍԱՀ ՆՈՒԷՀ կըսվի. երբոր պատերազմ երթան հետերնին կը տանին, և ասոր տաՃարը մօրայէ կըսվի։

Գուգ նաւապետը իրեք անգամ բոլոր աշխարքս պտըտելէն ետև 1779 ին այս կղզին հասաւ. մէկէն 3 հազար հոգի բնակիչներէն եկան ծովուն քով ինկիլիզներուն կընայէին։

Այսիս թագաւորին որդին Գուգինեաւը եկաւ և ինկիլիզներէն շատ

պատիւ տեսաւ. որ մէկէն հրաման տրվաւ որ դուրս ելլեն. և իրենց տուն տրվին որ հանգիստ ըլլան, նաև ամէն պիտուական բաները միամտութիւն կը բերէին։

Յետոյ Թագաւորն ալ եկաւ հոն. Ղուզ իրեն խաղալիկ բաներ տրվաւ և ապակի ամանմը. որ այնչափ մեծ բանի տեղ անցաւ, մինչև մեծ պարգևներով զինքը կերակուրի հրամցուց։

Բայց նախ տարաւ իրենց կռատունը, և կուռքին Թագը առաւ Ղուզին գլուխը դրաւ, մեծ ՝ածանելով։ Ամէն զի երբոր տեսան թէ ինկիլիզները հրացաններ նետելով և թուր խաղցընելով կրթուելի կընեն. կարծեցին թէ անմահ են, անոր համար կը պատուէին։

Սակայն նոյն օրերը Ղուզին մէկ մարդը մեռաւ, Թափօրով տարին թաղեցին։ Բայց բանը տեսածնուն պէս բնակիչներուն միտքը աւրեցաւ։ Տեսան որ ասոնք ալ կը մեռնին՝ ալ զիրենք բանի մը տեղ չի դրին։

Իսկ ինկիլիզները Թագաւորէն համարձակութիւն ունենալով սկսան անհամնալ։ Ինկէ ետև ժողովուրդը ա-

նոնց քաներն սկսաւ գողնալ. մինչև մակոյկն ալ (սանտալն) գողցան. ուստի Ռուզ քարկանալով գնաց թագաւորին ստիպեց որ գայ նաւը գտնել տայ։

Այլիս ժողովուրդը կատղեցաւ. և անհամար քազմութիւն եկան ինկիլիզներուն վրան թափեցան. զարկին մեռցուցին Ռուզը իրեք ընկերով, և մեծ տօնախմբութիւն տարին անոնց մարմինը կերան։

Իսկ ինկիլիզները սասանելով ելան այն կղզին. և այն երևելի Ռուզ նաւապետը կերակուր եղաւ վայրենիներուն. որ իրեք անգամ պտըտելով՝ բոլոր աշխարքիս մէկ դիէն մտաւ մէկալէն ելաւ։

Ը. ԳԼ՝ ահա մենք ալ ասիային մէկ կողմէն սկսանք՝ պատմել մինչև հասանք ովկիանոս. և կղզիներն ալ պատմելով կատարեցինք։ Ուստի ահա Ը. մերիգայի մօտեցանք. պէտք է անծանօթ երկիրներէն ետ դառնալ ու Ը. փրիկէի վրա պատմել, որ այս մասին ալ հմուտ ըլլաս։

Ընդ մեր աշխարհէն՝ որչափ հեռացար,
ոյնչափ վայրենի՝ ազգերու գալար.
Որոնք չեն կրթած՝ և քաղաքավար,
ասանկ կան յիմար՝ անբան և թշուառ։
Դուն որ ազնիւ տեղն՝ աշխարհիս ծնար,
և ազնիւ զարմէ՝ բողբոջ մը բուսար.
Շնորհակալ եղիր՝ իմաստուն հոգւով,
չբլայ թէ ըլլաս՝ անկիրթ անյարմար.

ԽԹ. ՀԱՄԱՐ

Ո՞ր է աշխարհիս երկրորդ մասն։

229. Աշխարքիս երկրորդ մասն է Ամերիկէ, որ ասիայէն փոքր է և եւրոպայէն կրկինն է։ Ամերիկէ Ամերահամու Թոռան անունն է կըսեն, որ կը թարգմանի երկիր հայելեց (160)։

Այս մասը կը բաժնըվի ասիայէն կարմիր ծովով. և սիւէիշէն կըսկըսի կերթայ մինչև Որքա, և պատպէլման տելայ բերնէն կելլէ մինչև Խարեյուսոյ գլուխը կըհասնի. անկէ ովկիանոսը քերելով կուգայ Ֆէսէն միջերկրական ծովը և մինչև Եգիպտոս, կամ Սիւէիշ. այս պարանոցին լայնու�ը 150 մղոն կը դնեն մինչև միջերկրական ծովը։

Ամերիկէի երկայնութիւնը է 4200 մղոն. և լայնութիւն է 2880 մղոն. իսկ բնակիչներուն թիւը յայտնի չէ. վասն զի մինչև հիմա Ամերիկէի ներսերը մարդ գացած չէ։ Շատ անծանօթ երկիրներ և մեծամեծ անապատներ կան, ուր արջառները թափառական կը շրջին։

Ազգ Բնակչաց։

230. Ամերիկէի առջի բնակիչները Ռամայ ցեղէն եղան, որ աշտարակաշինուէն ետև եկան հոն բազմացան։ Բայց շատը սև են. ասոնց սևութիւնը իրենց կաշիէն է։ Կըսեն թէ Նոյ նահապետ Ռամ որդին անիծելով սևցաւ. իրեն ցեղն ալ սև եղաւ (160)։

Սակայն Հերմակ մարդիկ ալ շատ կան հոն, որ զանազան ազգերէ գաղթեր բազմացեր են։ Բայց սև արապները ամէն ազգերէն տարբեր ըլլալով վայրենի և անգութ են անասունի պէս. որ մէկզմէկ կը ծախեն, մինչև բուն զաւակը և եղբայրը կը ծախեն։ Ուստի տարեէ տարի 60 հազար գերի կառնեն Եւրոպացիք կը տանին Ամերիգա. որոնք հոն տոսկա-

լի աշխատանքէն չեն դիմանար կը մեռնին շուտով։

Բանի կը բաժնվի։

231. Աֆրիկէ 16 աշխարք կը բաժնվի ընդհանրապէս, և ամէն մէկը մեծ թագաւորութիւններ են. որոնց գլուխն է Եգիպտոս. որ ասիայէն կը բաժնվի Սուէզի պարանոցով։

Եգիպտոսի տէրուէ երկայնուին է 600 մղոն, և լայնուին 150։ Հին ատենը 20 հազար քաղաք ունէր, և 32 միլիոն բնակիչ։ Հիմա շատ քաղաքները աւրած ըլլալով, 100 հազար գեղ կէլլէ, և 5 միլիոն բնակիչ ունի։ Բուն եգիպտացիք խիտիներն են, որ հին ատենը խիստ շատ էր, բայց հիմա շատ պակսեցան. իսկ արաբները ետքէն եկած են ներսերէն։

Եդեմ սկսաւ ռազմաւորուիլը։

232. Այս ազգին իշխանութիւնը շատ հին է. զի Հայր աբրահամին ատենը մեծ թագաւորներ կային. օրէնք ունէին, դատաւոր՝ տաճար և քահանայ. նաև ամէն արուեստ կար։

Հին թագաւորներն էին Փարաւոն

նի ցեղէն. Եաքը Ալէքսանդր թագաւորը երբոր առաւ, նորոգեց աղէքսանդրիա քաղաքը իրեն անունը դրաւ։ Ինկէ ետև Պտղոմեանք թագաւորեցին անկախ մինչև քրիստոնէութէ ատենը։

Յետոյ անցաւ Հռոմայեցոց, մինչև Կոստանդիանոս թագաւորը ստամպոլ եկաւ՝ ան ատենը յունաց անցաւ։ Ապա անցաւ այլազգներուն. ուր ինքնագլուխ Խալիֆաներ կը նստէին թաթար սուլդաններէն։ Հուսկ յետոյ Դաւուզ Սուլդան Կէլիմ պատերազմով տիրեց եգիպտոսի, և անցաւ օսմանցոց։ Մէպէտ 24 Պէկ կային գերութէ առաջ եկած, որ բռնութէ տիրէր էին բոլոր եգիպտոսի. մինչև Պօնաբառթէն առաւ եգիպտոս 3 տարի տիրեց։

Ինկէ ետև նորէն անցաւ օսմանցոց. որ Պէկերը վերցուցին ու իշխանութիը տրվին Փաշային։

Ոնէն ուսուցին։

233. Եգիպտացիք հին ատենէն 'ի վեր ուսումնասէր ըլլալով ամէն ուսման և արուեստի սկիզբն եղան. նախ նշանագիրներ հնարեցին ու վերէն

'ի վար կը գրէին. ինչպէս հին քարե-
ղուն վրա կերևնան։ Դաքէն ալ գի-
րը հնարեցին. բայց երբոր արապնե-
ը եկան տիրեցին իրենց հին լեզուն
և հին գիրը խափանեցան. և արապ-
ներուն լեզուն եղաւ գործածական։

Պովսէս մարգարէին ատենը գրե-
թէ ամէն գիտութիւն ծաղկած էր Է-
գիպտոս. մանաւանդ երկրաչափու-
թիւն, թուաբանութիւն, աստղաբաշխու-
թիւն և փիլիսոփայութիւն։

Իսկ քրիստոնէութեան ատենը այնչափ
ուսումը պայծառացաւ, որ ամէն
քաղքէն Աղէքսանդրիա կերթային
բան սորվելու։ Բայց երբոր այլազգ-
ները տիրեցին ամէն բան վերջացաւ.
միայն կախարդութիւնը մնաց։

Ինչ էրծն ուներն։

234. Հին Եգիպտացիները խիստ
կռամոլ ըլլալով ամէն բան կը պաշ-
տէին, մինչև օձը և սոխը կը պաշ-
տէին։ Խիստ շատ կախարդութիւն է-
տևէ ըլլալով կըսէին թէ երբոր ի-
րենց հոգին կելլէ, զանազան կենդա-
նիներու մէջ մտնելով ժուռ կուգայ
մինչև 3000 տարի. անկէ ետև կու-
գայ նոյն մարմինը կը մտնէ։

Նոր համար իրենց մեռելին դեղերով կը պահէին քարէ գերեզմաններու և հողերու մէջ, որ անմնաս մնան, մինչև որ իրենց հոգին դառնայ գայ։

Սակ թագաւորները մեծամեծ գերեզմաններ, և սոսկալի բուրգեր կը շինէին մեծ քարերով, ինչպէս մինչև հիմա կան. և հողերուն մէջէն դեղած մարմիններ և մումիաներ կելլեն։

Սակայն ահա 3000 տարին անցաւ մարմինները կան առանց հոգիի՝ ամբողջ և անարատ. անանկ որ վրաները նուն ներկերը, մատներնուն հինան, և պատանքներնուն վրայի գրվածները ամբողջ կան ինչպէս տեսանք։

Ի՞նչ Ֆրիսոնէայ Եղան։

235. Սիտի աղգին առաքեալը Պարկոս աւետարանիչն ըլլալով Ի գիպտոս քարոզեց, և իր աթոռը Ալեքսանդրիա դրաւ, բոլոր ժողովուրդը լուսաւորեց։ Եւ Իբէացիք և Թովպացիք ալ լուսաւորեց։ Դառաւոր եկեղեցի շինեցին, և մեծամեծ հայրապետներ եղան իրենցմէ, Թանաս, Կիւրեղ, ևն։ Սակայն

կռապաշտուն Թէ ատենը այնչափ հա-
լածանք քաշեցին խրիստիներն որ ծը-
նունդի օրը միայն 30 հազար հոգի
ջարդեցին։ Նոյնպէս յունաց ատենն
ալ շատ պակսեցան հալածանքով։

Ամանք քաղկեդոնի ժողովքն ընու-
նելով Անէրէ այսինքն Թագաւորա-
կան կոչվեցան։ Ամանք ալ իրենց
նախնի ծէսը պահելով անանկ մնա-
ցին։ Սակայն այլազգիները տիրելէն
ետև Թանձր տգիտուն մէջ մնացին։

Դանի գաւառ կը բաժնվի։

236. Դանի գաւառաբար իրեք կը բաժ-
նվի, Ատորին, Դիջին, և Ալերին
եգիպտոս։ Դ.մէն մէկը զանազան իշ-
խանուն են, շատ քաղաքներով։ Դի-
մա բոլորը փաշային տակն են։ Ատո-
րին եգիպտոսի մէջն է Թագաւորա-
նիստ մնըր քաղաքը, մեծ և բազմա-
մարդ, որ կէս մղոն նեղոս գետէն
հեռու է։

Զևն եռանկիւնի. շրջապատն է
10 մղոն. իբր 26 հազար տուն, և մի-
լիոն մը բնակիչ կայ շրջակայ ժողո-
վուրդով. ուստի մինչև 30 հոգի մէկ
տան մէջ կը բնակին։

Շատ երևելի հին շինվածներ և

պալատներ նաև ճամիներ կան մեջը։ Հին ատենը 30 հազար հայ կային. հիմա խիստ քիչ մնացին. ուր ունին եկեղեցի։

Այս գաւառին մէջն է հին Անդիոպտոս և Աղէքսանդրիա. որ ետքէն շինեցին. հիմա 11 հազար մարդ կայ մէջը։ Բայց հին Աղէքսանդրիա շատ փառաւոր քաղաք էր, որ Աղէքսանդր Թագաւորը շինեց։ Ուր էր Թագաւորական պալատը խիստ մեծագործ և գեղեցիկ։ Նոյնպէս էր Պտղոմէոսի փառաւոր գրքատունը, որ անհամար գրքերով լեցուն էր մինչև 700 հազար գիրք կար։

Նաև շատ սքանչելի շինվածք էր Ներապիոն կուռքին տաճարը բլուրի մը վրա. ուր 100 աստիճանով կելլէին։ Մինչև հիմա մէկ սիւնը կայ, որ է Սամաքի, 90 ոտնաչափ երկայն միակտուր. և 25 ոտնաչափ շրջապատն է։

Շատ զարմանալի բաներ կան հինուց մնացած. մեծամեծ աշտարակներ սիւներով. և երկու կոթող (տիքիլի Թաշ). և ուրիշ շատ սիւներ կան խորհրդաւոր գրվածներով հինուց մնացած։

Ալէքսանդրիայի մօտ է Փարոս կըղզին. որուն մէջ քարաշէն բարձր աշտարակ մը կար այնչափ զարմանալի շինած, որ եօթն սքանչելեաց մէկը կըսվէր. ուր կրակ կը վառէին ամէն գիշեր նաւերուն համար որ չի մոլորին։

Կա՞ն ուրիշ պեղեր։

237. Ինչին և ատորին եգիպտոսի մէջն ալ հին ատենը շատ երևելի քաղաքներ կային։ Ինչպէս է Այտա, Մէմբէ, Ամրէգ քաղաք, Մէնբայի, և այլն։

Նաև անապատն ալ Պօղոսի, և ալ Անտոնի. որ ընդարձակ տեղեր ըլլալով անհամար ճգնաւորներ կային. և մինչև հիմա խափանելէն կը գտվին ճգնաւորներ, ուր լեցուն արմաւենի ծառեր են։

Հին շէնքերուն մնացորդները մինչև հիմա կերևնան. նաև յայտնի է Աբիւրինթոսին տեղը, որ հին ատենը ահագին շինված էր։

Ան զի 12 մեծամեծ պալատներ էին մէկմէկու խիստ նման. և այնչափ ալ շէնքեր կային գետնին տակը, որ թագաւորներուն գերեզման-

նեբն էին։ Լաբիւրինթոսը անանկ վարպետու�թիւն շինված էր, որ մէջը մանողը ալ դուրս չէր կրնար ելլել, կը կորսըվէր։

Այս տեղիս մօտ են Եգիպտոսի բուրգերը, որ 3 բարձր շինվածներ են այնչափ մեծ որ լեռան պէս կերևնան։ Անանաւանդ մէկը որուն բարձրութիւն է 499 ոտնաչափ. բոլորը ահագին մեծ քարերով շինված են, որ 207 աստիճանով վեր կելլըվի։ Անէջ զանազան բաներ և սիւներ կան. նաև մեծ սօմաքի աւազան։ Այս ահագին շինվածը 100 հազար աշխատաւոր շինեցին, 3000 տարիէն աւելի է. որ 7 սքանչելեաց մէկն է։ (Ն՚էմ. 546)։

Ո՞ր է Նէղոս գետ։

238. Այս գետս Հապէշիստանէն կելլէ, և մեծ պտոյտ ընելով կանցնի արաապստանէն 7 լեռներէ վար կինջնի սարսափելի կերպով. որուն տակէն մարդիկ կանցնին։

Երբոր Եգիպտոսի կը մօտենայ երկուս կը բաժնըվի. մէկը գէպ 'ի Ռէշիտ կերթայ, մէկալը գէպ 'ի Տիմիատ. և եռանկիւնի Տէլթա կըզլին

ձևացնելով՝ 5 բերնէ կըվազէ միջերկրական ծովը (168).

Այս գետէն զանազան առուներ բացած են. որ մայիսէն ետև առատանալու ատենը կը բանան ու բոլոր երկիրները ոռոգանելով կըպարարացընեն. անանկ որ առանց աշխատանաց կը պտղաբերի երկիրը միայն սերմանելով։

Այս պատճառաւ օգոստոսի երբոր ջուրը բաւական կաձի, մեծ ցնծուի կըլլայ. բոլոր քաղաքացիք հոն կերթան հանդէսով առուները կը բանան։ Ասոնի հին ժողովուրդը կը պաշտէր այս գետը Փրիէ կոչելով։

Այս մեծ աշխարհներն՝ ինչով են շինված,
այսչափ գեղեցիկ՝ այնչափ մեծատպանծ.
Խելքով գիտուելեամբ՝ երբեմն մեծցան,
երբ անկարգ եղան՝ բան մը չի մնաց։
Թէ գիտուն ըլլաս՝ բարեպաշտ չըլլաս,
ինչ օգուտ երբոր՝ միտքդ է խաւարած.
Խաստուելեան հետ՝ բարեսէր եղիր,
միտքդ ըլլայ քեզ՝ ճրագ մը փայլած։

Ծ. ՀԱՄԱՐ

Ինչ ազգ են Բարբարոսները։

239. Այս անունը առած են Պէր-պէր ազգէն. որ են սև ափրիկեցիք բնակիչ անապատի. որոնցմէ եկած են Հիմակվան սև արապները, որ դաշտերուն և անապատներուն մէջ աւազակուն կընեն։ Նովի մօտ քաղաքներուն մէջ Ճերմակ արապները և այլազգները կը բնակին. զորօրինակ Ալէզայիր, Թունուզ, Պարապլուս, և այլն։

Բայց սևերն են գազանաբարոյ, անգութ, և աւելորդապաշտ։ Որենց կեանքն է նման գազանի, մինչև իրար կուտեն։ Անոնց աշխարքը Աֆրիկան կըսկըսի մինչև Ֆէս կանցնի, երկայնուին է 1980 մղոն. իսկ լայնութին է 390։ Առջի տիրողներն եղան Փունիկեցիք, վերջը Արապները և օսմանցիք տիրեցին. և գանազան տերութի բաժնեցին։

Ո՞Ր Է ԴՈՐՈՂԼՈՒ։

240. Ա.յս բարբարոսաց աշխարքը 420 մղոն երկայն ըլլալով կը հասնի Զոնուզ Նգիպտոսէն սկսելով. որ իրեք քաղաք ըսել է. ուր զանազան ազգեր տիրեցին. եռքը օսմանցոց անցաւ։

Սակայն քաղքին գլխաւորները կամաց կամաց գլուխ քաշեցին Թագաւորի պէս կը տիրէին։ Հիմա իրենց գլխաւորը Ֆայի կըսվի որ ինքնագլուխ կը տիրէ. տարուէ տարի քիչ մը բան տալով օսմանցոց.

Զոնն բնակիչները Մուղրի են, որ առաջ ծաղկած էին քրիստոնէութիւն և արուեստներով. եռքը բոլորը դարձան։ Զոնաց ատենը հոս հայ փաշայ մը կը կառավարէր. ուր փարթամ վաճառականներ կային։

Շատ երևելի մայրաքաղաքներ կային այս աշխարքիս մէջ. հիմա շատը աւրած են։ Մինչև հիմա երևելի շինվածներու մնացորդներ, արձաններ, և գերեզմաններ կան, որ զարմանալի կերպով փորած են ապառաժէ մինչև 25 հազար կելլեն։

Դաշտի մը մէջ ջրհորներ կան,

վրանին լատինի գրեր գրած. ուր առաջ մեծ քաղաք մը կար 100 գեղեր ով. հիմա բան մը չի կայ։

Այն լեռներուն կողմը վայրենի մարդիկ կը բնակին, որ ոչ օրէնք գիտեն, և ոչ թագաւոր, ինքնագլուխ են։

Այս տէրուէ մայրաքաղաքը Դարապլուս կըսվի. որ առաջ շատ գեղեցիկ և հարուստ էր, քայց պատերազմի պատճառաւ շատ աւրեցաւ։

Առաջ հնոստանու ապրանքը հոս կը հաւաքվէր. հիմա միայն քրքում (զաֆրան) և ուրիշ ապրանքներ կը հանէ նաւերով։ Ամն զի ունի նաւահանգիստ անպակաս զանազան նաւերով։

Ո՞Ր Է ԼՈՒՆՈՒՆ։

241. Այս աշխարքը Դարապլուսին ու Ղէզայիրին մէջը կիյնի. և 12 հազար մղոն ընդարձակութիւն ունի. որ առաջ Կարքեդոն կըսվէր. և շատ զօրաւոր տէրութիւն էր։ Առջի բնակիչներն էին բարբարոս արաբներ. որոնց նախ տիրեցին եգիպտացիք, վերջը փիւնիկեցիք։

Հա ասոնք շինեցին Կարքեդոն

հին մեծ քաղաքը, որ շատ տարի շատ պատերազմեցաւ Հռոմայեցոց հետ. վերջապէս չի կրցաւ դիմանալ, ընկաւ անոնց տակը, որ այն մեծ քաղաքը բոլոր կործանեցին. որուն մէջ միայն 70 հազար զօրք կար։

Յետոյ նորէն արաբներուն անցաւ Թունուզ. և վերջի ատենները սպանեօլները կը տիրէին մինչև սուլդան Պիբարատ, որ առաւ տիրեց. ուստի 8 գաւառ բաժնըվեցաւ այս տերուէրը, ուր իշխաններ կը կառավարէին։

Բայց քիչ ատենէն եռև Պէկ մը գրին. որ մինչև հիմա Թագաւորի նման բացարձակ կը տիրէ օսմանեան պաշտպանութեամբ տակը, որուն քիչ մը բան կը ղրկէ տարուէ տարի։

Ինչ կրծն ուներն։

242. Հին ատենը կռապաշտ էին. բայց Հռոմայեցոց տակն անցնելէն եռև Ֆ դարուն շատ ծաղկեցաւ քրիստոնէութիւնը, և շատ երևելի հայրապետներ եկան. ինչպէս է Աքն Կիպրիանոս, Տերտուղիանոս, Գոստինոս, և ն։ Որ մինչև հիմա կը պատ-

ւեն քաղաքացիք թէպէտ այլազգ են ամէնքը։

Ո՞ր է Մայրաքաղաքը։

243. Զ՝ունուզ կըսվի մայրաքաղաքը, որ 8 մղոն հեռու է ծովէն, մեծ և բազմամարդ. 100 հազար բնակիչ կայ մէջը։ Պէկին պալատը շատ փառաւոր և մեծաշէն է, զանազան աշտարակներով զարդարած, և 4 դուռ ունի։

Երևելի շինուածներ և դպրատուններ կան հոն. ուր տղաքը կը կրթեն, և աղէկ կը սորվեցնեն թուաբանութիւնը և վաճառականութիւնը։

Այս քաղքին կարգը կանոնը եւրոպայի նման կանոնաւոր է. անգործ և ծոյլ մարդ չի կայ. նաև մուրացկանութիւնը խիստ ամօթ է իրենց մէջ. ամէն մարդ պէտք է որ բանի հետ ըլլայ։ Այսպէս իրենց շէյխերը անգործ և անառակ ըլլալով մերկ կը մուրան։

Ո՞ր է Կարէդոն։

244. Այս է հին թագաւորանիստ քաղաքը, որ կը նշանակէ Նոր քաղաք. որ էր աշխարքիս երևելի մէկ քա-

գաքը, լեցուն գանձով վաճառակա-
նով և գիտութիւնք, նաև ամէն բարե-
կարգութեամբ։

Պատերը 30 կանգուն բարձր էին.
չորս դին բոլոր մեծ աշտարակներով
զարդարած էր. քաղքին շրջապատն
էր 45 մղոն։

Ալեքսանդրիայոյը խիստ գեղեցիկ
էր, և բերանը 720 ոտնաչափ լայ-
լով շղթայով կը կապէին։ Մէջը
կղզի մը կար, որ ամէն ծովային զէն-
քերը հոն կը պահէին, և ծովապետ
իշխանն ալ միշտ հոն էր։

Այս քաղաքը հռոմայեցիք կոր-
ծանելէն ետև յունաց ատենը շին-
վեցաւ. բայց առջի մեծութիւնը
գնաց (241)։

Հին շինվածներուն մէջ ջրի ճամ-
բայ մը կայ, որ շատ երևելի շինք է.
կամարին բարձրութիւն է 130 ոտնա-
չափ, որ 60 մղոն հեռաւորութիւն կու-
գայ քաղաքը։

Ո՞ւր է ճէպայէր։

245. Այս աշխարքն որ զանազան
կուսակալութիւն կը բաժնուի, թու-
նուզին ու Ֆէսին մէջ կեցնի. բնա-

կիչները հին բարբարոսներէն եկած են, բայց զանազան ազգերով խառնած են։

Հին ատենը ինքնագլուխ թագաւոր ունէր, յետոյ հռոմայեցոց, նաև արապներուն անցաւ. որ քրիստոնէութիւնը ջնջեցին անկէ ետքը, բոլոր ժողովուրդը դարձուցին։

Շատ մեծ պատերազմներ քաշեց. վերջապէս օսմանցիք սպանեցնները այն կողմերէն հալածեցին իրենց անցաւ. ուր փաշայ կը նստէր։

Յետոյ զինուորները իշխելով փոխեցին տէրութիւնը Տայի դրին. որ թէպէտ թագաւորի պէս ինքնիշխան է, բայց զօրքին ձեռքն ըլլալով, երբ ուզենան կը փոխեն Տային։ Այսն զի զօրքը գազանաբարոյ ապստամբ ըլլալով միշտ տէրութիւնը խռովութիւնմէջ է, թէպէտ զօրաւոր և քաջ մարդիկ են։

Այսոնց գործքը միշտ աւազակութիւն է. և ծովի վրա զօրաւոր ըլլալով եւրոպացոցմէ բան կառնեն որ իրենց չի դպչին։

Տային 40 զօրապետ ունի որ իրեն խորհրդականներն են. և 12 հազար պատրաստական զօրք կան որ տէրու-

թիւնը կը կազմեն։ Եւ 30 հազար աշ արտասպ ձիաւորներ կան։

Ո՞ր է Մայրաքաղաքը։

246. Տային Հեզայիր մայրաքաղաքը կը նստի. որ է անուանի մեծ և բազմամարդ. չորս կողմը բոլոր աշտարակներով ամրցած է։ Ունի դուռ ունի և 16 հազար տուն կայ մէջը, իսկ շրջապատն է 8 մղոն։

Արևին տաքութիւնը համար Համբանները խիստ նեղ շինած են, որ շուք ըլլայ. զի տաք երկիրներ են, թէպէտ ծովուն մօտ է քաղաքը, ուր շատ նաւերով լեցուն է նաւահանգիստը։ Քաղքին մօտերը քանի մը հին բերդեր կան։

Այս տերութիւնը 3 մասն կը բաժնուի, Արևելեան, Արևմտեան, և Հարաւային. ամէն մէկը առանձին Տայի ունի, որ Հեզայիրի Տայիէն կը կախուին։

Այս գաւառներուն մէջ զանազան քաղաքներ և տեղեր կան. բայց երևելի բան մը չի կայ։ Սակայն Հեզայիրի և Պաղրբպի մէջ քանի մը քաղաք և բերդ կայ զորօրինակ օրան, որ սպանիացիք տիրած են. և

մինչև հիմա իրենց ձեռքն է։

Իսկ Բնիքս գաւառին բնակիչներն են ինքնագլուխ արաբ. որ ձեզայիրներուն հետ մահուչափ թշնամի են. սպանեօլներուն հետ խիստ աղէկ ըլլալով առուտուր կընեն։ Իբր զի՝ անառիկ լեռներուն մէջ ամրացած ըլլալով վախ չունին. և իրենց թագաւորը կը կառավարէ հանգըստութեամբ։

Ո՞Ր Է ՓԷՍԻ ԹԷՐՈՒԹԻՆԸ։

247. Ֆէսի տերութիւնը ձեզայիրէն կըսկըսի, մինչև ովկիանոս կը հասնի. երկայն 500 մղոն, և լայն 200. բոլոր տարածութիւնը 80 հազար մղոն ըլլալով Ֆռանսայի կիսուն չափ կայ. որ է Սպանիայի դիմացը։

Բայց աշխարհք Պաղըրպ կըսվի, որ արևմուտք ըսել է. իսկ բնակիչներն են Պաւբիտանացիք, որ հին Պէրպէր կամ բարբարոս ազգէն եկած են. հիմա արաբներուն հետ խառնըված են. ուր հրէաներ ալ շատ կան։

Շատ վաճառականութիւն տեղ է. ուսկից կելլէ շատ ոսկի և փղոսկր։ Բայց արաբները վրանաբնակ են ա-

նապատներուն մէջ։ Շատ գաւառներ և քաղաքներ ունի։

Ադրիանոպոլիս։

248. Այս տերութիւնը հին ատենը աւելի զօրաւոր ըլլալով ինքնիշխան էր. յետոյ Հռոմայեցիք և Արաբակիներու արաբները տիրեցին։

Յուլիոս Կեսարին ատենը այնչափ զօրաւոր էին որ իրենցմէ օգնութիւն առաւ և յաղթութիւն ըրին։ Օրինաւորները առիւծի մորթ կը հագնէին. և հասարակ ժողովուրդը ուրիշ կենդանիներու մորթ կը հագնէին։

Իսկ արաբներուն ատենը այնչափ զօրացան որ գացին Սպանիօլի տիրեցին երկար ժամանակ։ Այնպէս հիմա իրենց թագաւորը ինքնապլուխ է, Իսալիֆէ և Սուլթան կըսվի։ Ինքն է օրէնքը հաստատող իբր շէյխիսլամ և փոխանորդ Մահումէտին. իբր զի՝ ֆադմային ցեղէն էկած է։ Ուստի բոլոր հոգևոր և մարմնաւոր իշխանութիւնը իրեն ձեռքն է. որ 80 հազար զօրք ունի։

Ի՞նչ կրօն ունին։

249. Ռուսք կռապաշտ էին. յետոյ քրիստոնէութիւն շատ ծաղկեցաւ մինչև է դարուն ատենը. և երևելի գիտուններ եկան Ռուզբինեբէն։ Բայց արաստները տիրելէն ետև ամէնքը այլազգ եղան։

Սակայն օտարական քրիստոնեաներ շատ կան. վասն զի այնչափ դաժան չեն. անոյշ բարք ունին, և բարակ մարդիկ շատ կայ մէջերնին, որ գիտութիւն տեղեակ են. մանաւանդ թուաբանութիւն, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, աստղաբաշխութիւն, և բժշկութիւն։

Եւրոպա շատ պարտական է այս ազգին. որ պատճառ եղաւ իրենց գիտութիւն սորվեցնելու. վասն զի երբոր Եւրոպա զուրկ էր այս ուսումներէն, Ռուզբինները ԺԱ դարուն սպանեօլի տիրելով գիտութիւն մտցուցին Եւրոպա. որ յետոյ այսչափ ծաղկեցաւ։

Ո՞ր է նոր Ռաֆաուրը։

250. Մադաւորանիստ քաղաքն է Ֆէս, որ իրեք քաղաք կը բաժնըվի.

և առաջ ամէն մէկը զանազան իշ-
խաններ կը նստէին, վերջը ամէնը
մէկ ըրին։ Դայց գլխաւորը հին Ֆէս
քաղաքն է. մեծ և բազմամարդ. 80
հազար բնակիչ ունի, և զարմանալի
գեղեցիկ շինվածներով զարդարած
է. նաև թուաբանութիւն և երկրա-
չափութիւն դպրոց ունի։

Մեծ ճամի մը կայ երկայն 150
կանգուն և լայն 80. իսկ շրջապատը
կէս մղոն. 30 դուռ ունի և 400 լվաց-
վելու աւազան կայ մէջը։

Ինքնակալը Մէքնէս քաղաքը կը-
նստի, որ 30 մղոն հեռու է Ֆէսէն.
ուր առաջ 300 հազար բնակիչ կար,
հիմա այնչափ չէ. նաև 15 հազար
հրէայ կայ։

Իսկ քրիստոնեաները քիչ են, որ
սպանելոյն կրօնաւորները կը հով-
ւեն. ուր վանք ալ ունին։ Եւրոպա
եւրոպացի դեսպանները Ֆէս կը-
նստին։ Այնպէս զանազան գաւառ-
ներու մէջ եւրոպացի վաճառականնե-
ր պակաս չեն. ուր հին ատենը
շատ փարթամութիւն և մեծութիւն կար,
ինչպէս է Եմէմնա գաւառը, Ա-
կար, Հապաթ, Եմիֆ, Կարէթ,
Իյաւս, Մաղրբպ առանձին, են. ա-

ռոնք ընդհանուր անուամբ Պաւրի-
ատանիա կըսվին։

Ո՞Ր Է ՊԷԼԷՊԻՏԷՐԻՊ։

251. Այս ընդարձակ աշխարհքն Ֆէսին մէկալ կողմը կիյնի. որ ըսել է արմաւենիի քաղաք. վասն զի տաք ըլլալով, շատ արմաւենի կայ. Թէպէտ օդը լաւ է, ոչ հիւանդութիւն ծաղկի կայ և ոչ ժանտամահ։

Բնակիչներն են բարբարոս խառն արաբներուն հետ. որ Թափառական կը շրջին իրենց անասուններուվը. և առանց Թագաւորի ինքնագլուխ են։

Բաց 'ի վայրենիներէն ուրիշ ժողովուրդներ ալ կան զանազան քաղաքներու մէջ։ Այս աշխարհքին մէկ մասը անապատ է. և 11 գաւառունի, ուր Ֆէսի տէրուն իշխան կամ Պէկ կը նստի։

ԻՆՉ Է ՍԱՀԱՐԱ։

252. Սահարա անապատ ըսել է. որ է ընդարձակ անապատ աւազոտ 60 օրուան ճամբայ. արևը վրայէն անցնելով խիստ տաք կըլլայ։ Այնպէս փուշ կը բուսնի հոն, ու մեծամեծ օ-

ձեր և կարիճներ կան։ Բայց տեղ տեղ քաղաքներ շինած են, և գետեր կան։

Բնակիչները կէս մը բարբարոս են կէս մը արաբ. որ զանազան ցեղ կը բաժնըվին, և ունին իշխան գլուխ. որոնք ուրիշ ցեղերէն կուգան զիրենք կը կառավարեն. զի իրենք կարդալ գրել չգիտեն։

Այս ժողովուրդը վայրենի ըլլալով միայն այլազգ ըլլալնին գիտեն, ուրիշ բան չգիտեն։ Որոնց մարմինը սևագոյն է, միայն հատ շապիկ մը կը հագնին. և գլուխնին սև բան կը փաթթեն ու ծայրը վար կը կախեն, և անով իրենց բերանը կը ծածկեն. զի շատ մեծ ամօթ սեպելով ամենևին բերաննին մարդու չեն ցցրներ, օրը անգամ մը կերակուր կուտեն. շատը կաթ կը խմեն։

Որոնք բոլորը գող և աւազակ են. ոմանք աւազին մէջ բնակարան շինած են. տեղ տեղ գեղեր ալ ունին, շէյխերը զիրենք կը կառավարեն։ Դարձեալ այս անապատը 6 մեծամեծ անապատ կը բաժնըվի։

Արդ այս մեծ աշխարհ՝ մարդուս համար է,
որ իմաստութիւն կարգէ կանոնէ.
Բայց երբ ինքն է բիրա՝ կարգ կանոն չունի.
աշխարհս ալ կըլլայ՝ տեղ մը անբանի։
Քանի՛ որ շինող՝ ըլլաս աշխարհի,
շահող ընկերաց՝ ազգիդ պիտանի.
Եթէ միանգամ՝ կանոնէ ելլես,
այս անբան մարդկանց՝ կարգը կը մանես։

ԺԱ. ՀԱՄԱՐ

ՈՒՐ Է ՆԻՔԻՊԻԱ։

253. Այս աշխարհիս զաւառայի ու Եթովպիայի մէջն է. և այնչափ ընդարձակ է, որ Եւրոպայի կիսուն կը հաւասարի։ Այսու արեգակը վրայէն անցնելով սաստիկ տաք կընէ։

Ինակիչները սաստիկ սև են. որ առաջ վայրենի ըլլալով ոչ օրէնք ունէին և ոչ իշխան. այլ անասունի նման ինքնագլուխ կը շրջէին։ Թէպէտ կռապաշտ էին, բայց կուռք չունէին. միայն արեգակին ելած աստենը երկրպագութիւն կընէին։

Դրբոր արտասները Եկան սոնց տիրեցին, բոլորը այլազգ ըրին, ու իրենց մէջ արուեստ և օրէնք մտցու-

ցին, և անկէ ետև առուտուր ալ սը-
վեցան։ Սակայն շատ չանցաւ իրենց
նիկրիտացի զօրապետը Թագաւորին
ցեղը վերցուց, ինքն եղաւ Թագա-
ւոր. և մինչև հիմա իրենք կը տիրեն.
շատ գաւառներ կը բաժնուին այս տե-
ղուիը, զորօրինակ Ռումպուզ, Սկ-
նեկալ, են։

Ինչ էարդ ոանին։

254. Նիկրիտացիք քաղցրաբարոյ
և ուրախ են. այնչափ երաժշտուի
կը սիրեն, որ ամէն իրիկուն դուրս
կելլեն՝ ու բան չալելով կը խաղան։
Նոցա տակը ոսկի կոտրտուկ է.
և փարայի տեղ ծովու ժամանքներ
կը գործածեն։

Կնիկներուն երեսը միշտ գոց է.
Թէպէտ գերի կնիկները բաց շրջե-
լով ուտելու բան կը ծախեն։ Նը-
նեւին հրէայ չեն խօթեր հոն, զի
մեծ ատելութի ունին։

Նոյն ազգը Եւրոպացոց նման շատ
Թագաւորներ ունի. բայց Ռումպու-
գին Թագաւորը ամենէն մեծ և զօ-
րաւոր ըլլալով շատ մանր Թագաւո-
րութիներ ունի տակը։ Իրեն գան-
ձը բոլոր ոսկի տախտակներ են, այն-

չափ շատ, որ միայն մէկ տախտակը իբր հազար հօխայ կուգայ։

Ունեցած զօրքը անթիւ է. միայն 3 հազար ձիաւոր ունի։ Դրբեանն մեծ փառքով քաղաքները կը պտըտի ուղտի վրա հեծած, և շատ ձիեր ալ է տանէն։

Սովորութիւն ունին, որ երբ մէկը թագաւորին քով կերթայ՝ պէտք է որ ծնկան վրա գալով գլուխը մինչև գետին ծռէ, ու գլխուն վրա աւազ ցանէ։

Ո՞Ր ԿԸ ԽՈՊԻ։

255. Թագաւորանիստ քաղաքն է Թոմպուդ, որ մեծ և բազմամարդ է. բայց անշուք են շէնքերը։ Ունի մէկ բերդ մը և մեծ Ճամի մը։ Որոնք պէս կան քանի մը մեծ քաղաքներ՝ ինչպէս Դատրա. և ուրիշ զանազան գաւառներ և քաղաքներ։

Որ օտ եղած տերութիւնները թէպէտ շատ փարթամ են ոսկիով լեցուն, այլ վայրենի ըլլալով իրենց քաղաքն ալ անշահ են։ Այս երկիրներէն շատ պիտանի ապրանք ելլելով եւրոպացիք շատ վաճառակատնութիւն կընեն։

Ո՞Ր Է ՍԷՆԷԿԱԼ։

256. Բ.յս աշխարհք մինչև ովկիանոս կը տարածի, և շատ զանազան կենդանիներ և բոյսեր ունի։ Այսին խիստ տաք կընէ, և սեպտեմբերէն մինչև յունիս տաք ու չոր է, ծառերը բոլոր ծաղկած. Իսկ յունիսէն մինչև սեպտեմբեր անձրև կուգայ և օդը ապականելով շատ հիւանդութիւններ կըլլան. մինչև վրայի ստակնին կը ժանկոտի և մարմիններնուն մէջ որդ կը գոյանայ 6 ոտնաչափ երկայն. որ երբ ատենը կուգայ ծակէ գուրս կելլէ կամաց կամաց. որ փայտի մը վրա փաթթելով կըհանեն։

Ո՞Ր Է ՊԱՄՊՈՒԿ։

257. Բ.յս աշխարհք սէնէկալին մասն է, բայց այնչափ հարուստ է, որ հողը լեցուն է ոսկիով, և որչափ փորեն, այնչափ ոսկի կելլէ. թէպէտ հաղիւ 8 ոտնաչափ կը փորեն թող կուտան։

Ինակինները կաւատան թէ ոսկին հոգի ունի, ուստի երբոր կը փորեն

ու չեն գտներ, կըսեն թէ խորամանկ ըլլալով իմացաւ փախաւ։

Նմանապէս Արելացիք, որ մօտ են, շատ ոսկի ունին, ու աղի հետ կը փոխեն. վա՛ զի հոն աղը շատ ծանրագին է. ուր Արաղբրպներրը 70 օրւան ձամբայէ կը բերեն։

Իրենց օգը անշահ ըլլալուն համար կտոր մը աղ ջուրը կը ձգեն և երբեմ կը խմեն հոգի կառնուն, և անով իրենց առողջուները կը պահեն։

Բ. սոնց գետին մէկալ կողմ մը անծանօթ ազգ մը կը բնակի. հոն մարդ չի կրնար երթալ. գետին ասդին վաճառականները աղ կը դնեն, ու կը հեռանան անկէ։

Յետոյ մէկալ կողմէն նոյն անծանօթ մարդիկ աղը կառնեն, տեղը ոսկի կը դնեն կերթան։ Անկէ ետև վաճառականները կերթան ոսկին կառնեն, և ամէն տարի առանց իրար տեսնելու այսպէս վաճառականութիւն կընեն։

Ո՞Ր Է ԳԱՄՊԷԱ։

258. Բ. յս աշխարքէ նիկրիտիայի ծովեզերեայ կողմը, այնչափ ընդարձակ է որ 11 թագաւորութիւն կը-

բաժնվի. բայց շատը կռապաշտ ըլ-
լալով վայրենի են և երևելի քաղաք
մը չունին։ Պարզամիտ ըլլալով օտա-
րականը կը սիրեն. իրենց գլխաւոր-
ները այլազգ են։ Անկիրիտիայի ծո-
վուն մէջ մէկ քանի կղզիներ կան,
նաև գլուխ դալարի ըսված սարը
հոն է. որ շատ երկնցած է ծովուն
մէջ և անուանի տեղ է նաւավար-
ներուն։

Կորէա կղզին հոլանտացիք գտան.
վերջը ինկիլիզները տիրեցին. որ ի-
րենց նաւերուն շատ հարկաւոր է։
Մէկ քանի մանր կղզիներ ալ կան
սէնէկալ գետին բերանը որ եւրո-
պացոց ձեռքն են։ Այս գետը լեցուն
է կոկորդիլոս կենդանիներով, որ
գերանի նման կերթան ջրին վրայէն։

Այս կողմն Պորդուքալները բնա-
կութիւն ունին, որ կռապաշտներուն
հետ կը բնակին. բայց ունին եկե-
ղեցի և քահանայ։

Իսկ Պիսեան կղզիներն են 14.
բնակիչները բաբէլ աղգէն են, բո-
լորը կռապաշտ. իրենց թագաւորը
կայսր է. բայց անգութ օրէնք ունի,
որ պզտի յանցանքով մը մարդը կը
ծախէ, զի ուրիշ պատիժ չի կայ հոն։

Շատ անգամ դրացի մը կերթայ թագաւորին կը ծախէ դրացինին տունը առանց անոր գիտուելը. անալ մէկէն կը տիրէ, ու նորէն տիրոջը կը ծախէ։

Ընակիչները գրեթէ մերկ կըշրջին, և կնիկներուն մարմինը զանազան գունով ներկած է։ Ամանք հեղ են և ամանք գազանաբարոյ. որ քիչ մը նեղուի տեսնեն յուսահատելով ծովը կիյնին և կամ կը կախուին։ Որովհետև իրենց առջին մեռնիլը գերի ըլլալէն աղէկ է. ուստի կը ջանան որ յանցանք չընեն։ Բաց 'ի իրենց կուռքէն Ճերմակ մարդիկներն ալ կը պաշտեն. երբոր Եւրոպացիք հոն գացին, աքաղաղ մը բերին իրենց զոհ ըրին, նաև նաւուն ալ պատիւ ըրին իբր հոգիաւորի. երբեմն շունն ալ կը զոհեն։

Երբ իրենց թշնամիներէն մարդ կը բռնեն, գլուխը կը կտրեն մորթը հանեն կը չորցնեն և անով իրենց տունը կը զարդարեն։ Որուն տունն որ աւելի գլխու մորթ կայ, շատ մեծ և զօրաւոր մարդ է։

Իսկ Սէռալիոն նահանգին բնակիչները թէպէտ անհամար կուռքեր

կը պաշտեն, բայց հայը Ա.ԲՐԱՀԱՄԻ կաւատան ու թլփատութիւն կընեն, և պէսպէս սովորութիւններ ունին։ Երիկ մարդիկ ունքերնին կածիլեն։ Մօրուքաւոր են, և ամէն օր մազերնին կը զարդարեն։

Ամէն գեղ պարբ խաղալու դպրատուն կայ, և հոն ծեր մը երեսնց կը սորվեցնէ։ Ուստի ամէն տարի ժողովրդին կը խաղան, որ տեսնեն թէ որչափ առաջ գացած են։ Եւ հոն կուգան կտրիճները հաւնած աղջիկնին կառնեն։

Եկեղեցիա շատ առիւծ կը գտնի. և տեսակ մը կապիկ կայ որ մարդուն նման ըլլալով երկու ոտքի վրա կը շրջի։ Երբ խեցեմարթ մը կը տեսնէ բացված, կամաց մը կերթայ քար մը կը ձգէ մէջն ու բռնէ կուտէ։ Պզտիկ կուռ ատենը բռնեն կը սորվեցնեն, որ ցորեն կը մաղէ, հորէն ջուր կը քաշէ, միս կը խորվէ, և ուրիշ շատ ծառայութիւն կընէ։

Ասդ այս աշխարհներ՝ մարդուն են ված, ոչ առիւծներուն՝ և ոչ գազանաց.
Չի մարդուն խելքն է՝ պահապան երկրիս, կարգօղ կանոնօղ՝ ամէն աշխարհաց։

Այլ՝ որ խելքդ՝ միշտ պահես փայլած,
որ նախ քեզ լոյս տայ՝ և ամէն տեղացդ.
Զբլայ նմանիս՝ բարբարոս ազգայդ,
որոնց աշխարհն է՝ մութ խաւար տիրած։

ԴՐ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ԿՈՒՆԷԱ։

259. Այս աշխարհք Ամերիկէի գըլխաւոր մասն է արևմտեան ովկիանոսին դին. օդը անշահ և շատ տաք է։ Ամառը Հոկտեմբերին կըսկըսի և կը տևէ մինչև մարտ. իսկ ձմեռը ապրիլէն մինչև սեպտեմբեր կերթայ սաստիկ անձրևներով։

Շատ բազմամարդ երկիր ըլլալով զանազան տէրուն կը բաժնըվի։ Շատը վաճառական են, և իրենց վաճառքն են ոսկիի մանրուք, որ գետերէն կը ժողվեն, նաև նիկրիտիայէն ալ կը բերեն. փղոսկր, որ շատ կայ հոն. և գերի, որ եւրոպացիք գնեն ու Ամերիգա կը տանին։

Ուստի ամէն տարի եւրոպայէն 6 միլիոն էալտրզ ոսկիի երկաթեղէն, կտաւեղէն և ուրիշ բան կուգայ։

Ցովի մօտ եղած բնակիչները աառուտուրի մէջ ըլլալով քիչմը բարակ են. բայց ներսի ժողովուրդը բոլոր վայրենի են։

Ասոնց տները եղէգներով և տերևներով շինած են. մէջի բաներն են սապատ փսիաթ (խսիր) և կաւէ ու դդումէ ամաններ. հագուստնին կապերտ է մինչև մէջքերնին. իսկ կերակուրնին ոսս և ձուկ. չունին տեղեկութիւն բարակ արուեստի։

Ոնին Ռափատոր։

260. Որովհետև այս ազգը զանազան ցեղ բաժնըված է տարբեր բընուք և սովորուք, ամէն ցեղի ծերերը կը կառավարեն. բայց մէկը միայն կընտրեն որ ամենուն հրամայէ։

Տեղ կայ որ քուրմերը թագաւորութիւն կընեն. թէպէտ ամէն մարդ իրեն կուռք մը կըշինէ ու կը պաշտէ. բայց քուրմերն ալ մեծապէս կը պատուեն, կարծելով թէ անոնք են շար հոգիներուն բարեկամը. ուստի կախարդութեց շատ կաւատան։

Շատ այլազգներ ալ կան արապներուն նման. քիչմ՝ ալ քրիստոս-

նեայ կայ, որ փորթուքալցիներուն քարոզութիւնը լուսաւորած է։

Ֆռանսիզները հոն շատ համարձակութիւն ունենալով թագաւորէն հրաման առին ու քարոզիչներ տարին. որ յայտնի քարոզելով շատ մարդ դարձուցին։ Բայց ինկիսիզներն ու հոլանտացիք քուրմերը ոտք հանեցին, ու յանկարծ օր մը կրակը տալին եկեղեցին երեցին, և շատ քրիստոնեայ ջարդեցին։

Դ՝ԷՌ ԳԼՈՒԽ։

261. Բաց այս աշխարքը անծանօթ էր եւրոպացւոց. բայց 450 տարի առաջ Ֆռանսայէն երկու նաւ գացին հոն երկաթ ձգեցին։ Որովհետև սև ըլլալով բնակիչները ՀԵՐՄԱԿ մարդ չէին տեսած. երբոր զանոնք տեսան զարմացան, և ամէն ցեղէ եկան հոն դիզվեցան։

Բանք տեսնելով թէ եւրոպացիք իրենց հետ անուշութիւն կը վարին. պարգև ալ տալին. իրենք ալ անոնց բերին շատ փղոսկր, ամպէր, մորթ, և այլն։ Դ՝ու այսպէս ամէն տարի հոն երթալով, և իրենց ապակեղէն ու երկաթեղէն բաներ տանելով ա-

ռուտուր կընէին։ Ընկէ ետև ամէն ազգ սկսաւ նաւ ղրկել այն կողմերը, և անբաւ գանձ կը վաստրկին մինչև հիմա եւրոպացիք։ (Տէս Ուղէնուն)։

Ուռնի՞ կը բաժնուի։

262. Այս աշխարք վեց մեծ տէրութի՞ կը բաժնուի, առջինը կըսուի Արեւեր պղպեղ. բոլոր երկիրը լեցուն է այս ծառերով որ է վարդի նման։ Այս երկրին մէջ շատ գաւառներ և ժողովուրդներ կան, որ զանազան սովորութիւններ ունին։ Արկրորդը կըսուի Արեւեր եղուկերեց, որ է ովկիանոսի մօտ, ուր շատ փիղ ըլլալուն համար, եւրոպացիք շատ փղոսկր կառնեն անկէ, և մեծ առուտուր կըլլայ։

Ինակիչները երկու կը բաժնուին Ազգ ազգ, Ազգի ազգ։ Ազգ ազգը արևելեան կողմերն են գազանաբարոյ վայրենի մարդիկ. որոնց ակռան խիստ սուր է. իրենք ալ անանկ կը սրեն, որ շան պէս մարդ կը պատռեն։

Ինկ քարի ազգը անոնցմէ անդին են, որ ծովը կը պաշտեն. երբոր եւրոպացոց նաւ կը տեսնեն, միաբե-

բան կապազակեն ուրախութիւն. բայց կը վախնան անոնց նաւն երթալու. մինչև որ եւրոպացիք ծովուն ջրովը աչքերնին չի լլվան՝ իրենց չեն մոտենար. որ անոնց երդումն է։

Արբոյդը կըսվի Արեւելք ոսկոյ շատ ոսկի ելլելուն համար. խիստ տաք և ջնասակար է օդը։ Ամառը կարմիր անձրև մը կուգայ հոն շատ ջնասակար, մինչև ամէնքը տուն կը փախչին. զի ամէն բան կապականէ, լաթերնին ալ կը փտեցընէ։ Մանապէս մէկ սաստիկ հով մը կելլէ, որ բոլոր կենդանիները կը մեռցնէ. մարդ չի կրնար դուրս ելլել։

Այս աշխարքին ոսկին խիստ ազնիւ է. որ գետերէն և հանքերէն կը հանեն։ Պատուական աղ կելլէ, որ ներսերէն կուգան կառնեն, մէկ բուռ մը աղին՝ երկու գերի կուտան։

Ատեղաց շները չեն կրնար հաչել. բնակիչները կը շատցնեն ու կուտեն։ Շատ զարհուրելի գազաններ, օձեր, և մողէսներ կան, որ եղջիւր և սուր ակռաներ ունին։

Բնակիչներն ալ գազանի նման անգութ են. թէ որ իրենցմէ մէկը հիւանդնայ ձգեն կը փախչին. թէ որ գե-

ըի և ստակ չունենայ անանկ կը մեռ-
նի. մինչև զաւակը հայրը կը ձգէ ան-
տէր՝ որ կը մեռնի, ու մարդու հոգը
չէ. իսկ թէ որ ըռբնանայ նորէն կրն-
դունին։

Խիստ ուրախ են, և այնչափ խա-
ղալ կը սիրեն, որ եթէ մէկին տունը
երթի, չեն ձգեր խաղն ու երթալը մա-
րէր. զի աւելի կուզեն իրենց ունե-
ցածը կորսընցնել, քան թէ ուրա-
խութիւն եւ մնալ քիչ մը ատեն։

Ինչափ հպարտ են, որ մեծերը
աղքատներուն հետ չեն խօսիր, ու
միշտ առաջնին կը նային, թէպէտ
եւրոպացոց հետ աղէկ են։

Ոսոնք երկու կուռք կը պաշտեն.
մէկը Ճերմակ մէկալը սև. Ճերմակը
բարի ըլլալով կըսեն թէ եւրոպացոց
ածն է. իսկ սեւն է իրենց չար ածը։
Նաև մեծամեծ լեռներն ալ կը պաշ-
տեն. երբեմն կերակուր կը տանին
լեռներուն տակը կը դնեն, որ կուռ-
քերն ուտեն։

Երբոր ամպ կը գոռայ՝ սաստիկ
վախնալնուն չորս դին կը գոցեն, ու
թևերնին բանալով եւրոպացոց Ճեր-
մակ ածը կաղաչեն, որ զիրենք պա-
հէ։ Եւ ամէն տարի խենդ կերպե-

ըով իրենց չար ածը կը հալածեն, ու քաղքէն դուրս կընեն։

Ռուտուրի այնչափ Հարպիկ են և թուաբանուն այնչափ յաջող, որ առանց գիր և բան գիտնալու բաբակ հաշիւնեերը քիչ ատենին մէջ կը կատարեն. մինչև եւրոպացիք կը զարմանան։

Այս տէրութեան մէջ շատ երևելի գաւառներ, և զանազան ազգեր կան, որ ինքնագլուխ են. զորօրինակ Ֆէլթու, Աշրա, և Խասինի։ Աստր բնակիչներն են վայրենի և խաբեբայ, գողութիւը իրենց մէջ մեծ պատիւ է։

Այնչափ ագահ են որ ոչխարի մը կամ հաւի մը համար մինչև 8 օր կուլան։ Միշտ կը ջանան որ ոսկի շատցնեն. թէպէտ իրենք մերկ և ողորմելի են։ Ամէն առտու կերթան գետին քով կը լվացվին ու աղօթք կընեն։

Խոլորը սև են և վրանին մազ չի կայ, որ եղով կը փայլեցնեն։ Որեթէ մերկ կը շրջին. բայց իրենց մեռելը աշնիւ կտաւով լաւ կը փաթթեն, և ոսկիի կտորվանքով կը զարդարեն, կարծելով թէ այսպէս շատ

պատիւ կը գտնեն մէկալ աշխարքը։ Ասոնց բնակարանը ողորմելի խըրճիթ է, գուռը այնչափ պզտիկ որ օձի պէս սողալով կը մտնեն. ամենևին ծակ մը չի կայ, և գիշերը կրակ կը վառեն գազաններուն վախէն. ու ոտքերնին դէպ 'ի կրակը կը պառկին։

Ո՞ր է երկիր Գերեզոյ։

263. Այս աշխարքը ջորրորդ մասն է կուինէայի. ուսկից շատ գերի կառնեն եւրոպացիք. որ է ընդարձակ թագաւորուն Ասրտրայ. թագաւորն է ինքնիշխան, որ ՝այ պէս կը պաշտեն։

Կերակուր կերած ատենը գինքը մարդ չի կրնար տեսնել. գինի խըմած ատենը թէ որ մէկը թագաւորին նայէ, կը մեռցնեն. վասն զի խըմելու ատենը նշան մը կուտան և ամէնքը երեսի վրա կիյնին։ Արքեմն թագաւորին քով տըղայ մը կը քնանար. երբոր նշան տըվին տըղան արթընցաւ, տեսաւ որ գինի կը խմէ. քրմապետը տըղան մորթեց, ու արիւնը թագաւորին վրա ցանեց, որ չար պատահմունք մը չի գայ։

Այնպէս թագաւորին կերակուր եկած ատենը ամէնքը երեսի վրա կիյնին, ով որ կերակուրը տեսնէ, կը մեռցնեն։

Անոնք բոլոր կռապաշտ ըլլալով անհամար կուռք կը պաշտեն. բայց քաղաքական են, և առուտուրի աջ քաբաց։

Որոնք կարդալ չունին, սակայն երկայն թելի մը վրա ամէն բան կը համրեն, և գրի պէս կը կարդան զանազան կապերը։

Այս տէրութիւն տակին եղած գաւառները գրեթէ բոլորը միակերպ են։ Բայց տեղ կայ որ մեծ մեծ ծառեր կը պաշտեն։

Ամանք քիչ մը նեղութիւն համար զիրենք կը թունաւորեն, և կը մեռցնեն. ոմանք ալ բան չուտելով կը մեռնին մանաւանդ գերիները։ Հատը սաստիկ գողն են։

Ազգեն Խոպոյեր։

264. Անոնք ալ ինքնագլուխ ազգ են, և այնչափ կը պատուեն իրենց իշխաններն որ երբ տեղ մը հանդիպին, մէկէն ծնկան վրա գալով իրենք անգամ գետինը կը պագնեն. և մինչև

որ չերթայ, չեն ելլեր անկէ. նաև ոտքերնին չեն ցցըներ մեծամեծնեբուն։

Օաւկրնեբն ալ ասանկ պատիւ կընեն իրենց հօրը. և բան մը տըված ատեննին ծնկան վրա կուգան երկու ձեռքով կուտան պատուելու համար։

Նրբոր թագաւորը կը մեռնի, մեծ փոս մը կը փորեն ու 8 կնիկ թագուհիներէն հետը կը թաղեն ողջ ողջ, յետոյ քանի մը թագաւորական մարդիկ ալ ողջ կը թաղեն, որ անդին իրենց ծառայութի ընեն։

Թագաւորին անդրանիկ որդին հովիւներուն քով կուտան, որ անոնք մեծցընեն. և ամէն ծառայական գործքերու սորված ըլլան. անոր համար թագաւորը խիստ թանձրամիտ է։

Օրէնք ունին որ ամէն ծնօղք կրնայ իր զաւակը ծախել. երբեմն թագաւորն ալ իր թագուհիներէն շատ հոգի կը ծախէ։

Ինչ կը պաշտեն։

265. Անոնք ալ անհամար կուռք կը պաշտեն. նաև կըսեն թէ Աստ-

մակ մարդկանց ՝ածը բարի է. իսկ մեր ՝ածը չար է, և անողորմ, պէտք է պաշտել, որ մեզ չի ջարդէ։

Եւրոպացի քարոզիչները շատ անգամ իրենց քարոզեցին, թէ ամենուս ՝ածը մէկ է՝ բարի և ողորմած, բայց մարքերնին չի փոխվեցաւ։

Սակէ 'ի զատ ծովը կը պաշտեն ձկանց համար, ծառ կը պաշտեն իրենց կենացը համար. նաև գորտի ձևով սև կուռք մը կը պաշտեն, որ իրենց լաւ խորհուրդ տայ. և ինչ որ ընեն անոր քուրմին կը հարցնեն։

Ամենէն աւելի մէկ ողջ օձ մը կը պաշտեն, որ երկայն է 7 ստնաչափ, գլուխը մեծ, աչքը խոշոր ու բաց. մարդու չափ հաստ է։ Բայց մարդու վնաս չի տար, և թոյն չունի։

Ինչափ բազմացած են որ բոլոր Համբաները լեցուն շան պէս կը պըտըտին։ Ամենևին մարդ չի կրնար անոնց դպչիլ. թէ որ յանկարծ դրունէն ներս մտնեն, պէտք է որ ընդունելով բան կերցնեն մինչև որ ինքնիրեն երթայ. չեն կրնար բրունուլթը դուրս հանել։

Ընդամ մը օձ մը մտաւ հոլանտացոց բնակարանը 15 օր մնաց, թա-

գաւորը կով մը ղրկեց որ կերակրեն օձը։

Ինկիլիզները չգիտնալով գիշեր մը ատոնցմէ օձ մը կը մեռցնեն. առաւօտուն անհամար ժողովուրդ վազանին Թափեցան, ամէնքը ջարդեցին ու տեղերնին աղ երեցին։

Երբոր իրենք օձ մը կը տեսնեն, կը սիրեն, և գրկելով կերակուր կուտան. վասն զի մեծ բան կը սեպեն այն գարշելի կենդանին պատուելը։

Ինն ատենը Ուտացիք Թշնամիներուն հետ պատերազմած ատենին այս օձերէն օձ մը կուգայ Թշնամիներէն իրենց բանակը։ Արմապետը տեսնելով Թէ անմեղաս կենդանի է՝ աւելորդապաշտութիւն բարի նշան կարծեց, ու գիրկն առաւ վերը վերցուց իրենց զօրքին ցցուց։ Ոնոնք աղ երը կրպագուին երին ու սիրտ առնելով սկսան ծեծկըվիլ, և այնպէս յաղթեցին իրենց Թշնամեացը։ Ինկէ է տև տաճար մը շինեցին, ու սկսան պաշտել։

Երբոր օձը կը սատկի, տեղը ուրիշ մը կը դնեն քուրմերը, ժողովուրդը կը խաբեն, Թէ միշտ ողջ է

այն առջի օձը. զի քուրմերէն 'ի զատ մարդ չի կրնար տեսնել այս օձը։

Այս տերութիւն մէջ ամէն քաղաք տաճար շինած է, մէջը օձ մը գրեր կը պաշտեն։ Երբոր օձին տօնը կուգայ մեծ հանդէսներով թափօր կելլեն։ Անոնց քրմուհիներն ալ մեծ պատիւ ունին։

Մագաւորանիստ քաղաքն է Սաապի. որ 12 մղոն հեռու է ծովէն, մեծ է, բայց անշուք։ Եւրոպացոց դեսպանները հոս կը նստին. և մեծ ըզգուշութիւն մէջ են որ ջրլայ թէ օձերուն մարդ դպչի։

Ո՞ր է պէնին։

266 Այս ընդարձակ տերութիւն հինգերորդ մասն է կուինէայի, բնակիչները քաղաքավար և առատաձեռն են. իրենց հին սովորութիւն վրա կը մեռնին. ոչ միայն իրար շատ կը սիրեն, այլև եւրոպացիներն ալ կը պատուեն, բաց 'ի փորդուքալցիներէն։ Անանկ որ եթէ մէկը իրենցմէ եւրոպացոց ծուռ նայի. մէկէն ձեռքն ու ոտքը կը կապեն ու գլուխը կը կտրեն։

Մէնքը մերկ կը շրջին մինչև որ

կարգելին, երբոր լաթ հագնելու հրաման կառնեն թագաւորէն, մեծ ուրախութիւն կընեն։ Շատ որկրամոլ են, և մսեղէն կերակուր շատ կուտեն։

Երեպոն քաղաքին բնակիչները սոսկալի սովորութիւններ ունին։ Երբոր իրենց երկու տղայ միատեղ կը ծնին, մայրն ու տղաքը մեռցընելով զոհ կընեն դիւին, որ մօտ անտառին մէջ կը բնակի կըսեն։

Երբոր թագաւորը կը մեռնի մեծ և խորունկ հոր մը կը բանան բերանը նեղ. հոն կը ձգեն թագաւորին մարմինը, յետոյ կնիկներէն և ծառաներէն ալ շատ մարդ ողջ հոն կը ձգեն, ու բերանը կը գոցեն։ Գիշեր ցորեկ ժողովուրդը հոն է. բայց առաւօտուն հորին բերանը կը բանան ու թագաւորը կը հարցնեն։ Եթէ որ ներսէն ձայն մը լսեն, մէկէն կը գոցեն բերանը։

Տարին մը օր ասանկ ընելէն ետև, երբոր կը տեսնեն որ ձայն չի կայ ու ամէնքը զոհ եղած են թագաւորին, նոր թագաւորին իմաց կուտան. անալ հանդէսով հոն կուգայ, և հորին վրա մեծ քար մը դնել կուտայ,

և նոյն քարին վրա շատ կերակուր կը դնեն։ Ուր ժողովուրդը բոլոր նոյն գիշերը այնչափ կուտեն կը խմեն, որ կը կատղին կելլեն Ճամբաները կիյնին ով որ գտնեն գլուխը կը կտրեն, և կը բերեն նոյն հորին մէջ կը ձգեն իբր նոր զոհ։

Ոչ ագաւորը թէպէտ ինքնագլուխ է, բայց ժողովները ալ ունի և անոնց մով կը կառավարէ։ Ղանք մեծ ուժ մը կը Ճանչնան, որ կը կառավարէ աշխարք. թէպէտ կուռքեր ալ ունին և կախարդութիւն եռևէ են։ Ղաև գիւին ալ պատիւ կընեն որ իրենց վնաս չի տայ։

Ղանք տարին 14 ամիս կը բաժնեն և շաբաթը 5 օր։ Հինգերորդ օրը չեն բանիր զոհ կընեն գիւաց և կռոց։ Ղաև ամէն տարի մեռելներուն տարեգարձ կընեն. և 25 մահապարտ զոհ կընեն։

Ուվէր նահանգին մէջ քրիստոնէութիւն նշաններ կան մինչև հիմա. եկեղեցի մը կայ խաչելուն և ուծաձ նայ պատկերքներով. բնակիչները կերթան հոն աղօթքի պէս բաներ կընեն ձեռքերնին համբիչ (թէսպիհ). բայց ուրիշ բան չկրնան։

Ո՞Ր Է ՊԻՍՔԱՐԱ։

267. Այս աշխարքէ Ծովեզերեայ ընդարձակ տերուն և վեցերորդ մասը կուինէայի, ուր կան զանազան ազգեր. զորօրինակ Արալպարցիք, Կապոնցիք, և պէսպէս կղզիներ, որոնց ամենուն բնակիչներն են կռապաշտ, և վայրենի։ Այնչափ իրար կատեն որ գիշերով կերթան իրար կը կողոպտեն, և մեռցնելով իրար կուտեն։

Կապոնի թագաւորուհիը հասարակածին տակն ըլլալով սաստիկ տաք կըլլայ հոն, և արևը շուք չի ձգեր վրայէն շիտակ անցնելուն համար։ Բնակիչները անգութ և անառակ են. օղի (ըրախի) շատ կը սիրեն. բայց մինչև որ պարգև մը չառնեն չեն խմեր։

Կուինէայի ծոցին մէջ 4 կղզիներ կան եւրոպացոց ձեռքը, որ Լոմվմա, Կղզի Իշխանի, Փերնանդեան, և Անտոնիան։ Բնակիչներն են սև. եւրոպացիք զանազան բարիք կը հանեն ասկէ։ Փորդուքալցիները աւելի կիշխեն այս կղզիներուն։

Տես ինչ աշխարհներ ինչ մեծ տեղեր կան,
որ մարդուս համար եղած են միայն.
Բայց երբ մարդն ունի կեանք անանական,
աշխարհս ալ կըլլայ գաղանի կայան:
Դուն որ սահեցիր մարդ քաղաքական,
ջանա՛ որ ըլլաս նախ հոգուդ խշման.
Խելքով գիտուլթիւն աշխարհ ծաղկեցուր,
որ ժառանգ ըլլաս ամէն բարուլթեան:

ԺԳ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր է գծիկ:

268. Այս ընդարձակ աշխարհս՝ երկրի երեսին մասն ըլլալով արևմըտեան ովկիանոսին կողմը կիյնի. երկայնուլթիւն է 960 մղոն և լայնուլթիւն 700:

Այնչէն մեծ գետ մը կանցնի, որուն բերանն է 28 մղոն: Ուսկից ձուկ մը կելլէ ձևով խոզի նման և երկու ձեռք ունի, որ մինչև 250 հոխայ կուգայ:

Այնենևին հոն ձմեռ չըլլար, մեր ձմեռը հոն տաք ամառ է. և մեր ամառվան մէջ հոն անձրև կուգայ միայն: Շատ զարմանալի գաղանները, մեծամեծ օձեր, և մարդակերպ

կապիկներ կան։ Նշու նման կենդանի մը կայ, որուն մէկ ոտքը լուսնոտու�նէ դեղ կըլլայ. երբոր լուսնոտին ձեռքը տաս, կը զգաստանայ։ Մէկ օձ մը կայ որ թոյնը հեռուէն կը նետէ, ու մարդուս աչքը կը կուրացնէ, թէ որ կնկան կաթով չի լըվան։

Ուրիշ օձմ՝ ալ կայ, որ պոչէն զանգակի ձայն կելլէ քալած ատենը, և անով կը փախչին մարդիկ կազատին։

Ինչպէս են բնակիչները։

269. Գոնկացիք այնչափ վայրենի չեն, և մարդու հետ աղէկ կը վարվին։ Գոլորը սև են, և գրեթէ մերկ կը շրջին. բայց Գոնկովայ և Ինկոլայ աշխարքին բնակիչները քրիստոնեայ ըլլալով, փորդուքալցոց նման կը հագվին։

Շատը վաճառական և արուեստաւոր են, որ ծառի թելերէն զանազան կերպասներ կը շինեն. զորօրինակ ատլաս, խատիֆէ, և այլն։

Դանի որ Փորդուքալները հոն չէին մնաց, ամենևին գիր բան չկայտէին. իրենց ձմեռը մայիսին սկսե-

լուն՝ տարին ալ անկէ կըսկըսէին, և ամիսը լուսինին լրմանէն։ Իսկ շաբաթէ իրենց տօնավաճառէն։ Սակայն Եւրոպացիք գացին իրենց ուսում և գիր սորվեցուցին, ու քրիստոնեայ ըրին։ Եգիպտ մեծ մասը կռապաշտ ըլլալով թանձր տգիտութեան մէջ են։ Այս աշխարհքի 4 մեծ թագաւորութիւն կը բաժնըվի, որ անկախ կը կառավարվին։

Ո՞րն է ռուսիան։

270. Ռուսիան կըսվի թագաւորութիւն ռանկոյի, որ Կուինէյէ կըսկըսի մինչև 300 մղոն կերթայ, և շատ գաւառներ և տեղեր ունի։

Երկիրը շատ պտղաբեր ըլլալով զարմանալի բոյսեր ունի։ Ծառ մը կայ հոն, թէ որ ճղքես գինի կը վազէ։ Ուրիշ հատատ ծառ մը կայ, երբոր ծակեն՝ աղբիւրի նման ջուր կը վազէ։

Այս աշխարքին բնակիչները բարձրահասակ և զօրեղ են։ Ձիերը իբր գերի են էրիկներուն, որ մինչև 10 կին կառնեն։ Երբոր կուզեն կարգըվիլ կերթան աղջիկը իրենց ծնողքէն կը գնեն։

Դախ երիկմարդիկ կուտեն, վերջը կնիկնին անոնց մնացածէն առանձին կուտեն։ Ինչև որ ճնկան վրա չի գան երիկներուն հետ չեն խօսիր։ Դրբոր տուն կուգան, կնիկնին դէմ կերթան երկրպագուի ընելով տուն կը բերեն ամէն անգամ։

Անոնք խիստ բազմածին են. տըղաքնին ճնած ատենը Ներմակ են. և երկու օրէն ետև կը սևնան։ Դաև մեռելի գունով դեղին մարդիկ ալ կը գտվին որ ցորեկը լաւ չեն կրնար տեսնել, բայց գիշերը լաւ կը տեսնեն։

Հայսարակօրէն ասանկները թագաւորին կրնծայեն. որ հմայութիւն սորվելով մոգ կըլլան և կախարդուի կրնեն։ Հոդոլուրդին առջին այնչափ յարգ ունին որ ինչ տեսնեն տեղմը՝ կրնան առնել, և մարդ բան չի կրնար ըսել։

Անոնց թագաւորը Սամպա կըսվի. որ ՝ած ըսել է. զի ՝այ պէս կը պաշտեն. Դօթը հազար կնիկ ունի, և ասանց գլուխն է թագաւորին մայրը. որուն իշխանութիւնը այնչափ մեծ է որ կրնայ զթագաւորը մեռցնել, և պարտական է թագաւորն որ ամէն խորհ-

հուրդը անկէ առնէ։

Մադաւորին կերակուր ուտելը ամենևին մարդ չպիտի տեսնէ, թէ չէ՝ կը մեռնի։ Երբեմն չգիտնալով Թագաւորին տըղան ներս մտաւ, գլուխը կտրեցին խեղճին։ Ասքերը-նին դրեր են թէ Թագաւորը իրենց անձրև կուտայ։ Ուստի պէտք եղած ատենը՝ ամէնքը հոն կը դիզվին, և զարհուրելի ձայներով կը խնդրեն։

Յետոյ աթոռ մը կը դնեն Թագաւորը կը նստի, ու աղեղը կաքնէ դէպ 'ի երկինքը կը նետէ. թէ որ նոյն օրը անձրև գայ, մեծ շնորհակալուն կընեն, թէ չի գայ, մեր մեղքէն եղաւ կըսեն։

Ինչ կրօն ունին։

271. Ընցած դարուն փորդուքալցի քահանայից քարոզուբը Թագաւորն իրեն մարդիկներով քրիստոնեայ եղաւ, և մեծ աղատուն ունեցան եւրոպացիները։ Այց անզգամ քուրմերը ժողովուրդը ոտք հանեցին ու Թագաւորը մեռցուցին, նորէն կռապաշտուն բը հաստատեցին։ Մէպէտ սակաւ քրիստոնեաներ ալ կան։

Շատ այլակերպ կուռքեր ունին

որ Ասֆէս կըսեն. իրենց քուրմերուն ալ ասանկ կըսեն որ ՝ած ըսել է. ո՞ր ոնք կախարդուէ՞ 'ի զատ ուրիշ բան չկրնան։

Ամենեւին թող չեն տար որ ուրիշ ազգերուն մեռելները հողին մէջ թաղեն. կը վախնան որ անձրեւ չի գար. ուստի եւրոպացիք կը պարտաւորին որ իրենց մեռելը ծովը ձգեն,

Որոնց նման աւելորդապաշտ ժողովուրդ չի կայ, ուր որ երթան տօպրակ մը լեցուն կախարդական բաներ կը տանին հետերնին, ու ծանրութիւն չեն սեպեր իրենց. իբր թէ անով կը թեթեւնան և յաջողուի կը գտնեն։

Այսպէս գաւառին մէջ սովորութիւն է, որ քիչ մը բանի համար իրենց կնիկնին կը ծեծեն չարաչար, և իրենց մէջ սիրոյ նշան է. թէ որ կնիկը ծեծ չուտէ, տրտմելով կը տրտնջայ, թէ ընկերս զիս չի սիրեր։

Այս գաւառին մէջ թզուկ ազգ մը կայ, որ այնչափ մանր են որ ամէնքը տրղուս պէս կարճ են. բայց հաստ ըլլալով ուժեղ և սրտոտ են։ Որոնք ուրիշ ցեղերու հետ չեն խառնըվիր։ Սակայն երիկ կնիկ վարժ են զինուորութիւն. մինչև մինակ անտառ-

նելը կը մտնեն, ու գաղաններուն հետ կը ծեծկըվին։

Ո՞Ր Է ԵՐԿԻՐԸ։

272. Այս մասը կըսվի Թագաւորութիւն գոնկոմայ, որ խիստ բազմամարդ երկիր է. և հոն շատ փիղ ըլլալուն համար փղոսկրի վաճառականութիւն շատ կըլլայ։

Ընակիչներն առաջ վայրենի կռապաշտ էին. յետոյ քրիստոնէութիւն մտնելով մէջերնին քաղաքավար եղան, և օտարականը շատ կը պատուեն։

Այսոնք ամենևին հետաքրքրութիւն չունին. թէ որ մէկը երթայ իրենց սեղանը նստի, ամենևին չեն հարցընէր թէ ո՞վ է ս, և ինչո՞ւ եկար։ Իրենց մէջ ամօթ է որ ուրիշի բան հարցնելով նեղուիլ տան։

Երբոր սեղան կը նստին՝ մէկը կը բաժնէ բոլորը ամենուն. յետոյ որչափ մարդ կայ իրենց սեղանը, ամենուն կերակուրին քիչ քիչ կառնէ անոնց ալ կուտայ։ Սովորաբար գիշերը կընեն իրենց հարկիքը մեծ ծառի մը տակ խոտի վրա։ Եպիսկոպոսներ սեւագոյն են, բայց դէմքերնին և մար-

մինչեւ ինորքով են նման փորդուքալցոց, և անոնց պէս կը հագնին։

Լուսէ էրծն ունին։

273. Պոլսաւորն է քրիստոնէական կրօնը. որ շատոնց փորդուքալցի քահանաները մոցուցին։ Սակայն կուապաշտութենէ մնացած դէշ սովորութիւներ, և կախարդական բաներ ալ ունին մինչև հիմա, որ չի կրցան քահանաները վերցնել։

Երբոր թագաւորը կը մեռնի, բազմութիւն կը ժողվուին՝ որ փրկիչ եկեղեցին. մէկը կելլէ խրատ մը կը խօսի թագաւորին որդուն, որ մէջերնին խառն կեցած է։

Ետքը երկու իշխան կելլեն ժողովուրդին մէջ փնտրուելով կը գտնեն թագաւորն ու կը բերեն գահը կը նստեցնեն, գլուխը թագ և թևերը ապարանջանք դնելով։

Յետոյ քահանայ մը աւետարանը կը բերէ իրեն. որուն վրա ձեռք դնելով երդում կընէ, որ այն խրատները պահէ։ Ինկէ ետև ժողովուրդը քիչ մը աւազ կը ցանէ վրան. և 12 իշխան կառնեն զինքը պալատը կը տանին։

Մագաւորանիստ քաղաքը՝ որ փոքրկիչ կրսվի. որ մեծ և բազմամարդ է. շատ վաճառականուն կըլլայ, և 12 երևելի եկեղեցիներէն՝ ի զատ փառաւոր շինվածներաւ կան։ Այր եկեղեցին և Ճիզվիթներուն եկեղեցին շատ երևելի են։

Քաղքին դուրսը տեղ մը կայ Ռոմպո կրսեն, երբոր փորդուքալները նախ հոն գացին, տեսան որ մարդու միս կը ծախեն քաղաքացիք. որ անասունը մարդակեր էին, ու կովի մսի պէս խանութնին կախեր էին։ Անկէ ետև սկսան անոնցմէ ողջ գնել և ամերիկա տանիլ. և այսպէս վերցուցին անկէ այս բանը։

Ուրն է երրորդը։

274. Երրորդ մասը գօնկոյի Անկոլայի թագաւորուն կրսվի. որ զանազան գաւառ և քաղաք ունի, նաև շատ բարիք կէլլէ անկէ։

Բնակիչները սև են. բայց Ճերմակ փորդուքալցի վաճառականներ և եկեղեցականներ աւ շատ կան։ Առանք այնչափ պատիւ ունին հոն, որ իբր բուն տէր բնակիչներուն վրա տիրած են։

Այս ազգը չորս ցեղ կը բաժնը-վի. առջինն է աղնուականաց. երկ-րորդը արհեստաւորաց, որ կըսվին ազատ կամ որդիք Թագաւորութեան։ Երրորդն է աղնուականաց գերինե-րուն. իսկ չորրորդը հասարակ գե-րիներուն։

Սոնք ամէնքն ալ չափաւոր մար-դիկ են. երբոր իրենց զաւակ կըլ-լայ, նոր տուն մը կըսկըսին շինել. քանի որ տըղան կը մեծնայ, տանը պատերն ալ կը բարձրացնեն. և երբոր կը կարգեն, տանը վրան ալ կը գոցեն. ու կը տանին հոն կը բնակեցնեն։

Թագաւորն է ինքնագլուխ, որ շատ իշխաններով կը կառավարէ։ Կընայ միլիոն մը զօրք հանել. բայց սրտոտ չըլլալնուն համար 600 հազար հոգիով ծեծ ըրաւ փորդուքալ-ցոց հետ. յաղթըվեցաւ, որ 10 հազար հոգի էին։

Եւ մինչև հիմա քանի մը գաւառ-ի կը տիրեն փորդուքալցիք, և մեծ իշխան կը նատի՝ ՝ՈՐ Պօղոս քաղաքը բաղմամարդ։ Ուր ենպս կը նատի. 3000 փորդուքալցի կան հոն. ամէն մէկը 50 և մինչև 300 գերի ունի։ Եր-

կու վանք կայ հոն. Ձիզվիթներն ալ վանք և դպրոց ունէին։

Լանէ հրոն ունին։

275. Մէպէտ քարոզիչներուն ջանքովը քրիստոնէութիւը ծաղկած է հոն. բայց աւելորդապաշտութիւններ ալ շատ ունին, որ Ճար չեղաւ վերցրնելու։

Շատ կռապաշտներ ալ կան զանազան գաւառներու մէջ, որ կերպ կերպ սովորութիւններ ունին։ Լանոց քուրմերը Կանկա կըսվին, որ ՇԾ ըսել է. իսկ քրմապետը շատ մեծ պատիւ ունի, մինչև կարգիլէ ժողովուրդին որ միս և ուրիշ բան չուտեն. ուրուն կընծայեն նոր ելած պտուղները։

Մեշտ կը պարծենայ թէ հողին պտղաբերութիւը ես կուտամ։ Լաև հաւատացուցեր է ժողովուրդին թէ չի մեռնիր։ Լբը զի՝ երբոր կը տեսնէ թէ ծեր է կամ հիւանդ, այլ պիտի մեռնի, կը կանչէ քովը իր մէկ աշկերտը, և անոր կուտայ իր ամէն կախարդական արուեստն, ու հրաման կուտայ որ երբոր ժողովուրդը դայ դիզվի, ամենուն առջին զարնէ զինքն սպաննէ։

Խեղճ ժողովուրդը կարծէ թէ ա-
նոր հոգին աշխարհին անցաւ և ինքը
մէկալ աշխարհք գնաց բնակելու հա-
մար, և այսպէս այն կըլլայ իրենց
քրմապետ. ուսկից սաստիկ կը դո-
ղան որ չըլլայ թէ պտղաբերութիւն
չի տայ իրենց։

Ո՞Ր Է ԷՐԻՐԴԸ։

276. Ա.յս աշխարքին վերջի մասը
Պանքելլա կըսվի, որ թէպէտ շատ
զանազան գաւառներ ունի, բայց ե-
րևելի բան մը չի կայ մէջը։

Հողովուրդը կռապաշտ և խիստ
վայրենի ըլլալով անասունի վարք ու-
նին։ Ոչ դրամ ունին, ոչ բան, մը-
այն փոխելով առուտուր կընեն։

Գը այնչափ դէշ է որ բնակիչ-
ները մեռելի կը նմանին. և օտարաբ-
կանները շատ ֆնասակար է։ Ա.-
սոնք առաջ թագաւոր ունէին. հի-
մա վերի թագաւորին հարկատու են։

Գորդուքաքները քանի մը քաղաք
շինեցին, և մինչև հիմա իրենց ձեռքն
է։ Ասոնք փուճ բաներ և ապակիներ
կուտան, ու երկրին բարիքը կառնեն
իրենց աշխարհքը կը տանին։

Աբդ ինչ բաներ կան ինչ մեծ աշխարհներ,
կարդացիր տեսար արտառոց ազգեր.
Աղէկ հասկըցար թէ ուր խելք չիկայ,
խելքէ դուրս բաներ հոնտեղը կըլլայ։
Ջանա՛ որ արթուն ըլլաս քու վրան,
չտիրէ քեզի մուրթ ագիտութեան.
Հոգուդ աշխարհը աղուր զարդարէ,
չըլլայ թէ ըլլաս սևերուն նման.

ԾԴ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ՀԱՔՐԱՊԱՆ։

277. Այս ընդարձակ աշխարհք Յունկոյէն կըսկըսի մինչև կը հասնի դլուխ բարեյուսոյ, և իրեք կողմէն ալ շրջապատած է ովկիանոսը։ Նրբբոր արարածները հոն գնացին տեսան ժողովուրդին կռապաշտութիւնը ՀԵՔ Քէր կուլեցին զանոնք, որ անհաւատ ըսել է։

Այս երկրին օդը առողջ ըլլալուն համար բնակիչները 100 տարիէն աւելի կապրէին. բայց եւրոպացիք հոն մտնելէն ետև որ անոնց ուտել խմել սորվեցուցին, հիմա քիչ կապրին։ Նրբբոր հոս ամառ է հոն ձմեռ է։

Գլխաւոր բնակիչներն են օդէն-

գացիք, որ լեռներն ու գաշտերը կը բնակին խրճիթներու մէջ։ Ներսերը շատ անծանօթ տեղեր և ժողովուրդներ կան, որ գազանի նման վարք ունին։

Ինչ էարտ ունին։

278. Այս ժողովուրդը 17 ցեղ կը բաժնըվի. և ամենուն կերպը մէկ է։ Զոյներնին սև է. պռկունքնին հասա և քիթերնին տափակ։ Աչք չի պզտիկու

Ազգականութիւն կը նային կարգը-վելու ատենին. և դժուար կը զատ-վին այր և կին։ Եվ որ զատված կինը կարգըվիլ ուզենայ, պէտք է որ մա-տին մէկ խաղը կտրեն. և որչափ կար-գըվի, այնչափ մատները կը կտրեն։

Արդիքնին մինչև 18 տարի մօրեր-նուն իշխանութիւնը տակն են. և մինչև անատենը արգելած է երիկմարդու հետ չեն կրնար խօսիլ, այլ միայն կնիկներու հետ. թէպէտ խիստ պար-կեշտ են։

Սակայն երբոր 18 տարուան կըլ-լայ տըղան, բոլոր ժողովուրդը կու-գան կը ժողվըվին, տըղան ալ հոն կը բերեն. և ծեր մարդ մը կելլէ ամե-նէն հաւանութի կառնէ։ Ա երջը հրա-ման կուտայ տղուն, թէ ասկէ ետև ելած ըլլաս մօրդ իշխանութիւնդ տա-կէն, և երիկմարդոց կարգը մըտ-նես. բայց ջանա որ ամէն խօսքդ և գործքդ կատարեալ ըլլայ։ Ընկէ ետև նոյն ծերը քիչ մը ջրվաթ կառ-նէ տղուն գլուխը կը լեցընէ, և ա-նով կըլլայ մարդ. անանկ որ մինչև կրնայ իր մայրը ծեծել։

Երիկմարդիք անխտիր կուտեն որդ ձձի և ոչիլ, բայց կնիկները չեն

կրնար ուտել. և կնիկները արիւն կուտեն, երիկնին չեն կրնար ուտել. ամենևին աղ չեն գործածեր։

Ասոնք միշտ մէկ տեղէն մէկալ տեղը ժուռ կուգան, իրենց խրձիլ-նին հաւկթաձև ցած և դռներնին նեղ է, որ սողալով կը մտնեն. ու 12 հոգի կը բնակին մէջը, և մէկ գլխաւոր մը ունին։

Ամէն մարդ զատ զատ իրեն համար տեղ կը փորէ ու հոն կը նստին։ Խիստ կը սիրեն պար խաղալ, շատ անգամ մէկտեղ գալով հօ՛ հօ՛ հօ՛ կանչեն կը խաղան, մինչև ձայներնին կը մարի։

Երբոր մէկը գազան մը կը մեռցնէ, ամէնքը կը ժողվուին. եաքը իրենց ծերը քիչ մը ջրվաթ կառնէ անոր գլխուն վրա լեցընելով աղնուական կրնէ զայն. և ամէնքը կերթան անոր շնորհակալութիւն կրնեն որ մեռցուց գազանը. իսկ աղնուականութեան նշանն այն է որ գազանին հալաբուշտը մազէն վար կը կախեն։

Ունչ կրօն ունին։

279. Այս ժողովուրդը միշտ կը ծածկէ իր կրօնը. բայց գերագոյն

ՏԷՐ մը կը Ճանչնայ Լուսնկա անունով որ ըսել է ՏԱԾ ՏԱԾՈՑ։ Եւ լուսինն ալ կը պաշտեն իբր անոր սպասաւորը. և լրում եղած ատենը տօնախմբութիւն ընելով բացը կելլեն անասուն կը զոհեն։

Հոն տեսակ մը Ճանճ կայ կէս մատի մեծութիւն երկու թեւով գոյնզգոյն, շատ պատիւ կուտան այս Ճանճերուն. կը ժողվեն կը պահեն իբր երկնից եկած ՏԱԾՆԵՐԸ։ Ասոնց քուրմերը Լուսի կըսվին։

Ինչափ իրենց մոլար կռապաշտուն յամառ են որ շատ անգամ քարոզիչները փորձեցին, անհնար եղաւ մոքերնին փոխել։ Հոլանտացիք ասոնց տղաքը առին քրիստոնէութիւն սովրեցուցին. բայց երբոր չափահաս եղան, նորէն դարձան իրենց աղանդը։

Երբոր հիւրընդնան և կամ ծերանան կը ջանան պարապ չի կենալ, այլ բան մը բերել, և անպիտան չըլլալ. գէթ գաւազան մը կարենան դրսէն բերել. որչափ որ կարողութիւն ունին ընտանիքը զիրենք լաւ կը նային։ Սակայն տկարանալով երբոր այլ բան չեն կրնար բերել, դուրս կը ձգեն որ կամ անօթի մեռնին, և

կամ գազաններուն կերակուր ըլլան, ու ազատին աշխարհքէն։ Շատ որ կը ծերանան իրենք զիրենք կը մեռցնեն, որ վշտաց ազատին։

Երբոր իրենց ջուխտակ զաւակ կը ծնի ու երկուքն ալ մանչ կըլլան, շատ ուրախութիւն կընեն. թէ որ երկուքն ալ աղջիկ ըլլան, մէկը կը մեռցընեն, ուրն որ տգեղ է։ Իսկ թէ որ մէկը մանչ ըլլայ՝ կը կանչեն բոլոր ժողովուրդն ու հաւանութիւն կառնեն. վերջը էգ տըղան ողջ ողջ կը թաղեն։ Երբեմն ծառին վրա կը դնեն որ կենդանիներն ուտեն։

Այս տղոցմէ եւրոպացիք առին մեծցուցին, բայց չափահաս եղածնուն պէս գացին վայրենի ծնօղքներուն քով. և փափաքելով այն գարշահոտ խրճիթներուն մէջ բնակեցան։

Այսոնց վրա միշտ եղ քսած է. և գլուխնին ապակիներով զարդարած է, որ իրենց մէջ անդամանդի յարդ ունի։

Ինչ գէրեն։

280. Այսոնք ամենևին ուսում չունին. բայց վարպետ բժիշկներ և վի-

բաբուժները կան իրենց մէջ. որ գիւ-
ղուն քառողջացնեն, և ոսկորով գիւ-
ղին կը կտրեն։ Դարբնութիւն ալ գի-
տեն, որ կարծը քարերով կը ծեծեն
երկաթն ու բան կը շինեն զարմանա-
լի կերպով։ Իրենց ասեղը ոսկորէ շի-
նած է. և անշահ դանակով անանկ
բաներ կը շինեն, որ կը զարմանաս։

Դիր չունին և իրենց լեզուն այն-
չափ կոշտ է որ լեզունին բեկբեկելով
կը խօսին։ Միայն 10 թիւ ունին,
անկէ ետև տասն տասն կը համրեն։
Մէն ցեղ իշխան ունի, որ զիրենք
կը կառավարէ։

Դրբոր հարկ կըլլայ կը ժողվին
յանցաւորը կը քննեն, թէ որ հաս-
տատվի յանցանքը, մէկէն կը վճռեն.
և իշխանը բան մը կը զարնէ յանցա-
ւորին գլխուն, ամէնքն ալ վրան կը
թափին ու կը մեռցնեն. յետոյ փա-
ռաւորապէս կը թաղեն։

Այս աշխարհք նախ փորդուքալ-
ները գտան 364 տարի առաջ. որուն
մէկ մասն է երկիր նադաղայ. ուր
վայրենի ազգ մը կայ սև կարճահա-
սակ, որ լեռներուն խոռոչները կը
բնակին։

Այս երկրին երևելի մասը հոլան-

տայի ընկերութեան ձեռքն է. ժողովուրդը իրենց թագաւորով թափառական կը շրջին։

Ո՞ր է Հրուանդան։

281. Հրուանդան կամ գլուխ բաբերեյուսոյ է մեծ սար մը ծովը մտած, որ հարաւային ափրիկէի ծայրն է. և ունի ընդարձակ ծոց և լաւ նաւահանգիստ։ Այսոր մասն է առիւծներուն և ինձերուն լեռները՝ ուր շատ առիւծներ և ինձեր կան։

Լսակ քաղաքն է փոքրիկ 300 տուն ունի և բերդ, որ Հոլանտացիք ծախու առին ընդարձակ երկիրներով։ Այս երկիրը շատ հարկաւոր է եւրոպացոց նաւերուն. որ հնտստանէն երկար ճամբորդութիւն ընելով հոս կուգան հանգիստ կառնուն ջուր և պաշար առնելով։

Այնպէս վավարէն գաւառը ընդարձակ է, և վերջի սահմանն է Հոլանտացոց. ուր բնակիչները օրէօր կը շատնան տերութեան խնամովը։

Կա՞յ ոչիչ տեղ։

282. Ափրիկատանի ծայրը երկու թագաւորութիւն աւ կայ որ ովկիանոսի

արևելեան կողմը կեցնին. Ինհամ-
պան, և Սապպիա։

Սապպիա թագաւորութիւնը աւելի
հարուստ և զօրաւոր է, ունի հանք
ոսկւոյ, և իրեն գլխաւոր քաղաքն է
Սոնպոն։

Իսկ Ինհամպան թագաւորութիւնն մայ-
րաքաղաքն է Ոնկա։ Պորտուքալ-
ները հոն երթալէն ետև ջանացին
քահանաները զանոնք լուսաւորել-
ուստի 1560 ին թագաւորը բոլոր ի-
խանները հրամանով քրիստոնեայ եղաւ։

Այսպէս տիրող է աշխարհիս համայն,
չէ զէնք բազմութիւն այլ խելքն է միայն.
Թէպէտ և անբաւ բազմութիւն ըլլան,
շուտով կը յաղթեն խելաց զօրութիւն։
Ինչ օգուտ ըլլալ մեծանուն փարթամ,
երբոր խելք չի կայ անպիտան կըլլան։
Թէ խելքդ է զօրեղ խոհեմ և արթուն,
դիւրին կը տիրես աշխարհիս վրան։

ԾԵ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ԵՐՈՎՊԻԱ։

283. Այս աշխարհք ափրիկէի մէջ
տեղն ըլլալով Եգիպտոսի ետևի
կողմը կեցնի Նուպիայէն անդին և կը

հանի մինչև Հապէշ. որուն մէջ շատ զանազան ազգեր և վայրենի ժողովուրդներ կը բնակին։ Ազգ մը կայ զօրաւոր, որկրսեն թէ մենք հայաստանէն եկած ենք։

Գալխաւոր բնակիչները Անգլիքոյացիք կրսվին. որ ուժով քաջ և հաւատարիմ են։ Սակայն վայրենի ըլլալով մարդու միս կուտեն։ Դաև խանութը դնեն կը ծախեն ինչպէս հոս կովի միսը։

Երբ կը տեսնեն թէ իրենց դերիները պարարտ են, մորթեն միսը կը ծախեն։ Եւ որ նեղութի մը ունենան, ձանձրանալով կերթան զիրենք թագաւորին կընծայեն, որ մորթէ ուտէ։

Թագաւորը ինքնիշխան ըլլալով Տաքօքօ կրսվի, այսինքն կայսր. որ այս ընդարձակ աշխարհքին կը տիրէ. թէպէտ շատ տեղը անծանօթ է։ Այս աշխարհք շատ գաւառներ ունի, որ հասարակածին տակն ըլլալով խիստ տաք կընէ։

Ո՞Վ ԵՆ ԵԱԿՈՅԵԲ։

284. Դակացիք աւելի գաղանաբարոյ ըլլալով թափառական կը շրջին

մերկ քաֆրաստանի կողմը. բոլորը սև և տգեղ են։ Անոնց գործքը աւազակութիւն է, որ պատերազմ ընելու ատենը զարհուրելի աղաղակ կը հանեն։ Կնիկներն թէպէտ բազմածին են. բայց աւազակուէ հետ ըլլալով նոր ծնած տղաքը ողջ ողջ կը թաղեն նայելու ատեն չունենալնուն համար։ Այս ասոր տեղը լեցընելու համար երբոր քաղաք մը կառնեն, բոլոր մէջի մեծերը կըսպաննեն կուտեն, և 12 տարեան տղաքը կը պահեն, որ իրենց զաւակ ըլլան։

Ցղոցը վզերնին անուր (հալխա) մը կը դնեն. մինչև որ քաջութիւն մը ընեն ու իրենց թշնամիին գլուխը չի կտրեն, այն կապը չեն կըրնար հանել։

Նամբորդները կը պատմեն թէ այս ազգի թշնամիներն են Ամազունի քաջ կնիկները, որ մենոմոդաբա կը բնակին, և միշտ կը պատերազմին։ Այսան զի իշխանուհիը կնիկներուն ձեռքն է, որոնք կը նային որ էրիկմարդիկ չի զօրանան. ուստի արու զաւակնին չեն շատցըներ կը մեռցընեն։ Իմա ուստ կը հանեն այս պատմութիւնը։

Ո՞Ր Է ՍՈՓՕԼԱ։

285. Այս թագաւորութիւն է արևելեան կողմը Աֆրիկէի. բնակիչներուն շատը սև են. ոմանք կռապաշտ, ոմանք այլազգ։

Շատ փարթամ են. զի այնչափ առատ է հոն ոսկին որ միլիոնաւոր հանք կելլէ, ու արաբիա կերթայ։ Կըսեն թէ Սողոմոն հոն ղրկեց նաւերն որ իրեն ոսկի բերին։

Թագաւորը Սոֆօլա քաղաքը կը նստի, որ է բազմամարդ և հարուստ։ Սակայն 244 տարի առաջ փորդուքալները առին այս քաղաքն, ու թագաւորը իրենց հարկատու ըրին. ուստի կից տուրք կառնեն։

Ո՞Ր Է ՄՈՆՈՄՈԹԱՊԱ։

286. Այս աշխարհքս է մեծ թագաւորութիւն. և բնակիչներն են սև և կռապաշտ. որ տարին երկու անգամ տօն ունին. չունին կուռք, այլ երկու չոր ծառ կը դնեն՝ չար, բարի։ Տօնախմբութիւն ատենը հանդէս կընեն թագաւորին պալատը մինչև 8 օր. վերջի օրը թագաւորը ժողովուրդին կերևնայ ու չուզած իշխաններուն

գլուխը կտրել կուտայ ժողովուրդին։
Փորդուքաքները 214 տարի առաջ
եկան այս աշխարհքը, և Թագաւո-
րին սիրտը շահելով մեծ գաւառ մը
առին ու բոլոր ծովեզերին տիրեցին.
և շատ տեղ ալ քրիստոնէուն մոցու-
ցին. մինչև Ճիզվիթներուն քարոզու-
Թիւնը Թագաւորն ալ դարձուցին. որ
յետոյ այլազգ եղան։ Այս աշխարհքը
25 փոքր տէրուԹիւններ կը բաժնըվի,
որ ովկիանոսի դին կլլնի։

Ի՞նչ ըսել է ղէնկիպար։

287. Օ Էնկիպար սևերու աշխարհքը
ըսել է. որ ընդարձակ երկիր է ա-
րևելեան ովկիանոսին դին. բնակիչ-
ները սևագոյն և կռապաշտ են. կան
հաւատքով այլազգներ։ Կան նաև
գաւառներ, որ փորդուքաքներուն
ձեռքն են. և քանի մը կղզիներ ալ
կան անոնց ձեռքը, ուր վանքեր և
շատ եկեղեցիներ կան։ Մեծ ուրիշ
կղզիներ և զանազան տէրուԹիւններ,
որ հնտստանու դին կլլնին։

Ո՞ւր է այն։

288. Այս աշխարհքին շատ տեղը
անապատ է. և զանազան ազգեր կը

բնակին մէջը։ Պէտուվացիք ինքնա-
գլուխ կը շրջին առանց օրինաց և կա-
ռավարուն։ Բայց Ս. տէր աշխարհքը
թագաւոր կը նստի, որ ընդարձակ և
բազմամարդ տէրութիւն է։ Ս. մէնքը
այլազգ են, առաջ Հապէշու տակն
էին, վերջը ինքնագլուխ եղան։ Սաև
իրեք տէրութիւններ ալ կան։

Ս. յս աշխարհքներուն մէջ շատ
տեսակ կենդանիներ կան. տեսակ
մը կով կայ, որ Ճակատին մէջ եղ-
ջիւր մը ունի։ Ցեղ կայ որ ամենևին
անձրև չի գար. բայց գետին ջուրը
կը պտղաբերէ երկիրը։ Ս. տէր աշ-
խարհին ծայրն է կուարտաֆուի սա-
ը, որ է ափրիկէի ծայրը հնտստան-
ու դիմաց կեցնի. անկէ անդին կար-
միր ծովն բերանն է, որ երջանիկ ա-
բաբիան կը զատէ ափրիկէէն։

Ո՞Ր Է ԿՈՊԷՂ։

289. Ս. յս թագաւորութիւն ափրի-
կէի շատ տէրուէն ընդարձակ է, և
կարմիր ծովուն բերնին մօտենալով
հնտստանի ծովին դիմացը կեցնի. որ
այրեցած գօտին տակն ըլլալով շատ
տաք կըլլայ տեղ տեղ, և գիշեր ցո-
ւրեկ միշտ հաւասար է։

Երբեք մտածին պէս մութը կը կոխէ. և հոն մէկ տարեան մէջ երկու անգամ ամառ կըլլայ։ Ձմեռը ապրիլին կըսկըսի ու կը տևէ մինչև սեպտեմբեր անձրևներով, և փոթորիկներով։ Եւ այն միջոցը գետերը կաւռատանան բոլոր դաշտերը կը կոխեն, և լեռներէն ոսկիի մանրուք կը բերեն (158)։

Հա այս աշխարհքէն կը բղխի նեղոս գետը. և հոն շատ զարմանալի կենդանիներ, սոսկալի գազաններ, և մեծամեծ օձեր կան. նաև մրջունները խոշոր կարմիր և թունաւոր են։

ՈՂ ԵՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ։

290. Հապէշները մեր գրոց մէջ Խաբէշէ կըսվին. որ Հուշին ցեղէն գալով հին ազգ են (157). և իրենց տերուին Եգիպտացոց ատենէն է։ Սակայն հիմակվան ցեղը կըսեն թէ Սողոմոն իմաստունէն եկած է։ Որ ըզ՝ դշխոյն Սաբայ հապէշի թագուհի ըլլալով Սողոմոնին հետ տեսնըվելէն ետև, անկէ զաւակ մը ունեցաւ. երբոր մեծցաւ տըղան հօրը ղրկեց գիտուելու և քաղաքավարուելու սորվելու համար։ Ուստի սողոմոն

թագաւոր օծել տրվաւ այս տրղան, ու Դաւիթ դրաւ անունը։ Յետոյ քահանաներով մօրը ղրկեց. որով հապեշները սորվեցան մովսիսական օրէնքն ու հրէայ եղան։

Սակայն խիստ տգէտ և հաստ են. գիր գրելը իրենց մէջ մեծ իմաստութիւն է։ Ամէն մարդ մէյմէկ կտոր աղ կախած են գօտիին. երբոր բարեկամ մը կը տեսնեն, հանեն կուտան որ լզէ. զի իրենց մէջ մեծ պատիւ է։

Ամենագոյն են և պուկունքնին թանձր. մազերնին երկայն և դէմքերնին բարքերնին անոյշ, գլուխնին և ոտքերնին քաց կը շրջին։ Կերակուրնին կաթնեղէն է. բայց միսը հում կուտեն։

Ալաև մեծամեծները ձեռքով չեն ուտեր, հապա ծառաները իրենց կը կերցընեն։ Ամոնց մէջ մեծ ամօթ է պզտի կտոր բերանը դնել և կամաց ուտել։

Ինչափ օտարասէր են որ ամենուն տանը մէջ սեղանը պատրաստ է օտարականի համար. բայց ամենևին այլազգիներուն չեն մօտենար, և միատեղ չեն ուտեր։ Սեղանին վրա այնչափ հաց կը դիզեն, որ ձեռքերնին

չի հասնիր կերակուր առնելու, և իրար չեն կրնար տեսնել. Թէպէտ աղքատները ասանկ չեն։

Ասոնց լեզուն արաբներուն հնչմանը մօտ է. այլ տարբերուի շատ ունի, և դժուար է սորվիլ. իրենց Թուաբանութիւնը բակլայով և սիսեռով կըլլայ։ Այլ ետքերս հայ վաճառականներէն սորվեցան Թուաբանութիւն։

Ինչպէս է Թագաւորը։

291. Հապէշներուն Թագաւորը կայսր կըսվի. որ Թէպէտ շատ իշխաններ և դատաւորներ ունի. բայց դատաստանական գիրք և օրէնք չունենալնուն համար՝ մէկէն կը կտրեն ամէն դատաստան։

Թագաւորը շատ մեծ պատիւ ունի, և տէր է ժողովուրդին ապրանքին. երբոր մեծ մարդ մը մեռնի՝ ապրանքին երրորդ մասը իրեն կիյնի. երկու մասն ալ տղոցը կուտայ։

Թագաւորին տղաքը մէկ բարձր լեռան մը վրա արգելած կը բնակին, ամենևին հաղորդակցութիւն մը չունենալով մարդու հետ. ամէն բան ունին հոն։

Երբոր Թագաւորը կը մեռնի՝ մեծ

իշխան մը կերթայ այն լեռը, և որ տղան որ յարմար տեսնէ, ընտրուի կընէ, ու ականջը ոսկի օղ կը դնէ և թագաւոր կը կոչէ։ Ընտանեաց հոն եղողները երկրպագուի կընեն թագաւորին վերջը անոնցմէ կը զատէ վար կը բերէ. և ամէնքը երկրպագուի ընելէն ետև եկեղեցին կը տանին, որ պատրիարգը կօծէ զինքը թագաւոր։

Յետոյ վրան կարմիր հանդերձ կը-ձգէն. և գլուխը նախ փուշ պսակ մը կը դնեն, ետքը թագաւորական թագ. որուն վրա խաչ մը կայ, կը-սեն թէ երկինքէն ինջած է։ Յետոյ թագաւորին ձեռքը սուր մը կուտան, և մատը մատանի մը կը դնեն, որ կը-սեն թէ սողոմոն տված է Սաբա դը-ը-խոյին։ Ոյն միջոցը մեծ իշխան մը կելլէ կը հրատարակէ ամենուն. և ժողովուրդը մեծ ձօն կատարելով կանչեն կեցցէ՛ Նէկոս, որ ինքնակալ ըսել է։

Ի՞նչ կրծն ունին։

292. Մատթէոս աւետարանիչը քա-ղաքեց կըսեն, և լուսաւորեց հապէշ-ները. թէպէտ շատ չանցաւ թողու-

ցին քրիստոնէութիւնը հրէութի դարձան, ինչպէս որ սորված էին։ Սակայն՝ աբ Ա. Թանասի ատենը Փրումէնտիոս եպիսկոպոսը հոն գնաց շատ հրաշքներով նորէն ծաղկեցուց քրիստոնէութիւնը։

Իսկ 214 տարի առաջ այլազգիները մտան հապէշ բովանդակ տերութիւնը և քրիստոնէութիւնը պիտի ջնջէին. բայց փորդուքալները օգնութի հասան Թագաւորին ու հանեցին անկէ այլազգիները։

Նաև Ձիզվիթ քարոզիչներ տարին, որ քիչ քիչ եւտիքական աղանդը անկէ վերուցին. վասն զի քաղկեդոնի ժողովքէն ետև մոլորութե մէջ ընկած էին։

Իսկ Ձիզվիթները այնչափ ծաղկեցան, որ Թագաւորը և մեծամեծները բոլոր ուղղափառ ըրին։ Երբոր պիտի իրենց ծէսն ալ փոխէին, ժողովուրդը ոտք ելաւ, մինչև բոլոր լատին քահանաներն ու ժողովուրդը ջարդեցին, և վռընտեցին իրենց աշխարհքէն։ Ու անկէ ետև իրենց հին սովորութիւններն ու աւելորդապաշտական բաները հաստատեցին, և հերետիկոս խփտիներէն իրենց պա-

տրիարգ ուզեցին. և մինչև հիմա նոյն մոլորութեց մէջն են։

Իբր զի՝ բաց՝ի միրտութէ թլփատութէ ալ ունին հապէշները, իբր հին սովորութի. շաբաթ օրն ալ կիրակիի նման կը պահեն։ Սակայն ամէն ամիս ՝ՁԾաԾնայ վերափոխումը կը տօնեն ՄերմեռանդութՁ։ Ղէկ պահք կը պահեն, և եկեղեցնայ մէջ անանկ պաբկեշտ կը կենան, որ ոչ կը նային և ոչ քթերնին կը սրբեն։ Դ. 10 տարեան կարգբվելնուն համար, մինչև որ չի կարգբվին պարտական չեն ծոմ պահելու։

Ը. յս աշխարհքիս մէջ եղած վանքերն ու եկեղեցիները տեղ մը չի կան։ Ամէն վանք երկու եկեղեցի ունի, մէկը կնիկներուն, մէկալը էրիկմարդոց համար։ Դ. եկեղեցնայ ձևը միշտ բոլորակ է և խորանը մէջ տեղն է։ Կարգբվածներն ու չի կարգբվածները զատ տեղ կը նստին. ով որ ծանր մեղք ունի նեղս չի մտներ, մեղաւորներուն տեղը կը կենայ։

Դ. եկեղեցականներուն ձեռքը մէյ-մէկ թմբուկ (թէֆ) կայ, որ ժամասացուՁ ատենը երգելով կը չալեն, ու ոտքով ալ գետինը կը զարնեն։

Դեպ կամաց կերգեն. բայց յետոյ երգելով կը տաքնան, և անանկ պը-ռալով կը ցաթկեն ու կը ծափեն, որ սոսկալի անկարգ բան մը կըլլայ այն հոգևոր երգը։

Ո՞Ր ԿԸ ՆՍՊԷ ԹԱԳԱՒՈՐԸ։

293. Գ. Այս աշխարհք հին ատենը 40 տերուն կը բաժնըվեր, բայց հիմա 7 նահանգ ունի։ Թագաւորը տէմպէա աշխարքին մէջ Կէօտեր քաղաքը կը նստի։ Ոն է Ճանա լիճը, որուն շրջապատն է 300 մղոն։

Շատ կղզիներ և վանքեր կան մէջը։ Ուր շատ ծովու ձի կան, որ նման են ձիու. երբեմն ջրէն կելլէն ոչխար կուտեն։ Ապէշները կուտեն անոնց միսը։

Թագաւորական քաղաքը երևելի է իրենց մէջ. բայց շինվածները անզարդ և անճոռնի են. ինչպէս ամէն քաղաքները այս կերպ են։ Շրջապատն է 12 մղոն. 100 եկեղեցի ունի. և պատրիարգական եկեղեցին կըսվի Էնղատրէոսս. այս-ինքն յարուցեալ քրիստոս։ Եւ Թագաւորին պալատը խիստ մեծ է և 4 ե-

կեղեցի ունի. ուր 100 կրօնաւորք ժամերգութիւն կընեն։

Բայց 'ի 7 նահանգէն ընդարձակ երկիր մը կայ Կալլա անուանով. որուն բնակիչներն են պատերազմող ազգակ վայրենի. որ թափառական կը շրջին, ոչ կրօն ունին և ոչ օրէնք։

Հաւատարմութիւն երդում կընեն ոչ խարին գլխուն վրա։ Միայն թլփատուն ունին. երիկմարդիկ գլուխնին չեն կրնար սանտրել. մինչև որ թշնամի մը կամ գազան մը չի մեռցընեն։ Ոտքերը ինքնագլուխ են, որ 70 գլուխ կը բաժնվին։ Եթէ որ օտարական մը իրենց երթայ, նախ կը ծեծեն, ետքը պատիւ կընեն։

Ո՞Ր Է ՆՈՒՊԻԱ։

294. Այս աշխարհք հին ատենը հապէշի տակն էր, որ կարմիր ծովուն արևմտեան դին է, և 700 մղոն երկայնութիւն ունի։ Սակայն հիմա ինքնագլուխ թագաւոր ունի. որ թագաւորնատած օրը բոլոր եղբայրները կը մեռցընէ. և դուրս ելած ատենը երեսը կը գոցէ որ մարդ չի տեսնէ։

Այս ժողովուրդը սեւագոյն և թանձրաշուրթն է. բայց զօրեղ և խորամանկ են։ Ռաջ բոլորը քրիստոնեայ էին Ամատթէոս աւետարանչին քարոզութիւնը. բայց յետոյ քիչ քիչ ամէնքը այլազգ եղան։

Այս աշխարքէն երներքինին Վանդակայ տիկնոջ կամ այս աշխարհքի թագուհիին. որ մկրտվելով՝ եր փիլիպպոսէն՝ եկաւ զանոնք լուսաւորեց։ Ուր մինչև հիմա փլած վանքեր և եկեղեցիներ կան. նաև պատկերքներ ալ կը գտվին։

Կոյ ուրիշ տեղ։

295. Ընդ՝ ահա Սիւէիշի կիրճէն, կամ կարմիր ծովին մէկ ծայրէն սկսանք, ուստի կըսկըսի Եգիպտոս. անկէ անցանք բարբարոսի աշխարհքը և հասանք Ֆէս և Ճիսիլթէռռայի բերանը։ Ուսկից մտանք ովկիանոս և բոլոր ափրիկէի աշխարքները պատմելով հասանք կարմիր ծովին բերանը, և մինչև՝ Լուպիա որ Եգիպտոսի միւս կողմը կելնի։

Եւ այսպէս բոլոր ափրիկէի բնակիչները պատմելով եկանք կարմիր ծով. որուն երկայնութիւնն է իբր

900 մղոն, և լայնութիւն տեղ տեղ 12 մղոն։

Ինչպա քաղաքին առջին է նեղուցը կարմիր ծովուն, որ կըսվի Պապէլ-մանտէլ. ուսկից դէպ 'ի ովկիանոս կը վերջանայ Կուարտաֆուի սարը։

Կաւ կղզիներ։

296. Աֆրիկէի ծովին մէջ շատ է բաւական կղզիներ կան. ինչպէս է Մատակասքար, որ Հրուանդանին մօտ կէյնի ովկիանոսին մէջ. որուն շրջապատն է 2400 մղոն. և բնակիչներն են սև ու Ճերմակ խառն։

Սոնք բոլորը վայրենի ըլլալով միշտ կռիւ ունին իրարու հետ. ոչ տաճար ունին և ոչ կրօն. միայն իրենց մեռելներուն գերեզմանը կը պաշտեն. և մէկ տեսակ մը մարախ (չէքիրկէ) կը պաշտեն։ Դաւ թըլփատուութիւն ունին։

Պաղեստացիք 150 տարի առաջ բերդ շինեցին հոն, այլ բնակիչները ոտք ելան բոլորը ջարդեցին։ Սակայն Պուրպոն կղզին անոնց ձեռքն է, և այլ զանազան կղզիներ ալ կան եւրոպացոց ձեռքը. որ հնատան եր-

թալու գալու ատենին հոն կը հանդիպին։

Ո՞ր են Խանարբեան կղզիները։

297. Անոնք են Երանելեաց կղզիները, որ Աղբրպին դիմացը կկան 120 մղոն հեռու ցամաքէն։ Հին կռապաշտները կըսէին որ հոն է Ադամեան դաշտը կամ դրախտը։

Ուրոպացիք 400 տարի առաջ հոն հասան. տեսան որ բնակիչներն էին սև բարբարոս. բայց իրարու հետ սիրով էին, և թագաւոր ունէին. ոչ երկաթ և ոչ գործիք ունէին. խիստ կը վախնային մարդ մեռցընելու։

Անոնք արև լուսին և աստղ կը պաշտէին. նաև մեռելներնուն շատ պատիւ կընէին։ Երբոր թագաւորը կը մեռնէր մարմինը զմըռսելով քարանձաւի (մաղարայի) մէջ կը կայնեցնէին թագաւորական գաւազանը ձեռքը. երկու քոչն ալ ամանով կաթ ու գինի կը դնէին, որ Ճամբու պաշար ընէ։

Այս կղզիները եօթն են, ոմը մեծ, ոմը պզտիկ. բայց գլխաւորն է Գալմա, նաև երկաթի կղզին. որուն շըրջապատն է իբր 72 մղոն։

Ասոնց մէկն ալ Պէնէրիֆֆա կղզին է. ուր է Պիքօ լեռը բարձր 17 հազար ոտնաչափ. որ հեռուէն սրաձայր վառարան մը կերևնայ. մէջը հնոց մը ունի, որ միշտ բոց կը հանէ. որուն սատանայի կաթսայ կըսեն բնակիչները. վասն զի մոքերնին դրեր են թէ դժոխքը հոն է։ Այս լեռը ամպերէն բարձր ըլլալով ոչ անձրև կուգայ հոն և ոչ հով կըլլայ։

Արդ՝ այս կղզիները սպանեօլներուն ձեռքն են, որ քիչ քիչ տիրեցին։ Կան 6 մանր կղզիներ ալ, որոնց մէջ լեցուն քանարեայ թռչուն է։ Լոռոզ Բօմբրեան և Պալարի կղզիները, ուսկից շատ բարիք կելլէ։ Կան փորդուքալներուն ձեռքի կղզիները, որ հնտստանու և ամերիկայի Համբուն վրա ըլլալով՝ նաւերուն շատ հարկաւոր են։

Ո՞ր է աբ հեղինէ։

298. Աբ հեղինէին կղզին Աֆրիկէին ու Ամերիկային մէջ տեղն է, և ասոր նման ցամաքէ հեռու կղզի չի կայ. զի ահագին ովկիանոսին միջոցը ամէն ցամաքէն հեռու է։

Ասոր շրջապատն է 18 մղոն, և 200

տուն ունի. բոլոր կղզին լեռնոտ ըլ-
լալով հեռուէն զարհուրելի կերևնայ, և անառիկ է։

Ալախ փորդուքալները գտան 310 տարի առաջ, և հոն մարդ տարին ու բնակուի և բերդ շինեցին. բայց յետոյ ինկիլիզները տիրեցին։

Ահա այս կղզին քշեցին Ալբոլէոն Պոնաբառթէն ֆռանսզներուն կայսրը, և հոն մեռաւ։

Քանի անհիմն է վիճակ մարդկային,
որ երբև երազ շուտով կը փոխվին.
Որուն նեղ կուգար բոլոր գունտ երկրին,
կը սրզմի եղեր մէկ պզտի կղզին։
Օրինակ ըլլան քեզ ասանկ մեծեր,
որ զիրենք կարծեն աէր 'ի տիեզեր.
Իրենց առաջին չափէ ընդ վերջեր,
երկնից տուածին գոհ և ուրախ լեր։

Վախճան

Գ. ՄԱՍԻՆ

Ի շատ կարկնի աշխարհագրին,
երբայ պատմես յերկրաս երկրին։

ՀՄՏՈՒԹՒՒՆ

ՄԱՆԿԱՆՑ

ՄԱՍՆ Դ.

ԺԶ. ՀԱՄԱՐ

ՈՎ ԵՆ ԵՒՐՈՊայէ ապՓԵրը։

299. Եւրոպա՝ աշխարքիս երրորդ մասն ըլլալով թէպէտ փոքր է, այլ մեծամեծ թագաւորութիւններով, և խելացի ազգերով գիտուններով լեցուն ըլլալով ամենէն գերազանց է։ Իսկ բնակիչները Յաբեթի ցեղէն եկած են, որոնք ասիայէն Եւրոպա անցան. ու բազմացան քաղաքներ շինեցին և զօրացան. որք են Մոսկով, Հռոմ, Նէմցէ, Ֆրանսըզ, Սպանեօլ, Դանիան, Ինկիլիզ, Իռլանդ, Պուլղար։ Լէն (161)։

Եւրոպա անունը Փիւնիկեցիք դը-

բեր են. որ սպիտակ գոյն ասել է, զի բնակիչները Ճերմակ են։ Որ զանազան ազգեր երբեմն երբեմն գնացին լեցվեցան. զորօրինակ Պուլղարները, Թաթարները, և նէմցէները ասիայէն հոն գնացին յետոյ զօրացան։ Ասոնք հիմա 150 միլիոնի չափ մարդ կայ Եւրոպայի մէջ, և առաջ աւելի շատ էին. զի պատերազմները շատ մարդ պակսեցուցին, և շատն ալ Ամերիկա գնացին։

300. Այս աշխարհք 16 երեսելի թագաւորութիւններ ունի. մէկ ծայրը Պարզային մօտ Յօնաւիս գետէն կըսկըսի, ու սև ծովէն ստամպօլէն և Ճերմակ ծովէն անցնելով կերթայ Ճիպիլթէռայինեղուցէն դուրս կելէ արևմուտքին դէն։

Ասոնք ովկիանոսէն անցնելով, և սպանիա՝ փորթուքալ՝ ինկիլթէռա մէջ առնելով կը հասնի տանիմարքա, շվէտ և մոսկով։ Որ Պալթիկ ծովը մէջ առնելով կերթայ հիւսիսային ովկիանոս, և մինչև Ղէմպրա կղզին Ամերիգայի մօտ։ Ընկեց ալ սիպէրիայի լեռներէն անցնելով նորէն կը հասնի Յօնաւիս գետ։

Այս աշխարհքին տարածութիւնէ

իբր 2 միլիոն ու կէս մղոն, սկսեալ ապաղայի ծայրէն մինչև փորդուքալ հանդերձ կղզիներով։

Սակայն մեծ մասը մոսկովիսերուն ձեռքն է. որոնց տէրութիւնը ամենէն ընդարձակ ըլլալով գրեթէ միլիոն մը քառակուսի տեղ ունին Եւրոպայի մէջ։

Ասոր կրկինն ալ ասիայի մէջ ունին, որ կերթայ Ժտերիան, Սիպերիա, և մինչև Ընուամաչին։ Ամբոլոր բնակիչներն են 26 միլիոն մարդ. 500 քաղաք ունին, և ահագին պարապ երկիրներ անապատի նման։

Ուսէց էն։

301. Մոսկովիսերուն սկիզբը Մոսքէն կուգայ, որ Յաբեթի պզտիկ որդին էր. որոնք յետոյ զանազան ազգերու տիրելով և անոնց հետ միանալով աւելի բազմացան (157)։

Մոսկովիսերը 700 տարի առաջ իրենք իշխան ունէին, որ էին իրենք Եղբայր, գլխաւոր իշխանն էր Ռուրիկ, որ յետոյ բոլոր ազգին տիրեց ինքն իշխան տէր եղաւ։

Այս ցեղէն թագաւորելով քանի մը դար մեծցաւ ռուսին տէրութիւնը։

Սակայն 1353 թուականին թաթարներն եկան իրենց տիրեցին. նաև լեհերուն ալ տակն ընկան։

Ամէն շատ չի տևեց իշխանները միաբանելով շատ քաջուն ըրին, ու ազատեցին տէրուն, և նորէն ինքնապլուխ ըլլալով շատ տեղերը ետ առին։

Ի վերայ այսր ամի մոսկովատան միշտ խռովութեան մէջ էր մինչև որ Պետրոս թագաւորը նստաւ յամի 1672 ին. որ ամէն բան կարգի դրաւ, շատ բերդեր և քաղաքներ շինեց. և ամէն կերպ գիտուն արուեստ իրենց մէջ մտցուց։

Ինքնպէս անանկ կարգաւորեց բոլոր ժողովուրդն ու զինուորուն՝ որ լուսաւորիչ ըսվեցաւ անոնց։ Ինչպէտ այս բաներն ընելով շատ աշխատանք քաշեց և շատ չի քաշողներէն հալածվեցաւ։ Սակայն խոհեմութիւնք և երկայնմտութիւնք ամէնը ամրցցուց և ամէն ուզածն ըրաւ. մինչև հայը կոչվեցաւ մոսկովաց։ Ահա ասոր ցեղէն մինչև հիմա կը թագաւորեն։

Ինչ բարք ունին։

302. Մոսկովստան շատ զանազան ազգեր կան, որ կերպ կերպ բարք և սովորութիւն ունին։ Պետրոս Թագաւորէն առաջ ամէնքն ալ բարբարոս և վայրենի էին։ Ընտանիք Թանձրամիտ էին, որ գիտուէ սորվիլը մեղք կը սեպէին։

Իսկ նոյն Թդրը երբեմն քաղցրութիւն և երբեմն սաստկութիւն հագիւ կրցաւ զիրենք կրթել. նախ լաթերնին փոխելով և մօրուքնին ածիլելով. մինչև որ եւրոպացոց նմանցուց հոգին եկաւ։ Շատ մարդ մեռնիլը յանձն կառնէր՝ ու մօրուքը չէր ածիլէր, շատ մարդ ալ ունեցածը տալ կուզէր, միայն Թէ առջի կերպը չի փոխէ։

Սակայն հասարակ ժողովուրդը նոյն Թանձրամտութիւնի մէջ է. Թէպէտ հաւատարիմ են և հնազանդ. մինչև կուրօրէն կը մեռնին Թագաւորին համար։ Լաւ շատ ուժով և դիմացկոտ են. աւելորդապաշտութիւն ալ շատ ունին։

Պետրոս Թագաւորը Պէդրպուրկ շինելէն ետև՝ ձեմարան մը շինեց ա-

մէն գիտութեց. և շատ զանազան դպրատուններ ալ հաստատեց՝ Լաև ամէն ազգերէն գիտուններ բերել տրվաւ իր ազգը կրթելու համար։ Բայլև անանկ կարգ դրաւ՝ որ օրէ օր ամէն արուեստ և ուսում կը ծաղկի։

Բոնց լեզուն Շ հլաւոններուն լեզուէն ելած է. բայց 42 գիր ունին. որոնց հինն է յունաց գիրը. Նոքի ատենները Կիւրեղ անունով մէկը այսչափ աւելցուց, և դրաւ այն տառերն որ իրենց հնչմանը հարկաւոր էին։

Ինչ երթն ուներ։

303. Մոսկովիներն առաջ բոլոր կռապաշտ էին. բայց օրկա թագուհին 955 ին Պտամպօլ եկաւ քրիստոնեայ եղաւ։ Նրբոր ասոր թոռը միրտվեցաւ, բոլոր ժողովուրդն ալ դարձաւ յաճապաշտութի. և մինչև հիմա յունաց դաւանանքով մնացին։ Ինդպէտ կըսեն թէ նախ Ն. դրեաս առաքեալը քարոզեր էր մոսկովատան։

Այս ժողովուրդը եկեղեցնայ մէջ շատ ջերմեռանդ են և պատկերքնեբու շատ յարգութի կուտան. իրենց

եկեղեցական երգերն ալ անոյշ են։ Սակայն մինչև հիմա ներսերը շատ կռապաշտներ ալ կը գտվին, և շատ աւելորդապաշտի ունին։ Ինոր համար Փեդրպուրկ դպրատուն մը հաստատեցին որ անհաւատները դարձրնեն։

Ռոլոր ռուսիա իրեք եպսուԹի կը բաժնվի. գրեԹէ ամենուն իշխանուին ալ հաւասար է։ Առաջ գլխաւոր եպսը յունաց պատրիարգին տակն էր. իսկ'ի 1589ին Ֆիէտոր Թագաւորը ինքնիշխան պատրիարգ գրաւ. բայց Պէտրոս Թագաւորը 1701ին վերցուց նոյն պատրիարգուԹին ու ինքն եղաւ իրենց եկեղեցնայ գլուխը։ Ամեն ղի եկեղեցական ժողով մը հաստատեց եպսներուն, և ինքն ալ անոնց գլուխն եղաւ, որ՝ սինոդոս կըսվի. և ամէն եկեղեցական բաները այս ժողովքը կորոշէ. ուր առանց Թագաւորին բան չեն կրնար կտրել։

Ինդլէս կը բաժնվի։

304. Այս ընդարձակ աշխարհք ընդհանրապէս կը բաժնվի մասն եւրոպական, և ասիական։ Առաջինը

9 մեծամեծ նահանգ ունի. գլխաւորն է Ինկրիա, որ երկայն և լայն է 120 մղոն։

Այս նահանգին մէջն է Փեդերպուրկ թագաւորանիստ քաղաքը. որ մեծն Պետրոս թագաւոր շինել տըվաւ 1703 ին, և հոն փոխադրեց աթոռն ու հրաման հանեց որ ամէն տեղաց մեծամեծները հոն երթան տուն շինեն, անանկ որ քիչ ատենին մէջ 34 հազար տուն շինվեցաւ։

Այս քաղաքին շինվածները խիստ գեղեցիկ և կարգաւորեալ են. երկայնութին ու լայնութիւը 4 մղոն է։ Փառաւոր շէնքերով և եկեղեցիներով զարդարված է։

Շատ երևելի դպրատուններ, ուսումնարաններ և գործատուններ կան մէջը. ամէն տեսակ գիտութեց ծաղկած է, և ամէն ազգ եկեղեցի ունի հոն։

Սակայն ամենէն փառաւոր շէնքն է թագաւորական պալատը ընդարձակ և սիւնազարդ, անդին բաներով լեցուն։ Այս քաղաքին բնակիչներն են իբր 220 հազար հոգի։

Փառաւոր շէնքերուն մէկն ալ՝ Աղէքսանդրի վանքն է, որ ընդար-

ձակ քառանկիւնաձև շինված է, չորս կողմը չորս եկեղեցի ունի։ Մետրապոլիտը հոս կը նստի, 60 կրօնաւորով, և ունի դպրոց ամէն ուսմանց։

Ամէն տարի նոր Զէքսանդրի օրը թագաւորը մեծ հանդէսով ուխտ կերթայ այս վանքը, և մետրապոլիտը պատարագ կընէ։

Ո՞Ր է Մոսքա։

305. Մոսքա մայրաքաղաքն է Մոսքվիա նահանգին մէջ, և ասով ռուսները մոսկով կոչվեցան։ Շրջապատն է 20 մղոն, և կէս միլիոն բնակիչ ունէր. Համբաները լայն և քարաշէն. նաև շատ երևելի շինվածներով զարդարված էր։ Ամէն մոսկովի թագաւորները 400 տարի հոս նստան. 29 վանք և 270 եկեղեցի ուներ. շատին գմբէթները ոսկեզօծ էին. եկեղեցիները մեծամեծ զանգակներ ունէին։

Ճածնայ եկեղեցնայ մէջ ջահ մը կար 910 հօխա, և այլ զանազան արծաթեղէն և ոսկեղէն զարդերով լեցուն էին եկեղեցիները։ Ուր անանկ մեծ զանգակ մը կայ վար ընկած, որ սանդուղով մէջը կը մտնեն. և ահագին բան է։

Այս քաղաք 4 մեծամեծ թաղ կը բաժնըվի. և ամէն մէկին մէջ մեծադործ բաներ կային. նոյնպէս քաղքէն դուրս շատ տեղեր ալ կային լեցուն բնակիչներով և շէնքերով։

Սակայն մեր օրը երբոր Պոնաբառթէն պիտի առնէր այս քաղաքը, մոսկովցիները կրակը տվին ու չարաչար երեցին. թէպէտ Ֆռանսիզները քիչ մը տեղ մարեցին. և յետոյ սկսան տեղ տեղ շինել, բայց առջի վայելչութիւնը գնաց։ Եւ որ այս քաղաքը չերէին, Պոնաբառթէն կը տիրեր մոսկովստանին. և մոսկովցիները գերի կըլլային։

Իսկ այս քաղաքը նախ շինել սկսան 1147 ին և հետզհետէ ծեղկեցուցին մինչև Պետրոս Թագաւորին օրը. հիմա մոխիր դարձաւ։

Դուրիկ իշխանը Նովկորոտնահանգին մէջ կը նստէր, և հոն սկսաւ այս ազգին իշխանութիւնը. անկէ ետև Մոսքվա շինեցին։

Ո՞Ր Է ՍՊԻՏԱԿԷՆ։

306. Այս աշխարքը հիւսիսային կողմն ըլլալով մինչև սառնապատ ծովը կերթայ. և անկէ անդին ծովը

սառած ըլլալով չեն կրնար առաջ երթալ։ Բնակիչները սէրօկէնոյ կըսվին, որ հում ուտող ըսել է։

Անոնք հասարակօրէն հում կերակուր կուտեն. և աւելորդապաշտութիւն լեցուն են։ Անիջահասակ են և մանրաչք, մեծքերան, և տափակքիթ։ Անաղոյն են, և բաց 'ի մօրուքէն ու գլխու մազէն, ուրիշ տեղերնին մազ չի կայ։ Շատ զօրաւոր և արագ են. էրիկ մարդ կնիկ մարդ նման ըլլալով թէ դէմքով և թէ հագուստով դըժուար կորոշվին իրարմէ։

Կնիկները ստկով կը գնեն իրենց ծնօղքէն. երկու կին կառնեն. և երկու արարիչ կաւտան մէկը բարեբար, մէկալը պատուհասող։

Լաւ արև լուսին կը պաշտեն, կուռք և քուրմ ունին, ուրիշ օրէնք չունին. բայց հնազանդ են մոսկովին. ուր իշխանը Բրխանկէլ քաղաքը կը նստի, և շատ զանազան գաւառներ ունի։

Այս աշխարքին դիմացն է լաբրոնիան ռուսաց, ուսկից հիւսիսային ծովը բերանով մը ներս մտնելով սպիտակ ծովը կը ձևայնէ մոսկովին ու շվէտին մէջ։

Այնպէս նիժնէի նահանգին բնակիչներն են կռապաշտ, և եզան գլուխ կը պաշտեն։ Կան նաև մոսկովներ, բայց ամէնն ալ վայրենամիտ են, և ուրիշ ազգերը անհնարին կատեն, մինչև քարով փայտով կը հալածեն։ Ամենևին ուրիշի տեղ չենտար. թէ որ իմանան թէ օտար ազգ մը իրենց տունը նստած է, մոխիր ջրով կը լվան պառկած նստած տեղը։ Շատ երկիրներու մէջ ալ ցեղ ցեղ խազախներ կը բնակին, որ հաւատքով և սովորութիւն նման են մոսկովներուն։

Իսկ վլրոնէժքոյի նահանգին մէջ բոլորը խազախ են. ուր հայերը շինեցին 1779 ին նախիջևան քաղաքը և գրիգորիոպոլիս 1792 ին։ Անիմը հազար տուն կայ. ունին եկեղեցիներ, դպրոցներ, և դատաստանարան. ուր հայ իշխանները կը կառավարեն։

Ո՞ր է ասիական մասը։

307. Այս աշխարքը մոսկովներուն՝ շատ ընդարձակ է որ մինչև չինուսմաչին կերթայ. և Թաթարստանու մասն ըլլալով շատը Թաթար են. և

զանազան ցեղ կը բաժնըվին, ու կերպ կերպ սովորութիւններ ունին։ Ուր պզտի ծով մը կայ երկայն 288 մղոն և լայն 12. որ ձմեռը կը սառի։

Թաթարներուն շատը այլազգ են. բայց շատ կռապաշտներ ալ կան, որ կենդանի կը պաշտեն. երբոր իրենց բանը չի յաջողիր, կը ծեծեն կուռքը։ Այնպէս Աժտէրխանու նահանգն էր թաթարներուն. որ 1544 ին մոսկովիներն առին. ուր ամառը սաստիկ տաք կընէ։

Այս աշխարքը ընդարձակ անապատ մը կայ. Ալմուխներուն և նոգայի թաթարներուն անասուններըը հոն կարածեն։ Այրաքաղաքն է Աժտէրխան. որ 70 հազար բնակիչ ունի, և 3300 տուն կայ հայոց։

Ո՞Ր Է ՍԻԲԷՐԻԱ։

308. Այս ընդարձակ աշխարքը թաթարներուն ոլկիանոսէն կըսկըսի, մինչև սառնապատ ծովը կը հասնի։ Երկայնութիւն է 3200 մղոն, և լայնութիւը 1200. և 3 մեծ տէրութիւը կը բաժնըվի։

Այնչափ ցուրտ է որ սեպտեմբերի կըսկըսի ձիւնը։ Իրենց պատու-

հանները սառուցով գոցված են, ուսկից լոյս կառնեն։ Հիւսիսային կողմը ամիսներով ցորեկ չեն տեսներ, ուստի բնակիչները բոլոր քնով կանցընեն ատեններին (158)։

Բնակիչներն են վայրենի և կռապաշտ. տարին անգամ մը զոհ կընեն անտառին մէջ։ Կան որ շատ այլատարազ կուռքեր ունին։ Մանք երբոր երդում կընեն շուն մը կը մորթեն, ու արիւնը կը խմեն, և շունն ալ կերեն։

Սոնցմէ շատը դարձան քրիստոնեայ եղան, ու մոսկովիտերուն հետ միատեղ կը բնակին. բայց իրիմու թաթարները բոլոր այլազգ են. որոնք փոքր թաթարիստանու մէջն են։ Իսկ գամչեաքները սիպերիայի ծայրը կկենին ընդարձակ ցամաքակըղզիի մէջ. որ էին վայրենի ծոյլ և աղտոտ. ոչ կը լվացվէին և ոչ ըղունգնին կամ մազերնին կը կտրէին։ Եռելնին դռներնուն առաջը կը ձգէին որ շներն ուտեն։ Սոնց պէս թանձրամիտ և գարշելի ազգ չի կար. բայց մոսկովիտերուն տակը մտնելէն ետև քրիստոնեայ ըլլալով քիչմը մարդ եղան։

Պամբեաքի արևելեան կողմը քանի մը կղզիներ կան մոսկովի տակն, որ չինուսմաշինի կը մօտենան։ Բնակիչները գետնին տակը կը բնակին մեծամեծ փոսերու մէջ, մինչև 200 հոգի միատեղ, վրանին փայտերով գոցած են։

Ամենևին կրակ չեն վառեր, զի ծառ քիչ կայ հոն. միայն խոտ կը վառեն ու բոպիկ վրայէն կանցնին որ տաքնան. կերածնին որս և ձուկ է։ Երիկմարդ կնիկմարդ երեսնուն վրա՝ կերպ կերպ սև նշաններ կընեն. վարի պառկուանքներուն վրա իրեք ծակ կընեն, ու ոսկորէ և քարէ զարդեր կը կախեն։ Բերանուն մէջ ալ ոսկոր կը դնեն ու կը կախեն. որով դէմքերնին անձառնի կըլլայ։ Ամարակօրէն տափակաքիթ և սևամազ են։

Իսկ նոր զէմլա թէպէտ մեծ կղզի է, բայց ամենևին բնակիչ մարդ չի կայ. միայն տարուէ տարի մոսկովիները կերթան որսորդութենէ համար։

Ոչկէ անդին մարդ չի կրնար երթալ, զի ծովը սառած է և մարդ չի դիմանար ցրտէնհիւ սիսային բևեռին մօտ ըլլալով (43)։

Ահա քեզ բերի այն մասն աշխարհի,
որ խելքով մտքով կը կառավարվի.
Գիտնոց գրքերով պայծառ կը փայլի,
մինչ օրէնք կանոն կուտայ ուրիշի։
Առաջ այս մասն էր անարգ և տգէտ,
ոչ օրէնք ունէր և ոչ գրագէտ.
Հիմա ինքն եղաւ այլոց վարժապետ,
ամէն ազգերուն գլուխ է և պետ։

ԺԷ. ՀԱՄԱՐ

ՈՂԷՆ օսմանցիք։

309. Ինչպէս առաջ ալ ըսինք, այս ազգը կասպից ծովուն կողմէն եկաւ ասիայի շատ տեղերու տիրելէն ետև, Եւրոպայի մէջ երևելի աշխարքներու տէր եղաւ (188)։

Ուստի օսմանեան տէրութիւնը Պաղտատէն և Բ.պազայէն կըսկըսի կերթայ մինչև Ֆէս եէմէն և պասրա։ Յետոյ Եւրոպա անցնելով կը հասնի մինչև խուվաթի երկիրը, և ուլահ պուղտան մէջ առնելով կերթայ Ռումնա գետ, և անկէ ստամպօլ։

Այս այսպէս բոլոր այս տէրութիւն երկայնութիւնն է արևելքէն արևմուտք 2400 մղոն. և լայնութիւը 2100։

Որոյն Եւրոպա 15 միլիոն ժողովուրդ ունի, և ասիայի մէջ 30 միլիոն։ Այս են Ֆրանկիկ, Յոյն, Հայ, Աբրապ, Ռիւրա, Աստրի, Հրէայ, Պուլգար, Անգաւուտ, Ալանիսրուվաթ, Սրոֆ, և ն։

Եւրոպայի մասը 7 աշխարք կը բաժնուի։ Առունայէն սկսելով մինչև Լէհ, նէմցէ, և ստամպօլ կը հասնի։ Այս մասին տարածութիւնն է 10 հազար 544 քառակուսի մղոն. որ կըսվի ռոսոմէլէ, այսինքն հռոմի քաղաքի էլ երկիր ըսել է։

Սակայն առաջին նահանգ և գլուխ քաղաքներուն է Ստամպօլ կամ Կանամպօլ, այսինքն բազմութիւն հաւատացելոց։ Կամ կոստանդինուպօլիս, այսինքն կոստանդիանոսի քաղաք. որ հին ատենը կըսվէր Բիւզանդիոն կամ Ի Բիզանդիոն։ Որովհետև նախ Ի Բիզաս Իշխանը շինեց այս քաղաքս. ետքը կոստանդիանոս թագաւորը գեղեցիկ շէնքերով զարդարեց և մեծցուց 1505 տարի առաջ։

Ո՞ՐՆ Է ՀԱՅՐԱՔԱՂԱՔԸ։

310. Այս տէրութիւնը մէկ քանի թագաւորանիստ քաղաքներ ունի. իբր զի՝ սուլդան օսման 20 գաւառ տիրելէն ետև, 1299ին Պուռսա դրաւ իր աթոռը։ Այնպէս ասոր որդին և թոռները շատ տեղերու իշխեցին և եւրոպայի մէջ երևելի տեղեր առին։

Իսկ սուլդան Մէհէմմէտ 200 քաղաք առնելէն 'ի զատ ստամպօլ ալ առաւ հոռոմներէն 379 տարի առաջ. և իր աթոռը հոն փոխադրելով ըրաւ թագաւորանիստ քաղաք. թէպէտ էտիրնէ ալ կրսվի արքայանիստ, զի հոն ալ նստաւ։

Արդ ահա այս փառաւոր քաղաքը կը նստի թագաւոր ֆաֆէշահ անունով, որ կը նշանակէ մեծ իշխան կամ աշխարհակալ։ Ունի վէզիր իրեն փոխանորդ, որ կը նշանակէ բեռնաբարձ. և է ֆաշա, որ անդրանիկ որդի ըսել է։ Իբր զի՝ առջի վէզիրն եղաւ սուլդան օսմանին անդրանիկ որդին։

Այսկէ 'ի զատ 8 գլխաւոր պաշտօնատէր կան իբր խորհրդական կա-

ռավարիչ տէրութիւն, և այլ ուրիշ պաշտօնատէրք և կարդացողներ, որ կը կառավարեն այս մեծ տէրութիւնը։ Սակայն Թագաւորն է բացարձակ ինքնիշխան։

Ի՞նչ է քաղաքը։

311. Սատամպոլ է եռանկիւնի ձևով 7 ելլի վրա շինած է. մէկ կողմն է ցամաք, և երկու կողմն է ծովուն դին։ Շրջապատն է 16 մղոն. ծովուն կողմը 20 դուռ ունի, և 6 դուռ ցամաքին դին։

Այս քաղաքս երևելի շինվածներով լեցուն է. և շատ մեծամեծ ճամիներ կան։ Այնը 4494 ճամի են. բայց գլխաւորները 10 են. և ամենէն մեծ և փառաւորն է Այա սոֆիան, որ առաջ էր եկեղեցի։

Այսոր երկայնութիւն է 252 ոտնաչափ, և լայնութիւն է 228։ Խաչաձև ըլլալով մէջ տեղի գմբեթին տրամագիծն է 104 ոտնաչափ, իսկ բարձրութիւն է 180. նաև 5 դուռ ունի. մէկը կըսվի հայոց դուռ որ Արդան իշխանը յունաց ատենը գներ է հայոց յիշատակ ըլլալու համար։

Այս եկեղեցին մեծն կոստան-

գիանոս շինեց յանուն իմաստուէն ՅՍ։ Իսկ սուլդան մէհէմմէտ Ճամի ըրաւ։

Կան ուրիշ երևելի եկեղեցիներ, որ հիմա Ճամի են։ Եւ ուրիշ երևելի շէնքեր, և հարիւրաւոր բաղնիքներ։

Ո՞ՐՆՈՒ ԹԱՂ ԿԱՅ։

312. Հասարակօրէն 80 հազար թաղ (մահալլէ) կայ կըսեն. սակայն միայն ստամպօլու բերդին մէջ 88 հազար 185 տուն կայ. և 100 հազար խարաՃի թուղթ կուտան այս վիՃակին մէջ։

Իսկ թագաւորական պալատը առջի լեռանը վրա շինած է ծովուն կողմը, ուր հին ատենը բերդ էր։ Պալատին շրջապատն է 4 մղոն, և 7 դուռ ունի. երկու պզտի դուռ ալ կայ որ թագաւորը անոնցմէ չանցնիր, և 3 մեծամեծ գաւիթներ կան։

Ներջինին մէջն է փողարանը (զարբհանան), որ առաջ Պաւշան դաշին կըլլար, ետքը հոս բերին, և հայոց յանձնեցին. նաև Սահապ այարն ալ հայոցմէ կըլլար առաջ։

Երկրորդ գաւիթին մէջն է Պուպպէ ալթըն, ուր է քառակուսի խոր-

հրդարան գմբէթաւոր. և ունի հրապարակ։ Իսկ երրորդ գաւիթին դուռը կըսվի դուռն երջանկութե. ուր է մեծ գանձատունը, Ճամին, բաղնիքը, Պաղտատ քէօշքին, Իսպահան, Հարէմը, և Իսպիէսը. որ է ընդարձակ բնակարան թագաւորին որդոցը. ուր կը պահեն տղաքը հայրը մեռնելէն ետև։

Այս պալատին մէջ երևելի շինվածներ կան. 48 բաղնիք և 6 Ճամի կայ. 2 գրքատուն ունի, 5000 գրքէն աւելի կան հանդերձ յոյն և լատին գրքերով։

Այս պալատը սուլդան մէհէմմէտ շինեց 1478 ին. իսկ հին պալատը (էսկի սարայ) 20 տարի առաջ շիներ էր։

Նոր շինվածք։

313. Պատմիչները կըսեն թէ 2500 տարի առաջ յունաստանէն ժողովուրդ մը եկաւ, նախ քաղկեդոն քաղաքը շինեց բնակեցաւ։ Այց 17 տարիէն ետև տեսան որ ստամպօլու դիրքը աւելի գեղեցիկ է, վիզաս իշխանը եկաւ սարայ պուռնիին տեղը

պզտի քաղաք մը շինեց, վերջը պարսից թագաւորը առաւ։

Յետոյ մռայլի թագաւորն առաւ ու մեծցուց. անկէ ալ Ղենացիք առին. որ սև ծով գացող նաւերէն տասանորդ կառնէին։ Վերջը անցաւ Հռովմայեցոց ձեռքը, որ իշխան մը կը դնէին աբխազդ անունով։

Սակայն յամի ՌՆ 326 ին կոստանդիանոս եկաւ գեղեցիկ զարդարեց ստամպօլ, և 14 մասն բաժնեց՝ թագաւորական քաղաք անուանելով ՌԾ-ԱԾՆԱՅ ընծայեց ու 40 օր ուրախութիւն ըրաւ։ Դայց առաջ Պօղազ հիսարը դուռմ գալէին քով քաղաք մը շինեց։ Ղտեն անցնելէն ետև շատ զանազան ազգեր լեցվեցան ստամպօլ մանաւանդ օսմանցոց ձեռքն անցնելէն ետև։ Ուր հիմա միլիոնէն աւելի մարդ կայ։

Սուլդան Ամէհմէտ յոյներէն կասկածելով շատ հայեր բերել տըվաւ Պուռսայէն և ուրիշ տեղերէն, և զանոնք տեղ տեղ բնակեցուց, ու 6 ժողովուրդ ըրաւ. և անոնց տեղերուն անունը օտալար դրաւ։

Ղ. Ջինը կըսվի Դարա կէօմրիւկ օտալարը. 2 Ալդա օտալարը. 3

Զարշամպա օտալարը. 4 Թուէքքէ օտալարը. 5 Արէօմիւրձի օտալարը. 6 Խրբռ գափու օտալարը։ Յետոյ եւ էլցաւ եօթներորդ Սօֆիանա օտալարը։ Սոնք ամէնը այլազգիներուն մէջն են հիմա անոնց մէջ աղքատները մնացին այն հին ժողովուրդէն։

Ռէջի պատրիարգը հայոց նստաւ ստամպօլ Յովակիմ եպիսկոպոսը Պուռսայու. որ 1461 ին սուլդան մէհէմմէտը բերել տրվաւ։

Ինգլէս տուն։

314. Ստամպօլ շատ փոփոխութիւն տակ լինելէն ետև, 1204 ին լատինացիք եկան կոխեցին առին հոռոմներուն ձեռքէն, և 57 տարի տիրելէն ետև նորէն հոռոմներուն անցաւ։

Իսկ օսմանցիք զօրանալէն ետև նախ Գալլիպոլի սուլդան Պայէզիտ և սուլդան Մուրատը պաշարեցին ըստամպօլ, բայց շատ բան և տեղ հոռոմներէն առնելով ետ դարձան։

Մինչև սուլդան մէհէմմէտ 1452 ին նախ շինեց ռումէլի հիսարին,

ու տարիէն ետև անթիւ զօրքով պաշարեց քաղաքը։

Ուր սարայպուռնիէն մինչև Փոփխանան շղթայ կապած ըլլալով նաւերը չի կրցան ներս մտնել. ուստի պէտք եղաւ 80 չէքտիրի ցամաքէն անցընել մինչև Թէրսխանէ։

Եւ այսպէս սկսան ծովով և ցամաքով ծեծկըվիլ զարհուրելի, և ամէն կողմէն կատաղութիւն քաղաքին վրա յարձակիլ։ Ուր յունացմէ 5 հազար զօրք կար և լատիններէն 2000։

Կայսրը շատ ջանաց որ հաշտուէ ընէ, Ճար չեղաւ։ Յետոյ սուլդան մէհէմմէտ իր զօրքին 3 օր ծոմ պահել տըվաւ, և իրենց խօսք տըվաւ թէ 3 օր թող կուտայ որ քաղաքը կողոպտեն։

Ուստի մայիսի 26 ին ամէն դիէն սոսկալի կոխեցին, մինչև յոյնք յուսահատեցան։ Ընատենը ծածուկ դուռ մը կար բացին ու դուրս թափեցան յոյներն որ թշնամիները շփոթեն։

Այլիս օսմանցիք վրանին թափեցան մեռցուցին. ու մտան այն դրռնէն ներս՝ սկսան ջարդել, և մէկալ

դրանքն ալ բացին ներս լեցվեցան, ըսկըսան կոտորել. անանկ որ արիւնը գետի նման կը վազէր. նաև 60 հազար հոգի ալ գերի ըրին քաղաքացիներէն։

Թագաւորն ալ այն խռովուած մէջ շփոթած՝ տեսաւ որ բանը բանէն անցաւ, աղաչեց որ զինքը մեռցընեն. ուստի մէկը զարկաւ մեռցուց, վերջը մարմինը գտան գլուխը կտրեցին ու Թագաւորին դրանն առջին դրին։

Նաև 3 օր բոլոր քաղաքը կողոպտեցին. եկեղեցիներն ու տները Թալլեցին, և սոսկալի մարդ ջարդեցին. յետոյ ամենուն գլուխը տարին աթմէյտանին լեռան պէս դիզեցին ու կուրախանային։

Ընկէ ետևէ Պալադիան ալ առին առանց ծեծի, որ Ֆինիվիզներուն ձեռքն էր, իշխանը եկաւ Թագաւորին ոտքն ընկաւ. վասն զի այն ժամանակը Ֆինիվիզներուն նաւերը շատ ըլլալով զօրացած էին այն կողմերը։ Ուստի երբոր հռոմները առին ըստամպօլլատիններէն, Ֆինիվիզները մնացին Պալադիա. և կամաց կամաց բերդ ալ շինեցին, որ 12 դուռ ունի։

Պալադիային ու ատամպօլու մէջ եղած ծովուն լայնութիւն է իբր 4 մղոն, որ քեահիաթխանան կը վերջանայ, և կերթայ մինչև սև ծովին բերանը և միւս կողմէն մինչև մառմառայի ծովը։

Ընդհանրապէս 18 մղոն է, և երկու կողմը զանազան պեղեր և պեղեցիկ տներ կան մեծամեծներուն, ուր ամառը կը բնակին. որ տօլմապաղչայէն և իսկիւտարէն սկսեալ մինչև խաւախ կերթան։ Դարձեալ քանի մը գօրաւոր բերդեր ալ կան թէ՛ սև ծովին բերանը, և թէ Ճերմակ ծովին։

Տես փոփոխութիւն ունայն աշխարհին,
որ ծովու նման՝ կը տարուբերին.
Կարծեն թագաւորք կը տիրեն երկրին,
բայց աշխարհն է տէր իրենց վերանին։
Քանի՞ թագաւորք եկան ու գացին.
իրենց աթոռներն այլոց թողուցին.
Մերն է այս աշխարհս ամէնն ալ ըսին.
աշխարհս իր տէրն է իրենք գնացին։

ԺԸ. ՀԱՄԱՐ

Ո՞ՐՆ Է ՈՒԼԱՀ ՊՈՒՂՏԱՆ։

315. Ուլահ պուղտան օսմանեան տէրութեան երևելի նահանգներն են. ուր հռոմ իշխան կամ Պէկ կը նստի օսմանցոց կողմանէ։ Ուլահ կամ Ալաք կոչու՝ գաղափ ըսել է. իսկ Պուղտան ճգապուր։ Այս աշխարհք Նոյէն կըսկըսի կերթայ մէկ ծայրը մինչև Նէմիէստան և մէկալ ծայրը Լէհ. նաև մէկ գետուլ մը իրարմէ կը զատվին։

Ուլահու երկայնութիւն է 100 ժամու ճամբայ, և լայնութիւն է 50. նաև շրջապատն է 700 մղոն։ Իսկ Պուղտանի երկայնութիւն ու լայնութիւը 60 ական ժամ կը քշէ։

Բնակիչները զանազան ազգէ եկած են. բայց սկիզբը հռոմայեցոցմէ են. վասն զի տրայիանոս կայսր շատ մարդ հոն ղրկեց բնակիչ ըրաւ. ինչպէս լեզունին կը վկայէ, որ լատինին աւրած լեզուն է։ Այսպէս ուլահի մէջ 13 հազար տուն կայ, շատ

գեղեր. և միլիոն մը բնակիչ երկու աշխարհքին մէջ կելլէ. որ առաջ կռապաշտ էին, բայց 6 դարուն քրիստոնեայ եղան հռոմի դաւանանքով։

Այս աշխարքին մէջ ամէն բան առատ է. ունի աղի հանքեր խիստ առատ, որ միլիոնաւոր աղ կելլէ տարուէ տարի։ Նաև ունի ոսկիի հանք անգործ մնացած. բայց երբոր գետերը կառատանան՝ հանքերէն ոսկիի մանրուք կը բերեն։

Սակայն ժողովուրդը միշտ աղքատ ողորմելի է մեծամեծներուն զրկողութեացը համար։ Որ հին ատենէն 'ի վեր բիրտ և անգութ ազգ են, ծոյլ և անպիտան. ամենևին տանջանքէ չեն վախնար։

Ինչպէս կը կառավարուին։

316. Ասոնք հին ատենը թագաւոր ունէին. յետոյ հռոմայեցոց տակը մտան։ Ընկէ ետև սրուֆերէն վոյվոտա կը նստէր. ու Պոյարներով կը կառավարէր։ Սակայն 1383 ին Եըլտըրըմ սուլդան Պայէզիտին հարկատու եղան, որ սուլդան մէհէմմէ-

տին օրը 12 հազար ոսկի տուրք կու-
տային։

Բայց միշտ խռովութիւնը մէջերնին
պակաս չէր։ Երկու Պէկ ալ հայոց-
մէ նստաւ Պուղտան, Պասապար և
Հարոն։ Նատենը պոյարներուն
ձեռքն ըլլալով իշխանութիւնը իրենք
կընտրէին Պէկը. բայց այնչափ խը-
ռովութիւն հանեցին որ օսմանեան տէ-
րութիւնը մոռցաւ որ Փէնէռցի հո-
ռոմներէն Պէկ դնէ։ Ասոնք 1716
ին տէրութիւնը Պէկ դրաւ Նիկողայոս
մաւրոքօրտադը։

Հա անկէ ետև Պէկութիւնը հո-
ռոմներուն անցաւ մինչև հիմա։ Յե-
տոյ տիվան թէրճիմանուին ալ ա-
ռին, որ առաջ քրիստոնէաւէ դարձած տաճիկները կընէին։

Այս Պէկերը երկու դուղով փա-
շայի մեծութիւն ունին, որ իրենց տեղը հասնելէն ետև եկեղեցնայ մէջ կօծվին։ Նաև ամէն պաշտօնատէր և գործակալ կանոնաւորելով թագաւոր կը ձևանան։ Սակայն տէրութիւնը զիրենք Վոյվոտա կը կոչէ։ Թէպէտ բացարձակ կը կառավարեն թագաւորի նման, և ամէն եկամու-

տը կը ժողվէն. որ ամէն մէկումը 7 հազար քսակէն աւելի է։

Մէկը Պուքրէշ կը նստի մէկալը Լաշ. որ այս տէրուէ մայրաքաղաքներն են, և ամէն ազգէ մարդ կայ, շատ վաճառականուէ կըլլայ։ Իսկ կառավարօղ պէյարներն են 23։

Ո՞Ր Է սոֆէա։

317. Օսմանեան տէրուէ անուանի նահանգն է սոֆէա. որ 16 գաւառ կը բաժնըվի։ Հին ատենը Թրակիա կըսվէր և ինքնագլուխ Թագաւոր ունէր, ետքը Պուլղարք ըսվեցաւ. վա զի Լատիրնէէն մինչև Դունա պուլղարներն ու առնաւուտներն են այս աշխարքիս գլխաւոր ժողովուրդը։

Իսկ սոֆէա մայրաքաղաքն է Պէլիրղատի մօտ, մեծութիւն է 3 մղոն, և դիրքն է զուարճալի. ուր Պէյլէրպէյի կը նստի։ Ինակիչներն են Պուլղար, և տաճիկ։ Այս քաղաքս Այասոֆիայէն շինված ատենը շինած է. որ Պալատան փաշան առաւ։ Այս աշխարքին մէջ երևելի քաղաքն է Լատիրնէ կամ Ադրիանուբօլի. այսինքն ատրիանոսի քաղաք,

որ 7 օրեան հեռու է ստամպոլէն. 9 մղոն է շրջապատը, և 12 աշտարակ, 9 դուռ ունի։ Բնակիչներն են 100 հազար հոգի. 600 տուն ալ հայ կայ։

Ուր երկու թաղաւորական պալատ կայ որ հին թաղաւորները նըստան, և 10 մեծամեծ Ճամիներ կան։ Բայց մէկը շատ փառաւոր է, 1000 պատուհան ունի, և ազնիւ սիւներով զարդարված է։

Հին ատենը հայոց ազնուականներէն շատը հոս կը բնակէին. որոնց մէջ եղաւ վասիլ կայսրը. բայց 1358 ին սուլդան միւրատն առաւ. և զանազան փոփոխութեց տակ ընկաւ։

Ասկէ անդին է Պուլղարիայն որ կը հանի Պոնա. այս գօրաւոր ազգէ Ասիայէն եկած է հոն։ Բաւական թաղաւոր ունէր և շատ պատերազմներ ըրած է։ Ասոնք առաջ կռապաշտ էին. բայց վլոդիմիր թաղաւորը քրիստոնեայ եղաւ 866 ին, ու Միքայէլ կոչվեցաւ. իրենց մայրաքաղաքն էր Պրնովա, և Նիկէպոլի։

Ո՞ր է Մակեդոնիա։

318. Մակեդոնիա սոփեայէն կըսկսի կը հասնի մինչև մօտա, որ հին ատենը պզտի թագաւորութիւն էր ինքնապլուխ, բայց Զէքսանդը թագաւորին ատենը այնչափ մեծցաւ որ բոլոր աշխարքը տակն առաւ։ Հիմա 8 գաւառ կը բաժնըվի, և մայրաքաղաքն է Սէլանիկ. որ է երևելի քաղաք վաճառականաց, ուր ամէն ազգէ մարդ կը գտվի. 3 եկեղեցի յունաց և 1 եկեղեցի լատինացոց կայ։ Կան 36 սինովայ, և 48 Ճամի կայ։ Գլխաւորմիէ Ճամին առաջ եկեղեցի էր. որուն մէջ 1000 սիւն կայ աղնիւ քարերէ, և ուրիշ գեղեցիկ բաներ։

Մօտ է հոն Ս. Յնոռօզ լեռը այնչափ բարձր որ 400 մղոն հեռուէն ստամպօլ կերևնայ կըսեն. որ է իբր ցամաքակղզի, և ցամաքին լայնուին է մղոնուկէս։ Հին ատենը 5 քաղաք կային այս լեռան վրան, որ փիլիստփանեերու տեղ էին. բայց հիմա 22 մեծամեծ վանքեր կան յոյն կրօնաւորաց. որ խիստ կեանք ունին և միս չեն ուտեր. մէջերնին աղէկ է-

զանակներ կան, որոնց գործքն է երկրագործութիւն։

Այս աշխարքին կից է Անգլիա կամ Անկիտերիէ. այսինքն Անառաստրոնոմ։ Ինակիչներն են բուն առնաւուտ, որ հին ատէնէն 'ի վեր զօրաւոր և Ճարտար են. և պատերազմի մէջ դիմացկոտ քաջ։ Անոնց սահմանակից են սրբոֆերը, որ նոյնպէս քաջ և զօրաւոր են. շատ անգամ ապստամբութիւն ըրած են. և ասոնց մայրաքաղաքն է Պէլբրզատ։ Նոյնպէս և Պօսնացիք են սահմանակից, և ասոնք ամէնը շքլաւոններէն եկած ըլլալով շատ կտրիճ են. և հին ատենը կռապաշտ ըլլալով մեռելին կերէին։

Անոնք սովորութիւն ունէին որ 3 անգամ միայն պիտի լվացվէին. մէյմը ծնած, մէյմը կարգըված, մէյմ՝ ալ մեռած ատեններին։ Աւ երբոր թշնամիներէն մէկը կը բռնէին, գլուխը կը կտրէին ու արիւնը կը ծծէին։

Եւրոպայի մէջ կան ուրիշ ընդարձակ նահանգներ և գաւառներ, որ փաշայութիւն և գատիութիւն կըսվին. զորօրինակ Սէրէս, Կէլիպօլու, օղու և այլն։ Անոյց ժողովուրդ

դը գրեթէ միակերպ է, նոր բան մը չի կայ։

Ո՞Ր Է ՀՈՌԱ։

319. Հոռա մակեդոնիայի և յունաստանի ծայրն է ընդարձակ ցամաքակղզի միջերկրական ծովուն մէջ. ամէն դիէն ծովով պատած է, միայն ցամաք լեզու մը ունի 3 մղոն լայն. որ հին ատենը շատ ուզեցին որ բանան, չի կրցան։

Հոռայի լայնութիւնը է 150 մղոն. երկայնութիւն է 180. իսկ շրջապատն է 600 մղոն։ Այս 19 գաւառ կը բաժնուի, և շատ քաղաքներ ունի։

Ինակիչները հին ատենէն 'ի վեր զօրաւոր կտրիճ ըլլալով շատ թագաւորներու հետ ծեծկըվեր են։ Ինչպէս Հանեայ պուռնին 30 հազար հոգի կան. ամէնքը աւազակ են ծովու վրրա։ Հոն է ստիւգեան լիճը, որուն ջուրը սաստիկ պաղ և հանքային ըլլալով խմողը կը մեռցնէ։ հիները դժոխքի լիճ կըսէին։

Հին ատենը քանի մը թագաւոր կը նստէր Հոռա. լակեդեմոնացոց թագաւորը աւելի զօրաւոր ըլլալով շատ տեղերու և կղզիներու տիրե-

ցին։ Յետոյ Հռոմներուն անցաւ. անոնցմէ ալ օսմանցին առաւ։ Վերջը վենետիկցիները առին ու երկար ատեն մնաց իրենց ձեռքը։ Ուր երբ Ղանիկ Մխիթար Աբբահայրը գնաց 1703 ին, և Մեդոն քաղաքը վանք մը շինեց գեղեցիկ եկեղեցիով։ Բայց 12 տարիէն ետև օսմանցիք նորէն գայթին տիրեցին մօռայու 1715։ Ուստի անատենը վանքն ալ կործանեցին, վենետիկ փոխադրեց վանքը նոյն Բաբունապետը։

Առաջ շատ երևելի քաղաքներ կային Մօռա. ուր ոլիմպիական խաղն որ կը խաղային բոլոր աշխարքը հոն կը թափէր. ուր էր նաև Պիսոսին տաճարը այնչափ մեծագործ և փառաւոր, որ 7 հրաշալեաց մէկը դրին. (գէս ՃԷՄ 546)։

Յամաքին մօտ էր Կորնթոս քաղաքը մեծ և հարուստ, որ առաջ շատ երևելի քաղաք էր. բայց հիմա ոչ մեծութիւնը մնաց և ոչ շէնքերը։

Աթինա քաղաքը բերդաւոր նոյնպէս Մօռայի մօտ է. որ հիմա 16 հազար բնակիչ ունի յոյն և այլազգ։ Հին ատենը շատ փառաւոր քաղաք էր երևելի շինվածներով և ուսում

նարաններով լեցուն։ Մինչև հիմա հին մեծագործ կռատուններուն և դպրոցներուն մնացորդը կայ. ուրն ալ Ճամի շինած է։

Մեծագոյն Ճամին կռատուն էր. որուն երկայնութիւնն է 217 ոտնաչափ. իսկ լայնութիւնն է 89. որ 46 մեծամեծ մէռմէռ սիւներու վրա կեցած է. ամէն մէկին բարձրութիւնն է 42 ոտնաչափ։ Այս շէնքին վրա գրած կայ անծանօթին ՀՅ. մէջը շատ սքանչելի բաներ կան. պատին վրա երկու քար կան, որ լոյս կը հանեն ֆէնձիդէս տեսակէն ըլլալով։

Եւ կան աշտարակներ և կուռքերու տեղեր, որ հին ատենը սքանչելի բաներ էին. հիմա անասուններ կը բնակին։

Հին քաղաքին շրջապատն էր 22 մղոն, և բնակիչներն էին 400 հազար հոգիէն աւելի։ Ուր արխօններ կը տիրէին. վերջը յունաց անցաւ։ Այս քաղաք էր մի միայն ուսումնականաց տեղ. ամէն տեղէ հոս կուգային բան սորվելու։ Շատ փիլիսոփաներ և երևելի մարդիկ ելած են անկէ, որ աշխարքը լուսաւորեցին գիտութիւնը։ Մեպէտ ամէն ուսում

վերջացաւ և հին մեծութիւնը գնաց, բայց բնակիչները մինչև հիմա ուսումնասէր են, և ամէնքը կարդալ գրել գիտեն։

Ո՞Ր Է ՀԷՐԷՊ։

320. Այս կղզին գրեթէ Հերմակ ծովուն մէջ տեղն է. զի Ասիայէն 140 մղոն հեռու է. և Յունայէն 130. իսկ շրջապատն է 600 մղոն. և գաւառ կը բաժնուի և շատ քաղաքներ ունի։

Հին ատենը 100 քաղաքէն աւելի կար, և 200 հազար բնակիչ. բայց հիմա շատ նուազ են։ Բնակիչները զօրաւոր և քաջ են. մանաւանդ առաջ, որ հին ատենէն 'ի վեր թագաւոր ունէին։ Լաբ զի՝ առջի թագաւորը Պոլիոս անուանով էր Այր Աբրահամու ատենը. ետքը մինոս թագաւորը աղէկ օրէնքներ դնելով շատ կարգաւորեց. և երկար ատեն ասոր օրէնքներով գացին մինչև որ քրիստոնեայ եղան Պօղոս առաքեալին քարոզութիւնը։

Այս կղզին շատ տէրուներ ձեռք անցնելէն ետև վենետիկցիք առին 1280 ին, և երկար տիրեցին. բայց

1669 ին օսմանցին առաւ, և մինչև հիմա կը տիրէ։

Ուր է Կիպրոս։

321. Այս կղզի ասիայի ցամաքին կողմը կիյնի իբր 42 մղոն հեռու լաթաքիայի ցամաքէն։ Երկայնութիւնն է 210 մղոն և լայնութիւնը 60. իսկ շրջապատը 700։

Բնակիչներն են Յոյն, Տաճիկ, Հայ և Լատին. բոլորը 50 հազար հոգի կելլեն, որ խորամանկ մարդիկ են։ Հին ատենը շատ բազմամարդ էին։ Առաջ 9 գլխաւոր քաղաքին մէջ 9 թագաւոր կը նստէին, որ Աստուած կըսվէին. յետոյ Եգիպտացիք տիրեցին, և անկէ հռոմայեցոց անցաւ. վերջը յոյնք տիրեցին։ Ինանցմէ ալ լատինացոց ձեռքը մնաց որ թագաւոր դրին։

Յակոբոս թագաւորը՝ մեր Լեւոն վերջի թագաւորին ազգական ըլլալով Հայաստանու թագաւոր կոչվեցաւ 1393 ին. վերջը օսմանցին առաւ։ Նոյնպէս Ասիայի ցամաքին մօտ է Ռոտոս կղզին և 2 մղոն ու կէս հեռու է ցամաքէն. շրջապատն է իբր 100 մղոն։

Ուրաջ ծովին տակն էր այս կղզին ետքը վեր ելաւ. և մինչև հիմա քարացած խեցեմորթներ կը գտնին լեռներուն վրան։ Բնակիչներն են յոյն և տաճիկ. հին ատենը ամէն արուեստ հոն ծաղկած ըլլալով անուանի էին։ Անանուանգ զի այնչափ ուսում կար, և այնչափ երևելի շինվածներ և կռատուններ, նաև 300 արձան կռոց, մինչև ամէնքը կը զարմանային։ Նաւահանգստին բերանը մեծ ահագին արձան մը կար արեգական, որուն քարձրութիւնն էր 80 կանգուն. մէկ ոտքը մէկ կողմն էր, մէկալ ոտքը մէկալ կողմն էր նաւահանգստին։

Մինչ զի տակէն մեծ նաւեր կանցնէին. որ 56 տարիէն ետև ընկաւ երկրաշարժութիւն։ Ութ 4 անգամ մեծ շարժ եղաւ, և 4 անգամ ջրհեղեղով ապականեցաւ։

Ո՞ւր է սատրը։

322. Այս կղզին Ռիոս կըսվի, որ յիշեալ ըսել է, 18 մղոն հեռու է ասիայէն Իզմիրի դէն. շրջապատն է 120 մղոն. բնակիչներն են 220 հազարէն աւելի. շատը յոյն և լատինեն։

Յին ատենը Երևելի գիտուններ ելան անկէ. հիմա շատը վաճառականն են ճարպիկ և քաղաքավար։ Յին բնակիչները Յունացիք էին զօրաւոր և քաջ. վերջը միհրդատ հայ թագաւորը զանոնք հարկատու ըրաւ։

Անկէ ետև յունաց և ճինովիզներուն անցաւ երկար ատեն. վերջապէս 1566 ին սուլդան սիւլէյման առաւ փիալէ փաշային ձեռքով։ Մէպէտ յետոյ Ֆիրէնցացիք և վենէտիկցիք առին, բայց շատ չանցաւ նորէն առին օսմանցիք։ Ներմակ ծովին մէջ շատ կղզիներ կան մեծ և պզտիկ. բայց շատը անբնակ են։ Երևելիներն են 48, որոնց բնակիչները 180 հազար հոգի կելլեն. շատը յոյն են, որ տաճկի տակն են։ Անոնք առաջ մէյմէկ տէրութիւն էին և զանազան թագաւորութիւնց տակն ընկան։ Վերջի կղզին կը սեպվի Պօղճա ատան մառմառայի ծովին բերանը. որ առաջ վենէտիկցոց ձեռքն էր, և 1657 ին առին օսմանցիք։

Այսպէս խեղճ մարդիկ միշտ կը փոփոխին,
կարծեն թէ ժառանգ կըլլան բոլորին.
Աշխարքս իր տեղն է, մարդիկ գնացին,
մերն է ըսելով կը խրոխտային։
Ի՞նչ զօրաւոր մարդ տիրող բոլորին,
քան զմիհրդատ սարսող աշխարհին.
Բայց ան ալ ձգեց աշխարհս իր կային,
գնաց խառնեցաւ անցողաց կարգին։

ԾԹ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ԼԷՀԱՍՏԱՆ։

323. Էհաստան Պուղտանէն կըս կըսի մէկ ծայրը մոսկով կերթայ, մէկալը մաՀառստան նաև Բրուսիա։ Տարածութիւնն է 214 հազար մղոն. և բնակիչներն են 12 միլիոն։

Բուաջ հայոց ազգէն ալ շատ մարդ կար հոն 60 հազարէն աւելի. որ նախ օգնութիւն ընելու գնացին մոսկովիտներուն Պեմետրեայ դքսին աղաչանքովը։

Որոնք ապա 1062 ին հաստատվեցան լեհաստան։ Բայց յետոյ պակսելով հիմա 10 հազար հոգի հազիւ մնացին. անոնք ալ իրար լեհ դարձած

էն։ Իսկ լեհերուն սկիզբը շկլաւոն-
ներէն եկած են, ինչպէս լեզունին
ալ յայտնի կընէ. որոնց թագաւո-
րութիւը 964 ին սկսաւ։ Եւ Էնա-
գա առջի թագաւորը թագաւորե-
լէն ետև, ազգնալ իրեն հետ քրիս-
տոնեայ եղաւ։

Յետոյ զանազան ազգերէն ալ
թագաւոր նստեցան, որ զօրաւոր
մարդիկ ըլլալով լեհաց տէրութիւը
մեծցուցին։ Եւ օսմանցոց դէմ
շատ պատերազմելով նէմցեաները ա-
զատեցին։

Սակայն ժամանակէն ետև իրենց
անմիաբանութիւը համար այս տէրու-
թիւը քիչ քիչ տկարացաւ։ Մինչև
իշխաններուն նախանձելովը թագա-
ւորը ձգեցին. ու տէրութիւը մոսկով-
ներուն ձեռքը մատնեցին։ Որոնք
ստանիսլաւոս վերջի թագաւորը բէ-
դերպուրկ տարին. ուր 1798 ին մե-
ռաւ։

Ինչպէս էր կառավարութիւը։

324. Առաջ թագաւորին ձեռքն
էր կառավարութիւը. որ նախարար-
ներովը կը կառավարէր. յետոյ իշ-

խաններուն անցաւ՝ անանկ որ Թագաւորը բան մը չէր կրնար ընել։

Այս իշխանները 146 հոգի էին որ կըսվէին խորհրդական Թագաւորութիւն. և 5 դաս կը բաժնըվէին։ Առջի դասն էր եպիսկոպոսներուն, որ երկու տարին անգամ մը ընդհանուր ժողով կընէին։

Ժողովքին մէջ ամէն ազնուականներուն խօսքը կանցնէր. ուր Թագաւորն ալ կուգար իր հագուստովը կը նստէր։

Ան որ ամէնքը միաբան բան մը որոշէին, Թագաւորին հետ միատեղ կը լմննար. Թէ որ մէկ հոգի մը չի միաբանէր, ոչինչ կըլլար։ Անոր համար շատ անգամ կը ժողվըվէին, ու բան մը չէին կրնար որոշել ամենուն սիրտը մէկ չըլլալուն համար. մինչև կործանեցին տէրութիւնը։

Ինչպէս կը բաժնըվէր։

325. Այս տէրութիւնը ընդհանրապէս կը բաժնըվէր լեհ և լիդվանիա։ Լեհը կը բաժնըվէր 3 նահանգ։ Մակայն 1773 ին նէմցիները 2700 մղոն տեղ առին լեհերէն։ Ռոսկոմն ալ 3440 մղոն տեղ առաւ, որ էր

գլխաւոր մասը. վերջը մնացածն ալ բաժնեցին։ Նոյնպէս Նրուաներ՝ն ալ վարսավիա Թագաւորանիստ քաղաքն առին տանձքայով և բոլոր գաւառներով։

Ահա այսպէս իշխաններուն անմիաբանութիւնը իրեք տէրութիւն մէջ բաժնըվեցաւ այս քաջ տէրուին, որ այնչափ աղէկուն ըրեր էր ամենուն օգնութիւն հասնելով օսմանցոց դէմ։

Ուստի 1773 ին վերջացաւ լէհի տէրուիը. որ սկսած էր լէսքօ իշխանէն յամի՝ն 550 և եռքը Թագաւոր անուանեցան։

Ո՞ր է Վարսավիա։

326. Վարսավիա Թագաւորանիստ քաղաքն է լեհին՝ մասովիա գաւառին մէջ. որ է մեծ բաղմամարդ և փառաւոր։ Շատ երևելի եկեղեցիներ և մեծամեծ շէնքեր ունի։

Մէկ սքանչելի գրքատուն մը ունի. ուր 200 հազար տպած գիրք, և 4 հազար ձեռագիր կան։ Ռուսի Թագաւորանիստ քաղաքն էր գրագով. որ է նոյնպէս մեծ և փառաւոր քաղաք. ունի մեծ եկեղեցի, ուր Թագաւորները Թագ կը դնէին։

Մեծ ուսումնարան մը կայ հոն 11 դպրոցով, ուր ամէն գիտուն կը սորվեցնեն։ Նոյնպէս և իրվով է իշխանանիստ և մեծ քաղաք, որ 30 հազար բնակիչ ունի։

Հոն կը նստի հայոց Եպիսկոպոսը, որ առաջ 16 եկեղեցի ունէր տակը. ՈՒԾԱԾՆԱՅ եկեղեցին աթոռանիստ շատ փառաւոր է։

Ո՞Ր Է ԼԷՎԱՆԷԱ։

327. Այս մեծ աշխարքը մոսկովին դին է. որ առաջ ինքնագլուխ ըլլալով կռապաշտ էին բնակիչները, և բոլոր երկիրն էր անտառ։

Սակայն ԺԴ դարուն Յագելոս իշխանը մկրտեցաւ ու փեսայ եղաւ ԼԵՀ թագաւորին, և բոլոր ժողովուրդն ալ քրիստոնեայ եղաւ։

Նպատեանը այս ընդարձակ աշխարքը ԼԵՀԱՍՏԱՆԻ հետ միացաւ. անկէ ետև քաղաքականուն և վարուցան սորվեցան ու շատ ծաղկեցան. որ շատ գաւառ և քաղաք ունի հիմա, բայց բոլորը մոսկովին տակն է։

Ո՞Ր Է ԷՐՈՒԱԷԱ։

328. Ռուսիայի տէրութիւնը լեհին ու նէմցէին մէջն է. սկիզբը նեմցէէն զատված էր. յետոյ ուրիշ տէրութեց հետ միանալով մեծցաւ, ու ինքնագլուխ երևելի թագաւորութիւն մը եղաւ։

Տարածութիւնն է 3 հազար մղոնէն աւելի. և 5 միլիոն մարդ ունի բաց 'ի լեհէն։ Իրենց լեզուն ալ նէմցէի լեզուն է, ազգն ալ. թէպէտ ուրիշ ներէն ալ շատ խառնած կայ։

Սակայն Պրանտէպուրկ նահանգին բնակիչներն են սուէվիացիք, որ իրենց թագաւորովը եկան հարկատու եղան նէմցէներուն՝ Հինգերորդ դարուն մէջ։

Յետոյ գլուխ քաշեցին ինքնագլուխ եղան։ Իսկ 1135 ին Ալբերտոս իշխան ըլլալով շատ կարգաւորեց տէրութիւնը ուսում և արուեստ հաստատելով. մինչև ամէնքը քրիստոնեայ եղան։

Ինկէ ետև երբեմն նէմցէներուն կը հնազանդէին, և երբեմն ինքնագլուխ էին ամէնքը միաբան։ Այլ 1411 ին նէմցէի կայսրը իրենց ինք-

նագլուխ իշխան դրաւ. որուն ցեղէն փիտէրիկոս դուքսը թագաւոր եղաւ 1701 ին, ու թագաւոր կոչվեցաւ բրուսիայի։ Ինկէ ետև հետզհետէ պայծառացուցին և զօրացուցին իրենց ազգը. և հիմա երևելի տէրութի եղաւ։ Սակայն 1535 էն ետև հերետիկոսական աղանդ մտաւ մէջերնին, և քիչ քիչ բոլոր տէրութիը լուտերական և կալվինական եղաւ։

Թագաւորն է գլխաւոր կառավար. որ 4 ատեան ունի, և իշխանները ժողով կընէ ու կորոշէ իր վճիռը։

Ինչպէս կը բաժնվի։

329. Բրուսիա 4 մեծամեծ նահանգ կը բաժնվի. Պրանտէնպուրկ, Բոմէռանիա, Բրուսիա, և Պռուշլեհաց։ Պրանտէնպուրկ շատ քաղաքներ և զանազան գաւառներ ունի 650 հազար բնակիչներով։ Այս նահանգին մէջն է Պէռլին թագաւորանիստ մեծ քաղաքը. որուն շրջապատն է 8 մղոն. 15 դուռ ունի, և 150 հազար բնակիչ։

Շատ երևելի շէնքեր և դպրոց-

ներ ունի։ Այս քաղաք 5 քաղաքէ միացուցած է. բայց ասկէ մէկ քանի երևելի քաղաքներ ալ կան, որ զանազան թագաւորներ շինած են. բոլորն ալ զարդարած և բազմամարդ են. նաև ամէն պիտուական բան ունին։ Իսկ Հնդիանիա Պալդիկ ծովին քով կելնի. երկայնութիւն է 60 մղոն, և լայնքն է 13 մղոն։ Այլ բնակիչներն էին վանդալ և սլաւ ազգերը. եաքը Հրուսիայի հետ միացաւ։

Ուր շատ գաւառներ և քաղաքներ կան։ Նաև մայրաքաղաքը կրավիՇ դէդդին՝ բարեշէն և գեղեցիկ։

Այնպէս Հրուսիայի նահանգն է ընդարձակ 62 քաղաք, և 600 հազար բնակիչ ունի. որուն գլխաւոր քաղաքն է գրօլէվից մեծ և բազմամարդ. որ մեծամեծ շինվածներով և եկեղեցիներով զարդարված է։

Ո՞Ր Է ՊԱՆԻՅԱ։

330. Այս ազատ քաղաքը լեհաց սահմանին մէջն է պրուշի կողմը. իսկ բոլոր նահանգին տարածութիւն է 1936 մղոն և 4 գաւառ կը բաժնը-

վի։ Առաջ ինքնագլուխ իշխան ունէր, ետքը Բրուսիայի հետ միացաւ։

Այս կողմը քանի մը քաղաքներ կան. բայց գլխաւորն է տանձքա փարթամ և բազմամարդ քաղաք, որ շատ երևելի տեղ է վաճառականութենէ. 4 մղոն հեռու է պալթիկ ծովէն. ուր տարին 1000 նաւէն աւելի կերթայ։

Ինակիչներն են իբր 50 հազար. հին քաղաքը 800 տարի առաջ շինվեցաւ, իսկ նորը 500 տարի։ Առաջ ազատ ինքնագլուխ գատաստան ունէր. բայց ետքը բոլոր Պրուշներուն անցաւ. ուր օգոստոսի ամսուն մեծ տօնավաճառ (բանայիր) կըլլայ։ Մեծ վաճառ կըլլայ Արէհրիպարի, որ պալթիկ ծովէն կելլէ կտոր կտոր. նաև անտառներուն մէջ ալ կը գտվի հողին տակը։ Դլաճ կտորը ձիւթի նման է. բայց կեղևին տակը պատուական Արէհրիպար կայ։

Այս ազգերն ըլլան քեզ խրատ կանան,
որ միշտ կը ջանան ըլլալ մեծանուն.
Գիտուութիւն ուսմամբ բարի նախանձով,
որ օրէ եղան ուրիշին կանոն։

Թէ նոյն կանոնով հոգիդ մեծարես,
Նովին կրթութիւն քեզ կարգաւորես.
Աշխարհին եղեր դուն միայն տէր ես,
Կանոն օրինակ իրենց կընեն քեզ։

Կ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ԳԵՐՄԱՆԻԱ։

331. Գերմանիա է նէմցէստան, որ լէհէն կըսկըսի մէկ ծայրը կերթայ մաՀառստան և մինչև պալթիկ ծով. մէկալ ծայրը Գոսնայէն մինչև իդալիա կերթայ և վէնէտիկի ծովէն կանցնի մինչև հօլանտա և ովկիանոս կը հասնի շիտակ գծով։

Շատ զանազան ազգեր և աշխարհներ ունի. զորօրինակ Մահառ, Գալիան, Խուվաթ, ևՆ։ Սակայն միայն գերմանիայեին տարածութիւնն է 178 հազար մղոն. 2300 քաղաք ունի. 80 հազար գեղ, և 27 միլիոն բնակիչ։

Հին ատենը այնչափ վայրենի էր այս ազգն որ ոչ քաղաք ունէին և ոչ բնակութիւն։ Ուստի նախ հռոմայեցիք սկսան քաղաք շինել նէմ-

ցէստան. վերջը իրենք ալ սկսելով քիչ քիչ ծաղկեցուցին. անանկ որ հիմա երևելի աշխարք եղաւ թէ գիտութիւն և թէ վաճառականութիւն։

Ասպէ կոփան։

332. Նէմցէները Յաբեթի ցեղէն են և զանազան ազգերու հետ խառնրված են. ինչպէս յայտնի է իրենց բնութիւնէն և լեզուէն. որ են անկեղծ քաջասիրտ և գիւտաւոր մարդիկ. մի զի տպագրութիւը, վառօդը, պատկերք փորելը, և ուրիշ շատ բաներ անոնք հնարեցին։

Ինն ատենը հինգ իշխան կը նրստէին հոն. յետոյ գաղղիացոց տէրութիւնը հետ միանալով մեծ կարոլոսին օրը մէկ տէրուն մը եղաւ. որ 800 ին կարոլոս հռոմայու կայսերութիւն պատիւ առաւ. յետոյ 843 ին իր որդին լուտովիկոս առջի թագաւոր նստաւ նէմցէատանու.

Ասոր ցեղէն թագաւորելով շատ ընդարձակեցին տէրուները մինչև 911 ին։ Ինկէ ետև զանազան իշխաններէն թագաւոր նստան, և երբեմն անգլուխ մնացին. մինչև 1273 ին

Ռոտոլֆոս կոմսը թագաւոր եղաւ նէմցէի։

Հա մինչև հիմա ասոր ցեղէն կուգան նէմցէի թագաւորները, որ կըսվին կայսր Հռոմայ. բայց զանազան իշխաններով կը կառավարեն, և գըլխաւորներն են 10. որ ատակ ալ կը կտրեն։

Ալպրէխտ Հընդրեն Թագաւորը։

333. Թագաւորին ընտրուիր 9 իշխանաց ձեռքն է, որ կըսվին Կայսրընտիր. իրեքը արքեպիսկոպոս են, մէկալներնք աշխարհական։ Որոնք դաշինք կընեն կայսեր հետ թէ ինքնագլուխ ծանր բան մը չի կտրէ։ Նաև երդում ալ ընել կուտան որ իր զաւկընեռուն չի սեփականէ կայսերութիւնը։

Ընդ՝ երբոր թագաւորը կը մեռնի՝ Մակոնցայի կայսրընտիր արքեպիսկոպոսը կը հրաւիրէ մէկալ կայսրընտիրները. որոնք միատեղ խորհուրդ ընելէն ետև, ամէնքը փառաւոր հագուստով զարդարված մեծ հանդէսով կերթան՝ որ Արդուղիմէոսի եկեղեցին. պատարագէն ետև

խորանին առջին երդում կընեն, որ ամենէն արժանաւոր անձն ընտրեն։

Յետոյ կերթան մատուռին մէջ միաբան վիճակ կը ձգեն. երբոր վիճակը կելլէ Թագաւորին տղուն կամ եղբօրը վրա, կը հրամցընեն որ գայ Թագաւոր պսակվի։ Ասոնք նորէն մեծ հանդէսով կուգան եկեղեցին նոր կայսեր հետ, ու պատարագ կըլլայ։ Պատարագէն ետև կայսրը երդում կընէ հաւատարիմ մնալու համար, և Հռոմայի Հայրապետին հնազանդ ըլլալու համար.

Ընտրենը արքեպիսկոպոսը եօթն անգամ կօծէ զինքը. և Թագաւորական հագուստը կը հագցընեն։ Եւ նոյն արքեպիսկոպոսը Թագը գլուխը դնելով կը պսակէ կոչելով Հռոմայի կայսր։

Ի՞նչ կրօն ունին։

334. Էմիրները առաջ կռապաշտ էին. բայց 7 դարուն Կէլիանոս Եպիսկոպոսը Ռալանտայի՝ քարոզելով լուսաւորեց զանոնք. և յետոյ ուրիշ Եպիսկոպոսները աւելի ծաղկեցուցին քրիստոնէութիւնը։

Ամ 723 ին վանիսիակիոս Եպիսկո-

պոսը աւելի աշխատելով Լուտովիկոս թագաւորին օրը բոլոր աղգը քրիստոնեայ ըրաւ։

Սակայն Մարտինոս Լուտեր և իր աշակերտը կալվին 1517 ին իրենց գարշելի հերետիկոսութիւնը ծաւալեցին նէմցէատան. մինչև սաքսոնիացիները և բրուսները հերետիկոս եղան։ Մէպէտ կայսերական տէրութեան կրօնն է ուղղափառ, և ամէն տեղ ծաղկած է. նաև ամէն իշխան պարտական է որ ժողովուրդը ազատ պահէ ուղղափառ կրօնը պահելու։

Ո՞ւր կը բաժնուի։

335. Գերմանիա 9 շրջանակ կը բաժնուի. առջինը կըսվի Ա.ստրիա, որ մաճառստանու և Լիդալիայի մէջ տեղը կկայնի։ Տարածութիւն է 2025 մղոն, և ամենէն մեծ ըլլալով շատ գաւառներ ունի։

Հիմակվան թագաւորները Ա.ստրիայէն են. որուն գլխաւոր քաղաքն է Վ էնա կամ Գէջ. որ երևելի մայրաքաղաք է բոլոր այս տէրութիւնէ, հարուստ և մարդաշատ. դուռնա գետին հարաւակողմը կկայնի. 10

դուռ ունի և 270 հազար բնակիչ. նաև ամէն ազգէ մարդ կայ հոն։

Եւ Ստեփաննոսի մայր եկեղեցին շատ փառաւոր է 37 խորանով։ Ուր շատ մեծաշէն գերեզմաններ կան թագաւորներուն։

Նոյնպէս շատ երևելի շինվածք է կայսերական պալատը և գրքատունը, որուն մէջ անհամար գրեանք կան. և մեծաշէն դպրոցներ և ուսումնարաններ, որ ամէն գիտութիւն և արուեստ կը սորվեցնեն։ Ինչև բնական խուլերուն և համրերուն գրել շարագրել կը սորվեցնեն (11)։ Այս մայրաքաղաքս առաջ պզտի քաղաք էր. բայց 1237 ին փիտերիկոս կայսր մեծցուց և ազատ քաղաք ըրաւ։

Ո՞ւն է Ի՞ զրջանակը։

336. Այս տէրուն երկրորդ մասն կամ շրջանակն է Պաւարիա. որուն տարածութիւնն է 1020 մղոն. 20 իշխանութիւն և շատ քաղաքներ ունի։ Բնակիչները գաղղիացւոցմէ եկած են. որ 589 ին եկան պոյէմիա։ Պուռնա գետը այս աշխարքէն կելլէ, որուն գլուխն է սալիզպուրկ։

Այս աշխարքը հին ատենը կոմս և թագաւոր ունէր. եաքը կայսեր անցաւ։ Սակայն վերջի տարիներս գաղղիացիք թագաւոր դրին հոն. հիմա նորէն կայսեր անցաւ։

Մէկ միլիոն ոսկի եկամուտ ունի և 30 հազար զօրք. գլխաւոր մայրաքաղաքնէ Մօնաքօ գեղեցիկ և քաղմամարդ. որ 50 հազար բնակիչ ունի։ Ուր 19 վանք, 19 եկեղեցի և շատ երևելի շէնքեր կան։ Նոյնպէս սալիզպուրկ է գեղեցիկ և փառաւոր քաղաք աղուոր շէնքերով։ Ուր կը նստի արքեպիսկոպոսը, որ է կայսրը ընտիր և իշխան։

Ո՞Ր ԵՆ ՀԷՍԼԱՆԴ։

337. Նորրորդ շրջանակն է Սիւէվիա կամ Գերմանիա. որ 494 ին ազգաններէն եկան հոս բնակեցան. այս պատճառաւ բոլոր նէմցէստան ալմանիա կըսվի։ Տարածութիւնն է 729 մղոն. ունի 8 իշխանութիւն, 31 ազատ քաղաք, և այլ շատ գաւառներ և քաղաքներ։ Ինչպէս է վիրդէմպէրկ, որ 68 քաղաք ունի. և Գէկուսդա, որ 60 հազար բնակիչ ունի։

Նաև Ֆռանքֆօռդ կայսերական

հին քաղաքը 60 հազար բնակիչ ունի. շատ անգամ թագաւորը հոս կընտրեն։

Ոյնպէս Որէմպերկ ազատ քաղաք է մեծաշէն. որ 41 իշխաններ կը կառավարեն, կէսը ծեր կէսը երիտասարդ. որոնք միշտ միատեղ խորհելով բան կը տեսնեն. ծերը երիտասարդին խորհուրդ կուտայ, երիտասարդը սիրտ կուտայ։ Կան և շատ եպիսկոպոսանիստ և աբբայանիստ մեծամեծ քաղաքներ զանազան շրջանակներուն մէջ, ամէնն ալ փառաւոր և բազմամարդ, որ ունին ուսումնարաններ և երևելի գրքատուններ։

Ո՞ր է սաքսոնիա։

338. Այս աշխարքս ութերորդ շրջանակին մէջն է, և 1950 մղոն է տարածութիւնը. 9 իշխանութիւն, շատ գաւառներ և քաղաքներ ունի։

Այրաքաղաքն է Ցրէսատա՝ գեղեցիկ մեծ և փառաւոր. որ Լէյպզիգ գետին երկու գին շինած է երկայն կամուրջով 800 քայլ, 19 կամարով։ Այս քաղաքին մէջ 90 հազար ժողովուրդ կայ. շատ երևելի շէնքեր և ուսում-

նարաններ ու եկեղեցիներ ունի։ Հոս կը նստի կայսրընտիրը. որուն թագաւորի պատիւ ալ տրվին, վարի սաքսոնիային ալ տիրելով։

Իսկ Ս արի սաքսոնիային տարածութիւնն է 1420 մղոն, որ շատ գաւառներ և քաղաքներ ունի. մինչև 40 հազար զօրք կը հանէ. և միայն Մակտէմպուրկ նահանգը 300 հազար բնակիչ կայ. շատը լուտերական են։ Իսկ Համպուրկ քաղաքը 100 հազար մարդ կայ, որ Լիպագետին քով շինած է, և վաճառականի տեղ է։ Սաքսոնիացիք հին նէմցէներէն եկած են. բայց լուտերի և կալվինի հետևելով հերետիկոս եղան, թէպէտ իրենց իշխանը ուղղափառ մնաց։

Ո՞Ր Է ՊՕՀԷԴԱ։

339. Այս աշխարքը նէմցէստանէն դուրս է, Պավարիայի կողմը կիսի տարածութիւն է 961 մղոն, և 2 միլիոնէն աւելի բնակիչ ունի. որոնք շքլաւոններէն եկած են, և անոնց լեզուն կը գործածեն տեղ տեղ։
Աւաջ ասոնք յունաց ծէսով էին. յետոյ լատինի ծէս մտան։ Ուր 589

տարի յետոյ առաջ Պոյացիք եկան այս տեղերուն տիրեցին. ետքը շքլաւոններն եկան զանոնք հանեցին, իրենք տիրեցին. թէպէտ հին ժողովուրդին անուամբը Պոհէմիա կըսուի։

Անոնց առջի դուքսն եղաւ Պրիմիսլաւոս ուԹերոորդ դարուն, որ ինքնագլուխ տիրեց որդւոց որդի. ետքը Թագաւորի անուն առաւ, և մինչև հիմա իրենց իշխանը Թագաւոր կըսուի. որ կայսրընտիր է, և նէմցէի կայսեր հպատակ։

Պոհէմիացիք 6 դարուն յոյն քարոզիչներով քրիստոնեայ եղան. որոնց մայրաքաղաքն է Պրակա՝ գեղեցիկ և բազմամարդ. ուր 100 հազար քրիստոնեայ և 16 հազար հրէայ կան։

Այս քաղաք չորս մասն է. և մեծ գետ մէջէն անցնելով, մեծ կամուրջ մը շինած է երկու կողմը՝ աբերու արձաններով զարդարված. ուր կան շատ երևելի շէնքեր և դպրոցներ։

Պոհէմիայի տակն է Մորավիա, որ 99 քաղաք ունի. և Լուսացիա, որ 29 քաղաք ունի. նաև Շլէզիա նահանգն որ մաՀառի սահմանն է. որուն տարածուին է 650 մղոն. 180

քաղաք ունի և միլիոն ու կէս բնակիչ։

Ո՞Ր Է ՄԱՃԱՌ։

340. Մաճառստան կիլնի նէմցէ-ին՝ շքլաւոնին և ուլահին մէջ տեղը. տարածուին է 76 հազար մղոն. 51 քաղաք և իբր 5 միլիոն բնակիչ ունի։ Որոնց սկիզբն է Յունկար Թաթարներէն, որ հին ատենը եկան հոն տիրեցին՝ շատ պատուական երկիր ըլլալուն համար։ Ուր յետոյ շատ զանազան ազգեր ալ գնացին խառնըվեցան. անոր համար իրենց բարքն ալ զանազան է։ Դրաջ շատ կոպիտ էին. հիմա աշնուականները բարկըցած են ու մեծասիրտ են։ Դայց հասարակ ժողովուրդը հաստ և ծոյլ են, այլ սրտոտ և պատերազմող մարդիկ են։ Ունին դպրոցներ և ուսումնարաններ. սակայն իմաստուն մարդիկ քիչ կելլեն իրենցմէ։

ԻՆՉ ԼԵԶՈՒ Է ԽՕՍԻՆ։

341. Մաճառներուն լեզուն Թաթարէն ելած ըլլալով՝ մինչև հիմա շատ բառը Թաթարի է։ Դայց գիր չունին. հին ատենը Թաթարի գիր

կը գործածէին, քրիստոնեայ ըլլա-
լէն ետև լատինի գիրը կը գործածեն։
Նոյնպէս եկեղեցնայ մէջ լատինի
լեզուն և ծէսն է. թէպէտ երգերը
իրենց լեզուով կերգեն։

Այս ազգը չինուսմաչինի կողմէն
եկած է. որ 374 ին մահառատան
գացին միլիոնէն աւելի. որոնց ա-
ռաջնորդն էր Պալամպար զօրա-
պետը։

Այսոր թառը Այոտիղաս այնչափ
զօրաւոր մարդ էր, որ բոլոր եւրո-
պայի տիրեց ու մինչև սպանիա գը-
նաց, և շատ մեծ բաներ ըրաւ։ Սա-
կայն որդիքը իր տեղը չի բռնեցին,
թէպէտ ասոնց տէրուքը ժամանակ
մը տևեց. մինչև որ մեծն Կարոլոս
բոլոր մահառներուն տիրեց, ու քա-
րոզիչներ ղրկեց որ բոլոր ազգը
քրիստոնեայ ըրին։

Նոքը Աբդաւ խանին օրը նորէն
եկան հետերնին միանալով շատ տեղ
առին աւրեցին, մինչև 110 տարի
քշեց. անկէ ետև սկսան խաղաղիլ,
մանաւանդ Կէլիզ խանին օրը. որ
սկսաւ ծաղկեցընել ամէն արուեստ,
նաև քրիստոնէութիւն։

Մինչ զի Բատվա քաղաքը քրիս-

տոնեաներ երթալով հոն մէկէն 50 հազար հոգի դարձուցին, և խաչն ալ մկրտեցին։ Ասոր որդին՝ որ Աղեպերտ եպիսկոպոսէն մկրտվեցաւ ու Ստեփաննոս կոչվեցաւ. որ թագաւոր օծվելով առջի թագաւորն եղաւ մաձառներուն 1000 ամին։

Այս բարեպաշտ թագաւորը այնչափ սրբակաց էր որ քիչ ատենին մէջ բոլոր ժողովուրդը հաւատքի բերաւ, ու շատ վանքերով և եկեղեցիներով աշխարքը զարդարեց։ Նաև գեղեցիկ կանոններ և օրէնքներ դրաւ, ու 38 տարիէն ետև սրբութիւն մեռաւ. որ՝ որի կարգ դրին և տարուէ տարի տօնը կը կատարեն։

Ասատենը հատաւ թագաւորին ցեղը. ուստի ուրիշ ազգերէն թագաւոր կընտրէին։ Բայց 1705 ին սկսան նէմցէի թագաւորին ցեղէն թագաւոր դնել. և մինչև հիմա նէմցէի թագաւորը իրենց թագաւոր կօծվի, և անոր հպատակ են։

Ինչպէս է կառավարությունը։

342. Աղեպէտ մաձառի տերութիւն գլուխն է նէմցէի թագաւորը, բայց կառավարությունը իշխաններուն ձեռքն

է։ Ամանք աշխարհական իշխաններ են, ամանք ալ եպիսկոպոսներ են. և 3 տարին անգամ մը ժողով կընեն ամէնքը միատեղ. բայց որոշմունքը Թագաւորը կընէ։

Այսոնց գլխաւոր ատեանը Ռ ենն է, և մեծամեծ բաները հոն կը վճռէն։ Բայց ուրիշ բաներու համար 3 ժողով ալ մանառստան ունին, որով կը կառավարեն տէրութիւնը. և իրենց զօրքը 100 հազարէն աւելի է։

Ինչպէս կը բաժնուի։

343. Այս աշխարհք կը բաժնուի ստորին և վերին մանառ. ստորինը արևելեան կողմն ընկալով գունա գետին դին է. որ 13 իշխանութի և շատ քաղաքներ ունի. զորօրինակ Երէսպուրկ, որ է ազատ մայրաքաղաք, շատ երևելի շէնքերով և եկեղեցիներով. ուր կը լայ իշխաններուն ժողովը։

Նոյնպէս Ռէշտ գեղեցիկ քաղաք է. ուր է մանառներուն մեծ ատեանը։ Իսկ Պուտիմ է հին քաղաք փառաւոր։ Բաց ասոնցմէ այս մասին մէջ ուրիշ շատ քաղաքներ և գեղեր կան։

Այց վերի մասը դէպ՝ի Էհաստան և Դրանսիլվանիա կիյնի, որ շատ գաւառներ և քաղաքներ ունի։ Հոն է վարատինի մեծ բերդը անառիկ, որ Դունա գետին վրա շինած է։ Այր կան հայերը, և փոքր վանք մը Մխիթարեան վարդապետաց։ Նաև դըմբշվար փառաւոր քաղաքը, ուր շատ շէնքեր կան։

Ո՞ր է Դրանսիլվանիա։

344. Այս աշխարքը ալ մաձառաստանու մասն է ուլահի գին, որուն տարածուին է 950 մղոն, շատ գաւառներ և քաղաքներ ունի։ Ինն կիշներն են մէկ միլիոն և 250 հազար հոգի. որ են Մաձառ. Սաս, Ուլահ, և Հայ։ Սասերը գերմանացոցմէ եկած են հին ատենը. բոլորն ալ աղանդաւոր են. խիստ շատ կը մտածեն, ետքը բանի մը ձեռք կը զարնեն։

Իսկ հայերը 17 դարուն եկան Դրանսիլվանիա, ու քաղաք շինեցին. ուր 10 հազար հոգի կելլեն. իրենց քաղաքները ազատ են, Պաշպալով, կէռլէ և Ճուռճով. ուստի

իրենք կը կտրեն իրենց գատաստանը։ Հին ատենը Հռոմայեցիք տիրեցին այս աշխարքին. եւ քիչ մնաց հներուն անցաւ, որ ՝ի՛նչ Պետրանոս Թագաւորը միացուց մնաց առատանու հետ։ Հիմա նէմցէ իշխան կը նատի գլուժ քաղաքը, ուր ժողով կընեն։

Կան նաեւ ուրիշ երեւելի քաղաքներ. զորօրինակ Սիպին, որ է Թագաւորական քաղաք բազմամարդ. եւ Պրաշով, որ է իբր սահմանագլուխ նէմցէի տէրուէ ուլահի մօտ։ Պաշպալով քաղաքը շատ հայեր կան. ուր Ս՝խիթարեան վարդապետները վանք ունին գեղեցիկ եկեղեցիով, եւ դպրատունով։

Այս պատմութիւնքն՝ են խրատ քեզի,
որ հմուտ ըլլաս ամէն աշխարհի.
Աղէկին գնա՝ գէշէն հեռացիր,
որ տիրող ըլլաս՝ ծովու ցամաքի։
Թէ կուզես ըլլալ՝ հանուրց սիրելի,
մի՛ դալչիր քնաւ՝ ուրիշին արտի.
Ամենուն կամքին՝ պէտք է յարմարիս,
որ ամէն աղգաց՝ ըլլաս ցանկալի։

ԿԱ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ՀՎԷՊ։

345. Այս աշխարքը Եւրոպայի ընդարձակ տէրուէց մէկն է, որ Հիւսիսային ծայրը կկնի Պալթիկ ծովին քով. որուն տարածուին է 204800 մղոն. շատ տեղը պարապ է, 102 քաղաք ունի և 3 միլիոն բնակիչ։

Ընանկ գիրք ունի որ ամեռը 9 ամիս երկնալով սաստիկ կըլլայ, ու 3 ամիս արև չեն տեսներ, միշտ գիշեր է։ Նոյնպէս ամառն ալ շատ տաք կընէ, և երկու ամիս միակերպ ցորեկ է։

Բնակիչները հին ատենը վայրենի մարդիկ էին. անանկ որ հինգերորդ դարուն բոլոր իդալիա տակն ու վրա ըրին, որ շատ քաջ պատերազմող և գազանաբարոյ էին։ Սակայն յետոյ կամաց կամաց մէջերնին ուսում մըտաւ քարկրցան, և հիմա երևելի ազգ եղան։ Ընտոնց լեզուն նեմցէին շատ մօտ է։ Ցեղ տեղ նեմցէի լեզու կը խօսին, տեղ տեղ ալ իրենց հին լե-

զուն։ Ասոնք կռապաշտութիւն ատենը հին գիր մը ունէին, որ բռնոց կը սէին. և մինչև հիմա հին գերեզմանները վրա կը գտնի։

Ադրբէ սկսած պրոնիէը։

346. Այս թագաւորութիւնը հին է. և իրենց սկիզբն է գթաց ազգէն, որ մինչև հոս կը տիրէին։ Առաջ երկու թագաւորուն բաժնուած էր. յետոյ 1132 ին միացուցին։ Անկէ ետև Ֆանիմաւրքային տակն ընկան. և 200 տարի անցնելէն ետև գլուխ քաշեցին, ու 1523 ին ինքնագլուխ եղան մինչև հիմա։ Ասոնց կառավարուին է միապետական. թէպէտ թագաւորը երդումնունիր որ ինքնագլուխ բան չընէ առանց ժողովքին. որ 16 իշխան են, և ամէն բան ասոնք կորոշեն հանդերձ թագաւորով։

Սակէ 'ի զատ ուրիշ ժողովքներ ալ ունին զանազան բաներու համար։ Թագաւորական եկամուտը 4 միլիոն ոսկի է. պէտպէս հանքեր կելլեն այս աշխարքէն։ Յուրտ երկիր ըլլալով բոյսը քիչ է և ցորենը ուրիշ տեղաց կը բերեն։ Ինոր համար բնակիչները ծառին կեղևները

և յարդը կը ժողվեն կը մանրեն և ջրցընելով ալիւր կընեն. հոգը գաբիի ջրով կը շաղվեն հաց կընեն կուտեն։

Շվէտները առաջ թանձր կռապաշտութեան մէջ էին մինչև մեծ կարոլոս թագաւորին օրը, որ քարոզիչ ղրկեց իրենց որ լուսաւորին։ Այսկայն ոտովիկոս կայսեր ատենը 829 ին աւելի ծաղկեցաւ քրիստոնէութիւնը։ Իսկ 1593 ին Լուտերի աշակերտներէն մէկը գնաց հոն հերետիկոսութիւն սերմանելով բոլորը աղանդաւոր ըրաւ, և ապականեց ուղղափառութիւնը։

Ինգլիս կը բաժնվի։

347. Այս աշխարքը 5 գլխաւոր նահանգ կը բաժնվի զանազան գաւառներով և քաղաքներով։ Առջինը կը վի Շվէտիա, որ առաջ ինքնապլուխ թագաւոր ունէր, և 1132 ին միացաւ։

Այնպէս գոթիա նահանգը ինքնիշխան էր, որ գերմանիային և պալթիկ ծովին մէջն է, որուն տակն են Հլանտ և կոթլանտ մեծ կղզիները պալթիկ ծովին։

Իսկ նորտլանտ նահանգ՝ կռապաշտուէ ատենը թագաւոր ունէր և 7 գաւառ կը բաժնըվէր։ Այսպէս էին Ֆինլանտիա և լաբբոնիա նահանգները։

Աթոքոլմ՝ թագաւորանիստ քաղաքն է շվէտիա նահանգին մէջ, գեղեցիկ և մարդաշատ, պալթիկ ծովին մօտ։ Շրջապատն է 10 մղոն, և 100 հազար բնակիչ ունի։

Շատ երևելի շէնքեր կան մէջը և 20 եկեղեցի։ Շատ տներուն վրա պղնձով և երկաթով ծածկած են։ Մեծամեծ ուսումնարաններ ունի գիտուէց և արուեստներու համար. որոնք մեքենական արուեստներու մէջ շատ երևելի են։ Այս քաղաքս 1260 ին շինվեցաւ, և յետոյ թագաւորական քաղաք եղաւ։

Ո՞ր է լաբբոնիա։

348. Այս նահանգ ընդարձակ մասն է, որ շվէտին ծայրը կնյնի. ուր ձմեռը սաստիկ ըլլալուն համար բնակիչները շատ չեն բազմանար. ամիսով արև չեն տեսներ, ուստի ամառն ալ խիստ տաք կըլլայ։

Այս ժողովուրդը հիւսիսային աղ-

դերէն են. տարբեր լեզու և բարբ ունին։ Մինչահասակ են, սեւագոյն, երեսնին լայն և դունչերնին սուր է։ Իրենց սովորութիւնը միայն աղէկ կը պահեն։

Խիստ բիրտ մարդիկ ըլլալով՝ ոչ երկրագործութիւն գիտեն և ոչ արուեստ։ Միայն որսորդուի կընեն, և իրենց մեծուին է անասուն. ուստի միշտ վրանով կը շրջին խոտ եղած տեղերը։

Ռաջ թագաւոր ունէին, այլ 1276 ին շվէտին տակը մտան. թէպէտ կռապաշտութէ դարձան քրիստոնեայ եղան, բայց շատը մկրտուէ՝ի զատ բան մը չիյտեն։

Շատն ալ զանազան կուռքեր կը պաշտեն։ Ամէն բանի մէյմէկ չաստ ունին՝ բարի՝ չար։ Կաև ծառ և քար ալ կը պաշտեն. կախարդուիը շատ մեծ բան է իրենց մէջ։

Այս աշխարք 7 մասն կը բաժնըվի. թէպէտ երևելի քաղաք մը գեղ մը չունի. ոմանք անտառը կը բնակին, ոմանք ալ լեռները անասունի նման կապրին։ Լաբոնիայի մէկ մասն է ռուսաց, մէկ մասն ալ տանիմարքային, որ է հիւսիսային ծայրը։

Ո՞Ր Է ՊԱՆԻՄԱՐՔԱ։

349. Այս աշխարքէ գերմանիայի ծայրը. մէկ կողմն է ովկիանոս, մէկալ կողմն է պալթիկ ծով. որուն երկու մասը կղզիներ են պալթիկ ծովին բերանը, և մէկ մասն է ցամաք դանեաց։ Այս ՝ուրուն երկայնութիւնն է 13600 մղոն. 15 իշխանութիւն, 68 քաղաք, և միլիոն ու կէս բնակիչ ունի։ Որոնք հին ատենը վայրենի էին, և բարբարոսութիւն շատ աղգերու վրան եկան տիրեցին։

Սակայն հիմա կիրթ և չափաւոր են նեմցիներուն և շվէտներուն նման։ Խիստ աշխուժական կը համարին զիրենք. ուսումնական են և աշխատասէր։ Առաջ ամենեւին արքեցուն և որկրամոլուն չիկար մէջերնին. յետոյ նեմցիներէն մտաւ։ Եղունին շվէտներուն նման է։ Ծամեծները նեմցի լեզու կը խօսին։

ԱՐԷՔ ՈՎՔԱՆ։

350. Այս ՝ուրութիւն հին ըլլալով՝ առաջ զանազան թագաւորներ կը կառավարէին. իսկ 7 դարուն Ֆիլատէլֆիանդ թագաւորը ամենը միա-

ցուց իր տակն առաւ, ու մինչև սաքսոնիային և շվետին տիրեց։

Ն.յսպէս որդւոց որդի Թագաւորեցին ետև Փեռերիկոս Թագաւորը աւելի ծաղկեցուց այս ՝ռրուԹիը և շատ գեղեցիկ կանոններ և օրէնքներ գրաւ, որ մինչև հիմա կը գործածեն։

Ն.ինչափ զարմանալի օրէնքներ են, որ քիչ ատենին մէջ ամէն կերպ դատաստան մէկէն կորոշվին ասոնց մով։

Թագաւորը 6 ատեան ունի, և անոնց խորհրդով կը կառավարէ բացարձակ իշխանուԹիւն և կարգով։ Ն.կամուտն է 3 միլիոն ոսկի. շատ նաև զօրուԹիւն ունին ծովին վրա։

ԿառապաշտուԹիւն ատենը 5 կուռք կը պաշտէին, օրէն չՀաՀն էր գլխաւորը. բայց 822 ին Ն.ԸԸՌն եպիսկոպոսը գաղղիոյ նախ քարոզեց, և ապա Ն.ՐալտոՀ Թագաւորը գնաց Ֆռանսա մկրտվեցաւ, ու քանի մը կրօնաւորներ բերաւ Հետը, որոնք լուսաւորեցին ազգը։

Սակայն նորէն զօրանալով կռապաշտուԹիւնը՝ շատ Հալածանք Հանեցին, մինչև 1000 տարին. անատենը

բոլորովին դարձան ուղղափառ Եղան։

Մինչեպէտ 1537 ին Քրիստիանոս Թագաւորին օրը լուտերական աղանդ մտան, կան ուղղափառներ ալ իրենց մէջ։

Քանի՞ կը բաժնըվի։

351. Այս աշխարհք 3 աշխարհք կը բաժնըվի. Դանիք, Նորվեկիա, Սալանտիա։ Դանիք երկու մեծ կղզի է, Օ էլանտիա և Ֆիոնիա. որ պալթիկ ծովին բերանն է։ Եւ ունի իւլանդ ցամաքը սաքսոնիայի ծայրը։ Այս նահանգին մէջն է Քոփէնհայկ մայրաքաղաքը Թագաւորանիստ, գեղեցիկ և բազմամարդ, շրջապատն է 5 մղոն։ Շատ երևելի շէնքեր և եկեղեցիներ ունի։

Շատ դպրոցներ և ուսումնարաններ կան. Թագաւորական գրքատունը մէջ 70 հազար գիրք կայ։ Եւ 4 Թագաւորական պալատներ կան. 11 վաճառանոց, և 186 փողոց կան՝ որ ամէն գիշեր ճրագներով կը լուսաւորեն։ Բնակիչներն են 93 հազար հոգի։

Ուրաջ գեղ էր, յետոյ 1254 ին քաղաք շինեցին. և հիմա երևելի քաղաքներուն մէկն է, ամէն գիտուք և վաճառականուք ծաղկած։ Որ է Օ՝էլանտիա կղզիին մէջ, որուն երկայնութիւնն է 66 մղոն. շատ երևելի գաւառներ և քաղաքներ ունի։ Նաև շատ մանր կղզիներ ալ կան տակը։

Ո՞ր է Նորվեկիա։

352. Այս մասն տանիմարքայի՝ հիւսիսային ովկիանոսի քովն է Նոսկովին ծայրը. որ է իբր ցամաքակղզի։ Տարածութիւնն է 84 հազար մղոն. շատ կղզիներ ունի տակը՝ մեծ ու պզտիկ։ Ունայն 18 քաղաք ունի և 700 հազար բնակիչ։

Այնպես սաստիկ ցուրտ ըլլալով հոն՝ շատ տեղ պարապ է, և լեռները միշտ ձիւնով պատած են։

Բնակիչները շվէտի լեզու կը խօսին. որ հին ատենը շատ գաղանաբարոյ էին, և թագաւոր ունէին. նաև ատեն մը փոքրիկ ազատութիւններ էին. բայց 875 ին դանեաց հետ միացան մէկ ազատ եղան։

Բնակէ ետև սկսան քաղաքավար և

հմուտ ըլլալ. նաև աղէկ վարժ եղան նաւավարութեան մէջ։ Ն.ին միջոցին քրիստոնէութիւնն ալ ծաղկեցաւ։ Սակայն մինչև հիմա մէջերնին կռապաշտ կայ, և մնացած ժողովուրդն է լուտերական։

Ն.յս աշխարքը 4 գաւառ կը բաժնըվի, և շատ քաղաքներ ունի. իսկ մայրաքաղաքն է Ղրիստանիա, որ է գեղեցիկ և մեծ, ուր կը նստի մեծ իշխանը։

Ո՞Ր Է ԻՍԼԱՆԴԻԱ։

353. Իսլանտիա է մեծ կղզի սառնապատ ծովուն կողմը. երկայնութիւն է 490 մղոն, և 50 հազար բնակիչ ունի։ Ուր ոչ երևելի քաղաք կայ և ոչ տուն. շատը գետնին տակը կը բնակին ցրտին համար։

Շատ անգամ գետնաշարժութիւն կըլլայ հոն. և ձմեռը 9 ամիս կըքշէ. ամառը երկայն օրը 23 ժամ է. և ձմեռը կարճ գիշերը 1 ժամ է. իսկ երկայն գիշերը 23 ժամ (158)։

Բարձր և մեծամեծ լեռներ շատ կան իսլանտիա, որ երբեմն երբեմն կը բռընկին ահագին ձայներ հանելով, եռքը հրեղէն գետ կը վազէ։

Կան աղբիւրներ որ եռալով տաք ջուր կը բղխեն, ու վեր կը ցաթկեն։ Ուր լայնբերան հոր մը կայ, որ քիչ ջուր ունի. ամէն օր այնչափ կը բարձրանայ ջուրն որ բերանը կուգայ, և կըսկըսի վեր ցաթկել 60 կանգուն թանձր ծխով. յետոյ քիչ քիչ կիջնի։

Ռաջ այս կղզին անծանօթ էր, բայց 860 ին աւազակ մը հոն իյնելով տեսաւ, և յետոյ շվէտ մը գնաց ծանօթացաւ։ Ի երջապէս Նորվեկիացիք տիրեցին 870 ին, և հոն բընակուի շինելով բազմացան։ Բնակիչները ուժով և զօրաւոր են. ուսումնականուն յարմար, բայց չունին փոյթ, և ոչ բժիշկ կը պահեն։ Ունին ինքնագլուխ իշխան որ Ցանիմառքայէն կախում ունի։

Ամոնց լեզուն խառնած է Նորվեկիացոց հետ. իսկ քրիստոնէութիւնը ծաղկեցաւ հոն 1000 ին. բայց յետոյ դարձան լուտերական եղան։

Ո՞ր է Կրէնլանտիա։

354. Այս աշխարհք է ընդարձակ կղզի արևմտեան կողմը իսլանտիայ ին 160 մղոն հեռուն. որ Ամերիդայի դիմացն ըլլալով Կրէնլանտիայի նե-

ղուցով անկէ բաժնուած է։ Շատ տեղը անծանօթ է, զի նաւ չի կրնար ամէն տեղը մօտենալ՝ բոլորը սառած ըլլալով։

Այս երկիրէն անդին դէպ 'ի հիւսիս չեն կրնար երթալ. վասն զի կըղզիներու նման և լեռան պէս լեցուն սառեր են ծովին մէջ։ Ամառը 3 ամիս ցորեկ է հոն. ձմեռն ալ 3 ամիս գիշեր շարունակ. ուստի անհնարին ցուրտ կրնէ։

Ինակիչները գետնին տակը կը նստին. կարձահասակ և սեւագոյն են. արատաւոր մարդ չի կայ մէջերնին. նաև ծաղիկ և ուրիշ հիւանդութի չի կայ հոն։ Սակայն երիկմարդիկ 50 տարեան չեղած կը մեռնին. և կնիկմարդիկ շատ կապրին։ Ունին ուսում. իրենց բանաստեղծները և բժիշկները աղանդաւոր են. ժողովուրդը անոնց բերանը կը նայի։

Ոչ իշխան ունին և ոչ մեծ, ամէնքը անասունի նման ազատ են. միայն հայրը կիշխէ զաւակին։ Ամէնքը խաղաղութիւն կը վարին իրարու հետ, թէ որ մէջերնին վէճ մը պատահի, կուգան միատեղ կըսկըսին պար խա-

ղալ և ուրախանալ. անկէ ետև կո-
ղոշեն։ Յաև այն միջոցին վաճառա-
կանութի կընեն։ Մենևին իրենց
մէջ կռիւ չեն ըներ. երբեմն տանի-
մառքաներուն հետ կընեն։ Ղողու-
թի ընել չի կայ հոն. խաղալ խըն-
դալ շատ կը սիրեն։

Մեռաջ կային հոն եկեղեցիներ.
ետքը նորէն կռապաշտ եղան, ոմանք
ալ լուտերական։ Այս կղզին իս-
լանտիայէն ետև գտան 982 ին. և
նորվեկիացիք տիրեցին, և տեղ տեղ
բնակուի շինեցին. յետոյ ինքնագը-
լուխ եղան երկար ատեն։ Յաև չէր
երթար. հիմա երթևեկուի կըլլայ։

Ո՞Ր Է ՍԲԻՑՊԵՐԿ։

355. Ալէքսանտիայի մօտ է սբից-
պերկ կղզին մեծ. որ հիւսիսային
բևեռին մօտ ըլլալով արջային շրջա-
նակէն անդին է՝ ամերիգային կոլմը-
քարերը մերմեռ են։

Ինկիլիզները 1773 ին հոն գնա-
ցին, ոչ ճանճ տեսան հոն և ոչ ճճի.
ոչ հանք՝ ոչ աղբիւր և ոչ գետ. իբր
6 ամիս գիշեր է հոն և 6 ամիս ցո-
րեկ. զի արեգակը այնչափ ատեն

եղերքին վրա կը պտըտի՝ առանց մարը մտնելու։

Գոլի ծովը լեցուն սառուց է, ուստի անկէ անդին այլ չերթըցվիր. վասն զի ծովը սառած ըլլալով լեռան պէս եղած է։

Երբեմն այս սառուցները հովէն կոտրելով կուգան իրարու հետ կը միանան մեծամեծ լեռան պէս ծովին մէջ կը շարժին։

Եւ որ 60 մղոն անդին երթան, բոլոր ծովը սառէ դաշտ եղած է, որ ոչ երբեք կը հալին. վասն զի արեգակը եղերքէն ծագելով հոն չի հասնիր ուժը, և տաքութիւն չունի։

Ահա այս երկիրը կրնայ ըսվիլ հիւսիսի աշխարքին ծայրը, և կը մօտենայ մոսկովի ծովին, և ամերիկայի հիւսիսային աշխարքներուն։

Աբդ ահա հասար ծայրը հիւսիսին,
մօտեցար երկրիս՝ վերի բևեռին.
Քանա՛ որ ըլլաս նման այն աստղին,
հաստատ անփոփոխ պայծառ բընաւին։
Ազնայ թէ ըլլաս նման մութ երկրին.
լոյս իմաստութիւն գուն տաս ուրիշին.
Թէ ոգէա ըլլաս անկիրթ անխոհեմ,
չես կրնար ելլել այն բարձր կեանին։

ԿԲ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ԻԳԱԼԻԱ։

356. Իգալիա է ընդարձակ ցամաքակղզի մը, որ Հերմակ ծովէն կըսկըսի կերթայ մինչև գերմանիա և Ֆրանսա. նաև մեծամեծ լեռներով և ադրիական ծովով զատված է այն աշխարքներէն։ Տարածունն է 72 հազար միլոն. այնչափ բարեշէն և բազմամարդ է որ միայն 20 միլիոն բնակիչ ունի, և ամէնքը սրամիտ արուեստաւոր մարդիկ են։

Հին ատենը այնչափ զօրաւոր էին որ բոլոր աշխարքի տիրեցին. բայց յետոյ փոփկանալով առջի քաջութիւնը կորսընցուցին։ Առաջ ինքնագլուխ թագաւորներ կը տիրէին, ետքը Հռոմայեցիք տիրեցին։ Թէոդոս թագաւորէն ետև զանազան ազգեր Իգալիայի տիրեցին. զորօրինակ յոյնք, գուլթք, բուլղարք, շվէտք և ն։ Այս ազգերուն խօսքերը լատին լեզուին հետ խառնըվելով դալեանին լեզուն առաջ եկաւ։

Ուստի 400 տարի շատ ազգեր մտան իդալիա. և անկէ ետև զանազան տէրութի բաժնուվեցան, ոմանք թագաւորութի՝ ոմանք ալ դքսութի կը կոչվէին. ինչպէս է. Ա Էնէտիկ, Հռոմ, Լաբօլի, որ ունի երևելի կղզիներ. զորօրինակ Սիցիլիա, մալդա, քօռֆու, և՝ն։

Ո՞ր է Վենէտիկ։

357. Ա Էնէտիկի թրուութիը կըսկըսի առնավուտի և խուվաթի աշխարքէն կերթայ մինչև նէմցէստան և Հռոմ։ Լաև ադրիական ծովն իրեն ըլլալով 7 կղզիներուն ալ կը տիրեն։ Այսն ցամաքի տարածուին է 15 հազար մղոն. 40 քաղաք և 2 միլիոն ու կէս բնակիչ ունի։

Ա Էնէտիկցիք հին վենէտիացի ազգէն եկած են. որ Բատուա և վիջենցա քաղաքները կը բնակէին։ Բայց երբոր եկան գուութք իրենց աշխարքը կոխեցին, փախան եկան Ա Էնէտիկի հողը ծովին քով բնակեցան։

Տեսան որ Սիրալթօ կղզին կայ, որուն մէջ ձկնորսներ կային, գացին անոնք ալ հոն բնակեցան յաստի՝ն

421 ին. և եկեղեցի մը շինեցին Յակոբին անուամբը, որ մինչև հիմա կայ։

Ահա ասկից սկիզբն եղաւ, և հետզհետէ բազմանալով մեծցուցին քաղաքը. և 72 կղզիի վրա շինեցին, ու կամուրջներով իրարու հետ կապեցին։ Այսև ուրիշ տեղերէն ալ շատ մարդիկ եկան լեցվեցան, ու տեղ տեղ վենետիկ ցիք քաղաքներ շինեցին, զորօրինակ Ռեսճա, Մուռան և ն։

Ներ սկսաւ պերոնիը։

358. Արդ՝ ռիալթօի քաղաքը շինելէն ետև 31 տարի անցաւ, վենետիկի քաղաքները բնակիչներով լեցվեցան. որ զանազան իշխաններով կը կառավարվէին։

Այց լոմպարտացիք իդալիա մտնելէն ետև շատ խռովութիներ եղան. անոր համար վենետիկի քաղաքներուն բնակիչները ժողովք ըրին ու 697 ին իրենց գլուխ մը դրին Ղուքս կամ դօժ անունով։

Ինկէ ետև զօրանալով ադրիական ծովուն աւազակները վերուցին իրենց տակն առին, ու կարդաւո-

բեալ տէրուէ մը ձեւացուցին, մանաւանդ 12 դարուն, որ շատ անուանի եղան թէ՛ քաջութիւնը և թէ վարձառականութիւնը։

Յամանցոց հետ ալ շատ ծեծ ըրին և շատ տեղ յաղթեցին։ Յովին վրա այնչափ զօրաւոր էին, որ հնարքատանու ապրանքը իրենք կը բերէին, և շատ կշռի ալ գտան։ Սակայն 1797 ին Ֆռանսիզները Պոնաբարթէին առաջնորդութիւնը եկան ցամաքին տիրեցին ու բնակիչները ոտք հանեցին. մինչև բռնադատեցին տօժն որ տէրութիւնէն հրաժարի։

Իշխաններուն շատը կաշառով որսալով հանեցին իրենց տէրութիւնը մատնեցին Պոնաբարթէին. որ աղէկ մը կողոպտելէն ետև քաղաքը, հանեց նէմցէին տրվաւ. և այսպէս այս զօրաւոր տէրուէնը վերջացաւ։

Այս տէրութիւնը բոլոր իշխաններն էին 2959 ազնուականներ, որ զանազան քաղաքներ կը կառավարէին։ Իրենց ծերակոյտը 120 իշխան էին. անոնցմէ տասը գլխաւոր խորհրդական և կառավարիչ էին. և 3 իշխան ալ կային, որ ամէն բան իրենց ձեռքն էր։ Իսկ տօժը իբր թագա-

ւոր էր Հանդիսի մէջ. բայց ամէն վը-
ճիռ այն խորհրդականներուն ձեռքն
էր, և առանց անոնց բան մը չէր
կրնար ընել։ Եպիսկոպոսը այս տէրուն
5 ժողով ունէր. բայց 10 իշխաննե-
րուն ժողովը ամէն բան կրնար ընել՝
պերագոյն ըլլալով։

Այս ազգը հին ատենէն 'ի վեր
ուղղափառ մնաց, ամենևին հերե-
տիկոսութիւն չի մտաւ մէջերնին։ Ցէ-
սուիը երկու ծածաքան վարդապետ
ունէր իբր խորհրդական. և ժողով
մը կար ծածաքանի, որ տպած գրքերը
քննեն, ու գէշ գրեանքը արգիլեն։

Ինչպէս էր բաժնուած։

359. Առաջ այս տէրուն 16 գա-
ւառ կը բաժնուէր. Պօնաքաւառ թէն
երկու մասն բաժնեց։ Ամէնտիկ
մայրաքաղաքն է գլուխ ամենուն,
ուր էր տօժը իրեն իշխաններով։

Այս քաղաք ադրիական ծովին
վերջն ըլլալով՝ իբր լճի մէջ է. լճին
երկայնութիւնն է 26 մղոն, իսկ տա-
րածութիւնն է 180 մղոն։ Ծովին կողմն
2 բերան ունի, ուսկից նաւերը
ներս կը մտնեն։

Այս պատրիարգանիստ մայրա-

քաղաքին շրջապատն է 7 մղոն, 100 հազար բնակիչ ունի։ Բոլոր տները քարաշէն են և գեղեցիկ։ Համբաներուն մէջ տեղը գետի նման ջուր ըլլալով նաւով ալ կը քալուի քաղքին մէջ։

Շատ երևելի շինվածներ, ուսումնարաններ և գրքատուններ կան՝ լեցուն հազարաւոր գրեանքով։ 72 ժողովրդապետական եկեղեցի ունի և 22 մեծ մատուռ։ 27 վանք կայ կրօնաւորաց և 31 կուսանաց։ Այլ եկեղեցին է Ղեյն մարկոսի, ուր է մարմին Ղբ աւետարանչին։ որ շինվեցաւ 977 ին, երկայն 220 ոտնաչափ և լայն 152։ Արուն շէնքը շատ հաստատուն է և 500 սիւներով զարդարած։ Այս եկեղեցնայ ձևը խաչաձև է. 5 գմբեթ ունի, և 10 դուռ։ Ճակատը շատ փառաւոր է՝ խորհրդաւոր բաներով լեցուն։

Հոն է յոն խաչին մէկ գամը և 4 փուշ փուշպսակին, նաև հրաշագործ պատկերք Ա՞ծամօրը, որ Ղուկաս աւետարանիչն է քաշեր։

Ներսէս պատրիկ Հայ իշխանը՝ հին ատենը գթաց յաղթելէն ետև վենետիկ եկաւ 2 եկեղեցի շինեց, Ղբ

մինասայ և Թէոդորոսի անուամբը։ Նաև եկեղեցին՝ որ խաչի՝ Հայոց համար շինված է։

Այս քաղաքի չորս դին լեցուն կղզիներ են որ վանք շինած են. որոնց մէկն է՝ որ Ղազարու կղզին՝ մղոն մը հեռու քաղաքէն հարաւի՝ կողմը. որ մեծ ծովին մօտ ըլլալով օդը աղէկ է և գիրքը զուարճալի՝ ցամաք լեղուն առջին ըլլալով։

Այս կղզին առաջ հոգէտուն շինած էր, ապա 1717 ին տէրուԹիը տրվաւ երջանիկ ՄխիԹար Աբբահօրը, որ բոլորը նորէն շինեց գեղեցիկ՝ կամարներու և սիւներու վրայ. մէջն ու դուրսը պարտէզ է։ Մէկ կողմը նորընծայարանն է՝ մանկանց ուսման տեղ. մէկալ կողմն է վարժարան՝ կրԹուԹեան տեղ։ Նակ եկեղեցին մէջ տեղն ըլլալով՝ սիւներու վրա շինած է հին ատենը, քոշեալ ունի զանգակատուն. վանքին մէկ կողմնալ է տպարանը, ուր գրեանք կըտպեն։

Ո՞Ր Է ԲԱՊՈՒԱ։

360. Այս քաղաք վենետիկի ցամաքն է. գաւառին շրջապատն է

150 միլոն. շատ գեղեր ունի և 310 հազար բնակիչ։ Իսկ բուն քաղաքը 27 միլոն հեռու է վէնէտիկէն. բերդին շրջապատն է 6200 քայլ. և բնակիչներն են 32 հազար։

Ուր շատ երևելի հին շէնքեր և եկեղեցիներ նաև ուսումնարաններ կան։ Շատ փառաւոր է՞ որ յուստինեայ եկեղեցին, որ 7 գմբէթ և 20 խորան ունի բոլոր մէռմէռէ, և մեծագործ։ Ինչպէս՞ որ Ընտոնայ եկեղեցին շատ փառաւոր է. ուր կայ գերեզմանը՞ որ Ընտոն բատուացուն, և միշտ հրաշքներով պայծառացած է։ Իսկ լեզուն՞ որ Ընտոնին անարատ պահված է քսվի մատուռին մէջ, ինչպէս տեսանք։

Բաց 'ի զանազան շինվածներէն մէկ բարձր աշտարակ մը կայ քաղաքին մէջ աստղաբաշխուէ համար. ուսկից կը գիտեն աստղերուն շարժումն ու խաւարումը, և՝։

Լոն ոռիէշ գեղեր։

361. Ինչպէս վերն ըսինք, զանազան գաւառներ ունի վէնէտիկ. Փոլէզինէ, որ 3 քաղաք ունի, 28 միլոն երկայն, և 70 հազար բնակիչ։

Ալիէնցա երկայն է 40 մղոն. 13 աւան և 216 հազար բնակիչ ունի։ Քաղաքը մեծ և բազմամարդ է. 30 հազար բնակիչ ունի. ուր կան 75 եկեղեցի և 27 վանք։

Լոյնպէս վէնէտիկի գաւառ է 7 հասարակութիւնը, որուն շրջապատն է 35 մղոն. և 36 հազար բնակիչ ունի։ Որոնք ազատ ըլլալով իրենց օրէնքներով կը կառավարվին, և իրենց երկիրը անառիկ է, միայն կիրճեր ունի։

Ալէռնա գաւառին շրջապատն է 200 մղոն. և 230 հազար բնակիչ ունի։ Իսկ քաղաքին շրջապատն է 7 մղոն և 60 հազար բնակիչ ունի։ Շատ երևելի շէնքեր և եկեղեցիներ կան. մէկ թէատրոն մը կայ հնուց մնացած, որ 22 հազար հոգի կառնէ։

Իսկ Պռէշեայ գաւառին երկայնութիւնն է 90 մղոն. և 500 հազար բնակիչ ունի։ Քաղաքին մէջ շատ շէնքեր և եկեղեցիներ կան. իսկ ժողովուրդն է 30 հազար։ Այլ եկեղեցիներ մէջ պահած են երկու խաչը կոստանդիանոս թագաւորին մէկը վիզը կը կախէր, մէկալն ալ պատերազմ կը տանէր։

Պէռկամօ գաւառին երկայնութիւնն է 40 մղոն, և 210 հազար բնակիչ ունի։ Քաղաքն է մեծ և փարթամ որ երևելի եկեղեցիներ և 25 հազար բնակիչ ունի։ Իսկ դռէվիզին բնակիչներն են 200 հազար. քաղաքին շրջապատն է 3 մղոն, և 13 հազար ժողովուրդ ունի։ Այսպէս են ուրիշ գաւառները։ Բայց բոլորը հին ժողովուրդ են և քաղաքները վէնէտիկէն առաջ շինված են։

Ո՞ր է պալմաղիա։

362. Այս աշխարք շքեղաւոր ազգին էր. հին ատենը թագաւոր ունէին, յետոյ վէնէտիկին անցաւ, հիմա նէմցէները կը տիրեն. որ Խատրիայէն սկսեալ մինչև Լպանիա կերթայ, և անհամար կղզիներ ունի ադրիական ծովին մէջ. երկայնութիւն է 340 մղոն. և 250 հազար բնակիչ ունի։

Այս ազգը հին սկիւթացոցմէ եկած ըլլալով շատ զօրաւոր են, բայց թանձրամիտ և ոխակալ ըլլալով միշտ իրենց մէջ մարդասպանութիւնը պակաս չէ։ Հին ատենը ընդարձակ տէրութիւն էր. յետոյ մէկ մասը մա-

ձառբստանու հետ միացաւ 295 մը-
զոնի չափ. որ ունէր 12 քաղաք, շատ
գեղեր և 250 հազար հոգի։ Ասոնց
մասն են նաև խուվաթնները՝ սավա
գետին մօտ. իրենց երկիրն է 389
մղոն, և 267 հազար հոգի կելլեն։

Ո՞ր է ռաքուզա։

363. Այս տէրուն շքլաւոնին ու
օսմանցուն մէջն է. ունի մեծաշէն
բերդ և քաղաք գեղեցիկ իր սահ-
մաններով, բազմամարդ և վաճա-
ռականութեան տեղ է. ունի նաև քա-
նի մը քաղաք, և շատ գեղեր։

Ռաքուզացիք շքլաւոններէն եկած
են և անոնց լեզուն կը խօսին, որ
շատ ատենէն 'ի վեր ինքնագլուխ է-
ին. բայց կառավարութիւնը իշխան-
ներուն ձեռքն ըլլալով պզտի հասա-
բակապետութիւն էր։

Եւ ունէր աղնուականաց ժո-
ղով մը և գլխաւոր իշխան մը, որ
ամեն ամիս կը փոխէին։ Այս տէ-
րութիւնը տկար ըլլալով՝ օսմանցուն
տուրք կուտար. բայց Ֆռանսիզները
տիրելով վերջացուցին, և հիմա նէմ-
ցէի հպատակ են։

Ո՞Ր ԵՆ ԵՕՐԻՆ ԿՂԶԻՔ։

364. Այս կղզիները ադրիական ծովին բերանն են մօտ. որ հին ատենը յունաց տակն էին, ետքը վենետիկցոց անցան. անոնցմէ ալ Ֆռանսիզներն առին. հիմա ինկիլիզին պաշտպանութեան տակն են։ Սակայն ամէն մէկը ժողով և դատաւորներ ունի և մեծ իշխան մը գլուխ կը դնեն, որ ամէն տարի կը փոխուի։ Ուրուն աթոռն է Կորֆու կղզին, որ մէկալ կղզիներն ալ կը կառավարէ։

Կորֆու կղզին գլուխ կը սեպուի ամենուն. 2 մղոն հեռու է ցամաքէն, վենետիկի ծովին ծայրն է. շրջապատն է 180 մղոն. 78 գեղ, և 60 հազար բնակիչ ունի. շատը յոյն են, կան հրէայ և լատին։

Քաղաքը ամուր և շատ շէնքեր և եկեղեցիներ ունի. բնակիչները զօրաւոր և քաջ են. հին ատենը ինքնագլուխ էին. ետքը հռոմայեցոց և յունաց տակը մնան։ Իսկ 14 դարուն ինքնակամ վենետիկի տակը մնան։

Բուաջ այս կղզին կպած էր Բաք-

ասо կղզին, և յետոյ երկրաշարժուէ բացվեցաւ կըսեն։ Ասատի 10 մղոնով հեռու է անկէ. և շրջապատն է 25 մղոն։ Յամաւռա կղզին աւելի մօտ է ցամաքին, որ առաջ կիցէ էղեր. ետքը կորնեմացիք բացին ու վրան կամուրջ շինեցին. որուն երկայնութիւն է 30 մղոն. և քաղաքին մէջ 6000 բնակիչ կայ։

Գէֆալոնիա կղզին շրջապատն է 170 մղոն. երկու հարիւրէն աւելի գեղ ու բերդ ունի, և բնակիչներն են 40 հազար։ Լոյնպէս Օանդա կղզին մէջ 40 հազար բնակիչ կայ, որ շատ զօրաւոր և անզգամ մարդիկ են. որուն շրջապատն է 60 մղոն։ Քաղաքը շատ հին է, առաջ Թագաւոր ունէր։ Լակ Մադիագի կըղզին շրջապատն է 50 մղոն. և Ջէռիկо կղզին է 60 մղոն։

Ո՞ւր է Մալթա։

365. Մալդա երևելի կղզին միջերկրական ծովին մէջ է, ափրիկէի դիմացը և իդալիայի կողմը. որ 80 մղոն հեռու է սիջիլիայէն, և շրջապատն է 80 մղոն. բայց բազմամարդ ըլլալով 100 հազար բնակիչ ունի։

Հին բնակիչները Պոռֆուէն է-
կած էին. Եռքը փիւնիկեցիք զանոնք
հանեցին, իրենք բնակեցան. և մինչև
հիմա ափրիկեցոց բարք ունին, և
շատը արապերէն կը խօսին։

Այս կղզին շատ անառիկ, և ժայ-
ռերով ամրցած է։ Ուր հող քիչ կայ,
բոլորը Ձերմակ քար է, ուստի շատ
անբեր է. բայց ամենևին Թունաւոր
կենդանի չի կայ հոն։

Այս կղզին շատ զանազան տէ-
րութեց ձեռք անցաւ. Եռքը սիցի-
լիայի հետ միացաւ։ Յետոյ մալ-
դայի ասպետներուն տրվեցաւ, որ
կըսվի կարգ մալդայի։ Այս կարգը
անհաւատներուն դէմ պատերազ-
մելու համար հաստատվեցաւ։ Բայց
հիմա ինկիլիզներուն անցաւ կղզին։

Բանի մը քաղաքներ ունի. և
մայրաքաղաքն է Վալէդդա, մեծա-
շէն և գեղեցիկ, եկեղեցիներով և
վանքերով զարդարած։ Ուր կընստի
կարգապետը, որ կըսվի մեծ վար-
դապետ, որ ինքնիշխան կը կառա-
վարէր։

Այսպէս են մարդիկ միշտ փոփոխական,
աշխարհս ալ ըրին միշտ իրենց նման.
Որչափ ջանացին ուրիշին տիրել,
այնչափ աշխարհներ կորան քանդեցան։
Ջանա՛ որ տիրես չէ սուտ աշխարհին,
այլ անձիդ վրա և բոլոր ախտին.
Խելքդ ու միտքդ ըլլայ կառավար իշխան,
որ կառավարվիս ըստ բանականին։

ԿԳ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ԴԱՔՕՂԻ։

366. Ա.յս Թագաւորութի միջերկրական ծովէն կըսկըսի մինչև Հռոմ կերթայ. որուն տարածութիւն է 20 հազար մղոն. և 3 միլիոն բնակիչ ունի։

Ա.յս աշխարքը 3 մեծ նահանգ կը բաժնըվի, շատ գաւառներ և հազարաւոր բերդեր քաղաքներ ունի։ Ա.յնչափ գեղեցիկ և բարեբեր երկիր է որ պարտէզ և համբար եւրոպիայի կըսվի։ Բնակիչները ուսումնասէր և սրամիտ են. մեծամեծները ազնուաբարոյ են. իսկ հասարակ ժողովուրդը կոպիտ և տգէտ,

բայց միամիտ ջերմեռանդ են։ Մէ-
պէտ գալիաներէն կը խօսին, բայց
խիստ աւրած ըլլալով՝ շատ անշահ
կը խօսին։

Ո՞ՐԵ ԱԿՍՈՒ։

367. Այս ազգը հին ատենը զա-
նազան Թագաւորներ ունէր, որ ինք-
նագլուխ կը կառավարէին։ Վերջը
հռոմայեցւոց տակն ընկան. նաև հռ-
ռոմներն ալ տիրեցին։

Մամանակէն ետև Հռուգերոս
սիջիլիայի իշխանը՝ նաբօլիի Թագա-
ւոր եղաւ 1130 ին։ Բայց ատեն
անցնելէն ետև Ֆռանսըզները տի-
րեցին։ Յետոյ սպանեօլներուն անց-
նելով, կարոլոս՝ նաբօլիի Թագաւոր
եղաւ։

Հա մինչև հիմա ասոր ցեղէն կը
Թագաւորեն. Թէպէտ առաջ սպա-
նիայի հետ միացած էր, և հիմա շատ
ատենէն 'ի վեր ինքնագլուխ կը կա-
ռավարէ Թագաւորը զանազան ժո-
ղովքներով։

Ո՞ՐՆ Է ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ։

368. Մագաւորը նաբօլի քաղաքը
կը նստի. որ շատ երևելի գեղեցիկ

և փարթամ քաղաք է։ Շրջապատն է 20 մղոն և 500 հազար բնակիչ ունի իր շրջակայքը։ Ճամբաները խիստ գեղեցիկ և լայն են. շատ երեւելի շէնքեր՝ ուսումնարաններ՝ դրոշոցներ՝ վանքեր և եկեղեցիներ կան։

Լուսաւորչայ եկեղեցին շատ փառաւոր է, որ կուսանաց ձեռքն է։ Ուր պահած է լուսաւորչայ՝ նոր գլուխը ամբողջ. որ կոպրոնիմոս պատկերամարտ թագաւորին օրը կուսանքն առին ստամպուլէն հոն փախան ու վանք շինեցին։ Այս քաղաք 5 արուարձան (վարոշ) ունի, որ շատ զուարճալի տեղեր են։ Ուր երևելի խոռոչներ և երկան փոսեր կան գետնին տակը։

Պուլիսիպոն Ճամբային բարձրութիւն է 100 ոտնաչափ, և լայնութիւն 700. որ լեռան մէջէն կանցնի, և հին ատենը գերեզմաններ էր։ Որովհետև նաբուլի քաղաքը հին ըլլալով յոյները շիներ են, ու իրենց հեթանոսական պաշտօնները հոն կը կատարէին, որ յետոյ հռոմայեցիք տիրեցին։

Ո՞Ր Է ՎԵՍՈՒՊ։

369. Վեսուպ լեռը 5 մղոն հեռու է Նաբօլիէն. բարձր 3600 ոտնաչափ։ Այս լեռան գլուխը հնոց մը կայ, որ միշտ կը վառի. երբեմն ալ բոց կելլէ, ու զարհուրելի ձայներ կը լսվի։

Երբեմն անանկ կը վառի, որ մեծամեծ քարեր դուրս կը նետէ, և հրեղէն գետ կը վազէ. որ պաղելով քար կը կտրի։ Յամի՝ն 79 ին անանկ բորբոքեցաւ, որ մոխիրը բոլոր եւրոպա հասաւ, ու ծուխը արեգակը խաւարեց։

Ինն մօտ է մեռելոց լիճը, որ ծովուն հետ հաղորդակցութի՝ ունի. կանգնաւ ուրիշ լիճեր և հին բաներ այս կողմն։

Հին բանաստեղծները կըսէին թէ մեռելներուն հոգիները պէտք է որ այս լճէն անցնին ու Էղիւսեան դաշտը երթան, որ քովը կեցնի։ Այս տեղս փառաւոր ըլլալով դրախտին տեղը դրեր էին հինները։ (Ձեմ. 746)։

Ո՞Ր Է ԽԱԼԱՊԷԻԱ։

370. Այս գաւառ է վերջի մասը նաբօլիի, որ ծծմբալից երկիր ըլլալով երկրաշարժուներ պակաս չէ. և բնակիչներն են կոպիտ և անմիտ։ Գլխաւոր քաղաքն է Օսէնցա գեղեցիկ և բազմամարդ։

Կան շատ երևելի գաւառներ և քաղաքներ այս տերութեան մէջ, ինչպէս Լուքանիա, Պրուծցօ, Ռուլիա, Օդռանդօ, և ն։

Բաց ուրիշ շատ քաղաքներ ալ կային, որ երկրաշարժուէ կործանեցան. վասն զի երկրին տակը վառելու նիւթեր շատ ըլլալուն համար միշտ պակաս չէ։

Ո՞Ր Է ՍԻՑԻԼԻԱ։

371. Այս ընդարձակ կղզի եռանկիւն նաբօլիի դիմացը կիյնի, որուն հին ատենը կպած է եղեր, յետոյ երկրաշարժուէ բացված։ Ինոր համար մէկ տերութի կը սեպվի։

Այս կղզին ձերմակ ծովին ամէն կղզիներէն մեծ է. տարածութիւն է 9376 մղոն և շրջապատն է 600 մղոն։

Լաև 47 աշտարակ ունի ու ամէն կողմէն անառիկ է։

Բնակիչները միլիոնէն աւելի են. միայն 47 հազար եկեղեցական կայ։ Սակ հին բնակիչներն են սիքուլիացի բալիանները. յետոյ ափրիկեցիք և յոյնք տիրեցին։ Նոր համար այս երեք լեզուն ալ կը գործածեն հոն։

Այս կղզին զանազան տէրութեց ձեռքն անցնելէն ետև սպանիօլնեբուն անցաւ։ Լուսանկէ ետև նաբօլիի հետ միացած մնաց. ուր փոխարքայ կը նստի ու ինքնագլուխ կը կառավարէ եպիսկոպոսներով և աշխարհական իշխաններով։ Լեզուցը սիջիլիայինն ու քալապրիայի միջև կենի. որուն երկայնութիւնն է 25 մղոն, և լայնութիւն 3։ Այս ջրին վրա առտուները զարմանալի երևոյթներ կըլլան, անտառներ շինվածներ և կենդանիներ կերևնան օդին մէջ, որ ջրին ցոլանալէն կը պատճառի։

ՎԱՆԷ ԿԸ ԲԱԺՆԸՎԻ։

372. Սիջիլիա եռանկիւն ձևով ըլլալով 3 մասն կը բաժնըվի։ Առջի գաւառն է Մաձառա, որ 117 քաղաք և 300 հազար բնակիչ ունի։

Ուր է Դալէռմօ Թագաւորանիստ քաղաքը, Թունուզնեբէն շինված, որ շատ գեղեցիկ և մարդաշատ ըլլալով լեցուն է եկեղեցականներով և աղնուականներով։

Շրջապատն է 5 մղոն, և 150 հազար բնակիչ ունի. շատ վանքեր՝ փառաւոր եկեղեցիներ և ուսումնարան դպրոցներ ունի։

Այս գաւառին մէջն է նաև Լտանա լեռը՝ բարձր 30 հազար քայլ. որուն գլուխը հնոցի պէս կը վառի. երբեմն երբեմն հրեղէն գետ կը վազէ բերնէն. իսկ 1693 ին այնչափ գետնաշարժուն ըրաւ որ 15 քաղաք վար անցան, և 93 հազար հոգի մեռան։

Արկրորդ գաւառն է Ջէմանա, որ քալապրիայի դէմը կիյնի. 331 հազար բնակիչ ունի։ Այրաքաղաքն է Արէսինա գեղեցիկ և պայծառ. շրջապատն է 5 մղոն և 24 հազար բնակիչ ունի։ Նաև փառաւոր շէնքերով լեցուն է.

Երրորդ գաւառն է Լոգոի. որ 55 քաղաք և 283 հազար բնակիչ ունի։ Այրաքաղաքն է Պադանիա, որ Լաղշա կղզին բնակիչները շի-

նեցին, ու յետոյ Հռոմայեցիներուն անցաւ։

Ասիս գեղեցիկ քաղաքը առաջ թագաւորանիստ էր, և հիմա 26 հազար բնակիչ ունի։ Ասոր մօտ էր Սիրակուզա քաղաքը բաղմամարդ՝ կոմնթացոցմէ շինված։ Առաջ շատ անուանի քաղաք էր և թագաւոր ունէր, բայց հիմա այնչափ չէ։

Ո՞Ր Է ՍԱՐԴԷՆԵԱ։

373. Սարտենեայ կղզին Իտալիայի դիմացը կիյնի, որ երևելի կղզի է։ Տարածուին է 440 մղոն. բայց բնակիչները այնչափ շատ չեն։ Իսկ առջի տիրողներն են թունուզցիք. յետոյ Հռոմայեցիներուն և Ճինիվիզներուն անցաւ։

Վերջը ինքնագլուխ դատաւորներ կը կառավարէին։ Ընկէ ետև Սպանեօլներուն անցաւ, ուսկից փոխարքայ կուգար։ Սակայն ժողովուրդը քանի գնաց խեղճ եղաւ։

Իսկ 1718 ին Սավոյայի դուքսը ուրիշ տեղ տալով առաւ այս կղզին, ու սկսաւ ծաղկեցընել. մինչև Սարտենեայի թագաւոր եղաւ, որ մինչև մեր օրը անոնց ձեռուն տակը մնաց։

Այս կղզին զանազան քաղաքներ ունի. բայց մայրաքաղաքն է Բալաբի. որ հին ըլլալով երևելի շէնքեր ունի։

Որ է Գոռնէյա։

374. Այս կղզի Ճենովայի գիմացը կիյնի. երկայնութիւնն է 32 մղոն, և լայնութիւնն է 12. իսկ բնակիչներն են 200 հազար հոգի։ Բաց հռոմայեցիներուն և սպանիօլներուն ձեռքն էր, ուր քաղաքներ ալ շինեցին։ Յետոյ Ճինիվիզներուն անցաւ. որ անխոհեմութիւն ժողովուրդը կեղեքելով այնչափ ըրին որ ժողովուրդը ոտք ելաւ, և շատ տարի պատերազմելով Ճինիվիզները յաղթվեցան ու Ֆռանսիզներուն տակը մնան։ Ունի զանազան քաղաքներ. գլխաւորն է Պասդիա, որ ունի հին շէնքեր և 6000 բնակիչ։

Այս կղզիէն էր Պօնաբառթէն. որ առաջ Էլպա կղզին քշվեցաւ, և անկէ փախաւ (298)։ Իսկ Էլպա կղզին 37 մղոն հեռու է Գոռսիքայէն. և շրջապատն է 60 մղոն։ Շատ բարձրլից է, և ունի շատ հանքեր, որ գոսքանայի տակն է։

Ո՞Ր Է ՀՌՈՄ։

375. Հռոմայի տէրութիւն է միջին մասն Իտալիայի. տարածութիւնն է 800 մղոն, և 2 միլիոն բնակիչ ունի։ Հին ատենը անանկ փառաւոր և մեծաշքոր տէրութիւն էր որ բոլոր աշխարքի կը տիրէր, ու արևելք արևմուտք իր տակն էր։

Իսկ հիմակվան քաղաքական տէրն է Սրբազան Հայրապետը, որ իր իշխաններով կը կառավարէ։ Ոյնպէս կարդինալներն են հոգևոր իշխան. որոնց թիւը 72 պիտի ըլլայ. և 3 դաս կը բաժնվին։ Երբոր Հռոմայու Հայրապետը կը վախճանի, կարդինալները կը ժողվվին խորհրդարանի մը մէջ. ոչ դուրս կելլեն և ոչ իրարու հետ կը խորհին։ Այլ հոգևոր արարողութիւն, ամէն մէկը առանձին կը գրեն ընտրելու Հայրապետին անունը, և իրար վիճակ ձգելով կը դնեն խորանին վրան։

Երբոր օրը կուգայ ամէնքը հոն կը ժողվվին ու կը բանան այն թղթերը. եթէ շատին ընտրուիը միաբանի մէկին վրա՝ կըլլայ Հայրապետ.

որ 8 օրէն ետև եկեղեցին կերթան, ու մեծ հանդէսներով թաղ կը դնեն։

Ռանդ կը բաժնուի։

376. Հռոմ 13 գաւառ կը բաժնուի, շատ քաղաքներ և գեղեր ունի. բնակիչներն են 2 միլիոն։ Ուրջի գաւառն է Պապ Հռոմայ, որ Նաբոլիի սահմանակից է։

Ահա այս գաւառին մէջն է Հռոմ մայրաքաղաք մեծ և փառաւոր։ Հին ատենը ամէն քաղքի գլուխն էր, և աթոռ թագաւորներուն. որ 744 տարի յետէն առաջ շինված է Հռոմուլոս առջի թագաւորէն. բայց շատ փոփոխութիւն տեսաւ։ Ուրաջ 7 լեռան վրա շինված էր. հիմա 12 լեռան վրա է։ Շրջապատն է 10 մղոն. և բնակիչներն են 165 հազար։

Այս քաղքին մէջ եղած մեծաշէն պալատները՝ վանքերն ու եկեղեցիները տեղմը չի կայ։ Ամբոր քաղաքը 14 վիճակ կը բաժնուի. ամէնուն մէջ ալ զարմանալի բաներ կան։

Պէտրոսի եկեղեցին եօթնեորդ վիճակին մէջն է. որ է հրաշա-

լի և մեծագործ։ Երկայնութիւն է 840 ոտնաչափ, լայնութիւն է 725. իսկ բարձրութիւն է 300։ Որչափ մեծ և փառաւոր է որ կարծես թէ քաղաքմ՚ է։ Պրայի գունտը խընձորի չափ կերևնայ, բայց մէջը 30 հոգի կը սղմին։ Պօղոս պետրոսի գերեզմանները եկեղեցնայ մէջ տեղն են։

Այս եկեղեցնայ մօտ շատ երևելի շէնքեր կան. մեծ պալատը հազարաւոր խուց ունի, և 22 քառանկիւն շինվածք է։ Իսկ Վատիկանեան գրքատունը 8 սենեակ՝ ունի լեցուն բիւրաւոր գրքերով։

Մոռղլատերանու եկեղեցին, Հայրապետին պալատը, և հին շէնքերը, աշտարակները, են։ Որչափ ուխտատեղիներ և մեծամեծ շէնքեր կան որ չեն հատնիր։ Իսկ աշխարհական գլխաւոր իշխանը Վամբիտոլիոն կը նստի, որ է փոխանորդ Հայրապետին։

Ո՞Ր Է ԱՆԿՈՆԱ։

377. Այս հռոմայի գաւառը ադրիական ծովին քով կիյնի. շատ քաղաքներ ունի, բայց գլխաւորն է

Ընքոնա քաղաքը մեծաշէն՝ շատ վանքերով և եկեղեցիներով։

Փառաւոր մայր եկեղեցնայ մէջն է ՝ածածնայ հրաշագործ պատկերը՝ որ 1796 ին աչքը բացաւ չորս դին կը նայէր շատ օր, մինչև աշխարք զարմացաւ։

Ընքոնայի մօտ է Լ՝օռէդօ քաղաքը. և հոն է ՝ածածնայ տունը երուսաղէմայ բերած. ուր բնակեցաւ ՝ածամայրը, և հոն աւետումն ալ եղաւ, որ էր Նազարէթ։ Այս տանը երկայնութիւն է 43 թզաչափ, լայնութիւն է 18, և բարձրութիւն է 26։ Երկու մասն կը բաժնըվի. և 3 դուռ ունի. մէջ տեղը խորան կայ. հոն պահած է ՝ածածնայ կերակուրին ամանը և կարմիր հագուստը։

Այս սուրբ տանը մէջ խիստ շատ հարստութի և գանձ կար, մեծագին զարդեր և անգին քարեր. որ թագաւորներն հրաշքը տեսնելով ընծայ ըրեր էին. բայց Ֆռանսըզները շատը յափշտակեցին։

Ո՞ր է պօլենէա։

378. Հռոմայու երևելի գաւառն է, շատ քաղաքներ ունի և 200 հա-

զար բնակիչ։ Ղ-ալխաւորն է Պօլօ-
նեա քաղաք հին և գեղեցիկ, ուր
70 հազար բնակիչ կայ. շրջապատն
է 3 մղոն. և ամէն արուեստ գիտուի
ծաղկած է հոն. շատ դպրոցներ և
եկեղեցիներ կան։ Ղ-ալխաւոր ուսումն-
նարանը Թ-էոդոս Թագաւորին շի-
նածն է, մեծամեծ սրահներով և
խուցերով. ամէն գիտուի կայ այս
դպրոցին մէջ։

Ասկէց շատ հեռու չէ Ֆէռառա
քաղաքը հին և գեղեցիկ. բնակիչ-
ներն են 32 հազար, որ նոյնպէս
հռոմայու տակն է. ուր շատ երևելի
շէնքեր կան։

Ո՞Ր Է ՊՕՍԿԱՆԱ։

379. Այս աշխարքը երևելի մասն
է իտալիայի, որ Հռոմայի տէրուէն
կըսկըսի մինչև միջերկրական ծովը
կերթայ։ Ցարածուին է 440 մղոն
և բնակիչներն են մէկ միլիոն։

Այս ժողովուրդը եգիպտացոցմէ
եկած են. ինչպէս իրենց սովորուիը
կը յայտնէ. որ ջրհեղեղէն ետև ե-
կեր հոս ազգեր են, ու տէրուի հաս-
տատեր են հռոմայէն առաջ։

Դայց ժամանակ անցնելէն ետև լատին ազգն ալ ասոնց հետ կը միանայ. որով երևելի տէրուն մը կըլլան, որ միայն 12 մայրաքաղաք ունէին։

Սակայն հռոմ շինվելէն ետև հռոմայեցիք ասոնց տիրեցին. յետոյ լոմ պարտացիք տիրեցին։ Դակ 1531 ին, ինքնագլուխ ըլլալով իշխան մը դրին, որ յետոյ դուքս կոչվեցաւ. և հիմա նէմցէի կայսեր ցեղէն կըլլայ դուքս դօսքանայի։ Դ.յս աշխարքք 3 գաւառ կը բաժնըվի։

Ո՞ր կը նստի դուքսը։

380. Դուքսը կը նստի Ֆիօրէնցա մայրաքաղաքը մեծ և հարուստ։ Դ.ն խարքիս մէջ ասանկ գեղեցիկ քաղաք չի կայ։ Դ.ունս գետը մէջէն կանցնի. 7 դուռ և 17 աղեռոր հրապարակներ ունի։

Գեղեցիկ արձաններով սքանչելի շէնքեր և փառաւոր վանքեր կան, նաև 172 եկեղեցիներ՝ անգին քարերով շինած։ Ունի փառաւոր ուսումնարան և դպրոցներ զանազան արուեստի և գիտութեան։ Շատ փառաւոր է մայր եկեղեցին զար-

մանալի քարերով և արձաններով զարդարած։ Ուր եղաւ Ֆիլօրէնցայի ժողովը 1439 ին, և հոն միաբանեցան յոյներն ու լատիններն, Թէպէտ յեռոյ յոյները զատվեցան։ Նշխանին պալատը այնչափ մեծ շինվածք է որ 900 խուց կայ մէջը, զանազան արուեստներով ձեւացուցած։ Նաև շատ երևելի պալատներ ալ կան անգին բաներով լեցուն։ Ինակիչներն են 82 հազար հոգի։

Ո՞Ր Է ԲԷՊԷ։

381. Պօսքանայի երկրորդ գաւառն է Ինիզա, մայրաքաղաքն է գեղեցիկ և հին. մէջէն գետ կանցնի, ու շատ փառաւոր շէնքեր՝ մեծամեծ եկեղեցիներ՝ վանքեր և դպրոցներ ունի։

Երևելի ուսումնարան մը ունի, որուն մէջ 40 վարդապետ գիտութիւն կը սորվեցնեն։ Այդ եկեղեցին շատ փառաւոր է, ու գեղեցիկ սիւներով և պատկերքներով զարդարված է, 3 պղնձէ դռներով։ Պատուական գերեզմանատուն մը կայ չորս դին աղեւոր զարդարած։ Անէջը տեղը կայ, որ հողը երուսաղէմայ բերած են.

անոր համար ՝Ի Էրէրէ կըսեն։ Ամրուն մէջ մեռելները երկու օրը հոգ կը դառնան։

Երևելի զանգակատուն մը կայ 95 կանգուն բարձր, որ 7 կանգուն մէկ դի ծռած է արևեստով, որ բան մը չըլլար։

Այս քաղաքը տրոյայի պատերազմէն դարձողները շինեցին. և հին ատենը շատ զօրաւոր էին. յետոյ տկարանալով հռոմայեցոց տակն ընկան։ Բնակիչներն են 20 հազար։

Ո՞Ր Է ԱԷՆԱ։

382. Երրորդ գաւառն է Աէնա, որ ունի 116 հազար բնակիչ և զանազան քաղաքներ. իսկ մայրաքաղաքն է հին և մեծ, երևելի շէնքերով լեցուն։ Բայց բնակիչներն են 15 հազար։

Այս կողմը կիյնի ՝Եբ Մարինոսի երկիրը, որ է 40 մղոն. բայց չորս դին լեռ ըլլալով անառիկ է և ինքնագլուխ կը կառավարվին, որոնց սկիզբն եղաւ ՝Եբ Մարինոս եպիսկոպոսը, որ ժողովուրդը քրիստոնեայ ըրաւ։ Հոս մօտ է և Բիսմպինոյի

իշխանութիւն. որ է ինքնագլուխ պզտիկ հասարակութիւն։

Ո՞Ր Է ԼՒՎՈՆՈ։

383. Լիվոռնա քաղաքն է միջերկրական ծովին քով. որ թէպէտ շատ մեծ չէ, բայց 45 հազար մարդ կայ մէջը։ Ունի երեւելի շէնքեր և եկեղեցիներ։

Շատ վաճառականի տեղ ըլլալով հայ վաճառական իշխանները պայծառ եկեղեցի մը շինեցին 1689 ին, և մինչև հիմա հայոց ձեռքն է։

Տես ինչ մարդիկներ այս աշխարհս էին,
փոփոխ աշխարհէս անցին ու գացին.
Մխայն խմասաուն և բարի մարդիկ,
աղէկ անուանով անմահ մնացին։
Ըլլայ թէ նման ըլլաս յիմարին,
որ ունայն յուսով հովին ջանացին.
Առաքինութենց ետևէն եղիր,
բարի վարքդ ըլլայ քարոզ քու անձին։

ԿԴ. ՀԱՄԱՐ

Կամ այլ մասն Իտալիայի։

384. Իտալիայի վերի մասը մնաց որ դօսքանայէն և վենետիկէն կըս կըսի մինչև Ֆռանսա կերթայ, ո 7 տերութիւն կը բաժնըվի։

Առջի տերութիւնն է Միլանի նահանգն, որ վենետիկէն սկսելով 108 մղոն երկայն կերթայ. ունի 3 մեծ լճեր հանդերձ կղզիներով։

Այս աշխարքին առաջ լոմպարտացիք կը տիրէին. ետքը Ֆռանսըզներուն անցաւ։ Նկէ ետև ինքնագլուխ դքսութիւն եղաւ։ Սակայն շատ փոփոխութիւն անցնելէն ետև հիմա նէմցէներուն տակն է։

Ո՞րն է մայրաքաղաքը։

Այս տերութիւն մայրաքաղաքն է Միլան մեծ հին և բազմամարդ։ Շրջապատն է 10 մղոն և 120 հազար բնակիչ ունի։ Շատ երևելի շէնքեր և դպրոցներ կան մէջը. 61 մեծ եկեղեցի, 61 վանք մարդկանց

և 60 վանք կանանց. նաև 100 եղ-
բայրութիւն կայ որ ունին մեծամեծ
ժողովարաններ։

Այլ եկեղեցին շատ երևելի է,
որ 1386 ին շինվեցաւ. երկայն 449
ոտնաչափ, և բարձր 385. գմբէթը
57 սիւներու վրա շինած է։ Բոլոր
շէնքն է ահեղ, մէջը զարդերով լե-
ցուն է։ Կան ուրիշ շատ փառաւոր
եկեղեցիներ։ Ասումնարանին մէջ
փառաւոր գրքատուն մը կայ ուր 40
հազար գիրք կայ. թող ուրիշ բա-
ները։ Այս քաղաք շատ հին է. զի
395 տարի հռոմայէն ետև շինվե-
ցաւ. 40 անգամ պաշարվեցաւ և
20 անգամ առնվեցաւ։ Աբ Ամ-
բրոսիոս այս քաղքին եպիսկոպոսն
էր։ Միլանու տակը քանի մը գա-
ւառներ կան. զորօրինակ Բաւիա,
Բռէսմա. և 7 վիճակը։

Ո՞Ր է Բառմա։

385. Բառմա և Փիաչէնցա երկու
տէրուտի են միլանէն անդին։ Բառ-
մայի մեծութիւն է 90 մղոն։ Շատ
բազմամարդ ըլլալով հին ատենը
ինքնագլուխ էր, ետքը հռոմայեցոց
և միլանցոց անցաւ։ Բայց հիմա

ինքնագլուխ դքսութիւն ըլլալով Պա-
նաբառթէին կնկանը ձեռքն է։

Մայրաքաղաքը շատ գեղեցիկ՝ 30
հազար բնակիչ ունի։ Այնպէս Թիա-
ջէնցա փառաւոր քաղաք՝ 24 հազար
բնակիչ ունի, գեղեցիկ շէնքերով
զարդարած։

Մօտենայի դքսութիւնը սահմանա-
կից է հոն, ունի գաւառներ և քա-
ղաքներ։ Այնպէս Մօտենա մայ-
րաքաղաքն է հին և փառաւոր, որ
30 հազար բնակիչ ունի։

Լոռնման է և Մանդուայի դքս-
սութիւնը. որուն մայրաքաղաքն է մեծ
լճի մը մէջ, 4 կամուրջով ցամաքը
կելլէ. և 16 հազար բնակիչ ունի։
Որոնց հիմա կը տիրէ նէմցէն։

Ո՞Ր Է ԸՆԹԱ։

386. Այս տէրութի միջերկրական
ծովին կողմն է Դօսքանայի մօտ. իր
սահմանն է 170 մղոն, շատ բերդ
ունի, և 118 հազար բնակիչ։

Առաջ ինքնագլուխ ըլլալով կա-
ռավարուին էր 200 իշխաններուն
ձեռքը, ունէր նաև դուքս. որ շատ
խելացի կանոններով կը կառավա-

րէին։ այլ յետոյ Ֆռանսիզները ի-
րենց տակն առին։

Մայրաքաղաքն է Լուքքա հին և
փառաւոր, 3 մղոն է շրջապատը և
24 հազար բնակիչ ունի։ Որուն մէջ
շատ գեղեցիկ և մեծագործ շէնքեր
և եկեղեցիներ կան։

Մայր եկեղեցեայ մէջն է հրաշա-
գործ մարմինը Ղազն գաւթի, որ հայ
էր։ շատ հրաշքներուն համար մեծ
ջերմեռանդուն կընէ ժողովուրդը։

Ո՞Ր Է ՍԱՎՈՅԱ։

387. Ս.յս աշխարք Ֆռանսայի
կողմը կիյնի։ երկայնութիւնն է 99
մղոն։ իսկ բնակիչներուն շատը աղ-
քատ և խեղճ են։ Որ առաջ ինքն-
իշխան գուքս ունէին, յետոյ թա-
գաւոր եղաւ։ Վերջը ուրիշներուն
անցաւ։ Ունի զանազան գաւառներ
և շատ քաղաքներ։ Ս.սոր մասն կը
սեպվի Սիկմոնդէի նահանգը, որուն
մայրաքաղաքն է Ղուռին մեծ հին
և գեղեցիկ։

Շրջապատն է 4 մղոն ու կէս։
ունի Երևելի շէնքեր, դպրոցներ, և
փառաւոր եկեղեցիներ։ Իսկ բնա-
կիչներն են 80 հազար հոգի։

Ո՞Ր Է ՋԷՆՈՎԱ։

388. Այս աշխարքք Չինիվիզներուն տերուին է, որ հին ատենը այնչափ զօրացան որ արևելք գացին, և մինչև սև ծով հասան, շատ տեղի տիրեցին։ Որուն մէկ կողմն է Ռիէմանթէ, մէկալ կողմն է միջերկրական ծովը։ ՅարաձուԹիւնն է 90 մղոն. ունի գաւառներ և շատ քաղաքներ. նաև միլիոն ու կէս բնակիչ։

Հին ատենը լիգուրացիները կը տիրէին. յետոյ հռոմայեցոց անցաւ։ Ռամանակէն ետև ինքնագլուխ ըլլալով շատ զօրացան, մանաւանդ 12 դարուն։ Սակայն երբոր Ջանացին բոլոր Ջերմակ ծովին տիրել, սաստիկ պատերազմերով քիչ քիչ տկարացան ու շատ տեղ կորուսին։

Ալ երջապէս Փռանսայի տակն ընկան. յետոյ ինքնագլուխ դուքս ունէին, որ իշխաններով կը կառավարեր մինչև Պոնապարթէին ատենը։ Այց հիմա Սառտենեայի դուքսը թագաւոր եղավ Ջէնովայի։

Ո՞ր է Մայրաքաղաքը։

Մադագասքարանիստ քաղաքն է Ն՚էնովա գեղեցիկ մեծ և հարուստ, մի ջերկրական ծովին վրա։ Ապահով և մեծ է նաւահանգիստը. բարձր աշտարակ մը ունի, ուր գիշերը 35 ճրագ կը վառեն նաւերուն համար։

Ընակիչներն են բարբարամիտ և շահասէր. 100 հազար մարդ կելլէ։ Շատ վաճառականուն կը լլայ հոն։ Մեծամեծ շէնքեր, վանքեր և եկեղեցիներ ունի։ Մեծ կամուրջ մը կայ, որ երկու լեռը իրար կը կապէ, բարձր 90 ոտնաչափ, և երկայն 170 քայլ։

Այս քաղաքս շատ հին է. և շատ ազգերու ձեռք անցաւ։ Ետքը լոմ պարտացիք տիրեցին. որոնց Թագաւորուէր Կարոլոս Թագաւորը վերցընելէն ետև՝ շատ փոփոխուեց տակ ընկաւ։

Ն՚էնովայի արևմտեան մասն է Սալոնա քաղաքը գեղեցիկ և բարեշէն. որուն տակը քանի մը քաղաքներ և բերդեր կան։

Ո՞Ր Է ՍԻՑԻԼԻԱ։

389. Այս տէրութի իգալիայի նէմ ցէի և Ֆռանսայի մէջ տեղն է։ Երկայն 270 մղոն, և լայն 99. որ 102 քաղաք ունի և 2 միլիոն բնակիչ։ Ուր սոսկալի բարձր լեռներ կան։

Պոդպարտոս լեռան բարձրութիւն է 12 հազար ոտնաչափ. ուր անպակաս է ձիւնը։ Բայց շատ անգամ գլուխը ձիւն չի կայ՝ բարձրութիւնը համար։ Այս պատճառաւ շատ ցուրտ և անբեր երկիր է։ Սակայն անասունները մեծ են. եղը 100 հոխայէն աւելի կուգայ։

Բնակիչները շատ քաջ և պատերազմող մարդիկ են, նաև սրամիտ և Ճարտար. կերակուրնին չափաւոր. իսկ լեզունին նէմցէի է, և կրոննին ուղղափառ։

ՎԱՆԻ՞Կ ԲԱԺՆԸՎԻ։

390. Ֆին ատենը 4 մասն կը բաժնըվէր, և հիմա 13 նահանգ։ Առջի բնակիչները գաղղոս ազգէն եկած են, որ հռոմայեցոց հնազանդեցան։ Յետոյ նէմցէներն ու Ֆռանսըզները փոփոխ կը տիրէին։

Սակայն նէմցէնները այնչափ զանոնք սրխմեցին որ գլուխ քաշեցին ինքնագլուխ եղան, և շատ պատերազմելէն ետև 1332 ին իրենց տէրունը կամ հասարակունը հաստատեցին։

Ուստի այս 13 նահանգը իրարու հետ միացած են Թշնամիի դէմ. բայց ամէն նահանգ ալ ինքնագլուխ կառավարութիւն ունի։

Տեղ կայ որ միայն ազնուականները կը կառավարեն. տեղ ալ կայ որ արուեստաւորներն ալ կառավարութիւնի մէջ կը մտնեն։

Ամէն մարդ պարտական է զինուորուն սորվելու, և ամէն պէտք եղած զէնքերն ունենալու. որ հարկ եղած ատենը բարձր լեռներուն վրա կրակ վառելով նշան կուտան։ Ասով ամէն մարդ իր զէնքը կառնէ կը պատրաստվի իր հայրենիքը պաշտպանելու համար։

Ո՞ւր է Մայրաքաղաքը։

391. Յուռիկ կըսվի իշխանանիստ քաղաքը. շատ հին և երևելի է մեծամեծ շէնքերով և դպրոցներով։ Ոյնպէս Պէռնա քաղաքն է մեծ և

հին. բայց բնակիչներուն շատը կալ-
վինական հերետիկոս են։

Այս աշխարք շատ լեռնոտ ըլլա-
լուն համար քաղաք շատ չունի, շա-
տը գեղեր են։ Ուր կան նաև մէկ
քանի անկախ տէրուներ՝ նէմցէի
և իդալիայի կողմը, որ մէյմէկ մեծ
գաւառներ են, և զվիցցէրիի հպա-
տակ կըսվին։

Ո՞Ր Է ՃԻՆԷՎԷ։

392. Այս քաղաք զվիցցէրիի և
Ֆռանսայի մէջն է. որ ինքնագլուխ
ազատ քաղաք է՝ մեծ հարուստ և գե-
ղեցիկ։ Շատ երևելի շէնքեր և
դպրոցներ ունի. և ամէն արուեստ
ծաղկած է հոն, մանաւանդ ժամա-
ցոյցը. իսկ բնակիչներն են 27 հա-
զար. շատը կալվինական են։

Այս ինքնագլուխ 3 իշխան ու-
նէին, և 3 ժողովքով կը կառավար-
վէին։ Հասարակուիը տարին 2 ան-
գամ քաղաքական ժողով կընէր տե-
ղուէ հարկին համար։ Սակայն եռքի
ատեններս Ֆռանսըզներուն տակը
մնան։

Այս քաղաքին քով երկայն լիճ
մը կայ, որ 18 ժամու ճամբայ է.

իսկ լայնու�է 4 ժամու Ճամբայ. ուր կը մտնէ Ոռոտանոս գետը, և Ճիշ նէվրայի քովէն կելլէ ու քաղաքը 3 մասն կը բաժնէ, որ մեծագործ կամուրջներով կցված են իրարու հետ։

Խրատ են ասոնք՝ յատուկ քու անձին,
որ հմուտ ըլլաս ամէն մէկ ազգին.
Խելացի ազգերն առաջ գնացին.
իսկ անմիտ մարդիկ միշտ ետ մնացին։
Թէ կուզես ըլլալ պարծանք քու ազգին,
մի գպչիր բնաւ ուրիշի սրտին.
Պէտք է յարմարիլ ամենուն կամքին,
որ մարդ պիտանի ըլլաս աշխարհին։

ԿԵ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ՔՈՒԱՆՈՍ։

393. Ա.յս մեծ և բազմամարդ աշխարքը զվիցցերիէն կըսկըսի մինչև Սպանիա, Ֆիանտրա և Ովկիանոս կը հասնի։ Տարածուած է 160 հազար մղոն. 33 նահանգ կը բաժնըվի. հարիւրաւոր գաւառ, անհամար քաղաք, և 35 միլիոն բնակիչ ունի։

Ա.յս ազգին բնուելը անոյշ է, հետաքրքիր և փոփոխամիտ։ Շատ ուսումնասէր մարդիկ են. նաև սրա

միտ և Ճարտար ըլլալով ամէն բանի յարմարութիւն ունին և մէկէն ամէն բանի կը վառվին։

Որոնց լեզուն խառնած է լատինի և նէմցէի բառերով. բայց սկիզբն է կեղտերուն լեզուն. որ Թէպէտ շատ օտար բառերով խառնած է, բայց զանազան կանոններով այնչափ կատարելագործեցին, որ գեղեցիկ և անոյշ լեզու մը ձեւացաւ։

Ասոր էկած են։

394. Որոնք կեղտ ազգէն եկած են. անոր համար գաղղիացի և գաղատացի կըսվին։ Բայց յետոյ Յուլիոս կայսր տիրեց իրենց՝ հռոմայու գաւառն ըրաւ։ Որոնք նէմցէի կողմէն Ֆռէնկ ազգը եկաւ կոխեց գաղղիա. և ասով Ֆռանսըզ կոչվեցան։ Որ ժամանակի Թագաւորը մկրտվեցաւ 496 ին. որ ուրիշ ազգերու տիրելով շատ մեծցուց իր տէրութիւն։ Որոնք որդոց որդի տիրեցին մինչև մեծն Կարոլոս, որ այնչափ մեծցուց և փառաւորեց Ֆռանսա որ Հռոմայու կայսր օծվեցաւ 800 ին։

Յամանակէն ետև իշխանները զօրանալով կը տիրէին, և շատ խառ-

վուիներ ըլլալէն ետև՝ երկար ատեն քանիմը ցեղ թագաւորեցին. մինչև որ Յոհաննէս Պուռիոյն նահանգին իշխանը ժառանգեց թագաւորութիւնը 1361 ին։

Լուսոր որդին Կարոլոս աւելի ընդարձակեց տէրութիւնը. և այսպէս որդւոց որդի թագաւորեցին մինչև Լուդովիկոս, որ աւելի կարգաւորեց։ Լ՚ և ահա ասոր ցեղէն էր ԺԷ երորդ Լուդովիկոս թագաւորն որ մեռաւ ցին 1799 ին։

Այս ապստամբութիւն ատենը այնչափ անզգամութիւն ըրին և այնչափ անպատմելի չարագործութիւններ ըրին հաւատքի և տէրութեան դէմ, որ բոլոր Ֆրանսա տակն ու վրա ընելէն ետև ամէն աշխարք խռովեցին և ամէն բարեկարգութիւն աւրեցին։

Վերջապէս այլ ուրիշ տէրութիւնները՝ չդիմացան, ամէնքը վրանին ելան բռնեցին Պոնապարթէն իրենց թագաւորը՝ որ Հելենէի կղզին աքսորեցին (298), ու Լուդովիկոս թագաւորին եղբայրը դրին իրենց թագաւոր ԺԸ երորդ Լուդովիկոս կոչելով։

Այս տէրութիւն ունի զանազան ժողովներ, որով կը կառավարէ ա-

մէն գաւառները. բայց գլխաւոր ժողովքը Փառլըման կըսվի, որ 9 խորհրդարան կը բաժնըվի՝ զանազան գործքերու համար։

Ի՞նչ կրօն ունին։

395. Հին ատենը կռապաշտ էին. բայց յետի աշակերտներուն ատենը քրիստոնեայ եղան է գարուն. և իրենց ուղղափառ հաւատքը անարատ պահեցին։ Մէպէտ 1598 ին կալվին նականները շատ զօրացան Ֆռանսայի մէջ, բայց շուտով հալածական եղան։

Սակայն վերջի ատեններս անհաւատներու գրքեր կարդալով՝ իրենց հին ածպաշտութիւնը մոռցան, ու սկսան անհաւատ ըլլալ։ Ու այնչափ չարացան որ եկեղեցիները քանդեցին, պատկերքները վերուցին, և շատ քահանաներ ջարդեցին։

Ատքը աւելի կատղելով սկսան իրենք զիրենք ջարդել, և շատ անպատմելի անօրէնութիւններ ըրին. մինչև որ Պոնապարթէն եգիպտոսէն դարձաւ՝ քանսոլ եղաւ, ու թոյլտուութիւն տալով եկեղեցիները բացաւ, և ուղղափառութիւնը հաստա-

տեց։ Եւ հիմա նորէն պայծառա-
ցաւ հաւատքը Ֆռանսայի մէջ. Թա-
գաւորը ամենաքրիստոնեայ կըսվի։

Ո՞Ր Է ՓԱՐԻԶ։

396. Փարիզ Թագաւորական քա-
ղաքը՝ Ֆռանսայի առջի նահանգին
մէջն է, որ կըսվի կղզի դաղղիոյ։
Այս քաղաքը հին ատենը կեղտերը
շինեցին ընդարձակ դաշտին մէջ։

Այն ազգը Փարիզ կոչվելուն հա-
մար այս քաղաքս ալ փարիզ ըսվե-
ցաւ. որ յետոյ Յուլիանոս Թագա-
ւորը և ուրիշները ընդարձակելով
շատ գեղեցկացուցին։ Անանկ որ հի-
մա եւրոպայի փառաւոր քաղաքն է։

Այս մեծագործ և բազմամասա
քաղաքին շրջապատն է 19 մղոն. և
20 թաղ կը բաժնըվի. 11 դուռ ու-
նի, և 967 մեծ Ճամբաներ, 50 հա-
զար տուն և 700 հազար բնակիչ։

Առաջ հարիւրաւոր վանքեր և ե-
կեղեցիներ կային, մեծամեծ ու-
սումնարաններ և փառաւոր դպրոց-
ներ։ Անանկ որ ամէն գիտութիւն և
արուեստ ծաղկած էր հոն. շատ երե-
ւելի գիտուններ և վարդապետներ
ելած են։

Ամէն թաղին մէջ երևելի շէնքեր, մեծագործ կամուրջներ և զարմանալի եկեղեցիներ կան։ Ամենից փառաւոր է մայր եկեղեցին՝ երկայն 65 ճողաչափ, լայն 24, և բարձր 17. սքանչելի խորաններով և սիւներով։ Նաև շատ երևելի է ուծածնայ եկեղեցին, որ լեռան վրա շինած է 40 տարուան մէջ, և 40 միլիոն ստակ գացեր է։ Պատերուն չորս դին արուեստաշէն արձաններով զարդարված էին, որոնք ուծաշուռնչին պատմուիր կը ձև ացրնէին ադամէն սկսելով։

Ամբէթին վրայ իւ բալլիքները պետրոս առաքեալին կուտար, անալ իր աշկերտին, և այսպէս բոլոր հայրապետներն իրարու կուտային մինչև վերջինը։

Նոյնպէս ամէն վարդապետներու և մարտիրոսներու պատկերքները կային նոյն եկեղեցնայ մէջ։ Սակայն ապստամբուէ ատենը անուծներուն կամքովը մէջի բաներն աւրեցին, ու գերեզմաննոց ըրին։

Ո՞րն են ուրիշ տեղերը։

397. Ինչպէս ըսինք հազարաւոր մեծ քաղաքներ կան Ֆրանսայի մէջ.

վան զի ամէն մէկ նահանգ ունի Եր-
ևելի մայրաքաղաք փառաւոր և
մարգաշատ։ Որէան մայրաքա-
ղաքն է Բ։ երելիա նահանգին մէջ,
որ լեցուն է երևելի շէնքերով. ուր
ատեն մը թագաւոր կը նստէր։

Հոյնպէս Լիոն է մեծ հին և փա-
ռաւոր մայրաքաղաք. 120 հազար
բնակիչ ունի. զանազան արուեստի,
ուսման, և վաճառականութեան տեղ է։

Կան նաև մեծամեծ քաղաքներ
ծաղկած նորմանտիայի մեծ նահան-
գին մէջ, Բրիտանիայի, և Անկը-
տոք նահանգին մէջ։ Բայց նահան-
գին մէջ Ոտուվիկոս թագաւորը
մեծագործ ջրի Խամբայ մը բացաւ
120 մղոն երկայն. որ միջերկրական
ծովէն մինչև ովկիանոս կրնան անց-
նիլ պզտի նաւով. ուր մէկ միլիոնէն
աւելի վէնետիկի ոսկի գնաց։

Ոսկ Թոսլոն քաղաքը Բրօվանս
նահանգին մէջն է, որ է հին և ան-
ուանի քաղաք ծովին վրա։ Ուր պա-
տուական նաւահանգիստ և նաւի
գործարան ունի. Ֆռանսայի նաւե-
րը հոն կը շինվին։ Երևելի է Բ։ի-
նեռն քաղաքը մեծ և հին, որ շատ
մեծագործ շէնքեր ունի։ Նաև փա-

ռաւոր է Տիօն քաղաքը Պուրկիոյն նահանգին մէջ։

Նոյնպէս կան երևելի քաղաքներ Շամբանիայի և Լոռէնայի նահանգներուն մէջ։ Սակայն ամենէն աւելի վաճառականութեան տեղ է Մարսիլիա հարուստ քաղաքը մեծ և հին, և երևելի շէնքերով զարդարված. որ ծովուն մօտ ըլլալով ամէն օր լեցուն է զանազան նաւերով։

Ո՞ւր է Հոլանդայի աշխարհը։

398. Հոլանտա Ֆռանսայի նէմցէի և ովկիանոսի մէջ տեղը կիյնի, որ 2 մասն կը բաժնըվի, Ֆիանտռա, և Հոլանտա. Ֆիանտռայի տարածումն է 21 հազար մղոն. և Հոլանտա անոր կէսն է, որ շատ գաւառներ և քաղաքներ ունի։

Ֆիանտռա 17 նահանգ կը բաժնըվի. և Հոլանտա 7. բնակիչներն են իբր 4 միլիոն։ Շատը կալվինական հերետիկոս են. բայց ուղղափառաբար կան։ Լեզունին խառնած է նէմցէի Ֆռանսըզի և սպանեօլի բառերով. Ֆիանտռացիք աւելի քարակ կը սեպվին։

Այս աշխարք հին ատենը նէմիէ-
ները կը տիրէին. յետոյ սպանեալ-
ներուն և գերանարզներուն անցաւ։
Սակայն վերջը ինքնագլուխ հասա-
բակապետուն եղան, որ իշխաննե-
րուն ժողովքովը կը կառավարվին
մինչև հիմա։

Ֆիանտռայի գլխաւոր քաղաքն
է Ռաս բերդաքաղաքը մեծ հին
փարթամ, և զօրաւոր։ Ունի փա-
ռաւոր դպրոցներ և շատ վանքեր
եկեղեցիներ և գործարաններ, որ
Ռատեսիա գաւառին մէջն է։ Կան
շատ քաղաքներ ամէն նահանգի մէջ։

Ո՞ւր է Հոլանտա։

399. Հոլանտա Պալթիկ ծովին և
ովկիանոսին կողմը կիյնի. բայց եր-
կիրը ծովէն ցած ըլլալով զարհուրե-
լի մեծ պատեր շինած են որ ջուրը
չի կոխէ։ Նաև զանազան Ճամբա-
ներ բացին ու ջուրը գետերու խառ-
նեցին։ Հիւսիսային ովկիանոսի կողմ-
էն Հոլանտա մտնելու բերան մը
կայ իբր ծովակ, որ ովկիանոսէն
ձևացած է։ Ռաջ լիճ էր, ետքը
ծովին ալիքները Ճամբայ բացին, որ
նաւերուն շատ աղէկ եղաւ։

Ընոր համար այս երկիրը մեկ հատիկ վաճառականուն տեղ է։ Ամէն արուեստ և ամէն գիտուն ծաղկած է. փառաւոր ուսումնարաններ և դորձարաններ ունի։

Հոլանտացիք բնական ուսումնասէր և շատ աշխատաւոր մարդիկ են։ Ինձ պզտիկ ուրիշ բան չեն հոգար, բայց եթէ շահիլ և մեծնալ. նաև ամէն օգտակար բան ծաղկեցընել իրենց մէջ։ Ամէն շատ զօրաւոր էին. իրենց կառավարութիւն է ազնուականներուն և արուեստաւորներուն ձեռքը, որ խոհեմութիւն կը կառավարվին։ Ամէն աւելի նաւեր ունէին, և մինչև հիմա երևելի նաւեր ունին ընկերուն. որով մեկ հատիկ եղան վաճառականութիւն մէջ։

Ո՞ր է գլխաւոր նահանգը։

400. Գլխաւոր նահանգը Հոլանտա կըսվի, որ է շատ բազմամարդ. 37 քաղաք և մեկ միլիոն բնակիչ ունի։ Ամստրդամ քաղաքն է Ամսդրատամ մեծ հարուստ և փառաւոր, նաև երևելի շէնքերով լեցուն։

Եւրոպայի մէջ սանակ բազմավաճառ քաղաք չի կայ. որ ջրոտ տեղ

բլլալով շատ կղզիներու վրա շինած է ու կամուրջներով միացած է։ Քաղքին ամէն Ճամբայէն ջուր կանցնի, և ամէն տեղ գիշերը լոյս վառած է։

Այս քաղաք կիսաբոլորաձև է. ցամաքին դին 26 բերդեր կան, և երկու կարգ ցիցեր զարկած են՝ 50 հազար ոտնաչափ տեղ։ Այս շրջապատին մէջ նաւերը կը կապեն այնչափ շատ, որ հեռուէն անտառի պէս կերևնան։

Մադէլ գետը մէջէն անցնելով երկուք կը բաժնէ այս քաղաքը, որուն տարածուին է 13 մղոն. և 200 հազար բնակիչ ունի՝ կէսը ուղղափառ, շատը հերետիկոս են։

Շատ երևելի եկեղեցիներ և դպրոցներ ունի. 24 եկեղեցի ուղղափառներն ունին։ Հայոց ազգէն ալ քանի մը տուն կան և եկեղեցի ունին։ Այս քաղքին կառավարութիւնը 90 իշխանաց ձեռքն է։

Կան ուրիշ քաղաքներ։

401. Հոլանտայի գաւառներուն մէջ շատ երևելի քաղաքներ կան. պորոբինակ Հարլեմ մեծ քաղաք և

ՏԷՎՖԹ, ուր երևելի շէնքեր և քաներ կան։ Լ՝էյտա քաղաքը մայր ուսումնարան ունի փառաւոր մեծ, նաև լեցուն գրքերով և զարմանալի քանեերով։

Շ՝ապիկ մը կայ հոն, որ մարդու աղիքով գործած են. և ջուխտ մը հողաթափ կայ մարդու կաշիէ շինած։

Նաև երկու հատ մարդու կաշի կայ քանած. և վահան մը կայ միակտուր սէտէֆէ, և այլ շատ գիտուէ քաներ կան հոն։

Հոլանտայի քովերը զանազան կղզիներ կան քարէլից, որ առաջ ցամաք էին, ետքը ջուրը կոխելով կղզի եղան։ Ամէն տեղ և ամէն քաղաքի մէջ ծաղկած է վաճառականութի և ամէն պիտուականութիւն։

Ո՞Ր Է ՔՐԷԹԷ։

402. Այս նահանգ վերջի մասն է Հոլանտայի՝ ովկիանոսին կից, ուր ծովը երբեմն երբեմն բարձրանալով երկիրը կը կոխէ։

Ինոր համար առաջ լեռներ շիներ էին, ու անոնց վրա կը փախչէին բնակիչները մինչև որ ծովը քաշվէր։

Այս աշխարքը 3 գաւառ կը բաժնուի, և 11 քաղաք ունի. հին ատենը թագաւոր ալ ունէր, վերջը Հոլանտայի հետ միացաւ. թէպէտ կառավարութիւն է ինքնագլուխ։

Ազանք շատ հին և զօրաւոր ժողովուրդ են. որ հին ատենը եկան հոն բնակեցան։ Այրաքաղաքն է Լէվարտէն մեծ գեղեցիկ և բազմամարդ, փառաւոր շէնքերով և եկեղեցիներով լեցուն։

Ռաջ ովկիանոս Ճամբայ բանալով մտեր էր այս աշխարքին մէջ, մեծ ծոց կամ լիմ ձևացընելով. յետոյ ջուրը քաշվեցաւ ցամաք եղաւ, և հիմա ընդարձակ արտեր են, ուր բան կը ցանեն։

Տես մարգկային ջանքն ինչ բաներ կընէ,
ինչ աշխարհի մէջ ինչեր կը շինէ.
Ամենայն բանի յաղթէ կը տիրէ,
ուրիշի վատտակն իրեն կը ձգէ։
Հոլանտէզք խելքով մեզի յաղթեցին.
հայոց առուտուրն իրենց անցուցին.
Ջանա՛ որ գործքիդ ուշադիր ըլլա՝,
օրինակ առնես խելացի ազգաց։

ԿԶ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է սպանիա։

403. Այս թագաւորութի դէպ 'ի արևմուտք կիյնի. որուն մէկ կողմն է Ֆռանսա, մէկալ կողմն է փորդուքալ։ Մէկ դին ալ միջերկրական ծովն է մաղրբալին դիմացը (247). և միւս կողմերը ովկիանոս պատած է։

Բոլոր տարածուին է 136 հազար մղոն. 139 մեծ քաղաք ունի, և շատ մանր քաղաքներ. իսկ բնակիչներն են 10 միլիոն. որ փարթամ և ծոյլ ըլլալնուն համար շատ չեն ազնիր, նաև իրենց երկիրն ալ անբեր է։

Մէպէտ շատ գպրոցներ ունին և 28 մեծ ուսումնարաններ ամէն արուեստով և գիտութիւն, բայց չունին ուսումնասիրուի. նաև լաւ կանոնով չի սորվեցնուն համար, գիտութիւնը չէ ծաղկած իրենց մէջ, և գիտուն մարդ չի կայ։

Աշխատանքէ փախչող թոյլ մարդիկ են, մեծասիրտ և հաստատ. ինչ սովորութիւն որ ունին, չեն ուզեր

փոխել. խիստ մեծութիւն սիրող են։

Ամենքը ուղղափառ ըլլալով ամենևին աղանդաւորներուն երես չեն տար ու չեն մօտեցներ։ Որոնք՝ որ Յակոբ առաքեալէն լուսաւորեցան։ Ամէն բաներնին հաստատ է. մարմիններնին սեւագոյն և վայելուչ է։

Ասիոյ եկած են։

404. Սպանեօլները հին ազգ են, որ փիւնիկեցոց ատենը կային. և իրենց լեզուն ալ ափրիկէի լեզուներուն հետ խառնած ըլլալով տարբեր լեզու մը եղած է. բայց աւելի լատին լեզուին մօտ է։

Այս աշխարքը շատ ազգերու ձեռքն անցաւ. վերջը Գուլթերը տիրեցին. և իրենց հետ միանալով մէկ ազգ մը եղան, ու թագաւոր դրին 5 դարուն մէջ։ Սակայն 712 ին Արաբները եկան սպանիայի մէկ մասին տիրեցին մինչև 400 տարի, և շատ լաւ կառավարելով ուսում և խելք սորվեցուցին իրենց. մինչև դպրատուններ բանալով արաբներուն մէջ եղած աստղաբաշխութիւն, փիլիսոփայութիւն և բժշկութիւը սպանեօլներուն սորվեցուցին (248)։

Յամանակէն ետև սպանեօլները հալածեցին զանոնք իրենց աշխարքէն, ու ինքնիշխան եղան. որ մինչև հիմա կերթայ. թէպէտ շատ փոփոխութիւններ տեսան Ֆռանսիզներուն ձեռքէն, բայց միշտ հաստատ կենալով յաղթեցին։

Յագաւորը ինքնագլուխ է, որ առաջ մեծ բանի համար ժողով կը-նէր իշխաններով և էպիսկոպոսներով, անանկ կորոշէր։ Բայց հիմա 11 ժողով ունի, անոնցմով կը կառավարէ։

Ընդլէս կը բաժնուի։

405. Բոյս աշխարքը 14 մեծամեծ նահանգ կը բաժնուի. որ առաջ մէյ-մէկ թագաւորութիւններ էին։ Ամենն նոր Պասդիլիայի երկայնութիւն է 250 մղոն. որ 3 գաւառ կը բաժնուի և երկար ատեն մնաց մուզիներուն ձեռքը։

Բոյս նահանգին մէջ է թագաւորանիստ Պատրիտ քաղաքը դաշտի մը մէջ շինած. որուն շրջապատն է 3 ժամու Ճամբայ, և 100 հազար բնակիչ ունի։ Շատ երևելի շէնքեր պալատներ և դպրոցներ ունի.

96 վանք և շատ եկեղեցիներ կան։ Շատ մեծագործ է Հրաշալի վանքը՝ որ Լորենցիոսի, որ 7 մղոն հեռու է մատրիտէն. շրջապատն է 1000 քայլ և 40 մատուռ ունի, ամէնը մեծագործ և զարմանալի։

Մէկ խորան մը կայ վերէն՝ի վար յասպիս քարէ շինած, որուն 5 միլիոն գացած է։ Ուր կան անհամար եկեղեցական զարդեր ոսկիէ մարգարտէ և անգին քարերէ։

Աւելի հրաշագործ շէնք է Թագաւորներուն գերեզմանը, որ է գետնափոր՝ լեցուն զարմանալի բանեերով նշխարքներով և անգին զարդերով։ Իսկ հին Վասգիլիայն մանաւոր Թագաւորուհի կը սեպվի. որ է երկայն 231 մղոն. 4 գաւառ ունի և գլխաւոր քաղաքն է Պուրկոս, ուր կան շատ վանքեր եկեղեցիներ և դպրոցներ։

Ո՞ր է անպալտասիա։

406. Այս աշխարք Թէպէտ սպանիայի նահանգն է, բայց ընդարձակ ըլլալով Թագաւորուհի կըսվի. նաև Թարշիշ կը կոչվեր։ Ուր 3 մեծամեծ

նահանգներ ունի. միայն Սիլիսիայի գաւառին մէջ 160 պզտի քաղաք և 15 մեծ քաղաքներ կան։

Հոն է Պատիշէ բաղմավաճառ քաղաքը մեծանուն. որուն ընդարձակ նաւահանգիստը լեցուն է նաւերով։ Շատ երևելի շէնքեր կան և ամէն ազգէ լեցուն մարդ է. իսկ բնակիչներն են 70 հազար։

Այս քաղաքին մէջն է վաճառականներուն ժողովը, և ամէն բան հոն կորոշեն։ Որը զի Ամերիկայէն եկած նաւերը հոն կը թափեն իրենց բեռը, և ամէն վաճառական հոն կերթայ կը գնէ։

Փինիկեցիները այս քաղաքին անունը կատիր դրին. որ 2 նաւահանգիստ և մուտ ունի։ Հոն մօտ է Ճիպրալթար բերդը քարաժայռին վրա, որ Ամերիկէի դիմացը կեցնի, և ինկիլիզներուն ձեռքն է։

Այս բերդին առջին ճերմակ ծովը նեղնալով սեպտէի բերանը կը ձևանայ 7 մղոն լայն. զի «Էրնէ էօթն ըսել է. ուստից ովկիանոս կը մտնեն (165)։

Ո՞ր է Կանադա։

407. Իսկ Կանադա մեծ և փառաւոր քաղաքն է վեցերորդ նահանգին մէջ, որ առաջ Թագաւորութիւն էր, երկայն 245 մղոն, որ 4 գաւառ կը բաժնուի և 500 հազար բնակիչ ունի։

Այդ քաղաքին բնակիչներն են 70 հազար, ուր շատ երևելի շէնքեր և վանքեր կան, փառաւոր հրապարակ դատաստանարան և դպրոցներ։ Նոյնպէս վալէնցիա է երևելի նահանգ երկայն 200 մղոն. Ձերմակ ծովն դէն 50 աշտարակ շինած կան, և մայրաքաղաքին մէջ երևելի ուսումնարաններ կան։

Նոյնպէս Կալիցիա, Նաւառռա, Նբակոնա և Կադալոնիա են երևելի նահանգներ։ Ունին մայրաքաղաք գեղեցիկ ծաղկած վաճառականուք։ Սպանիայի տակը զանազան կղզիներ ալ կան միջերկրական ծովն մէջ. ինչպէս են Պալեարեան կղզիները. ուր Մայորիքա կղզին 52 մղոն երկայն է։ Նմինքը հարուստ են և բարեբեր, նաև վա-

Հառաջանութիւն ծաղկած։ Մեռեալ ովկիանոսի կղզիները (297)։

Ո՞ւր է Ֆորդոֆալ։

408. Այս թագաւորութիւնը Եւրոպայի վերջի ծայրն ըլլալով նախնիք աշխարքիս Հոլիին է կըսէին. որուն մէկ կողմը սպանիա է, մէկալ կողմը ովկիանոս. և անկէ անդին այլ ցամաք չի կայ մինչև Ամերիկա։

Ֆորդ՝ փորդուքալ ըսել է Ֆորդո, այսինքն նաւանգիստ Վալէ քաղաքին։ Այս աշխարքին տարածունին է 29500 մղոն. և 2 միլիոն բնակիչ ունի։ Որոնք թէպէտ սրամիտ են և բաւական դպրոցներ ունին, բայց անփոյթ ըլլալով գիտուելը չէ ծաղկած իրենց մէջ։ Նաև մեծասիրտ ըլլալով իրենց գործքը ուրիշին ձեռքը կը ձգեն, ու շատ անգամ անով աղքատ կըլլան։ Սոնց լեզուն արաբացոց և եւրոպացոց լեզուներուն հետ խառնած ըլլալով անախորժ է։

Այս աշխարքը նաև լոսէպանիա կըսվի, ուր քրիստոնէութիւնը քարոզեցաւ Է դարուն, և ամէնքը ուղղափառ են. որ նախանձաւոր ըլլալով ամենևին

աղանդաւոր մը չի հանդիպացուցին։ Բ.ռաջ թէ որ հերետիկոս մը գտնէին, կրակով կերէին։

Լ.ՐԷ ԱԿՈՍ ՊԷՐՈՒԷԸ։

409. Հին ատենը այս աշխարքին զանազան ազգեր կը տիրէին. յետոյ փիւնիկեցիք եկան տիրեցին. անկէ ետև Հռոմայեցոց, նաև ափրիկեցոց անցաւ անանկ մնաց։ Բ.յն ժամանակը Հենրիկոս պուռկօնի իշխանը քրիստոնեաները գլխուն ժողվեց եկաւ թշնամիները վռընտեց, ու տիրեց այս աշխարքին։

Ընոր համար Բ.ասգիլիայի թագաւորը աղջիկն իրեն տվաւ ու զինքը կոմս ըրաւ փորդուքալներուն յամի 1093 ին։

Ընոր որդին թագաւոր պսակվեցաւ. անկէ ետև շատ տեղերու տիրեցին. յետոյ ընկան սպանեօլներուն տակը։ Սակայն 1640 ին գլուխ քաշեցին, և մինչև հիմա ինքնագլուխ կը կառավարեն։

ԼՈՆԴՐԷՍ ԿԸ ԲԱԺՆՎԻ։

410. Բ.յս տէրութիւն 6 նահանգ կը բաժնվի. գլխաւորն է Լ.ոնդրէսմա-

տուբրա. որուն տարածութիւնն է 117 մղոն։ Ուր է Լիզպոնա Թագաւորանիստ քաղաքը, Հարուստ, բազմամարդ, և մեծավաճառ։

Այս քաղաք 7 լեռան վրա շինած է գեղեցիկ տեսքով։ Երկայն է 8 մղոն. 36 դուռ և 77 աշտարակ ունի։ Լեցուն է երևելի շէնքերով և դպրոցներով. փառաւոր ուսուցչարան մը ունի 100 ազնուական տղոց համար։

Պիտի 31 երևելի եկեղեցի և 50 վանք ունի լեցուն ոսկեղէն և արծաթեղէն զարդերով։ Պէր ատենը երբոր Ֆռանսիզները հոն պիտի երթային, այս բոլոր գանձերը նաւը լեցուցին ու Թագաւորին հետ միատեղ Մադրիդա փախան. ետքը նորէն բերին։

Այս քաղաքս ամէն կերպ վաճառով լեցուն է. անպակաս նաւերը կերթան կուգան։ Շինվածքը շատ հին է. ոմանք կըսեն թէ Յաբէթի թոռն է շիներ։ Բնակիչներն են 200 հազարէն աւելի։ Սկէց էր՝ որ Պոտոն բատուացին և իր տունը մինչև հիմա կայ (360)։

Մէն դաւառի մէջ երևելի քա-

ղաքներ կան վաճառականութ ծաղ-
կած։ Ունին փարթամ եկեղեցիներ
վանքեր և դպրոցներ։ Պիերա մեծ
նահանգին մէջն է Ադրիլլա մեծա-
նուն քարձր լեռը. որուն մէջը դա-
տարկ ըլլալով տեղ տեղ գետի ձայն
կը լսվի որ մէջէն կանցնի. և ունի
զանազան հանքեր։ Ասկ Ալկարվիա
է վերջի մասն այս աշխարքին, որ
կը հասնի մինչև ծովը երկայն 112
մղոն. ունի քաղաքներ և բերդեր.
նաև 19 հազար տուն, և 64 հազար
բնակիչ։ Ասկէց անդին չի կայ ցա-
մաք տէրութիւն։

Արդ նորէն հասար աշխարհիս ճոթին,
անցար Եւրոպա հասար եզերքին.
Շատ տէրութիւններ տեսար փոփոխած,
որն յաւէտ ծաղկած որը խաւարած։
Տեսար ամէն տեղ գիտութիւնք կը գովվին,
և անոնց խելքով աշխարք կը ծաղկին.
Սորվէ ասոնցմէ խելք իմաստութի,
որ ծաղկած քաղաք մըլլաս աշխարհին։

ԿԷ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ԻՆԳԼԻԷՏԵՐՐԱ։

411. Այս ընդարձակ կղզին Եւրոպիայի՝ որ կըսվի Բրիտանիա, ովկիանոսի մէջն է Ֆռանսայի դէմ, 24 մղոն հեռաւորութիւն։ Ձևն է եռանկիւնի, որ առաջ երկու թագաւորութիւն էր Անգլիա, և Սկոտիա։

Այս երկու տէրութիւն 1706 ին միացան, որ երկու գեղով իրարմէ զատված էն։ Այ երջի ատենները Իռլանտիա կղզին ալ հետը միացաւ. որով եղաւ մեծ և զօրաւոր տէրութիւն հարուստ և անուանի։

Անիայն Անգլիայի տարածութիւնն է 46656 մղոն, 18 մեծ քաղաք և 650 պզտի քաղաք ունի. նաև 5 միլիոնէն աւելի բնակիչ, որ էն անուանի մարդիկ։ Իսկ սկոտիայի և Իռլանտայի բնակիչներն էն 3 միլիոնէն աւելի։

Ունչ բարդ ոանին։

412. Ինկիլիզները հարաւային ու հիւսիսային ազգերով խառնըված ըլլալով, ունին ծանրուն և տաքուն։ Ինոր համար Ճարտար և սրամիտ են, ուսումնասէր և հեռաքրքիր։

Ամէն գիտուն մի և արուեստ իրենց մէջ ծաղկած և կատարելագործած է։ Ատածելով և բարակուն թ ամէն բանին հնարքը կը գտնեն։ Ասոնք շատ ազնուաբարոյ և պատերազմող են. մանաւանդ ծովի վրա մեկ հատիկ են։

Ասոնց լեզուն հիւսիսային լեզուներով խառնած ըլլալով, լատինի և տանիմառքայի բառեր շատ ունին։ Դոքի ատենները աւելի կատարելագործելով ամէն ուսման մէջ կը գործածեն, և իրենց լեզուով կը շարադրեն գրեանքը, որ առաջ լատինի լեզուն կը գործածէին։

Այս ազգը առաջ կռապաշտ էր, և Է դարուն քրիստոնեայ եղաւ։ Ապակայն յետոյ կռապաշտ ազգերու տակ ըլլալով նորէն կռապաշտ եղան։ Դայց 596 ին Սրբազան Գրիգոր

հայրապետը քարոզիչներ ղրկելով զասոնք լուսաւորեց։

Յամանակէն ետև Հենրիկոս Թագաւորը՝ Հռոմայու դէմ գլուխ քաշելով բոլոր ինկիլիզներն ալ լուտերի և կալվինի աղանդներուն մէջ ընկան, թէպէտ շատ ուղղափառ ալ կայ մէջերնին։

Ոսկից եկած են։

413. Հին ատենը գերմանիայի առջի բնակիչները ինկիլթէռռա անցան, ու ինքնագլուխ ազգ մը եղան։ Ետքը Հռոմայեցիք տիրեցին ու Հնօնսալ դրին։ Երկար ատեն անցնելէն ետև Ս. աղենտիանոս կայսրը երեսէ ձգեց։

Ընատենը Սաքսոնիայի կողմէն եկան տիրեցին, ու 7 Թագաւորութիւն ըրին։ Սակայն 1041 ին ինքնագլուխ Թագաւորութի և ազնուապետական տէրութիւն եղաւ, ինչպէս է մինչև հիմա։

Ս. ան զի Թագաւորը առանց իշխաններուն բան մը չի կրնար ընել. զանազան ժողովքներով և իշխաններուն խորհրդով կը կառավարէ շատ աղէկ։ Երբոր մեծ բան մը կը

պատահի, հասարակ ժողովուրդն ալ կը մտնէ ժողովքին մէջ։ Այս ընդհանուր ժողովքն որ ֆառլամէնդ կըսվի, 7 տարին անգամ մը կը գումարեն. որ ամէն գաւառին դատաւորները կուգան 513 հոգի կըլլան։

Էկալ ժողովները տարին 4 անգամ կըլլան, ու 80 օր կը տևեն։ Նաև տարին երկու անգամ տէրուէ կողմանէ 12 դատաւորներ կերթան 12 նահանգներուն ամէն բանը կարգի կը դնեն. և կըսվին դատաւոր խաղաղութիւն։

Ինչպէս կը բաժնվի։

414. Ինկիլթէռռա առաջ 40 գաւառ կը բաժնըվէր, հիմա 7 նահանգ։ Առջի նահանգն է Սասէքս. որուն մէջն է Ինտռա կամ Ինտոն թագաւորանիստ քաղաքը մեծ փառաւոր և բազմամարդ։

Երդ՝ Ինտոն քաղաքը Թէմզ գետին երկու կողմը շինած է 9 մղոն երկայն. որ ունի 8 դուռ, 120 հազար տուն, և միլիոն մը բնակիչ։ Այս մայրաքաղաքն 3 քաղաքէ ձևացուցած է. 26 թաղ կը բաժնըվի. և ամէն մէկը վերակացու ունի։ Ի-

այն 244 ինկիլիզի եկեղեցի կայ, և 189 ուրիշ հերետիկոսներու, նաև ուղղափառներու։ Մեծամեծ հիւանդանոցներ և աղքատանոցներ հարիւրաւոր կան, ամէն մէկին մէջ 600 հիւանդ կան։ Շատ փառաւոր դպրոցներ վաճառանոցներ և ուսումնարաններ կան, ուր հազարաւոր տղաք կը կարդան։

Այր եկեղեցին՝ որ Պօղոսի՝ շատ մեծ և փառաւոր է՝ նման Հռոմայու՝ որ Պետրոսին. որ զարմանալի սիւներով դրսէն զարդարված է։ Այս սիւները տրուվադայ քաղաքին շինվածներէն է։

Եկեղեցնայ երկայնութիւնն է 500 ոտնաչափ. լայնութիւն է 250, և բարձրութիւն 340. իսկ գմբէթին տրամագիծն է 100 ոտնաչափ։

Հին ատենը Անահիտ կուռքին տաճարն էր, յետոյ եկեղեցի ըրին։ Ինչպէս եկեղեցին՝ որ Ստեփաննոսի, և՝ որ Գէորգի փառաւոր են։ Թէմզ գետին վրա մեծ աշտարակ մը կայ, որուն շրջապատն է մէկ մղոն. ուր կը պահեն թագաւորական զրվածները, զէնքերը և դանձը. շատ մեծագին քարեր և անդիւտ բաներ

կան հոն։ Նրևելի է Բանդէօն շինվածը մեծագործ, որ մեծամեծնեբուն ուրախանալու և խաղի տեղ է։ բոլոր սիւներով, գեղեցիկ կամարներով և արձաններով զարդարված է։

Պիշերը 4000 մեծ ձրագներ կը վառեն, որ ցորեկի պէս կը լուսաւորեն, ու բոցը չերևնար։ Կան նաև անհամար մեծագործ շէնքեր և զարմանալի կամարներ և պալատներ։

Ո՞Ր Է ՍԷՎԼԻԱ։

415. Այս աշխարք արևմտեան մասն է Ինկիլթէռռայի, որ գերմանական ծովուն դին կկնի։ Տարածուին է 25600 մղոն։ Ամբ ամառվան օրը 18 ժամէն աւելի է, և գիշերը արշալոյս է միայն։

Սկոտացիք հին ատենը նէմցէի կողմէն եկան տիրեցին, և երկիրն ալ իրենց անուամբը կոչվեցաւ։ Որոնք առաջ շատ հաստ և բիրտ էին։ բայց այնչափ դպրատունները զիրենք բարկրցուցին։

Այսոնք մինչև հիմա շատ արտարոց սովորութիւններ ունին, մանաւանդ հիւսիսային կողմինները։ զգեստնին ալ հին հռոմայեցոց ձևն է։ իսկ հա

բաւայիններեր քիչ մը բարակ են աշ-
խատասէր և պարկեշտ։

Ռաջ ինքնագլուխ թագաւոր ու-
նէին, յետոյ միացան. բայց ունին
ինքնագլուխ իշխաններ, որ 3 ժողո-
վով կը կառավարեն։ Ինչպէս մեծ
բաները ինկիլթէռռայի փառլամէն-
դը կորոշէ։ Սկոտացիք առաջ կռա-
պաշտ էին. վերջը կրօնաւորներ գա-
ցին հոն քարոզելով բոլորը լուսաւո-
րեցին Պրոտեստանտական օրը։ Ար-
պէտ ժամանակէն ետև կալվինական
եղան, բայց շատ ուղղափառներ ալ
կան մէջերնին։

Ո՞Ր Է ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ։

416. Սկոտիա 3 մասն կը բաժնը-
վի. բայց մայրաքաղաքն Էդինպուրը
Լօթիրն գաւառին մէջ. որ մեծ և
բազմամարդ քաղաք է, ունի անա-
ռիկ բերդ, մեծ շէնքեր և եկեղեցի-
ներ։

Գաւառաւոր է ուսումնարանը, որուն
մէջ նորանշան բաներ կան։ Ինկ
մարդու եղջիւր մը կայ երկայն քա-
նի մը մատնաչափ, որ 1671 ին 50
տարեան կնկան մը գլուխն էր բու-

սած, կտրեցին, անկէ ետև 12 տա-
րի ալ ապրեցաւ։

Սկոտիայի ջրոս դին շատ երևելի
կղզիներ կան. նաև մանր կղզիներ
ալ կան, ուր հոլանտացիք առինկ
ձուկ կորսան։

Ո՞Ր Է ԷՍԼԱՆԴԻԱ։

417. Ը.յս մեծ կղզին հաւկրթաձև՝
արևմտեան կողմն է ինկիլթէռռայ-
ին. ուսկից 45 մղոն հեռու է, և 15
մղոն սկոտիայէն։ Տարածութին է
կէսը ինկիլթէռռայի, և 2 միլիոն ու
կէս բնակիչ ունի։

Բնակիչները հաստ և բիրտ են,
բայց շատ քաջ և զօրաւոր են, ամե-
նևին կեանքերնին չեն խնայեր. հաս-
տատ բարեկամ և անհաշտ թշնամի
են։ Նաև ինչ որ մտքնին դնեն,
չեն փոխեր։

Ը.ռաջ ինքնագլուխ թագաւոր ու-
նէին. և հիմա մեծ իշխան ունին,
որ ինկիլթէռռայի հպատակ ըլլա-
լով կը կառավարէ թագաւորինման։
Ը.յս ժողովուրդին մեծ մասը ուղ-
ղափառ է, բայց հերետիկոսներ ալ
կան։

Ինչպէս կը բաժնուի։

418. Իռլանտիա 4 նահանգ կը բաժնուի. ունի շատ քաղաքներ, բայց այնչափ մեծ չեն։ Այրլանդաքաղաքը Տէպլին կըսուի, որ մեծ է և մարդաշատ. մեծամեծ շէնքեր և եկեղեցիներ ունի։ Իսկ բոլոր կղզին մէջ 168 դպրոցներ կան։

Յանթրիմ գաւառին մէջ գետնին տակը զարմանալի Ճամբայ մը կայ, որ բարձր լեռան տակէն կանցնի ծովը կերթայ 600 ոտնաչափ երկայն, 140 լայն, և 30 բարձր, որ հազարաւոր սիւներու վրա շինած է ահագին։

Իսկ Ուլգոնիա գաւառին մէջ լիճ մը կայ, որուն մէջ ինչ որ ձգեն վրան քար կը կապէ ջրին և հողին ուժէն։

Ընդ՝ ահա հոս լսմընցուցինք եւրոպայի աշխարքները, որ ազատուծովէն սկսանք հասանք մինչև Ցանիմարքա։ Լաև ստամպոլէն և միջերկրական ծովէն անցանք հասանք Ովկիանոս. և աշխարքիս 3 մասը պատմեցինք։ Ընկէ ետև մնաց Ամերիգա չորրորդ մասն աշխարհի։

Զարմացիր մանուկ այս աղդին վրա,
որ աշխարհին ծայրն ինչեր կը հոգայ.
Այնչափ բարկացաւ այնչափ զօրացաւ,
մինչ ուրիշներուն խելք օրէնք կուտայ։
Ի՞նչ օգուտ ծնիլ փառաւոր տեղեր,
ինչ շահ մեծ զարմէդ երբոր չես ընտիր.
Թէ ըլլաս գիտուն աշխարհիս եղեր,
լոյսըդ կը ծագէ ամենայն երկիր։

ԿԸ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ՀՈՐՈՐԴ ՄԱՍՆ ԱՇԽԱՐՀԻ։

419. Աշխարքիս հորորդ մասն է Ամերիկա, որ է վարի աշխարք. անանկ որ մեզի նայելով անոնք երկրիս տակն են ու գլխիվար կը շրջին. բայց անոնց նայելով մենք ալ գլխիվար կը շրջինք։

Մէպէտ աշխարքս կլոր ըլլալով ամենուս գլուխն ալ երկինքը կը նայի, և ոտքերնիս գետինն է (158)։

Իսկ ովկիանոս ծովը բոլոր աշխարքս պատած է. անոր համար նախ հայաստանէն սկսելով հասանք հրնտրստանու ովկիանոսը։

Անկէ դէպ 'ի հիւսիս դառնալով մոսկովստան և մինչև տանիմառգա

գացինք եւանք Հիւսիսային ովկիանոսը։ Ընկէ ալ Ֆռէնկիստան երթալով հասանք սպանիա և փորդուքալ, նաև արևմտեան ովկիանոսը։

Այնպէս գիմացի ափրիկէի երկիրներէն անցնելով հասանք հարաւային ովկիանոս։ Ասոնք աշխարքիս չորս կողմէն ալ ովկիանոս գիմացնիս ելաւ. և մինչև հիմա որչափ աշխարքներ որ պատմեցինք, այս շրջապատին մէջն են։ Իսկ Ամերիգա կղզին նման զատված է։

Ո՞ր է Ամերիգա։

420. Օ որորինակ թէ որ Ամերուկը կոթին դիէն շիտակ կիսես, երկուք կը բաժնըվի. ասանկ ալ թէ որ աշխարքս մոքովդ կիսես բևեռէ բևեռ, կէսը տակը կը մնայ, կէսն ալ վրան (163)։

Ահա տակի աշխարքն է Ամերիգա, որ պատմուիը գրողին անունն է։ Իսկ բուն գտնողն է Քրիստափոր Քոլոմպոս Ճէնովացին, որ հին պատմուիներ կարդալով և աշխարհագրութիւն տեղեակ ըլլալով, թէ անծանօթ աշխարք մը կայ, որոշեց որ դէպ 'ի արևմուտք երթայ։

Սակայն Ենովացիները չուզեցին իրեն օգնել. ինքն ալ սպանիայի թագուհին ծախքովը նաւերը և մարդիկները շտկեց, ու 90 հոգիով և 2 տարեան պաշարով Համբայ եկաւ 1492 ին օգոստոսի 3, որ 8 օրէն քանարիա կղզիները հասաւ։ Յոկ սեպտեմբերի 7 ին վերջի կղզին էլան սկսան երթալ դէպ 'ի արևմուտք խոր ովկիանոսին մէջ, ոչ ցամաք կար, և ոչ թռչուն։ Որչափ առաջ գացին, այնչափ սկսան վախնալ, մինչև յուսահատեցան։ Բայց 900 մղոն հեռանալէն ետև ծովին երեսը խոտեր տեսան, և քանի մը օրէն ետև թռչուններ ալ տեսան, ուստի ուրախացան որ ցամաքի մօտ են։ Բայց 3 շաբաթ անցաւ, շատ Համբայ ըրին ու թռչուն բան չի տեսնելով նորէն յուսահատեցան. մինչև կուզէին ետ դառնալ։

Յորհուրդ ըրին որ Բոլոմպոսը ծովը նետեն, ու իրենք դառնան. բայց Բոլոմպոս անոյշ խօսքերով անոնց սիրտը շահեցաւ, որ քիչմ' ալ երթան։ Բանի մը անգամ երկինքը ամպ տեսնելով կարծեցին թէ երկիր է. բայց պարապ էլան։ Ասա

տի 3000 մղոն հեռացան Բանաբեան կղզիներէն, ու սկսան յուսահատելով լալ։

Ի Ինկէս գիրքն։

421. Վերջապէս ամէնքը միաբան Բոլոմպոսի վրան թափեցան, թէ հիմա դարձուր նաւերը։ Ընալ խրնդրեց որ 3 օր ալ միջոց տան իրեն։ Սակայն երկրորդ օրուան գիշերը ժամ 2. Բոլոմպոս հեռուէն լոյս մը տեսաւ հոկտեմ" 11 ին։ Հետեւեալ օրն ալ կղզի մը տեսան, ու սկսան փառք տալով այ աղօթք ընել, և ցնծումներով առաջ երթալ դէպ 'ի կղզին։

Երբոր զանազան ձայներով և նուագարաններով այս 3 նաւը միատեղ դէպ 'ի ցամաք կերթային, Ամերիգացիները ասոնց վրա զարմանալով եկան ծովին քով լեցվեցան, կարծէին թէ նաւը հոգի ունի։ Իսկ Բոլոմպոս մեծ հանդէսով և մարդիկներուն ձեռքը սուրերով ցամաքին մօտեցան, բայց նախ Բոլոմպոս ցամաքը կոխեց, և ամէնքը միաբան գետինն ընկան ու խաչ մը դրին երկրպագութի ըրին։

Ամերիգացիք այս գործողությունը տեսնելով փախան։ Դայց անոնց է մէկ քանի մը բռնեցին ու անուշ ուրթի ցցընելով պարգև տալին ա-նանկ ճամբեցին։

Շատ չանցաւ նորէն դարձան եկան ուրիշ ընկերներով, և շուտմը ծանօթ ընտանի եղան։ Սակայն շատ կը զարմանային սպանեալներուն գունին հագուստին և զէնքերուն վրա։ Այլիս մէկը ձեռքով սուրը բռնեց, տեսաւ որ արիւնեցաւ՝ կարծեց թէ կենդանի է սուրը, և իրենք ալ երկինքէն եկած են։

Ինդիանս էին։

422. Որ աշխարքի մարդիկ բոլոր մերկ էին, և մարմիններին գոյնզգոյն ներկած։ Խիստ պարզամիտ ըլլալով հայելի կոտրտուկներու վրա անանկ կուրախանային որ ոսկիի հետ կը փոխէին։

Երբոր սպանեալներն իրիկունը նաւը դարձան քանի մը ամերիգացի ալ միատեղ գնացին։ Որոնք նոյն կղզիին կուանահանի կըսէին. իսկ Դոլոմպոս՝ նոր փրկիչ գրաւ անունը։

Լսեց որ մօտ տեղեր ուրիշ կղզի-

ներ ալ կան, անկէ ելաւ քանի մը հոգի ալ բնակիչներէն առաւ գնաց մէկ քանի կղզի գտնելէն ետև ընտրեալ էրկիր մը հասաւ։

Հեռուն գեղ մը կար, քանի մը հոգի զրկեց որ երթան քննեն։ Ոչցին տեսան որ տներուն նստարանները ոսկիով պատած էին. հարցուցին, ելած տեղը հասկրցան։

Ան տեղը Ռուպա կըսվէր, և հիմա՝ ալ Ռոմինիկոս կըսվի. որուն բնակիչները աւելի ձերմակ պարզամիտ և անոյշ բարքով էին։

Որոնք շատ ոսկի, բամպակ, և թուլթակ թռչուն կը բերէին, ու փուշ բաներով կը փոխէին. մինչև 36 մխալ ոսկին բոժոժի մը հետ փոխեցին։ Նրբոր սպանեօլները սուր խաղցընելով կրթուլթիւն ըրին ու թօփ նետեցին, անանկ սոսկացին, որ կարծեցին թէ աշխարքը անցաւ։ Մինչև եկան խեղճերը իրենց օգնուլթի ընելով բերդ շինեցին։ Ռոլոմպոս նոյն բերդին մէջ քանի մը հոգի և զէնք դրաւ, ու դարձաւ սպանիա 1493 ին, եօթն ամիս անցնելէն ետև։

Ի՞նչպէս գնաց։

423. Ռոլոմպոս Համբան շատ ա-
լէկոծուն քաշելով վախցաւ որ կը
խզդըվին, Ամերիգայի պատմուն-
ը գրեց մատուկի մը մէջ դրաւ ծովը
նետեց, որ մարդու ձեռք անցնի ու
գիտնան եղածները։ Սակայն ազա-
տեցաւ վտանգէն, ու երկու ամիսէն
ետև հասաւ սպանիա քանի մը ամե-
րիգացիներով։

Ուր բոլոր ազգով անանկ ուրա-
խուն ըրին, մինչև ամէն երկիրք հոն
կերթային զանոնք տեսնելու հա-
մար։

Մեծամեծ իշխաններն ալ թա-
գաւորին կողմանէ դէմ գացին թա-
փօրով, և թագաւորին ներկայա-
ցուցին. յետոյ եկեղեցին գացին
փառք տվին։ Յամանակ մը անցնե-
լէն ետև 17 նաւ պատրաստեցին
սպանեօլները. 1500 հոգիով և շատ
քահանաներով նորէն Համբայ դրին
Ռոլոմպոս. որպէս զի երթայ ու-
րիշ տեղերու ալ տիրէ։ Սակայն եր-
բոր Ամերիգա հասաւ տեսաւ որ շի-
նած բերդը աւրած է, և 38 հոգիէն
մէկը չէր մնացեր, շատ վշտացաւ։

Տեղացիք պատմեցին թէ ձեր մարդիկ սկսան աւազակուն ընել, ժողովուրդն ալ վրանին թափեցան սպանեցին։ Ռոլոմպոս հոն նոր քաղաք մը շինեց, ու անունը եղիսաբէթ դրաւ թագուհին անուամբը։ Այսպես եղաւ առջի քաղաքը. անկէ ետև զանազան բերդեր շինեց, և շատ տեղերու և հանքերու տիրեց։

Սակայն Ռոլոմպոս Ճինիվիզ ըլլալով երբոր այնչափ փառաւորեցաւ, սպանեօլները չի քաշեցին, ու սկսան չարանալ և ամբաստանուելի ընել իրեն դէմ։

Մինչև պարտաւորեցաւ նորէն դառնալ սպանիա։ Ուր ղինքը արդարացընելէն ետև նորէն մարդ առաւ հետը. բայց շատը մահապարտ անբզգամներ էին։

Աստի Մերիդա որ հասան շատ չարուն ըրին. մինչև մարդ ղրկեցին սպանիա ամբաստանելու համար։ Թագաւորն ալ մարդ ղրկեց որ երթայ քննէ Ռոլոմպոսը։

Այն մարդն ալ անզգամ ըլլալով և նախանձելով, կապել տրվաւ զՌոլոմպոս, և առանց քննուելու նաւը դրաւ սպանիա ղրկեց։

Ուր երբ հասաւ կապած՝ սպանեօլները ամբշնալով շուտով ազատեցին. և պատուով նորէն Ս.մերիգա զրկեցին։

Սակայն Բ.ոլոմպոս չդիմանալով սպանեօլներուն ապստամբութիւնը, ձգեց վարի աշխարքը, նորէն դարձաւ սպանիա, տեսնելով թէ իր քաջերաբ թագուհին մեռած է՝ յոյսը կտրեց։

Յետոյ թագաւորին դիմացն ելաւ, գլխուն եկածները պատմեց, ու խնդրեց որ նորէն տայ իրեն առջի իշխանութիւնը։

Թագաւորը չի տրվաւ. այլ միայն քաղաք մը տվաւ, որ Հոն նատի. անալ տրտմուէն հիւրընդցաւ մեռաւ 1506 ին. որ 66 տարուան էր։ Կտակ ըրաւ որ զինքը կապած շղթան ալ հետը թաղեն, որ այնչափ ապերախտ եղան իրեն։ Ինքը այնչափ երախտիք ըրած էր անոնց և բոլոր աշխարքին՝ նոր աշխարք մը գտնելով. անոնք զինքը շղթայով կապելով իր գտած երկիրէն աքսորեցին անզգամութիւն։

Իսկ մարմինը Ս.մերիգա տարին թաղեցին մատուռի մը մէջ. որ շատ

բարեպաշտ և ազնիւ մարդ ըլլալով բոլոր աշխարքի իր անունը կը փայլի, և իւր իշխանութիւնը մեծ որդուն տվին։

Ապերախտ մարդիկ որչափ գէշ կուզեն,
այնչափ բարիներն աղէկ բան կընեն.
Քոլոմպոս ջանաց նոր աշխարք գտնել,
անոնք ջանացին զինքն երկրէ հանել։
Ջանա՛ երկրիս մէջ լաւ անուն ձգես,
թէև ապերախտ մարդիկն ըլլան քեզ.
Դուն աղէկ ըրէ, այն չի կորսըվի,
որ աշխարհ երթաս շուտ քեզ կը հանի։

ԿԹ. ՀԱՄԱՐ

Ինչպէս էին ամերիգացիք։

424. Ամերիգացիք տեղ տեղ զանազան ցեղ էին, ու տարբեր բնաւորութիւն ունէին։ Ամենք քիչ մը քաղաքականութիւն գիտէին. իշխան և դատաւոր՝ կուսատուն և օրէնք ունէին (433)։

Բայց շատը գազանի նման ինքնագլուխ ըլլալով մերկ կը շրջէին, գունդ գունդ թշնամիներուն վրա կերթային՝ մարդ կը բռնէին կուտէին։

Որոնց մարմինը պղինձի գոյն էր, դէմքերնին կլոր, Ճակատնին նեղ, պռկունքնին թանձր, քթերնին սուր և ծուռ, աչքերնին սև մանր և հեռատես, մազերնին սև քիչ և անմաքրուք։

Սակայն ցած երկրին բնակիչները քիչ մը տեսքով էին, ընդհանրապէս ամէնքը թոյլ և տկար մարդիկ ըլլալով, խիստ քիչ բան կուտէին։

Մենուն տեսքը մէկզմէկու նման էր։ Անջերնին ոչ կաղ կար, և ոչ կոյր, բոլորը բարեչափ էին։

Յեղ կար որ տղայ ծնած ատենը գլխուն ձևը կը փոխէին ձեռքով. ոմանք եռանկիւնի ձևով, ոմանք ալ տափակ ձևով կընէին։

Այրենիները արմատ, կենդանի, ժամանք, և մոգէս կուտէին. նաև ձուկ և մարդու միս ալ երբեմն կուտէին։ Որոնց բնակարանը լեռներուն և անտառներուն մէջն էր։

Կար որ ծառերուն վրա կը պառկէին. ոչ ժամանակ գիտէին ոչ օրէնք և ոչ համբանք, մինչև իրեքը գիտէին համրել. ամենևին ուրիշ քաղաքականութի չգիտէին։ Ընդհանրապէս թոյլ և խիստ թանձրամիտ էն. մինչ

զի հոն ծնած եւրոպացիք ալ այնչափ մտաւոր չեն կրնար ըլլալ։

Ասպարգային համար բնաւ բան չեն մտածեր, տղու նման կասկածոտ և ոխակալ են. դատարկութիւնը իրենց երջանկութիւն կը սեպեն։ Խիստ շատ պար խաղալ կը սիրեն, և իրենց ամէն ծանր գործքը խաղալով կրնեն։

Անիկնին իրենց գերին ըլլալով ամէն աշխատանքը անոնց վրա կը ձգեն։ Ասոր համար շատ ծնօղք իրենց աղջիկը կրսպաններ որ այն ծանր գերութիւնը չի քաշեն։

Արբոր իրենց մէջ ջուխտակ կը ծնէին տղաքը, գէշ սեպելով մէկը կը մեռցընէին։ Եւ որ տղաբեր կնիկ մը մեռնէր, ողջ տղան ալ հետը կը թաղէին։

Ոչ կուտային որ տղաքնին անասունի նման մեծնան, ոչ խրատ գիտէին և ոչ կրթուութիւն։ Սակայն հիմա ասոնց շատը քրիստոնեայ ըլլալով շնորհքի եկան, կրթուութիւն և մարդավարուութիւն սորվեցան եւրոպացոց նման։

ԻՆՉ ԼԵԶՈՒ ԿԸ ԽՕՍԻՆ։

425. Բոլոր ամերիգացոց լեզուն միակերպ է. թէպէտ Մէքսիքոնացոց և Բերուցոց լեզուն աւելի կարգաւորեալ է, տէրուն և օրէնք ուսնենալնուն համար։ Սակայն ամենևին վերի աշխարքի լեզուներուն չեն յարմարիր, շատ այլակերպ հնչմունքներ և եղանակներ ունին, որ գազանի ձայն կը հանէին (21)։

Այս ցեղերուն իշխանները դաղէ կըսվին, որոնք տեղ տեղ օրէնքով կը կառավարէին. վայրենիները ամենևին կրօն և օրէնք չիյտէին։ Ամենք բան մը ունէին. ոմանք ալ կախարդական բաներ կընէին։ Յեղ մը կար որ մարդակերպ հոգի մը կաւտային. ոմանք ալ չար հոգիներէն կը վախնային։ Կային որ արեգակն լուսին և կրակ կը պաշտէին, ու ամէն առտու երկրպագութիւն կընէին. ոմանք ալ մարդ մորթելով կուռքերուն զոհ կընէին։

Դրեթէ ամէնքն ալ կաւտային թէ մարդուս հոգին անմահ է. ուստի երբոր իշխաններէն կը մեռնէին

մեծ փոս մը կը բանային ու կնիկնին
ալ ծառանին ալ հետը կը թաղէին,
որ անդին մինակ չի մնան։

Բ.ՐԴ՝ այս ամէն աշխարքները 18
տէրութի կը բաժնուին. ամէն մէկին
մէջ զանազան ազգեր և սովորութի-
ներ կային առաջ. հիմա շատը եւրո-
պացոց ձեռքն է, բաց 'ի լեռնաբը-
նակ վայրենի ամերիգացիներէն, որ
մինչև հիմա կան։

Ո՞Ր Է ԴԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԸ։

426. Բ.այս տէրութի գրանսայէն
ընդարձակ է, և հիւսիսային կողմը
կիյնի. որ 13 նահանգ միանալով
մեծ աշխարք մը եղած է։ Բնակիչ-
ները եւրոպացոցմէ եկած են։

Նախ ինկիլիզները շատ մարդ
ղրկեցին հոն, որ աճին. ետքը զա-
նազան ազգերէն մարդ երթալով
այնչափ աճեցան, որ 14 տարուան
մէջ 6 միլիոն բնակիչ եղան։

Բ.այս բարելից աշխարքը առաջ ին-
կիլիզին տէրուն տակն ըլլալով շատ
ծանր ծանր տուրքեր վրանին դրին.
արգելած էր որ երկրթէ գործիք
մարդ չշինէ։ Բ.յլ երկաթը. հանեն

ինկիլթէռռա տանին ու տեղը գոր-
ծիք առնեն՝ ծանր գնով։

Ընդեւլած էր որ ուրիշ տէրութիւն
նաւ մը հոն չերթայ, և տէրուն ա-
մէն ուզածն ընեն։ Ասոնի այնչափ
սրխմեցին խեղճերն որ ապստամբ ե-
ղան։ Այս կնիկինին հրաժարեցան,
որ ինկիլիզի բան չի հագնին. աւե-
լի ուզեցին հաստ բամբակէ լաթեր
հագնիլ ազատութիւն, քան թէ ազնիւ
բաներ գերութիւն։

Այս այսպէս այս 13 նահանգին
բնակիչները միանալով պատերազմ
ըրին ինկիլիզներուն դէմ, ու քա-
ջութիւն յաղթեցին։ Ինկէ ետև հա-
սարակութի մը հաստատելով ինք-
նագլուխ տէրութի եղան 1783 ին։

Ամէն ՝ նահանգը։

427. Ամէն նահանգը ՝ի օրէ կրս-
վի. տարածուին է 10 հազար մղոն,
որ առաջ անապատ էր։ Սակայն ան-
ցեալ դարուն մէջ ինկիլթէռռա
հարուստ ինկիլիզ մը կտակ ըրաւ,
որ որչափ պարտական մարդիկ կան
պարտքերնին ինքը տայ ազատէ։

Ինկիլիզի տէրուին ալ նոյն պար-
ական մարդիկները դրաւ հոն ղը-

կեց, որ քաղաք շինելով բազմացան. առաջ 100 հոգի էին, հիմա 30 հազար եղան։ Որ ունին գաւառական ժողով և կանոն. ուր շատ զանազան քաղաքներ և գեղեր կան. իսկ մայրաքաղաքն է սեվլին, որ 6000 բնակիչ ունի։

Այս տերուն առաւել հարուստ և բազմամարդ նահանգներն են Բարոլինա, և Վիրձինիա։ Առաջինին տարածութիւնն է 38 հազար մղոն, և բնակիչներն են 512 հազար։ Իսկ երկրորդինն է 21 հազար մղոն, և 650 հազար բնակիչ ունի։

Զոնցմէ շատ պակաս չեն միւս 10 նահանգները։ Ամէնքն ալ ժողով և իշխան ունին, որ միաբանութիւն կը կառավարվին։ Այս ամէն մէկ գաւառ ընդարձակ երկիրներ են։

Գրեթէ ամէն ազգէ և ամէն աղանդէ մարդ կայ այս տերութեան մէջ։ Ամէն մարդ ինչ կրօն ուզէ կը պաշտէ. և ամէնքն ալ իրաւունք ունին իրենց տերութեան բանին խառնվելու։

Ո՞ւր է Յանապա։

428. Այս ընդարձակ աշխարքը սահմանակից է վերի տերութեան. բայց

այնչափ մեծ անտառներ և անապատներ ունի որ չափի չի գար։ Բնակիչներն են վայրենի ամերիգացիք, որ գազանի պէս լեռները կը բնակին ցեղ ցեղ։

Եւրոպացիք սկսան երթալ քիչ քիչ բազմանալ հոն, մինչև 100 հազար հոգի եղան. թէպէտ շատ նեղուի քաշեցին վայրենիներէն։ Առաջ Ֆռանսիզներուն ձեռքն էր, ետքը Ինկիլիզներն առին։ Վայրենի բնակիչներուն գէմքը մութ կարմիր և խիստ սոսկալի է։ Բոլոր մարմինին աղտեղութիւն մէջ է. և միշտ իւրարու հետ պատերազմ ունին։ Ամէն գլխաւոր ցեղը Իրոքացի կըսվի. որ աւելի պատերազմող և քաջ ըլլալով իրենց տէրութիւնը մեծցուցին, և ամենուն ահաւոր են։ Հիվանդութիւնները ասոնցմէ շատ մարդ մկրտեցին։

Այս տէրութիւն գլխաւոր քաղաքն է գուլպէք, որ 10 հազար բնակիչ ունի. ուր իշխան և եպիսկոպոս կը նստի. ունի վանքեր և շատ եկեղեցիներ։

Ինդիանացիք, որ հոն կը բնակին, աւելի անոյշ բարք ունին և վայելուչ են։ Բոլորը գեղ ունին, և ի-

բարու հետ միաբան են. բայց նեն-
գաւոր և նախանձոտ են։

Իսկ Լիրիացիք առաջ աւելի մեծ
ժողովուրդ էին, և առաւել զօրա-
ւոր, որ լճին քով կը բնակէին. ու
երբոր Փռանսիզները հոն գացին
ոտք ելան զամէնքը ջարդեցին։

Նոյնպէս սակացիք վայրենի ժո-
ղովուրդ էին. ուր ճիզվիթները գեղ
մը հաստատեցին, ու քիչ քիչ վայրե-
նի ազգին բան սորվեցընելով շատը
դարձուցին։

Այս կողմերը շատ զանազան ազ-
գեր ցեղեր կան, որ կերպ կերպ սո-
վորութիւններ ունին։ Ամանք գեղերը
կը բնակին, ոմանք լեռնական ըլլա-
լով ընդարձակ անտառներու մէջն
են։

Սոնք թէպէտ միշտ ողորմելի
կեանքի մէջ են անբան անասունի
նման. սակայն ամենևին չեն ուզեր
իրենց ազատութիւնը ձգել և եւրոպա-
ցոց ծառայել, նաև բան սորվիլ և
քաղաքական ըլլալ։

Ո՞Ր Է ՆՈՐ ՍԿՈՎՏԻԱ։

429. Ամերիգայի ընդարձակ աշխարքներուն մէկն ալ նոր սկովտիա է. որ 30 հազար մղոն տարածուի ունի. բայց շատ տեղը անմարդաբնակ է։ Ուր գարուն և աշուն չըլլար. 7 ամիս սաստիկ ձմեռ կընէ, անկէ ետև շատ տաք ամառ կըլլայ։

Նաև ֆռանսըզները բնակեցան հոն. ետքը ինկիլիզներուն անցաւ։ Պատուական նաւահանգիստ մը ունի, որ 1000 նաւ կառնէ։

Ռուն բնակիչները Ամպենիքեցի կըսվին. որ վայրենի ըլլալով որսորդութիւն կապրէին, և սաստիկ պատերազմող էին։ Սակայն ֆռանսըզ քարոզիչները քիչ քիչ զանոնք ուղղափառ հաւատքը դարձուցին։ Ամենքը ամէն բաներնին իրենք կը հոգային. և իրենց դատաստանը ծերերն ու քահանաները կը վճռէին. որ 1749 ին 18 հազար հոգի էին։

Երբոր երիտասարդ մը կարգըվելու կըլլար, ամէնքը միատեղ իրեն համար տուն մը կը շինէին, ու վարուցան ընելով տարեան ուտելիքը

կը պատրաստէին, անկէ ետև կը կարդէին։

Այս աշխարք զանազան գաւառներ և կղզիներ, նաև շատ գեղեր և քաղաքներ ունի. ուր իշխան կը նըստի ինկիլիզներուն կողմանէ։

Ո՞Ր Է ԸՆԷՈԷԱ։

430. Այս ընարձակ աշխարք Արէքսիքոնի կողմը կեցնի. որուն բնակիչները զանազան ցեղ ըլլալով, կան որ բոլորովին մերկ են, կան որ մորթ կը հագնին։ Այսոնք առաջ արև կը պաշտէին, և իրենց քրմապետը կը կառավարէր զիրենք, որ կըսվէր մեծ արև. և կը քարոզէր թէ ես արեգակէն եկած եմ. անոր համար կուրծքին վրա արևի պատկերք մը ունէր։

Այսոր կնիկն ալ նոյն մեծուները, և նոյն իշխանուները ունէր։ Որոնք երբ կը մեռնէին, շատ մարդիկ ալ իրենք զիրենք կը մեռցընէին, որ անդին անոնց ծառայութի ընեն։

Այս աշխարք նախ սպանեօլները գտան 1673 ին. ետքը Ֆռանսըզներուն անցաւ. ետոյ նորէն սպանեօլները տիրեցին։ Սակայն արևելեան մասն է ինկիլիզներուն ձեռքը։

Ո՞Ր Է ՔԼՕՐԻՈՍ։

431. Այս աշխարք Լուիսիայէն կըսկըսի կը հասնի Մէքսիքոնի ծովը. որ շատ մեծամեծ գետեր և անտառներ ունի։ Բնակիչներն են սև ազգին կարմիր, մազերնին սև և ցցված։

Ուստի շատ զարհուրելի ազգ են, նաև վայրենաբարոյ ըլլալով շատ ուժով, զօրաւոր և քաջ պատերազմող են։

Երբոր սպանեօլները հոն գացին, տեսան որ պատերազմէն բռնած գերիները արեգական զոհ կընէին ու կուտէին։ Նաև օձ, ՀՀի, և ամէն կենդանի կուտէին։

Սովորուի ունէին որ ձմեռվան ամէն ուտելիքը ամառը կը ժողվէին տեղ մը կը լեցընէին. որ քրմապետին իշխանութեան տակն էր։ Քրմապետն ալ պէտք եղածին չափ ամենուն կը բաժնէր, որ 6 ամիս կուտէին։

Ամենց մեծ իշխանը քրմապետն էր որ կըսվի ֆարաոպիս. իսկ քուրմերը կըսվին էռնա, որ բժշկուի ալ կընեն։ Որոնք մեծ պատիւ ունին ժողովուրդին առջին։ Այս երկիրս նախ սպա-

նեօլները գտան. յետոյ ինկիլիզնե-
ը յափշտակեցին. ուր զանազան
քաղաքներ և բերդեր շինեցին։

Ո՞ր է Հուտսոնն։

432. Այս աշխարքը Հուտսոնի պա-
ղոյը կըսվի, որ քանատայէն կըսկըսի
կերթայ մինչև Հիւսիսային բևեռը
և կը մօտենայ վերի աշխարքին կրեն-
լանտիայի, որ չվէտի գիրքը կեյնի։

Ընոր համար այնչափ ցուրտ կընէ
որ քարերը կը ճաթին. և ամառը 2
ամիս է։ Երկան օրը 21 ժամ է, և
իրեք ալ ժամ գիշեր է. ուստի 6 ա-
միս ցորեկ կընէ և 6 ամիս գիշեր
(354)։

Ընակիչներն են Էսքիմացիք, որ
կարճահասակ են և գլուխնին մեծ.
ոտքերնին ու ձեռքերնին մանր. պրռ-
կունքնին թանձր ու կախ, քթեր-
նին տափակ և դէմքերնին տգեղ և
կնճռած ծերու նման։

Ընակարաննին խրճիթ է. քարե-
ը սառով իրարու կը փակցընեն ու
անանկ տուն կը շինեն։ Կրակ չեն
վառեր, միայն ճրագ մը ունին, և
իրենց շունչը անոր հետ միանալով
կը տաքցընէ զիրենք։

Կերակուրնին ձուկ ու ծովու շուն է, որ նոյն Ճրագին վրա քիչ մը կը տաքցընեն կուտեն. և խմելիքնին ալ կէտ ձկան ձէթն է, որ տաք ըլլալով արիւننին կը տաքցընէ. ուստի ծաբաւով ալ կը պապակին։

Ձկան ոսկորէ նաւեր կը շինեն, ու կելլեն մեծ ծովին մէջ ահագին ձկներ կորսան։ Ոչ պէտ այսչափ խեղճ կեանք ունին, բայց այնչափ հայրենասէր են որ բան մը սիրքերնուն չերևնար. քնաւ չեն ուզեր իրենց հայրենիքէն զատվիլ և բարեխառն երկիր մը բնակիլ։

Ահա հոս կը վերջանայ հիւսիսային ամերիկա. որ Արեւբախտ կղզիէն և Յամէս կղզիէն անցնելով կը հասնի Պաֆէնա ծոցը. անկէ հիւսիսային ցամաքն, որ Արևեռին շրջանակը կանցնի։

Անկէ անդին այլ երկիր չի կայ, և բոլոր ծովը սառած է լեռնեբու նման, ինչպէս վերը պատմեցինք (354)։

Ուստի այս կողմն աւելի առաջ երթալով շատ մօտեցան հիւսիսային բևեռին. իսկ հարաւային բևեռին դին այսչափ չի կրցան առաջ երթալ

աւելի ծովը սառած ըլլալուն համար (456)։

Այս ամէն աղգերն ամերիկայի,
անկիրթ մնալով գազան են վայրի.
Որ չէ կրթված, չէ մարդ այլ անբան,
զի ուսմամբ միայն կըլլայ բանական։
Թէ աղուոր ըլլաս թէ քաջ և փարթամ,
չէս ըլլար ասով մարդ քաղաքական.
Թէ տկար ըլլաս կիրթ ուսումնական,
մարդ ես փառաւոր աղգիդ պիտուական։

Հ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է Մէքսիքոն։

433. Մէքսիքոն ամերիկայի գլխաւոր տէրութիւն ըլլալով նոր սպանիա կըսվի, և հարաւային կողմը կիսնի հասարակածին տակը։ Ցարածութիւն է 500 հազար մղոն, և բնակիչները առաջ 10 միլիոն կային, հիմա քիչ է։

Այս տէրութեան շատ քաղաքներ ունէր, բոլորը կարգով կանոնով հաստատած. որ արուեստ օրէնք և ամէն պէտք եղած բաները ունէին։ Ուր կայսր և քաղաքապետներ ալ կային։

Սպանեօլները զանոնք այսպէս

գտնելով շատ զարմացան. մանաւանդ տեսնելով եղած ոսկին արծաթին ու գանձը. զի շատ ոսկիի հանքեր կան։

Ասկեց կելլէ որդան կարմիր (գըրմըզ), որ մանր մանր որդեր են. բազմութիւն տերևներուն վրա կիջնին. որ ժողվելով կը չորցընեն ու գանձ կը շահին։

Ուրիշ բաներ ունին։

434. Մէքսիքոնացիք հին ատենը վայրենի ժողովուրդ էին. եռքը հիւսիսային ամերիկացոց հետ միանալով իրենք իրենց օրէնքներ հաստատեցին. և իրենց մէջէն խելացին կը կառավարէր։

Այս կերպով քիչ քիչ իրենց տէրութիւնը մեծցուցին ու ինքնագլուխ թագաւոր դրին։ Աստի սպանեալներուն հոն հասած ատենը կարգաւորեալ տէրուն էին, նաև հանկուրցէ գրեր ունէին, կը կարդային (9)։ Տարին 18 ամիս կը բաժնէին. ամիսն ալ 20 օր, և 5 օր յաւելուած կընէին, և նոյն օրերը միշտ ուրախ կանցնէին։

Իրենց թագաւորը այ նման կը

պաշտէին. մինչ զի մարդ մը անոր առջին աչքը չէր կրնար վեր վերցընել։ Իւրաւորմարդիկ լուռ և խոնարհ կը ծառայէին։

Բոլորը կռապաշտ էին առաջ, և ահով դողով չար հոգի մը կը պաշտէին Վէյէլէֆուշ անունով. իրենց կռատուններըը մուխ խաւար էին. պատերուն վրա վիշապներ օձեր և սարսափելի բաներ գրած էին։

Բուրմերնին ալ դիւամոլ սոսկալի մարդիկ էին. զոհերնին աւելի զարհուրելի էր. վասն զի կուռքին սեղանը նախ մարդու արիւնով կը լըվային, և ետքը մարդիկ կը պառկեցընէին սեղանին վրա, ու քրմապետը մարդուն փորը կը ճղքէր՝ սիրտը կը հանէր կուռքին կընծայէր։

Խակ մարմինը կը ձգէին ժողովուրդին առջին, որ մէկէնմէկ կըտրտէին կուտէին, կաշին ալ վրանին կառնէին կը խաղային։

Նա այսպէս տարին հազարաւոր հոգի զոհ կընէին։ Վասն զի անմիտ ժողովուրդը կը փափաքէր որ ետևէ ետև զոհ ըլլան կուռքին. շատ անգամ իրար կը հրէին որ առաջ մեռնին. կռատանը չորս դին մարդու

գլխով զարդարված էր. մինչև 130 հազար գլուխ գտան հոն։ Որբոր թագաւորը կը մեռնէր, իրեն ծառաներն ալ միատեղ կը թաղէին։

Սակայն հիմա բոլորն ալ ուղղափառ եղան, և իրենց աշխարքը գեղեցիկ եկեղեցիներով զարդարեցին. իսկ բոլորը 10 եպիսկոպոսութի կը բաժնըվի։

Ի՞նչպէս գտան։

435. Բոլոմպոսէն ետև սպանեալները Ամերիգայի մէջ սկսան նոր երկիրներ փնտրուել և շատ տեղեր գըտան։ Ասոր 1517 ին 3 նաւով գացին գէպ 'ի Հարաւ, տեղ մը գտան. տեսան քարաշէն բնակուներ կան, ու բնակիչներն ալ լաթ հագած են։

Սակայն վախնալով շատ չի կրցան կենալ հոն. շուտով փախան և քանի մը հոգի ալ իրենցմէ կորան։

Բայց տարին ետև 240 հոգի եղան, ու 4 նաւով գնացին նոյն կողմերը։ Ցեղ տեղ ծեծկըվեցան, և տեղ տեղ ալ շատ պատիւ տեսան։ Սասն զի ասոնց զէնքերը և ուրիշ բաները տեսնելով կարծէին թէ երկինքէն եկած են. մինչև քուրմերը

խունկ ծխելով կը պաշտէին սպա-
նեօլները։

Բ.ին երկիրները ամէն տեղ քա-
ղաք և բնակութիւն կար. շատ ոսկի
ժողվեցին բնակիչներէն, և 6 ամի-
սէն ետև դարձան տեղերնին գացին
Բ.ուսպա. ուր սպանեօլներուն մեծ
իշխանը կը նստէր։

Բ.յս սպանեօլ իշխանը լսելով այն
աշխարքին հարստութիւը, որ էր մէք-
սիքոն, շուտմը նաւեր պատրաստեց
ու վրակեցու դրաւ Բ.որդէս կորի-
ձը. որ 1518 ին փութով Ճամբայ
ելաւ 11 նաւով և 617 հոգիով։

Երբոր մօտեցան մէքսիքոնին,
թագաւորը մարդ ղրկեց թէ ինչու
հանար կուգան. շատ ոսկի մարգը-
բիտ և ակունք ընծայ ղրկեց որ ետ
դառնան։ Բ.որդէս այն բաները
տեսնելով աւելի բորբոքեցաւ. ու
ոտք կոխեց թէ պէտք է որ թագա-
ւորին հետ խօսին թագաւորին կոդ-
մանէ։

Մէքսիքոնի թագաւորը մոնթէզոմա
կըսվեր, որ շատ հպարտ մարդ էր.
և չէր ուզեր որ սպանեօլները իրեն
աշխարքը մտնեն։ Սակայն Բ.որդէս
վարպետութիւ ամերիգացոցմէ իրեն

դարձուց, ու սկսաւ առաջ երթալ և պզտի քերդմ՝ ալ շինեց։

Ընատենը 500 հոգի առաւ, 16 ձի, և 6 դօփ. նաև բնակիչներէն ալ 600 հոգի, ու գնաց դէպ 'ի Ալլասկալա։

Ասոնցմէ ալ շատը իրեն որսաց և 6000 հոգի առաւ, սկսաւ դէպ 'ի մէքսիքոն երթալ։ Այց ճամբան քաղաք մը երեց և հազարաւոր մարդ ջարդեց որ վախնան։ Երբոր թագաւորական քաղաքը հասաւ, թագաւորը անհամար բազմութիւն և մեծ փառքով դէմ գնաց։ Երբոր Ալորդէս ձիէն վար իջաւ, թագաւորն ալ իջաւ։ Ընատենը ժողովուրդը սոսկաց թէ այս ինչ բան էր որ ըրաւ թագաւորը։

Ա՝ երջապէս տեղերնին գնացին. միւս՝ օրը իրարու այցելուի գացին։ Այց Ալորդէս խորամանկութիւն համոզեց թագաւորն որ իրեն երթայ ու խօսակցին թարգմանով։

Երբ թագաւորը քիչ մարդով գընաց Ալորդէսին, մէկէն դուռը գոցեցին. մնաց թագաւորը սպանեալներուն ձեռքը։ Աստի անհամար ժողովուրդ եկան դուրսը դիզվեցան

կատղելով, որ Թագաւորն առնեն։ Սակայն սպանեօլները Թագաւորին պատուիրել կուտային, որ ժողովուրդը բան մը չընէ. անոնք ալ Թագաւորին խօսքէն դուրս չէին կրնար ելլել։ Աւստի 6 ամիս մնաց հոն, և ինչոր ուզէին սպանեօլները, ընել կուտային Թագաւորին ձեռքով։

Վերջը մէքսիքոնացիք պատերազմեցան սպանեօլներուն հետ, շատ մարդ ջարդուվեցաւ, Գորդէս ալ վիրաւորեցաւ. իսկ Թագաւորը իր խեղճ կեանքին վրա յուսահատելով այլ կերակուր չի կերաւ, անանկ մեռաւ։

Սպանեօլները ասոր եղբայրը Թագաւոր դրին որ իրենց Թշնամի ըլլալով պիտի ջարդէր զամէնքը։ Բայց Գորդէս գիշերով ելաւ փախաւ. իսկ բնակիչները վրանին Թափեցան, ու շատ ծեծկըվեցան զանոնք փախուցին։

Գիչ ատենէն ետև Գորդէս նորէն 1500 մարդ ժողվելով պատրաստվեցաւ, դէպ 'ի մէքսիքոն դարձաւ. բայց չարաչար ծեծկըվելով 60 հոգի սպանեօլներէն բռնըվեցան, և կուատանը մէջ զոհ եղան անոնց կերա-

կուր ըլլալով։ Սակայն Գորդէս անդադար ծեծկըվելով քիչ քիչ շատ տեղերու տիրեց, և իրեն նորէն օգնութիւն եկաւ սկսաւ առաջ երթալ։

Երջապէս թագաւորը չդիմացաւ փախաւ Մէքսիքոնէն, և բռնըվեցաւ սպանեօլներէն, ժողովուրդն ալ յուսահատելով ցիր ու ցան եղան։

Ասոնք 1521 ին Գորդէս տիրեց Մէքսիքոնի, աւելի իշխաններուն անմիաբանութիւնը, քան թէ քաջութիւն։ Սան զի մոնթէզումա բռնաւոր ըլլալով ազգը զզվեցուցեր էր։ Որոնք շուտով Գորդէսի կողմն ըլլալով ջնջեցին իրենց տէրութիւնը։

Ինկիէսի գաղաթ էր։

436. Մէքսիքոն մեծ և բազմամարդ մայրաքաղաք էր կղզիի մը վրա շինած, և չորս դին լեցուն էր քաղաքներով։ Գաղաթին մէջ կային մեծամեծ շէնքեր, կռատուններ և շատ հրապարակներ։

Սակայն շինվածները գեղացող ըլնակարանի նման էին։ Ինչափ բազմամարդ էր, որ միայն մէկ հրապարակին մէջ 50 հազար հոգի առուտուր կընէին։

Սպանեօլները երբոր այս մեծ քաղաքին տիրեցին, մէկէն վազեցին կռատունները և մեծամեծաց տուներն որ գանձ գտնեն։ Բայց բան մը չի գտան. վասն զի երբոր մօտեցան քաղաքին՝ Թագաւորը բոլոր գանձը ծովը Թափել տվեր էր։

Ինոր համար երբոր Որդէս բռնեց Թագաւորը տանջանք տալով կախեց, որով նոյն տէրուՀը վերջացաւ։ Որուն ցեղը 130 տարունէ 'ի վեր կը Թագաւորէր։

Թագաւորին որդին և շատ մեծամեծները քրիստոնեայ եղան, ու նոյն քաղաքին մէջ շատ եկեղեցիներ, վանքեր և պարատներ շինեցին։

Ասոր այնչափ մեծ և փառաւոր քաղաք եղաւ, որ միայն արծրԹէ փողոցին մէկ խանուԹին մէջի եղած ապրանքը մէկ քաղաքմը կը գնէ։

Շատ ատեաններ և գատաւորներ դրվեցան, որ սպանիայի Թագաւորին հրամանովը կը կառավարեր, և տարէ տարի 26 հազար քսակ կերԹայ այս քաղաքէն սպանիա։

Քանի՞ կը բաժնուի։

437. Այս ահագին մեծ աշխարք 3 մասն բաժնեցին, որ շատ գաւառներ և քաղաքներ ունի բաղում ժողովուրդով։

Մէքսիքոնի լճին կէսը աղի է, կէսը անոյշ. աղին ամէն հովէն կալէկոծի, և ձուկ չունի բնաւ. իսկ անոյշը հանգարտ է և ձկներով լեցուն. որոնց շրջապատն է 75 մղոն։

Պուլաքալա առջի նահանգին գաւառն է, որ հացալից ըսել է։ Երկայն է 300 մղոն, և 300 հազար բնակիչ ունի, որոնք աշխատասէր և աչքաբաց մարդիկ են։

Այսոնք մէքսիքոնի թագաւորին թշնամի ըլլալով շուտով միացան սպանեօլներուն հետ. և ասոնցմով տիրեցին այն մեծ աշխարքին։

Այնոր համար մինչև հիմա հարկ բան չեն տար սպանեօլներուն. որոնք շատ փարթամ են. և իրենց մայրաքաղաքը Լօս կըսվի. ուր եպիսկոպոս և իշխան կը նստի։ Իսկ կվատալաքսարա երկրորդ նահանգն է, որ երկայն է 600 մղոն. բնակիչներն են առողջ և երկայնակեաց,

ծոյլ և փառասէր։ Նաև շատ կը սիրեն պար խաղալ։

Պանեօլներուն իշխանուհի տակն են. բայց ունին իշխան Գազիքէ։ Ուր այնչափ առատ է ոսկին որ 42 մղոն տեղ լեցուն ոսկիէ, և անքաւ գանձ կելլէ։

Ոյնպէս կվագիմալա է երրորդ նահանգ երկայն 900 մղոն. շատ զանազան ազգերով և գեղերով լեցուն ըլլալով տեղ տեղ եպիսկոպոս կը նստի. զի վայրենիները մարդավար և քրիստոնեայ եղած են։

Ո՞ր է Նոր Գէրմանիա։

438. Այս աշխարք մէքսիքոնէն կըսկըսի մինչև անծանօթ աշխարք կը հասնի։ Այնչափ ընդարձակ ըլլալով տարածութիւնը յայտնի չէ. որ 1553 ին գտան սպանեօլները։

Բնակիչները մարդավար են. ոմանք արև, ոմանք ալ կերպ կերպ բաներ կը պաշտէին։ Բայց շատը քրիստոնեայ եղան. ուր շատ գաւառներ և զանազան ազգեր կան։

Ո՞Ր Է ԺԱԼԻՔՕՐԷԱ։

439. Այս աշխարքը ցամաք կղզի է ընդարձակ և բազմամարդ։ Ասկից շատ պատուական մարդերիտ կելլէ։ Կնիկները քարտակ խսիրէ շապիկ կը հագնին, իսկ էրիկ մարդիկ մերկ են։ Որոնք քարտակամիտ ըլլալով միշտ բան կը սորվին ու կը դառնան։ Նրբ. բոր սպանեօլները հոն հասան, ոչ կառավարութիւն ունէին և ոչ պաշտօն։ Այլայն լուսինը կը պաշտէին առանց երկրպագութիւն։ Լաև մաշերնին քուրմերուն կուտային որ կախարդութիւն ընեն։

Այս աշխարքիս Ֆիզվիթներուն քարոզութիւնը տիրեցին սպանեօլները մէքսիքոնէն ետև։ Սակայն շատ տեղ աչ կայ որ ինքնագլուխ են։

Ո՞Ր ԵՆ ԱՆԴԻԼԷԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ։

440. Այս կղզիները արևելեան կողմն ըլլալով մէքսիքոնի ծովին մէջն են, որ գարէպէ կըսվին։ Ամանց մեծութիւն է 150 մղոն, ոմանց 80, և մինչև 18։ Խիստ տաք և թաց տեղեր ըլլալով ամէն բան մէկէն կապականի. մեռած մարդը շուտմը կը

փթթուն. և գինին քացախ կըլլայ։ Ամբոլոր երկիրը կաւոտ ըլլալով խոշոր ծառ չի կայ. ծառ մը կայ, երբոր կտրեն գետինը ձգեն՝ քար կը կտրի։ Կան ուրիշ տեսակ ծառեր ալ։ Հին բնակիչները վայրենի և մարդակեր էին, որ գարախպ կըսվէին. շատ զօրաւոր և անգութ մարդիկ էին։ Կերպարանքնին տգեղ, աչքերնին սև ու մեծ և դուրս ընկած։ Մերկ ըլլալով մարմիններին կը ներկէին գոյներով։

Սակայն սպանեօլները բոլորը ջընջեցին, հիմա մարդ չի մնաց անոնցմէ. եւրոպացիք յաջորդեցին։ Գլխաւոր կղզիներն են Գուպա և Հարուստ նաւահանգիստ։ Գոնք անմահ կը կարծէին սպանեօլները։

Ուստի օր մը սպանեօլ մը բռնեցին գետը ձգեցին՝ տեսան որ խղդըվեցաւ, մէկէն ամէնուն իմացուցին ու պատերազմ բացին, միշտ կը ծեծկըվէին։

Ո՞Ր Է ՈՐ ԴՈՄԻՆԻԿՈՍ։

441. Գայս երևելի կղզին Գոլոմպոս գտաւ առջի բերանն ու բերդ շինեց. յետոյ սպանեօլները այնչափ

նեղութիւն տալին բնակիչներուն, որ յուսահատելով իրենք զիրենք մեռուցին, մինչև մարդ չի մնաց։ Այս կղզին գեղեցիկ մայրաքաղաք ունի եպիսկոպոսանիստ և իշխանանիստ։ Շատ շէնքեր դպրոցներ վանքեր և եկեղեցիներ ունի։ Կան հոն քանի մը կղզիներ Ֆռանսիզներուն ձեռքը։

Իսկ Ջեամայիքա կղզին ինկիլիզներուն ձեռքն է, որ երկայն է 170 մղոն. և 110 հազար բնակիչ ունի. որ Ռոլոմպոս գտաւ 1494 ին. ետքը ինկիլիզները տիրեցին։

Այլ վիջէնցիոս կղզին բնակիչները՝ կէսը կարմրագոյն են, կէսը սև են. որոնք ափրիկեցոյմէ ծնած են։ Կան նաև ուրիշ շատ կղզիներ ալ հոլանտացոց և տանիմարքացոց ձեռքը։

Ո՞ր են ըսուած կղզիները։

442. Այսոնք 500 կղզիներ են արևմտեան կողմը, որ նախ Ռոլոմպոս գտաւ։ Հին բնակիչներէն մարդ չի մնաց. հիմա եւրոպացիք են անոնց տեղը։ Իսկ Պերմուտեան և Ազորեան կղզիները փորդուքալները գը-

տան, ուր զանազան ազգեր կան։ Ընկրա քաղաքը եպիսկոպոս կը նըստի. ունին շատ եկեղեցիներ և վանքեր։ Ամէպէտ քրիստոնեայ են, բայց իրենց սովորութիւնը պահելով կնիկնին դուրս չեն հաներ։ Մինակ գեղացիները դուրս կելլեն աղէկ մը գոցված։

Այս յիմար ազգերն այսպէս փճացան,
որ ուժով էին առիւծի նման.
Իսկ եւրոպացիք տկար թոյլ մարմնով,
Ջարդուբարդ ըրին խելաց զօրութիւն։
Ջանա ունենալ խելք իմաստութիւն,
առաքինութիւն տիրես ամենուն.
Թէ ուժով ըլլաս անկիրթ և անխելք,
շուտ փճանալով կըլլաս անանուն։

ՀԱ. ՀԱՄԱՐ

Կան ուրիշ տեղեր։

443. Արուվհետև վարի աշխարքը 18 մասն կը բաժնըվի, 10 մասն հիւսիսային կողմն է, 8 մասն ալ հարաւային։ Մինչև հիմա 10 աշխարքը պատմեցինք. մնաց հարաւային 8 աշխարքն, որ կըսկըսի ոսկիաբեր ցամաք երկրէն, մէքսիքոնէն անդին։

Այս ցամաք երկիրը Պոլոմպոս գտաւ 1498 ին Երրորդ Համբորդուն ատենը։ Որ է ընդարձակ ցամաք 750 հազար մղոն. բայց շատ տեղը անապատ է։ Բնակիչներուն կէսը Եւրոպացի են, կէսն ալ ամերիգացի ուղղափառ։

Երեգակը այս երկրին վրայէն անցնելով խիստ տաք կընէ. նաև ոսկիով լեցուն է։ Նոր համար սպանեօլները շատ ջանալով քիչ քիչ բոլորին տիրեցին։

Ամերիգացոցմէ քանի մը ցեղ սպանեօլներուն բռնուելը չդիմանալով գլուխ քաշեցին ու լեռնաբնակ եղան. և մինչև հիմա մեծ ատելուն ունին սպանեօլներուն հետ։

Այս աշխարքը 11 գաւառ կը բաժնըվի. գլխաւորն է Բանամա, որ ունի քանի մը երևելի քաղաքներ և բերդեր, բոլորը զարդարած եկեղեցիներով, վանքերով և քարաշէն շէնքերով։ Հոն է գեղեցիկ նաւահանգիստը, ուր շատ վաճառականութիւն կըլլայ։

Ո՞Ւ Է ԲԵՐՈՒ։

444. Այս գլխաւոր աշխարքի հաբաւային կողմն է, որ ունի մեծամեծ լեռներ և գետեր. նաև 400 հազար բնակիչ։ Այնչափ զարմանալի աւատ են հանքերն որ արծաթը քարի նման կտրեն նաւերով սպանիա կը տանին։

Այս աշխարքին բնակիչները պարզամիտ և վախկոտ ըլլալով սպանեօլները գիւրին կերպով տիրեցին։ Հաստարակ ժողովուրդը մերկ էր. լեռնցիները աւելի ձերմակ էին, մազ մօրուք չունէին։ Իսկ տնեարնին խեղճ էր. բայց մէջի բանները բոլոր ոսկիէ ու արծրլթէ էին։

Այս ժողովուրդը ամենէն աւելի քաղաքավար էր։ Մեծագաւորը Ֆոսէն քաղաքը կը նստէր. ուր կային օրէնք և կանոն, արուեստ և երկրագործութիւն, որ փայտէ գործիքով կընէին։ Մեծագաւորն ալ իր զաւկընեռովը երկրագործուն կընէր՝ օրինակ տալու համար։

Կռատունները ահագին մեծ քարերով շինված էին, որ առանց գործիքի շիներ և առանց երկաթի կա-

պէր և վէր հանէր էին քարերը։ Դեռ տերուն վրա ծեղերով հիւսած կամուրջ շիներ էին։ Ոչ ստակ ունէին, ոչ գիր և ոչ թուանշան. իրենց գիրն էր զանազան գունով չուաններ. որ հանկուրցներով քանի ըլլալը կը հաւ կընային, և գունեերով ինչ տեսակ բան ըլլալը կիմանային։

Ռաջ ինչպէս էին։

445. Ռուրուացիք հին ատենը աւելի վայրենի էին անասունի նման։ Ադաքը իրենց մէջէն մէկը եկաւ 300 տարի առաջ սպանեօղներէն, որ մանչ օ չաֆաֆ կըսվէր, իր կնոջը հետ միատեղ սկսաւ ժողովուրդին քարոզել թէ իրենք արևին զաւակն են. եկեր են որ իրենց քաղաքավարուն թէ սորվեցնեն։ Ասոնց հետ շատ ժողովուրդ միանալով Ռուսկոն քաղաքը շինեցին. ու մանքօն երիկմարդոց երկրաւ գործուն սորվեցուց. կնիկն ալ կնիկներուն կտաւ գործել սորվեցուց։ Յետոյ կերակուր ուտել՝ լաթ հագնել սորվեցուցին. կռատուն ալ շինեցին, արև կը պաշտէին։ Դու այս պէս մանքօ թագաւոր եղաւ իրենց. իշխաններ ալ ունէր, որուն իբր այ

կը հնազանդէին։ Ինկէ ետև հետըզ-
հետէ այս տէրուհիը ընդարձակեցին
ու մայրաքաղաքը մեծցուցին։ Ա երբ-
ը կոնստանդինոս ինքնակալը Ճամբայ մը
շինեց 1500 մղոն, որ տէրուհիէ մէկ
ծայրէն մէկալ ծայրը կը հասնէր,
լեռներն ու ձորերը հաւասարելով
անհնարին աշխատանքով։

Այս թագաւորին որդիքը իրա-
րու հետ իյնելով շատ մեծ խռովուն
հանեցին և տկարացան։ Ան այս մի-
ջոցս սպանեօլներն ալ մէքսիքոնէն
ետև բերու հասան դիւրին տիրե-
ցին։

Սպանեօլներուն գլխաւորն էր Ֆի-
զարրոս որ Ֆրեկոսին հետ միանալով
գնաց դէպ 'ի հարաւային Ամերիկա
նոր տեղ գտնելու համար, որոնք
1525 ին հասան բերու մեծ ցամաքը.
տեսան որ երկիրը լեցուն էր ոսկիով
ու արծաթով, շատ ուրախացան։

Սակայն նայեցան որ բան չէին
կրնար ընել, Ֆիզարրոս քանի մը
ոսկիէ արծաթէ ամաններ առաւ և
2 տղայ ալ անոնցմէ, դարձաւ բա-
նամա, որ սպանեօլ իշխանէն օգ-
նութիւն առնէ։

Սակայն տեսնելով թէ իշխանը օգ-

նուիրի չի տար, ելաւ սպանիա գնաց մեծուի առաւ, ու 3 նաւով և ձիերով դարձաւ Յերիքիդա։ Եւ միաբան սկսաւ առաջ երթալ և ժողովուրդը կողոպտել։

Յիզաբրոս ուր որ կերթար, կըսեր թէ հրեշտակ խաղաղուի եկեր եմ։ Եւ որովհետև անոնց մէջ խռովուի կար, գնաց թագաւորին օգնուիթի ընելու, որ եղբօրը դէմ կը ծեծկըվէր։

Շուտով ընդունելուի գտաւ, ու միւս օրը թագաւորը այցելուի գնաց Յիզաբրոսի 30 հազար մարդով, և անբաւ մեծուիթը։

Իսկ Յիզաբրոսի քահանան որ իր հետ ընկեր եղած էր, խաչն ու աւետարանը ձեռքն առած դիմացն ելաւ. սկսաւ քարոզելով ստիպել որ քրիստոնեայ ըլլայ։

Թագաւորը հարցուց թէ ուստի սորվեր ես այդ բաները. քահանան աւետարանը ցցընելով ըսաց, թէ այս գիրքս ինձի սորվեցուց, և իրեն տվաւ։

Թագաւորը առաւ աւետարանը ականջը տարաւ տեսաւ թէ ձայն չի հաներ, բարկանալով գետինը ձգեց,

զի գիրք չէր տեսած (5)։ Ինատենը քահանան պօռաց թէ ամէնքնիդ ալ զէնք առէք. ահա աւետարանն ա-նարգվեցաւ։

Ինչպէս որ Խիզարբոս առաջ խօսք էր գրեր, իր մարդիկներուն նշան տվաւ որ սկսան խեղճերը ջարդել։

Ողորմելի Ներուացիք երբոր այն սոսկալի զէնքերն ու ձիերը տեսան, որ չէին քնաւ տեսած, խելքերնին գնաց, և ինչ ընելնին չգիտցան։ Իսկ Խիզարբոս թագաւորին գահին վրա հասաւ, ու բռնեց թագաւորը տա-րաւ իր տեղը երկաթը զարկաւ։ Ժո-ղովուրդը տեսնելով թէ թագաւորը բռնվեցաւ, ամէնքը փախան։

Մատաւորը էնչ ըրին։

446. Պանեօլները ուրախութիւն իրենց տեղը դառնալէն ետև, Խի-զարբոս՝ թագաւորը առջին բերել տվաւ, կը մխիթարէր։ Իսկ թագա-ւորը սաստիկ վշտանալով ըսաց, թէ այս մեծ խուցը ոսկիով կը լեցընեմ, թէ որ զիս թող տաս։

Խիզարբոս խօսք տալէն ետև, թա-գաւորը հրաման ըրաւ, ժողովուրդը

սկսան ոսկի բերել և լեցընել։ Իսկ սպանեօլներուն խելքը անանկ գնաց որ չի համբերելով սկսան իրենց մէջ բաժնել. և փոխանակ ազատելու՝ վնասեցին որ Թագաւորը ողջ ողջ երեն։

Սակայն յետոյ կախեցին խեղձը, և Սանքօ քափաք եղբօրորդին Թագաւոր դրին. որ քիչմը ատենէն ետև Ռուսկոն քաղաքէն ելաւ պատերազմ գացաւ, ու շատ մեսաս տվաւ սպանեօլներուն։

Ընդ՝ Ռերուին հարստուն ձայնը սպանեօլներն առնելով, ամէն կողմանց հոն Թափեցան, ու ըրին չըրին տիրեցին այս փարԹամ աշխարքին։ Իսկ Ռիզարրոս՝ դեկոս ընկերին հետ ծեծկըվելով իրար կորուսին և շատ մարդիկ ալ կորան. մինչև սպանիայէն Պետրոս կասքա իմաստուն քահանան եկաւ խաղաղեց։

Ընդ՝ հա այսպէս վերջացաւ այս տերուԹիը։ Թագաւորները ինչա կամ արևորդի կըսվէին, իբր երկնից եկած. ինչոր հրամէին՝ պէտք էր որ կատարվէր։ Ամեծամեծները երբոր Թագաւորին դէմը կելլէին, պէտք էր որ կռնակնին բեռ առնէին ա-

նանկ երթային, իբր նշան հնազան-
դութեան։

Թագաւորն ալ զանոնք հօր պէս
կը խնամէր. ոչ երբէք մէջերնին
խռովութիւն մը եղած էր։ Մենակին
դատարկ մարդ մը չի կար։ Իսկ իրենց
երկիրները, 3 մասն բաժնած էր.
մէկ մասն արեգական էր, որուն
պտուղը քուրմերը կառնէին։

Մէկ մասը թագաւորին համար
կը ցանէին. և մէկ մասն ալ ժողո-
վուրդին, որ ամէն մէկ տանը բաժ-
նած էր։ Սակայն նախ և առաջ միա-
բան արեգական երկիրը կը ցանէին.
յետոյ թագաւորին, և ետքը ժողո-
վուրդին։

Օրէնքի դէմ ինչ յանցանք որ ըլ-
լար՝ իբր ՚ոյ դէմ եղած կը մեռցընէ-
ին։ Նոր համար ոչ խռովութի կար
և ոչ չարութի բերու աշխարքը։

Ռոլորը արև կը պաշտէին, և թա-
գաւորը քուրմերուն գլուխն էր։
Հին ժամանակը մարդ կը զոհեն ե-
ղեր. բայց թագաւորութե ատենը
անասուն կը մորթէին արևուն ե-
բախտեացը համար, որ աշխարքը կը
տաքցընէ։ Մէկ տօն մը ունէին, որ
նոյն օրը կռատունը կարկանդակ

(պօղաչա) կը տանէին, որ տղու աբիւնով շաղված էր. որուն թևէն, ձակատէն և քթէն կը հանէին։

Սակայն երբ թագաւորը կը մեռնէր, հազարաւոր հոգի կը մեռցընէին ու հետը կը թաղէին որ անդին ծառայեն։

Բայց հիմա բոլոր ուղղափառ են. 13 եպիսկոպոսարան, շատ վանքեր և եկեղեցիներ կան։

Քանի՞ կը բաժնըվի։

447. Բերու աշխարքը 3 ատեան կը բաժնըվի. առջինը կըսվի նահանգ Գվիդոնի, որ երկայն է 500 մղոն. ուր բոլոր տարին միակերպ է. ունի զանազան գաւառներ և քաղաքներ։

Բայց գլխաւորն է Գվիդոն մայրաքաղաք բազմավաճառ, որ 50 հազար բնակիչ ունի, շատ վանքերով և եկեղեցիներով, որոնք լեցուն են արծաթով և ոսկիով։

Երկրորդն է նահանգ Լիմայի. մայրաքաղաքն է փառաւոր և փարթամ, լեցուն երևելի շէնքերով. ուր կը նստի մեծ իշխանը։

Եւ հոն ծնաւ սրբուհին Ռոզա ամերիգացին 200 տարի առաջ. և

ամէն տարի փառաւոր տօն կը կա-
տարվի հոն։ Բնակիչներուն շատը
բուն բերրուացիք են, ամէնքը հա-
րուստ և փառաւոր։ Քաղաքին մէջ
հազարաւոր կառքեր կան. խաթուն-
ներուն հագուստն է ոսկեզարդ և
մարգարտազարդ։

Այս նահանգին մէջն է Ռուսկոն
հին մայրաքաղաքը։ Ուր զարմանալի
հին շէնքեր կան. արեգական տաճա-
րին պատերը և թագաւորին նստած
բերդին պատերը ոսկիով պատած
էր. բայց Խիզարրոս բոլորը քանդեց։

Ոսկերրորդ ատեանը Ղադա կը-
վի, որ Վիլլի սահմանակից է. ունի
լիճ։ Երբոր սպանեօլները հոն մտե-
ցան, թագաւորը իր գանձը այս լիճը
թափել տրվաւ։ Անկ ոսկիէ մեծ
շղթայ մը կայ եղեր որ չափ չունէր։

Գլխաւոր քաղաքն է Ղադա մեծ
և գեղեցիկ, 14 հազար բնակիչ ու-
նի։ Այս նահանգին մէջ քանի մը
քաղաքներ կան շատ փարթամ և
բազմամարդ։ Այնչափ առատ է հոն
արծաթի հանքն, որ մէկը դիպուա-
ծով իր կենդանին լեռը կը փախցը-
նէ, ինքն ալ ետևէն վեր ելլելու ա-
տենը բոյս մը կը բռնէ։

Բոյսը հողէն կելլէ, կը նայի որ հողին մէջ լեցուն արծաթ է. ուստի 200 տարիէն 'ի վեր կը հանեն, չի հատնիր։

Բերուին տակն է մոյեցոց գաւառն որ Ճիզվիթները բոլորն ալ դարձուցին ուղղափառ ըրին. և քաղցր վարդապետութիւն, իրենց այնչափ քաղաքավարուի սորվեցուցին, որ վայրենի ամերիկացիք սկսան իրենք իրենց լեռներէն իջնիլ, ու մարդ ըլլալ։ Այս հիմա երևելի ազգ եղան, քաղաքներով և բարեկարգութիւն զարդարված. որ առանց զէնքի Ճիզվիթներուն խելքովը, վաստրկեցան սպանեօլները։

Արդ խոհեմ վարքով աշխարհ կը շինվի,
անկարգ բռնութիւն շուտով կը քակվի.
Թէ անոյշ ձայնով օձը կը բռնեն,
քանի աւելի մարդն որ միտք ունի։
Ջանա՛ քաղցր ըլլալ ամենուն առջին,
մտիկ դիր շուտով խեղճերուն ձայնին.
Երբոր դատաւոր կըլլաս տկարին,
գիտցիր որ քեզ ալ տէր կայ երկնային։

ՀՐ. ՀԱՄԱՐ

Ո՞Ր Է ԺԷԼԷ։

448. Այս մեծ աշխարհք Բերուէն կըսկըսի մինչև աղի գետը կը հասնի. երկայն 1200 մղոն, և բոլոր տարածութիւնն է 216 հազար մղոն։ Շատ մեծամեծ լեռներ ունի որ միշտ ձիւնով ծածկած են. շատին ալ գլուխը հրաբուղխ կայ։ Օդ արմանալի օդ ունի, որ ոչ հիւանդութի կըլլայ հոն, և ոչ թիւնաւոր կենդանի։

Ամէն բարիքով և շատ ոսկիով լեցուն է. ունի պատուական մարգարիտ և շատ արծաթ։ Պեռուն մէջէն ոսկի մանրուք կելլէ, նաև զմրուխտ և յակինթ (եաղուդ)։

Շատ մեծ վաճառականութի կըլլայ հոն. անոր համար սպանեօլները տարուէ տարի անբաւ գանձ կը հանեն։

Լեռներուն մէջ զանազան ամերիգացիք կան, որ ազատ են. և երբեմն կուգան վաճառականութի կընեն։

Ինչպէս գտան։

449. Այս աշխարհք առաջ Ռերուի տէրուն տակն էր. ետքը սպանեալները Ռերուէն մարդ ժողվեցին գացին որ տիրեն, բնակիչները դէմ ելան ու վռընտեցին։ Սակայն 1540 ին զանազան հնարքներով և բերուցիներուն օգնուքը տիրեցին Ռիլիին, և քանի մը բերդերով ամրցուցին. Թէպէտ Աբաւքացի գազանաբարոյ ժողովուրդը ինքնագլուխ մնաց, ու շատ վնաս տվաւ սպանեալներուն։

Այս տէրութի 14 գաւառ ունի, և ամէն տեղ էպիսկոպոս և իշխան կը նստի։ Իսկ մայրաքաղաքը Յաւկոք կըսվի, որ մեծ և փառաւոր քաղաք է գետին քով. այս ջուրը ամէն տուն կը վազէ։ Շատ աղնուական հարուստներ կան հոն. բոլոր բնակիչները 46 հազար հոգի են, գեղեցիկ եկեղեցիներ և վանքեր շատ կան։

Ո՞ր է արաւանիա։

450. Այս նահանգ Ռիլիին գըլխաւոր մասն ըլլալով 70 հազար մղոն է. իսկ բնակիչները ազատ ինքնագլուխ են, շատ զօրաւոր։ Դէմ-

քերնին կլոր է, Ճակատնին նեղ, քթերնին ծուռ, և աչքերնին մանր ու փայլուն։

Ասոնց բոլոր մարմինը հաստ է, բայց ոտքերնին մանր են։ Ասրուք չունին. 60 տարիէն ետև մազերնին կըսկըսի Ճերմկիլ, ոչ ակռանին կը թափի, ոչ աչքերնին և ոչ մոքերնին կը տկարանայ. մինչև 100 տարի կապրին։

Դաջասիրտ հաւատարիմ և փառասէր են, իրենց ազատութիւնը վրա կը մեռնին։ Ատքերնին դրեր են թէ երիկմարդիկ միայն ծեծկըվելու համար ծնած են.

Ուստի ուրիշ բանի չեն աշխատիր, այլ միշտ պատերազմի կըթուի կընեն. ամառը շատ ժամանակը գետերուն մէջ լողալով կանցընեն։ Ընոր համար ամէն աշխատանքը և երկրագործութիւնը կնիկնին կընեն։

Շատ բան չեն ուտեր. օտարականը շատ կը պատուեն. կնիկնին զարդարանք շատ կը սիրեն, ու մազերնին փայլուն քարերով կը զարդարեն. ոչնին մատնի, ապրՃան են։

Կարգըվելու կտրիՃները կերթան Ճամբային վրա կը պահվին, երբոր

աղջիկները կանցնին բռնեն կը տա-
նին տուն։

Դ. ծնողքը կերթան փեսային
տունը պարգև կառնեն, իբր թէ կը
ծախեն աղջիկը. անկէ ետև երկա-
նը գերին կըլլայ, մինչև կրնայ մեռ-
ցընել։

Իրենց թագաւորը դօգէ կըսվի.
գիր չունին. թագաւորին հրովար-
տակը կարմիր լար է, որ հանկուրց-
ներով կիմացընեն հրամանը։ Մե-
պէտ բազմաստուած են, բայց ոչ
կուռք ունին և ոչ պաշտօն. իրենց
քուրմերը բժիշկ են։

Երբոր մէկը կը հիւանդնայ, կեր-
թան ոչխարին արիւնը վրան կըցա-
նեն. վերջը երկդիմի խօսքերով հի-
ւանդուին կը պատմեն։ Երբոր մէ-
կը կը մեռնի, ձին ալ հետը կը թա-
ղեն որ անդին հեծնի։ Երբոր իրենց
արտը որդ և մուկ կըլլայ՝ ամէնքը կը
միաբանին. ու կը ժողվեն ամանի մը
մէջ կը լեցընեն, կըսկըսին նախ ի-
րարու հետ ծեծկըվիլ. ետքը կը բա-
նան ամանն ու կենդանիները կը մեռ-
ցընեն։

Երբոր փայլակ կըլլայ՝ կըսեն թէ
Էլլանֆ, այսինքն չար հոգիներն օգ-

նութիւն եկան սպանեօլներուն։ Իսկ երբոր որոտում կըլլայ, կուրախանան որ սպանեօլները կը հալածվին։ Երբոր գեղնաշարժութիւն կըլլայ, տախտակ մը կառնեն լեռը կելլէն, որ ջեհեղեղը չի կորսընցնէ զիրենք. վա՜ զի աւանդութիւն գիտեն ջրհեղեղին պատմութիւնը։

Արիլի ծովին մէջ շատ կղզիներ կան, և զանազան ազգեր կը բնակին. որոնց շատը քրիստոնեայ եղած են։

Ո՞ւր է Բարկվա։

451. Այս աշխարհք քիլիէն կըսկըսի մինչև Պրասիլիա կը հասնի, երկայն 1080 մղոն. տարածութիւն է 650 հազար մղոն, և բնակիչները միլիոնէն շատ են։ Այս երկիրը սպանեօլ նաւապետ մը գտաւ 1515 ին. բայց 20 տարիէն ետև սպանեօլները գնացին քաղաք շինեցին, ու Ինդիանեերուն քարոզութիւնը քիչ քիչ վայրենի ժողովուրդին տիրեցին։ Որովհետև սպանիայի թագաւորը խնդրեր էր որ Ինդիանները այն կողմն երթան քարոզեն, որոնք գիտնալով թէ սպանեօլները ատելի են ամերիգացոց, թագաւորին թուղթ ուղեցին, որ ա-

մենեւին սպանեօլները իրենց տեղը չերթան, և մարդ մը չի կարենայ հրամայել։

Նրբոր Ճիղվիթները առին այս թուղթը, գնացին բարակվա, ու մեծ դժուարութիւն մտան վայրենի ժողովուրդին մէջ, անուշութիւն և համբերութիւն քիչ քիչ զանոնք ընտանեցուցին. մինչև մկրտեցին ուղղափառ քրիստոնեայ ըրին։

Ահա ասանկ խոհեմութիւն գաւառ մը հաստատեցին 600 մղոն երկայնութիւն։ Ուր կը հաւաքէին անտառներէն ու լեռներէն վայրենի ժողովուրդը, մինչև քաղաքներ շինեցին, երկրագործուի և արուեստ սորվեցուցին։

Ասոնք քիչ ատենին մէջ այն անծայ ազգերը քաղաքավար և ճշմարտապաշտ եղան Ճիղվիթներուն ձեռքովը. որ իբր հայր իրենց զաւակները կը կառավարէին խմաստութիւն. և տարէ տարի անոնցմէ իշխան մը կը դնէին, որ ծանր յանցանքը պատուհասէ։

Ամէն քաղաք երկու Ճիղվիթ կային. մէկը հոգաբարձու հովիւ էր, մէկալը դատաւոր ժողովուրդին։

Ամէն մարդ միակերպ կաշխատէր, ու իրենց վաստակը մէկ տեղ մը կը

հաւաքէին, Ճիզվիթները ամէն մարդու պէտք եղածին չափ կը բաժնէին թէ ուտելիք ըլլայ, թէ հագնելիք։ Պ աշխատականուիը և ամէն բան իրենց ձեռքն էր. միայն 300 հազար ղուշ տուրք կուտային սպանիայի թագաւորին։

Իսկ մնացած ստրկով քաղաքները և ժողովուրդը կը ծաղկեցընէին, 60 հազար զօրք ունէին, որ միշտ կրթուելի կընէին։

Եւ այսպէս օր ըստ օրէ զօրացան և ծաղկեցուցին ուղղափառութիը. մինչև չորս դիէն գունդ գունդ ամերիկացիք Ճիզվիթներուն կուգային կը մկրտվէին։

Ինչպէս վերջացաւ։

452. Երբոր Ճիզվիթներուն գաւառը սասանկ կը ծաղկէր, փորդուքալցիները աչք տնկեցին. ու սպանիայէն ուզեցին, որ ուրիշ երկրի հետ փոխեն։ Երբ մէկ մասը առին իրենց անցուցին, ժողովուրդը ոտք ելաւ չուզեց, և շատ խռովուի եղաւ։ Ճիզվիթները տեսան որ գէշ պիտի ըլլայ, սպանիա գրեցին խնդրեցին որ իրենց

չի դալէին, ժողովուրդը մնայ առջի կացութեան մէջ։

Այս միջոցիս մէջ ժողովուրդն ալ ոտք ելաւ ինքնագլուխ եղաւ, ու իրենցմէ իշխան մը դրին իբր թագաւոր նիկողայոս անունով, որ ատակ ալ կտրեց։ Այս բանով Հիզվիթներուն թշնամիները եւրոպայի մէջ ձայն հանեցին, թէ թագաւորութիւն մը հաստատեցին Հիզվիթները։

Այսով աւելի ատելութիւն ըլլալով պատերազմ բացին ու առին Հիզվիթներուն գաւառը, և քիչ ժամանակին մէջ բոլոր կարգերը աւրեցին, ու խեղճ ժողովուրդը աղքատ և գերի ըրին։

Հա այս է Հիզվիթներուն թագաւորութիւնը, և ասով այնչափ նախանձելի եղան. նախանձն ալ ջնջել տրվաւ իրենց կարգը. թէպէտ եռքէն շատ փնտրուեցին զիրենք։ Հիմա այս աշխարհք 4 մեծ նահանգ կը բաժնըվի, ուր 100 հազար ուղղափառ կան Հիզվիթներուն ժողովուրդէն. մնացած կուապաշտ ժողովուրդը ինքնագլուխ են։ Թէ որ Հիզվիթները մնային, բոլորն ալ գարձուցեր էին։

Ո՞Ր Է ԱՄԱՊՈՒՆԻՔ։

453. Ամազունեաց աշխարքը այրեցած գօտին տակն ըլլալով հասկեշի գծին վրա է (158). և անհամար գետեր ունի։

Գլխաւոր գետը 5400 մղոն կերթայ ովկիանոս կը վազէ. 250 մղոն է բերանը. մէջը լեցուն գազաններ կոկորդիլոսներ և զանազան կենդանիներ կան (168)։

Այս աշխարհք 1500ին սպանիացի նաւապետ մը գտաւ. վերջը Ֆիզվիթները գնացին շրջեցան ու վայրենի ժողովուրդը քիչ քիչ կրթեցին և քրիստոնէուն սորվեցուցին, ուղղափառ ըրին։ Բայց նախ մայնաս գաւառը հաստատեցին, որ 834 մղոն է. ուր զանազան քաղաքներ շինեցին։

Առջի քաղաքը Ֆը Իգնատիոս կոչեցին. որ Բարակվայի նման կը կառավարէին. և հիմա կէսմը սպանեօլներուն, կէսմ՝ ալ փորդուքալցիներուն ձեռքն է։

Այս երկրին մէջ շատ զանազան աղգեր կան, որ հիմա բարեպաշտ և հնազանդ են. բայց առաջ վայրենի մերկ էին, ու միշտ կը ծեծկըվէին։

Նրբոր իրենց տղայ կըլլար՝ գլուխը երկու տախտակի մէջ սեղմելով կը տափկեցընէին, որ եպիսկոպոսի թագի նման կըլլար. զի այս ձևով գլուխը շատ կը սիրէին։

Ո՞Ր Է ՊՐՈՒԷԼԷ։

454. Այս աշխարհք արևելեան կողմն ըլլալով՝ վերի աշխարհքին աւելի մօտ է. և շիտակ գծով 1200 մղոն Ամերիկէն հեռու կիյնի. որ ընդարձակ երկիր է, և 2 միլիոն բնակիչ ունի։

Շատ հարուստ և բարեբախտ տեղ է ու ամէն բան ունի։ Մինչև 70 հազար քսակի ոսկի կելլէ տարին։ Մեծ անդամանդը (էլմասը), որ առջի բերանը հօխանեբով բերին Եւրոպա. բայց տեսան որ յարգը գնաց, արգելեցին։

Որչափ մեծ քար կելլէ՝ փորդուքալի թագաւորին կերթայ. քար մը եկաւ իրենն, որ 1680 կուտ էր։ Սակայն այս անդամանդը խիստ աղէկ ջըլլալուն համար՝ այնչափ գին չունի։

Ինդիոյ ազգ են։

455. Երբոր փորդուքալները հոն հասան՝ բնակիչներն էին վայրենի. որ զանազան ցեղ բաժնած մերկ կը շրջէին. որոնց շատը Ճիզվիթները դարձուցին։

Մինչև հիմա կռապաշտներ ալ կան, որ առողջ են, և 100 տարի կապրին առանց հիւանդուն, ոչ աբ ուեստ գիտեն, և ոչ քաղաքականուն։ Ա. յս աշխարհք փորդուքալցի նաւապետ մը գտաւ 1501 ին. որ բարեյուսոյ գլուխն երթալու ատենը հովը զինքը հոն ձգեց. բայց փորդուքալի տէրուները հոգ չբրաւ, միայն դատապարտեալները հոն կը զրկէր։

Յետոյ Ճիզվիթները գնացին հոն սկսան քարոզելով ժողովուրդը շահել. և սքանչելի երկայնմտուն քաղաքավարուն թի սովրեցուցին, ու զիրենք մարդ ըրին, և փորդուքալցոց հնազանդեցուցին։

Ուստի անոնց իմաստուն քը ասոնք տիրեցին նոյն ազգին առանց աշխատանաց. և այն բազմագանձ աշխարհքը 15 գաւառ բաժնեցին. որ

շատ գեղեցիկ քաղաքներ ունի. իսկ մայրաքաղաքը Ֆրիկիէ կըսվի։

Լաճ ուրիշ տեղեր։

436. Լ.մերիգայի ծայրը քանի մը աշխարհքներ կան, որ կըսվին Նրկիր մակելանեան. զի մակելաննոս փորդուքալ նաւապետը գտաւ, որ բոլոր աշխարհքիս մէկ դիէն մէկալ դին պտըտեցաւ։ Բնակիչներն են Բամբացիք, որ զօրեղ ազգ են և ազատ, ամենևին չի կրցան ասոնց յաղթել սպանեօլները։ Իսկ ներսի կողմերը բոլորովին անծանօթ են։

Լ.ելի զօրաւոր են Բադակոնացիք, որ բարձր են 6 ոտնաչափ, մազոտ, և հաստ հսկայաձև. դէմքերնին բոլորակ, աչքերնին հրային. որ միշտ ձիով կը շրջին և քաջ պատերազմող են։

Իսկ էրիէր հրոյ է Լ.մերիգայի հարաւային ծայրը, որ բադակոնացոց աշխարհքէն 380 մղոն երկայն նեղուցով բաժնած է երկրաշարժուբ՝ ինչպէս կըսեն։ Լ.այս երկիրը վերջի ատեններս յայտնըվեցաւ. բնակիչներն են կարճ և սևադոյն, Ճակատնին նեղ, աչքերնին պզտիկ, բերաններն

մեծ. անմօրուք տգեղ և գարշահոտ. մարմիններին և դէմքերնին կըներ կեն. խիստ ողորմելի կեանք ունին։

Այս աշխարհքին արևելեան կողմը զանազան կղզիներ կան սպանեօլնեբուն ձեռքն, որ Մալվէան կղզի կըսվին. ուր զանազան ազգեր կան։

Հա՛ հասանք հարաւային ծայրը ամերիգայի, և հոս կը վերջանայ վարի աշխարհքը և բոլոր աշխարհքիս պատմութիւնը։ Եւ հոս կը վերջացընենք այս գործքս։

Որով ոչ միայն հմուտ եղար բարոյական կրթուն, այլև աշխարհքիս մեծութիւնը՝ դրից և զանազան ազգաց և տերութեց, բարուց և սովորութեց։

Ուրեմն պէտք է այսչափ ազգաց վարքը իրարու բաղդատելով աղէկ հասկընաս թէ մարդուս կատարելութիւնն ու երջանկութիւնը ուր կը կայանայ։ Եւամ թէ առաքինի և խելացի ազգ մը ինչպէս օրէնք պահելով կը մեծնայ և կը լուսաւորի։ Իսկ անկիրթ և տգէտ ազգերը առանց օրինաց և կանոնաց ինչպէս խաւարեալ կը մնան անանուն աշխարհքիս մէկ ծայրը (45)։

Այսով դիւրին կը հասկընաս առջի մասերուն մէջի բարոյական հմտութիւններն, որ կատարելուն Համբան քեզ սորվեցուցին. և այս պատմութիւններն ալ կարդալով պէտք է որ սորվածներդ գործք դնես, և կատարեալ առաքինի ըլլաս հաւատքով յուսով և սիրով. մինչև ըլլաս ՀԾանման և երջանիկ (151):

Ահա այսպիսի կատարեալ և առաքինի ողորմած մարդկանց համար ըսաց Ոսկեբերան, թէ չեմ ամչնար զանոնք ՀԾ կոչելու:

Ահա՛ քեզ այսօր մանուկ ցանկալի,
վարի աշխարհին ծայրը հասուցի.
Տեսար նոր աշխարհք տեսար նոր մարդիկ,
նոր սովորութիւն խիստ զարմանալի:

Փառք տուր աբարչիդ ամենաբարի,
որ քեզ է ստեղծեր երկիր բարեալի.
Խնդրէ ձեռքն անբաւ վրադ հովանի,
որ աշխարհ ըլլաս ՀՐ սահման երկրի:

Տեառն է երկիր կլոր սահմանով,
բոլոր բնակիչք պատած իր ուժով.
Սահման է դրեր ծովու ցամաքի,
կը կառավարվին իրեն խնամքով:

Ո՛վ ամենագութ խնամք արարչին,
որ ամէն երկիր պայծառ կը փայլին.
Ասոնք ամէն օր դիր աչքիդ առջին,
վառէ սրտիդ մէջ սէրն ողորմածին:

Դուն չի խնդրեցիր որ հոս ստեղծէ,
բարեպաշտ ծնողաց քեզ զաւակ ընէ.
Մինայն իր շնորհքն այս բարիքն ըրաւ,
քեզ փառաւորեց մեծութիւն անբաւ։

Մի՛ մոռնար բնաւ ծնողքիդ բարին,
հնազանդ և խոնարհ երևնաս առջին.
Երբոր կը յիշես որդիք վայրենեաց,
վառէ սրտիդ մէջ քաղցր սէր ծնողաց։

Նոյն սիրով վարվիս ընկերացդ առջին,
ամէն բարեկամք քեզ ըլլան անգին.
Թէ մէջն ըլլայիր գարախպ ազգին,
եղբայր և ընկեր ի՞նչ քաղցր կըլլային։

Հուսկ յետոյ ըլլայ ազգասիրութին,
պսակ և վախճան քու սորվածներուն.
Ջանա որ ըլլաս օգտակար անգամ,
որ անմահ գործքով ճնաս մեծանուն։

Վախճան

Դ. ՄԱՍԻՆ

ՅԱՆԿ

Գանուսի . . 86
Անիպատոր . . 141
Աղբիոս . . . 169
Աղուանք . . 187
Ամուն մարդոյ . 153
Ամաղանիք . . 453
Ամերիկա . 162 . 419
Ամերիկացիք . . 424
Ամօր 87
Ան 248
Անիսուզ . . . 318
Անախ . . . 140
Անիսաղրուսի . . 123
Անդիլեան կղզիք . 440
Անելիուզ . . 143
Անիրասուսի . . 103
Անիրաք . . . 130
Անիրն . . . 93
Անհասատուսի . . 127
Անհնազանդ . . 117
Անմահուսի . . 146
Անդիբանուսի . . 114
Անոյշ լեզու . . 89
Անուանի . . . 95
Աղիարհ . . . 158
Աղիարհապատում 152
Աղիոյք . . . 96
Ապոլոնուսի սլիարհի 154
Առաքելեանուսի . 99
Առաքինուսի . . 68
Առնասուք . . 318
Առուքանուսի . . 31
Աւիա 159
Աւրիք . . . 186
Աքանանուսի . . 149
Աքալանդ . . 43
Աքիլլեսուսի . . 71
Արաբ . . . 251
Արդար . . . 102
Արդարուսի . . 101
Աքիլիք 160 . 229
Բաբելոն . . . 191
Բալամիզար . . 18
Բանանուն ազգաց 157
Բալանք . . . 63
Բանասքելեանուսի . 36
Բաստա . . . 385
Բարեարքուսի . . 110
Բարիուսի . . . 120
Բաքուա . . . 360
Բարամիա . . . 451

Բարբարոս . . 239
Բարբեխառնուէ . 65
Բարբեիմ . . . 147
Բերու . . . 444
Բրուսիա . . . 328
Գէր 168
Գերմանիա (Նեմցի) 331
Գիրուէ . . . 74
Գիր հայոց . . 8
Գրիգորուէ . . 2
Գոնիս . . . 268
Դորոպլուս . . 240
Դիոցանուէ . 150
Դրախտ . . . 152
Դրանիլանիա . 344
Դուսանա . . 379
Եալոցի . . . 284
Եգիպտացի . . 231
Եգիպտոս . . 236
Եղոիտի . . . 186
Եհովիա . . . 283
Եղիայրիրուէ . 55
Երլանիուէ . . 151
Երոպա . . . 161
Երոպացի . . 299
Երն ղազի . . 364
Զատա . . . 252
Զելանդացի . . 224
Զենիպար . . 287
Զվիցերի . . 389
Էսթոնացի . . 430
Թաշարտ . . . 181
Թուանուզ . . 241
Ժամանակ . . 107
Իտալիա . . . 336
Ինիլիրիա . . 411
Ինգլանդանալուէ . 56
Իմաստուէ . . 76
Իսլանդիա . . 417
Իսլանդիա . . 353
Իսպանի . . 264
Լեզու (խօսք) . 14
Լեհաստան . . 323
Լիզոնա . . . 410
Լեզ 167
Լիվոնիս . . . 383
Լուսիա . . . 386
Լրբուէ . . . 88
Լոնդոն . . . 414
Խուզեմուէ . . 77
Խոնարհուէ . . 58
Խրատ . . . 129
Ծանիֆերուէ . 12
Ծուր . . . 91
Ծանրաֆլուխ . 131
Ծով 165
Ծուլուէ . . . 97
Կանոն մարդիուէ . 44
Կարդեղան . . 244
Կարմիր ծով . . 295
Կենակցուէ . . 80
Կիպրոս . . . 321
Կիրիտ . . . 320
Կիր . . . 59 . 65
Կղզի 170
Կուինէա . . . 259
Կրնուէ . . . 92
Համբերուէ . 64 . 122
Հայաստան . . 178
Հայոց դպրուէ և իրն . 176 . 177
Հայ 171
Հոդեր . . . 289
Հասարակուէ . . 125

Հելլոս . . . 119
Հեպատրոսի . 135
Հերոսգրոսի . . 13
Հնազանդոսի . . 116
Հնդոսգանցիք . . 192
Հոգնորոսի . . 104
Հոլանդա . . . 398
Հղորդոսի . . 57
Հռոմ 375
Հրոսանդան . . 281
Ճորգասանոսի . 32
Ճեսբոն . . . 212
Ճեղայիր . . . 245
Ճենովա . . . 388
Ճինեվրա . . . 392
Ճշմարգախօսոսի . 81
Մալտա . . . 365
Մալիեդոնիա . . 318
Մահ 144
Մոնմաուտ . . . 340
Մոգոսիոսատար . 296
Մոգրիա . . . 455
Մորդավարոսի . 83
Մորմասիրոսի . 106
Մէսոբիոն . . 433
Մեսոպէ . . . 189
Միսքանոսի . . 113
Միսոյեսլնահանգ . 426
Միլան . . . 384
Միջագէգ . . 190
Մոսով . . . 301
Մոսծոսի . . 94
Մօռա . . . 319
Մոսգա . . . 305
Ցանդգնոսի . . 97
Նոբիլի . . . 366
Նոխանդ . . . 111
Նիզա գէգ . . 238
Նիսբիգա . . 253
Նոր էրիր . . 219
Նոր սիոնիա . . 429
Նոսգիա . . . 294
Շահեցողոսի . . 128
Շոգիսոսի . . 132
Շվեգ . . . 345
Ոզրմաց . . . 98
Ոսմահ Պոսղան . 315
Ոսղոերոսի . . 134
Զոգասորոսի . . 62
Զինոսալին . . 202
Պոզգոգ . . . 191
Պամպոսի . . 257
Պավոսիա . . 336
Պոգմոսի . . . 41
Պորսիգ . . . 183
Պորգ մարդոյ . 53
Պենին . . . 266
Պիսքարա . . 267
Պոսղարգ . . 317
Պրոսիլիա . . 454
Պոհեմիա . . 539
Ջրհեղեղ . . 155
Ռոմոսղա . . 363
Ռոգոս . . . 321
Սոգեղ . . . 332
Սոպգիա . . . 282
Սորգենիա . . 373
Սոգոնիա . . 338
Սենեկալ . . . 256
Սիգերիա . . 380
Սիլիլիա . . 371
Սիրեսոսի . . 84
Սիվերիա . . 415
Սի Դոմինիգոս . 441

Սֆ հէրինէ . . 298
Սուրբուէ . . . 70
Սպանիա . . . 403
Սրամպօլ . . . 310
Սրուէ. . . . 82
Վանք Սբ Ղազարու 359
Վէնա 335
Վենետիկ . . 357
Վիրք . . . 187
Տալմացիա . . 362
Տանիմարկա . . 349
Տանյա . . . 330
Տերիէուէ . . 137
Տոֆրուէ . . 10
Փառասէրուէ . 98
Փորէզ . . . 396
Փէտրոպուրկ . . 304
Փորտուգալ . . 408
Փոքրասիա . 126
Քաղաքացի . . 186
Քամպիա . . . 258
Քանապա . . . 428
Քանարեան կղզի . 297
Քաֆրասպան . . 277
Քէրամանուէ . . 24
Քիլի 448
Քիւրդ . . . 187
Քօրֆու . . . 364
Քօսէա . . . 374
Քօֆէնհայկ . . 351
Օտիդ . . . 226
Օսմանցի . 188 . 309
Օրէն . . . 45
Օրէն մարդոյ . 50
Ֆէս 247
Ֆիանգրա . . 398
Ֆրանսա . . . 393

7320
1844
5326

5058
1844
3164

1779
580
1199
295
3824
632
4506

1779
126
456
632

Գիրքը ենթարկվել է ախտահանման

42 ք.

15 IV